ՇՈՂԱԿԱԹ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Նուիրուած

ՀԱՅ ԳՐԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ
ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆԻՆ

412—1512—1912

Sholakath № 1, Etchmiadzin.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Ելեքտրաշարժ Տպարան Ս. Էջմիածնի
1913

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

9(47.925)

ՇՈՂԱԿԱԹ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Նուիրուած

ՀԱՅ ԳՐԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ՄԵԾ ՅՈՒԲԵԼԵԱՆԻՆ

412—1512—1912

Sholakath № 1, Etchmiadzin.

9/34
A III/2614

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Ելեքտրաշարժ Տպարան Ս. Էջմիածնի
1918

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

«Կանգի յԱյրարատեան գաւառին, ի կայս թագաւորացն եւ քահանայապետացն. մխեցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ»
Կորիւն.

Ս. Էջմիածնի միաբաններից և Ճեմարանի ուսուցիչներից կազմուած Յոբել. Յանձնաժողովը յաւերժացնելու համար Հայ Գրի և Տպագրութեան մեծ տարեդարձը՝ որոշեց հրատարակել Հայագիտական Ժողովածու և այս նպատակի համար ընտրեց 3 հոգուց մի մասնաժողով,— Հ. Գարեգինին, պ. Ս. Կանայեանին և ինձ։ Ստանալով Նորին Սրբութեան օրհնութիւնն ու հաճութիւնը՝ տալիս ենք այս առաջին գիրքը, նուիրուած Յոբելեանին, յուսալով և այսուհետև հետզհետէ տալ առանձին գրքերով հայագիտական նիւթերի այսպիսի ժողովածուների մի շարք, ջանալով ըստ կարելւոյն օգտագործել մեր Ձեռագրաց Մատենադարանի հարուստ գանձերը։ Պատշաճաւոր դատեցինք ժողովածուն անուանել Շողակաթ, և այսպիսով կապել այն խորհրդաւոր և սքանչելի տեսլեան հետ, որի յիշատակը ամէն տարի կատարում է մեր եկեղեցին, իբրև «Տօն Շողակաթի սրբոյ Էջմիածնի»։

Նախագահ Յոբել. Յանձնաժողովի
Գ. Տ. ՄԿՐՏՉԵԱՆ

Էջմիածին 1913
Հոկտեմբեր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *Տիմոթէոս Կուզ և ս. Գրքի Նորաբեր Թարգմանութիւնը.* Հրաչեայ Աճառեան 1
2. *Զագամանից ժողովը.* Գարեգին Վարդապետ . . 22
3. *Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի.* Մեսրոպ վարդապետ Նշանեան 47
4. *Զաքարեան (Երկայնաբազուկ) տոհմի ծագումը, գաղթը դէպի Զօրագետ և նախորդները.* Ա. Ս. Շահնազարեան 66
5. *Յովհան Մանդակունի և Յովհան Մայրագոմեցի* Կարապետ Եպիսկոպոս 84
6. *Աջից ձախ հայ գրութիւն.* Գալուստ Տէր Մկրտչեան . 137
7. *Դասական հայերէնի շուրջը.* Մեսրոպ վարդապետ Մաքսուդեանց 142
8. *Հայ Մատենագրութեան հնագոյն թուականները.* Գալուստ Տէր Մկրտչեան 154
9. *Հայերէն կրկնաւորները Երևանի բարբառում (Քանաքեռի խօսուածք).* Մեսրոպ վարդ. Մաքսուդեանց . 164
10. *Նորագիւտ մագաղաթեայ նմուշագիր ցուցակ՝ Սաղմոսարանից մատենադարանի.* Խաչիկ Վարդապետ . 167
11. *Քարտէզ հայ հնագրութեան.* Գարեգին վարդապետ . 170
12. *Գրի նոյնատիպ օրինակներ. 90 տախտակում.* Նոյնը Ա.—Դ.

ՏԻՄՈԹԷՈՍ ԿՈՒԶ

ԵՒ

Ս. ԳՐՔԻ ՆՈՐԱԲԵՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Արարատ ամսագրի 1908 մայիս թուին մէջ (էջ 580—586), բանասէր Գալուստ Տէր Մկրտչեան երեւան կը հանէ բոլորովին նոր խնդիր մը՝ որ հայ մատենագրութեան պատմութեան համար անհագին նշանակութիւն ունի, քանի մը տեսակէտով։

Յայտնի է, որ մեր հին մատենագրութիւնը կը ճանչնայ Ս. Գրքի երկու թարգմանութիւն։ Առաջին թարգմանութիւնն այն է՝ որ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ կատարեցին ասորերէնի վրայէն և որմէ մեզի հասած են միայն Մնացորդաց գրքերը։ Երկրորդ թարգմանութիւնն այն է՝ որ նոյն սուրբ հայրերը՝ իրենց աշակերտ Եզնիկի օգնութեամբ՝ կատարեցին Պոլսէն բերուած յունարէն բնագիր ձեռագրի մը վրայէն և որ մեր այսօրուան գործածած օրինակն է։

Խորենացին իր Պատմութեան մէջ կը գրէ թէ Ս. Գրքի այս երկրորդ թարգմանութիւնն ալ շատ կցմկցով պակասաւոր էր (ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր), որու համար Ս. Սահակ և Ս. Մեսրոպ ղրկեցին Խորենացին Պոլիս, Աղեքսանդրիա եւն, ուսման մէջ կատարելագործուելու և Ս. Գիրքը երրորդ անգամ թարգմանելու համար (Խոր. Գ. կա)։

Բանասէրները Խորենացւոյն այս տեղեկութեան վրայ միշտ կասկածով նայած են. արդէն Խորենացին ինքն ալ չի պատմեր թէ այս երրորդ թարգմանութիւնը կատարուեցաւ թէ ոչ։

Վերոյիշեալ յօդուածին մէջ՝ Գ. Տէր Մկրտչեան մեր հին մատենագիրներու քով գտնելով այս մասին քանի մը շատ որոշ ակնարկութիւններ, կը հաստատէ թէ Ս. Գրքի երրորդ թարգմանութիւնը իրօք տեղի ունեցած է, և այն՝ յունաբան դպրոցին պատկանող հեղինակներու ձեռքով, կերեւայ Հայաստանէն դուրս, Ե դարու երկրորդ կէսին։ Այս թարգմանութիւնը կոչուած է Նոր, Նորապատում կամ Նորաբեր թարգմանութիւն։ Վերջին անունը կը պահեմ ես ալ։

Նորաբեր թարգմանութեան մասին եղած յիշատակութիւնները, որ Տէր Մկրտչեան կը գտնէ մեր հին մատենագրութեան մէջ, հետեւեալներն են.

1. Հերձուածոց գրքին մէկ հատուածը. «ՃՅՁ. Մայրագոմեցւոց ազանդ... զհին թարգմանութիւնս զոր ընկալաք ի սրբոյն Սահակայ՝ ոչ ընդունի[ն], և զերրորդ թուղթն Կորնթացւոց ի Պաւղոսէ գրեալ, զընդգրկեալն ի սրբոյն Գրիգորէ, նզովեն» (Արար. անդ էջ 581)։

2. Թէոդորոս Քռթենաւորի ընդդէմ Մայրագոմեցւոյն ճառէն (Վենետ. 1833, էջ 148) «... սոքա (Մայրագոմեցիք) թէ անընդունակ է առաջթարգմանութիւն Աւետարանին»։

3. Նոյն, էջ 154. «առնն (Մայրադմեցիք) եթէ հնապատմութիւն Աւետարանին ոչ է ընդունակ»։

Այս հատուածներէն կ'երեւայ որ Մայրադմեցոց աղանդը կը մերժէր Ս. Գրքի հին կամ երկրորդ թարգմանութիւնը (վերը կոչուած նաեւ առաջթարգմանութիւն կամ հնապատմութիւն), իբրեւ անընդունակ, եւ չէր ընդունիր յատկապէս Կորնթացոց Գ. Թուղթը, որ կայ այդ թարգմանութեան մէջ։

Հին թարգմանութիւնը մերժողները հարկաւ պիտի հայթայթէին նոր լաւագոյն թարգմանութիւն մը, եւ ահա այս մասին պարզ ակնարկներ կը գտնենք Թաթեւացիի հետեւեալ դժուարիմաց հատուածին մէջ։

«Արդ ով խարդողական թշնամիք, ներբողելով ձեր զճշմարտաքարոզ վկայն Քրիստոսի զյոգներջանիկն Գրիգոր՝ ատադաղակ բանիւ սփածանել մերկութեանն ծածկոյթ, զովին այդու բանիւ ցուցից յայլում տեղւոջ՝ բամբասանս յարդարեալ ձեր նախադրուատին Գրիգորի, այլ ոչ գովեստ. քանզի որթողոքսական վերնադիտող քրիստոսազգեստ նախահարքն գումարեալք ի Նիկիապողիս՝ կանոնադրեցին երկակի հնգեակ եւ եզակի քառեակ թուով միայն՝ ի սրբումն կոչարանին ընթեռնուլ թուղթս զատուածաքարոզ առաքելոյն Պաւղոսի. եւ ի նորապատում գրութեանն զնոյն շարադրութիւն վերառեալ է։ Իսկ բարեզրուատելին Գրիգոր զառ ի հարցն լսելոյն եւ ոչ մակագրեալ ի նոր թարգմանութիւնս, վկայաբանութեամբ ճառագրեաց, թէ «Անօրէն իշխանն իբրեւ աստուածանալն կամեցաւ, ասէ մաքուր առաքեալն, զամենեսին ընդ մեզօք գրաւեաց (Գ. Կոր. Բ. 16)». եւ այս ի հնապատում տառն վերառեալ է, այլ ոչ ի նորապատում շարադրութեանն։ Արդ՝ եթէ սակս ոչ գծագրութեան ի նորաբեր թարգմանութեանցն՝ հնապատում (առ. ընծայում. այսպէս կ'ուղղէ Գ. Տէր Մկրտչեան) աւետարանին իբր զոչ ճշմարիտ ի բաց ընկեցեալ՝ մերժեցի յեկեղեցւոյ, ընդ նմին խոտեալ բամբասի եւ մեծ մակադիտողն Գրիգոր, ստուերաբանութեամբ զրուատեալն ի ձէնջ» (Թաթ. էջ 154-5)։

Հատուածին միտքը պարզ աշխարհաբարով հետեւեալն է.

«Դուք, ով խաբեբայութեամբ մարդ որսացող թշնամիներ, Դուք կը գովաբանէք Քրիստոսի երջանիկ նահատակ Գրիգորը, որպէս զի սուտ խօսքերով ծածկէք ձեր մերկութիւնը։ Բայց ես պիտի ցուցնեմ թէ ինչպէս ձեր այդ խօսքերով մէկ ուրիշ տեղ ալ բամբասանքներ հանած էք ձեր գովաբանած Գրիգորին եւ ոչ թէ գովասանք։ Նիկիոյ սուրբ հայրերը կանոն դրին որ Ս. եկեղեցւոյն մէջ կարդացուին Պօղոսի 14 թուղթերը միայն։ Նոր թարգմանութեան մէջ այս կարգը ընդունելի էր։ Շատ լաւ։ Բայց Ս. Գրիգոր իր ճառերուն մէջ վկայութեան կը բերէ նաեւ Ս. հայրերուն չյիշած եւ նոր թարգմանութեան մէջ չգտնուած [Գ. Կորնթացոց թուղթին մէկ հատուածը] «Անօրէն իշխանն...»։ Այս հատուածը կայ հին թարգմանութեան մէջ, բայց նոր թարգմանութեան մէջ չկայ։ Արդ՝ եթէ նոր թարգմանութեան մէջ յիշեալ հատուածը չգտնուելուն համար՝ Աւետարանի հին թարգմանութիւնը իբրեւ ոչ ճշմարիտ պիտի մերժուի, ուրեմն նաեւ մերժուած ու բամբասանքի ենթարկուած պիտի ըլլայ Գրիգոր մեծ եպիսկոպոսը*, որ դուք կեղծաւոր խօսքերով գովեր էիք»։

*) Մակադիտող թարգմանաբար ընծայուած է յն. եպիսկոպոս բառէն, ինչպէս է նաեւ վերադիտող, վերահսկող:

Այս բոլորէն շատ պարզ կերպով կ'երեւայ որ Նորարեր կոչուած երրորդ թարգմանութիւն մը իրօք եղած է, բայց այս թարգմանութիւնը ընդհանուր ազգին կողմէ հաւանութիւն գտած և եկեղեցւոյն մէջ ընդունուած գործ մը համարելու չէ ըսել, այլ Մայրագոմեցւոց աղանդին միայն յատուկ և մասնաւոր գործ մը, որմէ կ'զգուշանային ուղղափառները։

Գ. Տ. Մկրտչեան ուրիշ խնդիր մըն ալ կ'առաջարկէ, որ կը թողու ուրիշներու քննութեան։ Այս խնդիրը հետեւեալն է։

Տիմոթէոս Կուզի Հակաճառութեան մէջ՝ որ ամբողջապէս յունաբան հայերէնով գրուած գործ մըն է, Ս. Գրքէն վկայութեան կոչուած հատուածները այնպէս տարբեր են Ոսկեդարեան թարգմանութենէն, որ յայտնապէս բոլորովին ուրիշ աղբիւր մը կ'ենթադրեն։ Արդ՝ կը հարցնէ Գ. Տէր Մկրտչեան, Տիմոթէոսի այս կոչումները թարգմանչին ձեռքէն են, թէ՞ ուղղակի առնուած են Ս. Գրքի վերոյիշեալ Երրորդ կամ Նորարեր թարգմանութենէն։ Այս խնդրին լուծումը շատ կարեւոր է, որովհետեւ եթէ կարելի ըլլայ հաստատել թէ յիշեալ կոչումները իրօք Նորարեր թարգմանութենէն առնուած են, այն ժամանակ մենք ունինք ընտիր միջոց մը՝ վերականգնելու համար Նորարեր թարգմանութեան շատ մը պատառիկները։

Եթէ Նորարեր թարգմանութիւնը Մայրագոմեցւոց աղանդին յատուկ գործ մըն էր, առաջին ակնարկով իսկ կ'երեւայ որ Տիմոթէոսի ուղղափառ թարգմանիչը բնաւ իրաւունք չպիտի համարէր իրեն՝ դիմելու անոր։ Այս պարագային նոր և աւելի ծանրակշիռ խնդիր մը կը ծագի։ Նորարերէն զատ կար ուրիշ չորրորդ թարգմանութիւն մըն ալ, որմէ օգտուած է Տիմոթէոսի ուղղափառ թարգմանիչը։ Թարենացւոյն տուած տեղեկութիւնը՝ որ Գ. Տէր Մկրտչեան Նորարերին համար կառնէ, չի կրնար ամենեւին վերաբերիլ անոր (քանի որ գիտենք թէ Նորարերը Մայրագոմեցի աղանդաւորներուն կը պատկանէր) և կրնայ յարմարիլ միայն Տիմոթէոսի գործածած յիշեալ չորրորդ թարգմանութեան։

Բայց այսպիսի կարեւոր խնդրի մը լուծման համար անցողակի ակնարկները բաւական չհամարելով, կուզենք մանրամասն քննութեան ենթարկել Տիմոթէոսի վկայութեանց խնդիրը։

Տիմոթէոսի հրատարակիչները գեղեցիկ ցանկ մը պատրաստած են բոլոր այն վկայութեանց, որ Տիմոթէոս մէջ կը բերէ Ս. Գրքէն (տես էջ 343—354)։ Այս ցանկին համեմատ Տիմոթէոսի մէջ բերած մեծ ու փոքր կոչումներուն բովանդակ գումարն է 842, որմէ 237 կը պատկանի Հին Կտակարանին և 605 Նոր Կտակարանին։ Կոչումներուն մեծագոյն մասը բնականաբար մէկ-մէկ անգամ կը պատահի. բայց կան նաև բազմաթիւ կոչումներ՝ որոնց մէկէ աւելի անգամներ կը պատահին բովանդակ գրքին մէջ։ Վերջիններուն թիւը երկու հարիւր կանցնի։ Հրատարակութեան 335—342 էջերը առնուած են Տիմոթէոսի երկրորդ կիսակատար ձեռագրէ մը. այս մասերը նախորդներուն կրկնութիւնն ըլլալով՝ բնական է թէ հոն պատահած վկայութիւնները պէտք է հանել վերի թիւէն։ Նոյն թիւէն հանելու է նաև այն կոչումները կամ վկայութիւնները, որոնք թէև ցանկին մէջ իբր այնպէս յիշուած են, բայց իսկապէս, բառացի վկայութիւններ չեն, այլ Ս. Գրքի այս կամ այն մասին յիշողութիւն կամ ակնարկ։ Հրատարակիչները ցանկին մէջ ասոնց համար առանձին նշան մը դրած չեն թէև, բայց անոնցմէ շատը նշանակած են իւրաքանչիւր էջի տակ՝ «հմմտ.» համա-

ոստադրութեամբ: Վերջապէս կան նաև այնպիսի կոչումներ, որոնք Ս. Գրքի մէջ քանի մը անգամ յիշուած ըլլալով՝ բնական է որ քանի մը անգամ ալ պիտի անցնէին ցանկին մէջ։ Մենք այսպիսի կոչումները հաշուելու ենք միայն մէկ անգամ։

Բոլոր այս կէտերն ի նկատի ունենալով՝ կը տեսնենք որ Տիմոթէոսի մէջ անկախօրէն կրկնուած բուն վկայութեանց իսկական թիւն է 108, որ և պիտի ծառայէ իբր հիմ մեր քննութեան։

Յաջորդ էջերուն մէջ կը բերենք յիշեալ 108 վկայութիւնները՝ համեմատուած իրենց կրկնութեանց հետ։ Ցանկը կազմուած է սապէս. նախ կը դնենք Ս. Գրքի Ոսկեդարեան Թարգմանութեան համապատասխան կոչումը. ապա կը կցենք յունարէն օրինակը. անոր հետև կուգան Տիմոթէոսի վկայութիւնները, որոնք սովորաբար երկու անգամ կրկնուած են, բայց կան այնպիսիները՝ որ 3, 5, 10, 12 և մինչև 20 անգամ կրկնուած են (համմտ. Ա. Յովհ. Ե. 20, Փիլիպ. Բ. 6—11, Յովհ. Ա. 14)։ Այս վկայութեանց մէջ առաջին անգամ յիշուածը իբր հիմ ընդունելով՝ երկրորդ և յաջորդ կրկնութիւններուն մէջ երևան եկած տարբերութիւնները կը դնենք շեղատառ, որպէս զի համեմատութիւնը աւելի աչքի զարնէ։

1. Բ. Օր. ԻԸ 66. Եւ եղիցին կեանք քո կախեալ առաջի աչաց քոց, և զարհուրեսցիս զցայգ և զցերեկ, և ոչ հաւատասցես կենացն քոց Καὶ ἔσται ἡ ζωή σου κρεμαμένη ἀπέναντι τῶν ὀφθαλμῶν σου, καὶ φοβηθήσῃ ἡμέρας καὶ νυκτός, καὶ οὐ πιστεύσεις τῇ ζωῇ σου.— Տիմոթ. էջ 103՝ Տեսանիցէք զկենդանութիւնն ձեր կախեալ առաջի աչաց ձերոց և ոչ հաւատայցէք. էջ 138՝ Տեսցէք զկենդանութիւնն ձեր առաջի աչաց ձերոց... էջ 140՝ Տեսանիցէք զկենդանութիւն ձեր կախեալ առաջի աչաց ձերոց։

2. Ա. Թագ. Ը. 7. Ոչ եթէ զքեզ անարգեցին, այլ զիս մերժեցին զթագաւորել ի վերայ նոցա. Οὐ σὲ ἐξουθενήκασιν, ἀλλ' ἢ ἐμὲ ἐξουδενώκασι τοῦ μὴ βασιλεύειν ἐπ' αὐτῶν.—Տիմոթ. էջ 66՝ Ոչ զքեզ անարգեցին, այլ զիս, առ յոչ թագաւորել ի նոսա. էջ 116՝ Ոչ զքեզ արհամարհեցին, այլ զիս։

3. Յոբ Թ. 8. Որ ձգեաց զերկինս միայն. Ὁ τανύσας τὸν οὐρανὸν μόνος.—Տիմոթ. էջ 14՝ Որ ձգեաց զերկին միայն. էջ 48՝ Որ պրկեաց զերկին միայն։

4. Սաղմ. Է. 12. Աստուած դատաւոր արդար հզօր և երկայնամիտ. Ὁ Θεὸς κριτὴς δίκαιος, καὶ ἰσχυρὸς καὶ μακρόθυμος.—Տիմոթ. էջ 50՝ (Աստուած իմ, դատաւոր արդար և հզօր և երկայնամիտ). էջ 72՝ Զի Աստուած դատաւոր է, արդար և հարուստ և երկայնամիտ. էջ 210՝ Զի Աստուած է դատաւոր արդար և հարուստ և երկարօղի։

5. Սաղմ. ԽԴ. 7—8. Աթոռ քո, Աստուած, յաւիտեանս յաւիտենից, գաւազան ուղղութեան գաւազան արքայութեան քոյ։ Սիրեցեր զարդարութիւն, և ատեցեր զանօրէնութիւն։ Վասն այսորիկ օծ զքեզ Աստուած, Աստուած քո, իւղով ուրախութեան առաւել քան զընկերս քո Ὁ θρόνος σου ὁ Θεὸς εἰς αἰῶνα αἰῶνος, ῥάβδος εὐθύτητος ἡ ῥάβδος τῆς βασιλείας σου. ἠγάπησας δικαιοσύνην, καὶ ἐμίσησας ἀνομίαν, διὰ τοῦτο ἔχρισέ σε ὁ Θεὸς ὁ Θεός σου ἔλαιον ἀγαλλιάσεως παρὰ τοὺς μετόχους σου.—Տիմոթ. էջ 52՝ Աթոռ քո, Աստուած, յաւիտեան յաւիտենի, գաւազան ուղղութեան գաւազան արքայութեան քոյ. սիրեցեր զարդարութիւն և ատեցեր (զ)անիրաւութիւն. այսուիկ եօծ զքեզ Աստուած, Աստուած քո, եւղ մեծութեան, քան զհաւասարորդս քո. էջ 239՝

Աթոռ քո, Աստուած, յաւիտեան յաւիտենի, գաւազան ուղղութեան գաւազան արքայութեան քո, *սիրեցեր զարդարութիւն և ատեցեր* զանօրէնութիւն. վասն այսորիկ *եօծ զքեզ Աստուած, Աստուած քո, եւղ* ուրախութեան, *քան* զընկե-րս *քո.*

6. Սաղմ. ԽԹ 3. Աստուած մեր յայտնապէս եկեսցէ, և Աստուած մեր մի դադարեսցէ. Ὁ Θεὸς ἐμφανῶς ἥξει, ὁ Θεὸς ἡμῶν, καὶ οὐ παρασιωπήσεται. —*Տիմոթ. էջ 49՝ Աստուած յայտնապէս եկեսցէ, Աստուած մեր և ոչ լռեսցէ. էջ 90՝ Աստուած յայտնապէս եկեսցէ,* Աստուածն *մեր և ոչ լռեսցէ։*

7. Սաղմ. ՁԸ. 10. Դու տիրես զօրութեանց ծովու, և զխռովութիւն ալեաց նորա դու ցածուցանես. Σὺ δεσπόζεις τοῦ κράτους τῆς θαλάσσης, τὸν δὲ σάλον τῶν κυμάτων αὐτῆς σὺ καταπραΰνεις.—*Տիմոթ. էջ 97՝ Դուն տիրես հաստութեան ծովու և շարժութիւն կոհակաց նորա դու ցածուցանես. էջ 294՝ Դու տիրես հաստութեան ծովու,* զտղելութիւն կոխակացն *նորա դու* հե-զացուցանես։

8. Սաղմ. ՃԹ. 1. Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ. Εἶπεν ὁ κύριος τῷ κυρίῳ μου, κάθου ἐκ δεξιῶν μου.—*Տիմոթ. էջ 12՝ Ասաց Տէր Տեառն իմում. նիստ յաջմէ իմմէ. էջ 270՝ Ասաց Տէր Տեառն իմում. նիստ* ի յաջմէ իմմէ։

9. Սաղմ. ՃԼԸ. 21—22. Զատեցիր քո, Տէր, ատեցի, և ի վերայ թշնամեաց քոց մաշեցայ։ Ատելութիւն կատարեալ ատեցի զնոսա, և եղեն ինձ ի թշնամիս։ Οὐχὶ τοὺς μισοῦντάς σε, κύριε, ἐμίσησα, καὶ ἐπὶ τοὺς ἐχθρούς σου ἐξετηκόμην; τέλεων μῖσος ἐμίσουν αὐτούς, εἰς ἐχθροὺς ἐγένοντό μοι.—*Տիմոթ. էջ 7՝ Զատեցիր քո, Տէր, ատեցի, և ի վերայ թշնամեաց քոց մաշեցա. կատարեալ ատելութիւն ատեցի զնոսա, ի թշնամիս եղեն ինձ. էջ 151՝* Զատօղս զքեզ, *Տէր, ատեցի, և* ի թշնամիս քո ի բաց հալեի.* *կատարեալ ատելութիւն* ատեի *զնոսա. ի թշնամիս եղեն ինձ։*

10. Եսայի Է. 14. Ահա կոյսն յղասցի և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ. ἰδοὺ ἡ παρθένος ἐν γαστρὶ λήψεται, καὶ τέξεται υἱόν, καὶ καλέσεις τὸ ὄνομα αὐτοῦ Ἐμμανουήλ.—*Տիմոթ. էջ 56՝ Ահա կոյս յորովայնի կալցի և ծնցի որդի, և կարդասցեն զանուն նորա Էմմանուէլ. էջ 118՝ Ահա կոյս* յորովայնի ընկալցի *և ծնցի որդի և* կոչեսցեն *զանուն նորա Էմմանուէլ։*

11. Եսայի Թ. 6. Եւ անուն կոչեսցի նմա՝ հրեշտակ մեծի խորհրդոյ, սքանչելի խորհրդակից, Աստուած, հզօր, իշխան, հայր հանդերձելոյ աշխարհին։ Καὶ καλεῖται τὸ ὄνομα αὐτοῦ, μεγάλης βουλῆς ἄγγελος.—*Տիմոթ. էջ 277՝ Եւ կոչի անուն իւր մեծի խորհրդոյ հրեշտակ, սքանչելի խորհրդակից, Աստուած հզօր, իշխանական պետ խաղաղութեան, հայր հանդերձելոյ յաւիտենի. էջ 56՝ Կոչի անուն իւր մեծի խորհրդոյ հրեշտակ, Աստուած հզօր։*

12. Եսայի ԻԵ. 8. Եհան Աստուած զամենայն արտօսր յամենայն երեսաց։ Ἀφεῖλε κύριος ὁ Θεὸς πᾶν δάκρυον ἀπὸ παντὸς προσώπου.—*Տիմոթ. էջ 101՝ Ինքն* եղերծ զամեն *արտօսր յամենայն դիմէ. էջ 271՝* Ի բաց եհան Աստուած զամենայն *արտօսր յամենայն դիմէ։*

13. Եսայի ԼԵ. 5. Յայնժամ աչք կուրաց բացցին և ականջք խլից լուիցեն։ Τότε ἀνοιχθήσονται ὀφθαλμοὶ τυφλῶν, καὶ ὦτα κωφῶν ἀκούσονται.—*Տիմոթ. էջ 56՝ Յայնժամ բացցին աչք կուրաց և ականջք խլաց լուիցեն. էջ 294՝ Յայնժամ բացցին աչք կուրաց և ականջ (ուղղելի* ականջք*) խլաց լուիցեն։*

* Միւս վկայութեանց մաշեցայ ձեւը կը ցուցնէ որ բառս ուղղելու է հաշէի։

14. Եսայի Խ. 10. Ահաւասիկ Աստուած ձեր, ահաւասիկ Տէր. Տէր գայ զօրութեամբ և բազուկն տէրութեամբ իւրով։ Ἰδοὺ ὁ Θεὸς ὑμῶν, ἰδοὺ κύριος, κύριος μετὰ ἰσχύος ἔρχεται, καὶ ὁ βραχίων μετὰ κυρίας.—Տիմոթ. էջ 56՝ Ահա Աստուած մեր, ահա Տէր գայ հզօրութեամբ և բազուկ իւր տիրականութեամբ. էջ 91՝ Ահա Աստուած մեր, ահա Տէր գայ հզօրութեամբ և բազուկն տէրութեամբ. էջ 294՝ Ահա Աստուած մեր, ահա Տէր զօրութեամբ գայ. եւ բազուկն իւր տէրութեամբ։

15. Եսայի ԽԲ. 8. Զփառս իմ այլում ոչ տաց. Τὴν δόξαν μου ἑτέρῳ οὐ δώσω.—Տիմոթ. էջ 174 և 212՝ Զփառս իմ այլում ոչ տաց։

16. Եսայի ԽԹ. 1. Յարգանդէ կոչեաց զիս և յորովայնէ մօր իմոյ կարդաց զանուն իմ. Ἐκ κοιλίας μητρός μου ἐκάλεσε τὸ ὄνομά μου.—Տիմոթ. էջ 54 և 56՝ Յորովայնէ մօր իմոյ կոչեաց զանուն իմ։

17. Եսայի ԾԲ. 6. Ես նոյն եմ որ խօսէին. ἐγώ εἰμι αὐτὸς ὁ λαλῶν, πάρειμι.—Տիմոթ. էջ 134 և 233՝ Խօսողս առ ընթեր եմ. էջ 86՝ Ես խօսողս առընթեր եմ։

18. Եսայի ԾԳ. 3. Այր մի ի հարուածս, և գիտէ համբերել ցաւոց. ἄνθρωπος ἐν πληγῇ ὤν, καὶ εἰδὼς φέρειν μαλακίαν. Տիմոթ. էջ 29՝ Մարդ ի հարուածս եղեալ և գիտելով բերել մեղկութիւն. էջ 80՝ Մարդ ի հարուածս եղեալ. էջ 275՝ Մարդ ի հարուածս եղեալ և գիտակ բերել մեղկութիւն։

19. Եսայի ԾԳ. 4—5. Նա զմեղս մեր բառնայ և վասն մեր չարչարի, և մեք համարեցաք զնա ի ցաւս և ի հարուածս և ի չարչարանս իւրք յԱստուծոյ։ Բայց նա վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց, և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց։ Οὗτος τὰς ἁμαρτίας ἡμῶν φέρει, καὶ περὶ ἡμῶν ὀδυνᾶται, καὶ ἡμεῖς ἐλογισάμεθα αὐτὸν εἶναι ἐν πόνῳ, καὶ ἐν πληγῇ, καὶ ἐν κακώσει. Αὐτὸς δὲ ἐτραυματίσθη διὰ τὰς ἁμαρτίας ἡμῶν, καὶ μεμαλάκισται διὰ τὰς ἀνομίας ἡμῶν.—Տիմոթ. էջ 29՝ Սա զմեղս մեր բերէ և յաղագս մեր վշտանայ. և մեք համարեցաք զնա զոլ ի ցաւս և ի վէրս և ի հիւանդութեան. իսկ ինքն վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց և մեղկացեալ է վասն անօրէնութեան մերոյ. էջ 275՝ Սա զմեղս մեր բերէ և վասն մեր հեծէ, և մեք համարեցաք զոլ զնա ի ցաւ եւ ի հարուածի և ի հիւանդութեան. իսկ ինքն վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց և մեղկեալ է սակս անօրէնութեան մերոյ։

20. Եսայի ԾԳ. 9. Զի անօրէնութիւն ոչ գործեաց, և ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա։ Ὅτι ἀνομίαν οὐκ ἐποίησεν, οὐδὲ δόλον ἐν τῷ στόματι αὐτοῦ.—Տիմոթ. էջ 174 Մեղս իսկ ոչ արար և ոչ գտաւ նենգութիւն ի բերան իւրում. էջ 229՝ Մեղս ոչ արար և ոչ գտաւ նենգութիւն ի բերան իւրում. էջ 244՝ Մեղս ոչ արար և ոչ գտաւ նենգ ի բերան նորա։ [Համմ. նաև Ա. Պետր. Բ. 22]։

21. Եսայի ԿԱ. 1. Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս։ Πνεῦμα κυρίου ἐπ' ἐμέ, οὗ εἵνεκεν ἔχρισέ με—Տիմոթ. էջ 57՝ Հոգի Տեառն առ իս, որոյ սակս եօծ զիս. էջ 100՝ Ոգի Տեառն առ իս, որոյ սակս եօծ զիս. էջ 294՝ Ոգի Տեառն առ իս, սակս որոյ եօծ զիս։

22. Եսայի ԿԶ. 24. Եւ ելցեն և տեսցեն զոսկերս մարդկան առ իս յանցուցելոց, զի որդն նոցա ոչ վախճանեսցի, և հուր նոցա ոչ շիջցի, և եղիցին ի տեսիլ ամենայն մսեղեաց։ Καὶ ἐξελεύσονται, καὶ ὄψονται τὰ κῶλα τῶν ἀνθρώπων τῶν παραβεβηκότων ἐν ἐμοί. ὁ γὰρ σκώληξ αὐτῶν οὐ τελευτήσει,

καὶ τὸ πῦρ αὐτῶν οὐ σβεσθήσεται, καὶ ἔσονται εἰς ὅρασιν πάσῃ σαρκί.—Տիմոթ. էջ 37՝ Եւ տեսցեն զվանդս մարդկան զյանցաւորացն առ իս. քանզի որդն նոցա ոչ վախճանեսցի՜ և հուրն նոցա ոչ շիջցի, և եղիցի ի տեսիլ ամենայն մարմնոյ. էջ 282՝ (Որպէս ամենեքեան) տեսցեն զվանդս մարդկան՝ յանցաւորացն ի նմա. քանզի՝ որդն նոցա ոչ վախճանեսցի և հուր նոցա ոչ շիջցի, և եղիցին ի տեսիլ ամենայն մարմնոյ։

23. Երեմ. ԺԷ. 9. Եւ մարդ է, և ո՞վ ծանիցէ զնա. Καὶ ἄνθρωπός ἐστι, καὶ τίς γνώσεται αὐτόν;—Տիմոթ. էջ 3՝ Քանզի մարդ է, և ո՞ ծանիցէ զնա. էջ 3՝ Քանզի մարդ է, և ո՞ ծանիցէ զնա. էջ 245՝ Եւ մարդ է և ո՞վ ծանիցէ զնա։

24. Ամովս Դ. 13. Զի ահաւասիկ ես եմ՝ որ հաստատեմ զերկինս և հաստատեմ զհողմս։ Διότι ἰδοὺ ἐγὼ στερεῶν βροντήν, καὶ κτίζων πνεῦμα.—Տիմոթ. էջ 241՝ Զի ես հաստատելով որոտումն և շինելով ոգի. էջ 14՝ Ես միայն ձգեցի զերկինսն։

25. Ովսէէ ԺԱ. 9. Զի Աստուած իմ ես և ոչ մարդ, ի միջի ձերում սուրբ։ Διότι Θεὸς ἐγώ εἰμι, καὶ οὐκ ἄνθρωπος. ἐν σοὶ ἅγιος.—Տիմոթ. էջ 4՝ Ես եմ Աստուած և ոչ մարդ, ի քեզ սուրբս. էջ 265՝ Զի Աստուած ես եմ և ոչ մարդ՝ ի քեզ սուրբ։

26. Զաք. Թ. 9. Ահա թագաւոր քո գայ առ քեզ, արդար և Փրկիչ, նոյն հեզ՝ և հեծեալ ի վերայ իշոյ և յաւանակի նորոյ։ Ἰδοὺ ὁ βασιλεύς ἔρχεταί σοι δίκαιος καὶ σώζων, αὐτὸς πραΰς, καὶ ἐπιβεβηκὼς ἐπὶ ὑποζύγιον καὶ πῶλον νέον.—Տիմոթ. էջ 91՝ Ահա թագաւոր քո գայ քեզ, արդար և կեցուցիչ, ինքն հեզ և վերելակեալ ի վերայ իշոյ և յաւանակի նորոյ. էջ 243՝ Ահա թագաւոր քեզ գայ քեզ, արդար և ապրեցուցիչ, ինքն հեզ և վերելարկեալ յէշ և աւանակ նոր։

27. Բարուք Գ. 38. Յետ այսորիկ յերկրի երեւեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ. Μετὰ τοῦτο ἐπὶ τῆς γῆς ὤφθη, καὶ ἐν τοῖς ἀνθρώποις συνανεστράφη.—Տիմոթ. էջ 31 և 59՝ Ի վերայ երկրի երեւեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ. էջ 82՝ Յերկրի Աստուած երեւեցաւ, ընդ մարդկան շրջեցաւ. էջ 245՝ Յետ այսորիկ եւ յերկրի երեւեցաւ և ընդ մարդկան վերադարձեաց։

28. Մատթ. Գ. 17. Դա է որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ. Οὗτός ἐστιν ὁ υἱός μου ὁ ἀγαπητός, ἐν ᾧ εὐδόκησα.—Տիմոթ. էջ 89, 91, 296 և 305՝ Սա է որդին իմ սիրելի՝ յորում հաճեցայ։

29. Մատթ. Ժ. 32. Ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, խոստովանեցից և ես զնմանէ առաջի հօր իմոյ որ յերկինսն է. Πᾶς οὖν ὅστις ὁμολογήσει ἐν ἐμοὶ ἔμπροσθεν τῶν ἀνθρώπων, ὁμολογήσω κἀγὼ ἐν αὐτῷ ἔμπροσθεν τοῦ πατρός μου τοῦ ἐν οὐρανοῖς.—Տիմոթ. էջ 249՝ Որ ոք խոստովանեսցէ՛ զիս առաջի մարդկան, խոստովանեցից և ես զնա առաջի հօր իմոյ որ յերկինս. էջ 287՝ Ամենայն որ ոք խոստովանեսցէ զիս առաջի մարդկան, խոստովանեցից և ես զնա առաջի հօր իմոյ որ յերկինս։

30. Մատթ. ԺԱ. 29. Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ. առէք զլուծ իմ ի ձեզ. Δεῦτε πρός με, πάντες οἱ κοπιῶντες καὶ πεφορτισμένοι, κἀγὼ ἀναπαύσω ὑμᾶς. ἄρατε τὸν ζυγόν μου ἐφ᾽ ὑμᾶς.—Տիմոթ. էջ 175՝ Եկա՛յք առ իս ամենեքեան՝ վաստակեալք և բեռնաւորեալք, և ես հանգուցից զձեզ. էջ 25՝ Եկա՛յք առ իս ամենայնք վաստակեալք և ծանրաբեռնեալք և ես հանգուցից զձեզ. էջ 301՝ Բարձէք զլուծ իմ ի ձեզ. էջ 287՝ Եկա՛յք առ իս, ամենայն վաստակեալք և ծանրաբեռնեալք, և ես հան-

զուցից զձեզ. բարձէք զլուծ իմ ի ձեզ. էջ 246՝ Եկայք առ իս ամենայն *վաստակեալք եւ բեռնաւորեալք, եւ ես հանգուցից զձեզ. բարձէք զլուծ իմ ի ձեզ։*

31. Մատթ. ԺԶ. 13. Զո՞ ոք ասեն զինէն մարդիկ՝ թէ իցէ որդի մարդոյ. Τίνα με λέγουσιν οἱ ἄνθρωποι εἶναι, τὸν υἱὸν τοῦ ἀνθρώπου;—*Տիմոթ. էջ 97՝ Զո՞ զիս ասեն մարդիկ գոլ զՈրդիս Մարդոյ. էջ 288՝* Զո՞ ասեն *մարդիկ գոլ* զՈրդի *Մարդոյ։*

32. Մատթ. ԺԶ. 17. Երանի քեզ, Սիմոն, որդի Յովնանու, զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է. Μακάριος εἶ, Σίμων Βὰρ Ἰωνᾶ, ὅτι σὰρξ καὶ αἷμα οὐκ ἀπεκάλυψέ σοι, ἀλλ᾽ ὁ πατήρ μου ὁ ἐν τοῖς οὐρανοῖς.—*Տիմոթ. էջ 159՝ Երանեալ իսկ ես, Սիմոն Բարիոնա, զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայրն իմ որ յերկինս. էջ 289՝ Երանեալ* ես, *Սիմոն Բարյոնա, զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայրն իմ որ* յերկինս է։

33. Մատթ. ԻԲ, 29. Մոլորեալք, ոչ գիտէք զգիրս եւ ոչ զզօրութիւն Աստուծոյ. Πλανᾶσθε, μὴ εἰδότες τὰς γραφάς, μηδὲ τὴν δύναμιν τοῦ Θεοῦ.—*Տիմոթ. էջ 47՝ Մոլորիք ոչ գիտելով զգրեցեալսն եւ ոչ զզօրութիւն Աստուծոյ. էջ 90՝ Մոլորիք, ոչ* գիտակէ *զգրեցեալսն եւ ոչ* զկարողութիւն *Աստուծոյ. էջ 168՝ Մոլորիք, ոչ գիտելով* զգրութիւնսն *եւ ոչ* զկարողութիւն *Աստուծոյ։*

34. Մատթ. ԻԴ. 35. Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ մի անցցեն. Ὁ οὐρανὸς καὶ ἡ γῆ παρελεύσονται, οἱ δὲ λόγοι μου οὐ μὴ παρέλθωσι.—*Տիմոթ. էջ 6՝ Երկինք եւ երկիր անցցեն, իսկ բանք իմ ո՛չ անցցեն. էջ 175՝* Երկին *եւ երկիր անցցեն, իսկ բանք իմ ո՛չ անցցեն։*

35. Մատթ. ԻԶ. 38. Տրտում է ոգի իմ մինչեւ ի մահ. Περίλυπός ἐστιν ἡ ψυχή μου ἕως θανάτου.—*Տիմոթ. էջ 29 եւ 275՝ Տրտում է անձն իմ մինչ ի մահ։*

36. Մատթ. ԻԷ. 40. Ապրեցո զքեզ, թէ Որդի ես Աստուծոյ՝ էջ ի խաչէդ.—Σῶσον σεαυτόν· εἰ υἱὸς εἶ τοῦ Θεοῦ, κατάβηθι ἀπὸ τοῦ σταυροῦ.—*Տիմոթ. էջ 45՝ Եթ՝ Որդի ես Աստուծոյ, ապրեցո՛ զքեզ ինքն եւ էջ ի խաչէդ. էջ 243՝ Եթ՝ Որդի ես Աստուծոյ, էջ ի խաչէդ։*

37. Մատթ. ԻԷ. 46. Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս. Θεέ μου, Θεέ μου, ἱνατί με ἐγκατέλιπες;—*Տիմոթ. էջ 121 եւ 163՝ Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր զիս ի բաց թողեր. էջ 79՝* Աստուած *Աստուած իմ, ընդէ՞ր զիս ի բաց թողեր։*

38. Մատթ. ԻԸ. 18. Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկիր. Ἐδόθη μοι πᾶσα ἐξουσία ἐν οὐρανῷ καὶ ἐπὶ γῆς.—*Տիմոթ. էջ 209՝ Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն՝ յերկինս եւ յերկիր. էջ 232՝ Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն* յերկին եւ ի վերայ երկրի։

39. Մատթ. ԻԸ. 19. Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. Πορευθέντες οὖν μαθητεύσατε πάντα τὰ ἔθνη, βαπτίζοντες αὐτοὺς εἰς τὸ ὄνομα τοῦ Πατρὸς καὶ τοῦ Υἱοῦ καὶ τοῦ Ἁγίου Πνεύματος.—*Տիմոթ. էջ 6՝ Գնացէք, աշակերտեցէք զամենայն ազինս, մկրտելով զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. էջ 98՝* Գնացեալք *աշակերտեցէք զամենայն* ազգս, *մկրտելով զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ* Սրբոյ Հոգւոյ. *էջ 153՝* Գնացեալք *աշակերտեցէք զամենայն* ազգս. *մկրտելով զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ* Հոգւոյ *Սրբոյ։*

40. Մարկ. Դ. 39. Դադարեա՛, կարկեա՛ց. Σιώπα, πεφίμωσο.—*Տիմոթ, էջ 95՝ Լռեա՛ց, կարկեցի՛ր. էջ 98՝* Լռեա՛, *կարկեցի՛ր։*

41. *Մարկ. Ե. 41. Աղջիկ դու, քեզ ասեմ, արի.* Τὸ κοράσιον, σοὶ λέγω, ἔγειραι.—*Տիմոթ. էջ 102՝ Մանուկ, արի. էջ 196՝* Համբո՛կ կանգնեցի՛ր.

42. *Մարկ. ԺԴ. 33. Եւ սկսաւ տխրել և հոգալ.* Καὶ ἤρξατο ἐκθαμβεῖσθαι καὶ ἀδημονεῖν.—*Տիմոթ. էջ 29՝ Սկսաւ հիանալ և յոյժ տխրել. էջ 275՝ Սկսաւ* զարհուրել *և յոյժ տխրել։*

43. *Ղուկ. Ա. 2. Որ ի սկզբանէ ականատեսք և սպասաւորք եղեն Բանին.* Οἱ ἀπ' ἀρχῆς αὐτόπται καὶ ὑπηρέται γενόμενοι τοῦ λόγου.—*Տիմոթ. էջ 59՝ Բանին եղեն ինքնատեսք և սպասաւորք Բանին. նմմտ. էջ 67՝ Ի սկզբանէ ինքնատեսք և սպասաւորք եղեալք Բանին. էջ 93՝ ինքնատեսս և սպասաւորս եղանել Բանին։*

44. *Ղուկ. Ա. 32—33. Նա եղիցի մեծ, և որդի Բարձրելոյ կոչեսցի, և տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի հօրն նորա, և թագաւորեսցէ ի վերայ տանն Յակոբայ յաւիտեանս, և թագաւորութեանն նորա վախճան մի լիցի.* Οὗτος ἔσται μέγας, καὶ υἱὸς ὑψίστου κληθήσεται· καὶ δώσει αὐτῷ Κύριος ὁ Θεὸς τὸν θρόνον Δαβὶδ τοῦ πατρὸς αὐτοῦ, καὶ βασιλεύσει ἐπὶ τὸν οἶκον Ἰακὼβ εἰς τοὺς αἰῶνας, καὶ τῆς βασιλείας αὐτοῦ οὐκ ἔσται τέλος.—*Տիմոթ. էջ 292՝ Սա եղիցի մեծ և Որդի Բարձրելոյ կոչեսցի, և տացէ նմա Տէր Աստուած զթագաւորութիւն Հօր իւրոյ, և թագաւորեսցէ ի տունն Յակոբայ յաւիտեանս, և թագաւորութեանն նորա ոչ եղիցի վախճան, էջ 247՝* թագաւորեաց ի տանն *Յակոբայ յաւիտեանս, և թագաւորութեանն* իւրոյ *ոչ եղիցի վախճան. էջ 246՝ և* թագաւորեաց ի տանն *Յակոբայ յաւիտեանս. էջ 241՝* թագաւորէ *ի տանն Յակոբայ յաւիտեանս, և թագաւորութեանն* իւրոյ ո՛չ է *վախճան։*

45. *Ղուկ. Ա. 34—35. Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն. Զիա՞րդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ։ Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցնա. Հոգի Սուրբ եկեսցէ ի քեզ, և զօրութիւն Բարձրելոյ հովանի լիցի ի վերայ քո. քանզի և որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է, և որդի Աստուծոյ կոչեսցի։* Εἶπε δὲ Μαριὰμ πρὸς τὸν ἄγγελον, Πῶς ἔσται τοῦτο, ἐπεὶ ἄνδρα οὐ γινώσκω; καὶ ἀποκριθεὶς ὁ ἄγγελος εἶπεν αὐτῇ, Πνεῦμα Ἅγιον ἐπελεύσεται ἐπὶ σέ, καὶ δύναμις ὑψίστου ἐπισκιάσει σοι· διὸ καὶ τὸ γεννώμενον ἅγιον κληθήσεται Υἱὸς Θεοῦ.—*Տիմոթ. էջ 292՝ Ասաց իսկ Մարիամ առ հրեշտակն. Իրր եղիցի ինձ այս, զի զայր ոչ ճանաչեմ։ Եւ ասէ նմա հրեշտակն. Հոգի Սուրբ վերեկեսցէ առ քեզ և կարութիւն Բարձրելոյ հովանասցի քեզ. զի և ծնիցեալն սուրբ կոչեսցի Որդի Աստուծոյ. էջ 269՝ Իրր եղիցի* այս, *զի զայր ոչ* գիտեմ. *ասէր. Հոգին սուրբ վերեկեսցէ առ քեզ և կարութիւն Բարձրելոյն հովանասցի քեզ.* վասն զի *ծնիցեալն սուրբ կոչեսցի որդի Աստուծոյ. էջ 2՝* վասն որոյ եւ որ ծնանելոց է, սուրբ է, *կոչեսցի Որդի Աստուծոյ. էջ 73՝ Հոգի սուրբ* եկեսցէ *առ քեզ և* զօրութիւն *Բարձրելոյ հովանասցի քեզ.* ասկս որոյ *և ծնիցեալն սուրբ,* կարդասցի *Որդի Աստուծոյ։*

46. *Ղուկ. Ա. 76. Եւ դու, մանուկ, մարգարէ Բարձրելոյ կոչեսջիր.* Καὶ σύ, παιδίον, προφήτης ὑψίστου κληθήσῃ.—*Տիմոթ. էջ 71 և 291՝ դու, մանուկ, մարգարէ Բարձրելոյ կոչեսցիս։*

47. *Ղուկ. Բ. 14. Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն,* Δόξα ἐν ὑψίστοις Θεῷ, καὶ ἐπὶ γῆς εἰρήνη.—*Տիմոթ. էջ 240 և 271՝ Փառք ի բարձունս Աստուծոյ և* յերկրի *խաղաղութիւն։*

48. *Ղուկ. Ժ. 16. Որ ձեզ լսէ, ինձ լսէ. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ.* Ὁ ἀκούων ὑμῶν ἐμοῦ ἀκούει, καὶ ὁ ἀθετῶν ὑμᾶς ἐμὲ ἀθετεῖ.—*Տիմոթ.*

էջ 66 և 248՝ Լաօղն ձեզ ինձ լսէ. և արհամարհիչն ձեզ՝ զիս արհամարհէ. էջ 211՝ Լսօղն ձեզ ինձ լսէ և արհամարհօղն *ձեզ՝ զիս արհամարհէ. էջ 315՝ Լսօղն ձեզ ինձ լսէ և* անգոսնիչն *ձեզ՝ զիս* անգոսնէ։

49. Ղուկ. Ժ. 22. Եւ ոչ որ գիտէ թէ ով է Որդի, եթէ ոչ Հայր. Καὶ οὐδεὶς γινώσκει τίς ἐστιν ὁ υἱός, εἰ μὴ ὁ πατήρ.—*Տիմոթ. էջ 18՝ Ոչ որ գիտէ զՈրդին եթ' ոչ Հայրն. էջ 296՝ Ոչ որ գիտէ զՈրդին եթ' ոչ* Հայր։

50. Ղուկ. ԻԳ. 42. Յիշեա զիս, Տէր, յորժամ գայցես արքայութեամբ քով. Μνήσθητί μου, Κύριε, ὅταν ἔλθῃς ἐν τῇ βασιλείᾳ σου.—*Տիմոթ. էջ 103՝ Յիսուս, յիշեա զիս, յորժամ եկեսցես յարքայութեան քում. էջ 277՝ Յիսուս* Տէր, *յիշեա զիս, յորժամ եկեսցես* արքայութեամբ քով. *էջ 278՝ Յիսուս* Տէր, *յիշեա զիս, յորժամ* գայցես արքայութեամբ քով։

51. Յովհ. Ա. 1. Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած. և Աստուած էր Բանն. Ἐν ἀρχῇ ἦν ὁ λόγος, καὶ ὁ λόγος ἦν πρὸς τὸν Θεόν, καὶ Θεὸς ἦν ὁ λόγος.—*Տիմոթ. էջ 84՝ Ի սկզբանն էր Բանն. և Բանն էր առ Աստուածն և Աստուած էր Բանն, էջ 298՝ Ի սկսբանն էր Բանն և Բանն էր առ* Աստուած *և Աստուած էր Բանն։*

52. Յովհ. Ա. 3. Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչինչ որ ինչ եղեն. Πάντα δι' αὐτοῦ ἐγένετο, καὶ χωρὶς αὐτοῦ ἐγένετο οὐδὲ ἕν, ὃ γέγονεν.—*Տիմոթ. էջ 84՝ Նովաւ ամենայն եղև. և թանց նորա եղև և ոչ մի, որ եղև. էջ 210՝* որով *ամենայն եղև, և* առանց *նորա եղև և ոչ մի. էջ 226՝* ամենայն նովաւ *եղև և թանց նորա եղև և ոչ մի. էջ 240՝ և թանց նորա եղև և ոչ մի։*

53. Յովհ. Ա. 9. Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ. ἦν τὸ φῶς τὸ ἀληθινόν, ὃ φωτίζει πάντα ἄνθρωπον ἐρχόμενον εἰς τὸν κόσμον.—*Տիմոթ. էջ 130՝ Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւորէր զամենայն մարդ, եկեալն յաշխարհ. էջ 297՝ Էր լոյսն ճշմարիտ, որ* լուսաւորէ *զամենայն մարդ, եկեալն յաշխարհ։*

54. Յովհ. Ա. 12. Իսկ որք ընկալան զնա՝ ետ նոցա իշխանութիւն Որդիս Աստուծոյ լինել, որոց հաւատացեն յանուն նորա. ὅσοι δὲ ἔλαβον αὐτόν, ἔδωκεν αὐτοῖς ἐξουσίαν τέκνα Θεοῦ γενέσθαι, τοῖς πιστεύουσιν εἰς τὸ ὄνομα αὐτοῦ.—*Տիմոթ. էջ 304՝ Զի եթ' որք զՈրդին առին, ետ նոցա իշխանութիւն ծընունդս Աստուծոյ լինել, որք հաւատան յանուն նորա. էջ 314՝* Իսկ *որք* առին *(տպուած է* աւին*)* զնա, *ետ նոցա իշխանութիւն ծնունդս Աստուծոյ լինել,* հաւատողացն *յանուն նորա։*

55. Յովհ. Ա. 14. Եւ Բանն մարմին եղև, և բնակեաց ի մեզ. Καὶ ὁ λόγος σὰρξ ἐγένετο, καὶ ἐσκήνωσεν ἐν ἡμῖν.—*Տիմոթ. էջ 22, 53, 63, 72, 84, 87 և 297՝ Բանն մարմին եղև և տաղաւարեաց ի մեզ. էջ 54՝ Բանն մարմին եղև և տաղաւարեաց* ընմեզ. *էջ 8, 30, 82, 83, 112, 119, 132, 186, 223, 239, 246 և 260՝ Բանն մարմին եղև։*

56. Յովհ. Ա. 15. Սա է՝ զորմէ ասէի, որ զկնի իմ գալոցն էր, առաջի իմ եղև, զի նախ քան զիս էր. οὗτος ἦν ὃν εἶπον Ὁ ὀπίσω μου ἐρχόμενος ἔμπροσθέν μου γέγονεν. ὅτι πρῶτός μου ἦν.—*Տիմոթ. էջ 297՝ Սա է, զոր ասացին ի հետ իմ գալով, որ առաջի իմ եղև, զի առաջին իմ էր. էջ 298՝* Զնես իմ գայ այր, *որ առաջի իմ եղև, զի* նախ *իմ էր։*

57. Յովհ. Ա. 16. Զի ի լրութենէ անտի նորա մեք ամենեքին առաք. Καὶ ἐκ τοῦ πληρώματος αὐτοῦ ἡμεῖς πάντες ἐλάβομεν.—*Տիմոթ. էջ 57՝ Զի ի լըր-*

մանէ նորա մեք ամենեքեան առաք. էջ 222՝ Քանզի ի լրութենէ նորա մեք ամենեքեան առաք. էջ 297՝ Զի ի լրմանէ նորին մեք ամենեքեան առաք։

58. Յովհ. Բ. 19. Քակեցէք զտաճարդ զայդ, և զերիս աւուրս կանգնեցից զդա. Λύσατε τὸν ναὸν τοῦτον, καὶ ἐν τρισὶν ἡμέραις ἐγερῶ αὐτόν.—Տիմոթ. էջ 80՝ Քակեցէք զբագինս զայս, և յերիս աւուրս յարուցանեմ զդա. էջ 128՝ Լուծէ՛ք զբագինս զայս և յերիս աւուրս կանգնեմ զդա։

59. Յովհ. Գ. 14—15. Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատին, նոյնպէս բարձրանալ պարտ է Որդւոյ մարդոյ. զի ամենայն որ հաւատայ ի նա՝ ընկալցի զկեանսն յաւիտենականս. Καὶ καθὼς Μωσῆς ὕψωσε τὸν ὄφιν ἐν τῇ ἐρήμῳ, οὕτως ὑψωθῆναι δεῖ τὸν υἱὸν τοῦ ἀνθρώπου. ἵνα πᾶς ὁ πιστεύων εἰς αὐτὸν μὴ ἀπόληται, ἀλλ᾽ ἔχῃ ζωὴν αἰώνιον.—Տիմոթ. էջ 103՝ Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատին, այսպէս բարձրանալ պարտ (!) զՈրդին մարդոյ. զի ամէն որ հաւատայ ի նա, ունիցի կենդանութիւն յաւիտենական. էջ 138 և 299՝ Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատին, այսպէս բարձրանալ պարտ է զՈրդին մարդոյ, զի ամենայն հաւատացեալն ի նա՝ ունիցի կենդանութիւն յաւիտենական։—Թէ Ոսկեդարեան թարգմանութեան և թէ Տիմոթէոսի երեք վկայութիւններուն մէջ կը պակսին յաւիտենականին «մի կորիցէ, այլ» բառերը։

60. Յովհ. Զ. 51—52. Ես եմ հացն կենդանի, որ յերկնից իջեալ. եթէ որ ուտիցէ ի հացէ յայսմանէ՝ կեցցէ ի յաւիտեան. և հացն զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի. Ἐγώ εἰμι ὁ ἄρτος ὁ ζῶν, ὁ ἐκ τοῦ οὐρανοῦ καταβάς. ἐάν τις φάγῃ ἐκ τούτου τοῦ ἄρτου ζήσεται εἰς τὸν αἰῶνα. καὶ ὁ ἄρτος δὲ ὃν ἐγὼ δώσω ἡ σάρξ μου ἐστίν, ἣν ἐγὼ δώσω ὑπὲρ τῆς τοῦ κόσμου ζωῆς.—Տիմոթ. էջ 59՝ Ես եմ հացն կենդանի յերկնուստ իջեալ. եթէ որ ուտիցէ յայսմանէ հացէ, կեցցէ յաւիտեան. և հացն իսկ, զոր ես տաց, մարմինս իմ է՝ յաղագս աշխարհի կենդանութեան. էջ 77՝ Ես եմ հացն յերկնուստ իջեալ՝ եւ կենդանութեան տուիչ աշխարհի։ Եւ հացն իսկ՝ զոր ես տաց, մարմինն իմ է, վասն կենդանութեան աշխարհի։

61. Յովհ. Զ. 54. Եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ, և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս. ἐὰν μὴ φάγητε τὴν σάρκα τοῦ υἱοῦ τοῦ ἀνθρώπου, καὶ πίητε αὐτοῦ τὸ αἷμα, οὐκ ἔχετε ζωὴν ἐν ἑαυτοῖς.—Տիմոթ. էջ 59 և 139՝ Եթ՛ ոչ ուտիցէք զմարմին Որդւոյ մարդոյ և ըմպիցէք զնորա արիւնն (արիւն), ոչ ունիք կենդանութիւն ի ձեզ։

62. Յովհ. Զ. 58 Եւ որ ուտէն զիս՝ և նա կեցցէ վասն իմ. Καὶ ὁ τρώγων με, κἀκεῖνος ζήσεται δι᾽ ἐμέ.—Տիմոթ. էջ 59՝ Ուտողն զիս և նա կեցցէ վասն իմ. էջ 139՝ Եւ ուտողն զիս և նա կեցցէ վասն իմ։

63. Յովհ. Ը. 12. Ես եմ լոյս աշխարհի. ἐγώ εἰμι τὸ φῶς τοῦ κόσμου.—Տիմոթ. էջ 45 և 131՝ Ես եմ լոյս աշխարհի։

64. Յովհ. Ը. 40. Այլ այժմիկ խնդրէք սպանանել զիս, զայր մի՝ որ ձեզ զճշմարտութիւնն խօսեցայ. νῦν δὲ ζητεῖτέ με ἀποκτεῖναι, ἄνθρωπον ὃς τὴν ἀλήθειαν ὑμῖν λελάληκα.—Տիմոթ. էջ 106՝ Այժմ խնդրէք զիս սպանանել՝ զմարդ, որ ճշմարտութիւնն ձեզ խօսեցայ։—Իսկ յաջորդ հատուածներուն մէջ՝ Տիմոթ. մէջ կը խառնէ նաև Է 20 «զի՞ խնդրէք զիս սպանանել». այսպէս՝ էջ 4՝ Զի՞ զիս խնդրէք սպանանել՝ զմարդ, որ ձեզ զճշմարտութիւն խօսեցայ. էջ 79, 121 և 163՝ ... զԱստուած, որ զճշմարտութիւնն ձեզ խօսեցայ. էջ 80՝ ... որ զճշմարտութիւնն ընդ ձեզ խօսեցայ։

65. Յովհ. Ը. 58. Յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես. Πρὶν Ἀβραὰμ γενέσθαι, ἐγὼ εἰμι.—*Տիմոթ. էջ 44՝ Նախ քան զԱբրահամ լինել եմ ես. էջ 47, 58, 100՝ Նախ քան զԱբրահամ* եղանել ես եմ։

66. Յովհ. Ժ. 30. Ես և Հայր իմ մի եմք. Ἐγὼ καὶ ὁ πατὴρ ἕν ἐσμεν.—*Տիմոթ. էջ 15, 100 և 106՝ Ես և հայր մի եմք։*

67. Յովհ. Ժ. 33. Զի դու մարդ ես, և զանձն քո Աստուած առնես. Ὅτι σὺ ἄνθρωπος ὢν ποιεῖς σεαυτὸν Θεόν.—*Տիմոթ. էջ 47 և 81՝ Ընդէր դու մարդ եղեալ առնես զքեզ ինքն Աստուած. էջ 119՝ Զի դու մարդ եղեալ, առնես զքեզ ինքն Աստուած. էջ 161՝* Ի՞բր *դու մարդ եղեալ,* Աստուած զքեզ ինքն առնես. *էջ 225՝* Զի մարդ *եղեալ, առնես զքեզ ինքն Աստուած։*

68. Յովհ. ԺԱ. 25. Ես իսկ եմ յարութիւն և կեանք. ἐγώ εἰμι ἡ ἀνάστασις καὶ ἡ ζωή.—*Տիմոթ. էջ 103, 131, 138 և 172՝ Ես եմ յարութիւն և կենդանութիւն. էջ 140՝ Ես եմ կենդանութիւն։*

69. Յովհ. ԺԲ. 27. Բայց այժմ անձն իմ խռովեալ է. νῦν ἡ ψυχή μου τετάρακται.—*Տիմոթ. էջ 29՝ Այժմ անձն իմ խռովեալ (!). էջ 275՝ Այժմ անձն իմ* խռովեալ է։

70. Յովհ. ԺԲ. 46. Ես լոյս յաշխարհ եկի. ἐγὼ φῶς εἰς τὸν κόσμον ἐλήλυθα.—*Տիմոթ. էջ 45 և 130՝ Ես լոյս յաշխարհս յայս եկի։*

71. Յովհ. ԺԴ. 9. Որ ետես զիս՝ ետես զՀայրն. ὁ ἑωρακὼς ἐμὲ ἑώρακε τὸν πατέρα.—*Տիմոթ. էջ 15՝ Որ ետես զիս, ետես զՀայրն. էջ 100՝* Տեսօղն *զիս, ետես զՀայրն* իմ. *էջ 106՝* Տեսօղն *զիս՝ ետես զՀայրն. էջ 135՝* Տեսօղն *զիս՝ ետես* զՀայր։

72. Յովհ. ԺԷ. 4—5. Ես զքեզ փառաւորեցի յերկրի, զգործն կատարեցի՝ զոր ետուր ցիս՝ զի արարից, և այժմ փառաւորեա զիս, Հայր, առ ի քէն փառօքն զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի առ ի քէն։ Ἐγώ σε ἐδόξασα ἐπὶ τῆς γῆς· τὸ ἔργον ἐτελείωσα ὃ δέδωκάς μοι ἵνα ποιήσω. καὶ νῦν δόξασόν με σύ, πάτερ, παρὰ σεαυτῷ τῇ δόξῃ ᾗ εἶχον πρὸ τοῦ τὸν κόσμον εἶναι παρὰ σοί.—*Տիմոթ. էջ 44՝ Ես զքեզ փառաւորեցի ի վերայ երկրի, զգործն կատարեալ, զոր ետուր ինձ զի արարից. և այժմ փառաւորեա զիս, դու Հայր (այսպէս տպուած է. պէտք է յունարէնին համեմատ կէտադրել՝* փառաւորեա՝ զիս դու, Հայր*), առ քեզ ընդեան փառօքն, զոր ունէի նախ քան զաշխարհիս գոլ, առ քեզ։ էջ 214՝ Ես զքեզ փառաւորեցի ի վերայ երկրի, զգործն կատարեալ, զոր ետուր ինձ զի արարից. և այժմ փառաւորեա զիս դու, Հայր, առ քեզ* իւրեան *փառօքն, զոր ունէի նախ քան* զաշխարհ *գոլ առ քեզ։ էջ 9—10՝ Փառաւորեա զիս.* փառօքն *զոր ունէի նախ քան* զաշխարհս *գոլ առ քեզ։*

73. Գործք Ի. 29—30. Բանզի գիտեմ ես, եթէ յետ ելանելոյ իմոյ մտցեն գայլք յափշտակօղք ի ձեզ որ ոչ խնայեսցեն հօտին, և ի ձէնջ յարիցեն արք որ խօսիցին թիւրս, ձգել զաշակերտսն զկնի իւրեանց։ Վասն այսորիկ արթուն կացէք։ Ἐγὼ γὰρ οἶδα τοῦτο, ὅτι εἰσελεύσονται μετὰ τὴν ἄφιξίν μου λύκοι βαρεῖς εἰς ὑμᾶς, μὴ φειδόμενοι τοῦ ποιμνίου. καὶ ἐξ ὑμῶν αὐτῶν ἀναστήσονται ἄνδρες λαλοῦντες διεστραμμένα, τοῦ ἀποσπᾶν τοὺς μαθητὰς ὀπίσω αὐτῶν. διὸ γρηγορεῖτε.—*Տիմոթ. էջ 40՝ Ես գիտեմ, զի յետ բացերթութեան իմոյ՝ ի ներքս եկեսցեն գայլք ծանունք ի ձեզ, ոչ խնայողք հօտին, և ի ձէնջ այսուստ յարիցեն արք խօսօղք զթիւրս, առ ի կորզել զաշակերտս զհետ իւրեանց, վասն որոյ հսկեցէք։ էջ 148՝* Եւ *գիտեմ (տպուած է այսպէս. բաս*

յունարէն բնագրին ուղղելի է ես գիտեմ), զի յետ ի բաց երթութեան իմոյ՝ ի ներքս եկեսցեն գայլք ծանունք ի ձեզ, ոչ խնայելով հօտի. և ի ձէնջ այ-գուստ յարիցեն արք խօսելով թիւրս, կորզել զաշակերտսն ի հետ իւրեանց, սակս որոյ հսկեցէք։

74. Հռովմ. Ը. 32. Որ յիւր Որդին ոչ խնայեաց. այլ վասն մեր ամե-նեցուն՝ մատնեաց զնա. ὅς γε τοῦ ἰδίου υἱοῦ οὐκ ἐφείσατο, ἀλλ᾽ ὑπὲρ ἡμῶν πάν-των παρέδωκεν αὐτόν.—Տիմոթ. էջ 208՝ Քանզի հայր յիւր Որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա. էջ 269՝ Որ իւրոյ Որդւոյն ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն առտուեաց զնա։

75. Հռովմ. Ը. 35. Արդ ո՞վ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի. τίς ἡμᾶς χωρίσει ἀπὸ τῆς ἀγάπης τοῦ Χριστοῦ;—Տիմոթ. էջ 210՝ Ո՞ զմեզ որոշեաց ի սիրոյն Քրիստոսի. էջ 249՝ Ո՞ զմեզ որոշեցէ ի սիրոյն Քրիստոսի։

76. Հռովմ. Թ. 5. Յորոց և Քրիստոս ըստ մարմնոյն, որ է ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս. ամէն։ Καὶ ἐξ ὧν ὁ Χριστὸς τὸ κατὰ σάρκα, ὁ ὢν ἐπὶ πάντων Θεὸς εὐλογητὸς εἰς τοὺς αἰῶνας. ἀμήν.—Տիմոթ. էջ 117՝ Եւ յորոց Քրիստոս ըստ մարմնոյ, էակն ի վերայ ամենայնի Աստուած բարեբանեալ յաւիտեանս ամէն. էջ 75՝ Յորոց Քրիստոսն ըստ մարմնոյ, էակն ի վերայ ամենեցուն Աստուած բարեբանեալ յաւիտեանս ամէն։—Այս երկու ձեւերէն մին կամ միւսն ունին էջ 41, 48, 52, 235, որոնք սակայն զուտ վկայութիւններ չեն, այլ ակնարկներ. իսկ էջ 130, 131 և 238 ունին վեր-ջին չորս բառերը։

77. Հռովմ. Ժ. 10. Զի սրտիւ հաւատայր յարդարութիւն, և բերանով խոստովանիք ի փրկութիւն. Καρδίᾳ γὰρ πιστεύεται εἰς δικαιοσύνην, στόματι δὲ ὁμολογεῖται εἰς σωτηρίαν.—Տիմոթ. էջ 146 և 306՝ Քանզի սրտիւ հաւատալ յար-դարութիւն, իսկ բերանով խոստովանի ի փրկութիւն.

78. Հռովմ. ԺԴ. 9. Եւ արդ եթէ կեամք և եթէ մեռանիմք՝ Տեառն եմք. ἐάν τε οὖν ζῶμεν, ἐάν τε ἀποθνήσκωμεν, τοῦ Κυρίου ἐσμέν.—Տիմոթ. էջ 209՝ Եթէ կեամք և եթէ մեռանիմք, Տեառն եմք. էջ 306՝ Եթ՝ այսուհետեւ կեամք, եթե մեռանիմք, Տեառն եմք։

79. Ա. Կոր. Ա. 24. ԶՔրիստոս՝ Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ ի-մաստութիւն. Χριστὸν Θεοῦ δύναμιν καὶ Θεοῦ σοφίαν.—Տիմոթ. էջ 160՝ ԶՔրիս-տոս Աստուծոյ կարութիւն և Աստուծոյ իմաստութիւն. էջ 270՝ Քրիստոս Աստուծոյ զորութիւն և Աստուծոյ իմաստութիւն։

80. Ա. Կոր. Գ. 11. Զի հիմն այլ՝ որ ոչ կարէ դնել բան զեդեալն՝ որ է Յիսուս Քրիստոս. Θεμέλιον γὰρ ἄλλον οὐδεὶς δύναται θεῖναι παρὰ τὸν κείμενον, ὅς ἐστιν Ἰησοῦς ὁ Χριστός. Տիմոթ. էջ 14՝ Զի հիմն այդ որ ոչ կարէ դնել, բան զանկեալն, որ է Յիսուս Քրիստոս. էջ 209՝ Եւ հիմն այդ ոչ ոք կարէ բան զկացեալն դնել, որ է Յիսուս Քրիստոս։

81. Ա. Կոր. Դ. 7. Զի՞նչ ունիս զոր ոչ իցէ առեալ. և եթէ առեր՝ զի՞ պարծիս իբրև չառեալ. τί δὲ ἔχεις ὃ οὐκ ἔλαβες; εἰ δὲ καὶ ἔλαβες, τί καυχᾶσαι ὡς μὴ λαβών;—Տիմոթ. էջ 308՝ Եւ զի՞նչ ունիս, զոր ոչ առեր. իսկ եթէ առեր, զի՞ պարծիս իբր ոչ առող. էջ 326՝ Զի՞նչ ես ունիս, զոր ոչ առեր. իսկ եթ՝ և առեր, զի՞ պարծիս իբր ոչ առող։

82. Ա. Կոր. Ը. 6. Այլ մեզ մի է Աստուած, Հայր՝ յորմէ ամենայն, և մեք ի նա. և մի տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն և մեք նովաւ։ Ἀλλ᾽ ἡμῖν εἷς Θεὸς ὁ πατήρ, ἐξ οὗ τὰ πάντα, καὶ ἡμεῖς εἰς αὐτόν. καὶ εἷς Κύριος Ἰησοῦς

Χριστός, δι' οὗ τὰ πάντα, καὶ ἡμεῖς δι' αὐτοῦ.—*Տիմոթ. էջ 98՝ Այլ մեզ մի Աստուած Հայր յորմէ ամենայնքն և մեք ի նմանէ. և մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայնքն և մեք նովաւ. էջ 8, 186՝ Մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայնքն. էջ 81՝ Մի Տէր Յիսուս Քրիստոս, որով* ամենայն *և մեք նովաւ. էջ 132՝ Մի Տէր Յիսուս Քրիստոս, որով* ամենայնն. *էջ 260՝ Մի Տէր Յիսուս Քրիստոս, որով* ամենայնք. *էջ 273՝ Մի Աստուած* եւ *Հայր, յորմէ ամենայնքն և մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայնքն։*

83. Ա. Կոր. ԺԱ. 19. Բայց և հերձուածք ՙլինելոց են ի ձեզ, զի որ ընտիրքն իցեն ի ձեզ՝ երևեսցին. δεῖ γὰρ καὶ αἱρέσεις ἐν ὑμῖν εἶναι, ἵνα οἱ δόκιμοι φανεροὶ γένωνται ἐν ὑμῖν.—*Տիմոթ. էջ 38՝ Պարտ և հերձուած ի ձեզ գոլ, զի ընտիրքն յայտնի եղիցին ի ձեզ. էջ 149՝ Քանզի պարտ և* հերձուածս *ի ձեզ գոլ, զի* փորձքն յայտնեսցին *ի ձեզ։*

84. Ա. Կոր. ԺԵ. 3. Թէ և Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց ըստ գրոց, և զի թաղեցաւ. ὅτι Χριστὸς ἀπέθανεν ὑπὲρ τῶν ἁμαρτιῶν ἡμῶν, κατὰ τὰς γραφάς, καὶ ὅτι ἐτάφη.—*Տիմոթ. էջ 117՝ Եթէ Քրիստոս մեռաւ յաղագս մեղաց մերոց ըստ գրեցելոցն և զի թաղեցաւ. էջ 231՝* Քանզի *Քրիստոս մեռաւ յաղագս մեղաց մերոց, ըստ* գրութեանն *և զի թաղեցաւ. էջ 269՝ Քրիստոս մեռաւ* վասն *մեղաց մերոց ըստ գրեցելոցն։*

85. Ա. Կոր. ԺԵ. 55. Ո՞ւր է, մահ, յաղթութիւն քո. ո՞ւր է, գժոխք, խայթոց քո. Ποῦ σου, θάνατε, τὸ κέντρον; ποῦ σου, ᾅδη, τὸ νῖκος;*Տիմոթ. էջ 161՝ Ո՞ւր քո, մա՛հ, յաղթութիւն, ո՞ւր քո, դժո՛խ, խայթոց. էջ 269՝ Ո՞ւր քո, մա՛հ, յաղթութիւն. ո՞ւր քո,* մա՛հ, *խայթոց։*

86. Բ. Կոր. Զ. 14. Եւ կամ զի՞նչ հաղորդութիւն է լուսոյ ընդ խաւարի. τίς δὲ κοινωνία φωτὶ πρὸς σκότος;—*Տիմոթ. էջ 164՝ Այլ ոչ է հաղորդութիւն լուսոյ առ խաւար և ոչ մի. էջ 274՝ Այլ* ո՛չ մի *հաղորդութիւն լուսոյ առ խաւար։*

87. Բ. Կոր. Ը. 9. Զի վասն մեր աղքատացաւ՝ որ մեծատունն էր, զի դուք նորա աղքատութեամբն մեծասջիք. ὅτι δι' ὑμᾶς ἐπτώχευσε πλούσιος ὤν, ἵνα ὑμεῖς τῇ ἐκείνου πτωχείᾳ πλουτήσητε.—*Տիմոթ. էջ 219՝ Քանզի վասն մեր աղքատացաւ՝ փարթամ եղեալ, զի մեք նորա աղքատութեամբն փարթամասցուք. էջ 308՝* Քի *վասն մեր աղքատացաւ.* Քանզի *եղեալ, զի* դուք *նորա աղքատութեամբն* փարթամանայցէք

88. Բ. Կոր. ԺԳ. 3. Եթէ զփո՞րձ ինչ խնդրէք զՔրիստոսի, որ ինև ընդ ձեզ խօսի. ἐπεὶ δοκιμὴν ζητεῖτε τοῦ ἐν ἐμοὶ λαλοῦντος Χριστοῦ.—*Տիմոթ. էջ 211՝ Եթէ փորձութիւն խնդրէք զյիս խօսողի Քրիստոսի. էջ 268՝ Եթէ* փորձ *խնդրէք* զյիս խօսողին *Քրիստոսի։*

89. Բ. Կոր. ԺԳ. 4. Զի թէպէտ և խաչեցաւ ի մերմէ տկարութենէ. καὶ γὰρ εἰ ἐσταυρώθη ἐξ ἀσθενείας.—*Տիմոթ. էջ 109, 128 և 171՝ Քանզի և խաչեցաւ ի տկարութենէ։*

90. Գաղ. Ա. 1. Պօղոս առաքեալ ոչ ի մարդկանէ և ոչ ի ձեռն մարդոյ, այլ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, և Աստուծոյ Հօր՝ որ յարոյց զնա ի մեռելոց։ Παῦλος ἀπόστολος, οὐκ ἀπ' ἀνθρώπων, οὐδὲ δι' ἀνθρώπου, ἀλλὰ διὰ Ἰησοῦ Χριστοῦ καὶ Θεοῦ πατρὸς τοῦ ἐγείραντος αὐτὸν ἐκ νεκρῶν.—*Տիմոթ. էջ 310՝ Պօղոս առաքեալ ո՛չ ի մարդկանէ և ո՛չ ի ձեռն մարդոյ, այլ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի և Աստուծոյ Հօր, յարուցողին զնա ի մեռելոց. էջ 211՝ Պօղոս* իսկ *առաքեալ ո՛չ ի մարդկանէ և ո՛չ* մարդով, *այլ* Յիսուսիւ Քրիստոսիւ *և Աստու-*

ծով Հարամբ՝ յարուցողի զնա ի մեռելոց. էջ 144՝ ոչ ի մարդկանէ և ոչ մարդով, այլ Յիսուսի Քրիստոսի։

91. Գաղ. Ա. 9. Եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր առէքն, նզովեալ լիցի. εἴ τις ὑμᾶς εὐαγγελίζεται παρ' ὃ παρελάβετε, ἀνάθεμα ἔστω.—Տիմոթ. էջ 134՝ Եթ՛ ոք ձեզ աւետարանէ քան զոր ընկալարուքն, նզով եղիցի. էջ 270՝ Եթ՛ ոք ձեզ աւետարանեսցէ քան զոր առէքն, նզով եղիցի. էջ 41՝ Որ ոք ձեզ աւետարանիցէ աւելի քան զոր առէքն, նզով եղիցի։

92. Գաղ. Դ. 4—5. Այլ իբրև եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զՈրդին իւր՝ որ եղև ի կնոջէ և եմուտ ընդ օրինօք. զի զնոսա որ ընդ օրինօքն իցեն՝ գնեսցէ. ὅτε δὲ ἦλθε τὸ πλήρωμα τοῦ χρόνου, ἐξαπέστειλεν ὁ Θεὸς τὸν υἱὸν αὐτοῦ, γενόμενον ἐκ γυναικός, γενόμενον ὑπὸ νόμον, ἵνα τοὺς ὑπὸ νόμον ἐξαγοράσῃ.—Տիմոթ. էջ 310՝ Իսկ յորժամ եկն լրումն ամանակին, արտաքս առաքեաց Աստուած զՈրդին իւր՝ եղեալ ի կնոջէ, եղեալ ընդ օրինաւ, զի զընդ օրինաւն արտաքս գնեսցէ. էջ 20՝ Իսկ յորժամ եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զՈրդին իւր՝ եղեալ ի կնոջէ. եղեալ ընդ օրինօք, զի զընդ օրինաւորսն գնեսցէ. էջ 269՝ Իսկ յորժամ եկն լրումն ամանակին, արտաքս առաքեաց Աստուած զՈրդին իւր՝ եղեալ ի կնոջէ. էջ 246՝ Յորժամ եկն լրումն ամանակին. էջ 125՝ Աստուած առաքեաց զՈրդին իւր եղեալ ի կնոջէ. էջ 109՝ արտաքս առաքեաց Աստուած զՈրդին իւր։

93. Գաղ. Դ. 7. Այսուհետև չես ծառայ, այլ որդի. ὥστε οὐκ ἔτι εἶ δοῦλος, ἀλλ' υἱός.—Տիմոթ. էջ 72 և 109՝ Ոչ ևս ես ծառայ, այլ որդի։

94. Եփես. Դ. 5. Մի է Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն. εἷς Κύριος, μία πίστις, ἓν βάπτισμα.—Տիմոթ. էջ 213 և 256՝ Եզ Տէր, մու հաւատ և մի մկրտութիւն։

95. Փիլիպ. Բ. 6—11. Որ ի կերպարանս Աստուծոյ է, ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ. այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ, և կերպարանօք գտեալ իբրև զմարդ. խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չափ և մահու խաչի։ Վասն որոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց, և շնորհեաց նմա անուն որ ի վեր է քան զամենայն անուն. զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի, երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. և ամենայն լեզու խոստովան լիցի, թէ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր. Ὃς ἐν μορφῇ Θεοῦ ὑπάρχων, οὐχ ἁρπαγμὸν ἡγήσατο τὸ εἶναι ἴσα Θεῷ, ἀλλ' ἑαυτὸν ἐκένωσε, μορφὴν δούλου λαβών, ἐν ὁμοιώματι ἀνθρώπων γενόμενος. καὶ σχήματι εὑρεθεὶς ὡς ἄνθρωπος, ἐταπείνωσεν ἑαυτόν, γενόμενος ὑπήκοος μέχρι θανάτου, θανάτου δὲ σταυροῦ. διὸ καὶ ὁ Θεὸς αὐτὸν ὑπερύψωσε, καὶ ἐχαρίσατο αὐτῷ ὄνομα τὸ ὑπὲρ πᾶν ὄνομα. ἵνα ἐν τῷ ὀνόματι Ἰησοῦ πᾶν γόνυ κάμψῃ ἐπουρανίων καὶ ἐπιγείων καὶ καταχθονίων. καὶ πᾶσα γλῶσσα ἐξομολογήσηται ὅτι Κύριος Ἰησοῦς Χριστὸς εἰς δόξαν Θεοῦ πατρός.—Տիմոթ. էջ 312՝ Որ ի կերպի Աստուծոյ էլով, ոչ յափշտակումն համարեցաւ զգոլն հանգէտ Աստուծոյ, այլ զինքն թափեաց՝ կերպ ծառայի առեալ, ի նմանութեան մարդկան եղեալ և ձևով գտեալ իբր մարդ, նուաստացոյց զինքն՝ եղեալ լսող մինչ մահու, իսկ մահու խաչի։ Սակս որոյ և Աստուած զնա գեր բարձրացոյց, և շնորհեաց նմա անուն, գեր ամեն անուն, զի յանուն Յիսուսի ամեն ծունր կրասցի՝ երկնայնոց և երկրայնոց (ազգուած երկնայնոց) և ստորերկրականաց, և ամենայն լեզու արտաքս խոստովանեսցի՝ եթէ Տէր է Յիսուս Քրիս-

տաւ, ի փառս Աստուծոյ Հօր։ Էջ 213—4՝ Որ ի կերպի Աստուծոյ էր, ոչ յափշտակութիւն համարեցաւ զգոլն հանգէտ Աստուծոյ, այլ զինքն թափեաց՝ կերպ ծառայի առեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ և ձևով գտեալ իբր մարդ, նուաստացոյց զինքն՝ եղեալ հնազան Հօր մինչ մահու, մահու իսկ խաչի։ Սակս որոյ և Աստուած զնա գերաբարձրեաց, և շնորհեաց նմա անուն, զվեր ամեն անուն, զի եւ անուամբ Քրիստոսի Յիսուսի ամենայն ծունր կորասցի՝ երկնայնոց, երկրայինց եւ սանդարամետականաց, եւ ամեն լեզու արտաքս խոստովանեսցէ Քրիստոսի։ Էջ 272՝ ի կերպի եւ հանգիստութեան ծնօղին, ոչ յափշտակութիւն համարեցաւ զգոլն հանգէտ Աստուծոյ, այլ զինքն թափեաց՝ կերպ ծառայի առեալ (ի սրբոյն Մարեմայ), ի նմանութիւն մարդկան եղեալ և ձևով գտեալ իբր մարդ, նուաստացոյց զինքն՝ եղեալ ունկանող մինչ մահու, եւ մահու խաչի։ Էջ 3՝ Եւ շնորհել նմա անուն, որ ի վեր է քան զամենայն անուն. զի յանուն նորա ամենայն ծունր կրկնեսցի՝ երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. և ամենայն լեզու խոստովանեսցէ զի Տէր է Յիսուս Քրիստոս, ի փառս Աստուծոյ Հօր։ Էջ 48՝ Եւ նմա կորասցի ամենայն ծունր, երկրայնից և երկնայնից և՛ սանդարամետականաց, և խոստովանեսցէ ամենայն լեզու իբր Աստուծոյ էակի։ Էջ 104՝ Քրիստոսի ամենայն ծունր կորասցի՝ երկնայնոց և երկրայնոց և սանդարամետականաց. և ամենայն լեզու խոստովանեսցէ՝ եթէ Տէր է Յիսուս Քրիստոս, ի փառս Աստուծոյ Հօր։ Էջ 175՝ Քրիստոսի կորասցի ամենայն ծունր՝ երկնայնոց և երկրայնոց և վայրասանդարամետից և ամենայն լեզու խոստովանեսցի, եթէ Տէր Յիսուս Քրիստոս՝ ի փառս Աստուծոյ։ Էջ 223՝ Յանուն Յիսուսի Քրիստոսի ամեն ծունր կորասցի՝ երկնայնեացն և երկրայնեաց և սանդարամետականաց. և ամենայն լեզու արտաքս խոստովանեսցէ նմա՝ Աստուծոյ՝ էյում հեմարտի եւ կենդանութեանց յաւիտենականի։ Էջ 259՝ Ամեն ծունր կորասցի՝ երկնայնեաց և երկրայնոց և սանդարամետականաց, և ամեն լեզու արտաքս խոստովանեսցէ նմա։ Էջ 268՝ Եւ ամեն ծունր խոնարհի՝ երկնայնոց և երկրայնոց և սանդարամետականաց, և ամեն լեզու խոստովանեսցէ, եթէ Տէր Յիսուս Քրիստոս, ի փառս Աստուծոյ Հօր.

96. Կողոս. Ա. 16. Զի նովաւ հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, որ երևին և որ ոչն երևին. ὅτι ἐν αὐτῷ ἐκτίσθη τὰ πάντα, τὰ ἐν τοῖς οὐρανοῖς καὶ τὰ ἐπὶ τῆς γῆς, τὰ ὁρατὰ καὶ τὰ ἀόρατα.—Տիմոթ. Էջ 313՝ Զի նովաւ շինեցաւ ամենայն զ՛ ի յերկինս և զ՛ ի վերայ երկրիս, տեսանելիք և անտեսանելիք. Էջ 175՝ Եւ եր՛ ի նմա ի նմա շինեցաւ ամենայն, զ՛ ի յերկրին և զ՛ ի վերայ երկրի, տեսանելիք իսկ և անտեսանելիք. Էջ 103՝ Քանզի ի նմա հաստեցաւ ամենայն. որք յերկնի և որք ի վերայ երկրի. Էջ 245՝ Քանզի ի նմա շինեցաւ ամենայն, որ յերկինս եւ որ ի վերայ երկրի ի նմա։

97. Ա. Տիմոթ. Բ. 5—6. Զի մի է Աստուած, և մի միջնորդ Աստուծոյ և մարդկան՝ մարդ Յիսուս Քրիստոս. որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն. Εἷς γὰρ Θεός, εἷς καὶ μεσίτης Θεοῦ καὶ ἀνθρώπων, ἄνθρωπος Χριστὸς Ἰησοῦς, ὁ δοὺς ἑαυτὸν ἀντίλυτρον ὑπὲρ πάντων.—Տիմոթ. Էջ 98՝ Մի Աստուած և մի միջնորդ Աստուծոյ և մարդկան՝ մարդ Յիսուս Քրիստոս, տուիչն զինքն հակափրկանակ ի վերայ ամենեցուն. Էջ 273՝ Մի Աստուած, մի եւ միջնորդ Աստուծոյ և մարդկան. Էջ 274՝ Մարդ Քրիստոս Յիսուս, տուիչն զինքն փրկանակ վասն մեր. Էջ 131՝ Մարդ Յիսուս Քրիստոս տուիչն զինքն փոխափրկանակ վասն ամենեցուն։

98. *Տիտոս Բ. 13—14. Ակն կալեալ երանելի յուսոյն, և յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ ետ զանձն վասն մեր, զի փրկեսցէ զմեզ յամենայն անօրէնութենէ, և սրբեսցէ իւր ժողովուրդ սեպհական՝ նախանձաւոր գործոց բարութեան։* Προσδεχόμενοι τὴν μακαρίαν ἐλπίδα καὶ ἐπιφάνειαν τῆς δόξης τοῦ μεγάλου Θεοῦ καὶ σωτῆρος ἡμῶν Ἰησοῦ Χριστοῦ, ὃς ἔδωκεν ἑαυτὸν ὑπὲρ ἡμῶν, ἵνα λυτρώσηται ἡμᾶς ἀπὸ πάσης ἀνομίας, καὶ καθαρίσῃ ἑαυτῷ λαὸν περιούσιον, ζηλωτὴν καλῶν ἔργων.—*Տիմոթ. էջ 118՝ Ակնդունելով զերանելին յոյս և յայտնութիւն փառացն մեծին Աստուծոյ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ետ զինքն վասն մեր, զի փրկանեսցէ զմեզ յանօրէնութենէ. և մաքրեսցէ իւր ժողովուրդ առանձնական նախանձաւոր այնպիսի գործոց։ էջ 131՝* Ակնունելով *զերանելին յոյս և* զյայտնութիւն փառաց *մեծին Աստուծոյ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ետ զինքն վասն մեր, զի* փրկեսցէ *զմեզ* յամենայն անօրէնութենէ *և մաքրեսցէ իւր ժողովուրդ* առանձինն, *նախանձաւոր այնպիսի* գործոցն։ *էջ 59՝* Ըստ յայտնութեան փառաց *մեծին Աստուծոյ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի։*

99. *Եբր. Բ. 16. Քանզի ոչ երբեք զհրեշտակաց բուռն հարկանէ, այլ զզաւակէն Աբրահամու բուռն հարկանէ.* Οὐ γὰρ δήπου ἀγγέλων ἐπιλαμβάνεται, ἀλλὰ σπέρματος Ἀβραὰμ ἐπιλαμβάνεται.—*Տիմոթ. էջ 278. «Ո՜վ մեզ այսպէս. քանզի ոչ զհրեշտակաց բնաւորեաց, այլ զսերմանէ Աբրահամու բնաւորեաց»։ (Այս հատուածին «Ո՜վ մեզ այսպէս» բառերը կը պակսին թէ վերի բնագիրներուն և թէ Տիմոթէոսի յաջորդ վկայութիւններուն մէջ. և ըստ իս՝ հրատարակիչներուն անուշադրութենէն յառաջացած սխալ մըն է։ Ս. Գրքին վկայութիւնը կ՚սկսի* Քանզի *բառէն. [«Ո՜վ մեզ այսպէս» բառերը կը պատկանին նախորդ խօսքին. ուստի և՛ չակերտներէն դուրս հանելով կցելու է նախորդներուն, այսպէս. Սատանայ ես ամենայն իրօք, ո՜վ Գօգոս, գրելով մեզ այսպէս. «Քանզի ոչ զհրեշտակաց...)։ էջ 114՝ Քանզի* ոչ եւս *զհրեշտակաց* բնութիւն, *այլ զսերմանէ Աբրահամու* բնութիւն. *էջ 197 և 274՝ Զսերմանէ Աբրահամու բնաւորէ։*

100. *Եբր. Դ. 15. Քանզի ոչ եթէ ունիմք քահանայապետ, որ չիցէ կարող չարչարակից լինել տկարութեան մերոյ. այլ փորձ է ամենայնիւ ըստ նմանութեան առանց մեղաց։* Οὐ γὰρ ἔχομεν ἀρχιερέα μὴ δυνάμενον συμπαθῆσαι ταῖς ἀσθενείαις ἡμων, πεπειρασμένον δὲ κατὰ πάντα καθ᾽ ὁμοιότητα χωρὶς ἁμαρτίας.—*Տիմոթ. էջ 29՝ Քանզի ոչ ունիմք քահանայապետ ոչ կարող տխրակցել հիւանդութեանց մերոց, բայց հմուտ ըստ ամենայնի ըստ նմանութեան զմերն առանց մեղաց։ էջ 80՝ Քանզի ոչ ունիմք քահանայապետ* ոչն *կարող տխրակցել* տկարութեանս մերում, այլ փորձեցեալ ամենայնիւ *ըստ նմանութեան, առանց մեղաց։ էջ 101՝ Քանզի ոչ ունիմք քահանայապետ ոչ կարող տխրակցել* տկարութեանս մերում, նմանելն *ամենայնի* եւ *ըստ նմանութեան առանց մեղաց։ էջ 275՝ Քանզի ոչ ունիմք քահանայապետ ոչ կարող տխրակցել* տկարութեանս մերում, *բայց* տեղեկացեալ ամենայն իւր *ըստ նմանութեան մերում, առանց մեղաց։*

101՝ *Եբր. Ե. 7. Որ յաւուրս մարմնոյ իւրոյ՝ աղօթս և պաղատանս . . . մատուցանէր.* ὃ ἐν ταῖς ἡμέραις τῆς σαρκὸς αὐτοῦ δεήσεις τε καὶ ἱκετηρίας . . . . προσενέγκας.—*Տիմոթ. էջ 182՝ Որ նաւուրս մարմնոյ իւրոյ, մաղթանս և պաղատանս անէր. էջ 100՝ Որ* յաւուրս *մարմնոյ իւրոյ* պաղատանս *և* խնդրուածս *... մատուցեալ։*

A III/2614

102. Եբր. ԺԳ. 8. Յիսուս Քրիստոս երէկ և այսօր, նոյն և յաւիտեանս. Ἰησοῦς Χριστὸς ἐχθὲς καὶ σήμερον ὁ αὐτός, εἰς καὶ τοὺς αἰῶνας.—*Տիմոթ. էջ 24 նոյն է մեր թարգմանութեան հետ. իսկ էջ 44՝ Յիսուս Քրիստոս երէկ և այսօր,* նոյն եւ յաւիտեան։

103. Յակ. Ա. 17. Զի ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք՝ ի վերուստ են իջեալ առ ի հօրէն լուսոյ. πᾶσα δόσις ἀγαθὴ καὶ πᾶν δώρημα τέλειον ἄνωθέν ἐστι καταβαῖνον ἀπὸ τοῦ πατρὸς τῶν φώτων.—*Տիմոթ. էջ 300՝ Ամեն տուչութիւն բարի և ամեն ձիր կատարեալ ի վերուստ է իջեալ, առ ի հօրէ լուսոյն. էջ 326՝ Քանզի ամեն տուչութիւն բարի և ամեն ձիր կատարեալ ի վերուստ է* ստորանցեալ, *առ ի հօրէ* լուսոյ։

104՝ Ա. Պետր. Դ. 1. Քրիստոսի չարչարելոյն մարմնով վասն մեր. Χριστοῦ οὖν παθόντος ὑπὲρ ἡμῶν σαρκί.—*Տիմոթ. էջ 118՝ Քրիստոսի կրօղին վասն մեր մարմնով. էջ 131՝ Քրիստոսի* կրօղի մարմնով վասն մեր. *էջ 176՝* Քրիստոս ախտակրեալ *վասն մեր* իւրովն *մարմնով. էջ 269՝ Քրիստոսի* կրե-ցելոյ *վասն մեր մարմնով. էջ 302՝ Քրիստոսի* այսուհետեւ կրելով *մարմնով։*

105. Բ. Պետր. Բ. 1. Լինէին և սուտ մարգարէք ի ժողովրդեանն, որպէս և այժմ ի ձեզ լինիցին սուտ վարդապետք, որք սպրդեալք մուծանիցեն հերձուածս կորստեան. և զոր Տէր գնեաց՝ գնոսա ուրացեալ. Ἐγένοντο δὲ καὶ ψευδοπροφῆται ἐν τῷ λαῷ, ὡς καὶ ἐν ὑμῖν ἔσονται ψευδοδιδάσκαλοι, οἵτινες παρεισάξουσιν αἱρέσεις ἀπωλείας, καὶ τὸν ἀγοράσαντα αὐτοὺς δεσπότην ἀρνούμενοι.—*Տիմոթ. էջ 39—40՝ Եղեն իսկ սուտ մարգարէք ժողովրդեանն, որպէս և ի ձեզ եղիցին սուտ վարդապետք, որք ի ներքս ածցեն հերձուածս կորստեան և զգնօղն գնոսա զՏէրն ուրացողք. էջ 303՝ Եղեն իսկ և սուտ մարգարէք* ի ժողովրդեանն, *որպէս և ի ձեզ եղիցին սուտ վարդապետք, որք ի ներքս ածցեն* ներձուածս *կորստեան և զգնօղն գնոսա՝ զՏէրն ուրացողք։*

106՝ Ա. Յովհ. Դ. 1—3. Եւ մեք այսուիկ ճանաչեմք զհոգին Աստուծոյ։ Ամենայն հոգի որ խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով եկեալ, յԱստուծոյ է նա. և ամենայն հոգի որ ոչ խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով եկեալ, չէ նա յԱստուծոյ, և այս նեռինն է, զորմէ լուարուքն եթէ գալոց է, և արդէն իսկ յաշխարհի է։ Ἐν τούτῳ γινώσκετε τὸ πνεῦμα τοῦ Θεοῦ. πᾶν πνεῦμα ὃ ὁμολογεῖ Ἰησοῦν Χριστὸν ἐν σαρκὶ ἐληλυθότα ἐκ τοῦ Θεοῦ ἐστι. καὶ πᾶν πνεῦμα ὃ μὴ ὁμολογεῖ τὸν Ἰησοῦν Χριστὸν ἐν σαρκὶ ἐληλυθότα, ἐκ τοῦ Θεοῦ οὐκ ἔστι. καὶ τοῦτό ἐστι τὸ τοῦ ἀντιχρίστου, ὃ ἀκηκόατε ὅτι ἔρχεται, καὶ νῦν ἐν τῷ κόσμῳ ἐστὶν ἤδη.—*Տիմոթ. էջ 40—41՝ Յայսմիկ ճանաչի Որդին Աստուծոյ. ամենայն ոգի, որ խոստովանէ Յիսուս զՔրիստոսն ի մարմնի եկեալ՝ յԱստուծոյ է նա. և ամեն ոգի, որ ոչ խոստովանէ զՅիսուսն՝ յԱստուծոյ ոչ է։ Եւ այս է զերաքրիստոսին, զոր լուարուք եթե գայ, և այժմ յաշխարհի է։ էջ 303՝ Յայսմիկ* գիտէք զհոգին *Աստուծոյ. ամենայն* ոգի, *որ* խոստովանի Յիսուս Քրիստոս մարմնով *եկեալ, յԱստուծոյ* է. *և* ամենայն ոգի, *որ ոչ* խոստովանի զՅիսուս՝ *յԱստուծոյ ոչ է։ Եւ այս է զերաքրիստոսին, զոր* լուարուք *եթե գայ, և այժմ յաշխարհի է։*

107. Ա. Յովհ. Ե. 20. Եւ գիտեմք եթէ Որդին Աստուծոյ եկն և ետ մեզ միտս, զի ծանիցուք զճշմարիտն. և եմք ի ճշմարտին Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի. զի նա է ճշմարիտ Աստուած և կեանք յաւիտենականք։ Οἴδαμεν δὲ ὅτι ὁ υἱὸς τοῦ Θεοῦ ἥκει, καὶ δέδωκεν ἡμῖν διάνοιαν ἵνα γινώσκωμεν τὸν ἀληθινόν. καὶ ἐσμεν ἐν τῷ ἀληθινῷ, ἐν τῷ υἱῷ αὐτοῦ Ἰησοῦ Χριστῷ, οὗτός, ἐστιν ὁ ἀληθινὸς Θεὸς καὶ ἡ ζωὴ

αἰῶνος.—Տիմոթ. էջ 41՝ Եւ գիտեմք, եթ՝ Որդին Աստուծոյ եկն և ետ մեզ իմաստութիւն, զի գիտիցեմք զճշմարիտն Աստուած, և եմք ի ճշմարտում Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի. սա է ճշմարիտն Աստուած և կենդանութիւն յաւիտենականս: Էջ 117՝ Եւ գիտեմք, եթ՝ Որդին Աստուծոյ եկն և ետ մեզ միտս, զի գիտիցեմք զճշմարիտն Աստուած, և եմք ի ճշմարտում Որդւոջ նորա Յիսուսի Քրիստոսի: Էջ 206՝ Եթ՝ Որդին Աստուծոյ եկն և ետ մեզ իմացութիւն, զի գիտիցեմք զճշմարիտն Աստուած, և եմք ի ճշմարտում Որդւոջ նորա Յիսուսի Քրիստոսի. սա է ճշմարիտն Աստուած և կենդանութիւն յաւիտենականս: Էջ 14՝ Եւ եմք ի ճշմարտականի Որդւոջ նորա Յիսուսի Քրիստոսի. սա է ճշմարիտն Աստուած և կեանքն յաւիտենականք: Էջ 81—2՝ Եւ գիտեմք եթե Որդին Աստուծոյ եկն և ետ մեզ միտս, զի ծանիցուք զճշմարիտն Աստուած, և եմք ի ճշմարտի Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի . . . . . և կենդանութիւն յաւիտենականս: Էջ 305՝ Եւ գիտեմք, եթ՝ Որդին Աստուծոյ եկն և ետ մեզ իմացութիւն, զի ծանիցուք զճշմարիտն Աստուած, և եմք ի ճշմարտում որդւոջ նորա .... կենդանութիւն յաւիտենականս: Էջ 59, 232 և 282՝ Սա է ճշմարիտն Աստուած և կենդանութիւն յաւիտենականս: Էջ 209 և 228՝ ճշմարիտն Աստուած և կենդանութիւն յաւիտենականս:

108՝ Յուդ. 3—4. Զամենայն փոյթ յանձին կալեալ գրել ձեզ՝ վասն մերոյ հասարակաց փրկութեանն, հարկ յանձին կալայ գրել ձեզ, և աղաչել զի ճգնիցիք ի վերայ հաւատոցն, որ միանգամ աւանդեցաւն սրբոց: Քանզի սպրդեցին մտին ոմանք, որ յառաջագոյն իսկ կատարեալ էին ի սոյն դատաստան. ամպարիշտք, որ զԱստուծոյ մերոյ շնորհսն դարձուցին յանկարգութիւն. և զմի միայն զիշխանն՝ և զՏէր մեր Յիսուս Քրիստոս ուրացեալք: Πᾶσαν σπουδὴν ποιούμενος γράφειν ὑμῖν περὶ τῆς κοινῆς σωτηρίας, ἀνάγκην ἔσχον γράψαι ὑμῖν παρακαλῶν ἐπαγωνίζεσθαι τῇ ἅπαξ παραδοθείσῃ τοῖς ἁγίοις πίστει. Παρεισέδυσαν γάρ τινες ἄνθρωποι, οἱ πάλαι προγεγραμμένοι εἰς τοῦτο τὸ κρῖμα, ἀσεβεῖς, τὴν τοῦ Θεοῦ ἡμῶν χάριν μετατιθέντες εἰς ἀσέλγειαν, καὶ τὸν μόνον δεσπότην Θεὸν καὶ κύριον ἡμῶν Ἰησοῦν Χριστὸν ἀρνούμενοι.—Տիմոթ. էջ 41՝ Զամենայն փոյթ արարեալ գրել ձեզ յաղագս հասարակական մերոյ փրկութեան, հարկաւորութիւն կալայ գրել ձեզ մաղթելով նահատակել մի հաղ աւելով սրբոցն հաւատով: Քանզի առոտեցին*) ոմանք մարդիկ ի վաղուց յառաջագրեալք յայս դատապարտութիւն ամպարիշտք, զայն**) մերոյ շնորհն փոխադրօղի ի գեղխութիւն, և զմիայնն իշխանականն և զՏէրն մեր Յիսուս Քրիստոս ուրացողք: Էջ 305—6՝ Զամենայն փոյթ արարեալ գրել ձեզ յաղագս հասարակականի մերոյն փրկութեան, հարկաւորութիւն կալայ գրել ձեզ, մաղթելով նահատակել մի հաղ աւանդացելով սրբոցն հաւատով: Քանզի ի ներս մտին ոմանք մարդիկ՝ ի հնուց նախագրեալքն յայս դատապարտութիւն ամ-

* Ա ռ ո տ ե լ ինչպէս երկրորդ վկայութենէն կ'երեւայ՝ կը նշանակէ «ներս մտնել»: Նոյն բնագրին «սպրդեցին մտին» եւ յունականին παρεισέδυσαν ձեւին համապատասխանն է. անշուշտ կազմուած է վերջինիս նմանողութեամբ, ուստի առ յունականին παρα մասնիկն է. ո տ ե լ ձեւն ալ ըստ իս ուղղելու է մ տ ե լ, որով կ'ունենանք ա ռ մ տ ե լ (փխ. ա ռ մ տ ա ն ե լ) իբր յունաբան թարգմանութիւն վերի յունարէն բառին:

** Զ ա յ ն բառը տպագրինն է, որ անշուշտ սխալ է. նոյն թարգմանութեան, յոյն բնագրին եւ նոյն իսկ Տիմոթէոսի երկրորդ վկայութեան մէջ բառին տեղ դրուած է զ Ա ս տ ո ւ ծ ո յ ն, ուստի բնական է որ զ ա յ ն բառին վրայ ալ պոտիւ մը եղած ըլլայ (զայն=զԱստուծոյն), որ հրատարակիչներուն աչքէն վրիպեր է:

պարիշտք, զԱստուածոյն մերոյ շնորհ փոխադրելով յանառակութիւն. եւ զմիայն իշխանականն և Տէրն մեր Յիսուս Քրիստոս ուրացեալք։

Եթէ պարզ ակնարկ մը ձգենք յիշեալ 108 վկայութեանց զանազան կրկնութիւններուն վրայ, (որոնց թիւը կը հասնի 325-ի), կը տեսնենք որ կրկնութիւնները ամենամեծ մասամբ տարբեր տարբեր ձեւերով են։ Օրինակի համար առնենք թիւ 107 վկայութիւնը, որ 11 անգամ կրկնուած է (մասամբ կամ ամբողջովին)։ Այս 11 կրկնութեանց մէջ չկայ մէկն՝ որ միւսներուն հետ բառացի նոյն ըլլայ։ Մէկուն մէջ կը տեսնենք Ետ մեզ իմաստութիւն, երկրորդի մէջ Ետ մեզ միտս, երրորդի մէջ Ետ մեզ իմացութիւն։ Մէկուն մէջ կը գտնենք զի գիտիցեմք, միւսին մէջ զի ծանիցուք։ Մէկուն մէջ կը գտնենք ի ճշմարտում որդւոյ նորա, միւսին մէջ ի ճշմարտում որդւոջ ՚նորա, երրորդին մէջ ի ճշմարտականի որդւոջ նորա, չորրորդին մէջ ի ճշմարտի որդւոյ նորա են։

Այսպէս և միւսները։

Արդար ըլլալու համար խոստովանինք սակայն, որ յիշեալ 108 կրկնութիւններուն մէջ կայ քանի մը հատը, որոնք իրարու հետ տառացի նոյն են. ինչպէս օր. Եսայի ԽԲ 8՝ «Զփառս իմ այլում ոչ տաց» (Տիմոթ. էջ 174), որ ճիշտ նոյն ձեւով կը կրկնուի նաև էջ 212։ Կամ՝ Եսայի ԼԵ. 5՝ «Յայնժամ բացցին աչք կուրաց և ականջք խլաց լուիցեն» (Տիմոթ. էջ 56), որ նոյն բառերով կը կրկնուի նաև էջ 294։ Այսպէս են նաև վերի թիւ 16, 35, 36, 46, 47, 63, 70, 77, 93 և 94 վկայութիւնները։ Ասոնց վրայ եթէ ուզենք, կրնանք աւելցնել նաև տասը ուրիշ վկայութիւններ ալ, որոնք թէև իրարմէ տարբերութիւններ ունին, բայց այս տարբերութիւնները այնքան փոքր են, որ աննշան տառափոխութեամբ մը կրնան վերնալ։ Օրինակ՝ Սաղմ. ԽԹ 3 վկայութիւնը՝ էջ 49 գրուած է «Աստուած յայտնապէս եկեսցէ, Աստուած մեր և ոչ լռեսցէ», իսկ էջ 90՝ «Աստուած յայտնապէս եկեսցէ, Աստուածն մեր և ոչ լռեսցէ», ուր ն յօդը միայն աւելի է։ Միւս այս կարգի վկայութիւններն են թիւ 8, 34, 40, 49, 51, 53, 61, 62 և 85 վկայութիւնները։

Այս 22 վկայութիւնները կրկնուած են միայն մէկ-մէկ անգամ. բայց կան մի քանի վկայութիւններ ալ, որ քանի մը անգամ կրկնուած են. այսպէս են թիւ 37, 66, 89 (կրկնուած երեք-երեք անգամ), թիւ 28 և 68 (կրկնուած չորս-չորս անգամ)։

Այսպէս ուրեմն Տիմոթէոսի մէջ գտնուած իրարու նման վկայութիւններու թիւը ընդ ամէնը 27 է, որ 108-ի մէջ շատ սակաւ տոկոս մը կը կազմէ։ Այս սակաւութիւնը աւելի կը մեծնայ, եթէ ի նկատի առնենք այն հանգամանքը, որ Տիմոթէոսի միւս վկայութիւնները առ հասարակ շատ երկար են (օրինակ թիւ 108 վկայութիւնը 7 տող է), իսկ ասոնք բոլորն ալ քանի մը բառէ միայն բաղկացած կարճ նախադասութիւններ են, որոնց մէջ ամենամեծը հազիւ 1 ու կէս տող կը բռնէ։ Բնական էր, որ շատ փոքրիկ խօսքերը, ինչպէս և շատ յաճախ յիշուած վկայութիւնները բոլորովին նոյն ըլլային. օր. Յովհ. Ա. 14 «Բանն մարմին եղեւ» խօսքը 20 անգամ կրկնուած է մի և նոյն ձեւով, որ մեր Ոսկեդարեան Թարգմանութեան հետ ալ նոյն է. բայց նոյն խօսքին շարունակութիւնը (և բնակեաց ի մեզ), որ Տիմոթէոսի քով 7 անգամ թարգմանուած է «և տաղաւարեաց ի մեզ», ութերորդ անգամին արդէն եղած է «և տաղաւարեաց ընդ մեզ»։

Կան այնպիսի դէպքեր, ուր թէև վկայութիւնները երկու-երեք տեղ իրարու հետ բոլորովին նոյն են, բայց անմիջապէս որ նոյնը կը պատահի եր-

բորդ կամ չորրորդ անգամ մ'ալ, իսկոյն տարբերութիւնները կ'սկսին։ Օր. Եսայի ԾԲ 6 «Խօսողս առ ընթեր եմ» ճիշտ նոյն ձևով է Տիմոթ. էջ 134 և և 233. բայց երրորդ անգամ (էջ 86) կըլլայ «Ես խօսողս առ ընթեր եմ»։ Այսպէս համմտ. նաև թիւ 18, 27, 48, 59, 65 և 67 վկայութիւնները։

Ուրիշ տեղեր վկայութեան սկիզբէն քանի մը տող բոլորովին նոյն է, բայց յետոյ յանկարծ այնպէս կը փոխուի, որ երկուքը իրարմէ բոլորովին կը հեռանան. այսպէս օր. թիւ 72, 73, 108 ևլն։

Տարբերութիւնները երբեմն շատ մեծ չափերու կը հասնին. օր. թիւ 83 «Զի ընտիրքն յայտնի եղիցին ի ձեզ», յետոյ կը դառնայ «Զի փորձքն յայտնեսցին ի ձեզ»։ Թիւ 41 «Մանուկ, արի»՝ երկու բառէ բաղկացած նախադասութիւն մ'է, բայց կրկնութեան մէջ երկուքն ալ կը փոխուին և երեւան կուգայ «Համբաւկ, կանգնեցիր»։

Այս բոլորէն ինչ կը հետևի։

Այս բոլորէն այն կը հետևի, որ Տիմոթէոս առ հասարակ Ս. Գրքի որ և իցէ թարգմանութեան հետևած չէ։ Որովհետև եթէ անիկա որ և է թարգմանութեան հետևած ըլլար, յիշած վկայութեանց կրկնութիւնները իրարու հետ բառացի նոյն պիտի ըլլային։ Այսպիսով ուրեմն ոչ Նորայրը կրնայ ծառայած ըլլալ Տիմոթէոսին և ոչ ալ Ս. Գրքի չորրորդ թարգմանութիւնը, որուն գոյութիւնը ենթադրեցինք կանխօրէն՝ հիմնուելով միայն Տիմոթէոսի վկայութեանց վրայ և որ իրապէս գոյութիւն չունի։

Եթէ Տիմոթէոս Ս. Գրքի որ և իցէ թարգմանութեան հետևած չէ, ուրեմն ուրկէ՞ կը ծագին իր մէջ բերած վկայութիւնները։ Այս վկայութիւնները Տիմոթէոս պարզապէս իր առջև ունեցած Հակաճառութեան յունարէն բնագրէն կը թարգմանէ։ Եւ որովհետև վկայութիւն մը պատահած ժամանակ չէր կրնար յիշել թէ նախորդ անգամ ինչպէս էր թարգմանած, կամ մինչև իսկ անոր գոյութիւնն ալ կրնար մոռցած ըլլալ, ուստի մէկ անգամ այսպէս, մէկ անգամ այնպէս կը թարգմանէ։ Նմանութեան դէպքերը պատահական են, բայց այսպիսի նմանութիւններ յառաջանալուն կրնայ նպաստած ըլլալ նաև այն հանգամանքը, որ Տիմոթէոսի թարգմանիչը բնագրին կոյր հետևորդ մ'է և յունարէն իւրաքանչիւր բառի դէմ ճիշտ ու ճիշտ համապատասխան հայերէն մը կը դնէ, առանց ուշադրութիւն դարձնելու հայերէնի բառարանին, քերականութեան և շարադասութեան վրայ, և ամէն անգամ շինելով իր կողմէն նոր նոր հայերէն բառեր՝ յունական ստուգաբանութեամբ։ Այսպիսի կոյր հետևողութեան կատարեալ օրինակ մ'է Եփես. Դ. 5, որ մեր թարգմանութեան մէջ այսպէս է. «Մի է Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն»։ Յունարէնի մէջ Տէր արական է, հաւատք՝ իգական, և մկրտութիւն՝ չէզոք. ասկէ զատ յունարէնի մէջ հաւատք եզակի է և էական բայն ալ գործածուած չէ։ Տիմոթէոս այս բոլոր պայմանները մտցնելով հայերէնի մէջ՝ կը թարգմանէ.

Εἷς κύριος, μία πίστις, ἓν βάπτισμα

Եզ Տէր մու հաւատ (և) մի մկրտութիւն։

Երբ կաղապարը մէկ է, բնական է որ ձուլուած գործերն ալ նոյն ըլլան։

Գ. Տ. Մկրտչեան Նորայրի գոյութիւնը հաստատելէ յետոյ՝ կ'աշխատի թարգմանութեան թուականն ալ որոշել։ Նորայրը յիշատակող Բոթնեաւրը Է դարէն ըլլալով, ապահովապէս Նորայրը գոյութիւն ունէր այդ ժամանակ։ Բայց Գ. Տէր Մկրտչեան (Արար. 1908. էջ 586) սկզբի սահմանն ալ կը դնէ։ Տոմարական կտորի մը վրայ հիմնուելով՝ կը հաստատէ, որ Տի-

մոթէոսը թարգմանուած է 480-ի թուկրուն. և որովհետև Տիմոթէոսը Նորաբերին հետ կը կապէ, ուստի Նորաբերն ալ թարգմանուած կը դնէ Ե դարու երկրորդ կէսին։

Սակայն մենք գիտենք որ Տիմոթէոսը Նորաբերի հետ բնաւ կապ չունի. Տիմոթէոսը ոչ միայն Նորաբերը, այլ և ուրիշ որևիցէ հայ թարգմանութիւն ալ ձեռքի տակ ունեցած չէ։ Գ. Տէր Մկրտչեան (անդ, էջ 585) նախապէս կասկածով վերաբերուելէ յետոյ, ապագային ձգելով որոշել թէ Տիմոթէոսը Նորաբերէն օգտուած է թէ ոչ, չգիտեմ ինչու, յանկարծ կը հիմնուի նոյն անստոյգ կէտին վրայ և ենթադրելով որ Տիմոթէոսը Նորաբերէն օգտուած է, կը դնէ Նորաբերի թարգմանութեան ժամանակը։

Նորաբերը Տիմոթէոսի հետ ոչ մէկ կապ ունենալով՝ բնական է թէ չի կրնար վերի եզրակացութիւնը ուղիղ ըլլալ. այնպէս որ Նորաբերը առ այժմ կը մնայ միայն Է դարու սահմանին մէջ։

Հրաչեայ Աճառեան

Նոր-Նախիջևան
1908 Նոյեմբեր.

ՋԱԳԱՎԱՆԻՑ ԺՈՂՈՎԸ

Ա.

«Ի Ղանութեան Ապաղային և ի կաթողիկոսութեան տեառն Յակոբայ արարին ժողով ի Հաղբատ և ի Ջագավանս», ահա այն բոլորը, ինչ որ գիտենք այս ժողովի մասին։ Մխիթար Այրիվանեցին, այս իրողութեան միակ աղբիւրը, Ջագավանից ժողովը նշանակում է 1261—1281թուերի մէջ։ Բայց այսօր նոյն ժողովի «Սահմանքի» գիւտով պարզ և մեկին գաղափար ենք առանում նորա նիւթի, ժամանակի և գեկավարող անձնաւորութիւնների մասին**, ճշմարիտ է, փոքր է այն, և մեր եկեղեցւոյ պատմութեան համար առաջնակարգ նշանակութիւն ունեցող դէպքեր չէ նկարագրում, բայց բանում է որոշ չափով անցեալի վարագոյրը՝ գիտելու ժԳ. դարու ժողովրդական և վանական կեանքի մի քանի կողմերը։*

*Ջագավանից ժողովը գումարուել է« ի թուիս հայոց ՉԺԹ (1270)», արաց ամսի ՞Ժե կամ ՞ԺԷ***, «ի տաւնի սրբոյն Գրիգորի, յաշխարհակալութեան*

---

* Պատմ. Հայոց. հրատ. Մկրտիչ Էմին. Մոսկվա. 1860. եր, 68:

** Մատենադարանում աշխատելիս՝ այս գրութեան վերայ մեր ուշադրութիւնը հրաւիրեց Տ. Կարապետ Եպիսկոպոս, որին խնդրել էինք տեղեկութիւն տալ՝ Գուշեանց տոհմին վերաբերեալ յիշատակարանների պատահելիս:

*** Երկու տարին էլ նշանակուած են մեր «Սահմանք»-ի մէջ. տարբերութիւնը ե եւ է տառերի շփոթութիւնից յառաջ եկած:

Ապաղ ղանին (1265—1282), կամաւք և հրամանաւ Խոշաքին, և իշխանաց մերոց մեծին Պռոշայ, և Սադունին և Սմբատայ». «(ի) կթղութն ան Յակոբայ, յարքի եղբաւրն ան Գրիգորի, Նորին կամաւք և ձեռամբ բոլոր վիճակին իւրոյ, որ ընդ իշխանութբ որ աթոռոյն Վիրապին և Բջնւոյ»։ Ժողովին մասնակից է եղել «և ակարոգի Վարդան վարդապետ, ծառա քրիստոնից (այսպէս), ապաստար բանի, հրամանօ կթղսի»։ Երկրորդ գլխի վերջարանից իմանում ենք, թէ կանոնների գրողը նոյն «ակար» Վարդանն է և պատուիրում է, որ կիւրակի և տօն օրերին կարդան այս կանոնները, «հեծելին աղաւթք աննեն և քասաէր պարոն Խոշաքին, և մեր բարէպաշտ իշխանացն Պռոշայ և Սադունին և Սմբատայ, որ ձեռնտու և աւգնական լինին կանոնին»։

Բ.

Արդ ո՞վ էին այս անձնաւորութիւնները։

Խոշաք անունով երկու անձնաւորութիւն են մեզ յայտնի։ Խոշաք է կոչւում Զաքարիա Սպասալարի եղբայր Իւանէ աթաբէգի կինը, Աւագի մայրը։ Արձանագրութիւնների մէջ նորա անունը յիշւում է առաջին անգամ Կեչառոյքի Վասակաշէն կաթուղիկէի արձանագրութիւնների մէջ 1214 թուին**, ապա ուրիշ տեղ 1226 թուին***։ Նա միջնորդ հանդիսացաւ 1250 թուին Թաթարների առաջ իւր որդու համար****։ Վերջին անգամ նորա անունը յիշւած է Յոհաննայ վանքի (Արտագածոտն) մի արձանագրութեան մէջ 1258 թուին†։ Ե՞րբ մեռաւ Խոշաքը, մեզ յայտնի չէ. յամենայն դէպս 1270 թուին, երբ գումարուեցաւ Զագավանից ժողովը, նա կենդանի լինել չէր կարող, որովհետև ԺԳ. դարու սկզբին (1201 թ.) արդէն մայր էր††։*

Նոյնանուն երկրորդ անձնաւորութիւնը Աւագի դուստրն էր՝ Գոնցա կնոջից։ Աւագ մեռնելով 1250 թուականին՝ թողնում է միայն «դուստր մի երեխայ». «եւ եառն գիշխանութիւն նորա Զաքարէի որդւոյն Շահնշահի» †††. ըստ Օրբէլեանի «Սմբատայ (Օրբէլեան) հայրագիր լեալ տանն Աւագին», սպանել է տալիս Գոնցային «եւ ինքն իշխէր ամենայն իշխանութեանց Աւագին»††††։ Ըստ երևութին դրանք իրար բոլորովին հակառակ տեղեկութիւններ են. բայց չենք կարծում, թէ ճշմարտութիւնից բոլորովին զուրկ լինին։ Հաւանօրէն Սմբատ իշխում էր Օրբէլեանց սահմանակից գաւառների վերայ, իսկ Զաքարեան մնացած մասի. ինչպէս էլ լինի, երկուսի համար այդ ժամանակաւոր «հայրագրութիւն» կամ հոգաբարձութիւն էր։ Աւագի տան օրինաւոր և միակ ժառանգը Խոշաքն էր ժամանակի տիրող օրէնքի և սովորու-

* Վարդան Վենետիկ. 1862. 140. 143. Գանձակեցի. Թիֆլիս. 1909. 304.

** Շահխաթունեան Բ. 196. Ալիշան Այր. 263. Սոքա բուականով արձանագրութիւնը չունին։ Ազգագրական Հանդէս 1912. XXXIII. եր. 150. տպուած է «Խոշաքին», որ հաւանօրէն տառասխալ է։ Մենք վերստուգել ենք եւ լուսանկարել այդ արձանագրութիւնները՝

*** Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանց. Տեղեկագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի Վաղարշապատ. 1895. եր. 484.

**** Գանձակեցի. 1909 եր. 304.

† Շահխ. Բ. 101. Ալիշ. Այր. 170.

†† Շահխ. Բ. 266. Ալիշան Շիրակ. 164.

††† Գանձակեցի 305.

†††† Օրբ. Բ. 165. Հրաս. Կարապետ վ. Շահնազարեանի։

թեան համեմատ։ Նորա անունով էլ արձանագրութիւնները թուագրել են սկսում, երբ չափահաս է դառնում։ Սմբատ Օրբէլեան Խոշաքին կնութեան է տալիս 1269 թուականին «մեծ Խոջային Սահիպ դիւանին, որ ունէր ի բռին զամենայն աշխարհս տէրութեան Ապաղայ Ղանին»**։*

*Խոշաքի անունը առաջին անգամ արձանագրութիւնների մէջ յիշատակւում է 1257 թւին, հէնց նոյն աթաբակ Սադունի հետ, որի մասին տեղեկացանք քիչ առաջ***, եթէ նա նոյն չէ Իւանէի կնոջ հետ։ Աւելի որոշ է այդ յիշատակութիւնը Բջնիի մի արձանագրութեան մէջ. «Յասմին անմահին ալ ես Զաքարէ որդի Սահիպ դիւանին և պարոն Խոշաքին, թոռն աթաբակ Ավագին որդոյ աթաբագ Իվանէի...» սկսւում է արձանագրութիւնը։ Տարաբաղդաբար թիւ չունի, և մենք կարծում ենք, թէ գրուած է ԺԳ. դարու իննսունական թուականներին, գուցէ և աւելի յետոյ, բայց դիտմամբ հէնց սկզբից վկայութիւն ենք բերում՝ խնդիրը պարզելու համար։ Բջնիից ոչ հեռու Արզիբիր գիւղի աւերակ վանքի արձանագրութիւնը թուագրուած է «ի աշխարհակալութեան Արղունին (այսպէս), պարոնութեան Խոշաքին» 1284—1291 թւերի մէջ****։ Վայոց ձորի Թանահատի վանքի մի արձանագրութիւն ևս թուագրուած է նոյն Խոշաքի անունով։ Ալիշան կասկածում է Խոշաքի անուան յիշատակութեան համար, ի նկատի ունենալով միայն Աւագի մօրը†։ Անձամբ տեսել ենք և լուսանկարել այդ արձանագրութիւնը, թէպէտ առաջին գրի առնելու ժամանակից մինչև այժմ քարեր են թափած և պակասաւոր է, բայց կասկածի ենթարկուել կարող չէ Խոշաքի անուան յիշատակութիւնը։ Արձանագրութեան թուականը նոյնպէս պակասաւոր է. միայն «Ջ» տառն է երևում, սակայն 1251 թւին գրուած լինել չէր կարող այն, որովհետև այն ժամանակ դեռ ևս շինուած չէր վանքը††։ Գրուած չէր նաև 1284 թուականից առաջ, երբ թագաւորել սկսեց Արղունը (1284—1291)։ Արձանագրութեան մէջ յիշուած Պապաք, Ամիր Հասան մեր ժողովի «Սահմանքի»ի Պռոշ մեծ իշխանի որդիքն են, իսկ Խաչէն նորա թոռը։ Պռոշի անուան բացակայութիւնը ապացոյց է, որ նա մեռած էր, իսկ նորա անուան վերջին յիշատակութիւնը ՉԼԵ=1285|6 թւին է†††. այդ ժամանակից յետոյ եղած արձանագրութիւնները†††† թուագրուած են միայն Պապաքի և Ամիր Հասանի անունով, ինչպէս այստեղ, որ լինել չէր կարող, եթէ Պռոշ կենդանի լինէր։ Մխիթար Այրիվանեցին, որ յիշում է Պռոշի մահը, իւր պատմութիւնը փակում է 1289 թւին։ Ամիր Հասանը մի յիշատակարանի համաձայն վախճանուել է 1292 թւին†††††, ուրեմն և արձանագրութեան թուականը 1286—1292 տարիների մէջ է ընկնում։ Նոյն յիշատակարանը պարզում է մեզ և Խոշաքի անուան յիշատակութեան պատճառը Պռոշեանների սեպհականութիւն եղած վանքի արձա-*

* Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց Հրատ. Վահան Ծ. վ. Բաստամեանց Վաղարշապատ 1880. եր. 571. 573. 577.

** Օրբ. Բ. 155.

*** Մեսրոպ արքեպիսկոպոս, Գեղարքունի եր. 482.

**** Շահխ. Բ. 185. Ալիշ. Այր. 275. Մեսր. արք. Գեղարք. 310.

† Սիսական 120.

†† Տես մեր յօդուածը «Ոսկերչական արուեստի մի նմոյշ ԺԳ. դարում» Գեղարուեստ № 4. եր. 59. Արտատպ. «Խոստովանոց Ս. Նշանի» եր. 4.

††† Ջալալ. Բ. 201. 20 Ալիշ. Սիս 176.

†††† Ալիշան Սիս. 174.

††††† Արարատ. 1876. եր. 412.

նագրութեան մէջ. Ամիր Հասանը սպարապետ էր «տանն Աւագին», այսինքն ենթարկուած Աւագեանների գերիշխանութեան, որոնց միակ ժառանգը Խոշաքն էր։

Մի ուրիշ արձանագրութիւն վերջերս գտնուեցաւ Գառնիում, աւաղ չապես Մասի պեղումների ժամանակ. տարաբաղդաբար այստեղ ևս արձանագրութիւնը պակասաւոր է թուականի հետ։ Երևում է միայն թուականի «Զ», տառը, բայց 1251 թուին գրուած լինել կարող չէր, քանի որ յիշւում է և Խոշաքի որդի Զաքարէի անունը։ Յամենայն դէպս եղած կարգադրութիւններից երևում է, որ Գառնին Խոշաքի ժառանգութեան մասն էր։ Եւ յիրաւի, Գառնիի սահմանակից Հաւուց Թառ կամ Ամենափրկիչ կոչուած վանքում գրուած մի յիշատակարան բոլորովին հաստատում է նոյն իրողութիւնը. «ի թուականութեանս հայոց ՉԽԶ=1297 ի թագաւորութեան բարեպաշտ և ածաւէր թագաւորին հայոց հեթմոյ՝ և ի մերոյս նահանգի տէրութեան Խոշաքին և զաքարիայի որդոյ նորին...**։*

*Վերջապէս Զագաւանքին կից Գետարգել Ս. Նշանի մատրան արձանագրութիւնը՝ թուագրուած «թվ. ՉՀԴ (1325) ի պարոնութեան Զաքարիա թոռն Աւագին...»***, ապացոյց է, թէ այդտեղն էլ Խոշաքի իշխանութեան մասն էր։*

Այս արձանագրութիւններից և յիշատակարանից պարզ է, թէ ո՞վ է մեր «Սահմանք»ի մէջ յիշած պարոն Խոշաքը և թէ ինչու նորա «կամաւք և հրամանաւ» պիտի գումարուէր Զագաւանից ժողովը։

Գ.

«Սահմանք»-ի մէջ յիշուած «մեծն Պռօշ» ԺԳ. դարու նշանաւոր իշխաններից մէկն է։ Նորա քաջութեան և շինարարութեան մասին, թէև համառօտ, բայց գովաբանք են խօսում ժամանակակից պատմիչները. Կիրակոս Գանձակեցի,† Մխիթար Այրիվանեցի,†† Օրբէլեան††† և շատ արձանագրութիւններ††††։ Նորա հայրը Վասակ Խաղբակեանն էր, որին Իւանէ աթաբէգը ժառանգական իրաւունքով կալուածակալ նշանակեց Շահապունիքում և Վայոց Ձորում։ Բայց որդին այնքան նշանաւոր հանդիսացաւ, որ յետագայ սերունդը նորա անունով Պռօշեան կոչուեցաւ։ ԺԳ. դարու երեսնական թուականներից սկսած մինչև ութսունական թուականների կէսերը նա ասպարէզի վրայ էր, մասնակից հայրենիքի պաշտպանութեան համար մղուած պատերազմներին կամ Թաթարաց արշաւանքներին։ Նորա շինարարական գործունէութեան մեծագոյն առհաւատչեան Գեղարդի վիմափոր տաճարներն են, Թանահատի վանքը, որի համար էլ, երևի, Մխիթար Այրիվանեցու կողմից կոչւում է «աշխարհաշէն»։ Մենք աւելի մանրամասնել չենք կամենում նորա

* Հովիւ. 1910. եր. 122. Մեր յօդուածը. «Գառնիի աւերակները» վերնագրով:

** Ձեռ. Ս. Էջմ. Մատ. № 1124 Գ. ց. տար.

*** Շահխ. Բ. 165. Ալիշան Այր 292. Մեսրոպ. Արքեպիսկ. Գեղարքունի 241.

† Երեւ 194. 364. 368. 369.

†† Պատմ. Հայոց, հրատ. Մկրտիչ Էմին. Մոսկվա. 1860. եր. 65. 66. 68.

††† Բ. 95, 97, 109, 143, 179.

†††† Ստորագրութիւն Այրի վանաց որոյն Գեղարդայ Սեփ. վարդ. Մխիթարեանց. Վաղարշապատ. 1873. եր. 5, 38, 77, Ալիշան. Այր. 339, 341. Ալիշան Սիս. 120. 174—176, եւն. բոլորը ստուգուած եւ լուսանկարուած մեր կողմից.

գործունէութիւնը, որովհետև այլ առթիւ պէտք է երկար խօսենք։ Նորա մահը պէտք է 1285|6 թուերին պատահած լինի։

Դ.

Համեմատաբար աւելի քիչ տեղեկութիւն ունինք Սադուն իշխանի մասին, որի անուան յիշատակութիւնը Թոշաքի հետ 1257 թուին տեսանք վերև։ Այրիվանեցին սորա և Պռոշ իշխանի մահը միասին է նշանակում, ԺԳ. դարու ութսունական թուականների կէսերին։ Մի անյայտ ժամանակագիր Սադունի մահը 1285 թուին է դնում. «Եւ Սադուն ի Տաշիր մեռաւ», համապատասխան արձանագրութիւնների և Այրիվանեցու ցուցմանց։ Այդպէս էր մտածում Սադունի մահուան մասին և Օրբէլեան, որի համեմատ Արղունը իւր թագաւորութեան առաջին օրերում (1284 թ.) Վրաց Դեմետրէ թագաւորին է յանձնում «զամենայն աշխարհս Հայոց, զտունն Աւագեան և զտունն Շահնշահեան և զԴադեցին և* զորդիսն Սադունն ատաբէկին»**։ *Դեմետրէն աթաբէկութեան պատիւը յանձնում է Տարսայիճ Օրբէլեանին հէնց Արղունի թագաւորութեան առաջին տարին, ասել է, թէ մեռած էր արդէն Սադուն աթաբէկը***։ Թէև Աղջոց Ս. Ստեփաննոսի մօտ մի խաչքարի 1287 թուի արձանագրութեան մէջ յիշուած է ամիր սպասալար Սադուն աթաբակի անունը, բայց այդտեղ խօսքն անցեալի մասին է և կարելի չէ դորա հիման վերայ կենդանի համարել նորան։ Անյայտ է ժամանակով նա և Ղարաղան քարտուղարի արձանագրութեան մէջ աթաբակ Սադունի անուան յիշատակութիւնը†։*

Երուսաղէմի Հայոց Ս. Յակոբի մատենադարանի № 1288 ձեռագիրը գրուած է 1273 թուին՝ Գետկայ վանքում «յաթաբակութե Սադունին և ի տէրութե տեղւոյս ծարին»։ Սադունի անունը Սմբատ (Օրբելեան), Բուրթ (Վաչուտեան) և Պռոշ իշխանների հետ յիշում է Վարդան պատմիչ Դանիէլի մեկնութեան վերջաբանի մէջ 1268 թուին††։ Ըստ Գանձակեցու նա 1260 թուին մասնակցում էր Նփրկերտի պաշարման Պռոշ իշխանի հետ միասին Թաթարաց բանակում։ Գանձակեցին նկարագրում է նորան՝ «քրիստոնեայ հաւատով և բարի գործով, և մեծ պատուով առ Հուլաւուն. զի այր անձնեայ և քաջամարտիկ էր»†††։ Նորա «անձնեայ և քաջամարտիկ» լինելու մասին պատմում է և Մաղաքիան, թէ ինչպէս նա յաղթել է Մանկու խանի կողմից ուղարկուած մի հսկայ ըմբիշի և Հուլաղուի կողմից մեծամեծ պատիւների

---

* Սամուէլ Անեցի. հրատ. Տէր Միքայէլեանի. Վաղարշապատ. եր. 163.

** Օրբ. բ. 172.

*** Անդ. բ. 173.

† «Յաւելուածակալութեան արղուն ղա|նին եւ ի թագաւորութե Դաւթի եւ հայրապետութե տր յովաննիսի եւ ի տէրութե|տեղւոյս պարոն սադուն եւ|զավար ամասուր տէր աւագս բէրամ զչուրս եւ կանգնեցաք զխաչս եւ տնկեցաք զայգին յովայն զոր ամիր սպասալար եւ աթա|բակ սադուն նուէր ես էկեղեցւյ|զչուրս անխափան ի բանի պանէ. կատարողք զէկո|ցս աւրհնին յայ եւ որ զ|այգին յեկեղեցւոյս եւ ի չ|րէս հանէ, յերից ժողովոյն նզով|եալ եղիցի եւ զրկի կենաց ջրոյն»: Ընկած քարէքի վրայ. «ի թվ. ՉԼԶ». Վանքի ամբողջ արձանագրութիւնների հետ գրի առնուած առաջին անգամ մեր կողմից պրոֆ. Մառի յանձնարարութեամբ: Ղարաղանի արձանագրութիւնն էլ նոյն վանքում:

†† Ձեռ. Ս. Եջմ. № 2049, 339 բ. ծարի մասին տես Ջալ. Ա. 138. Ծնխ. Բ. 367. Մակար եպիսկ. Արցախ. 350. Ազգ Հանդէս. X 1903. Խս. Յարութիւնեանի յօդ. եր. 28.

††† Գանձակեցի 197. 138.

հանել*։ Այդ դէպքը պատահել է 1256 թուից ոչ առաջ, երբ Հուլաղուն հաստատեց իւր իշխանութիւնը Պարսկաստանում, և ոչ ուշ, քան 1260 թիւը, երբ Սադունն արդէն պատուաւոր գիրք ունէր Հուլաղուի առաջ և մասնակցում էր Նփրկերտի պաշարման։

Մեր Սադուն իշխանը պէտք է լինի, հաւանօրէն, և Աշտարակի Ծակքար կոչուած խաչքարի արձանագրութեան մէջ յիշուածը. «ի թվ. ՉԺԷ... շնորհիւն Աստուծոյ ես տէր Թամտա կանգնեցի զսուրբ նշանս վասն յերկար կենաց պարոն Սադունին եւ զաւակաց իւրոց»**։

Վերոյիշեալ անյայտ ժամանակագրի և Օրբէլեանի տեղեկութեան հիման վերայ Սադունի իշխանութիւնը հիւսիսային Հայաստանումն էր։ Մաղաքիան պատմում է, թէ Սադունը ըմբիշի հետ մենամարտելու գնալուց առաջ, «երթեալ ի Գառն առ աւենահատ որ Սարգիսն».... ուխտ և մատաղ է անում։ Մի այլ տեղ նորան «տէրն Հաղբատայ՝ մեծ և հռչակաւոր սրբոյ ուխտին» է անուանում***։ Հաղբատի Ամենափրկիչ կոչուած խաչքարի արձանագրութիւնը միանգամայն հաստատում է այս իրողութիւնը. «իշխանութեան և տէրութեան սուրբ ուխտս աթարէգ ամիր սպասալար պարոն Սադունին ես տէր Յոհաննէս կանգնեցի զխաչս ամենափրկիչ օգնական պարոն Սադունին և յիշատակ հոգւոյ իմոյ»։ Նոյն խաչքարի միւս արձանագրութիւնը կրկնում է, թէ խաչարձանը կանգնել է Յոհաննէս եպիսկոպոսը «վասն արեւշատութեան աթարէգ ամիր սպասալարի Սադունին և զաւակաց նորա»։ Մակարայ վանքի արձանագրութիւններից մէկի մէջ յիշուած է «մեծ և հզաւր իշխան աթարէգ Սադուն»-ը†։

Նորա պապն էր Սադուն, Բրդի կամ Ամիր Բրդի որդին, որ իշխում էր Կայենոյ և Մահկանաբերդոյ կողմերը, հայրը Շէրբարար, իսկ որդին Խուտլուբուղայ, որի արմանկարը գտնւում է Հաղբատում††։ Ծագմամբ Արծրունի էր։

Ե.

Մեր «Սահմանք»-ի մէջ յիշուած չորրորդ իշխանը Սմբատն է։ Սորա մասին ընդարձակ տեղեկութիւններ ունինք Ստեփաննոս Օրբէլեանից և արձանագրութիւններից։ Նա Լիպարիտ Օրբէլեանի երկրորդ որդին էր, որ իշխանապետ դարձաւ իւր աւագ եղբօր Էլիկումի մահուանից յետոյ։

Առաջին անգամ նորա անունը յիշատակւում է իւր հօր՝ Լիպարիտ Օրբէլեանի՝ Ամաղուի Նորավանքում թողած մեծ արձանագրութեան մէջ։ Այդտեղ Լիպարիտ պատմում է աթարէգ Իւանէի ձեռքով «զՀրաշկաբերդ իւր կերով եւ այլ բազում գիւղս ի Վայոց ձոր, ի Գեղարքունի, ի Կոտայոն և ի Կայենն» առնելը, Նորավանքի շինութիւնը իւր տուած նուիրաբերութիւններով, և խնդրում է արեւշատութիւն հայցել իւր որդւոց «Էլիկումին, Սմբատայ, Իվանէի, Փախրադաւլային, Տարսայիճին»†††։ Սմբատ Օրբէլեանց իշ-

* Մաղաքիայ աբեղայի պատմ. վասն ազգին Նետողաց. Ս. Պ. Սպ. 1870. 34—35.

** Շահխ. Բ. 89. Ալիշան Այր. 187. Ստուգուած եւ ճշտուած մեր կողմից։

*** Մաղաքիա ՍՊ. 1870, 34, 28՝

† Ջալալ. եր. 70—71. 152.

†† Գանձակեցի 197. 370. Մաղաքիա 34. Христіанскій Востокъ СП. 1912, Т. I եր. 351—353. եւ табл. XXI.

††† Օրբ. Բ. 104. Ջալ. Բ. 174. Ալիշան Սիս. 187։ Սոցանից առաջինը արձանագրութեան բաւականը «Ոճը» է ճանաչում, Ալիշան «Ոճա» եւ Ջալալեան «Ոճ»։

իշխանութեան գլուխն է անցնում 1253 թուին, նախապէս երեք տարի դեգերե-լով Մանկու խանի (1251–1259) պալատում իւր իրաւունքների պաշտպա-նութեան համար։ Նորա իշխանութիւնը տևում է քսան տարի. մեռնում է 1273 թուին**։ Օրբէլեանը բնորոշում է նորան որպէս «հանճարով մեծ, խորհրդով ուժեղ, խելօք անձամբ, հնարիւք բազմագէտ, բանիւ առատ և քաղցր, լեզուաւ հմուտ և ճարտար»։ Գիտէր հինգ լեզու։ «Սիրող» էր «եկե-ղեցեաց, շինող վանօրէից»... «կանգնիչ և զօրացուցիչ վշտագնեալ ազգիս Հայոց, գերեթափ և ազատարար ամենեցուն»***։*

*Մանկու խանի մօտից վերադառնալուց յետոյ՝ Թաթարների օգնու-թեամբ «թափեաց զերկիրն Որոտան բովանդակ մինչ ի սահմանս Բարտոնոյ, Բղենոյ . . . էառ և զեղեգիս և զամենայն գաւառն Վայոց ձորոյ, զՓողահանան, զՍւրծ և զՎէդի իւր ձորովն մինչև յԵրերունս, և ի Կոտայսն և ի Գեղարքունի բազում շէնս և աւանս»****։ Իւր խոհեմ քաղաքականութեամբ գրաւում է Թաթար խաների և իլխանների վստահութիւնը, Վրաց Դաւիթ թագաւորի բարեկամութիւնը, որով և Օրբէլեան իշխանութիւնը հասցնում իւր զօ-րութեան գագաթնակէտին։ Օրբէլեանց իշխանութիւնն սկզբում մի «կողմնա-կալութիւն» էր ժառանգական իրաւունքով Իւանէ աթաբէկի և Գէորգի Լա-շայի կողմից հաստատուած, բայց Սմբատ «ենչու», այսինքն տէրունի է դար-ձնում, հանելով «ի գաւթարաց ի վրաց և յայլոց»։ Աւագի մահուանից յետոյ՝ առժամանակ իբրև Խօշաքի «հայրագիր» իշխում է նորա երկրներին†։*

Սմբատի շինարարական գործունէութիւնը նոյնպէս նշանաւոր էր։ Նա է շինել Նորավանքի ժամատունը, նորոգել այնտեղի միւս եկեղեցիները, պարգևներ տուել և արձանագրութիւններով յաւերժացրել իւր անունը։ Պատ-միչն էլ իւր կողմից աւելացնում է, թէ «անձամբ ազատք զարդարէ զեկեղեցին մեծածախ գանձուք յոսկւոյ և յարծաթոյ և ի պատուական մե-տաքսէից»††։ Արշարունիքից բերած սրբոց նշխարները «զարդարեաց ոսկւով և արծաթով, եդեալ յաղիւսաձև պահարանի . . . և եա կողմել պահարան Աւագ սուրբ նշանին յոսկւոյ, ի կերպ աղիւսակի ունելով դրունս երկրացեկս և գրեաց ի թիկանց կուսէ յիշատակ ինքեան»†††։ Նա նորոգել է տալիս Թա-ռակերպաց կամ Բարկոփի վանքը, ներկայ Թաշիկ գիւղի մօտ և Նորավանքի Սարգիս եպիսկոպոսին արձանագրել տալիս իրողութիւնը։ Նպաստում է նաև Տաթևի վանքի վերանորոգութեանն ու փարթամութեան††††։

Սմբատի հեղինակութեան և ձեռք բերած փառքի լաւագոյն ապացոյցը նորա «արքայ» կամ «արքայաշուք» տիտղոսն է։ Նորա մասին գովասանքով

---

* Օրբ. Բ. 161. 154–157.

** Օրբ. Բ. 166–167. Յայ. Բ. 173. Բաշբերունի. Ճանապարհորդական նկատողութիւնք. Արարատ, 1890. եր. 55. Ալիշան Սիս. եր. 192.

*** Օրբ. Բ. 151.

**** Օրբ. Բ. 157–8.

† Անդ 154–157, 159–161. 165. Ենչու բառի բացատրութիւնը տես Н. Марръ. Новые Матеріалы по Арм. Эпиграфикѣ. СП. 1893 Оттискъ изъ «Записокъ восточ. отдѣл. имп. русск. археол. общ.» Т. VIII. եր. 79.

†† Օրբ. Բ. 106 109. 162 Ալիշան Սիս. 189–190.

††† Օրբ. Բ. 161–162.

†††† Օրբ. Բ. 158.

է խօսում ոչ միայն Օրբէլեանը, որ չափազանցնել կարող էր իբրև եղբօրորդի և հոգեզաւակ[*]*, այլ և Երուսաղէմի վերօյիշեալ (№ 1288) ձեռագրի յիշատակարանի հեղինակը. «Յայս ամի (1273) վախճանեցաւ իշխանաց իշխան Սմբատ և սուգ մեծ էր տանս արևելից. վա զի բազում խաղաղութի շնորհեաց ած ի ձեռս նորա տանս արևելից, մանաւանդ ա. եկեղեցեաց. Եւ ած ի գալստեան (իւր)ում ի վերա տան քաղաքաց կացուցէ զնա, ամէն»։ Նորա մահը հանդիպեց Դաւրիժում, երբ գնացել էր Աբղանին տեսութեան։ Մարմինը հանդիսով բերին և ամփոփեցին «ի հայրենի գամբարանն սուրբ ուխտին Նորավանից»։ Նորա եղբայրն ու յաջորդը Տարսայիճ՝ յատուկ գամբարան շինեց նորա համար 1275 թուին, փոխադրելով այնտեղ նորա նշխարները։ Տապանաքարի վերայ արձանագրուած է. «Սմբատ արքային է տապանս. յիշեցէք. թ. ՉԻԲ»*[**].

Զ.

Այժմ տեսնենք, թէ ովքեր են Տէր Գրիգորն ու Վարդան վարդապետը, որոնց ձեռքով գումարուել է Զագավանից ժողովը։

Յայտնի է, որ 1243 թուին գումարուած Սսոյ ժողովին արևելեան վարդապետները մասնակից չէին։ Բայց Կիլիկիայումն էր այդ ժամանակ Վարդան պատմիչ, որ Երուսաղէմից վերադարձին եկել էր Հեթում թագաւորին և Կոստանդին կաթուղիկոսին այցելութեան։ Հինգ տարի մնալով Հռոմկլայում՝ մտերմացել էր կաթուղիկոսի հետ։ Դէպքից օգտուելով Կոստանդին կաթուղիկոսը և Վարդանի ձեռքով արևելք ուղարկեց Սսոյ կանոնները շրջաբերական կոնդակի հետ։ Վարդան կաթուղիկոսի մարդկանց հետ շրջեց Հայաստանի կեդրոնները և հաւանութեան թուղթ ստանալով գլխաւոր եպիսկոպոսներից, վանքերից և իշխաններից, ուղարկեց կաթուղիկոսին. յականէ յանուանէ յիշւում են Կարնոյ, Կարսի, Բջնոյ, Անբերդի և Հաղբատի եպիսկոպոսները։ Այս դէպքը կատարուեցաւ 1246 թուին[***]*։ Բայց այդ թուականից յետոյ էլ Սսոյ ժողովը ունեցել է իւր արձագանգը մեծ Հայքում։ Բջնոյ Վանական և Գրիգոր եպիսկոպոսները, որ ստորագրել էին հաւանութեան թղթին, 1251 թուին արձանագրութեամբ յայտնում են, թէ հաստատել են «Ազդմամբ Հոգւոյն սրբոյ եւ Կոստանդեայ կաթողիկոսի հրամանաւ գլխատեալ կանոնքս», որ ոչ ոք կաշառով ձեռնադրութիւն չանէ*[†]*։ Նոյն թուականին մի այլ արձանագրութիւն Մրենում Շահնշահի հրամանով և Տէր Գրիգորի առաջնորդութեան ժամանակ նոյն արգելքն է դնում անչափահասների և կաշառքով ձեռնադրութեան մասին*[††]*։ Սսոյ ժողովի հետևանքներն էին և Զագավանից ու Հաղբատի ժողովները։ Յովհաննէս Երզնկացին իւր «Յորդոր հասարակաց քրիստոնէից» եւն. գրութեան մէջ հաստատում է այս իրողութիւնը առանց տեղերի անունները տալու և կապելու Սսոյ ժողովի հետ. «Որ հայրն մեր մեծ վարդապետն Վարդան յիւր կենդանութեն բազում անգամ ժողովք արար»*[†††]*։ Այս տեղեկութիւնները ցոյց են տալիս, թէ Վարդան*

[*] Օրբ. Բ. 166. 266.

[**] Օրբէլեան Բ. 166—167. Ջալալ. Բ. 173. Բաջբերունի. Արարատ 1890. եր. 55. Ալիշան Սիս. 132. Սրբագրած եւ մեր կողմից:

[***] Գանձակեցի 278—296.

[†] Ծանխ. Բ. 185. Ալիշան. Այր. 275.

[††] Ալիշան Շիրակ 189. Սրբագրած եւ լրացրած եւ մեր ձեռքով:

[†††] Н. Марръ. Сборники притчъ Вардана. СП. 1899 Приложенiе I. Եր. 22. Ձեռ. Ս. Էջմիածնի № 2368. 246ա.

չբաւականացաւ միայն 1246 թուին Սսոյ ժողովի կանոնների համար հաւանութեան գիր տանելով, այլ ամբողջ կեանքի ընթացքում այս և այն կողմերում հայ իշխանների և տեղական եպիսկոպոսների աջակցութեամբ ժողովներ գումարեց, վճիռներ հաստատել տուեց իրագործելու եկեղեցւոյ մէջ նոյն ժողովի կանոնները։ Այդպիսիներից մէկն է Ջագավանից ժողովը, որի «Սահմանքն» այսօր բարեբաղդաբար երեւան է գալիս։ Մեր «Սահմանք»—ի և Կոստանդին կաթուղիկոսի շրջաբերականի ու Սսոյ ժողովի կանոնների պարզ համեմատութիւնը ցոյց է տալիս երկուսի սերտ առնչութիւնը։

1. Ջագավանից Նախաբան. և Բ. գլ. և. յօդ.=Սսոյ ժողովի Նախաբան. Գանձակեցի եր. 283 .286 7. վասն վարքը երկրի աւերման պատճառ։
2. Ջագ. Բ. գլ. վերջաբան=Սսոյ Նախաբան Գանձ. 283 և 288. «ի կանոնաց գրոց և ոչ նոր ինչ և աւտար»=«ի զօրութենէ գրոց հաւաքեալ»։
3. Ջագ. Ա. գլ. բ. յ.=Գանձ 289. «երէցն անսուքի և պատրաստ կացած=զկնունքն նօթութեամբ արասցեն։
4. Ջագ. Ա. գլ. գ.=Սսոյ Է. կանոնին Գանձ. 289|90.
5. Ջագ. Ա. նախաբան=Սսոյ ԺԵ. հայհոյութեան մասին. Գանձ. 292.
6. Ջ. Բ. գլ. բ.=Սսոյ ԺԷ. կանոն. Գանձ. 292.
7. Ջ. Բ. գլ. գ.=Սսոյ ԺԹ. 293.

Այս և ուրիշ նմանութիւններ ցոյց են տալիս, թէ Սահմանքի հեղինակը տոգորուած է Սսոյ ժողովի կանոնների գաղափարներով. նա ի հարկէ օգտւում է և այլ աղբիւրներից և իր «Սահմանքը» յարմարեցնում տեղական պայմաններին, բայց Սսոյ ժողովի կանոններից առաջնորդուելով։ Մեր բերած պատմական վկայութիւններից հասկանալի է այս առնչութեան պատճառը. դա գրական չէ սովորական մտքով, այլ հետեւանք էր այն պարագայութեան, որ կաթուղիկոսը գրել էր հեղինակի վերայ Սսոյ ժողովի վերաբերութեամբ։ Մենք տեսանք, թէ նոյն իսկ «Սահմանք»—ի մէջ էլ ցուցում կար այդ մասին, Վարդանը մասնակցում է Ջագավանից ժողովին, «հրամանաւ կաթուղիկոսի»։ Ո՞վ է այդ կաթուղիկոսը. Կոստանդին, որ այդ ժամանակ մեռած էր, թէ նորա յաջորդը Յակոբ Կլայեցին, մեր խնդրի լուսաբանութեան համար մի և նոյն է։ Երկրորդ ենթադրութեան համար պատմական ցուցմունք չունինք, բայց անհնարին չէ, որ Յակոբ կաթուղիկոսը հետամուտ լինէր իր նախորդի կարգադրութեան և կապ պահէր արեւելքի հետ։ Այս բացատրութիւններից և համեմատութիւններից յետոյ, կարծում ենք, պարզ է նա և, որ Սահմանքի հեղինակ և Ջագավանից ժողովին մասնակից «պատուաւոր բանի» Վարդանը ոչ այլ որ է, բայց եթէ Վարդան պատմիչ։ «Սահմանք»-ի մէջ գործածուած լեզուն, ժողովրդական ոճը յիշեցնում է միանգամայն նորա խօսակցութիւնը Հուլաղուի հետ։ «Սահմանքի»-ի մէջ գործածուած «Վարդան վարդապետ ծառայ քրիստոնէից» դարձուածը նա գործածում է ուրիշ գրուածքների մէջ եւ*։

Բջնոյ Գրիգոր եպիսկոպոսի մասին խօսք եղաւ արդէն վերեւ։ Մենք տեսանք նորա մասնակցութիւնը Վանական եպիսկոպոսի հետ Կոստանդին կաթուղիկոսին ուղարկած հաւատութեան թղթին 1246 թ. և այս կաշառքով

* Վարդան Վ. Վենետիկ· 1862. Էջ. 155—159. Յաղագս խոնարհութեան.... Ձեռ. Ա. Էջմ. № 2510, 517ա. «աստուծոյ անարժան ծառայիս քրիստոնէից Վարդանայ...»։

ձեռնադրութեան դէմ եղած Բջնոյ արձանագրական վճռին 1251 թուին։ Դորանից յետոյ պէտք է լինի նորա անուան յիշատակութիւնը Վեդի գետի վերին ակունքում՝ Մանկիւք կոչուած Թուրքարնակ գիւղում* մի խաչքարի արձանագրական վճռին որպէս վկայ «Ես տր Գրիգոր Բջնոյ եպիսկոպոս վկայ(եմ)»։ Խաչքարի վերին կէսը արձանագրութեան մի մասի հետ կոտրուած է և մենք մինչեւ չունինք որոշելու գրութեան ճիշդ թուականը։ Սակայն մեզ մանրամասնութիւններ են տալիս նորա մասին ժամանակակից անձանց յիշատակարանները. Վարդանի հարազատ եղբօր՝ Գրիգոր վարդապետի համար նշանաւոր գրիչ և մատենագիր Գէորգ Լամբրոնացու ձեռքով 1267 թ. գրուած մի յիշատակարան պարզում է, թէ Գրիգոր եպիսկոպոսի և թէ Վարդան վարդապետի անձնաւորութիւնները. «Որում յորժամ էնչ ըղձիւք բաղձացեալ քաջ հռետորն և բանիբուն ճարտարն միջամուխ մակացուն ածային տառից սրբազան քահանայն Գրիգոր սպասաւոր բանի, որոյ ներկրգեալ հոգեւոք ալեւոք ծաղկեալ ոք ծերութին ածապաշտեալ արժնի եպիսկոպոսն տր Գրիգոր, որ ունէր զվերատեսչութի առաքելական դիտման քահանայական դասու կատարող պետութե այրարատեան նահանգին, ներկայսն ունելով զամուրն Բջնի. որ ի նուաղեալ ժամանակի առաքինաւէր վարուք պայծառացեալ իբրև զարեգակն փայլէ յաշխարհի, զոր տր յս շնորհեսցէ զսա եկեղեցւոյ իւր ընդ երկայն ժամանակս խաղաղական կենօք (Նորոգած ընդգծում տառը)։

Ընդ նմին և զհամապատիւ ինքեան ձեռասուն որդեակն իւր հոգեւոր զտր Վարդան հարազատ եղբարբ իւրով նախայիշեցելոյն Գրիգորի. և զոր Դուիթ քուերորդի տն Գրիգորի, որոց կամաւք և յաւժարութբ յանկ ելեալ կատարեցաւ պատմանամակս տանիցս՝ ի լրումն բաղձանացն Գրիգորի վարդապետի, ի վայելումն անձին կրթաւորի և յետ աստեացս վճարման յիշատակ անջնջելի ինքեան և նախամաման եղեալ ի քս ծնողաց և եղբարց. եւ առաւել սն Վանականի վերյիշեցեալ աթոռոյս վերակացուի և ամենեցուն սոցա ի քս սնուցողի. որոյ (յ)իշատակն աւրհնութբ և աղաւթքն ի վերայ սոցա և ամենայն աշխարհի ....»* Պարզ է, որ այստեղ յիշուած «արհի եպիսկոպոսն տր Գրիգոր» Վարդանի ձեռքով Կոստանդին կաթուղիկոսին ուղարկուած հաւատութեան թղթին ստորագրող Բջնոյ Գրիգոր եպիսկոպոսն է, Այլիշան, որ օգտուել է այս յիշատակարանից, իւր սովորութեան համեմատ առանց անդը ցոյց տալու, սխալուել է Վանականին կենդանի և Գրիգորի օգնականը համարելով**. 1267 թուականին, երբ գրուեցաւ այս յիշատակարանը, Վանականն արդէն մեռած էր։

Յիշատակարանիս շարունակութիւնը մեզ աւելի տեղեկութիւններ է տալիս Վարդան վարդապետի մասին. «Բայց առաջին սկիզբն գրութե սորա եղև ի տիեզերահռչակ սբ ուխտն Վիրապին, որ էր ընդ իշխանութբ նախայիշեցեալ տն Գրիգորի... ուրանաւք և մեզ եղև ժամա(նակ) ինչ դեգերել ի գուռն ածազարդ այնր տաճարի առկս կրթութբ.. (մի բառ պակաս) ի մեծ վարդապետէն և յաստուածազգեաց առնէն Վարդանայ, որ ընդ այն ժամանակս ի վերա ամենայն մասանցն բարեաց, որով բոլորն (կա)տարի առաքինութի,

* Ձեռ. Մատ. Ա. էջմ. № 293. Գ, ց.
** Այրարատ 276.

և զուսուցանելութիւն եւ զգործ ի կիր արկեալ ընդ ամենքն լծակցելով. որ ի գաւառն սորայն Գրիգորի նստեալ զամենայն եկեալսն յածայինսն ուղղէր ճանապարհ. և անտի փոխեալ եկեալ առ մեծ իշխանն Բուրդ, և մեր զկնի նորա հետևեալ ժամանակ ինչ... արար յանուանեալն Սաղմոսավանք՝ ուր և զաւագին ուսարանեցաք հասարակ սորայ մատենիւ և քանզի դէպ լինէր և և անտի եւ փոխիլ նմա ի գործ բարեաց ուսուցչութեան ի տեղի, ուր որ յաջողեցէ, յաղարկեալք եղեալ մեր ի ստացողէ տառիս ի բուն տանս խորեա(նց) (ի) մեծահռչակ հռչակաւորեան ամարնակ որ ուխտս Թեղենեանց, ուր և յանկ իսկ հասաք զառաջարկեալս»....

Այլիշան իրաւացի կերպով այստեղ յիշուած Վարդանին նոյնացնում է Վարդան պատմիչի հետ: Մենք հնարաւորութիւն ունինք յիշատակարաններից և իր պատմութեան հիման վրայ հետևելու նրա կեանքի այս շրջանին. 1261 թուին նա գրել է Հաղբատի Համազասպ եպիսկոպոսի և Սանահնի փակակալ Գրիգոր վարդապետի խնդրանօք Հնգամատեանի մեկնութիւնը, որ սկսել էր «ի զարնանային յեղանակին», աւարտում է «յեղանակս ձմերային ի հնդէտասան մայց ամսոյ և ի քառն ու հինգն նոյեմբերի, ի տանն որ հայրապետին Պետրոսի Աղէքսանդ(ր)ոյ»:* Վարդան Հաղբատում չէր ապրում այդ ժամանակ, թէպէտ հանդիպում էր վերայիշեալ վարդապետներին, որոնք և «երեսաւք և գրով անդադար» դիմում էին նրան և ի վերջոյ ստիպում ձեռնարկել այս գործը: Արդեօք Կայենոյ բերդի մօտ Ս. Անդրէի միայնարանում էր նա, որոշել չենք կարող**. 1264 թուին գնաց Դուրէժ Հուլաղուին տեսութեան***, 1265 թուին «յածամերձ սուրբ ուխտս Հաղբատ.... և յարհի եպիսկոպոսութեան յովանիսի» գրեց Երզնկացի մեկնութիւնը Կիրակոս Գանձակեցու խնդիրքով†. 1266–1267 թուերին, նա Խորվիրապումն էր: Մեր յիշատակարանից զատ՝ Վարդանի վարժապետական գործունէութեան մասին Խորվիրապում, պատմում է և Դուինի երէց՝ Գրիգոր Բալուեցու վկայաբանութեան մէջ՝ նահատակ վարդապետի «քուեր որդին», «ականատես և ականջալուր» իր պատմած դէպքերին††. Խորվիրապում, գուցէ և Սաղմոսավանքում, Վարդան 1267 թուին կնքել է իր պատմութիւնը. վերջին երկու հատուածները (ՂԹ և Ճ) իրենց բովանդակութեամբ նոյն են մեր յիշատակարանի հեղինակ՝ Գէորգ Լամբրոնացու տուած տեղեկութեան հետ: Մսրայ սուլթանի արշաւանքը, Թորոսի սպանութիւնը, Լևոնի գերութիւնը, մայրաքաղաքի այրումը և Կոստանդին կաթողիկոսի վախճանը պատմուած է և յիշատակարանի մէջ, առաջինները իբրև մի տարի առաջ կատարուած իրողութիւններ, իսկ կաթողիկոսի մահը «մատ ի նոյն ամին»: Կոստանդին կաթողիկոսի մահը, որով վերջացնում է Վարդան իր պատմութիւնը, պատահել է ՉԺԶ թուին, Ղազարու յարութեան տօնին, սահմի քառն և վեցին՝ այսինքն 1267 թուի գարնանը†††. Գէորգ Լամբրոնացին Տօնապատճառի առաջին հատորն սկսել է Վիրապում 1266 թուին և վերջացրել

* Ձեռ. Ս. Էջմ. մատ. № 2604, 185բ. և 2540 517ա,

** Գանձակեցի 293.

*** Վարդան պատմիչ. Վենետիկ. 1862. 155.

† Ձեռ. Ս. Էջմ. մատ. № 1155. 86բ.

†† Ե. Մանանդեան և Հ. Աճառեան. Հայոց Նոր վկաները. Հատոր Ա. Վաղարշապատ. 1902. Էջ. 76.

††† Վարդան 165.

1267-ի սկզբում Սաղմոսավանքում, իսկ Ճառագիրքը Թեղենյաց վանքում նույն թվի գարնան վերջերին կամ ամառը: Թէ Վարդան 1267 թվի առաջին կիսում Խորվիրապումն էր, հաստատում է և Դանիէլի մեկնության յիշատակարանով. այդ մեկնությունն նա սկսել է Վիրապում 1267 ին և վերջացրել 1268 ին Աղջոց Ս. Ստեփանոսում. «Եւ սկսայ ի ՉԺԶ թու. ի ս՞ր վիրապին. և կատարեցաւ ի ՉԺԷ ամ՞ի ս՞ր և փառաւոր նահատակիս ս՞ր ստեփաննոսի ի ս՞ր ուխտս աղջոց վանից, յառ՞նրդութ՞ին երիմինայ (այսպէս) գովելի առաջնականի և գոհանալի եղբարց»: Գէորգ Լամբրոնացու յիշատակարանից տեսանք, որ Վարդանի հարազատ եղբայրն էր Գրիգոր «սրբազան քահանայ» կամ «վարդապետ», «ապաստաւոր բանի»: Վարդանը Գրիգորին մի խրատ էլ ունի ուղղած մեր № 108 Գ. ց. ձեռագրի համեմատ, ուր «եղբայր և որդեակ Գրիգոր» է անուանում նրան: Զարմանալի զուգադիպութեամբ ԺԲ. դարու հեղինակ Վարդան Հաղբատեցին էլ ունէր մի եղբայր Գրիգոր անունով:** Բայց խրատը մեր Վարդանինն է, որովհետև մի նախադասութիւն բառացի նոյնանում է մեր «Սահմանքի» վանականներին յանկացուած Ը. կանոնի մի նախադասութեան հետ: «Բանի աղայ ես և առողջ ի պահք կաց, անմիս, անգինի»=Սահմ. «Տղա հասակաւ և առողջ մարմնով անմիս և անգինի լինի»: Յիշատակարանի վերջարանից էլ տեղեկանում ենք, որ Գրիգորը մի ուրիշ համանուն Գրիգոր քահանայի հետ «բրտնաջան վաստակաւք» ուսել է «առ սոս սուրբ և արգիւնական վարդապետի մեծին Վարդ(անայ)»: Այս երկրորդ Գրիգորը կամ Բալուեցին է, որ վեց տարի ուսել էր Վարդանի մօտ և Վիրապում վարդապետական աստիճան ստացել նրանից, կամ, որ աւելի հաւանական է, Գրիգոր Բջնեցին է, Ստեփանոս Օրբէլեանի ընդդէմ Անաւարզեցու գումարուած ժողովի անդամներից մէկը:*** Սա ՉԼԲ=1283 թուին գրել է տալ Լամբրոնացու երկոտասան մարգարէից մեկնութիւնը, որի յիշատակարանի մէջ յայտնում է իր մասին՝ «անեալ և վարժեալ առ սոս տիեղերալոյս ս՞ր և երանաշնորհ հրաբունապետին Վարդանայ»...†*

Է.

Մեր «Սահմանք»-ն իբրև գրական երկ փոքր է իր ծաւալով, բայց նա անարժէք չէ պատմական և գրական տեսակէտով: Նա միակ և վաւերական աղբիւրն է Ձագավանից ժողովի պատմութեան համար և մեզ փաստեր է տալիս ԺԳ. դարու կրօնական-եկեղեցական ներքին կեանքից: ԺԳ. դարու միւս ժողովները Մեծ Հայքում (Լոռու, Անիի և Ստեփանոս Օրբէլեանի առաջնորդութեամբ Գրիգոր Անաւարզեցու դէմ), աւելի դաւանաբանական և ծիսական բնաւորութիւն ունէին, մինչդեռ Վարդանի ղեկավարութեամբ գումարուած ժողովները, որոնց մասին տեսանք Երզնկացու և Մխիթար Այրիվանեցու վկայութիւնները, դաստիարակչական, գործնական էին: Այդպէս պէտք է դասենք, Ձագավանից ժողովի կանոնները ի նկատի ունենալով, որի գլխաւոր կէտերն են հայհոյանքի վաս սովորութեան, երեխաների կրօնական դաստիարակութեան, ամուսնութեան, քահանաների և ժողովրդի

---

*Ձեռագիր Ս. Էջմիածնի Մաշ. № 2049, 359բ: Հմմ. Ալիշան. Հայապատում. եր. 383

**Տես Տաշեան. Ցուցակ. 49, 414. Հանդ. Ամս. 1908. 232

† Ձեռ. № 1233|1246, 425ա.

փոխադարձ պարտականութեան և վանականութեան սրբակեցութեան մասին, գրուած ժողովրդական լեզուով և նորա հասկացողութեան համապատասխան պարզութեամբ։ Գրութեան այդ եղանակը յատուկ է ԺԳ. և ԺԴ. դարու շատ վարդապետների կանոնական, խրատական գրուածքներին և քարոզներին, որոնց ուսումնասիրութիւնը քիչ նորութիւններ չի տալ պատմութեան, մատենագրութեան, ժողովրդական ներքին կեանքի և լեզուի մասին։ Մեր «Սահմանք»-ի լեզուն, մանաւանդ կանոնական մասերում, իւր հնչիւնաբանութեամբ, ուղղագրութեամբ, աշխարհաբարին մօտ ոճերով և դարձուածներով, քերականական կազմութեամբ արժանի է լեզուաբանների յատուկ ուշադրութեան։

Հետաքրքրական տեղեկութիւններ ենք ստանում նաև քահանայութեան հետ կապուած որոշ երևոյթների մասին։ Է. կանոնն արգելում է քահանային «ձեռնաւորութիւն կամ մուճրութիւն» անել պարոնին, երկու տէրմին պարոնութեան շրջանի պաշտօնէութեան մասին, որոնցից առաջինը յաճախ գործ է ածուած արձանագրութիւնների մէջ, իսկ երկրորդը առաջին անգամն է պատահում այստեղ։ Ոսկեփորիկից առնուած Հայկազեան բառգրքի «ձեռնաւորութիւն» բառը բնաւ համապատասխան չէ այստեղ գործածուած նշանակութեան։ Այս բառի ամենահին գործածութիւնը գտնում ենք ԺԱ. դարում Տաթևի մի արձանագրութեան մէջ*. այնուհետև ԺԳ—ԺԴ. դարերում տասն անգամ այլ և այլ տեղերում։ Առաջին անգամ այս բառի վերայ ուշադրութիւն է դարձրել պրոֆ. Մառը. նա կարծում է что въ администраціи края при паронѣ въ качествѣ подчиненнаго чиновника находился էվան эванъ или եվան еванъ, при эмирѣ же состоялъ ձեռնաւոր подручный**։ Յարգելի գիտնականը այս եզրակացութիւնը հիմնում է յիշեալ պաշտօնների դասաւորութեան վերայ ուսումնասիրութեան ենթարկած Մրենի արձանագրութեան մէջ։ Նոյն պաշտօնը նման բառակազմութեամբ կար և Վրաց մէջ։ Տարաբաղդաբար մեր ձեռքի տակ եղած արձանագրութիւնները պարզ և որոշ ցուցումներ չեն տալիս Պարոնութեան շրջանի պաշտօնէութեան էութեան և փոխադարձ յարաբերութեան մասին։ Որոշ չափով ստորադրելութեան աստիճանաւորութիւն է ցոյց տալիս նա և Օշականի նախկին եկեղեցու 1288 Թ. արձանագրութիւնը . . . . «Ի Պարոնութեան Սահմադինին, և իւր որդւոցն Ամիրբէկին, Հազարբէկին, եւ Գէշմարդս էի ամիրայ և Հաւիկս ձեռնաւոր. Թողաք զուրբ Կարապետին այգեացն, զՕշականու, զՄիրինու զձեռնաւորին զհարկն զինչ որ կայր, վասն փրկութեան հոգոց մերոց և յարեշատութեան պարոնացն . . . »†։ Մինչդեռ Տարսայիճ Օրբէլեանի արձանագրութեան մէջ Նորավանքում՝ խանգարուած է այդ կարգը. «ոչ ամիրայ, ոչ պարոն, ոչ ձեռնաւորի ոչինչ հաշիւ չկայ հետ Հալիձորոյ», որովհետև ինքն ազատել է հարկից և կարգաւորել††։ Յամենայն դէպս ձեռնաւորը մի ստորին պաշտօնեայ էր հարկերի հաւաքման գործում, որ ի կատար էր ածում պարոնի հրամանները։ «Ի Թուին ԵօԹն հարիւր երեսուն և հնգին ողորմութեամբն Աստուծոյ և հրամանաւ պա-

* Օրբ. Բ. 71.
** Новые Матеріалы по Арм. Эпиграфикѣ, СП. 1893. Եր. 89—90.
† Շահխ. Բ. 79. Ալիշան. Այր. 190.
†† Ջալալ. Բ. 172. Ալիշան. Սիսական 191.

րոն Սահմադինին եւ Սահմանինոս ձեռնաւորս և Վահրամ քեթորար... Թողաք զՑօշականու քահանայից զինչ որ հարկ կար այգւոյ, բամբակի...»*

Կար և յատուկ տուրք, «ձեռնաւորի հարկ» կոչուած, որ տեսանք Օշականի 1288 Թ. արձանագրութեան մէջ։ Ձեռնաւորի հարկի մասին յիշատակութիւն կայ նաև հին Ուրծի և ներկայ Բէշիշ գաղի (Վեդիի հովտում) եկեղեցիների մի արձանագրութեան մէջ, տարաբաղդաբար պակասաւոր. «Ցուսոյն անմահին ա՜յ ևս արդոնա|պարոն յուրկումին ողորմութ՜ին զձեռնաւորին և զշահնայհակին....»**։ Նուիրատու իշխանները շատ անգամ աւագների կամ իշխանների հետ նզովքի են ենթարկում և ձեռնաւորներին, եթէ նրանք կհամարձակուին վանքերին ներուած հարկերը ժողովել կամ եղած կարգադրութիւնները քանդել***։

Աւելի պակաս բան գիտենք մուճուրեան մասին։ Ինչպէս յիշեցինք այս բառն առաջին անգամն է պատահում մեր հին մատենագրութեան մէջ։ Բարեբաղդաբար պահուած է այն մեր ժողովրդական կենդանի բարբառներում, որով և հնարաւորութիւն ունինք որոշելու մուճրութեան պաշտօնի բովանդակութիւնը։ Մեր միաբանակից Տ. Սահակ վ. Ամատունու վերջերս հրատարակած «Հայոց բառ ու բան» գնահատելի աշխատութեան մէջ՝ Խոյեցւոց և Աշտարակեցւոց բարբառով «մուճուր» բառը բացատրուած է որպէս «հարսանիքի գինու և պաշարների վրայ հսկող անձը». իսկ «մուճրատուն» է կոչւում այն սենեակը, ուր պահւում են հարսանիքի գինին ու պաշարները։ Պարոնի իշխանութեան տակ եղած մուճրութիւնն ի հարկէ հարսանիքի մթերքների հետ կապ չունէր, բայց նոյնպիսի տեսչութիւն էր հաւաքուած պարոնական արդիւնքների կամ հարկերի վերաբերութեամբ։ Ձէ՞ որ հողերի կամ այգիների հարկերը բնական բերքերով էին վճարւում ԺԳ. դարում†, պէտք էր շտեմարանել և պահել այն զոնէ ժամանակաւորապէս։ Պարոնի կողմից այդ նպատակի համար նշանակուած պաշտօնեան, ինչպէս երեւում է, կոչւում էր մուճուր և պաշտօնը մուճրութիւն այս կանոնին նայելով։

Մեր հեղինակը Սսոյ ժողովի համապատասխան կանոնից զատ՝ այս կէտի համար անշուշտ ի նկատի է ունեցել և Շնորհալու Ընդհանրականի «Առ զասս քահանայից» հատուածը. զուգէ և Ս. Սահակի ԻԴ. կանոնը††։ Ինչ որ այնտեղ «գործակալութիւն», «գրօղ հարկաց կամ սակից», «գաւառապետ աշխարհական իշխանաց», «նստարութիւն» է կոչւում, որ արգելուած էր քահանաներին, մեր Սահմանքի մէջ ձեռնաւորութիւն և մուճրութիւն՝ համապատասխան տեղական իրականութեան։ Այսպիսով կողմնակի կերպով ևս միջոց ենք ստանում որոշելու այդ բառերի նշանակութիւնը։

Թ. կանոնը վերաբերում է քահանաների հարկերից ազատութեան և եկամուտների կանոնաւորութեան խնդրին։ Միջնադարեան լեզուով «թեթև

* Շահխ. Բ. 79. Ալիշան Այր. 189. Տես և Ալիշան. Շիրակ 10.

** Գրի առնուած և լուսանկարուած մեր կողմից։

*** Օրբ. Բ. 107 եւ Ալիշան. Սիսակ. 189. Սմբատ Օրբէլեանի արձանագրութիւնը.—Օրբ. Բ. 163 Տարսայիճ Օրբէլեանի արձ.—Ջալալ. Բ. 172 եւ Ալիշ. Սիս. 194 Մինա խաթունի արձ.—Ջալալ. Բ. 157 եւ Ալիշ. Սիսակ 142 Ստեփանոս Օրբէլեանի արձանագրութիւնը։ Ուրիշ արձանագրութիւններ Ջալ. 176. 179. Ալիշ. Սիս. 198. 200.

† Մխիթարայ Գօշի Դատաստ. Հայոց. եր 314—315. 327.

†† Թուղթ Ընդհանրական. 1865. Էջմիածին. 88.—Մելիք Թանգեան. Հայոց եկեղեցական իրաւունքը. 1905. Շուշի. 537.—Գանձակեցի 292.

պահել ի չարէ» կամ «ազատ յամենայն չարէ» նշանակում է ազատել հարկից և արքունական սախպողական ծառայութիւններից։ Այդ ձևը գործածուած է Բագրատունեաց և Սպասալարների շրջանի արձանագրութիւնների մէջ՝ վանքերի, վանականների և քահանաների համար։ Գրիգոր Սուփան Սիւնեաց իշխանը Կոթայ եկեղեցու քահանաների համար գրում է իւր արձանագրութեան մէջ, թէ «ազատ արարի յարքունական ծանրութենէ եւ ի բէկարէ»։ Նզովքի է ենթարկում, ով «ի քահանայս չար ընկենու, զոր ես ազատեցի յ՞ամ ուրեք»։ Մաքենացւոց վանքի արձանագրութեան մէջ յիշում է նոյն իշխանը, թէ «զԱստուածածնին (Կոթայ) քահանայքն ազատ արարաք յամենայն արքունի չարէ»։ Նոյն խսկ կաթուղիկոսը, «ի տանէս (Մաքենացւոց) մի իշխեսցէ զատ կամ փայքար հանել եւ մի յիմ որդւոց կամ ի ժառանգաւորաց» *։ Յովհաննէս—Սմբատ Բագրատունին Կողբայ ազահանքից Հոռոմոսի վանքին նուիրում է «հարիւր բեռն աղ յամենայն ամի ազատ յամենայն չարէ» **։ Պարոնութեան շրջանում Անիի քահանաները ազատ էին «բաժ ու տամղա» կոչուած հարկերից ***։

Քահանաները ազատ պէտք է լինէին նաև պետական պաշտօնեաներին իջևան տալու պարտաւորութիւնից, որ մի ծանր բեռ էր ժողովրդի համար թաթարական տիրապետութեան օրերին։ Գանձակեցին Խաչենոյ Ջալալ իշխանի խոհեմութեան գործերից մէկն էլ այն էր համարում, որ նա ինքն էր ընդունում թաթար երթևեկներին՝ ժողովրդից ստանալով «որ ինչ մարթ էր առնուլ ի պէտս երթևեկաց» և ազատելով նրան նեղութիւններից։ Թաթարական շրջանի պետական պաշտօնեաների երթևեկութեան հետ կապուած էին բազմատեսակ կեղեքումներ †։ ՁԾԳ թուականի յիշատակարանի մի գրիչ օրհնութեամբ է յիշում Ղազան խ…նի անունը, որ ի միջի այլ բարեգործութիւնների «էրարձ սոյ զերթևեկուե՞ի զեսպակաց, էլչեց և արղուչեաց. և կարգեաց յ՞ա տեղիս սուրհանդակս, որ են շբրիկք»։ ††։

«Վաստակացն աւգնեն» բառերի իրական նշանակութիւնը գուցէ ընթերցողներից շատերի համար հասկանալի չլինի։ Սա եւ Հին Հայաստանի ճարկերի մի տեսակն է, որ գիւղացիները պարտաւոր էին մարմնաւոր և հոգևոր իշխաններին։ Ըստ Գոշ Մխիթարի գիւղացիները տարուայ մէջ որոշ օրեր պարտաւոր էին աշխատել իշխանների համար †††։ Ինչպէս երևում է մեր կանոնից, գիւղացիք պարտաւոր էին օգնել և քահանային՝ նորա արտերը հերկելու և հնձելու կամ այգեգործութեան ժամանակ։ Այդ հաստատութեան մնացորդը նկատելի է այժմ որոշ տեղերում ընտրուած գիւղապետի վերաբերութեամբ, որի արտերը հերկում է ամբողջ հասարակութիւնը մի անգամից, օրինակ այդպէս է Ջիւանշիրի գաւառի իմ հայրենի Մարաղա գիւղում, որի բնակիչները գաղթել են 1828 թ. Պարսկաստանից։

Թաղմանը քահանային հանդերձ տալու սովորութիւնը նոյնպէս պահուած է մինչև այժմ տեղ տեղ, օր. Թիֆլիսում. այս սովորութիւնը չպէտք է շփոթել «կողոպուտ» կոչուած տուրքի հետ։ Քահանայական միւս եկամուտները սովորական են և առնուած են աւելի հնագոյն կանոններից։

---

* Օրբ. Ա. 222—225. Ալիշ. Սիսակ. 55. 68.
** Շահխ. Բ. 552. Ալիշան. Շիրակ 20.
*** Ալիշան. Շիրակ. 62.
† Գանձակեցի. 226. 250. 253.
†† Ձեռ. Ս. Էջմ. Մատ. № 24|3722.
††† Վահան Ծ. վ. Բաստամեանցի հրատ. 316.

«Սահմանքի» և Կոստանդին կաթողիկոսի շրջաբերականի ու Սսոյ ժողովի կանոնների առընչութեան մասին խօսք եղաւ վերև։ Բայց հեղինակը ի նկատի է ունեցել և նախնի ժողովների և հայրերի կանոնները՝ առանց բառացի օգտուելու, որով և արդարանում է նորա խօսքը, թէ «գրեցի ի կանոնաց գրոց և ոչ նոր ինչ ուսոյց»*։ Այսպէս մեր Բ. կանոնի համար տես Շնորհ. Ընդհանրական 80—81.

Գ. կանոնի համար տես Շնորհ. Ընդհ. 83—84 և Ներսէս Բ. Դուինայ ժողովի ԻԴ. կանոնը**։

Դ. կանոնի համար տես մասամբ Օձնեցու Գ. և Դ. կանոնները***, բայց առաւելապէս Շնորհ. 86.

Է. կանոնի աղբիւրը Շնորհալու և Ս. Սահակի ԻԳ. կանոնի հետ տեսանք արդէն։

Ը. կանոնի համար՝ մկրտութիւնն ու հաղորդը առանց վարձի կատարելու՝ տես. Շնորհ. 81. իսկ խոստովանութեան համար Սսոյ ժողովի ԺԳ. կանոնը։

Թ. կանոնի համար տես Ս. Սահակի ԼԱ. ԼԲ. ԽԳ. կանոնները†։

Վանականներին վերաբերեալ Ա. կանոնի համար տես Դուինայ (Ներսէս Բ-ի) ԼԳ.††։

Բայց մեր «Սահմանք»-ը իւր հերթին աղբիւր է ծառայել ԺԴ. դարու առաջին քառորդի նշանաւոր հայրերից մէկի՝ Յովհաննէս Երզնկացու համար գրելու «Խրատ հասարակաց քրիստոնէից» աշխատութիւնը, նոյն աշխարհիկ ոճով և ոգւով։ Համեմատութեան համար օգտուել ենք Ս. Էջմիածնի մատենադարանի № (2368, 226ա-580ա) ձեռագրից։ Այդ գրութեան վերնագիրն է. «Նուաստ վարդ. Յոհ. Եզնկայեցոյ խ՞րատ հասարակաց քրիստոնէից, քահանայից և ժողովրդոց. ի կանոնական սահմանաց առաքելոց սրբոց և հայրապետաց. վարդ՞—ց. և ս՞ր հաւրն մերոյ Վարդան վարդապետի. Յոր յամենայնէ ժողովեցի և գրեցի».

Սկզ. «Ամենազաւր թագաւորին մերոյ յ՞ի ք՞ի...»

Երզնկացին ամբողջ հատուածներով բառացի կամ քաղուածօրէն օգտւում է մեր Սահմանքից։ Դէմ առ դէմ դնել այդ բոլորը, կնշանակէ արտագրել նորա 2/3 մասը։ Իրողութիւնը հաստատելու համար բերենք մի քանի հատուած։

Զաք. ժողովի «Սահմանք»-ի նախաբանը հայհոյութեան մասին ամբողջապէս բառացի կամ քաղուածօրէն հաւասար է Երզնկացու Յաղագս յիշոցնատուաց» վերնագրով հատուածին 245ա—246բ։

Սահմ. Զաքավ.	Երզնկացի
...տաւել անքաւելի մեղաւք և չաբաշար հերձուածովք, որ քան զա՞մ	...և անքաւելի խշոցքն և չար է քան զամենայն հերձուածս, զի որ

* Տես Սահմանքի»ի բնագիրը եր. 45. տող 2.
** Մելիք Թանգեան 383.
*** Անդ. 409, 410.
† Անդ. 539, 546.
†† Անդ. 587.

հերձուած լեղի է, մինչև ցայս զի ժողովովք Նզովեալ են չարագոյն յիշունցնաստուքն, որ զ՞ամ մոռացեալ մեղք և չարիք յիշել տան ա՞յ, հրչ՞կաց և բոլորից սրբոց, և զողացուցաննեն զարարածս ա՞յ և զարշելի և զազիր ճոզով *լեռւն գերկիր·*

յաղաժա մինչև ցայսաւր հերձուած էլել և ժողովով նզովել են, մեծ հերձուած քան զ՞ամ յիշոցքն է, որ զ՞ամ մոռացեալ մեղք և զչարիք յիշել տան ա՞յ և հրեշտակաց և սրբոց և զողացուցաննեն զարարածս ա՞յ և զարշելի և զազիր ճոսով *լեռւն գերկիր·*

Զաք. Ա. գլ. բ. կանոն

Զի քրիստոնէից զաւակն, որ չեն յիշընցնաստու, շաբաթ մի պահաւք յառաջ կնքեն, երէցն անուէթի և պատրաստ կացած· Կնքահայրն ոչ կին, ոչ այլազգի, ոչ յիշոցնաստու, ոչ մելամաղձաց, *այլ լաւ քրիստոնեայ և գիտուն և յամէն . . .*

Երզն. 232 բ.

. . . յառաջ շաբաթ մի պահ կենան ծնաւղքն և ապա կնքեն զաղայն, երեցն անուէթի կենա և ա՞ր և պատրաստ . . . 233ա. զկընքահայրն ընտրեն ա՞ր և անարատ, ոչ յիշոցնաստու, ոչ ճնացաւղ, *այլ լաւ քրիստոնէ և անարատ և գիտուն· Զայլազգ մի առնէք կնքահայր, ի կին մարդոց գիրկ մի դնէք·*

Այսպէս և շարունակութիւնը, երբեմն քաղուածօրէն·

Զաք. Ա. գլ. գ.

. . մինչև ԺԵ տարին զփէսացուն անարատ պահեն, և զհարսնացուն մինչև ի ԺԴ, և բնաւ մի պակաս հարսն քան զԺԲ տարին... ապա թէ ուզեն զաշխ՞հք, անկարեւոր և զանարատն պակեն.

Երզն. 235ա.

տղայն ԺԵ տարոյ փեսացու է և աղջիկն ԺԴ. տարոյ. և թէ այլ նեղին ԺԲ տարոյ. և ապա թէ ուզեն զայս անցաւոր աշխարհիս կեանս, ամուսնանան, և պարտ է քահանային, որ քննէ յառաջ, որ չլինին կարևորք·

Զաք. Ա. դ.

Անարատ պսակածքն Ը աւր ա՞ր կենաւք կենան. և յԸ. աւուրն գնա երէցն և զետին աղաւթքն կարդայ, և զպսակն ի վեր առնու. և խըրատ տայ զչորէքշաբաթ և զուր(բ)աթ . . .

Երզ. 237ա.

. . և յետ աւրհնութ՞ն պսակին Ը աւր ա՞ր կենան և յետ Ը աւուրն գնա երեցն և զյետի աղաւթքն կարդա և զպսակն ի վեր առնու և խըրատ տայ.... որ զչորեքշաբաթն և զուրբաթն.....

Երզնկացին օգտուում է նաև իր աշխատութեան «Վասն աղաւթից», «Յաղագս հաղորդ տալոյ» գլուխների համար։ Նմանութիւնը մեծ մասով բառացի արտագրութիւն լինելով, երբեմն լրացնում է մեր բնագրի թերութիւնները, կամ նոյն մտքերի լուսաբանութիւն է տարբեր խօսքերով, ինչպէս կտեսնէ ընթերցողը բնագրի ծանօթութիւնների մէջ·

Ը.

Զագավանից ժողովի «Սահմանքն» առնուած է մեր մատենադարանի № 582 (Կարինեան 530) թղթէ ձեռագրից, $125^{բ}-130^{բ}$. Կազմը $17\frac{1}{2} \times 15$ սմ, թերթը $17\frac{1}{2} \times 14$.,բուն գրութիւնը 13—10 սմ. մեծութեամբ։ Սկզբից մի թերթ մագաղաթ՝ միջին երկաթագրով անծանօթ հատուած՝ իբրև պահպանակ. վերջում մեծագիր երկաթագիր ճաշոցի հատուած՝ երկու ծալած։ Գրիչն է անն Դաւիթ $44^{բ}$, $108^{ա}$, որի ծնողներն են Վարդան և Հռիփսիմէ $91^{բ}$, $108^{ա}$, եղբայրները Յո՟վս և Մարտիրոս $101^{բ}$.,։ Գիրը բոլորգիր է՝ բուն գրչինը, բայց կան և յետին ժամանակի յաւելումներ շեղագրով և խառնափնթոր գրութեամբ։ Ձեռագիրը թուական չունի, բայց ամենայն հաւանականութեամբ բուն ձեռագիրը ԺԵ—ԺԶ դարու գործ է։ Բուն ձեռագրի վերնագիրները կարմրագեղով են։

Ձեռագրի բովանդակութիւնը.

$1^{բ}$. Անվարժ շեղագրով՝ հոգևոր ազգակցութեան աղիւսակ է. մէջը գրուած. «զներգևեալ կ՟րկս բանայսէր յիշեցէք ի ք՟ս աղաչեմ»։

$2^{ա}-44^{բ}$ Մխիթար Այրիվանեցու ժամանակագրութիւն.

Վերնագիրը կարմրագեղով. «Շնորհաւք և զաւրութ՟ր համագոյ ս՟ր երրորդութե՟ն։ Նախերգան նոր պատմութ՟ե։ Արտասանեալ ի տ՟ր Մխիթար վզ՟է Այրիվանեցոյ»։

Սկզբ. «Հայր և որդի և հոգի ս՟ր ....»

$44^{բ}$. Ժամանակի, տեղի և ծանրութեան չափեր. «ՇԼԲ. ամն շրջան մի է» . . . .

Այստեղ 3 կամ աւելի թերթեր պակասած են։

$45^{ա}-66^{ա}$. Սկսւում է. «Ը՟ս հոգոյ, և եղբայրն ը՟ս մ՟ոյ, սրբազան կթ՟ղկան Գրիգորիոս....» Ներսէս Շնորհալու Ընդհանրականի մասն

$66^{ա}-91^{բ}$. «Նորին տ՟ն Ներսէսի առ Առաջնորդս ս՟ր ուխտից վանաց. Փոքր ինչ և առաջնորդացդ.... »

$92^{ա}-101^{բ}$. Ս՟ր վգի՟ն Վարդանայ։ Ձրատք հաւատոյ և դաւանութ՟իք ս՟ր երրորդութե՟ն յա՟մ ա՟ծաշունչ գրոց հաւաքեալ ի պէտս հաւատացելոց առ հա՟րկ ամենեցուն քհի՟ց և ժողովրդոց, արանց և կանանց, ի յուսումն փրկութ՟ե և ի վարժումն ա՟ծպաշտութ՟ե.

Սկս. «Զա՟ծութի՟ն անճառելի, անհասանելի ...»

Վերջ. Եւ արդ բր՟խոսու՟թ ա՟մ սրբոց խորտակեսցէ զգեն յանդունդս և տա զնա] կ՟ին ոտից ձերոց....

$102^{ա}-108^{ա}$. Դարձեալ խրատ վարուց առաքինու՟թե ի ս՟ր գրոց համառատ ա՟ծպաշտութ՟ե և սրբութ՟ե ի պէտս քհի՟ց և ժողովրդոց, նոյն վզ՟ն վզ՟ի, որ բարեկամն է եկեղեցոյ և հարսնածու երրորդութ՟են.

Սկզ. Ա՟ծ բարի է և լոյս, և ա՟մ բարեաց պտճ՟ռ.

Վերջ. «Եւ ս՟ր հոգին տացէ շն՟հ զղջման և արտասուաց ի բան գրոցս և ի սիրտ լսողաց և կ՟ղացողաց։ Եւ որք տանին և բերին զգիրքս ի հեռաւորս որ լսէն և աւգտին ....»

$108^{բ}$ Պատմու՟ի վ՟ս անքուն որդանցն, Եւ վ՟ս խստութ՟ե և չ՟րութե՟ց եւ թէ զինչ են ն՟ք. Եւ ուս(տ)ի իցեն։ Փոքր ի շատէ կարճառօտ պ՟տմեցից ձեզ.

Սկս. Եւ արդ եկայք այսուր ժողովեցարուք....

Վերջ. Եւ համարոյ ս՟բ երրորդութ՟ին անբաժանելի, փրկեսցէ զձեզ ի մեղաց և ի դժոխոցն. և զննջեցեալսն ձեր, և զծնողսն մեր և զեղբարսն և զընթերցողս գրոցս։

$112^{բ}$—$118^{ա}$ Պատմութ՟ի՟ք և բանք վ՟ս դժոխոցն, թէ տեղի է և կայ դժոխք. ա՟յ վկայութ՟ի և ա՟ն սրբոց ն՟ա։ Եւ ոչ լոկ և սուտ սպառնալիք միայն, ո՟պ և կարծեն ոմանք և մեղսասէրք և սատանայարաշխք, և այլք որ կարապետք են նեռինն։

Սկս. Եւ արդ եկայք այսուր, ամենայն դասք մեղաւորաց...

Վերջ.... յորմէ և ուստի ս՟բ հոգին փրկեսցէ զձեզ, ձեր ննջեցելովքն և զմեզ մեր ննջեցելովքն և զա՟ն մարդ մսեղի ...

$118^{ա}$—$121^{բ}$ Նորին Վ՟դան վ՟րդի խրատ հոգևոր։

Սկս. Այլ և զայդ հզ՟որ, թէ գիտեր կարէ մ՟ք արհամարհել...

$121^{բ}$—$122^{ա}$ «Նշանք հալի, որ ալքան սավսի . . .» գեղատոմսեր.

$122^{ա}$ Առանց վերնագրի «Ասացուք և մեք զայդն ինչ զովեստ ա՟ծու-նակ գերեզմանին.

$223^{բ}$—$124^{բ}$. Ամիսների անուններ. արարացւոց, մակեդոնացոց, յունաց, ասորոց, ասձկաց, եգիպտացոց, աթենացոց, պարսից, արաբկաց, եթէովպացոց, բիւթանացոց, կապադովկացոց, վրաց, աղուանից մուղալին թաթար։ Կենդանակերպք՝ արաբկաց, յունաց, պարսից, մուղալին։

$124^{բ}$. Հ՟յուՑ ս՟ն Ներսէսի հայոց կաթ՟ղ՟սի առ Եպիփան և միայ-նակեաց. Զի՞նչ են համբարուք և յուշկապարիկք....

$125^{բ}$.—$130^{բ}$. Սահմանք ժողովելոյ ձայգս. որ եղև ի ձեռն ո՟ր Գրիգորի և Վարդան վարդապետին. (երեսների համարները $128^{ա}$ և $128^{բ}$ մէջ առած)։

Սկզ. Ի թուիս հայոց ՉԺԹ...

130—$132^{բ}$. Տ՟ր ս՟ն վ՟ղի ասացեալ աղաւթք ի վ՟ր հիւանդաց. «Աւրհ-նեալ և փառաւորեալ.

$133^{ա}$—$147^{ա}$. Տարբեր, աւելի նոր գրով. Նիկիոյ և առաքելական կա-նոններ և այլ կանոնական մանրունք։

$147^{բ}$—$149^{բ}$. Շեղագրով խրատ թէ եկեղեցի գնալիս քանի ծունր պէտք է գնել և ինչ սրբերի կամ սրբութիւնների.

$150^{ա}$—$151^{ա}$. Տարբեր գրով. Յառաջաբանութ՟ի թագաւորութե՟ցն. Վասն զի յերկուս գիրս».

151—$153^{բ}$. Նախկին շեղագրով. Տարածութեան. ծանրութեան, դրամի, ժամանակի չափեր. համառօտ ժամանակագրութեան խառն հաւաքածու։

$155^{ա}$. Մաշտոցի մաս. կանոն զ՟ամ փախճանեալս յուղարկել.

$165^{ա}$.—$188^{բ}$. Տարբեր գրով մինչև վերջ. Ցաղագս աշխա՟գրութ՟եց ստոյգ.

Սկս. Ցաղագս աշխարհագրութ՟յ յա՟ծախն գիրս...

$188^{բ}$. Բարձրագոյն եմ քան զերկինս... (իմաստասիրական հանելուկներ, հեղինակն անյայտ է)։

$188^{բ}$—$187^{բ}$. «Բան իմաստնասիրաց աթենացոց. Պղատարքոս ասէ...» և այլ մանր բաներ.

$187^{բ}$.—$188^{բ}$. Վկայութիւնք դաւանաբանական (կիսատ)։

Յիշատակարանք.

44ᴮ. Փ՟ռ ա՟ծ, բարեխաւսութ՟ն ծնողի քո ս՟բ ա՟ածին կուսիդ զա՟յ մխիթար վ՟դն այրիվանեցի զաստուածեալ ընդ կամարար սիրելիսն քո։ որ զկարճատեւ նշանից բանս գրեալ է։ և զծնողսն իմ յիշեալ յաստ յողորմութ՟ն քո և թող զյանցանս ն՟ց, և բաղմամեղ Դաւթիս ողմե՟. և կարդացողացն և այլ ամէն երախտաւորացն իմ ամէն։

91ᴮ. Զանյիշելի անուն դ՟ւթ և զծնողսն իմ զվարդան և զհոփփսիմէ, յիշեցէք առ ք՟ս, աղաչեմ զձեզ։

101ᴮ. Զանյիշելի դ՟ւթ և զեղբարսն իմ զյով՟ս և զմարտիրոս և զքոյրսն իմ և զծնողսն իմ, աղաչեմ յիշել առ ք՟ս, զի ող՟մեսցի ամենեցուն, և ա՟ծ զձեզ յիշէ ամէն։ ա՟ր ա՟ծ ա՟նեսցէ զպարքարիս դպիրն։

108ᵂ. Եւ որք տանին և բերեն զգիրքս ի հեռաւորս, որ յսէն և ուզաին, ք՟ս ջնջեսցէ զմեղս ն՟ց, և զծնողաց ն՟ց, և զծնողացն իմ զպ՟լնին և զհոփփսիմին, և զօրինակի գրողիս և զավողին, և զ՟ամ հ՟ւատացելոց, որք յուսով են առ ա՟ծ, և զանյիշելի դաւթիս և զձերն ամէն։*

ՍԱՀՄԱՆՔ ԺՈՂՈՎԵԼՈ ԶԱԳԱ, ՈՐ ԵՂԵՒ Ի ՁԵՌՆ ՏԵՐ ԳՐԻԳՈՐՈ ԵՒ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ։

Ի թուին հայոց Զժթ ի յարաց ամ(ս)ոյն ի ժէ։ ի տաւնի սրբոյն Գրիգորի. յաշխարհակալութ՟ն Աւագ ղանին. կամաւք և հրամանաւ պարոն Խոշաքին. և իշխանաց մերոց մեծին Պաւաչայ. և Սադունին և Ումբատայ. Եղև ժողով կանոնական աւրինաց ի Զագավանս, (ի) կթ՟ղութ՟ն տ՟ն Յակոբայ. յորհի եպ՟ութ՟ն տ՟ն Գրիգորի, նորին կամաւք և ձեռամբ բոլոր վիճակին իւրոյ. որ ընդ իշխանութ՟բ ս՟բ աթոռոյն Վիրապին և Բջնոյ, եկեղեցականաց և աշխարհականաց. վանօրէից. վ՟դպաց և ծերոց. և ք՟հնայից զեղչէից. ժողովրդականաց. Աստ էր և ակարագի Վարդան վ՟դ ծառա քրիստոնից. սպա(սա)ւոր բանի և հրամանս կթ՟ղսի.

Եւ պատճառ ժողովոյս այս. Որ անզանոցն էր խորհուրդ եկեղեցոյ և ա՟ծեղէն հաւատ և պատիւ քրիստոնէութ՟ե, ՟ս բարի պակասե՟լ էր և սատանայ իւր չար սերմն ՟ս

---

* Նկարագրութեան եւ «Սահմանք»-ի բնագրում պահել ենք Ձեռագրի ուղագրութիւններն ու առանձնայատկութիւնները, բացառութեամբ կէտադրութեան։ Փակագծի մէջ առնուած լրացումները մերն են:

Բ. Գրակի առաջին պարբերութեան մէջ Իւանէ աթաբէկի կնոջ Խոշաքի մահին խօսելիս՝ մոռացմամբ թողել ենք նրա անուան յիշատակութիւնը ՈՀԷ = 1228 եւ ՈՁ = 1231 թուերին, Երազգաւորսի երկու արձանագրութեան մէջ, ուր կոչւում է «վրաց եւ հայոց թագուհի»։ Ալիշան. Շիրակ 10։

մեղաւք կոխեալ էր զքրիստոնէական հաւատս. առաւել անքա-
ւելի մեղաւք և չարաչար հերձուածովք, որ քան զա՞մ հերձուած
լեալ է. մինչև ցայս, զի ծաղրովք նզովեալ են չարագոյն յի-
շաւնչնաւորքն, որ զա՞մ մոռացեալ մեղք և չարիք[ա] յիշել տան
ա՞յ. հրշ՞կաց և բոլորից սրբոց, և գողացուցանեն զարարածս ա՞յ՝
և գարշելի և զազիր հոգով[բ] լնուն զերկիր. Եւ չտան տեսանել
126ա արարչին իւր ողորմած աչաւքն զիւր ‖ արարածս և արգելուն
զա՞րս ա՞յ բարեխաւսել վասն աշխ՞հի. ուր ք՞սական[գ] անունն
և անճառ խորհուրդ քրիստոնէութե՞ս հաւհո՞ւ. Զի այս է,
որ ասաց ք՞ս, թէ որ զհոգին ս՞բ հաւհոէ, մի թողցի նմա. մի
յայսմ աշխ՞հի և մի ի հանդերձելումն*։ Որ յայսմ աշխարհի չէ
տուեալ ումեք իշխանութ՞ի թողուլ յիշընցնաւորին. ոչ կթ՞ղսի,
ոչ եպ՞սի, ոչ վ՞դի, ոչ քահանայի. և յայնմ աշխ՞հին ոչ ոք
իշխէ բարեխաւսել, ոչ հրշ՞կ և ոչ ս՞րբ՞ս. Այլ ի յաշ-
խ՞հատեղծ բերանոյն հետ գիւաց անիծաւք[դ] ի հուր գեհեննոյն
երթան, յանշիջանելին. և այս կեանքս ա՞մ ս՞քբ ի նզումն են[ե]
(այսպէս). մովսէսի նզովեալ է զիշընցնաւորն և իւր ապրանքն
զամէն, զնստելն և զառնելն, և ի կարգն ա՞մ ս՞րբ. Զա՞յ հա-
հոյչն ով չնզովէ և զգողացուցիչն աթոռոյն ա՞յ. Երբ կթ՞ղս և
եպ՞ս, վ՞դ և երեց չունի իշխանութ՞ի թողուլ յիշընցնաւորին
մեղք. այտ[զ] են որ յիշընցնաւորքն անիծած են, յ՞ա կթ՞ղսէ և
եպ՞սէ և վ՞դէ և ք՞հնաէ.

Եւ սոտ ծաղրվեալքս զնոյն սահմանեցաք և ոչ ուտար կա-
նոնք. կթ՞ղս կամ եպ՞ս կամ վ՞դ կամ երեց չունի իշխանու-
թ՞ի զյիշընցնաւորն կամ ա՞հել կամ հաղորդել կամ թաղել,
կամ զաղայսն կնքել կամ պսակել, որ չտան զորքութ՞ի
շանց, և ինքեանք ընդ ն՞ս նզովին. զի ա՞ծ է քրիստոնեայքն,
ք՞ս է քրիստոնեայն[է], Ինքն ասաց. Կացէք յիս և ես ի ձեզ.
126բ և որ ուտէ զմ՞րմին իմ ‖ նայ յիս բնակեսցէ և ես(ի) նմա.
Եւ Պաւղոս ասէ. մ՞րմին ք՞ի են քրիստոնեայք. անդամք յան-
դամոց ն՞ր և ոսկր յոսկերաց նորայ և տաճար են ա՞յ հաւր
և հոգին ա՞յ բնակեալ** է ի քրիստոնեայն և զիւր անունն քրիստո-
նից է դրել. ք՞ս և քրիստոնեայն մէկ են.

---

* Մատթ. ԺԲ, 13.

** Յովհ. ԺԵ, 4. Զ. 57. Ա. Կորնթ. Զ. 15. ԺԲ. 27. Գ. 16. Զ. 19.

ա) զչարիք բ) «հոգով լնուն», որ ըստ իմաստին աւելի ճիշտ է: գ) քրիստոնէական դ) անիծիւք հետ գիւաց ե) ամենայն սուրբք ի նզովել են զ) յայս են է) զի որ զքրիստոնէն անարգէ, զած է անարգել, որ զքրիստոնէն հայհոյէ, զքս է հայհոյել. զի ինքն . . . Երզնկացին այստեղ բացատրել է Վարդանի բնագիրը, որից եւ երկուսի տարբերութիւնը:

Ա. Առաջին այս պահուի, որ զահաւոր անունն ա՜յ ի վեր առնուն յիշընցնասուացն, զի և սատանա կոչեն. զի զա՞ծ այլ ով իշխէ հաճոել քան զսատանայ, չունի հրաման յա՞յ յիշընցնասուն, որ քրիստոնեա կոչէ զինքն. կամ այլ ով էքմին հայր կամ մայր կամ եղբայր, կին կամ սիրելի. զև է և սատանայ և անիծած. մեք չենք միայն յանիծել, ա՛ռ ո՞րք են յանիծել և ինքն ա՞ծ.

Բ. Զի քրիստոնէից զաւակն, որ չեն յիշընցնասուն չաբաթ մի պահաւք յառաջ կերեն, երէցն անաւթի և պատրաստ կացած. կերահայրն ոչ կին, ոչ այլազգի, ոչ յիշընցնասուն, ոչ մելամաղձեայց[ա], այլ լաւ քրիստոնեայ և գիտուն. և յամէն կիրակաւէ հաղորդեն զնոր կերածն, զխաչ հանել ուսուցանեն, զծունր ածելն ի յոտք ելնելն. երբ ի խաւսք ելնէ, զինչ կերահայրն ասաց ի կերո ժամն, զայն ուսուցանեն. Հաւատամ ի հայր, հաւատամ յորդի. հաւատամ ի հոգին ս՞բ. հաւ՞տամ ի ծնունդ ք՞ի և յայլսն. և ‖ յետինն, թէ հաւատամս ի յարութ՞ի մեռելոց, երեցն ի չուր գայ ի վ՛ր ժողովրդեանն և առել տայ ծնողացն. 127ա

Գ. Զինչ տարածոց (այսպէս) պահեն զաղայսն, որ մեղք չտեսանեն և յիշընցք չլսեն. մինչև ԺԵ տարին զփէսացուն անարատ պահեն և զհարսացուն (այսպէս) մինչև ի ԺԳ, և բնաւ մի պակաս հարսն քան զԺԲ տարին. ապա թէ ուզեն զաշխ՞հք, անկարևոր և զանարատն պսակեն. Շաբաթ մին պահաւք ա՞մ տունն փէսային և հարսինն, իւրենքն և երեցն անաւթի. թէ խալատին, կորուսին զպսակն. [թէ հարկ լինի, հարսնն քան զԺԲ տարին, և խիստ Ժ, թէ այլ պակաս պսակեն, պսակողին և որ պսակել հարկ առնեն ընդ անիծաւքն են]*.

Դ. Անարատ պսակածքն Ը աւր ո՞ք կենուք կենան. և յԸ. աւուրն գնա երէցն և զեռին աղաւթքն կարդայ, և զպսակն ի վեր առնու, և խրատ տայ, որ զչորէքշաբաթ և զուր(բ)աթ և զկիրակի, և զԸ աւրէք յայտնութ՞են և զխաչի, և զաղուհացն և զյինունքն ս՞բ կենան յան(կ)ողնոյ. Որ պսակ չէ ի դնուլ այն է պատճառ[բ]. Ներ(կ)ուշաբաթն աւրէն մինչև յուրբաթն աւուրն Գ հետ աղաւթեն. թէ ի ժամատեղ չեն կար ‖ ել երթալ, կին զատերաւքն Կ ծնդրով, մարդն որդեացաւքն ԼԶ ծնդրով. Շաբաթն աւրն և կիրակէին մեծ և փոքր ի ժամատեղն գնան, կիրակէին անգործ կան և խոստովանին զշաբաթին սխա- 127բ

* Անկիւնաւոր փակագծի մէջ առնուածը թւում է ներմուծութիւն:

ա) «ոչ մելամաղձեայց» Երզնկացին թարգմանել է «ոչ ընծայուղ» բ) Երզնկացին պարզել է Վարդանի միտքը. «Եւ որ այն աւուրն պսակ չէ ի դնուլ, այն է պատճառ. որ չկայ հրաման անկողնոյ եւ ամուսնութեան»:

լանքն։ Ցամէն Խ աւր հաղորդին աւրինապահքն, Գ աւր ի զատ կան յանկողնոյ և ի Դին հաղորդին. և Գ աւր հարկէք զնեն, հաղորդին։

Այս հասարակաց կանոնք է աշխարհականք քրիստոնէից·

Այս սահմանք է քահանաից աշխարհի։

Զ. (ա.) Քահանա որ պատարագող չէ, ոչ կնքել կարէ և ոչ պսակել և ժողովուրդ չուտէ. և որ յայտնի բաքասած է, ձև և նշան իրիցու թող չունենայ։*

Է. (բ.) Քահանա այլ գործ չառնէ՝ պարոնին ձեռնաւորութ՚ի կամ՝ մաճրութ՚ի.

Ը. (գ.) Քահանայն զժողովուրդն խնամէ որ՚պ հայր, զանմեղք ջանա պահել, և զողայս խրատել և սգուշացուցանել, որ խալատին ոչ և չուն դառնան, և զպսակն կորուսանեն, և ամէն խառնակելոյ մե՛ տարի պահս պարտին. և զմեղուցեալ ջանա դարձուցանել ի մեղաց, և զդ՚ձեալսն քաջալերել և լինել հովիւ քաջ. ճանաչել զհաւտն, յարաւտի և ի փարախի պահել՝ յեկեղեցի և ու‖ սմամբ կերակրել և կնքո և խոստովանութ՚ն և հա-
129ա *զորդի իւք չառնուն։*

Թ. (դ.) Զայն քա՛այն, որ զայս առնէ, ժողովուրդն իբրև զհայր տեսանեն. և իր(ր)և զք՚ս թե՛թև պահեն ի չարէ, ի՜ջուան չտան, յա՛մ արդեանց պտուղ տան. վաստակացն ածնեն, զմատաղենիսն տան, և խաչահամբոյր, թաղման հանդերձ մի, յաւժարութ՚ք և ոչ ի հարկէ. ժամուց, զոր կարեն, և պսակին՝ ըստ կարողութ՚ն. նուերք յեկեղեցին. զի քահանայքն դէտք են և դաստիարակք և համար տալոց են զ՚ս ն՚ց ա՚յ. Թող հնազանդկան ժողովուրդքն զինչ ա՚յ ամէն բանի. սորքանեաց և սպաննալոյն և սատանելոյն, թէ արժանի լինին։

*Ժ. (ե.) Զամուսնութ՚ս խրատն առանց ամաչելոյ տա քահանայն. և զկարեւորքն չպսակէ և ոչ զանիկոսքն** և որք բարքասած են և կարծիս կայ. թէպէտ որ սուտ են, չդնեն տղայ գիրկն. զերի է աշխ՚ս և ի կրակի, թէ այս չէ ի կարել յարդելով ի չնալոյ և յարբեցութենէ, և զիրար յատելոյ և ի մատնելոյ, և ի խռով կալոյ և ի զիւր յաղելոյ և ի գողանալոյ, այլ մեծ չար է պահել ա՚ծ սատէն և անդէն(?). և այսպիսիքս թէ չլսեն և չդառնան ի չարեաց, արեան և աւերման աշխարհիս պարտական են, և այնպիսեացն չառնեն քա՚թի։*

* Այս ձեւը յատուկ է գրչին կամ ենթիճակին, որովհետեւ կրկնուած է եւ ներքեւում:

** Տես Գր. Տաթ. Մեկն. Եւ. մարգ. Խ՚Դ. ժ. «կնքահայրն. այսինքն սանտիկնոցն». «զի սանտիկոս զորինակ յովհննու ունի զմկրտչին» Ձեռ. № 1241|1128. 376 եր. Տես եւ Հայկ. Բառ.. սինտեկնոս-σύντεκνος.

Նուաստ և տկար և անպիտան ծառայս քրիստոնէից Վարդան գրեցի ի կանոնաց գրոց և ոչ նոր ինչ ուսուցի, այլ այս է ճ՞պ՞ քրիստոնէից, որ առ ք՞ս կամին գնալ։ Հրամանք ա՞յ և ս՞ր առաքելոյն Թադէոսի և ս՞ր Լուսաւորչին Գրիգորի, յամէն կիրակէի և յերեկոյի տաւնէր կարդան, և հեծելին աղաւթք առնեն և ք՞սսէր պարոն Խոշաքին, և մեր բարեպաշտ իշխանացն Պռաւշայ և Սադունին և Սմբատայ, որ ձեռնտու և աւգնական լինին կանոնին, ս՞պ Տրդատայ որդւոյն Գրիգորի. և ա՞հնեսցին և ամբողջ մնասցեն յերկար և բարի կենաւք, յորդոց յորդիս և ի թոռանց ի թոռունս. որ և նոքա խնամ տարցին և վրէժխնդիր լինիցին ի պարծանս եկեղեցւոյ և ի փառս ամէնա՞ք երրորդութ՞ն, հաւր և որդւոյ և ամէնա՞ք հոգոյն, ա՞հնելոյն և գովելոյն և փառաւորելոյն յաւիտենից. ի հրեղինաց և ի հողեղինաց, ի բոլորից և ի մասանց արարածոց, և մասունքն իւրև գ՞հաա մանանխոյ, յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից յաւիտեանս. Իսկ զամենն և զեղիցին սատացեն նոքին իսկ ա՞հնաբանիչքն.

Կանոն Վանականաց

Ի թուին հայոց ՉԺԹ յարաց ամսէն ի ԺԵ եղև ժողով տեսանել զործանն. եկեղեցականաց և աշխարհականաց, հրամանաւ պարոն Խոշաքին և ք՞սսէր իշխանաց մերոց, Պ՞ռ. Սա՞դ. և Ս՞բ. ի վիճակիս ս՞ր աթոռոցս Վիրապիս և Բջնոյ, (յ)աշխարհակալութ՞ի (աւանց պատուի) տեառ զանին, և ի կթ՞ղութ՞ի տ՞ն Յակոբայ, և յարհեպ՞ոսութ՞ն տ՞ր Գրի‖գորի, կամաւք և 130ա
հրամանաւ ն՞ր գրեցաւ կանոնք, որ էի և ոչ նոր ինչ, զոր պատեհ տեսին վ՞դք և ծերք վանորէից, որք հաւաքեալ էին վասն Զագաւ. Աստ էաք և մեր անպիտան ծառա քրիստոնէից Վարդան, որ գրեցաք զաշխ՞հականացն ուրիշ և տուաք յերիցունս աշխ՞հի. և վանորէից զայս ինչ.

Ա. Առաջին որ միաբան լինի վանքն և չլինի ուրիշ լուծք և անառունք և պատճառ գայթակղութ՞ե. ոչ սանամայր, ոչ մայրագիր, ոչ քարագիր ընաւ, և ոչ մայր և քոյր ումեք և ոչ ազգական ի վանքն.

Բ. Խոստովանահայրն ընդրած լինի, և նմա՛ հրամանաւ մտանեն և ելանեն ամենեքեան.

ԳԴ. Կաշառաւք հայր և այլ գործաւոր չդնեն. գործաւորք հաւատար ծառաեն զեղբայրսն.

(Ե) Ամէն մարդ փոքր չպահէ, և զամէն, որ գան, չպահեն, այլ զոր խ՞մահայրն ընդրէ զփոքրապանն և զպահելոյն, և ընդրածք

աճիւ և երկիւղ(իւ) կենան, անծանօթ ամենայ, զատ ի յիւր պահոզէն և ի խոստովանահաւրէն։

Զ. Որ աշխ՞հի երեց կամի լինել, ի ծեր կին առնու, ի Ի դպիր լինի, ի ԻԵ սարկաւագ և յլ. երեց. ուսածն ի գիտնոց և վկաածն յամենայ։

Է. Որ աբեղացուն է ի Ի չուխա ազանի և մխս չուտէ, և գինի չխմէ. յլ. տարին. որ գիտաց զինքն և ամենիքեան գիտացին, թէ կարող է աբեղաութ՞ե, օ՞րկ՞ւգ լինի, և անուշահոտ զանել տարի մի՝ սպասաւորէ եկեղեցոյն, և պիտանի եղեալ, և վկաած յամէնոյ, աղաչեցեալ, երեց լինի ա՞վ յաջողեալ։

Ը. Տղա հասակաւ և առողջ մ՞րմնով անմխս և անգինի լինի և կենա մինչև մահ ըստ զրոց հրամանի. օ՞պ ասէ ի Թիւք. ա՞մ այր և ա՞մ կին, որ տայէ զանձն իւր ա՞յ. գինո և յա՞մ արբեցութենէ զգուշասցի։*

Թ. Աւանց մեծ հարկի աբեղաի մաւտեաբ գեղ չաւթէ, և ոչ կին ի վանքն։ Աբեղա որ ի քաղաք կամ ի գեղ գնա, անուշահոտ կենայ և երկիւղիւ, օ՞պ ի կրակում, մինչ դառնա ի վանս իւր։ Զընդբածքն և վկածքն և զոմնգայթակղան յաղարկեն յայգի (ձեռ. յա՞յգի). ի գեղ և յ՞ա գործ վանիցն. և քայերեա կենա յա՞յ և ի մարդկանէ վանից մարդն, ի փառս ա՞յ ա՞հնելոյն յաւիտեանս։

* Թիւք Զ. Զ.

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻ ՔԷՕՄԻՒՐՃԵԱՆԻ

1907 թուի ամառը Ս. Էջմիածնի միաբան Մեսրոպ վարդ. Տէր Մովսիսեան (այժմ եպիսկոպոս) եկած էր Երուսաղէմ Սուրբ Յակոբեանց վանքի մատենադարանի ձեռագրերը ցուցակագրելու նպատակով։ Այն ժամանակ դեռ նոր ստանձնած ըլլալով մատենադարանի տեսչութիւնը, պաշտօնիս բերմամբ օգնեցի իրեն՝ աւարտելու իր աշխատութիւնը։ Մատենադարանին մէջ կը պահուէր Տիգրան Սաւալանեանի կազմած գրացուցակը, որուն համեմատ ցուցակագրուած և համարագրուած ձեռագիր հատորներու թիւը կը հասնէր մինչև 1742. մինչդեռ նոյն մատենադարանի, եկեղեցւոյ գանձատան, պատրիարքարանի, խորհրդարանի և վանքի հին մատենադարանին մէջ դեռ ևս կային հազար հատորի չափ չցուցակագրուած ձեռագրեր, զորս անհրաժեշտ էր, գոնէ համառօտ կերպով ցուցակագրել ու թուահամարի տակ առնել՝ դիւրացնելու համար մեր յարգելի հիւրին աշխատանքը։ Այդ գործը ես կատարեցի։ Այս առիթով շնորհակալութեան պարտք մ՚ ունիմ հատուցանելու Տէր Մեսրոպ Սրբազանին, որ դրդապատճառ եղաւ խնդրելու և թոյլտուութիւն ստանալու Ամեն. Տէր Յարութիւն Պատրիարքէն՝ աստ անդ ցրուած այդ հատորները, որոնց մէկ մասը յոյժ կարևոր ու մեծարժէք, դուրս հանելով խոնաւ ու մո՛յին անկիւններէ՝ ի մի ամփոփելու, և իւր հմուտ ցուցմունքներով օգնեց ինծ կանոնաւորապէս դասաւորելու և համարագրելու զանոնք։*

Մինչդեռ այդ աշխատութիւնը կը կատարէի, ուշադրութիւնս գրաւեց միջակ դիրքով, բաւական հնացած ու քայքայուած հատոր մը՝ ինքնագիր Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի։ Այդ հատորին քանի մը էջերուն վրայ հարեւանցի ակնարկով մը կարելի էր համոզուել՝ թէ պատմական հարուստ տեղեկութիւններ ու ծանօթութիւններ պարունակող խիստ շահեկան ձեռագիր մ՚ է այն։ Ուշի ուշով աչքէ անցուցի ամբողջ գիրքը, որուն մէջ Երեմիա Չէլէպի իր իսկ ձեռքով օրը օրին արձանագրած էր ՌՂԷ [1648] տարւոյ յունիս 11էն մինչև ՌՃԺԱ [1662] թուականի վերջը՝ տասն և չորս տարիներու քաղաքական, ազգային ու ընտանեկան դէպքերը մանրամասն կամ համառօտ, մեծ մասամբ ամբողջութեամբ և երբեմն թերի։

Երբ նկատի ունենանք՝ թէ Երեմիա Չէլէպիի այս հատորը որքան կը նպաստէ լուսաբանելու մութի ու անյայտութեան մէջ թաղնուած այդ ժա-

---

* Այս ցուցակը սենեակս կը մնար, երբ 1908 օգոս 4 ին երեք ամսոյ արձակուրդով մեկնեցայ Երուսաղէմէն իբրեւ ուղեկից հանգուցեալ Տ. Մաթէոս Եպիսկոպոսի: Բայց անկէ վերջը պատահած միաբանական ափօրութիւններն ու հանգ. Վ. Եղիափառ Իզմիրլեանի հետ Պոլսէն Էջմիածին ուղեւորելու ճարկը յապաղեցուցին Երուսաղէմ վերադարձս երեք տարի. Իմ բացակայութեանս «բարեմիտ» եղբայրները ամեն սենեակս բացած եւ ի միջի այլոց անյայտացուցած էին նաեւ այդ ցուցակը: Վերջնայն ով որ է, արդեօք բարեխղճութիւնը պիտի ունենայ մատենադարանին վերադարձնելու Սաւալանեանի երկու տարուան աշխատութեան այդ արդիւնքը:

ժամանակաշրջանի պատմական կարեւոր եղելութիւնները, երեւան բերելու ազգային ու քաղաքական գործիչներու նոր անուններ, ծանօթացնելու պոլսահայ թաղերը, սովորութիւնները, ըմբռնումները, ընտանեկան կենցաղը և այլն, այն ժամանակ կարող ենք գնահատել այս թանկագին հատորին յարգն ու արժէքը։

Փափաքելով հետաքրքրական ձեռագրիս մասին փոքր ի շատէ ծանօթութիւն տալ ազգային բանասէրներու, կարեւոր կը համարիմ գնել նախ անոր համառօտ նկարագրութիւնը։

Ձեռ. № 1893.—Թուղթ՝ 373.—Մեծութիւն՝ 14×10,1×5,5 ս. Գրութիւն՝ միասին, բազմաթիւ յաւելուածներ վերի, ներքեւի ու քովի լուսանցքներուն վրայ.—Գիր՝ նոտր, շատ անգեր շղագրի մօտեցած.—Նիւթ՝ թուղթ.— Կազմ՝ խաւաքարտ կաշեպատ.—Հանգամանք՝ կազմը խանգարուած և կազմուած ժամանակ եզերքներ կտրուելուն պատճառով լուսանցագրութիւններէն տառեր և մասեր զանակի տակ ինկած։ Թղ. 328էն վերջ թուղթերը հոս ու հոն գրուած և թուղթեր ընկած մէջտեղերէն ու վերջէն։ Գրիչ՝ Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան.—Ժամանակ՝ ՌՂԷ—ՌՃԺԱ [1648—1662].—Տեղի՝ մեծագոյն մասամբ Պոլիս, նաև Ադրիանուպոլիս, Երուսաղէմ, Պրուսա և Ռոտոսթօ ուղեւորութեանց ժամանակ ճանապարհները և նոյն քաղաքները գրուած.— Վերջին ստացող՝ Գրավաճառ Յարութիւն Մարգարեան, որ նուիրած է Երուսաղէմի մատենադարանին ի յիշատակ իւր հանգուցեալ հօր՝ գրավաճառ Մարգարի.—Յիշատակագրութիւն՝ Թղ. 2ա բոլորագրով. «Այս ձեռագիրս յարութ՞ի Մարգարեան ձեռամբ կանգնի իբր մահարձան ի գրատան ս՞ր Յակոբայ վանուց յերուսաղէմ ի յիշատակ գրավաճառ մարգարի, որ հանգեաւ ի Տէր 1847 սեպ. 2 Պօլիս»։ Շղագրով՝ «Այս մատենիս հեղինակն է երեմիայ չէլէպին, որդի տէր Մարտիրոս քահանային. տես յերես 542. պատմող բանիս Ղեւոնդ վր՞դպ յուխտէն Վարագայ. 1872 ապր. 2 ի Կ. Պօլիս»։

Թղ. 2բ. Երեմիա Չէլէպի իր ձեռքով գրած է գրքիս անունը «Ժամանակագիր եւ պատմութ՞ի»։

Թղ. 2բ. օտար գրչէ. «յամի տ՞ն ՌՂԷ տճ՞կց ١٠٥٧ ին մայրաքաղաքիս թգ՞րն էր Սուլթան Իպրահիմ»։

Թղ. 281ա. ձեռ. Ղ. վ. Փիրղալէմեանի. «ՌՃԷ. 1658 նոյեմբեր 3 մ՞հս Ամպակում բարեպաշտ հոգևոր զաւակն Երեմիա Չէլէպւոյն վախճանի»։

Թղ. 353բ. նոյն ձեռ. «Գրիչն է Երեմիա Չէլէպին»։

Թղ. 373ա. նոյն ձեռ. «Հեղինակ օրագրութեանս է Երեմիա Չէլէպին որդի տէր Մարտիրոս քահանայի տես յերես 542 և 544»։ Պատկեր՝ Թղ. 1, 7բ, 8ա, 9բ, 19ա, 22բ, 23բ, 29ա—30բ, 62բ, 104, 128, 141բ, 152բ, 154ա, 194բ, 206բ, 239, 240, 281բ. 342բ, 348բ, 371բ, 372ա։

Երեմիա Չէլէպի իւր բազմաթիւ գրական աշխատութիւններէն զատ թողած է նաև պատմական գործ մը «Տարեգրութիւն» անունով, որ կը պահուի Վիեննայի Մխիթարեանց մատենադարանին մէջ։ Այս գործին մասին Չամչեան իր Պատմութեան Գ. հատորի ԼԹ. գլխոյն վերջը կը գրէ. «Գրեաց (Չէլէպի) և զպատմութ՞ի անցից իւրոյ ժ՞մկի՝ սառուցութ՞ր և հաւաստարմութ՞ր. յորմէ առեալ և մեր՝ աւանդեցաք ինչ ինչ ի ԼԲ. գլխոյ մինչև ցայսր» (երես 723)։

Չամչեանի այդ ութը գլուխներու պարունակութիւնը համեմատելով մեր ձեռագրի նոյն թուականներուն համապատասխանող դէպքերու պատ-

մուԹեան հետ, կը գտնենք շատ մեծ նմանութիւններ. վերջինս տեղ տեղ նոյն իսկ բառ առ բառ կընթանայ Չամչեանի հետ։

Դնենք քանի մը օրինակներ.

Չամչեան.

«Ի նոյն աւուրս ի մայիսի 13 առաքեաց եպարքոսն զՍինան փաշայ՝ որ յառաջն ծովակալ էր, այսինքն է պօստանճի պաշի, գնալ նստիլ ի Կոստանդինուպօլիս իբր տեղապահ եպարքոսի, այն է գայմախամ։ Եկն ընդ նմա և Թովմա վ՛րդ՝ զգեցեալ զպատիւ պատրիարգութ՟ն արքունուստ. և գնացեալ նստաւ յեկեղեցի սր՟յն Գէորգեայ ունելով ընդ իւր զօրականս. կային առ նմա և առանձին պահապանք ի գնդէ պահակաց՝ պօստանճի կոչեցելոց. որոց խոստացեալ էր քան քանակ արծաթոյ. զոր և օր ըստ օրէ պահանջէին նորա. զի յայնմանէ էր ռոճիկ ն՟ց» (երես 672)։

Չէլէպի, ձեռ. Երուսաղէմի *

«Եւ ահա եկն մայիսի ԺԳ յաւուր դ՟շի գայմախամ Սինան փաշա, որ կայր յէտրէնէ նստեալ մանզուլի պօստանճիպաշութենէ։ . . . Իէ մայիսի եկեալ պատրիարգն և եմուտ ի քաղաքս և մտեալ առ փաշան։ Եւ երթան աթոռակալքն և իշխանք առ փաշան, թէ չեմք կամիր զտիրութիւն դորա ի վերայ մեր՝ կրկին անգամ, մինչև գայրանալ փաշային, և ի բաց հանէր զնոսա յերեսաց իւրոց։ Եւ պատրիարգն երթայր ընդ պօստանճի խասէքիին և մտանէր առ նա, զի Ի քսակ ևս տալիք լեալ էր թագաւորին ընծայուց, որ յըռճիկս պօստանճոցն հասանելոց էր, վասն որոյ պահէին նոքա և կային ընդ նմա։ Եւ յաւուր պէնշէմպէի՝ մայիսի Լ յայտնի մտանէր առ փաշան ցուցանելով նմա զհրաման թագաւորին և զպէրաթ, և նա ընկալեալ սիրով խիլայս զգեցուցանէր նմա և հեծուցեալ ի ձի զօրավարօք հանդերձ երթայր նստէր ի վանս սրբոյն Գէորգայ» (Ձեռ. թղ. $242^{բ}$—$243^{ա}$)։

Չամչեան.

«Ընդ այս առաւել դժուարեալ տեղակալայց՝ խորհեցան այնուհետև ի ձեռն ամբաստանութեանց մերժել զնա յաթոռոյ և առնել զնա պարտաւոր մահու, և կամ գոնէ աքսորել. և զայն կամէին հաւանեցուցանել ժողովրդեան՝ պատճառելով զայլ և այլ բանս. մի՝ զի աճեցոյց աւելն նա զհասըս պատրիարգութ՟ն. երկ՟դ՝ զի

Չէլէպի ձեռ. Երուսաղէմի.

«Եւ ի վերայ գրեցաւ ժողով և սինհոդոս իշխանացն քաղաքիս և կատարութիւն՝ ի միմեանս պարփակեալք կցեալք երեկոյ և առաւօտ խորհուրդ և մուշավիրէ՝ թէ զի՞նչ գտցեն բանսալիս նա և պատճառս ի վերայ Թումային, զի կաղացուսցեն աքսորմամբ և կամ սպանմամբ։ . . . Պատճառ իմն իբրու՝ թէ առ ազգս մեր

* Փակագծութիւնները բացած ենք:

անձամբ յափշտակեաց զիրաւունս ե-
կեղեցւոյ. և եր՟րդ՝ զի ի հրովարտա-
կի իշխանութ՟ և իւրոյ ետ գրել ընդ
իւրև և զՆ՟էմ իբրև զմի յայլոց ե-
պ՟սկոպոսաց։ Եւ ի տարածիլ շշընջ-
ման ի մէջ հայոց՝ բազումք ի պարզա-
մտաց վ՟ս անուան Ն՟էմի միաբա-
նէին ընդ վրէժխնդիրսն. և խուռն
ամբոխիւ դիմեալ յապարանս Սինան
փաշային հանդերձ տեղակալօք՝ խնդ-
րէին իրաւունս. և նախ հաճեալ զկա-
մըս ծառայից փաշային՝ հաճեցուցին
յետոյ և զնա ինքն զփաշայն, ասե-
լով՝ թէ զայն քան քսակ զոր Թով-
մա ունի տալ զնդին պահակաց, մեք
հատուցուք զնոյն. և այլ ևս երե-
սուն քսակ ընծայ քեզ, եթէ կատա-
րեսցին խնդիրք մեր» (երես 637)։

Զամչեան.

«... և նոցա կալեալ զԵղիազար՝
տարան յատեան։ Խօսեցաւ ընդ նմա
եպարքոսն բարկութ՟բ, և ասէ. դու
ես փոխանորդ պատրիարգին Ն՟էմի.
ասա ինձ, զի՞նչ էառ ի քէն Թէյար
օղլուն։ Եւ նա ասէ. զա՟մ զոր ինչ
ունէի՝ էառ յինէն տ՟ր. և զվանս մեր՝
որ ս՟բ Յակոբ ասի՝ տուեալ այլոց՝
կալաւ զիս ընդ իւր խարանօք յար-
գելանս, թէ ահա երթամ առ թ՟գւըն,
և յայնժամ տաց զվանս ձեր ի ձեռս
քո. այլ ես իբրև տեսի զյայտնի ա-
պստամբութ՟ի նորա՝ և որոց ընդ
նմա, ելի ի ձեռաց ն՟ր և փախեայ
այսր յառս ձեր։ Ասէ եպարքոսն. դու
ինքնի՞ն ետուր Թէյար օղլուին զվան-
սըն՝ թէ նա էառ ի քէն։ Ոչ համար-
ձակեալ Եղիազարու ասել թէ հրամա-
նաւ քո եղև այն՝ պատասխանի ետ և
ասէ. նա էր տ՟ր երկրին. և ես զի-
արդ կարէի ընդդիմանալ նմա։ Ասէ
եպարքոսն, կարիցէ՞ երկիր ձեր՝ ձեօք
հանդերձ յանդուգնս։ Ասէ Եղիազար.
բարերջանիկ տ՟ր՝ փառաւո՛ր իշխան՝

զոչ եղեալն արար, որ զհարկն յա-
ւելացոյց, նա և զեկեղեցւոյ իրաւունքն
ևս յափշտակեաց ընդ աթոռոյն, և
թէ՝ զԵրուսաղէմ ի պէրաթ գրեաց,
հարկատու առնէ զնա, ոչ կամիմք.
ժողովուրդք և ռամիկք, դուք ևս ընդ
մեզ լերո՛ւք։ Սպանութեան երդումն
արարեալ, ոմանց զտուն և զորդիս ի
բերան տուեալ, այլոց քսակս և փողս
յիշեցուցեալ, կիսոց՝ եթէ կանգնիմք
յոտին և սպանիմք. և երթային զա-
յին ի տիւան ի կախ ընդ պատ-
րիարգուն՝ յայտնի և ի ծածուկս
մինչև հաճեցեալ լինէին զկամս ախ-
մար փաշային՝ թէ զքսան քսակն մեք
տացուք, և քեզ ևս այսքան, նորա մի
հնար»։

(Ջեռ, Թղ. $244^{\text{ա}}$—$245^{\text{ա}}$)։

Չելէպի, ձեռ. Երուսաղէմի.

« . . . ըմբռնեցին բերին առ վէ-
զիրն. և տանէր առաջի իւր և հար-
ցանէր. դո՛ւ ես պատրիկն Երուսաղէ-
մի. զի՞նչ էառ որդին Թայարի ի
քէն։ Եւ նա ասէ. զի՞նչ և ունէի՝ էառ.
և կրկնեալ՝ թէ զի՞նչ էառ. և նա՝ զմի
անդորրմ ի վերայ իմ յարուցեր, զա-
մենայն ինչ ունէի՝ էառ զվանքն իմ
եւ այլոց և կալաւ զիս ընդ իւր ի կա-
պանս՝ թէ երթամ առ կայսր, և յայն-
ժամ տաց զվանքն քո ի քեզ. և ես
տեսի զվատարախտութիւն նորա և
զապստամբութիւն առ արքայ, և եր-
կեայ և ելեալ փախեայ և առ թեւ
օճախին բնակեայ։ Եւ վէզիրն ասէ.
դու ավեր և նա էառ։ Եւ նա ասէ.
ո՛վ տէր, զի տէր էր երկրին այնմ և
զի՞արդ զիմանայի նմա։ Եւ ասէ վէ-
զիրն. երկրով ձեր ի յանդուգնս ան-
ցէք։ Եւ ասէ վարդապետն. ո՛վ մեծ
իշխան պատուաւոր, քանզի մեծ ես
և ծեր՝ մի՛ անիծեր զերկիր, այլ պա-
տիժ ունիս՝ ինձ արա և ո՛չ ազգիս.
զի ի ներքոյ արեգական փոքրիկ հօտ

մի անխծանեի զեկիր, այլ՝ թափեա զցասումն քո յիմ վ՞ր. միայն խնայեա յազգս իմ՝ աղաչեմ, և արա իրաւունս ի փառս արքայի և ի պատիւ երեսաց քոց. ո՞պ և գիտէ ո՞րութ՞դ» (երես 680)։

Զամչեան.

«. . . Հաղիւ ուրեմն ի հաշտուի՞ եկեալ յերկուց կողմանց՝ միջնորդութ՞ր խաղաղասէր անձանց և խորհրդով Մարտիրոս պատրիարգին՝ գըտին գեղս այսպիսի. իբր զի չորս հազար դահեկան տացէ Եղիազար, և վեց հազար դահեկան՝ վեց եկեղեցիք Կոստանդինուպօլսոյ, և չորս հազար դահեկան քսան և չորս արքն. և այսպէս բաժանելով ի մէջ իւրեանց՝ կամեցան վճարել զչորեքտասան հազար դահեկանսն՝ զոր առեալ էին յայլազգեաց. իսկ զտոկոսիսն այլք յանձն առին վճարել։

«Բայց ժ՞ղովուրդք սկսան գանգատել զՄարտիրոս պատրիարգէ, թէ սարապարտ էարկ զհազարական դահեկանսն ի վ՞ր իւրաքանչիւր եկեղեցեաց. և ոչ կամէին տալ զբաժին իւրեանց. իսկ Ա՞ծատուր վ՞րդ և Եղիազար խրատեցին զն՞ս մի ինչ հակառակիլ՝ հայելով յօգուտ հասարակաց։ Անսացին խրատու ն՞ց երեք եկեղեցիք, բայց երիցունք այլոց երից եկեղեցեաց՝ այսինքն ս՞րյն Նիկողայոսի, Սարգսի և Հրեշտակապետի՝ ընդդէմ դառնային զաւուրս ոչ սակաւս։ Ընդ այս ցասուցեալ Մարտիրոս պատրիարգի՝ արգել ի պաշտամանէ եկեղեցւոյ զերիցունս սր՞յն Նիկողայոսի. զի նոքա առաւել քան զայլս պնդեալ կային, և առաքեաց ի տեղի ն՞ց վեց երիցունս յեկեղեցւոյ ս՞ր Ա՞ծածնի. որք եկեալ կատարէին անդ զժամերգութ՞իս և զայլ կարգս։ Տեսեալ ընիկ երիցանց ս՞րյն

մի եմք ընդ հովանեաւ թեոց ձեռոց ընակեալ. ի գլուխ թագաւորին և քո՝ մեզ իրաւունս արա»։ (Ձեռ. Թղ. 286[բ]—287[ա])։

Չէլէպի, ձեռ. Երուսաղէմի

«. . . Ճարն այս եղեալ, որ հազար հազար զուռուշ յեկեղեցեաց վերայ արկ, որ վեց հազար եղև մի բաժինն, և զչորս հազար զուռուշն ի վերայ Երուսաղէմայ արկ, և զչորս հազար զուռուշն ի վերայ խօճայիցն զի յիւրեանս բաժանեսցեն. և եղև այսպէս։

«Բայց բազում երիցունք և աշխարհականք տրտնջացին զպատրիգէն՝ (Մարտիրոս) թէ անիրաւութիւն արար, որ յեկեղեցեաց վերայ արկ. և որք գիտէին զեղեալն, որ գիրն եւ ի նոցունց էր, սակայն առեալ պատճառ կալան ոմանք և ամենայն եկեղեցի հնազանդեցան և Սուրբ Նիկողոսու իրիցունք՝ ոչ. զորս և արտաքսեաց յեկեղեցւոյն զքսան և չորսն եւ միանգամայն և վեց երէց յԱ՞ծածնէ առաքեալ, որ մշանջենաւոր աղօթս կատարէին անդ, որ յաւուրս տօնի փոխման Սուրբ Ա՞ծածնի եկեալ՝ եղեն երաշխաւոր միմեանց և առին զհազար զուռուշն և ապա մտին յեկեղեցի»։

Ձեռ. Թղ. 296[բ]—297[ա])։

Նիկողայոսի՝ թէ հասք եկեղեցւոյ իւրեանց ի ձեռս այլոց ժողովին, ակամայ կամօք հաւանեցան. և տուեալ երաշխաւորութ՟ի վասն վճարելոյ ըդհազար դահեկանն՝ մտին յեկեղեցին» (երես 685)։

Վերի համեմատութիւններէն, զոր եթէ ուզէինք՝ կարող էինք տակաւին շատ երկարել, բացայայտ կերևի այն մեծ առնչութիւնը, որ ունին Երեմիա Չէլէպիի երկու ինքնագիր հատորները՝ Երուսաղէմի «Օրագրութիւնը»* և Վենետիկի «Տարեգրութիւնը», որմէ մեծ չափով օգտուած է Զամչեան իր պատմութեան Գ. հատորի ԻԲ—ԼԹ ութը գլուխներուն մէջ։

Բայց թէ ժամանակով որը առաջ գրուած է։ Այս հարցին վստահութեամբ կարող ենք պատասխանել, որ Երուսաղէմի ձեռագիրը եղած է նախագաղափարն կամ աղբիւրը Վենետիկի ձեռագրին։ Զամչեանի վկայութեան համաձայն «Տարեգրութիւնը» կը բովանդակէ Չէլէպիի ժամանակակից անցքերու պատմութիւնը, թերևս մինչև իւր մահուան տարին՝ 1695. և այդ պատմութեան շարունակութիւնը գրած է Չէլէպիի մտերիմ ճէվահիրճեան տիրացու Մաղաքիան։ Իսկ Երուսաղէմի ձեռագիրը կը պարունակէ 1648—1662 տարիներու պատմութիւնը միայն։ Ենթադրելով որ գիրքը իւր շարունակութիւնն ունեցած ըլլայ, որովհետև ձեռագրէն յայտնի կերևի վերջէն մասեր ինկած ըլլալը, ստոյգ է սակայն՝ թէ Չէլէպի իր այս հատորը գրած է օրը օրին՝ իբրև յուշատետր միշտ ձեռքին տակ ունենալով զայն։ Ասոր ապացոյց են գրչութեան տարբեր ձևերը՝ երբեմն մաքուր նոտր գիր, տեղ տեղ շատ արագ գրուելուն պատճառաւ անընթեռնլի ըլլալու աստիճան իրար խառնուած, ինչպէս նաև թուղթերու տարբեր տեսակները և թանաքի ոչ—միօրինակ գոյները։

Ձեռագրիս այլ և այլ էջերէն քաղուածաբար առնուած հետևեալ հատուածները բաւական են հաստատելու միայն այս կարծիքը։

ՌՃԱ [1652] Հոկտ. 30.—«Եւ հոկտեմբերի Լ. ին՝ օր կիրակի ի Ս. Հրեշտակապետ եկեղեցին Կաթուղիկոսն (Փիլիպպոս) եպիսկոպոս մի ձեռնադրեաց Գուղատանցի»։

ՌՃԲ [1653]

Մայիս 7.— «Շարաթիս ի կիրակմուտ գնացաք, և օրս Նոխուտճու տղան՝ Մելքիսեդ երէցն կոչեցաւ իշխանացն հետ և հայհոյեաց զօրէնս և զԿաթուղիկոսն»։

« 16.— «Եւ Բ՟շ. իս, որ էր ԺԶ ամսոյն, ելեալ նստաք ի նաւ. գնալ ի Պուրսա՝ ուղևորել զՀոգևոր Տէրն՝ Ներսէս վ՟րդտին Մինասն և Տէր Ոսկեանն, ես և հարազատն իմ»։

» 29.— «Կիրակի՝ Սուրբ Հոգոյ գալուստ, որ ասի Պէնտակոստ, Տէր Պետրոսենք տարան զիս ի Զամլուճան»։

---

* Ղեւոնդ Վարդ. Փիրղալէմեան իր յիշատակագրութեան մէջ՝ թղ. 573ա ձեռագիրս անուանած է «Օրագրութիւն»։ Մենք եւս նպատակայարմար գտանք նոյն անունը պահել.

» 30. — «Առաւօտուս բ՟շի ելաք ի Պուրսայու քաղաքէն գալ ի տեղիս մեր»։

Յունիս 2.— «Ե՟շի օրս եկաք աստ ի քաղաքս մեր»։

Յուլիս 28.— «Ի՟Ը. խս ամսոյ ե՟շի օր եօթն մարդ ի ցից զարկին՝ զող լեալ»։

» 30.— «Եւ շաբաթի օրս գնօխուտի ազան բանադրեցին վասն հայհոյութեան նորա»։

» 31.— «Եւ կիրակի օրս ԼԱ. խս մեր տէզկեահտար Կարապետն և իւր եղբայրն փուռ բռնեցին ի Պըռքչէշմէն. ընդ Տէրտէրին անդ գնացաք ի շնորհաւորել»։

Օգոստ. 25.—«Եւ ե՟շիս ի մեր տան վերի գիհն՝ մօտ ի Լալէլու չէշմէն հրոցք եղև ցերեկիս և շուտ մարեցին»։

Սեպտ. 18.—«ԺԸ. խս կիրակի բարեկենդան. ի Սուրբ Սոփիա գնացաք և ի Ճէպէխանեան, շիրիմս սրբոցն ուխտ արարաք»։

Հոկտ. 19.— «Սուպաշին զՍուրբ Նիկողոս կոխեց և ճէրիմէ առաւ՝ թէ շէնք շինեալ էք»։

» 20.— «Ի. խս ե՟շի Հոգևոր տիրի թղթերն եկաւ օրհնութեան»։

Նոյեմ. 24.—«Ե՟շի՝ թագաւորն ի հին պալատն գնաց կոյս աղջիկ տալով նմա յամուսնութեան։ Այլ չաւուշն մեր թաղին սատկեցաւ»։

ՌՃԳ [1654]

Յուն. 24.— «Գ՟շի զմեր փուռն օրհնեցաք։ Օրերքս զբանտի եղեալ աղջիկն բազում զանիւք ուրացուցին։ Եւ Գաղտասու փաշան եկաւ՝ Մուստաֆան»։

Փետր. 19.—«ԺԹ. խս կիրակի՝ Ոհան Պարոնտէրն եկաւ յԷտրէնու, անդ գնացի»։

Օգոստ. 28.—«Բ՟շի առաւօտուս յանցս ճանապարհին հինգ վեց տեղ մարդիկք էին գլխատած։ Յաւուրս յայսոսիկ խիստ մահ կայր, ամսոյս ԺԵ էն սատկացաւ»։

Սեպտ. 8.— «Ը. խս օր ուրբաթ՝ տօն Ծննդեան Սուրբ Աստուածածնի։ Օրս ի փուռն գնացաք և հասպ արարին և զՎէհրէտն ի տէզկեահ եղին և ես ես»։

» 11.— «Բշ՟խս Ոսկեան վ՟դպան ի մեր եկեղեցիս եկն և օրս զզագի էօքէրքն փոխեցին»։

« 25.— «Բ՟շի քշեցին զմանգուլ եղած զագի էօքէրքն»։

» 26.— «Գ՟շի վէզիրի լեզուն կապեցաւ ի տամլայէ և հիւանդ էր»։

Հոկտ. 18.—«ԺԸ. խս օր դ՟շի մանգուլ արարին զՏէմիրճ Մուհամէտ փաշան և եղին զայմախամ զՄէլէկ Ահմէտ փաշան և ուղարկեցին զմօհրն ի Շամ առ Իփշիրն՝ վէզիրութեան, զի այս արհեստիւս բերցեն զնա ի ներքս»։

Դեկտ. 15.—«ԺԵ. խս օր ուրբաթ՝ Եղիազար վ՟դտն եկն յՈւսկիւտարն, և լըեալ մեր անդ գնացաք ամենայն բարեկամօք, մինչ յիրիկուն զային որք լըւանն, և անդ կացաք զգիշերն և ի գիշերին ելեալ գնացաք ի բաղանիս և անտի՝ ի ժամ, պաշտօն արարեալ և մատաղ արարեալ վ՟դտին»։

ՌՃԴ [1655]

Յուն. 5.— «Ե.ին օր ուրբաթ՝ երեկոյիս Ճրագալուց. ի Սուրբ Նիկողոս

էաք և վ՟դտն (Եղիազար) պատարագեց»։

» 8.— «Բ՟շի օրս Առաջնորդն (Մուղնեցի) զմեր վ՟դտն (Եղիազար) ի պատիւ տարաւ յԱստուածածին»։

Ապրիլ 2.— «Բ՟շի շէհրէմինէ մանգուլ եղած ազան Նեղացուց զմեզ վասն ցորենոյն, զոր ավեալ էին և զըստակն առեալ. այժմս ասէր՝ թէ ոչ առի զըստակն և սուտ և անդ տանէր. և սապիթ արարաք առաջի փաշային, և գնաց նա ամաւթալից»։

Մայիս 26.— «Օրս շաբաթ Էջմիածնի թապախն բռնեցի ի մեր ժամս փոխանակ Մղտեսուն»։

Օգոստ. 9.— «Ե՟շիս Մուրատ փաշան փոխեցին և ետ զմօհրն վէզիրութեան Սուլէյման փաշային Ամթեցոյ՝ որդի հայոյ։

ՌՃԵ [1656]

Մարտ. 31.—«Բ՟շի օրս իմացաք՝ թէ Վ՟դտին (Եղիազար) հախին համար հուճէթ կու հանէ Մուղնեցին՝ թէ տաճիկ է, և լըսեալ զայս վ՟դտին, ի բարկութիւն շարժեալ՝ թէ զայս զապուլ չեմ աներ, թէ ինչ ասացին կամ ինչ բամբասանս՝ Նոքա թող ճիան, բայց այժմ զինչ անուն է այս չար. զայս չեմ զապուլ աներ, շուտով զտէք զգործող սոցին»։

Ապրիլ. 15.—«Եւ օրս պրծայ զտաճկաց եկիֆպէ-ն և մտայ ի Նոր բան, որ կոչի ամմէ. և գէկիֆ-ն ուստ բ՟շի ըսկսայ ի յողորմութիւնն Քրիստոսի ապաւինելով, զի բազում անգամ ի մանկութենէ ի հետ հարկեալ ի ծնօղաց և շատ նախատինս կրեալ վասն բանիս, զի պիտանի էր հանապազ, և այժմ ձեռս արկաք բանիս. միթէ Աստուած յառաջացուսցէ»։

Մայիս 12.—«Օրս զԺԹ. տարին լցի և ի Ի. տարին մտայ....»։

» 18.—« ... երեկոյիս գնացաք ի Սուրբ Նիկողոս և զաս ասաց վ՟դտն (Եղիազար) և ի մէջ զասին անիծեաց և նզովեաց զորդի Գիլէզիկճի Յարութիւնին, որ օրս գնացեալ ի Ղալաթայ և ի ձեռաց ֆռանկացն հաղորդ է առեալ»։

Օգոստ. 21.—«Եւ Ե՟շի օրս մեծամեծք տաճկացն մուշավէրէ առնէին ի Ներսն, վասն զի երկու բան լըւան, մին՝ թէ ֆռանկն զԻլիմլէ առան առեալ և յամենայն կղզեաց խարաճ առեալ բազում, և մինն այս՝ թէ Ղըզըլպաշն եկեալ ի վերայ Գաղատայ պաշարել զնա և զեսպանն Ղըզըլպաշին դարձեալ ի ճանապարհէն, որ գայր աստ»։

Սեպտ. 5.— «Ուրբաթ օրս ձայնեալ թագաւորին զվէզիրն և երթայ ի Ներս և առեալ զմօհուրն տայ Քեօփրուլու Մէհէմէտ փաշային վէզիրութեան»։

» 28.—«Կիրակի Վարագայ Սուրբ Խաչ. ի յԱստուածածին գնացաք, զի Աստուածատուր վ՟դտն Մարտիրոս վ՟դտին զաւազան եսուր հայցմամբ Եղիազար վ՟դտին»։

Հոկտ. 9.— «Ե՟շի ելեալ գնաց Եղիազար վ՟դտն յՈւսկիւտարոյ, վէքիլ արարեալ զնա Երուսաղէմայ և պատրիարգին՝ կամաւ և յօժարութեամբ Երուսաղէմացոց և ամենայն քաղաքիս, զի երթեալ անդ զայտ արասցէ զէմրն և զհրաման թագաւորին, որ էառ աստի»։

Հոկտ. 13.—«Օրս Թորոս կաթուղիկոսն Սըսայ եկն յՈւսկիւտարն»։
Նոյեմ. 11.—Գ՟շի օրս եկն էլչի և դեսպան Պարսից արքայէն առ Թագաւորն և եմուտ ի քաղաքս և ունէր փիղ մի ընդ իւր ընծայ և այլքն ի ծածուկ, և գնաց ի սարայ Սալիհ փաշային»։
» 14.—«Ուրբաթ օրս եմուտ դեսպանն առ վէզիրն և ետ զընծայսն՝ նորա, և վէզիրն մինչև տասն արանց կապա ագուցեալ խիլայելով գնաց և արձակեաց»։
Դեկտ. 9.—«Գիշերս զերազն Երուսաղէմի տեսի, որ Գլխադիր Սուրբ Յակոբն փուռ գոհար եղեալ էր»։

ՌՃԶ [1657]

Մարտ 12.—«Ե՟շի օրս ղալպաղան հայ մի Ղալաթացի կախեցին ի Պարմաղափուն»։
Ապրիլ 29.—«Եւ գ՟շի ի լուսանալ առաւօտուս ի պահու ժամուն, զոր Փառք ի բարձունս ասէաք, աւանդեաց Թորոս կաթուղիկոսն զհոգին իւր առ Աստուած զուարթ երեսօք»։
Օգոստ. 9.—«Կիրակի բարեկենդան Ս. Աստուածածնի. երեկոյիս ութներորդ ժամուս բազում թօփ նետեցին ի վերայ ծովուն»։
Հոկտ. 18.—«Կիրակի ԺԸ. թուղթ եկն մեզ ի կաթուղիկոսէն Խաչատրոյ, զոր ձեռնադրեալ են յուլիսի ԺԷ»։
» 23.—«Ուրբաթի օրս եասաղ արար դայմախամն զզաւուխ և զմէստ՝ սաստիկ հրամանաւ և ամենեքեան զկերպս իւրեանց ցածուցին խոնարհութեամբ յոյժ»։

Առաջ բերուած այս հատուածները, որոնց շարքը կարելի էր դեռ շատ երկարել, կապացուցանեն Չէլէպիի մեր այս հատորին գրի առնուած ըլլալը դէպքերն ու իրողութիւնները տեղի ունեցած օրերուն իսկ, քանի որ, ինչպէս վերը ըսինք, հեղինակը իբրև յուշատետր միշտ ձեռքին տակ ունեցած է զայն. հետեւապէս կեզրակացնենք՝ թէ Երուսաղէմի «Օրագրութիւնը» ժամանակով առաջ է Վենետիկի «Տարեգրութենէն»։ Ցանկալի էր միայն՝ յօդուածիս մէջ առաջ բերուած հատուածները համեմատելով «Տարեգրութեան» մէջ գտնուող համապատասխան մասերուն հետ, ցոյց տալ երկուքին տարբերութիւնները։ Զայս կսպասենք Վենետիկի Մխիթարեան յարգելի հայրերէն։

Երեմիա Չէլէպիի հեղինակութեան արժանի սոյն ձեռագրին վրայ այսքան ծանօթութիւն բաւ համարելով՝ անոր ընդհանուր բովանդակութեան մասին ճաշակ մը տալու համար պատմագէտներու և բանասէրներու, կը դնենք բնագրէն մի քանի հատուածներ։

Հետեւեալը Եղիազար կաթուղիկոսի Պոլսոյ պատրիարքական աթոռը բարձրանալուն և ձեռնարկած բարեկարգութիւններուն նկարագրութիւնն է.

ՌՃԱ [1652] ապրիլ 28.—«Եւ մերայնոցն ըսկսեալ խորհուրդ առնել վասն շինութեան (Ս. Սարգիս եկեղեցւոյն) առ Եղիազար վ՟դպետին, որ էր առաջնորդ և վերատեսուչ այսմ նահանգի և քաղաքիս՝ եկեալ թվին ՌՂԹ [1650] ին։ Եւ էաք մեք ամենայն քաղաքովս անկեալ ի ներքոյ պարտուց իննսուն հազար դուռուշի, զոր արարեալ էր Դաւիթ եպիսկոպոսն Արեւելցի, կապա զգեցեալ ի թագաւորէն հինգ վեց անգամ և բազում դրամս խարճեալ պարտօք և զպարտսն բարդեալ ի վերայ եկեղեցեաց մեր. և այս ամենայն

վասն փառաց և ոչ վասն Աստուծոյ։ Քանզի որչափ զսա աքսորեցին՝ նա այնքան ևս և յայս յետին շունչն հասուց զառաքելական ազգս հայոց։ Եւ ի ժամանակիս յայսմ եկեալ Եղիազար վ՚ղպան քարոզելով զբան աւետարանին ի լսելիս հաւատացելոց և ժողովք առնել վասն վանիցն իւր, որ էր վերատեսուչ Բարձրահայեաց Ս. Աստուածածնի, առնել զպտուղ զաւազանին և զառնել։ Եւ տեսեալ քաղաքացւոցս զսա այր իմաստուն և հանճար առ յամենայն բանս, ի մի վայր գումարեալ երկրորդ և երրորդ անգամ, հարկիւ զսա եդին առաջնորդ և վերատեսուչ, մինչ ճար արասցէ պարտուցն և եկեղեցեացն, որ և եղեն իսկ։ Եւ ի ժամանակին յայնմ Ղարա չաւուշն էր յէնկինչէր աղասի, և մտեալ ընդ նա և սիրելի ոչ սակաւ, և տուեալ նորա դրամ և հանապազ կանխեալ կայր առ նմա, զբազում աւուրս յայսկոյս և յայնկոյս անկեալ, առնէր հնար պարտուցն։ Եւ բազում դրամ շնոր[հ]* ետուր և սուլֆ առնել ետուր ընդ պար[տա]տէրն և զինացեալն գրեաց ի վերայ քաղաքացւոց, դրամ և բստակ գրեալ ուրոյն ուրոյն յեկեղեցին ըստ իւրաքանչիւր կարողութեան, հազար հինգ հարիւր զուռուշէն մինչև ի տասն և հինգ զուռուշն էառ յամենեցունց, մինչ ի քսան և հինգ հազար զուռուշ իջեցոյց զայնքան պարտսն, խրատ և քարոզ տալով, աղաչելով, պաղատելով ժողովրդեանն, և զինացեալն ամենայն եկեղեցոյ ըստ չափոյ բաշխեաց, զի եկած տխարէթէն երթեալ վճարեցին։

«Եւ յետ բանից այսորիկ ըսկսեալ զկարգ եկեղեցեացն որոնել և զայլ ազգիս զանհամութիւն նկատել. քանզի նամակ և թուղթ յուղարկեաց յեկեղեցիսն՝ թէ Ա. Ով ոք իբրիցանց ի յատենի սաղմոսերգութեանց կամ ի կարգեալ ժամակարգութենէ հեղգեալ ծուլացի անպատճառ յամր գալով կամ զրաւելով, ինքն քահանայն լուծցի և զամենայն քահանայական զհասկն նորա աթոռականն տէրունի վայելեսցէ։ Այսմ հրամանացս մտերմաբար կատարողքըն օրհնեալ լիցին ի Քրիստոսէ։ Բ. Դարձեալ պատուէր և հրաման՝ եթէ ով ոք ի քահանայից, թէ զինչ պատճառի ևս, ի մէյխանէ մտանէ, ինքն և իւրեան ծուխ լինող ժողովուրդն նզովեալ եղիցին**։ Գ. Եւ զերգող քնարացն և զխաղաղքն, զոր տանէին ի հարսանիսն մեր ազգիս, և զօրէնսն մեր ծիծաղեալ ընդ խաղս արկանէին, քանզի հրէայ էին և մահմետականս։ Զայսոսիկ խափանեաց և ոչ այնուհետև կարող էին տանելոյ զնոսա ի հարսանիսն։ Դ. Եւ զայնոսիկ, որք կարգէին զզուստր և զորդիսն, յետ ժամուն մօտ կէս աւուրն արբեալ և զռացեալ, այլ և յագեալ մերձ ի պայթիլ՝ ապա երթային ի պսակ, որ և փեսան ևս չկարէր կանգնել ի վերայ ոտից, և այս՝ մեծ անօրէնութիւն, որպէս հրամայեալ են սուրբ հարքն մեր։ Եւ Ե. որ երթային ի պսակ և զճէհէզն բարձեալ մի մի՝ եթէ զինչ և էր՝ թէ ոսկեղէն և արծաթեղէն, թէ պղնձեղէն և թէ ապրշմեղէն՝ առաջի այլազգացն, որ նոքա տեսեալ զանհամութիւն ազգիս, կանգնեալ ալուշ յեայլին. ես և երգօղք քնարաց առաջի երթային երգօք, որպէս վերասացաւ ի սակաւուցս։ Զայսոսիկ արգիլեաց նամակ ուղարկեալ յամենայն եկեղեցիսն՝ թէ յառաջ քան զճաշու

---

* Ուղղանկիւնաւոր փակագծի մէջ առնուած տառերը կամ վանկերը ու . . . նշանակուած մասերը կորուած են ձեռագրին մէջ։

** «Եւ թէ հանդիպեցաւ լինէր յերիցանց որ համրէին Պոլլուսի էնկիւչարին զգենուին զկերպս իւրեանց, որ զգենուին ի դէմ աղային քաս օրինի յուրեանց եւ բերին առ վդպեն. թէ զսամ զսա ի մէյխանան, եւ արգիլէր զնոսա յեկեղեցոյն. զայս (մէկ տող կորուած) զոր ինչ կա . . . ռեւազլուխն նա . . . » (Ծան. Ձէլ.)

ժամուն եղիցի պսակն, և թէ ոք յանդգնի՝ նզովեալ է և զբահանայն արգիլեմք ի քահանայագործութենէ։ Եւ ոչ ոք էր, որ ընդդիմանայր ազդու հրամանի նորա։ Ե. Եւ զհացն մեռելոցն, որ ուտէին ի գինեծախ տեղիսն, և զայսոսիկ արգիլեաց՝ թէ զան և ի տուն մեռելոյն ուտեսցեն զհացն։ Զ. Եւ ի ժամանակի ինչ հարկեալ ի գրագմանց, նեղացեալ և փախեալ ի քաղաքէն՝ եթէ պրծուցէ զինքն. և հասեալ զկնի մեծամեծաց քաղաքին, բազում աղաչանօք բերեալ զնա աստ։ Եւ նա ասացեալ՝ թէ երբ ես ձեզ անսացի և եկի կատարեալ զխնդիրս ձեր, և ես ձեզանէ մի խնդիրս խնդրեմ, որ այսքան ժամանակ ի ձեզանէ մէկ սիրոյ ընծայ մի չէ գնացեալ ի սուրբ մայրս լուսոյ ի Սուրբ Էջմիածինն. այսուհետև թող զանձանակ լիցի։ Եւ զայս արարեալ խորհուրդ ընդ իշխանացն և ինքն թուղթ գրեալ ընդ եկեղեցիսն՝ թէ ծանիք, վեց եկեղեցոյ քահանայք և ժողովուրդք, զի հրամայէ Առաքեալն՝ թէ Ով ոք, որ տնկիցէ այգի և ի պտղոյ նորա ոչ ճաշակիցէ, կամ խաշն արածիցէ և մի ուտէ պարտական. և մեք եթէ ի ձեզ զհոգևորն սերմանեցաք, սոյնպիսի բանք. արդարև այս ամենայն և ես ամենայնի բատ բիւր քանքարի տասկի պարտապան եմք առ ի հատուցանել բիւր բարեաց արժանի սուրբ լուսոյ մօրս և ծնողիս Սուրբ Էջմիածնի, քանզի նա է սկիզբն մեր առ Յիսուս Քրիստոս ի Տէր մեր և կատարումն, և նորին երկնեղուտ մեռոնաւն օծեալ միանամք առ գլուխն մեր Քրիստոս, և ի նմանէ է լոյս երեսաց մերոց, որով արժանաւորիմք տեսանել զլոյս։ Եւ զիա՞րդ կարողանամք հնարիլ յամենայնի յետնեալքս զփոխարէն երախտեացն և շնորհացն հատուցանել, բայց միայն հանգոյն լումայի այրոյն աւանդեալ հաստատեսցուք ի պատիւ գալըստեան Հոգևոր տիրին և հարազատորէն գծաւորականն հատուցանել, այսինքն՝ յամենայն շաբաթի առաւօտուն, ուր Սուրբ Երուսաղէմայ թասախն բանեն, ի նոյն տեղի լուսոյն գանձանակ, այսինքն է՝ թասախ բանել աւանդեցաւ, զի իւրաքանչիւր զիւր սուրբ հաւատոյ և զսիրոյ պտուղ զողորմութիւնն հատուցանելով, զվարձ և զօրհնութիւն անդրանկաշնորհ հարազատիցն ընկալցին ի Քրիստոսէ Աստուծոյ։ Է. Եւ յղեալ թուղթ առ Ներսէս կաթուղիկոսն Սըսայ բազում բանիւք՝ թէ չլինի որ նորա խաթրն մոտիք, վասն Փիլիպպոս կաթուղիկոսին, և նորա հրամանին կանգնիք։ Քանզի զատկիս, որ ՌՃԱ [1652] էր թվական, գնացին երկու կաթուղիկոսքն ի յԵրուսաղէմ՝ երկըրպագութիւն սուրբ տեղեացն. վասն այսորիկ թուղթ գրեալ առ կաթուղիկոսն Սըսայ՝ թէ ընաւ Փիլիպպոսի զխօսսն յառաջացուցեն, և այլ բազում բանս։ Ը. Եւ սոյնպէս յառաջ քան զգնալ կաթուղիկոսին Փիլիպպոսի յԵրուսաղէմ, թուղթ ուղարկեաց յԵրուսաղէմ Աստուածատուր վ՛րդպտին և Խաչատուր վ՛րդպտին, թէ զարարողութիւնն եկեղեցոյ՝ զէջմիածնին ասացէք, որ զայ նա և այնպէս զանէ»։*

(թղ. 31բ—34ա)։

Փիլիպպոս կաթուղիկոս Երուսաղէմէն դարձին կուղևորի Պոլիս, ուր կը ժամանէ 1651 յունիս 20 ին և տասն ամիս ու վեց օր հոն մնալէն յետոյ՝ 1653 ապրիլ 26 ին ճամբայ կելլէ դէպի Էջմիածին։ Հետաքրքրական է կաթուղիկոսին Պոլիս մուտքը և ընդունելութեան հանդէսին նկարա-

---

* «Այլ եւ ի գալն իւր առս զարարողութիւն էջմիածնի ճառսասեաց յեկեղեցիս . . . եղծեալ էր։ Այլ եւ ի պասիւ [Կր]կսին յամենայն եկեղեցիս դաւս,ա[սա.ս]ուես ըլնեաց»։
(Ծան. Զէ.)

գրութիւնը, զոր կը գննենք, ինչպէս նաեւ անոր Մայրաքաղաքը բնակութեան միջոցին պատահած կարեւոր դէպքերը։

ՌՃԱ [1652]

Յունիս 17.—«Ժէ. յն օր Ե՞շի . . . Օրս Եղիազար վ՟դպտն գնաց վեց նաւով հանդերձ իշխանօք քաղաքիս ի դէմ Փիլիպպոս կաթուղիկոսին, և ետ ի տեղն իւր զհարազատն իմ՝ զՏէր Մարտիրոս անուանեալն, որ ի ժամանակէ, յորում այսր եկն Վարդապետն, յայնմ օրէ ծանօթացան միմեանց և ոչ հեռացաւ ի նմանէ, այլ հանապազ կանխեալ կայր առ նա»։

Յունիս 19.—«Եւ ի շաբաթիս եկն Վարդապետն»։

» 20.—«Եւ Ի. յն օր կիրակի՝ տօն Եկեղեցոյ, զդուռ Դաւութ փաշային բանալ ետուն գիշերով և բերին զԿաթուղիկոսն. և իբրև մերձ եղև ի կամարն Սուրբ Գէորգայ՝ ի վերև բաղնեացն, յայնժամ Եղիազար վ՟դպտն ելեալ եկեղեցոյն ընդ առաջ նորա, որ և ես ընչինս և որուպս ամենեցուն կայի առ պապոյն իմ Մղտեսին ի Եաղուպենցն ութեցեալ՝ թէ զգալ նորա լսեալ ելանիցեմք ընդ առաջ։ Եւ զձայնն լսեալ մեր, որ Վարդապետն ել ընդ առաջ խնկօք և մոմեղինօք, դպրօք և սարկաւագօք զգեստաւորեալ, զանկակաւ և ծնծղայիւք, քահանայիւք և անթիւ ուխտիւք։ Եւ Վարդապետն առաջի երթայր՝ յերկու ձեռն կերոն մոմ անվառ և զամբոխն հարկանէր յառաջ երթալ, զի մի նեղեսցեն զԿաթուղիկոսն, որ կային յերկու կողմն յանցս ճանապարհին մինչև ի դրունս եկեղեցոյն՝ մի ի վերայ միոյ անկեալ դեգերեալ կային, զի համբուրեսցեն զաջ Կաթուղիկոսին և կամ միայն տեսցեն զնա։ Այլ սա ոչ թողոյր, երթայր յառաջ և հարկանէր կերոնաւն զամենեսեան մինչ յեկեղեցին մղելով, որ և մի ոգի ոչ համբուրեցին կամ տեսին։ Եւ ի ձայնէ շարականին և ծնծղային յայնմ սահմանացն այլազգիքն ի մի վայր գումարեալ կային ի ճանապարհս, որ և զնոսին հալածեաց զարնելով՝ մինչ ի դրսի բակ եկեղեցոյն, որ առի Մէյտանն։ Եւ մուծաք յեկեղեցին, և տուացին զժամն, և զպատարագն մեծ Ոհան վ՟դպտն արար։ Եւ յետ պատարագին նստել ետուր զԿաթուղիկոսն և լուաց զոտս նորա և զջուր լուացմանն բաժան ծաղկով ի վերայ ժողովրդեանն ցանէր, որք զային մի մի և զոտսն համբուրէին՝ անթիւ և անհամար ժողովուրդք ի վեց եկեղեցոյ քաղաքիս։ Եւ դպիրք և սարկաւագ, քահանայք և վարդապետք յաջմէ և յահեկէ զշարականն ասէին. և հինգ ժամու աւուրն՝ ապա ելաք յեկեղեցոյն։ Եւ կեցեալ անդ Կաթուղիկոսն և պատարագ առնէր ի կիրակէքն, և Եղիազար վ՟դպտն ծանուցանէր ժողովրդեանն՝ թէ զԿաթուղիկոսն մեր մարմնաւոր աչօք տեսեալ եմք և որչափ պարտիմք, որ զԱստուծոյ բարին զիտենամք· քանզի նստեալ սա յաթոռ Սուրբ Լուսաւորչին և այժմ սա է Լուսաւորիչ, ապա հաւատալ պարտիմք. և սորա արժանացն ընծայ և պատիւ առնել։ Եւ ընդ բանիս զային յամենայն կողմանց ժողովուրդք և ինքն մուծանէր զնոսա ի Կաթուղիկոսն։ Եւ յաւուր զալոյ Կաթուղիկոսին նստոյց զնա ի մեծ խուցն,

զոր ինքն ի պատիւ Կաթուղիկոսին յառաջագոյն շինել ետուր գեղեցիկ և մեծամեծ խուցք և տեղիք նստելոյ՝ յամենայն եկեղեցիսն. և առաջի օրն ի Սուրբ Գէորգ անդ նստոյց և որչափ մեծամեծ և իշխանք կային՝ անդ նստան ընդ Կաթուղիկոսին ի հացկերոյթ։ Եւ նոյն օրն Վարդապետն տարեալ ի ներս և համբուրեաց զոտս Կաթուղիկոսին, և Կաթուղիկոսն շնորհակալեցաւ և ասաց՝ թէ տուն քո քեզ շնորհաւոր լիցի, և նստան։ Եւ աւուրքս խարճ հացին Վարդապետն տեսաւ ի քանկէն իւրմէ Եւ յետ չորս հինգ շաբաթու ելեալ գնացին ի Սուրբ Լուսաւորիչ, նոյնպէս և անդ արար զայն պատիւն և զմեծարանս, և չորս հինգ շաբաթու եկեալ ի յԱստուածածին։ Եւ Եղիազար վ՟րդապետն զրզուեալ ի քաղաքացւոց և ի վարդապետաց Կաթուղիկոսին, զի յառ և տուր քաղաքիս խառնեցան նոքա, և վասն այնորիկ ել՝ թէ կերթամ։ Եւ զվանքն յանձնեալ էր ի միաբանքն որ կոչի Բարձրահայեաց Սուրբ Աստուածածին, և միաբանքն զրզուեալ՝ թէ վասն Էր ոչ գաս. վասն որոյ ել և գնաց։ Նոյնպէս և վարդապետքն, որ եկեալ եւ էին ընդ Կաթուղիկոսին, զայս եւ խնդրէին՝ թէ նա երթայ։ Եւ ել նա գնաց իւրով կամաւն՝ յեկեղեցիսն մի մի շաբաթ դաս և քարոզ տալով, և ելեալ գնաց յՈւսկիւտարն։ Եւ եղին քաղաքիս առաջնորդ զՈհան վ՟րդապետն մեծ»։ (Թղ. 34բ—36բ.)։

«Եւ յետ աւուրց ինչ Կաթողիկոսն ի Սուրբ Նիկողայոս եկեղեցին Ոհան վարդապետին մեծի և Ներսէս վ՟րդապետին՝ առաջնորդին Տաթևոյ և Ովանէս Մուղնեցոյն՝ երեք վարդապետին գաւազան տւաւ»։ (Թղ. 37ա)։

«Եւ յետ բանից զՈհան վ՟րդպտն փոխեցին և զՆերսէս վ՟րդպտն եդին առաջնորդ, և նա ոչ եւ կամօք զայս արար Մուղնեցի Ովանէս վ՟րդպն՝ թէ իմ վերայ հանդչի առաջնորդութիւնն, և նա եւ ձգեաց, և հինգ վեց օր Յակոբ տիրացու խաղնատարին վերայ կեցաւ, և անտի առեալ ետուն զմօհրն և զառաջնորդութիւնն Յովանէս վ՟րդպտին Մուղնեցոյ *»։ (Թղ. 37ա—37բ)։

ՌՃԲ [1653]

Յուն. 6.— «Զ. ին օր կիրակի մեռոն թափէք արաւ Հոգեոր տէրն, այսինքն բաժանեաց մեռոն երեք եկեղեցոյս և երեք աւագ երիցունք զգեստաւորեալ և Հոգեոր տէրն ժամարար, և ի ժամանակի ողջունին եւ նոցա, և նոքա մի մի արծաթեղէն աման ըմբռնեալ առին, որ էին աւագ երիցունք՝ Տէր Ոհաննէս Աստուածածնի, Տէր Աւետիսն Սուրբ Նիկողոսու, Տէր Մարտիրոս հարազատն իմ Սուրբ Սարգսի։ Այս եղև ի Սուրբ Նիկողայոսու եկեղեցին»։ (Թղ. 38բ.)։

Ապրիլ 10.— «Թվիս հայոց ՌՃԲ ապրիլի Ժ. Զատիկ և յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Կաթուղիկոսն ի Սուրբ Նիկողոս էր,

* Կ. Պոլսոյ պատրիարքներու ցանկերուն մէջ Եղիազարէն անմիջապէս վերջ նշանակուած է Յովհաննէս Մուղնեցւոյն անունը: Չէլէպիի այս տողերէն կիմացուի՝ թէ Եղիազարի յաջորդող պատրիարքներն եղած են Մեծ Ոհան վարդապետ եւ Տաթեւի առաջնորդ Ներսէս վարդապետ, բայց շատ կարճ ժամանակով: Ուրեմն հարկ է, որ այս երկուքն ալ մտնեն Պոլսոյ պատրիարքներու ցանկին մէջ: Մ. Վ. Ն.

և Լեհցի Նիկոլ եպիսկոպոսն ընդ նմա էր, եկեալ անդէն առ Կաթուղիկոսն՝ հնազանդելով նմա. վասն զի տասն և ութն տարի էր, որ ի մէջ ալեաց տատանէին ազգս հայոց անդ ի Լեհ ձեռանէն սմա, քանզի փակեալ զեկեղեցիս նոցա և զմեռեալսն ոչ տայր թոյլ թաղել ըստ օրինի և զզանձս եկեղեցոյն զամենայն յրուեալ, զկահս և զանօթս և զզգեստն ամենայն ընդ անառակս արբեցութեամբ մինչև ցայժմ (թերի թողած)»։ (Թղ. $39^{բ}$)։

Ապրիլ 26.— «ԻԶ. իս օր գ՟շի ձայնեաց (Կաթուղիկոսն) յամէն եկեղեցոյ նշանաւոր արսն և յեկեղեցին Սուրբ Նիկողոսու. նստեալ յետ ժամուն ի յաթոռ, քարոզ և խրատ ասացեալ և պատուէր բազում, և ես ասաց՝ թէ չորս սուր կայր ի վերայ սրտիս, մէկ՝ այն այրեալ եկեղեցին Սուրբ Սարգիս, որ հնար չեղաւ շինութեան և չտեսի աչօք իմովք զշինութիւնն. և մէկ՝ այն խաչն ի կենաց փայտէն և մեռոնն, զոր ի մի տաճկի քով գրաւ են եդեալ. և մէկ այն՝ որ ի քաղաքիս մէջն ներսեցի և դրսեցի չաւէք ժողովրդականքդ. և մէկ՝ այն աղջիկն, որ աւելի եղև տարի մի, որ ի բանտին է վասն հաւատոյն, և ոչ եղև հնար փրկութեան։ Երկու սուրն ելաւ ի սրտէս և երկուքն մնաց. խաչն և մեռոնն հանեցաք, զներսեցին և զդրսեցին այլ խնդրեմ ի ձեզանէ, որ չյիշէք. բայց երկու սուրն մնաց ի սրտիս, միթէ և նոցա Տէրն ողորմեսցի։ Այլ ես զզանձանակն յիշեաց՝ թէ հաստատուն լիցի. և զառաջնորդն ձեր Յովանէս մ՟դպան ձեզ մի տարի առաջնորդ լիցի, և յետ տարուն՝ զով որ խնդրէք յինէն, զայն տաց ձեզ և ուղարկեցից, և դուք հնազանդ գոլիք յամենայնի։ Եւ վասն հարազատին իմոյ ասաց՝ թէ և Տէր Մարտիրոսն Սուրբ Սարգսայ՝ ինձ վէքիլ և աւագ երէց Սուրբ Էջմիածնայ, որպէս զի ի վերայ զանձանակին լիցի և նորին ձեռամբն հասանիցի ինձ։ Եւ վեց եկեղեցոյ աւագերէց, խորհրդակից մեծամեծ իշխանացն՝ թէ զինչ պատահիցի՝ թիկունք և օգնական առաջնորդին յամենայն գործս։ Այլ ես բանս բազում և օրհնութիւն ետ ամենեցուն և քաղաքիս և արձակեաց ։ Եւ յետ արձակման գնացաք ի քով, և հարազատին իմ ետ մի ապրշմեղէն փիլոն, և Տէր Յովանէսին՝ վարդապետին իմոյ ետ մուխայար փիլոն մի, և ինձ ետ մի փէշկիր մահրամա՝ շինած, Տէր Ոսկանին և Տէր Աւետիսին և Տէր Ոհանին մի մի զօտի գլխոյ»։

Ապրիլ 27.— «Եւ առաւօտուս դ՟շի, որ օր ամսոյն ԻԷ. ելեալ յեկեղեցոյն և գնացաք մտեալ ի նաւ. վեց եկեղեցոյ նշանաւոր և մեծամեծ իշխանօքն հանդերձ գնացաք ի կղզին Ներսէսի Մեծի հայրապետին»։

» 27,— «Ե՟շի երեկոյիս կրկին օրհնեաց զմեզ և ել գնաց ի կղզոյն դէպի Պրուսա քաղաք»։ (Թղ. $40^{ա}$—$40^{բ}$.)։

Կը շարունակենք իրարմէ անջատ քանի մը էջեր այլ ներկայացնել

Ռճե [1656]

Ապրիլ 29.—«Առաւօտուս գ՞շի տէլլալն կանչեց՝ թէ ով որ ծառայ է թագաւորին և գնացն կուռէ, հազարէն մինչև մէկն, մէկէն մինչև ի հազարն՝ թող զպատրաստութիւն տեսնէ, որ երթայ ի սէֆէր. թէ ի Կիրիտ թային անեն՝ նա այն ծովու պատրաստութիւն թող տեսնէ և թէ ի ցամաք Սէյաուն վերայ՝ նա նոյնպէս զցամաքին թող տեսնէ։ Այս եղև ձեռամբ և խորհրդով զօրպաներուն, որ առաւօտուս Հասան աղան ասացեալ Պայմախամին՝ թէ գնա զանձախն հանել տուր, թէ չէ՝ ի գլուխդ բան կայ գալու. վասն այնորիկ զտէլլալն կանչեցուցին։ Եւ յետ ճաշոյին խորհուրդ արարեալ ի միւս կողմն եղեալ մեծամեծքն և գնացեալ առ թագաւորն (Սուլթան Մէհէմմէտ Դ.) և բան եդեալ թագաւորին խրատ տալով, և թագաւորն պծառայսն և զուլումայսն առ ինքն կոչեցեալ. և ի ներսն ի մօտ թագաւորին զխորհուրդն արարին։ Եւ յետոյ ելեալ մուֆտին և ասացեալ յերկու կողմն՝ թէ օրինացն հնազանդ էք և թագաւորին արայմանցն ընդունող էք. և նոքա ասեն՝ թէ այո։ Եւ ի ներսէն թագաւորին սպասաւորք ասեն՝ թէ եկէք ի ներս, և գնացեալ ի ծառայիցն մի գունդ. և նոյն ժամայն վեց ողի սպանեալ և ի դուրս ընկեցեալ ի տես արանցն, որ էին զօրպայքն՝ Շամլի Հասան աղան և Մէհէմմէտ աղան, Տաղլար տէլիսն (բաց թողած)։ Եւ ամենեքեան ցրուեցան և ի Ղօլ շուրջ եկան վէզիրն և աղան և սորա զօլիքն, և եդին քեհեա պէկ զՊէչէճի օղլին, և նա բազում խրատ տուեալ թագաւորին և թագաւորն մի խէթտիշէրիֆ ուղարկեալ ի յօճախ յէնկիչէրացն՝ թէ գլուխ ձեր ձեզ պիտի և զիմ օրհնութիւնս կամիք, որպէս հնազանդ էք եղեալ հարց իմոց թագաւորացն, նոյնպէս մեզ եղերուք և մի ընդունիք դանէծքն իմ։ Այսուհետև թէ չար կայ ի ձեր մէջն՝ հանեցէք, և ով հաշարութիւն անէ՝ սպանեցէք. և այլ այսպիսի բանս։ Եւ աղային ասացեալ՝ թէ դու հանապազ դուրս եկ և զհաշարիքն որոնէ։ Եւ ով որ կայր սիրելի զօրպաներուն մեծամեծք և բարեկամ նոցա մինչև քսանից կամ երեսնից, զնոսա ի գիշերիս սպանեցին և տէլլալն կանչեց երեկոյիս՝ թէ սպահի և էնկիչէրի ամենեքեան թող յիւրեանց տեղն նստին խաղաղութեամբ»։ (Թղ. 151ա—151բ.)։

Մայիս 3.—«Շաբաթ օրս գնացի ի ժամս մեր և պատարագին թուղթ մի եկաւ հասաւ և կարդացին, և էր. հրամանաւ ազդու սուրբ աւետարանին զերատիճան վարդապետութեան և բոլոր տանս Յունաց և ամենայն Հայոց Եղիազար վարդապետէս սիրով և օրհնութեամբ. ծանիք, վեց եկեղեցոյ լեալ քահանայք և ժողովուրդք, որ վասն գանձանակին էջմիածնայ՝ այլ չբանել. քանզի նոքա առեալ զսուրս և զողորմութիւնս մեր, առեալ տան կախարդաց և վհուկաց, որ և ինձ դարան գործել կամեցան՝ հանել ի կենաց. վասն որոյ և այս հրամանաւ մեր եղև, որ և այսուհետև թող բարձցի ի ձէնջ, և եթէ ոք ընդդիմանայցէ, նա է մեր թշնամի, թող գայ տայ զպատասխանին բանաւորաց,

և ի Թագաւորէ կարեմք զիւրեանք ձէրիմել, և այս լիցի ճուռում անօրէն գնացից նոցա։ Եւ ես ոչ բանեցի զԹապախն, և այլն նոյնպէս ոչ կարացին խօսել»։ (Թղ. 153ա)։

Յուլիս 17.— «Եւ օրս (եշ.) սինհոդոս արարեալ ի յԱստուածածին Խաչատուր վ˜դպտն և Մարտիրոս վ˜դպտն, Իգնատիոս վ˜դպտն և Կիրակոս վ˜դպտն, Խաչատուր եպիսկոպոսն և Ղազար վ˜դպտն ի մէջ մեծամեծաց քաղաքիս և աթոռակալաց, և կարդալ ետուն զԹուղթն Կաթուղիկոսին (Յակոբ Դ. Ջուղայեցի). և էր գրեալ՝ թէ քաղաքիդ բանն հանապազ այդպէս է, ես ինչ առնեմ։ Դուք հրաման ունիք ի Թագաւորէն, որ սևագլուխ չնստուցանէք այսուհետև. մի նստուցանէք, և ձեր իշխանաց ձեռն լինի եկեղեցիքն, որպէս և էրն յառաջագոյն. և թէ խնդրէք թէ յաստուստ յայդուստ ձեզ քարոզիչ, առաքեցից զով որ կամենաք։ Եւ ես չգիտեմ զինչ ասացից. ահա երեք տարի է, որ կայր ի միջի ձեր (Յովհաննէս Մուղնեցին), մի բան չկար, այս երեք ամսուս մէջն զինչ եղև, որ այդպէս եղև։ Ծնընդենէն մինչև ցայժմ չորս Թուղթ եկաւ, չգիտեմ՝ թէ զինչ պատասխան տայցեմ, զի միմեանց չի համեմատիր։ Զայս Թուղթ կարդացին և արարին իրաւունք՝ թէ մեք ամենայն վարդապետքս տեղեկացեալ չարութեան Մուղնեցոյն և արարաք դատաստան և բաղում վկայիւք հաստատեցաւ չարութիւն նորա, և արժանի եղև նզովելոյ ի կարգէ վարդապետութեան և ի քրիստոնէութենէ, և ոչ նզովեցաք. և առեալ գիր գրեցաք Կաթուղիկոսին զեղեալ իրսն և զչարութիւն նորին՝ թէ ինքն զնա բանադրէ և լուծիցէ ի կարգէն։ Եւ ահա ոչինչ համարելով զայն ժողով և զայն Թուղթն, յորում ամենայն վարդապետքս կնքեցաք և վեց աթոռակալքն. և այժմ իրաւունք արարէք։ Իրաւունք և դատաստան արարին. որովհետև որ զմեզ ոչինչս համարելով և այսպէս գիր է առաքեր, և նա ես մեզ պէտք չէ, և այսուհետև ոչ յիշեսցի անուն նորա ի պատարագն»։

Յուլիս 19.— «Շարաթ օրս ոչ յիշեցին զԿաթուղիկոսն ի պատարագն, այլ զՍուրբ Լուսաւորիչն յիշատակեցին»։ (Թղ. 176ա—177ա)։

Օգոստ, 1,— «Օրս (ուրբաթ) Խաչատուր եպիսկոպոսն ըմբռնեալ զՇուէճէլն և տարաւ ի մօտ վարդապետքն վասն յիշատակելոյ զՅակոբ Կաթուղիկոսն. և որքան աղէին՝ մի յիշեր, և նա յիշէր խրատով և թևով Թլթլին։ Եւ վարդապետն (Եղիազար) բաղում նախատանօք ի դուրս արար և արհամարհեաց զեպիսկոպոսն՝ թէ զայսպիսին իմ առաջի կու բերես. և ասաց աթոռակալքն և եկեղեցպանին՝ թէ ով որ նորա հետ փոխ առէ և նորա քարոզին յետն աղօթք առէ, և որ երէց զնա ի մահ և ի կեանք տանի կամ տայ կատարել, զնորա փիլոնն առէք, և թէ չառնէք, զձեզ չարաչար բանադրելոց եմ»։ (Թղ. 179բ)։

Դեկտ. 21.— «Կիրակի գնացաք ի յԱստուածածին և Հոգևոր տէրն (Սիսի Թորոս կաթուղիկոսը) դաս ասաց և պատմեաց զեղեալ իրս

Մուղնեցւոյն և կրկին նզովեաց համախոհիւք և մեղադիր եղև Կաթուղիկոսին՝ թէ այն հերձուածող Մուղնեցւոյն աչաց լոյս է գրեր, և զթուղթս չԱրդար Ոհանին, որ վասն Աստուածատուր վ՞դպտին ինչ է գրեալ, և զՊարմախուղն և զՎարդանն յանուանէ կապելով կապեաց և նզովեաց անիծիւք և բանադրանօք. զի, ասէ, զսինհոդոսն իմ կամէին խափանել. Աստուած խափանեսցէ զնոսա հոգով և մարմնով, և որչափ ի մարմնի են՝ ի մէջ ալեաց փորձանաց կայցեն. և այլ բազում բանս այլոցն հաւասարաբար՝ չարեացն և համախոհից նոցա: Եւ ասաց՝ թէ կառաքեմք թուղթ Կաթուղիկոսին մեք և ամենայն վարդապետօքս. թէ չարեացն եա զպատիժն և բարեացն՝ օրհնութիւն և ես քաղաքիս մխիթարական թուղթ և օրհնէք, նա բարի, իմ մեծ եղբայրն է և աչաց լոյս. և թէ կրկին յամառի և զչարն իւր զովէ, նա յայտնի ամենեցունցդ լինի, որ այսուհետև զթեմքն զամենայն ի վերայ Սուրբ Երուսաղէմի աթոռոյն կու կապեմք, որ անտի առնեն զուրբ մեռոնն. և այլ բազում ծանուցում արար զչարութիւնս նոցա ժողովրդեանն բազմաց» (Թղ. 195ա—195բ)։

ՌՃԶ [1657]

Մարտ 21.— «Շաբաթս ի մէջ տիւանին յամեցին և մուշավէրէ առնէին վասն հոռոմի թղթին: Եւ վէզիրն մտեալ ի թագաւորն թախծիս առնել, և թագաւորն մեծաւ սաստմամբ ասէ՝ թէ ազգաւ ջնջեցի: Եւ յետ տիւանին վէզիրն ձայնեալ զպատրիգն հոռոմոց քաղաքին, և հարցեալ ընդ նա՝ թէ կնիքս քո՞ է. և նա ասացեալ՝ թէ իմէ. և ապա բացեալ զթուղթն՝ թէ այս ինչ խայինութիւն է, զոր առեալ ես Ֆանդի սա ուղարկեալ թուղթ առ Մոսկոֆ և առ Պուղտան՝ թէ ահա տաճիկքս այսպէս նուաստութիւն ունին և կամին գալ ի վերայ ձեր պատերազմ, պատրաստ կացջիք, և զլեհ ի միջոյ ձերմէ վերուցէք, և ամենեքեանքդ մի լինելով՝ հեշտ լիցի աստ ի վայր գալ, և այլն բանս: Եւ զայս թուղթ գտեալ սոցին, երեք օրս առաջի իւր վէզիրն, և նա եկեալ այն ճոխութեամբ գնացեալ, որպէս օրէն էր նորա, և ուրախութեամբ, որպէս զի պատկեսցէ և պարգևս ինչ տացէ նմա բարութեան՝ ըստ առաջին բանիցն: Եւ վէզիրն յառաջ զկնիքն նմին ցուցեալ՝ թէ քո՞ է այս. և նա ասէ թէ իմ է: Եւ ցուցանէ անդ մեծամեծաց և իշխանացն վուզարային, և տայ ի ձեռս սուպաշուն տանել ի բանտս մահապարտաց: Եւ ի մօտ երեկոյիս քան զժամն յառաջ յետինքի՝ ատեան բերեալ սուպաշուն և հասսապաշուն՝ մեծաւ սաստմամբ ի բանտէն, և մունետիկն առաջի նորա աղաղակելով գնայր՝ թէ թագաւորին խայինութիւն առնողին պատիժն այս է, և լսեն լինողին պատուհասն այս է: Մինչ ի տեղի կախաղանին ի մէջ փողոցին և ի մէջ շուկայիցն անցեալ, տարեալ ձեռան ի կապ և չուան ի պարանոցն և ի գլուխն վեղարն իւր. նոյն կերպիւն և հանդերձիւն և մուշտա-

կան և վեղարան բերեալ ի սահմանս միջի քաղաքիս, որ ասի Պարմաղղափու, կախեցին՝ և աշխարհս ամենայն ի տեսս նորա գնացին՝ թէ պատրիարգն հոռոմոց լրտեսութիւն արարեալ և սատեն կախեալ»։

Մարտ 22.— «Եւ յետ կէս աւուրս եկեալ դահճն զպատրիարգին կախելոյ զհանդերձն զամենայն առեալ ի վերայէն և մերկացուցեալ լոկ, թողոյր միայն վասն ամօթոյն զվարտիքն և զզտակն իւր վեղարան, որպէս զի տեսողացն յայտնի լիցի՝ թէ այն է կախաղանին։ Եւ օրս էր ծաղկազարդ և գալուստ Տեառն մերոյ Քրիստոսի»։

Մարտ 23.— «Բ՞շխս և աւուրքս որոնէին և զմեծամեծս՝ հոռոմոց և զպատրիգն ևս Երուսաղէմայ, զի փախան յորմէ այս գործեցաւ, վասն զի համախոհիւք են արարեալ զբանս։ Եւ օր բ՞շխս քանզի երեք օր եղև ի կախաղանին, հրաման տայ վէզիրն սատտկարար, զի զպատրիարգի մարմինն առցեն ի վայր և յազգաց նորին ոչ որ մի մօտեսցէ անդ կամ երևեսցի, այլ չորպաճին այնմ սահմանին տայ առնել զնա ի վայր, և եդին ի վերայ համալի և տարեալ ի Ղումգափուն, արկեալ ի ծովն և չուան կապեալ ի վարտիցէն քաշէին զնա նաւավարքն մինչև ի մէջս ծովուն, և քար կապեալ ի պարանոցն ընկղմեցին ի խորս ծովուն։ Եւ աւուրքս վէզիրն յամենայն տեղիս մարդ եդ, զի զփախուցեալ հոռոմքն գտցէ, և զոմանս որ եգիտ, եդ ի բանտս մահապարտաց, և զոմանս եգիտ ի ծառայից փախուցելոցն և անդ եդ, և մունետիկ ձայնեալ ի մէջ շուկայիցն եթէ հայ եղողքն զփակեալս իւրեանց խառ կապեսցեն որպէս և են, և հոռոմքն՝ կապուտ։ Եւ էին հոռոմքն յահ և ի դողումն ամենայն ազգաւն իւրեանց սոսկացեալ, կարծեցեալ՝ զուցէ զամենայն ազգս ի սուր մաշեսցեն, և ոչ ելանէին յերեսս մարդոյ, և ի նշանաւոր արանց նոցա խափանեալ կէին ի տունս իւրեանց և ոչ գիտէին զելս իրացն իմանալ՝ թէ զինչ լինիցի. և ի բերանս ամենեցուն այս էր խօսք՝ եթէ ի զատկէ կիրակիս զբանտարգեալ հոռոմսն կախելոց են, զի յոյժ աղճատեցաւ անունն և տարածեցաւ ի տէրութիւնս և յիշխանութիւնս տաճկաց և յամենայն ի թագաւորութիւնս՝ թէ ազգն հոռոմոց զայս ինչ գործեալ են» (Թղ. 204ա—206ա)։

Յուլիս 22.— «Դ՞շի օրս թագաւորն ի կերպ շրջող քաղաքականի եղեալ և շուրջ եկեալ ամենայն քաղաքս տեսանէր՝ թէ զի՞նչ կայ. և հանդիպեալ ի ճանապարհին, ընդ որ անցանէր ի շուկայսն և գտեալ զմի ոմն, որ խմէր մուխ, զնա անդէն սատակեցուցեալ, և անցեալ գնայր։ Եւ գնացեալ յեզր քաղաքին, որ է հանդէպ ծովակին՝ ի կողմս արևմտեան հիւսիսային, որ ասի էյուպ Սուլթան, զոր անդ կայ իւրեանց տեղի ուխտից, անդ ևս գտանէ զմի ոմն, որ խմէ մուխ, և զնա ևս անդ սպանանէ, բաժանէ զգլուխն ի մարմնոյն՝ ոչնչացուցեալ և արկանէ ի ծովն, քանզի եէնկիչէրի ասին զոլ։ Այս էր ջան թագաւորիս մեր վասն մխին

յոյժ յոյժ. բայց կեսարոսքն և իշխանքն ոչինչ փոյթ առնէին վասն այսմ կամաց Թագաւորին, քանզի նա ոչ ելանէր հանապազ, այլ երբեմն ելանէր, և վասն այնորիկ ոչ ելանէր ի գլուխ. և յորժամ տեսանէր զայն՝ յոյժ տագնապէր։ Եւ հրամայեաց զի մունետիկն յամենայն քաղաքս աղաղակեսցէ. Վա՜յ լինիցի այնմ մարդոյ, որ ի ձեռս ունիցի գնա, կամ արբցէ և կամ ծխեսցէ ի շուկայսն»։ (Թղ. 226ա—226բ)։

Յօդուածի մը ամփոփ սահմանը չթոյլատրեր աւելի երկարել՝ շահեկան ու հետաքրքիր ուրիշ էջեր տալով ձեռագրէս։ Արդէն տպագրութեան համար պատրաստած ունինք Երեմիա Չէլէպիի այս գործը, ինչպէս նաև Գրիգոր Կամախեցի կամ Դարանաղցի վարդապետին «Ժամանակագրութիւնը». ոչ նուազ հետաքննութեան արժանի հատոր մը, որոնք երկուքը միասին՝ ներածութիւններով, ծանօթութիւններով, ցանկերով ու բառարաններով պիտի բաղկանան մօտաւորապէս 1200 երեսներէ։ Երուսաղէմի համար գեղեցիկ առիթ մ'էր, որ հայկական տառերու գիւտի 1500՝ և տպագրութեան 400 ամեայ յոբելեաններուն ի յիշատակ այս երկու գործերը, կամ գոնէ մէկը, ի լոյս ընծայէր և առով ինքն ալ մասնակցէր համազգային ընդհանուր մեծ տօնին։ Զայս կսպասենք Երուսաղէմի միաբանական Վարչութեան աննախանձ բարեյօժարութենէն. հակառակ պարագային՝ արդեօք կընայինք յուսալ, որ արտաքին նիւթական աջակցութիւն մը ի կատար ածէր մեր այս բաղձանքը, որ շատերուն ալ բաղձանքն է, ինչպէս կը յայտնեն ազգային ծանօթ բանասէրներէ մեր ստացած կարգ մը մասնաւոր գրութիւնները։

Մեսրոպ վարդ. Նշանեան

Երուսաղէմ, 28 փետր. 1913.

ԶԱՔԱՐԵԱՆ (ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ) ՏՈՀՄԻ ԾԱԳՈՒՄԸ, ԳԱՂԹԸ ԴԷՊԻ ԶՈՐԱԳԵՏ ԵՒ ՆԱԽՈՐԴՆԵՐԸ·

ԺԱ–ԺԲ դար.

Տասնմէկերորդ դարու առաջին կիսում Շիրակի Բագրատունի թագաւորների իշխանութիւնը քայլ առ քայլ դիմում էր դէպի իր անկումը. Բիւզանդական կայսրների և մահմեդական գերիշխողների երկարատև կռիւները՝ Այրարատն իրանց տիրապետութեան ենթարկելու, միւս կողմից հայ աւագանի իշխանների ներքին խռովութիւններն ու անջատողական ձգտումներն աւելի ևս արագացնում էին այդ անխուսափելի անկումը։ Անւոյ վերջին Բագրատունի թագաւորները զուրկ էին մասամբ քաղաքական անկախութիւնից, զինուորական ուժը ջլատուած էր, ուստի չէր նախատեսւում որևէ հնար այդ կործանումը յետ կասեցնելու։ Երկրի այդ երերուն վիճակը տեսնում էին շատերը, որոնք գուշակելով գալիք չարիքներն ու աւերածութիւնը, ձգտում էին որոնել մի խաղաղ անկիւն. սկսւում է գաղթը՝ նախ փոքր և ապա մեծ չափով դէպի հարևան երկիրները, որը տևում է մի քանի դար շարունակ այլ և այլ ընդմիջումներով։ Հայերի մի մասը դիմում է Հայաստանի հիւսիսային կողմերը՝ դէպի Վրաստան, ուր կեանքի և գոյքի քիչ ու շատ ապահովութիւն կար։ Այրարատեան նահանգից հայերի մի մեծ գաղթականութիւն դիմում է դէպի վրաց երկիրը առաջին անգամ վրաց Դաւիթ Վերաշինող թագաւորի օրով 1120—1124 թ., շնորհիւ այն հանգամանքի, որ այս հանճարեղ թագաւորը երկարատև կռիւներ մղելով մահմեդականների դէմ՝ հեռացնում է վերջիններին Վրաստանի սահմաններից և երկրի ապահովութիւնը վերականգնելով՝ զբաղւում է երկրի վերաշինութեամբ։ Հայ գաղթականները Վրաց աշխարհում և Հայաստանի հիւսիսային սահմաններում ապաստանարան են գտնում. Դաւիթ Վերաշինողն առանձնապէս հովանաւորում էր նոցա. հայերից շատերը վրաց զօրքի մէջ են մտնում և իրանց անձնական արժանաւորութեամբ հասնում են բարձր և պատասխանատու պաշտօնների։ Սկսած 1124 թ. վրաց թագաւորները ձգտում են տիրել Այրարատեան նահանգին. Դաւիթ Վերաշինողն առաջինն է լինում, որ այդ ուղղութեամբ առաջ գնալով՝ մասամբ միայն հասնում է իր նպատակին՝ գրաւելով Անին. Թէև այդ տիրապետութիւնը տևում է միայն երկու տարի (1124 թ.—1126), բայց այն օգուտն է ունենում, որ Այրարատի բնիկ հայ-*

* Բագրատունեաց թագաւորութեան կործանումից յետոյ Բիւզանդացոց կառավարիչները հազիւ են կարողանում Անին պահպանել իրանց իշխանութեան ներքոյ մինչեւ 1064 թ. 1064 թ.—1077 թ. Սուլթան Ալփ-Արսլան Ադուդ-ադ-դին Աբու Շուջա խլում է բիւզանդացիներից Անին եւ ինքը կառավարում։ 1077 թ. Շեդդադին Աբուլ-Սվար Անին գնում է եւ տալիս իւր փոքր որդի Մանուչէհին (Стэнли Ленъ Пуль „Мусульм. Династіи" ст. 294). 1124 թ. Անին նուաճում է Վրաց Դաւիթ Վերաշինող թագաւորը եւ յանձնում Աբուլաթին ու սորա որդի

*երը վարանման դրութիւնից ելնելով աշխատում են զէնքով օգնել՝ Վրաց բանակին և իրանց երկիրն ազատել մահմեդական իշխողներից. և դա շատ բնական էր, որովհետև այդ ժամանակներում Վրաստանը միակ քրիստոնեայ պետութիւնն էր Հայաստանի հիւսիսում, որն ազգային փառաւոր կեանքի նշաններ էր ցոյց տալիս։ Վրաց Թագաւորների քաղաքականութիւնն աւելի գրաւիչ էր հայերի, մանաւորապէս հայ իշխանների, համար այն տեսակէտից, որ Վրաց Թագաւորները գրաւելով Հայաստանի զանազան գաւառները, մեծ մասամբ հայ իշխաններից էին նշանակում կառավարիչներ այդ գաւառների. բացի դորանից նոքա առանձնապէս հովանաւորում էին հայերին, նուիրաբերութիւններ էին անում հայոց վանքերին, որով և գրաւում էին հայերի սիրտը։ Այսպիսի միջոցներով և հեռատես քաղաքականութեամբ Վրաց Թագաւորները կարողացան իրանց իշխանութեան ներքոյ պահել Հայաստանի մի քանի նահանգները մօտաւորապէս մի դար (1124—1227թ). և հայ զօրքի ու զօրապետների աջակցութեամբ ընդարձակել Վրաստանի սահմանները և սարսափ ազդել մահմեդականներին։ Ահա այդ ժամանակ Վրաստանում գործող հայ զօրապետների ամենանշանաւոր պատմական դերը կատարեցին Զաքարէ և Իւանէ Երկայնաբազուկները։***

Երկայնաբազուկների տոհմի և մանաւորապէս Զաքարէի և Իւանէի կատարած պատմական դերը շատ մեծ է թէ Մեծ Հայքի թէ Վրաստանի համար. մի կողմից նոքա օգնեցին Վրաց Թագաւորներին տարածելու իրանց գերիշխանութիւնը մինչև Պարսկաստանի հիւսիսային նահանգները, Մեծ Հայքի հարաւային մասերը, Վրաստանից դէպի արևելք և մինչև Սև ծովի ափերը և այդպիսով նեցուկ եղան Վրաց Թագաւորութեան բարգաւաճման և նոցա հզօրանալուն, միւս կողմից նոքա Մեծ Հայքի խաղաղութիւնը վերականգնեցին և նեցուկ եղան հոգևոր կեանքի վերածնութեան։ Նոցա օրով և մանաւորապէս նոցա միջոցով կառուցուեցան հոյակապ տաճարներ, ամուր բերդեր, պալատներ և ղամբարաններ և առատ նուիրաբերութեամբ ապահովուեցան վանքերն ու եկեղեցիները, ուր սկսեց եռալ հոգևոր կեանքը։

Երկայնաբազուկների տոհմի ծագման մասին եղած պատմական տեղեկութիւնները բաւական շփոթ և հակասական են. չը նայելով այն հանգամանքին, որ թէ մեր պատմագիրները, թէ Վրացի տարեգիրները և թէ մեծ քանակութեամբ մեր ձեռքը հասած արձանագրութիւնները բաւական չափով տեղեկութիւններ են հաղորդում այդ տոհմի իշխանների կատարած գործերի մասին, բայց տարբերւում են էական մասերում։ Զաքարէ և Իւանէ զօրապետների համարեա ժամանակակից պատմագիր Վարդան պատմիչը Երկայնաբազուկների տոհմի ծագման մասին հետևեալն է պատմում. «Ցաւուրս ժա-

---

Իւանէին կառավարելու: Քարթլիս Ցխովրեբա հատ. I էջ 252։ 1126 թ. Անին կրկին անցնում է Շեդդադեաններին: 1161 թ. Անին վերցնում է Վրաց Գէորգի III-ը, իսկ 1165 թ. ստիպուած է լինում տալ Սելջուկ Արսլան Շահին. 1174 թ. Գէորգի III-ը կրկին նուաճում է Անին, որն եւ երկար ժամանակ մնում է Վրաց ձեռքին:

* Հայ պատմագիրները «Երկայնաբազուկներին» երբեմն անուանում են «Զաքարեան» այդ տոհմի նախորդներից մէկի անունով. Վրաց տարեգիրները կոչում են «Մխարգրձել», որ բառացի նշանակում է «Երկարաթիկունք» կամ «Երկար ուս» ունեցող: «Երկայնաբազուկ» կոչումը յարմարեցրած է Ռուսաց ,,Долгорукій" կոչման վերջին դարերում, որովհետեւ XVII-դ դարու սկզբին մենք չենք պատահում այդ ազգանուան արձանագրութեանց մէջ. մենք վերապահութեամբ գործ ենք ածում «Երկայնաբազուկ» բառը:

ժամանակաց այսոցիկ էին փառաւոր իշխանք Զաքարէ և Իւանէ, որդիք Սարգսի՝ որդւոյ Վահրամայ, որդւոյ Զաքարէ որդւոյ Սարգսի ի քրդազգէ հատուածեալ ա․ [illegible], որ Բաղդատունեաց ազգն է, հաւատացին ի Քրիստոս և պատուեցան*» Կիրակոս Գանձակեցու պատմութեան մէջ գըտնում ենք հետևեալ տեղեկութիւնը. «Յաւուրս ժամանակաց թագաւորութեանն Լևոնի Հայոց արքայի էին յԱրևելս երկու եղբարք, որդիք Սարգսի բարեպաշտ իշխանի, որդւոյ Վահրամայ, որդւոյ Զաքարիայ, որ հատուածեալ ի Քրթաց ի Բաբիրական խելէն, անուն առաջնոյն Զաքարէ, և երկրորդին Իւանէ»։** Այս երկու պատմագիրների տուած տեղեկութիւնները համաձայնւում են հետևեալ կէտերում. Նախ որ երկուսն էլ Զաքարեան (Երկայնաբազուկ) տոհմը համարում են քրդերից բաժանուած, զատուած կամ այլ խօսքով ազգով քուրդ և երկրորդ՝ այդ տոհմի նախորդների կարգը պահպանուած է նոյնութեամբ մինչև Զաքարէ (մեծը)։ Կ. Գանձակեցին մի յաւելում ունի միայն «ի Բաբիրական խելէն». «Բաբիր» բառը մեզ պատահում է առաջին անգամ Ախեմենիդեան արձանագրութիւնների մէջ, ուր գործ է ածուած Բաբելոն մտքով. Թէ յիրաւի Կ. Գանձակեցու «Բաբիր» բառը պէտք է ընդունել իբրև Բաբելոն, այդ մասին մի քանի լրացուցիչ տեղեկութիւններ է հաղորդում Զաքարիա Սարկաւագի պատմութիւնը, որի մեծ մասը, նոյն իսկ պատմագրի վկայութեամբ, քաղուած է Կ. Գանձակեցու պատմութիւնից. «Ի յերկրին Բաբելացւոց՝ այր մի քրիստոնեայ՝ Զաքարիա անուն՝ կարգեալ իշխան յազգէն Մարաց, և վշտացեալ ի նոցանէ, ոչ կարաց կեալ անդէն։ Եւ գտեալ ժամանակ, առնու ամենայն ընդոծինս, ծառայս և աղախինս, ախու-բանակի իւրոյ հատուածեալ ի Բաբելական երկրէն, անկանի առ տէրութիւնս Պարսից։ Եւ անտի գնայ մեղմով և մտանէ ի սահմանս Հայոց, և գնայ յերկիրն Վրաց».*** Զաքարիա Սարկաւագի հաղորդածից պարզ երևում է, որ նա Կ. Գանձակեցու պատմութեան մէջ յիշած «ի Բաբիրական խելէն» բառերը հասկացել է «ի Բաբելական երկրէն»։ «Խել» բառը պատահում է քըրդերէն լեզուի մէջ և նշանակում է իջևանատեղի, գաւառամաս և ընդհանուր մտքով երկիր։ Այսպիսով Երկայնաբազուկների սկզբնական բնակավայրի մասին եղած պատմական տեղեկութիւնները թէ Վարդան պատմիչը և թէ Կ. Գանձակեցին տալիս են իրար համանման։ Զննելով այն հանգամանքին, որ Զաքարիա Սարկաւագը վերոյիշեալ դէպքերը քաղում է Կ. Գանձակեցու պատմութիւնից, բայց նա տալիս է մի քանի մանրամասնութիւններ Երկայնաբազուկների գաղթականութեան մասին, որ ուրիշ որ և է մի պատմագիր չէ հաղորդում. դժբախտաբար հնարաւորութիւն չըկայ ստուգելու նորա այդ աղբիւրը, բայց անկասկած է, որ ներկայ դէպքում նա օգտուել է աւանդութիւններից, ուր պատմական դէպքերը քիչ փոփոխութեան են ենթարկուել. Երկայնաբազուկների մի քանի սերունդների ներկայացուցիչների անունները մոռացուել և ժամանակագրութիւնն էլ շփոթուել է։ Այսպէս ըստ Զաքարիա Սարկաւագի Երկայնաբազուկների գաղթը դէպի Հայաստանի սահմանները տեղի է ունեցել Զաքարէ I-ի օրով.† մինչդեռ մենք յետոյ կը տեսնենք,

* «Պատմութիւն Վարդանայ վարդապետի» 1861 թ. Մոսկուա. էջ 184

** «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդ. Գանձակեցւոյ». 1858 թ. Մոսկ. էջ 94.

*** Պատմութիւն Զաքարիա Սարկաւագի 1870 թ. Վաղարշապատ հ. III էջ 11—12.

† Նոյնը.

որ արձանագրութիւնները պարզապէս վկայում են, թէ այդ Զաքարէ I-նի հայր Աւագ Սարգիսը և պապ Խոսրովը նմանապէս եղել են Հայաստանում և որ դոցա գաղթականութիւնը աւելի առաջ է տեղի ունեցել։

Վրաց տարեգիրները այլ ծագում են վերագրում Երկայնաբազուկներին. խօսելով Զաքարէ (II-դ) Ամիր սպասալարի մահուան մասին՝ Թամար թագուհու պատմագիրը շարունակում է «Րոմելի [Զաքարիա] իգո նաթեսաւիթ արտաքսեսի խել—գրձելիսա».* [Որն (Զաքարէ) էր Արտաքսերքս Երկայնաբազուկի ցեղից]։ Վրաց պատմագրի այս տեղեկութիւնը հիմնուած չէ որևէ մի փաստի վերայ և չէ կարող պատմական արժէք ունենալ մեզ համար, որովհետև եթէ հայ Երկայնաբազուկները պարսից յայտնի աշխարհակալ Արտաքսերքսի** ցեղից լինէին կամ այդպիսի մի աւանդութիւն գոյութիւն ունենար, անշուշտ մենք այդ մասին տեղեկութիւններ կըգտնէինք կամ Հայոց պատմագիրների մէջ և կամ յիշուած կըլինէր այն բազմաթիւ արձանագրութիւնների մէջ, որ Երկայնազուկների նախորդներն են թողել Հայաստանի զանազան վայրերում. միւս կողմից անհնարին է ենթադրել այդ ցեղակցութիւնը և թոյլ տալ, որ Քրիստոսի ծն. յետոյ XII դարում ապրող մի տոհմ սերուել է Քրիստոսի ծն. V դար առաջ ապրող Արտաքսերքսից, այդքան երկար ժամանակ այդ տոհմը գոյութիւն է ունեցել, աւանդութեան մէջ մինչև իսկ պահպանուել է դոցա ծագման պատմութիւնը, իսկ այդ տոհմի ներկայացուցիչները ոչ մի պատմական դեր չեն կատարել։ Վրաց պատմագրի այդ սխալը յառաջացել է նորանից, որ Արտաքսերքսի մականունը «երկայնաբազուկ» է եղել. այդ արտաքին, բայց և ոչ ճիշտ, նմանութիւնից*** պատմագիրն եզրակացրել է, թէ հայ Երկայնազուկները նշանաւոր աշխարհակալ Արտաքսերքսի ցեղիցն են։ Պատմագրի հաղորդածը մեզ համար մի նշանակութիւն միայն կարող է ունենալ, այն որ Երկայնազուկները ծագումով հայ չեն եղել և գաղթել են Հայաստանի հարաւարևելեան երկրներից։ Բացի այս բոլորից Հաղարծին վանքի տաճարի դրան վերևը, դրսի կողմից, Իւանէ Աթաբէկ Երկայնաբազուկը թողել է մի արձանագրութիւն, առանց թուականի, ուր յիշուած է, թէ ինքը «Բագրատունեաց ցեղիցն» է. † բայց այս կոչումը պիտի հասկանալ այն մտքով, որ Զաքարեանները Զորագետ գաղթելուց յետոյ՝ խնամէական կապերով միանում են Կիւրիկեան կամ Կորիկեան թագաւորների հետ, իսկ վերջիններս Հայոց Բագրատունի թագաւորների ցեղիցն էին

* «Քարթլիս Ցխովրեբա» հրատ. Բրոսէի հ. I. էջ 332

** Արտաքսերքս I-ինը Պարսից Քսերքսես I-ի որդին էր, թագաւորել է 465—424 թ. Քրիստոսի ծն. առաջ.

*** Արտաքսերքսի համար Վրաց պատմագիրը գործ է ածում «խել-գրձելի» (երկայնաբազուկ), իսկ Զաքարեանների համար՝ մխար գրձելի (երկարաւս կամ թէ ինչ ազաս թարգմանենք՝ լայնաթիկունք), որ նոյնանիշ չեն. բացի դորանից թէ Թամար թագուհու եւ թէ Գէորգի III-ի պատմագիրների տուած տեղեկութիւնների հիման վերայ պարզապէս կարելի է ենթադրել, որ Զաքարեանների «Երկայնաբազուկ» (մխար գրձելի) կոչումը հնուց գոյութիւն չունի եւ ոչ մի կապ չունի Արտաքսերքսի կոչման հետ։ Վրաց պատմագիրն այդ կոչումը վերագրում է միմիայն Ամիր սպասալար Սարգսին, Զաքարէի եւ Իւանէի հօր, իսկ վերջիններիս անուանում է որդի կամ որդիք Լայնաթիկունքի «(Երկայնաբազուկի, Քարթլիս Ցխովրեբա հ. I. էջ 266, 273 282 եւն.»), ուրեմն «Մխարգրձելի» (Երկայնաբազուկ) [illegible] Ամիրսպասալարի մականունն էր, իսկ վերջինս հանգել է գալիս 1161—1186 թ.

† «Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ» Յ. եպ. Շահխաթունեան 1842 թ. հ. II էջ 370.

և իրանք էլ Բագրատունի էին կոչւում. այսպէս Զաքարէ և Իւանէ Երկայնաբազուկների քոյր Նանան ամուսնացած էր Կորիկեան Թագաւոր Աբասի (II-դի) հետ. մինչև իսկ Նանան իրան համարում էր Բագրատունեաց ցեղից,* երևի այն մտքով, որ ինքն ամուսնացած էր Բագրատունի Թագաւոր Աբասի հետ։ Զաքարեաններից ոչ մէկը, բացի Իւանէից և իւր քոյր Նանայից, ոչ մի արձանագրութեան մէջ իրան Բագրատունի չէ կոչւում։ Վրաց այդ շրջանի պատմագիրները սիրում են առհասարակ նշանաւոր գործիչների բարձր ծագման մասին քիչ ու շատ տեղեկութիւններ հաղորդել՝ կամենալով ցոյց տալ, թէ ինչպէս վրաց արքաները մի առանձին համակրանք էին տածում դէպի բարձր ծագում ունեցող իշխանները. և եթէ Զաքարեանները Բագրատունի ծագում ունենային, նոքա երբէք չէին զլանալ այդ մասին յիշելու, մինչդեռ մենք վերը տեսանք, որ նոքա բոլորովին այլ ծագում էին վերագրում Զաքարեաններին։

Մի քննական հայեացք ձգելով վերոյիշեալ պատմագիրների և արձանագրութիւնների հաղորդած տեղեկութիւնների վերայ, գալիս ենք այն եզրակացութեան, որ Կ. Գանձակեցու և Վարդան պատմիչի հաղորդածները՝ Երկայնաբազուկների կամ Զաքարեանների ծագման և գաղթականութեան մասին, մասամբ միայն մօտ են ճշմարտութեան և որ վերջիններիս նախորդները սերուել են քրդերից, գաղթել են Բաբելոնի կողմից, սկզբում բնակութիւն են հաստատել Ջորագետում, ուր և ընդունել են քրիստոնէական կրօնը՝ ըստ Հայոց եկեղեցւոյ դաւանութեան։** Կասկածի տեղիք է տալիս աւելի շատ Զաքարեանների քրդերից սերուելը. իսկապէս պատմութեան մէջ յայտնի չէ մի այնպիսի դէպք, որ քրդերի որ և է մի տոհմ խաղաղ կեանք վարելու համար գաղթէ ոչ թէ Հայաստանի հարաւային կամ մինչև իսկ միջին գաւառները, այլ աւելի դէպի հիւսիս՝ Հայոց և Վրաց երկրի սահմանները. պատմագիրները մեզ չեն յայտնում, թէ արդեօք այդ քրդերն ընդունե՞լ էին քրիստոնէութիւնը և դորա համար էին գաղթել քրիստոնեայ երկիր, թէ մի

* «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» Ս. Եպ. Ջալալեան. 1842 թ. հ. I էջ 48 եւ 57—38.

** Մ. Բրոսէն իւր «Additions et éclaircissments à l'Histoirs de la Georgie» S. P. B. 1851. cap. XVIII §. 1. աշխատութեան մէջ մի առանձին գլուխ նուիրելով Զաքարէ եւ Իւանէ Երկայնաբազուկների գործունէութեան, մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում, քաղելով պատմագիրներից եւ արձանագրութիւններից այն բոլորը, ինչ որ իրեն յայտնի է եղել. դժբախտաբար նա չէ կարողացել որոշ եզրակացութեան գալ նոցա ծագման վերաբերեալ, թէեւ ցոյց է տալիս, որ նոքա հայկական ծագումից չեն եղել. Բրոսէի վարանման պատճառն այն է եղել, որ նա ուղիղ չէ կարդացել նոյն պատմագիրների բնագիրները. այսպէս, ուր Վարդան պատմիչը ասում է «ի Քրդաց ազգէ հատուածեալ», կամ Մ. Չամչեանը (հ. III էջ 149) «հատուածեալ ի Քրդաց ազգէ», Բրոսէն կարդացել է «ի Քրդաց ազգէ հալածեալ» (Additions. XVII. p. 266. not. 3) եւ դժուարացել է թարգմանել այդ նախադասութիւնը ֆրանսերէն, իբրեւ անորոշ մի միտք արտայայտող դարձուած. եւ յիրաւի, այնպէս ինչպէս Բրոսէն է կարդացել. շատ դժուար է հասկանալ, թէ արդեօք Երկայնաբազուկներն ծագումով քո՞րդ են եղել եւ հալածուել են ուրիշներից, թէ՞ անյայտ է նոցա ինչ ազգից լինելը եւ հալածուել են Քրդերից: Առհասարակ Բրոսէն իւր վերոյիշեալ աշխատութեան մէջ ջանք է գործ դրել ի մի հաւաքել Երկայնաբազուկների մասին եղած բոլոր տեղեկութիւնները եւ թէեւ ձգտում է ցոյց տալ քննական հայեացքով վերաբերուել դէպի իւր աղբիւրները, ուղղել այս կամ այն կասկածելի կէտերը, բայց մեծ մասամբ չէ յաջողուել եւ շատ կարեւոր հարցեր նորա համար մնացել են անլուծելի:

այլ պատճառ կար. միայն Զաքարիա Սարկաւագն է, որ Երկայնաբազուկների ծագման մասին ոչ մի խօսք չասելով, բաւականանում է յայտնելով, թէ այդ ազգի նախահայր Զաքարիան քրիստոնեայ էր դեռ Բաբելացւոց երկրում և իշխան կարգուած. բայց հալածանքի պատճառով չէ կարողանում այդտեղ մնալ և գաղթում է դէպի Վրաց երկիրը։ Զաքարիա Սարկաւագի հաղորդած այս տեղեկութիւնն արժանի է առանձին ուշադրութեան այն տեսակէտից, որ նա այս դէպքում հետևել է ոչ միայն իրեն աղբիւր ծառայող Կ. Գանձակեցու պատմութեան, այլ լրացրել է ուրիշ գրաւոր աղբիւրներից և կամ աւանդութիւնից։ Թէ յիրաւի Զաքարիա Սարկաւագի վերոյիշեալ տեղեկութիւնը պատմական ճշտութիւն է բովանդակում իւր մէջ, այդ մասին լրացուցիչ և բոլորովին նոր դէպքեր է հաղորդում Վարդան պատմիչը. վերջինիս վկայութեամբ մօտ 1044 թ. մի խումբ Բաղդէացիք հեռանալով իրանց երկրից՝ գալիս են Գարդման, «և ասեն ցիշխանն Գարդմանայ—տուր մեզ զմասն խաչին, զոր ետ քեզ Հերակլ՝ և լինիմք քրիստոնեայք և քո ծառայք—և կատարեցան իրքն։ Եւ լուեալ ամիրայն Բաղդադայ՝ սպառնայ յոյժ, յորմէ երկուցեալ, գնացին յասն Կովկասու. և յաջողեալք ի Քրիստոսէ յոր հաւատային՝ տիրեցին ամենայն գաւառացն—մինչ զի ոմն ի նոցանէ թագաւորեաց՝ Դաւիթ անուն, որ խնամացաւ ընդ արքային Զորոյ գետոյ»։** Այս գաղթականութեան և Երկայնաբազուկների Զորագետ գալու ժամանակը, ինչպէս քիչ յետոյ կը տեսնենք, բոլորովին նոյնն է. երկու գաղթականութեանց բնակավայրը դարձեալ նոյնն է, որովհետև Զորագետն և Գարդմանը սահմանակից են. ինչ վերաբերում է Վարդան պատմիչի այն տեղեկութեան, թէ Բաղդէացիներից մէկը՝ Դաւիթ անունով հասնում է թագաւորական գահի, պէտք է ենթադրել, որ պատմագիրն այդ Դաւթին շփոթել է Զորագետի Դաւիթ թագաւորի հետ, որի թոռ Աբաս II-ը ամուսնանում է Զաքարէ և Իւանէ Երկայնաբազուկների քոյր Նանայի հետ, ուրեմն ամուսնական կապերով կապւում են արքայական տան հետ։ Համեմատելով Երկայնաբազուկների և Բաղդէացիների գաղթականութեանց մանրամասնութիւնները, գալիս ենք այն եզրակացութեան, որ դոքա սերտ կերպով կապուած են միմեանց հետ և նոյն գաղթականութեան զանազան վարիանտներն են։ Թէև Վարդան պատմիչը կամ նորա աղբիւրը ճիշտ կերպով չեն որոշում այն երկիրը, որտեղից գաղթել են Բաղդէացիները, բայց յայտնի է, որ նոքա ապրում էին Բաբելոնի կողմերում, մինչև իսկ Բաբելոն քաղաքի շրջակայքում վաղուց ի վեր նոքա հիմնել էին քաղաքներ և ոչ մի տարբերութիւն չը կար Բաբելացիների և Բաղդէացիների մէջ, իսկ ժամանակի ընթացքում վերանում է և Բաղդէացի կոչումը՝ իբրև աշխարհագրական տերմին և դորա փոխարէն գործ է ածւում միայն «Բաբելոնեան երկիր»։*** Այսպիսով որոշւում է, որ Բաղդէացիները գաղթել են Բաբելոնի կողմերից. այդ Բաղդէացիները եղել են քրիստոնեայ և ըստ Զաքարիա Սարկաւագի պատմութեան պիտի ենթադրել, հալածանք են կրել իրանց հաւատի համար, որի պատճառով, կամենալով մի խաղաղ անկիւն որոնել, գաղթել են դէպի Հայոց երկիրը, որտեղից յետոյ դիմել են Զորագետ կամ Գարդման և բնակութիւն հաստատել. այստեղ նոքա ընդունել են ոչ թէ*

* «Պատ. Զաքարիա Սարկ. 1870 թ. Վաղարշապատ հ. III գլ. 8. էջ. 11—12.

** Վարդան պատմիչ 1862 թ. Վենետիկ էջ. 101.

*** Проф. Тураевъ „Халдеи" Словарь „Брокгауза и Ефрона էջ. 3—4.

քրիստոնէութիւն, այլ քրիստոնէական դաւանանք ըստ Հայոց եկեղեցւոյ։ Այն աղբիւրը, որից Վարդան պատմիչը իր վերոյիշեալ տեղեկութիւններն է քաղում Բաղդէացիների մասին, ինչպէս երեւում է, ուրիշ մանրամասնութիւններ չէ պարունակել, ուստի Վարդանը հնարաւորութիւն չէ ունեցել Երկայնաբազուկների և Բաղդէացիների գաղթականութեան առնչութիւնը պարզ նկատել և դրա համար զատ զատ է պատմում Երկայնաբազուկների և Բաղդէացիների ծագումն ու գաղթը. բայց իրօք այդ Բաղդէացիներն եղել են Երկայնաբազուկների նախորդները. մինչև իսկ այդ նախորդների անունները՝ Խոսրով, Զաքարէ և Սարգիս, որոնք անդադար կրկնւում են սերնդէ սերունդ, ոչ այլ ինչ են, եթէ ոչ Բաղդէացիների մէջ տարածուած սովորական անուններ։

Ինչ վերաբերում է Զաքարեանների (Երկայնաբազուկ) դէպի Ձորագետ կամ Գարդման գաղթելու ժամանակին, այդ մասին էլ պատմագիրների հաղորդած տեղեկութիւնները բաւական տարբեր են և շփոթ. ըստ Վարդան պատմիչի այդ գաղթականութիւնը տեղի պիտի ունենած լինի Սարգիս I-ի (կամ Աւագ Սարգսի) օրով. Կիրակոս Գանձակեցին և Զաքարիա սարկաւագը Երկայնաբազուկների ցեղագրութիւնը հասցնում են մինչև Աւագ Սարգսի որդի Զաքարէ I-ինը, որից յետոյ պատմում են գաղթականութեան մասին։** Այդ ժամանակն որոշելու համար Վարդան պատմիչը տալիս է մի յենակէտ՝ ասելով թէ Զաքարէի և Իւանէի նախորդները գաղթել են Ձորագետի* բագաւորների *մօտ. *** Բառացի հասկանալով վերջին խօսքը, կարելի է եզրակացնել, թէ երբ Երկայնաբազուկները գաղթել են Ձորագետ, այն ժամանակ այնտեղ եղել է* երկու բագաւոր*։ Թէև Ձորագետի կամ Կորիկեան թագաւորների մասին մեր ունեցած տեղեկութիւնները հատ ու կտոր են և Հայ ու Վրացի պատմագիրները նոցա մասին այն ժամանակն են միայն խօսում, երբ նոքա որ և է մի շփումն են ունենում հայերի կամ վրացիների հետ և այդ էլ այն պարզ պատճառով, որ Կորիկեան թագաւորները որ և է մի յայտնի պատմական դեր չեն խաղացել, բայց մնացած արձանագրութիւններից մօտաւորապէս կարելի է այդ փոքրիկ թագաւորութեան պատմութիւնը վերականգնել։ Ձորագետի Բագրատունի թագաւորութիւնը սկիզբն է առնում X-դ դարու վերջերին. Ձորագետի Ա-ին թագաւորն եղաւ Հայոց Աշոտ Ողորմած թագաւորի որդի Գուրգէնը 982 թ., վերջինս կոչւում էր նաև Կիւրիկէ կամ Կորիկէ, որտեղից էլ ծագել է այդ թագաւորութեան «Կորիկեան» կոչումը։† Հայոց պատմագիրները Ձորագետի Կորիկեան թագաւորներին անուանում են նաև Աղուանից թագաւորներ կամ իշխաններ այն պատճառով, որ Կորիկեանները տիրապետում էին Աղուանքի հիւսիս-արեւմտեան մասերին, իսկ XI-րդ դարու վերջին և XII-դի սկզբում նոքա մասամբ զրկւում են Ձորագետի իրանց սեպհականութիւնից և քաշւում են Աղուանք, ուր, և շարունակում են իրանց իշխանութիւնը։ Զաքարեանների (Երկայնաբազուկ) գաղթը դէպի Ձորագետ*

---

* Վարդան Պատմիչ էջ 181.

** Կ. Գանձակեցի էջ 94. Զաքարիա Սարկաւագ հ. III էջ 11—12

*** Վարդան Պատմիչ էջ 181.

† Բացի Հայոց եւ Վրաց պատմագիրներից Կորիկեանների մասին բաւական ընդարձակ տեղեկութիւններ է ժողովել արձանագրութիւններից Մ. Բրոսէն, որից օգտուել ենք [Additions 267—277 p.]

կամ Գարդման չէր կարող 982 թուականից առաջ լինել. քանի որ այդ ժամանակից առաջ Զորագետի թագաւորութիւն գոյութիւն չունէր. բայց և չէր կարող 1112 թուականից յետոյ լինել, որովհետև այդ ժամանակ վերջանում է Զորագետի թագաւորութեան գոյութիւնը՝ Վրաց Դաւիթ Վերաշինող թագաւորի ձեռքով։ Մեր ձեռքը հասած արձանագրութիւններից երևում է, որ միաժամանակ երկու հոգի Կորիկեանների գահն են բարձրանում 1050—1089 թ. այդ թագաւորներից մէկն էր Դաւիթ Անհողինի որդի Կորիկէ II-ը, իսկ միւսը վերջինիս քեռի Սմբատը. այդ մասին վկայում է Լոռու մօտ գտնուող Վարդաբլուր եկեղեցու մի արձանագրութիւն, ուր ասած է թէ Հայոց ՆՂԹ թ. [1050 թ. Քրս.] Կորիկէն շինել է այդ եկեղեցին,** իսկ մի այլ արձանագրութիւն, որը գտնուել է Հաղբատավանքում, վկայում է, թէ վերոյիշեալ Կորիկէն թագաւորել է միաժամանակ իւր քեռի Սմբատի հետ Հայոց 538 թ. [1089 թ. Ք.ս.],*** մինչև իսկ այդ երկու թագաւորների քարէ վրայ փորագրած նկարները զետեղած են միատեղ Սանահնի տաճարի արևելեան պատի վերայ.† նշանակում է ըստ Վարդան պատմիչի վկայութեան Զաքարեանները կարող են Զորագետ կամ Գարդման եկած լինել Կորիկէ և Սմբատ թագաւորների ժամանակ՝ 1050—1089—1112 թուականներին։†† Բացի այս բոլորից արձանագրութեանց հաղորդած տեղեկութիւնների հիման վերայ այդ տոհմի պատմական անձանց միջոցով նոյն իսկ կարելի է Զաքարեանների գաղթի ժամանակը մօտաւոր ճշտութեամբ որոշել. այսպէս Սանահնի մի արձանագրութիւն յայտնում է, որ Սարգիս մեծը մեռել է 1187 թ.,††† իսկ ըստ նոյն և Հաղբատի մի այլ արձանագրութեան Սարգիս մեծը նոյն տոհմի չորրորդ սերունդի ներկայացուցիչն է—Խոսրով, Աւագ Սարգիս, Զաքար I և Սարգիս մեծ. իւրաքանչիւրին վերագրելով մինչև իսկ 40—45 տարուայ կեանք, եթէ ոչ աւելի, կը գանք այն եզրակացութեան, որ Զաքարեանները կարող են գաղթած լինել XI-դ դարու առաջին կիսին։†††† Ի մի ամփոփելով մեր բոլոր ասածները գալիս ենք այն եզրակացութեան, որ Զաքարեանները (Երկայնաբազուկ) ծագումով քաղդէացիներ են, գաղթել են դէպի Հայաստան*

* «Քարթլիս ցխովրեբա» հ. I էջ 246. Մ. Այրիվանեցի 1860 թ. Մոսկուա էջ 61.

** Ց. Տաշեան «Վենե. Մխիթ. միաբ. ձեռագրաց ցուցակ՝ № 515. էջ 984.

*** Ո. Երզնկեան «Հաղբատ վանքի պատմութիւնը 1886 թ. էջ 70.

† Ս. Եպ. Ջալալեան մասն I էջ 11.

†† Մ. Բրոսէ (Additions XVII p. 277. not. 4.) երկու արձանագրութիւն է առաջ բերում Սանահնի վանքից, որոնցից ակնյայտնի երեւում է, որ 1061 եւ 1063 թուականներին Զորագետում թագաւորում էին Կորիկէն եւ Սմբատը միասին։

††† Ո. Երզնկեան «Հաղբատ վանքի պատ.» էջ 52. Ց. Եպ. Շահխաթունեան «Ստորագ». հ. I էջ 107. Ս. Եպ. Ջալալեան «Ճանապ». մասն I էջ 28. Ղ. Ալիշան «Այրարատ» էջ 175. Չամչեան Սարկ. էջ 23.

†††† Մ. Բրոսէ իւր «Additions...» 267 էջում աշխատելով որոշել Երկայնաբազուկների գաղթի ժամանակը, թոյլ է տուել մի քանի անճշտութիւններ՝ հիմնուելով Կ. Գանձակեցու տուած տեղեկութիւնների վերայ. Հաղբատի մայր եկեղեցու գաւթի մի արձանագրութեան մէջ յիշուած է, թէ Սարգիս I-ը կամ աւագ Սարգիսը եկել է ուխտ Հաղբատ այն ժամանակ, երբ այնտեղ վանահայր է եղել Յովհաննէս եպիսկոպոսը. իսկ Կ. Գանձակեցու վկայութեան (1858 թ. էջ 55) Հաղբատի վանահայրութիւնը սկսւում է 1046—1081 թ., նշանակում է Յովհաննէս եպիսկոպոսը կարող էր վանահայր լինել այդ թուականներից աւելի ուշ եւ հետեւապէս Աւագ Սարգիսը կարող էր գալ Հաղբատ XI-դ դարու վերջին։ Կ. Գանձակեցու այս տեղեկութիւնը չի համապատասխանում իրականութեան, որովհետեւ ըստ Ստեփանոս Ասողիկի վկայութեան (Փա-

մօտաւորապէս 1044—1050 թուականներին և բնակութիւն հաստատել Ձորագետում 1050—1063 թուականներին. Նոքա դեռ Բաբելոնում եղած ժամանակ նեստորական են եղել, հետևապէս քրիստոնեայ, իսկ Հայաստանում ընդունել են միայն Հայոց եկեղեցու դաւանութիւնը:

Զաքարեանների (Երկայնաբազուկ) նախորդների մասին մեր ունեցած տեղեկութիւնները թէև քիչ ու շատ լրիւ են, բայց շփոթ. Վարդան պատմիչը հետևեալ կարգով է յիշում—Սարգիս [աւագ], Զաքարէ [առաջին], Վահրամ և Սարգիս [մեծ].* Կ. Գանձակեցին նոյն կարգն է պահպանում, միայն չէ յիշում առաջին Սարգսին [աւագ].** Զաքարիա Սարկաւագը հետևում է Կ. Գանձակեցուն***. Մ. Չամչեանը նոյն անուններն է յիշում, միայն կարգը փոխում է և աւագ Սարգսից յետոյ զետեղում է Վահրամին,† որը փոխանակ Զաքարէի [առաջնի] որդին լինելու (ըստ պատմագիրների), դառնում է յանկարծ նոյն Զաքարէի (առաջնի) հայրը (sic): Արձանագրութիւնների մէջ Զաքարեանների (Երկայնաբազուկ) ճիւղագրութեան այլ կարգ ենք տեսնում. Հաղբատի ս. Աստուածածին եկեղեցու գաւթի հիւսիսային պատի վերայ առանց թուականի մի արձանագրութեան մէջ կարդում ենք հետևեալը. «Մեծ յուսով՝ ես Աւագ Սարգիս միաբանեցայ սուրբ Նշանիս յառաջնորդութեան տէր Յովհաննիսի և ըստ իմում կարի ընծայեցի սուրբ Նշանիս Ծ (50) դահեկան. տէր Յովհաննէս և միաբանքս ընկալան եւ ետուն մեզ պատարագ զեղխական կիւրակէին՝ իմ հաւրն Խոսրովին և իմ եղբաւրն Բարիմին, կատարիչքն աւրհնեսցին յԱստուծոյ»:†† Մեզ յայտնի արձանագրութիւններից սա միակն է, ուր Զաքարեանների տոհմը հասցրած է մինչև Խոսրով, որի որդին էր Աւագ Սարգիսը: Մի այլ արձանագրութիւն, որը զետեղուած է Սանահնի մայր տաճարի հարաւային պատին կից խաչքարի վերայ, հաղորդում է հետևեալը, «ի ՈԼԶ [1187 թ. Ք"ս.] կատարեցաւ ի Քրիստոս մեծն Սարգիս, որդի Զաքարէի [առաջին], թոռն Աւագ Սարգսի. որդիքս Զաքարէ և Իւանէ կանգնեցաք զխաչս յիշեցէք ի Քրիստոս»:††† Նոյնն ենք կարդում և մի այլ արձանագրութեան մէջ, զետեղած մի խաչքարի ստորին մասում, որը կանգնեցրել է Յովհաննու վանքի ժամատանը Զաքարէի և Իւանէի քոյր Նանան. «զԱստուածաբնակս այս խորան եւ զխաչս տէրունական ես Նանայս դուստր մեծ հազարապետին Սարգսի որդւոյ Զաքարէի, որդւոյ Աւագ Սարգսի կանգնեցի ի վերայ նորակերտ վարդապետիս Մարգարէի»... †††† (թերի): Վրաց պատմագիրները յիշում են միայն Զաքարէի և Իւանէի հօրը՝ Սարգսին (մեծ), Ի մի ժողովելով թէ պատմագիրների և թէ արձանագրութիւնների տուած տեղեկութիւնները, Զաքարեանների նախորդների մասին կստանանք հետևեալ պատկերը.

րից 1859 թ. էջ 167—168) Հաղբատի վանահայրութիւնը սկսւում է 955—957 թուականներին: Մ. Բրոսէն իրաւունք չը յիշելով Ս. Ասողկի այդ տեղեկութեան, սխալւում է, կարծելով թէ Կ. Գանձակեցու համեմատ Երկայնաբազուկների նախորդները գաղթել են Ձորագետ XI-ի դարու վերջին եւ XII-ի սկզբին. մինչդեռ, ինչպէս տեսնում ենք, այդ գաղթականութիւնը չէ կարող XI-ի դարու առաջին կիսից յետոյ լինել:

* Վարդան պատմիչ 1861 թ. Մոսկուա էջ 184.

** Կ. Գանձակեցի 1858 թ. Մոսկուա էջ 94.

*** Զաքարիա Սարկաւագ 1870 թ. Վաղարշապատ հ. Ш գլ. 8 էջ 11—12.

† Մ. Չամչեան «Պատմութիւն Հայոց» հատոր Ш էջ 149.

†† Ի. Երզնկեան «Հաղբատ վ. պատ.» էջ 52. Մ. Brosset «Additions» էջ 267—268. not. 3.

††† Ց. եպ. Շահխաթունեան «Ստորագրութիւն...» հ. II էջ 407. Ս. եպ. Ջալալեան մասն I էջ 28 եւն.

†††† Շահխ. Բ. 407. Ջալ. Ա. 28. Ալիշան. Այր. 175.

Հաղբատի արձանագ. առանց Թուականի	Սանահնի արձ. Ոլզ Թվ. [1187 Թ.]	Յովհաննայ վանքի արձ. առանց Թուականի	Վարդան պատմիչ էջ 138	Կիրակոս Գանձակեցի էջ 94		Զաքարիա սարկ. էջ 11	Չամչեան Հ. III էջ 149
Խոսրով							
Աւագ Սարգիս	Աւագ Սարգիս	Աւագ Սարգիս	Աւագ Սարգիս				Աւագ Սարգիս
							Վահրամ
Զաքարէ (Ղ-ին)	Զաքարէ (Ղ-ին)	Զաքարէ (Ղ-ին)	Զաքարէ (Ղ-ին)	Զաքարէ (Ղ-ին)		Զաքարէ (Ղ-ին)	Զաքարէ (Ղ-ին)
			Վահրամ	Վահրամ		Վահրամ	
Սարգիս մեծ	Սարգիս մեծ	Սարգիս մեծ	Սարգիս մեծ	Սարգիս մեծ	Սարգ. մեծ եւ Վահ.	Սարգիս մեծ	Սարգիս մեծ
Զաքարէ եւ Իւանէ	Զաքարէ եւ Իւանէ	Զաքարէ եւ Իւանէ	Զաքարէ եւ Իւանէ	Զաքարէ եւ Իւանէ	Զաք. եւ Իւանէ	Զաքարէ եւ Իւանէ	Զաքարէ եւ Իւանէ
					Զաք. եւ Սարգ.		

Այս աղիւսակից պարզ երեւում է, որ մեզ յայտնի ոչ մի արձանագրութեան մէջ չենք հանդիպում Վահրամ անուան՝ իբրև հայր Սարգիս մեծի կամ Զաքարէ I-ին, ինչպէս շփոթելով ներկայացնում են մեր պատմագիրները. ի հարկէ, մեզ համար աւելի կարևոր նշանակութիւն կարող են ունենալ արձանագրութիւնների մէջ ամփոփուած տեղեկութիւնները, որովհետև այդ արձանագրութիւնները թողել են նոյն Զաքարեանների (Երկայնաբազուկ) յետնորդները, որոնք թէ ժամանակակից են եղել կատարուած դէպքերին և թէ յիշել են իրանց հօր, պապի և այլ ազգականների անունները, քան թէ պատմագիրների հաղորդածը, որոնք ժամանակի հեռաւորութեան պատճառով միջոց չեն ունեցել ստուգելու պատմական դէպքերը կամ անձանց անունները։ Հայ պատմագիրների սխալը յառաջացել է նրանից, որ յիրաւի, Երկայնաբազուկների տոհմի մէջ իբրև Սարգիս մեծի ժամանակից յիշւում է Վահրամ անունով մէկը, որը եղել է հայր մի ուրիշ Զաքարէի և Սարգսի. վերոյիշեալ Վահրամի որդի Զաքարէն եւ ունեցել է մի որդի՝ Վահրամ Գագել անունով. այնպէս որ Հայոց պատմագիրների մէջ յիշուած Վահրամը ոչ թէ Սարգիս մեծի հայրն է եղել, այլ եղբայրը և նախահայր Երկայնաբազուկների երկրորդ ճիւղաւորութեան։ Հայոց պատմագիրները Զաքարեանների ուղիղ յաջորդականութեան կարգը շփոթել են շնորհիւ այն հանգամանքի, որ Վահրամի հօր անունն էլ է եղել Զաքարէ (I-ին), Սարգիս մեծի հօր անունն էլ, միւս կողմից թէ Վահրամի և թէ Սարգիս մեծի աւագ որդւոց անունները դարձեալ կոչուել են Զաքարէ։ Թէ յիրաւի, Վահրամը Զաքարէ I-ին որդին է եղել, այդ մասին վկայում են Հայոց բոլոր այդ ժամանակուայ պատմագիրները, բայց թէ այդ Վահրամն եղել է ոչ թէ Սարգիս մեծի հայրը, այլ եղբայրը, այդ մասին վկայում են Վրաց տարեգիրները, անուանելով մինչև իսկ այդ Վահրամի որդիներն՝ Զաքարէ և Սարգիս։ Այսպէս Գէորգի III-դի պատմագիրը յայտնելով այն նշանաւոր ապստամբութեան մասին, որ Վրաստանի մի քանի ականաւոր իշխաններ բարձրացրին իրանց թագաւոր Գէորգի III-ի դէմ, ասում է. «այն ժամանակ Դիմիտրից (օրինաւոր գահաժառանգից) հեռացաւ Սարգիս Մխարգրձելին [մեծ] իւր որդու և* եղբօրորդու հետ» *(ձմիս-գուլիթա)։** Թամար թագուհու պատմագիրը շատ յաճախ է յիշում Սարգիս Մխարգրձելու այդ եղբօրն և վերջինիս որդիներին. այսպէս կամենալով դէպի Դուին կատարած արշաւանքի պատմութիւնը տալ Վրաց պատմագիրն ասում է. «Դէպի Դուին արշաւեցին Մխարգրձելի (Երկայնաբազուկ) Սարգիսի և Վահրամի որդիները—Զաքարէ մեծը [Ամիր սպասալար] և միւս Զաքարէ, Իւանէն և Սարգիսը».*** Սոցանից Զաքարէ մեծը և Իւանէն Սարգսի որդիներն են, իսկ Զաքարէն (միւսը) և Սարգիսը՝ Վահրամի, իսկ այս Վահրամը, ըստ Գէորգի III-դ թագաւորի պատմագրի, Սարգիս մեծի եղբայրն էր։† Մ. Բրոսէն, նկատելով Հայոց պատմագիրների և արձանագրութիւնների տարբեր տեղեկութիւնները՝ Զաքարեանների նախորդների յաջորդական կարգի վերաբերեալ, ցանկացել է մի ելք գտնել և որ և է կերպ հաշտեցնել*

* «Քարթլիս Ցխովրեբա» հրատ. Բրոսէի. հատ. I էջ. 286, 328—329, 341, 346—348.

**. «Քարթլ. Ցխովր.» հ. I էջ 275.

*** «Քարթլ. Ցխովր.» 286 եւ 295.

† «Քարթլ. Ցխովր.»» 275.

այդ տարբերութիւնները, և թէև ենթադրութեամբ է միայն առաջնորդ- ւում, բայց այդ ենթադրութիւնն էլ ոչ մի պատմական փաստի վերայ հիմնուած չէ. Նա ասում է թէ հաւանական է ենթադրել, որ Հայոց պատ- մագիրների յիշած Վահրամը լինի Աւագ Սարգսի եղբայր Քարիմը։ Նախ անհասկանալի է, թէ ինչպէս Վահրամը կարող է Քարիմ դառնալ և միւս կողմից Քարիմի և Վահրամի ժամանակի մէջ մօտ մի դարու տարբերու- թիւն կայ։ Բրոսէի այդ անհիմն ենթադրութիւնը յառաջացել է նրանից, որ նա մինչև իսկ չէ առաջնորդուել Հայոց պատմագիրների և արձանա- գրութիւնների տուած տեղեկութիւններով և բոլորովին բարձի թողի է արել Վրաց տարեգիրների հաղորդածը, թէև ներկայ դէպքում էլ Կ. Գան- ձակեցին և Վարդան պատմիչը Վահրամի որդիներին յիշում են իբրև գործակիցներ Զաքարէ և Իւանէ Երկայնաբազուկների.** Հետևապէս ըստ Վրաց տարեգիրների և ըստ Հայոց պատմագրերի կողմնակի տեղեկութեան Վահրամը կարող էր միմիայն ժամանակակից լինել Զաքարէի և Իւանէի հայր Սարգիս մեծին և վերջինիս եղբայրը։ Այսպիսով վերականգնելով Զա- քարեանների նախորդների յաջորդութեան կարգը կը ստանանք հետևեալ դասաւորութիւնը. Խոսրով, սորա որդիքը-Աւագ Սարգիս և Քարիմ. Աւագ Սար- գսի որդին՝ Զաքարէ I-ին, վերջինիս որդիքը՝ Սարգիս մեծ և Վահրամ. Սարգիս մեծի որդիքը՝ Զաքարէ և Իւանէ. Վահրամի որդիքը՝ Զաքարէ և Սարգիս։*

*Զաքարեանների (Երկայնաբազուկ) նախորդների՝ Խոսրովի, Աւագ Սարգսի, սորա եղբայր Քարիմի և Զաքարէ I-ի մասին մենք չունինք քիչ ու շատ ընդարձակ տեղեկութիւններ, բացի այն արձանագրութիւններից, որ մենք յիշեցինք վերևում. Զաքարէ I-ի որդի Սարգիս մեծի մասին է, որ առաջին անգամ մեր պատմագիրները և Վրացի տարեգիրները քիչ աւելի ընդարձակ տեղեկութիւններ են տալիս։ Ըստ Վարդան պատմիչի, երբ 1161 թ. Վրաց Գէորգի III-դ թագաւորը դէնքի ուժով Շեդդադիդներից առնում է Անին, իր կողմից կառավարիչ է նշանակում Սադունին, բայց վեր- ջինիս կասկածելով դաւաճանութեան մէջ, շուտով հեռացնում է և նորա փո- խարէն նշանակում Սարգիս Երկայնաբազուկին***, Վրաց պատմագիրը յիշատակելով նոյն դէպքն, ասում է թէ Գէորգի III-դը Անու կառավա- րիչ է նշանակում Իւանէ Օրբելեանին, իսկ Սարգիս Երկայնաբազուկին նորան օգնական է թողնում†։ Բայց Վրաց պատմագիրը դէպքերը շփոթել է և երկու համանման եղելութիւն միացրել միմեանց հետ, որովհետև 1174 թ. երբ Վրաց Գէորգի-III-դ թագաւորը երկրորդ անգամն է գրաւում Անին Իւանէ Օրբելեանի խորհրդով և գրգմամբ, այս վերջինին է թողնում այն- տեղ կառավարիչ, իսկ Սարգիս Երկայնաբազուկին նշանակում է նորան օգ- նական††։ Դորան իբրև փաստ կարող է ծառայել այն հանգաման- քը, որ Վրաց նոյն պատմագիրը վկայում է, թէ երբ 1177 թ. Անում կազմակերպուեց մի դաւադրութիւն Իւանէ Օրբելեանի թելադրութեամբ ընդդէմ Վրաց թագաւոր Գէորգի III-ին, այն ժամանակ Իւանէ Օրբէլեանը*

* Մ. Բրոսէ «Additions...» եր. 268.

** Կ. Գանձակեցի էջ 93. Վարդան պատմիչ էջ 184.

*** Վարդան պատմիչ էջ 126—127.

† Քարթլիս ցխովրեբա հ. I էջ 266. M. Brosset «Histoire de la Géorgie» tr. de géorg. S. P. B. p. I p. 385. 397. Մ. Ուռհայեցի 1898 թ. Վաղարշ. էջ 126.

†† Վարդան պատմիչ էջ 126—128 Քարթլիս Ցխովրեբա հ. 1 էջ 266.

և Սարգիս Երկայնաբազուկը իրանց զօրքերով Անուց դիմեցին դէպի Լօռի։ Ահա այս երկու դիպուածները չփոթել է Վրաց պատմագիրը, որոնց մասին Հայոց պատմագիրները զատ զատ են պատմում**։ Սարգիս Երկայնաբազուկի մասին Վրաց պատմագիրը գրում է, թէ նա 1161 թ. եղել է ամիր-սպասալար կամ գլխաւոր հրամանատար զօրաց. բայց այս տեղեկութիւնն էլ չէ համապատասխանում պատմութեան, որովհետև ամիր-սպասալարութեան պաշտօնը Վրաց թագաւորութեան մէջ միշտ յանձնւում էր մի մարդու, նոյնաժամանակ երկու ամիր-սպասալարներ չէին կարող լինել. իսկ 1161 թ. այդ նոյն պատմագրի վկայութեամբ ամիր-սպասալար էր Իւանէն (հաւանականաբար Օրբէլեանը), հետևապէս Սարգիս Երկայնաբազուկը այդ ժամանակ չէր կարող զօրքերի ընդհանուր հրամանատարի պաշտօնն ունենալ, այլ նա ամիր-սպասալարութիւնը ստանում է բաւական ուշ, ինչպէս կը տեսնենք քիչ յետոյ. հաւանական է ենթադրել, որ Սարգիսը 1161 թ. Անում եղել է միայն տեղական զօրքի հրամանատար***։ Սարգիս Երկայնաբազուկը 1161 թ. նշանակուելով Անու կառավարիչ երկու տարի միայն այդտեղ մնաց. որովհետև վրաց թագաւոր Գէորգի III-ը՝ չը կարողանալով դիմադրել թշնամիների յարձակումներին, 1163 թ. դուրս է հանում իւր զօրքը Անուց և քաղաքը յանձնում Սելջուկ Արսլան-Շահին։ Տասն և մէկ տարի անցնելուց յետոյ վրացիները ապահովելով իրանց երկիրը թշնամիների յարձակումներից, նորից գրաւում են Անին 1174 թ. ուր Գէորգի III-ը ընդհանուր կառավարիչ և հրամանատար է նշանակում Իւանէ Օրբէլեանին, իսկ Սարգիս Երկայնաբազուկին թողնում է նորան օգնական. այստեղ Սարգիս մեծը մնում է երեք տարի, որից յետոյ նա ստիպուած լինելով միանալ վրաց թագաւոր Գէորգի III-ի դէմ կազմակերպուած ապստամբութեանը՝ թողնում է Անին և դիմում դէպի Լօռի։ 1177 թ. Վրաստանում տեղի է ունենում մի ներքին խռովութիւն գահաժառանգութեան համար. իշխանական տոհմերը բաժանւում են զանազան կուսակցութիւնների, մի կուսակցութիւնը պաշտպանում էր գահաժառանգ Դեմնային կամ Դիմիտրուն, իսկ միւս կուսակցութիւնը թագաւոր էր համարում նորա հօրեղբայր Գէորգի III-ին, որը գահաժառանգ Դիմիտրու (Դեմնայի) անչափահասութեան պատճառով թագաւորութեան խնամակալ լինելով՝ օգտւում է հանգամանքից և իրան վրաց թագաւոր հրատարակում։ Վրաց պատմական կեանքում տեղի ունեցած այս դէպքը թէև ուշադրաւ է շատ տեսակէտից, բայց դժբախտաբար դեռ ևս ուսումնասիրութեան նիւթ չէ եղել և մինչև այժմ շատերի համար մութն է, թէ ինչո՞ւ Գէորգի III դը պիտի թագաւորէր և ոչ թէ գահի օրինաւոր ժառանգ Դեմնան (Դիմիտրը), կամ թէ ինչո՞ւ որոշ իշխանական տոհ-*

* «Քարթլիս ցխովրեբա» հ. I էջ 274.

** Վարդան պատմիչ էջ 126—127.

*** Վրաց պատմագիրը (հ. I էջ 266) աւելի մանրամասն է պատմում 1161 թ. Գէորգի III-ի ձեռքով Անին գրաւելը՝ հետեւեալ տեղեկութիւնները տալով. «Անին մի ժամանակ եղել է Բագրատունեաց թագաւորների աթոռանիստը (sic), այժմ ունի 1001 եկեղեցի։ Երբ Բոյները հեռացան եւ համապատասխանները փոխուեցին, Շանէ Դադեանին գրաւեց քաղաքը, բայց որովհետեւ նա ապստամբուեց վրաց թագաւորից, դրա համար Գէորգի III-ը յարձակուեց այդ քաղաքի վերայ, երեք օր պաշարեց եւ օգոստոսի 6-ին վերցնելով՝ հալածեց այնտեղից Շանէ Դադիանուն, գործերը կարգի դրաւ եւ իւր իշխանութեան հաստատութեան համար Անի քաղաքում թողեց **Իւանէ Օրբէլուն օգնական Սարգիս Երկայնաբազուկին»։**

*մեր պիտի պաշտպանէին Գէորգի IIIի թագաւորի Վրաց գահը բարձրանալը։
Վրաստանի արքայական գահը սկսած Բագրատ III-ից [985 թ. Ք *սի]
մինչև Գէորգի III-ը ուղիղ ժառանգական գծով է անցել*. գահաժառանգու-
թեան կարգը թէև որոշ օրէնքով սահմանուած չէ եղել, բայց և իրօք
մինչև 1154 թուականը ոչ մի կերպ չէ խախտուել. միայն Վրաց Դաւիթ
III-ի մահից յետոյ սկսւում են գահաժառանգութեան խռովութիւնները։ Դա-
ւիթ III-ի որդի Դիմիտրու (Հայ բոլոր պատմագիրները անուանում են Դեմ-
նա) անչափահասութեան պատճառով Վրաց թագաւորութեան ղեկը իր
ձեռքն է առնում Դաւիթ III-ի եղբայր Գէորգին, որն և իրան անուանում է
թագաւոր. 1177 թ., Վրաց թագաւորութեան ամիր սպասալար կամ զինւո-
րական նախարար Իւանէ Օրբելեանը, որի աղջիկը ամուսնացած էր թագա-
ժառանգ Դիմիտրու հետ, Սարգիս Երկայնաբազուկի և ուրիշ իշխանների
հետ դաւադրութիւն է կազմում ընդդէմ Գէորգի III-ի Անի քաղաքում, որ-
պէս զի զրկէ նորան թագաւորական գահից և օրինաւոր գահաժառանգ ու
իր փեսայ Դիմիտրուն թագաւորեցնէ։ Ապստամբները դիմում են դէպի
Վրաստան, ունենալով իրանց հետ և երիտասարդ Դիմիտրուն։ Վրաց թա-
գաւոր Գէորգի III-ը, որի համար բոլորովին անսպասելի էր այս քաղաքա-
կան ապստամբութիւնը, միառ ժամանակ վարանման դրութեան մէջ է մնում,
ապա զանազան խոստումներով իր կողմը գրաւելով նշանաւոր իշխաննե-
րից ոմանց, առաջ է շարժւում դէպի Տաշիր, ուր գտնւում էին ապստամբ-
ները. ահա այս ժամանակ Սարգիս Երկայնաբազուկը իր որդու և եղբօրոր-
դու հետ թողնում է Դիմիտրուն և անցնում Գէորգի III-ի կողմը. թագաւորը
սիրայօժար ընդունում է նորան և առանձնապէս փայփայում, ինչպէս վայել
է նորա ծագման։ Բաւական ույժ կենդրոնացնելով իր իշխանութեան ներ-
քոյ Գէորգի III-ը առնում է Տաշիրը, Լօռին. Ագարակում տեղի է ունենում
ճակատամարտ, ուր Դիմիտրու կողմնակիցները յաղթւում են և ամրանում
Լօռւայ բերդում։ Գէորգին պաշարում է Լօռին, որը տևում է բաւական
երկար. այդ միջոցում պաշարուածները գաղտնի կերպով Քարթալինիայի
էրիսթաւ Լիպարիտին, սորա որդի Սմբատին, Իւանէի որդի աւագ սպառա-
պետ Քաւթարին և Անանիա Դուինեցուն ուղարկում են Շահ-Արմէնի և Ի-
տիկուզի որդիների մօտ օգնութեան. վերջիններս թէև ցանկութիւն յայտնե-
ցին օգնելու պաշարուածներին և դիմեցին դէպի Վրաց երկիրը, բայց ձեռն-
ունայն յետ դարձան. Լօռու բերդում պաշարուածները սկսեցին նեղուել և
ուժասպառ լինել. գահաժառանգ Դիմիտրին, որի համար կազմակերպուել էր
այդ քաղաքական ապստամբութիւնը, ծածուկ պարանով իջնում է բերդից
և գնում իր հօրեղբօր Գէորգի թագաւորի մօտ և իր հպատակութիւնն ա-
ռաջարկում։ Բերդի մէջ պաշարուածները, աւելի ևս Իւանէ Օրբելեանը, որ
այդ ապստամբութեան ոգին ու առաջնորդն էր, տեսնելով որ իրանց թեկնա-
ծուն, որի համար իրանք արիւն են թափում, ինքն իր կամքով ծածուկ
փախել է բերդից և հպատակուել, իրանք ևս բերդի դռները բանում են և
կորիզլուխ գնում Գէորգի թագաւորի մօտ. վերջինս վերցնելով բերդը՝ ա-
պըստամբներին չէ պատժում, այլ ոմանց միայն աքսորում է**։ Ըստ Վրաց*

* «ქართ. ცხოვრ» წ. I გვ 207—264.

** ქართ. ცხოვრ. წ I გვ გვ 275—274.

պատմագրի այս դէպքում տեղի է ունեցել քաղաքական ապստամբութիւն Դիմիտրուն և այլոց կողմից ընդդէմ օրինաւոր թագաւոր Գէորգի III-ի։ Բայց Վրաց պատմագիրը լրութեամբ չէ հաղորդում մեզ պատմական այդ դէպքը և մասամբ շեղւում է ճշմարտութիւնից։ XIV-դ դարու պատմիչ Ստեփաննոս Օրբելեանը թէև զարդարած է տալիս իր տոհմի ծագման և գործունէութեան պատմութիւնը Հայաստանում և Վրաստանում, բայց ներկայ դէպքում նա յայտնում է մի քանի տեղեկութիւններ, որ համեմատած մեր ձեռքը հասած արձանագրութիւնների հետ, զուտ ճշմարտութիւն են ամփոփում։ Վերջինս պատմում է, թէ Դաւիթ թագաւորը մահուանից առաջ կանչում է իր մօտ Վրաց կաթուղիկոսին, մեծամեծ դիդեպուլներին և իր կրտսեր եղբայր Գէորգուն և երդուեցնում, որ իր մահից յետոյ, երբ իր որդի Դեմնան (Դիմիտրը) հասակն առնէ, իսկոյն թագաւորեցնեն, իսկ մինչև այդ թագաւորութեան ղեկը յանձնում է իր կրտսեր եղբօրը՝ Գէորգուն. Դեմնան մեծանում և դաստիարակւում է Օրբելեանների մօտ. և ահա երբ նա չափահաս է դառնում, ամուսնանում է Իւանէի աղջկայ հետ**։ Այդ միջոցում Գէորգին իր կողմը գրաւելով նշանաւոր իշխաններին, նոյն իսկ Իւանէ Օրբէլեանին, թագաւոր է օծւում այն պայմանով միայն, որ ապագայում իր եղբօր որդուն չզրկէ գահից. պատմագիրը ըստ արժանւոյն գնահատելով Գէորգի թագաւորի մատուցած ծառայութիւնը Վրաստանին, նորա անձնական քաջութիւնն ու արիութիւնը, մի և նոյն ժամանակ չէ վարանում անուանելու նորան ուխտադրուժ՝ իր եղբօրորդուն գահից զրկելու համար։ Վրաց դիդեպուլներն և Դեմնան գալով Իւանէի մօտ յիշեցնում են նորան իր տուած երդումը և խոստանում աջակցութիւն՝ զէնքի ուժով Դեմնային գահ բարձրացնելու։ Իւանէ Օրբէլեանը, որ այդ ժամանակ Վրաց թագաւորութեան առաջնակարգ իշխաններից մէկն էր և ամիր-սպասալար, արդարութիւնը վերականգնելու համար զէնք է բարձրացնում Գէորգի թագաւորի դէմ. Լօռու բերդի պարիսպների տակ նա ստիպուած է լինում անձնատուր լինել, որի հետևանքն այն է լինում, որ Գէորգի III թագաւորը հրամայում է «զամենայն ազգատոհմ նոցին [Օրբելեանց] և զարու մանուկ, նաև զկանայսն եւ առհասարակ ջնջել և կորուսանել՝ զոմանս ջրասոյզ, զոմանս քարավէժ. և այնպէս երարձ ի տանէն Վրաց զանուն նոցա. և հրամայեաց ջնջել զյիշատակ ազգին Օրբէլեանց ի պատմագրաց իւրեանց նաև յեկեղեցեաց . . .»,** Թէև մի կողմից Գէորգի թագաւորի պատմագրի և միւս կողմից Ստեփաննոս Օրբէլեանի հաղորդած՝ տեղեկութիւնների հիման վերայ չի կարելի ներկայ դէպքում պատմական ճիշտ եղելութիւնը նոյնութեամբ վերականգնել, որովհետև երկուսն էլ շահագրգռուած պատմագիրներ են, բայց կասկած չը կայ, որ Վրաց պատմագիրը լռում է խօսելու Օրբելեան տոհմի դէմ Վրաստանում բարձրացրած հալածանքի մասին՝ նոցա կալուածները յարքունիս գրաւելու և Վրաստանից արտաքսելու տեղեկութիւնները իսկութեամբ մեզ հաղորդելու։ Թէ իրօք այդ միջոցներում Օրբէլեանների դէմ հալածանք է եղել Վրաստանում, իբրև փաստ կարող է ծառայել այն հանգամանքը, որ Վրաց նոյն պատմագրի վկայութեամբ Լօռին Օրբէլեանների ժառանգական սեփականութիւնն էր, բայց 1186 թ. այդ կալուածքը նուիրում

* Ստ. Օրբէլեան Թիֆլիս 1910 թ. էջ 589.
** » » » » » էջ 580—589.

են ի սեպհականութիւն Երկայնաբազուկների*. Անի քաղաքը նմանապէս յանձնուած էր Օրբէլեաններին, բայց յետոյ տեսնում ենք Երկայնաբազուկների տիրապետութեան ներքոյ՝ իբրև սեպհականութիւն։ Միւս կողմից Օրբէլեան տոհմի ներկայացուցիչները բաւական մեծ դեր են խաղացել Վրաց պատմական կեանքում, եղել են առաջնակարգ իշխանների թւում և բազմիցս պատասխանատու պաշտօններ են կատարել. բայց սկսած 1177 թուից մինչև 1223 թ. և էլի աւելի՝ Վրաց պատմութեան մէջ մենք չենք պատահում Օրբէլեան տոհմից գոնէ մի անձի, որը պաշտօն ունենար Վրաց թագաւորութեան մէջ։ Բացի այս ամենից Օրբէլեան տոհմի իշխաններից մէկը՝ Իւիկումի որդի Լիպարիտը, Նորաւանքում 1223 թ. թողել է մի արձանագրութիւն, որը կասկածի առիթ չէ տալիս հաստատապէս ասելու, որ Վրաստանում տեղի է ունեցել մի մեծ հալածանք Օրբէլեան տոհմի դէմ և խիստ վրէժխնդրութիւն. «Ի ՈՀԲ թուականութեանս Հայոց"[1223 թ. Քս.ի ծն. յետոյ] կամաւն Աստուծոյ ես Լիպարիտ, որդի Իւիկումի, թոռն մեծի Օրբէլեանց, որ եւ հայրն իմ վասն մեծի քինոյն ել ի հայրենի աշխարհէն իւրմէ եւ ի թագաւորէն Ափխազաց եւ գնաց ի դուռն պարսից Աթաբէկն Ելտկուզ...»** ին. Թէև այս արձանագրութիւնը դարձեալ Ստ. Օրբէլեանն է հաղորդում մեզ իր պատմութեան մէջ, բայց Օրբէլեան տոհմի ներկայացուցիչների այդ վանքում թողած բազմաթիւ արձանագրութիւնները հաստատում են, որ, յիրաւի, դորա քաղաքական որ և է մի հանգամանքի պատճառով Վրաստանից գաղթել են դէպի Հայաստանի հարաւ-արևելեան գաւառները՝ Իլտիկուզի իշխանութեան սահմանակից երկրները։

Երկայնաբազուկ Սարգիս մեծի կատարած դերը Վրաց գահաժառանգութեան համար տեղի ունեցած միջադէպում բաւական ուշագրաւ է։ Սարգիս մեծը Իւանէ Օրբէլեանի հետ միաբանած և զօրքի գլուխն անցած՝ Տփղիսից դիմում է դէպի Լօռի. Վրաց Գէորգի III թագաւորը, գլուխը կորցրած և յանկարծակիի եկած՝ ամէն կերպ աշխատում է իր կողմը գրաւել յայտնի իշխաններին, որպէս զի նոցա օգնութեամբ կարողանայ հաստատ մնալ գահի վերայ. Նա կարողանում է գրաւել շատերին զանազան խոստումներով, որով պառակտում է Դեմնայի կուսակիցներին. «Ահա այդ ժամանակ «Սարգիս Երկայնաբազուկը իւր որդու [Զաքարէի] և եղբօրորդու [Վահրամի որդի Զաքարէի] հետ թողնում է Իւանէ Օրբէլեանին և Դիմիտրուն [Դեմնային] և անցնում է Գէորգի թագաւորի կողմը. վերջինս սիրալիր ընդունում է նորանց և առանձնապէս հովանաւորում՝ իբրև ծագումով յայտնի և նշանաւոր մարդկանց***»։ Անյայտնի է, որ Սարգիս Երկայնաբազուկը Գէորգի թագաւորի խոստումներից գրաւուելով կամ յոյս չունենալով, թէ իրանց ձեռ-

* «Քարթ. Ցխ.» հ. I. էջ 282.

** Ստ. Օրբէլեան Փարիզ 1859 թ. հ. II. էջ 104—105.

*** «Քարթ. Ցխ.» հ. I. էջ 275. բնագրի մէջ կարդում ենք. «մաճին դարմօուվիդէս Դիմիտրիս Սարգիս մխար-գրձէլի, ձվիլիթա դա ձմիս գուլիթա միսիթա, ձմա դա սադուարէլի Օրբէլիթա»: Տեկսյաշվիլու հրատարակած Վրաց պատմութեան մէջ փոխանակ «Օրբէլիթա» գրած է «օրգուլիթա—հաւատուրագ» (1906 թ. Թիֆ. էջ 387). այս պարբերութեան վերջին մասը Մ. Բրոսէն թարգմանել է ֆրանսերէն. «avec ses fils et ceux de ses frères, frère et ami lui même des Orbelians», Որ սխալ է, որովհետև բնագրի «ձվիլիթա եւ ձմիս—գուլիթա» (որդու եւ եղբօրորդու) բառերը գործ են ածուած եզակի գոյական հոլովով, մինչդեռ Մ. Բրոսէն հասկացել է, թէ յոգնակի թւոյն հոլովով են գործածուած:

նարկութիւնը կարող է յաջող ելք ունենալ, թողնում է օրինաւոր թագաժառանգին և անցնում հակառակորդի կողմը. Նորա այդ քայլը մեծ նշանակութիւն է ունենում ապագայում և Սարգիս Երկայնաբազուկի որդիները, Վրաց թագաւորների առանձին խնամքն ու հովանաւորութիւնը վայելելով՝ հետաւորութիւն են ունենում ամենաբարձր պաշտօնները ստանձնել և մեծամեծ կալուածներով պարգևատրուել. մի և նոյն ժամանակ Երկայնաբազուկների տոհմը Վրաց իշխանական տոհմերի կարգն է դասւում։

Վրաց Գէորգի III *թագաւորը գահաժառանգութեան հարցը զէնքի ուժով վճռելուց յետոյ, ձգտում է՝ գալիք խռովութիւնների առաջն առնելու համար, Վրաց իշխանների կամքն իմանալ և, քանի որ ինքն արու զաւակ չունէր, իւր դուստր Թամարին Վրաց թագի ժառանգ հռչակել. 1177 թ. Վրաց իշխանական ժողովը քննելով այդ հարցը՝ գտնում է, թէ կնոջ թագաւորելը և գահ բարձրանալը հակառակ չէ Վրաց պատմական կեանքի աւանդութիւններին. այնուհետև Թամարը հրապարակւում է Վրաց թագաւոր. այդ դէպքից մի քանի տարի յետոյ մեռնում է Թամարի հայր Գէորգի* III *թագաւորը։ Պատմագիրները և Վրաց պատմութեան ուսումնասիրութեամբ զբաղուող բանասէրները մեծաւ մասամբ չեն համաձայնում Գէորգի թագաւորի իշխանութեան և մահուան տարեթուերի վերաբերմամբ։ Վրաց պատմագիրը նշանակում է 1156—1174 թ.**, *Ալէն Մարտէնը ընդունում է այդ տարեթուերը***. *Կլապրոտը 21 տարուայ իշխանութիւն է վերագրում Գէորգի* III-*ին [1150—1171 թ.]****. *Վախուշտը 24 տարուայ շրջան է ընդունում [1150—1174 թ.]*****. *Սամուէլ Անեցին նորա թագաւորութեան սկիզբը համարում է 1157 թ.*† *Վարդան պատմիչը և Ստեփաննոս Օրբէլեանը նորա գահ բարձրանալը նշանակում են 1156 թ.*††։ *Ներկայումս, շնորհիւ մի ձեռագրի յիշատակարանի, վերջնականապէս որոշւում է Գէորգի* III *թագաւորի մահուան թուականը. Էջմիածնի ձեռագրատան № 51 ձեռագրի (Դատաստանագիրք Մխիթար Գօշի) էջ 36 յիշատակարանի մէջ կարդում ենք, թէ Մխիթար Գօշը սկսել է իւր դատաստանագիրքը գրել Հայոց ՈԼԳ թուականին [1184 թ. Քս. ծն.], այն տարին, երբ մեռել է Վրաց յաղթական թագաւոր Գէորգին։ Վրաց պատմագրի, Վարդան պատմիչի և Ստ. Օրբէլեանի հաղորդած տեղեկութիւնները նորա գահ բարձրանալու մասին աւելի համապատասխանում են պատմական ճշմարտութեան. ուստի մի կողմից պատմագիրների և միւս կողմից Էջմիածնի ձեռագրի յիշատակարանի տուած փաստերի հիման վերայ Գէորգի* III-*ը թագաւորել է 1156—1184 թուականներին։*

Սկսած 1177 թ. մինչև 1186 թ. Սարգիս Երկայնաբազուկի մասին պատմագիրները ոչ մի տեղեկութիւն չեն հաղորդում. Թամար թագուհու իշխանութեան օրով, 1186 թուականին, Վրաստանի «Եօթն թագաւորութեանց ներկայացուցիչների»††† *և երևելի ազնուականների համաձայնութեամբ*

---

* Քարթ. Ցխովրեբա» հ. I. էջ 275.

*** M. Brosset, Additions..., էջ 264.

† Սամուէլ Անեցի «Ժամանակագրութիւն». Վաղարշապատ, 1893 թ. էջ 155.

†† Վարդան պատմիչ. Վենետիկ 1862 թ. էջ 150, 152. Ստ. Օրբէլեան, հ. II. էջ 128. Մ. Չամչեան, «Պատմութիւն Հայոց» հ. III, էջ 79.

††† Վրաց պատմագիրները («Քարթլիս Ցխովրեբա» հ. I. էջ 277—280) շատ յաճախ գործ են ածում «Վրաստանի եօթն թագաւորութեանց ներկայացուցիչներ» դարձուածը, երբ խօսքը վերաբերում է ազգային որ և է փառաւոր հանդէսի, երբ թագաւոր են օծում, կամ

Սարգիս Երկայնաբազուկը նշանակւում է Վրաց թագաւորութեան ամիր-սպասալար*. այս առթիւ Թամար թագուհու պատմագիրն աւելացնում է. «Սարգիսը յայտնի տոհմից էր, պատերազմների և հերոսութեանց մէջ մարզուած. թագուհին նուիրում է նրան Լօռին Սամխեթիայում՝ ժառանգաբար օգտուելու համար»**։ Թէ յիրաւի այդ ժամանակ Սարգիս Երկայնաբազուկը ամիր-սպասալարի պաշտօն ունէր, այդ մասին կարդում ենք Հոռոմայրի մի արձանագրութեան մէջ, որ ասում է թէ Աշոտ անունով մէկը գնում է մի այգի «ամիր-սպասալար Սարգսից 1186 թ. և նուիրում վանքին***»։ Սարգիս մեծը երկար չվարեց այդ պաշտօնը. մի տարուց յետոյ նա մեռաւ և թաղուեց Սանահնի մայր տաճարի բակում, ուր նրա գերեզմանի վերայ Զաքարէ և Իւանէ որդիները կանգնեցնում են տապանաքար, որը մինչև այժմ գոյութիւն ունի հետևեալ արձանագրութեամբ. «Ի ՈԼԶ [Թւին Հայոց] կատարեցաւ ի Քրիստոս մեծն Սարգիս, որդի Զաքարէի****.... ևլն»։ Ահա այս Սարգիս Երկայնաբազուկի որդիներն են Զաքարէ ամիր-սպասալարը և Իւանէ Աթաբէկը, որոնք Վրաց պատմական կեանքի ոսկեդարու նշանաւոր գործիչները հանդիսացան։

Աս. Տանճազարեանց

պետութեան առաջնակարգ պաշտօնեաներ ընտրում, եւ կամ թագաւորութեան վերաբերեալ մի նշանաւոր խնդիր վճռում: Երբ XI-ը դարում Վրաց թագաւորների ջանքերի շնորհիւ Վրաստանի մանր թագաւորութիւնները միացան, այնուհետեւ փոխանակ Վրաց թագաւորների գործածական տիտղոսը, եւ նրա վերակոչուեցին «արքայից արքայ, թագաւոր Աբխազիայի, Քարթլինիայի, Ռանի, Կախեթի . . . » եւյն. բէեւ այս տեսակէտից Վրաստանում կարելի էր նոյնացնել եօթն թագաւորութեան միութիւն (մինչեւ իսկ աւելի կամ պակաս), բայց Վրաց պատմագիրների այդ արտայայտութիւնը աւելի այլաբանական իմաստ ունի, քան թէ իրական, այսինքն «եօթն» կոչումը գործ էին ածում եօթն նախարարութեան կամ ստեղծագործութեան եօթն օրուայ նշանակութեամբ, որովհետեւ եօթն թիւը վաղուց ի վեր սրբագործուած թիւ էր համարւում: Ի. Ա. Ջաւախովի կարծիքով վրացիները այդ բառի գործածութիւնը փոխ են առել Արաբներից։

* «Ամիր-սպասալար» տիտղոսը վրացիները եւ հայերը փոխ են առել պարսիկներից. բառը կազմուած է արաբերէն Ամիր- امير (հրամայող իշխող), պարսկերէն սպա- سپاه (զօրք) եւ սալար- سالار զօրապետ), միասին امیرسپاه سالار կնշանակէ գլխաւոր հրամանատար զօրաց մեծ սպարապետ:

** «Քարթ. Ցխ.» հ. I, էջ 282.

*** «Ճանապարհ. ի Մեծն Հայաստան», Ս. Եպ. Ջալալեան. մասն I, էջ 99.

**** » » » » » » 28.

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ
ԵՒ
ՅՈՎՀԱՆ ՄԱՅՐԱԳՈՄԵՑԻ

*Ազգային պատմութեան և գրականութեան մէջ Մանդակունի ականաւոր հայրապետի գրուած ճառերն ու ցոյց տուած արժանիքը որոշելուն մի ընդարձակ, մանրակրկիտ ուսումնասիրութիւն է նուիրել Հ. Բ. վ. Սարգիսեան**. *բայց այն պատմական և գրական խնդիրները, որ նա պարզել է կամեցել, դժբաղդաբար աւելի պղտորած ենք գտնում այդ քրտնաթոր աշխատութեան մէջ։ Ուրիշ տեղ*** *արդէն գրել ենք, որ ոչ մի հիմք չկայ Մանդակունուն նոյնացնելու Ե. դարում յիշուած այլ Յովհաններից որ և է մէկի հետ։ Եթէ նա յետնադարեան գրուածներում ս. Սահակի աշակերտ է տրւում, ոչ տարբեր իմաստով, անշուշտ, քան ինչպէս իր ժամանակակից Ղազար Փարպեցին, կամ այլ «կրտսեր Թարգմանիչ» կոչուածներ, որոնք միմիայն ս. Սահակի և ս. Մեսրոպի* դպրոցի *աշակերտներ համարուել կարող են՝ առաձգական բացատրութիւններով։ Որքան անհասկանալի են այն ենթադրութիւնները, որոնցով Հ. Սարգիսեան իբրև Յովհան Եկեղեցացուց տարբեր անձ է ներկայացնում Կորիւնի յիշած Յովհան* Եկեղեցացին, *նոյնքան և աւելի խախուտ՝ այս վերջինին Մանդակունի դարձնելու հիմունքները։ Կորիւնի խօսքերը շատ պարզ են։ Ս. Մեսրոպի մահից յետոյ «վերակացու առաջապահ կարգուել են նորա* գլխաւոր աշակերտները՝ *ա ը Յովսէփ և բ-ը Յովհան»։ Ուրեմն (ս. Մեսրոպի) մահից յետոյ հանդամանքների բերմամբ այս Յովհանը Պարսկաստան է գնացել, կապանքի և տանջանքի ենթարկուել Տիզբոնում և «խոստովանողական անուն ժառանգելով» վերադարձել Հայաստան՝* ի նոյն վերակացութիւն,*—անշուշտ Վարդանանց պատերազմից շատ առաջ, և եթէ ս. Մեսրոպի մահից անմիջապէս յետոյ, ապա ուրեմն 440—441 թուականներին։ Այդպիսով նա կարող էր մասնակցել Շահապիվանի ժողովին իբրև «գլխաւոր երէցներից» մէկը, բայց ոչ երբէք Մանդակունին լինել, ինչպէս ընդունել է նաև Հ. Ալիշան****. *ապա թէ ոչ նա աւելի քան իննսնամեայ գառամեալ հասակում կներկայանայ իբրև մի կորովի ձիավարող, որին Հազարաւուխտ զօրավարի Դուինի վերայ յարձակուած ժամանակ ձիուց վայր ձգեցին և «կիսամահ թողին»*****. *մինչդեռ նա յետոյ առողջացաւ, և ըստ նոյն Հ. Սարգիսեանի դեռ էլի տասնեակ տարիներ ապրել է՝ եռանդալից գործունէութեամբ։ Իսկ «թէ էր նա եղբօրորդի մեծանուն կաթուղիկոսին Գիւտի», Փարպեցին իր թղթի մէջ երբէք ծանուցած չէ. սորա պարզապէս յիշած*† *«երանելի Յովհան»ին քան զԳիւտ մեծանուն կաթուղիկոսին հետ նոյնացնելու անտեղութիւնը պէտք է որ վերջապէս պարզ լինի։*

* Քննադատութիւն Յովհան Մանդակունւոյ եւ իւր երկասիրութեանց վրայ. Վենետիկ, 1895. (260 եր.).

** Հայոց եկեղեցւոյ պատմութիւն. մասն Ա. Վաղարշապատ, 1908 եր. 177.

*** Այրարատ, եր. 519.

**** Ղ. Փարպեցի, պատմութիւն. Վենետիկ, 1873. եր. 442.

† Նոյն. եր. 595.

Սակայն այն է, որ նոյն իսկ մեր պատմագիրները՝ Յովհաննէս Դրասխանակերտցուց սկսած, ուրիշ մի առանձին բան չեն իմացել Մանդակունու մասին, քան աւանդել էր Փարպեցին, կամ քաղել կարելի էր ինչ ինչ անորոշ աւանդութիւններից։ Փարպեցու պատմութեան մէջ Մանդակունին հանդէս է գալիս Վահանանց ապստամբութիւնից յետոյ՝ իբրև «հրեշտակակրօն սուրբ կաթողիկոս»*, և ոչինչ չենք իմանում այն մասին, թէ նա երբ է կաթողիկոս եղել և ինչպէ՞ս, ոչինչ՝ կաթողիկոսութիւնից առաջ նորա վարած կեանքի մասին։ Փարպեցին մինչև իսկ «Մանդակունի» չի անուանում նորան ոչ մի տեղ. բայց յետագայ ժամանակի յիշատակարաններում ընդհանրացած աւանդութիւն է, որ նա «յազատ տանէ» էր և այդ իշխանական տոհմից սերուած։ «Վռամական գահնամակի» մէջ** Մանդակունիք ԽԷ. տեղն են բռնում Հայոց 70 նախարարական տների շարքում, ինչպէս և Աւարայրի ճակատամարտից յետոյ Պարսկաստան գերի տարած նախարարների մէջ Սահակ և Փարսման Մանդակունիները վերջիններից են. ուստի դժուար այդ տոհմը երբ և իցէ առաջնակարգ դիրք գրաւած լինի, և այն ամէնը, ինչ որ Խորենացին պատմում է Տրդատ Մեծի դաստիարակ Արտաւազդ Մանդակունի սպարապետի և նորա տոհմակիցների մասին՝ առասպել պէտք է համարել. նորագոյն հետազօտութիւնները անկասկած են դարձնում, որ Տրդատ Մեծի ժամանակ Հայոց սպարապետը մի Արտաւազդ Մամիկոնեան էր***, ինչպէս նորանից յետոյ 2—3 դար շարունակ Մամիկոնեաններն էին սպարապետ, առաջ էլ հաւանականաբար նոքա են եղել։ Կարելի չէ յամենայն դէպս որոշել, թէ արդեօք Յովհան Մանդակունու իշխանական ծագումը կաթողիկոսական աթոռ բարձրանալու համար որ և է նշանակութիւն ունեցե՞լ է։ Եթէ նորա ծննդավայրը, Արշամունեաց Ծախնոտ գիւղը լինելով այժմեան Վարդով գաւառի մէջ էր†, հեշտութեամբ կարող էր նա ազգակցութիւն ունենալ Հայոց հին քահանայապետական տների՝ ս. Լուսաւորչի սերնդոց կամ Մանազկերտցիների հետ, և այնտեղից որոշ ժառանգական իրաւունք ստացած լինել։ Սակայն այսպիսի հարցերին պատասխան տալու համար սպասենք, որ բաղդաւոր գիւտածով մի նոր պատմական յիշատակարան լոյս ընկնէ։ Առ այժմ պէտք է բաւականանալ ենթադրութիւններով, և մենք ուրիշ անգամ արել ենք մեր ենթադրութիւնները այս շրջանի երկու կարևորագոյն եկեղեցական խնդիրների մասին՝ թէ երբ և ինչպէս ժառանգական կաթողիկոսութիւնը Հայոց մէջ ընտրականի փոխուեցաւ, և երբ և ինչպէս կաթուղ. աթոռը Վաղարշապատից Դուին փոխադրուեց††։

Յատկապէս՝ թէ աթոռի տեղափոխութիւնը տեղի է ունեցել Գիւտի կաթողիկոսութեան օրով, այնքան միաբան են այդ նկատմամբ մեր պատմիչների և ձեռագիր յիշատակարանների վկայութիւնները, կամ՝ թէ Մանդակունու աթոռանիստը Դուինն է եղել սկզբից և եթ, այնքան է պարզ Փարպեցու պատմութիւնից, որ զարմանալ միայն կարելի է, երբ մի նոր ապարդիւն աշ-

* Եր. 572.

** Տես. Այրարատ, եր. 450.

*** Տես. Крещеніе армянъ, грузинъ и п. Н. Марръ. С. Петербургъ, 1905. с. 115, 123.

† Տես. Ազգապատում, Մ. ա. Օրմանեան, Կ. Պոլիս, 1912. էջ 453. Համե. Ստ. Տար. Ասողկան՝ Պատմութիւն տիեզերական. ի Ս. Պետերբուրգ, 1885. եր. 81.

†† Հայոց եկ. պատմութիւն, եր. 136. եւլն.

խառնութիւն է գործ դրում այդ տեղափոխութիւնը Մանդակունու օրով կատարուած ցոյց տալու։ Բաւական փաստ է միթէ դորա համար այն թիւրիմացութիւնը, որ աթոռի տեղափոխութեան իբրև նախաձեռնող յիշուել է Վարդան Մամիկոնեանը։ Եթէ բանաւոր իսկ չհամարուին այն հիմունքները, որ այդ թիւրիմացութիւնը պարզելու համար մենք յառաջ ենք բերել, պէտք էր նկատել գոնէ, որ Վարդանի անուան յիշատակութիւնը ընդհանուր չէ և որ այդ անուան տեղ Վահան դնելով խնդիրը չի պարզուի, այլ նորանոր բոլորովին անլուծանելի թիւրիմացութիւններ կծագեն։ Մ. Աթոռի մատենադարանի ձեռագիրների մէջ ևս գտնւում է** այն յիշատակարանը, որից Հ. Սարգիսեան յառաջ է բերում*** Գիւտ կաթուղիկոսի մասին գրածը թէ՝ «Ընդ առաջինս կացեալ՝ հաստատեաց զաթոռ հայրապետութեանն ի Դուին, զկնի կատարման սրբոց Վարդանանցն»։ Այս խօսքերի իմաստը պարզ է, կարծում ենք։ Վարդանանց նահատակութիւնից յետոյ (որ չի նշանակում հարկաւ՝ Աւարայրի ճակատամարտից անմիջապէս յետոյ) կաթուղիկոսանալով Գիւտը առաջինն է եղել, որ հայրապետական աթոռը հաստատել է Դուինում։ Մեզ ծանօթ բոլոր պատմական յիշատակութիւնները, բացի ս. Վարդանին վերագրուած գրքից, լաւ յարմարւում են այս պարզ նկարագրին։ Ս. Ղևոնդեանց հետ Պարսկաստան գերի տարուած նախարարների թւում Արծրունեաց տէր Ներշապուհից յետոյ իբրև երկրորդ Արծրունի իշխան յիշւում է մի Շաւասպ****, և ոչինչ չի արգելում նորան ցնել սորան Դուինում մեհեան շինող Շաւասպ Արծրունու հետ†, որ ուրանալով կարող էր պատիւ ու իշխանութիւն ձեռք բերած և Հայաստան վերադարձած լինել, ինչպէս պատմում է Թովմա Արծրունին††, բայց երեւթին մի լաւ աղբիւրից վերցնելով իւր պատմուածքի մանրամասնութիւնները, և միայն ժամանակի պարագաները շփոթելով։ Իսկ այդ Շաւասպին սպանող, Դուինում նորա շինած մեհեանն աւերող և քարերովը ս. Գրիգորի տաճար կառուցանող Վարդանի փոխարէն՝ շատ աւելի յարմար է, ինչպէս վերև մատնանշած տեղում աշխատել ենք ցոյց տալ, նորա Մագնոս որդուն դնել, որին յիշում են Ասողիկ††† և ուրիշները, քան Վահան Մամիկոնեանին։ Միթէ կարելի է ենթադրել, որ Վահան Դուինի կաթուղիկէն կառուցած ու Յովհան Մանդակունու աթոռն այնտեղ փոխադրած լինէր, և այդպիսի մի կարևոր դէպք չյիշէր Փարպեցին, որի պատմութիւնը ջատագովութիւն է Վահանի սխրագործութեանց և որ նորա միւս շինութիւններն ու նորոգութիւնները գովութեամբ յիշել է. մինչդեռ եթէ Վարդան իրօք մի որդի ունեցել է, որ Մամիկոնեանց տանուտէրութեան և սպարապետութեան իսկական ժառանգն էր և կարող է շատ բան արած լինել մեզ գրեթէ անյայտ մնացած մի ժամանակաշրջանում, ինչպիսին են Յազկերտի մահուան յաջորդող խռովութեան տարիները և Պերոզի թագաւորութեան առաջին օրերը, Ղազար գուցէ շատ պատճառ ունէր նորա գործը նոյն իսկ դիտմամբ*

* Ազգապատում, եր. 431.

** Հմմտ. Հ. 634=732, թ. 435.

*** Քննադատութիւն, եր. 13 եւ 14.

**** Փարպեցի, պատմութիւն. եր. 256.

† Յովհ. Կաթուղիկոսի՝ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912. եր. 59.

†† Պատմութիւն տանն Արծրունեաց. Ս. Պետերբուրգ., 1887. եր. 77.

††† Պատմութիւն տիեզերական Ս. Պետերբուրգ, 1885, եր. 79.

մասայութեան տալու։ Ցամենայն դէպս այն եկեղեցին, ուր Վահանանց ապստամբութիւնից անմիջապէս յետոյ ուխտեալ նախարարները, նախ քան առաջին ճակատամարտի մէջ մտնելը, գնում են աղօթելու՝ անկասկած Դուինում էր, և ս. Գրիգորի անունով լինելուն ու ս. Գրիգորի նշխարները իւր մէջ ամփոփելուն համար էր, որ առանձնապէս շեշտում է ս. նահատակ Գրիգորի ճգնութիւնը։ Եւ քանի որ միաժամանակ յիշում է այդտեղ էլ* Երեսակնակրօն ս. կաթուղիկոս Յոհանը, *որին նոյնպէս «երկիրպագանէին նախարարքն և ամենայն արք զօրուն», մի՞թէ կասկած կարող է լինել, թէ այդտեղ էր ուրեմն կաթուղիկոսարանը։ Մենք ամենևին չենք տեսնում, որ «Մանդակունին ալ շարունակ Վաղարշապատի և Դուինի մէջ կերթեւեկէր», և երբէք չենք գտնում, որ նա հոգևոր գործերի համար* Էջմիածին *(?) եկած լինի, այլ Դուինն է Փարպեցու պատմութեան մէջ նորա մշտական կայանը, և այն անգամ իսկ, որ նա թափորով հանդիպում է, Նիխորի հետ կապած հաշտութիւնից յետոյ՝ փառքով վերադարձող Վահանին, և միասին Վաղարշապատ են գնում՝ ուր Մամիկոնեանք հաւանականաբար ս. Սահակից ժառանգած կալուածք ունէին, նուիրական սուրբ տեղերում գոհութիւն մատուցանելու Աստուծուն, անշուշտ Դուինից էր ընդառաջ գնացել՝ «Պատուական նշանաւ խաչին և սուրբ նշխարօք ճգնազգեաց նահատակին Գրիգորի»։*

Այսպէս ուրեմն՝ Մանդակունու մասին այնչափը միայն գիտենք Փարպեցու պատմութիւնից, որ նա կաթուղիկոս էր արդէն 481 թ. ին, երբ Վահանանց ապստամբութեան սկիզբը դրուեցաւ, որ ապստամբութեան տարիներում նա միշտ ուխտեալ նախարարների հետ էր՝ քաջալերութեամբ և օրհնութեամբ ճանապարհ էր դնում պատերազմ գնացողներին, անձամբ իսկ պատերազմի դաշտ գնում և աղօթում ի պաշտպանութիւն քրիստոնէական հաւատոյ մարտնչողների համար, մի անգամ Դուինի վերայ եղած յարձակման միջոցին հազիւ կեանքը ազատում, քանի անգամ թափօրով և գոհաբանական մաղթանքներով դիմաւորում յաղթողներին, և վերջին անգամ իւր հովուապետական պարտքը կատարում Վահանի մարզպանութեան իշխանութիւնն ստանալու առթիւ, երբ գոհացողական մաղթանք է կատարում և եկեղեցու բեմից ատենաբանելով՝ իւր հոգեկան հրճուանքն արտայայտում հաւատոյ պաշտպանների յաջողութեան, խորին վիշտը՝ հաւատուրացների անկման նկատմամբ, յորդորում առաջիններին քրիստոնէական ներողամտութեամբ և սիրով վարուել վերջինների հետ, զղջման ու դարձի ճանապարհը բանալ նոցա առաջ։ Մեզ յայտնի չէ նոյն իսկ, թէ Վահանի մարզպանութիւնը, և հետևաբար Մանդակունու այդ ատենաբանութիւնը՝ ո՞ր թուականին է տեղի ունենում. յայտնի չէ ամենևին, թէ այնուհետև մինչև ե՞րբ է տևում սորա կաթուղիկոսութիւնը։ Իսկ մեր ուշ ժամանակի պատմիչների և յիշատակարանների տուած թուանշաններով ժամանակագրութիւն կազմելու իւրաքանչիւր փորձ անպատուղ աշխատութիւն պիտի համարուի։ Եթէ Մանդակունուն վերագրուած ամենաշատը 12 տարիների վրայ աւելացնենք Բաբգէն կաթուղիկոսին ամենաշատը տրուած 6 տարիները, և առաջինի կաթուղիկոսութեան սկիզբը համարենք անգամ 480—481 թ. ը, դարձեալ Բաբգէն վախ-

* Փարպեցի, պատմութիւն, եր. 57։

ճանած պիտի լինէր 498—499 թ.ներին. մինչդեռ սորա թղթերից շատ որոշ կերպով գիտենք այժմ, որ 506 թ.ին ժողով է գումարել Դուինում։ Ինչու ուրեմն յուսահատական ենթադրութիւններով այդ տարաձայնութիւնները հաշտեցնելու աշխատել, քանի որ պարզ պէտք է լինի, թէ ինչպէս ուրիշ գրականութեանց, այնպէս և մեր մէջ այդ ժամանակագրական թուերը յետոյ են կազմուել՝ արհեստական կերպով. և ինչու Բաբգէնի կաթողիկոսութեան տարիները երկարացնել՝ մինչև 506 թ.ը հասցնելու համար, որի գործունէութեան մասին բացի ժողովներ գումարելուց ուրիշ բան մեզ յայտնի չէ, և ոչ Մանդակունուն, որին պատմական և եկեղեցական աւանդութիւնը բազմաթիւ բարեկարգութիւններ և հարուստ մատենագրական աշխատութիւն է վերագրում։

Վերև մատնանշած Հ. 732 ձեռագրի յիշատակարանը գրում է. «Տէր Յովհան Մանդակունի՝ յաղագս տանէ, ամս Զ. սա նախ գիր գտաւ Հայաստանեայց ժամակարգութեանց՝ սքանչելապէս յարդարեալ քարոզս և աղօթամատոյցս և երգս հոգևորս, ի փառս Աստուծոյ, և զՏէր Աստուած զաւրութեանց պատարագամատոյցն»*։ Իսկ այդպէս կոչուած «Օրհնութիւնաբեր ցուցակի» մէջ, որին առանձին կարևորութիւն է ընծայում Հ. Սարգիսեան և ամենայն միամտութեամբ «անապական Ե. դարուն գրուած» համարում, չնայելով որ այդ ցուցակի մէջ Մանդակունին իբրև մի հին մատենագիր է յիշուած, իսկ ինքը նորա կեանքը երկարացնում է մինչև 498—499 թ.ը (400-ից սկսած), ասուած է**. «Իսկ զհիմնարկէք և զեկեղեցւոյ աւրհնէք և զօրհնել տաճարի և ժամահարի և սկի և հանդերձի սպասու, և աւազան և մկրտութիւն առնել և խաչ աւրհնել և պսակ դնել, և Պահոց քարոզնին՝ զայդ Մանդակունի է արարեալ, որ ԺԴ. թիւ էր ի սրբոյն Գրիգորէ մինչև ցայս»։ Աւելացնենք սորա վերայ Յովհաննէս Պատմագրի վկայութիւնը Մանդակունու մասին***, «որ առլցեալ իսկ էր ամենայն հոգևոր հանճարով, և կարգս յօրինեալ ճոխացուցանէ պայծառապէս զամենայն աղօթական ժամակարգութիւնս եկեղեցւոյ սրբոյ, և յարդարէ ևս ճառս զգուշացուցիչս գիտաւորական կենցաղոյս, որ բերէ զոգւոցն փրկութիւն»։ Ասողիկի խօսքերը†. «Զհայոց բազում կարգս ուղղութեան կատարեաց, զքարոզս գիշերի և տուընջեան, զկարգս մկրտութեան, զարկաւագի, զքահանայի և*

---

* Համե. Սրբազան պատարագամատոյցք Հայոց (Հ. Գաբրիէլեան եւ Հ. Տաշեան) Վիեննա, 1897. եր. 321, որ «Սա նախագիր գտաւ» կարդում է, եւ չգիտենք ո՛րպիսի հիմք ունենալով, այս գրուածքը Յովհ. Պատմագրին վերագրում։

** Համե. Հայկ. թարգմանութիւնք նախնեաց (Հ. Գ. Զարբհանալեան). Վենետիկ, 1889. եր. 246։ Նոյնը գտնում է Մ. Աթոռի մատենադարանի մի քանի ձեռագիրներում. մենք առնում ենք Թաւրիզի Առամեան գրադարանից բերած եւ այժմեան ցուցակի մէջ նախկին Հ. 528-ի տեղը դրած Հ. 4207 ձեռագրից (թ. 118 ր.), որ սկզբում տպագրից աւելի ունի հետեւեալ տողերը. «Կարգաւորութիւն աւրհնաբեր ցուցակին, որ ունի յինքեան զժամանակ իւրաքանչիւր կարգեալ կանոնաց, զտեղիսն, թէ ո՛վ ոք կամ յորմէ՝ գաւառէ՝ զհայրապետաց ժամանակս ճգնակեցից, թէ ո՛վ եբեր ի Հայոց աշխարհս եւ որո՛ց նուամանաւ կարգեալ ճառեցին։ Յետ ՃԺԱ. ամի սրբոյն Գրիգորի եղեւ թարգմանութիւն հայերէն լեզուիս։ Երանելին Մովսէս եւլն.»։ Երեւի նորա համար, որ տպագիրը «Երանելին Մովսէս» պարբերութեամբ է սկսում, Հ. Սարգիսեան «Ս. Սահակայ աշակերտին՝ Մովս. Խորենացուն, անուամբ մեզ հասած» է համարում այս ցուցակը։

*** Եր. 60.

† Պատմութիւն, եր. 81.

զեպիսկոպոսի, և զօրհնութիւնս եկեղեցւոյ և զխոշխոր զպատարագամատոյցն, զոր Աթանասի ասեն լինել». Վարդան պատմիչի ասածը՝ «Իմաստասէր և լի Հոգւով Աստուծոյ, որ բարիոք յօրինեաց զկարգս ձեռնադրութեան և ժամակարգութեան, և դասս խրատուց. և սա թարգմանեաց զեկրորդ Կորնթացւոց թուղթն, զՅոհաննն, և այլ բազում օգուտս գործեաց». Թողնենք դեռ ուրիշ հարևանցի յիշատակութիւններ, որ ամփոփուած կարելի է գտնել Հ. Սարգիսեանի գրուածքի մէջ,—և ահա մեր առաջ բացուած կանգնենք մի շարք բարդ խնդիրներ, որոնք սերտ կապ ունին մեր ծիսարանի, ժամագրքի, պատարագամատոյցի և կանոնագրքի կազմութեան հետ, և նոցա ընդհանուր ուսումնասիրութեան մէջ պէտք է քննուին, որպէս զի Մանդակունուն բաժին ընկնող աշխատութիւնը և սորա արժէքը որոշուի։ Այդ խնդիրների մէջ չենք մտնի։ Միայն իբրև կողմնակի պարզաբանութիւն Վարդան պատմիչի յիշատակած Մանդակունու թարգմանչական աշխատութեան՝ կակնարկենք, որ մեր հրատարակութեամբ մատուցի ներքոյ եղող «Կնիք հաւատոյ» ժողովածուի մէջ, բ. 238 v., հետևեալ վերնագիրը կայ.« Երանելոյն Յովհաննու եպիսկոպոսի Կոստանդնուպօլսի, ի ԿԴ թարգմանութենէն աւետարանին Յոհաննու», որի ներքոյ յառաջ է բերած Ոսկեբերանի Յովհաննու աւետարանի մեկնութեան մի փոքրիկ հատուածը՝ ծանօթ տպագրուածներից տարբեր թարգմանութեամբ։ Թւում է, թէ պէտք է կարդալ այս՝* «երկրորդ թարգմանութենէն աւետարանին Յոհաննու», *առնչութիւն տեսնել Վարդանի* «զերկրորդ Կորնթացւոց թուղթն, զՅոհաննն» *շփոթ բառերի հետ և եզրակացնել, որ հաւանականաբար Մանդակունին Ոսկեբերանի մեկնութեանց հետ կապուած ս. Գրքի ինչ ինչ մասերի մի երկրորդ թարգմանութիւն ընծայել է**։*

Մեր բուն նպատակը կենայ որոշել. ա) Ի՞նչ դեր է բռնել Մանդակունին ժամանակակից դաւանաբանական վէճերի վերաբերմամբ. բ) Ի՞նչ ճառեր է նա գրել։

*Մինչև այժմ ընդունուած գրութիւնն այն էր, որ Բաղկեդոնի ժողովի հետ կապ ունեցող վէճերի մէջ Հայոց եկեղեցին խառնուել է առաջին անգամ Բաբգէն կաթուղիկոսի օրով. Չամչեան, ինչ ինչ միջնադարեան գրողներից օգտուելով՝ նկարագրել էր իւր պատմութեան մէջ***, թէ իբր մոլորեցուցիչներ են եկել Հայաստան, սուտ տեղեկութիւններ և սխալ գաղափար տուել Բաղկեդոնի ժողովի մասին, Բաբգէն կաթուղիկոսն էլ Վրաց և Աղուանից մասնակցութեամբ ժողով է գումարել, և առանց երկար բարակ քննելու՝ մոլորուելով, նզովել Բաղկեդոնի ժողովը։ Յովհաննէս Պատմագրի վկայութեան հիման վրայ**** ժողովի տեղը նա նշանակել էր Վաղարշապատի Կաթուղիկէն, իսկ թուականը՝ առանց հիմունքի, իբրև հաճոյ եղած ժամանակագրութեամբ՝ 491։ Նորա այդ տեսութիւնները անխօս ընդունուել էին և անթիւ անգամ կրկնուել, ամենայն անտեղութեամբ կրկնւում են ոմանց կողմից մինչև այժմ էլ, չնայելով, որ արդէն 1898 թ. ի Արարատի մէջ մենք*

* Հաւաքումն պատմութեան. Վենետիկ, 1862. եր. 55.

** Պէտք է նկատել, որ յիշեալ վերնագրի ներքոյ բերած մեկնութեան հատուածի աւետարանի խօսքերն եւս սովորականից տարբեր թարգմանութիւն են։

*** Գիրք Գ, գլուխ ԼԴ, եր. 225.

**** Եր. 62.

հրատարակել ենք Բաբգէնի թղթերը* և ցոյց տուել, որ սա ժողով գումարել է 506 թ.ին՝ Դուինում, և ժողովի բուն խնդիր եղել են Նեստորական վէճերը**։ Այնուհետև Բաբգէնի թղթերը լոյս տեսան «Գիրք Թղթոց»ի ամբողջական հրատարակութեամբ***, և շուտով լոյս կտեսնի մի ընդարձակ հատուած նոյանից վերոյիշեալ «Կնիք հաւատոյ» ժողովածուի մէջ. ամէնքի համար պարզ պէտք է լինի այլ ևս, թէ ինչ էր Հայոց եկեղեցւոյ բռնած դիրքը դաւանական խնդիրներում այդ կաթուղիկոսի օրով։ Ուշադրաւ մի հանգամանք կար այդտեղ, որ մինչ Աբրահամ կաթուղիկոսի երրորդ թղթին մէջ**** որոշ կերպով ասած է, թէ Բաբգէն կաթուղիկոսի գումարած ժողովում Վրաց, Աղուանից և Սիւնեաց մասնակցութեամբ Քաղկեդոնի ժողովն ու Լևոնի տոմարն անիծել են, Բաբգէնի Ա. թղթի մէջ Քաղկեդոնի ժողովն ամենևին չի յիշուած և թղթին ուղարկողների մէջ չկան Վրացիք, Աղուանք և Սիւնիք, այլ միայն հայ եպիսկոպոսների և իշխանների անուններ են։ Սակայն Բ. թղթի մէջ ոչ միայն Քաղկեդոնի ժողովն է յիշուած, թէպէտ հարևանցօրէն, այլ և ասած է, թէ «յառաջագոյն Վրաց և Աղուանից միաբանութեամբ, իւրաքանչիւր աշխարհի գրով» հաւատոյ մասին գրել էին։ Այս հանգամանքը առիթ է եղել ենթադրելու, թէ Բաբգէն մի երկրորդ ժողով է գումարել Վրաց և Աղուանից հետ†, և այդ ժողովի մէջ են որոշել մերժել «Քաղկեդոնի ստութիւնը»։ Այդպիսի ենթադրութեան նպաստաւոր մի կէտ ևս կարելի էր համարել, որ մինչ Ա. թղթի մէջ «Վարդ Մամիկոնեան» պարզապէս է յիշուած, Բ. թղթի մէջ յիշուած է իբրև «Հայոց մարզպան»։ Արդ, «Կնիք հաւատոյ» ժողովածուի հատուածը, որ ըստ վերնագրին Բաբգէնի Ա. թղթից պիտի լինէր ամբողջապէս՝ մի մասով միայն մեր ձեռքը հասած Ա. թղթից է, մինչ շարունակութիւնը, որ շատ լաւ միանում է նախընթացին, համեմատ է Բ. թղթի այն կտորին, ուր Քաղկեդոնի ստութիւնից հրաժարելու մասին է խօսքը։ Սորանով փարատւում են նախ այս Բ. թղթի վաւերականութեան նկատմամբ արտայայտուած կասկածները††, և երկրորդ՝ պարզւում է, որ Բաբգէնի թղթերի զանազան խմբագրութիւններ են եղել՝ նայած, թէ ում են ուղղուել և ինչ նպատակով. ուստի և պէտք չէ այն թղթից, որ ուղղուած է միմիայն Նեստորականութեան վտանգի ներքոյ եղող Պարսկաստանի քրիստոնեաներին, եզրակացնել, թէ նորա մէջ յիշուած ժողովում Քաղկեդոնի մասին խօսք չկար, և մի երկրորդ ժողով ենթադրել՝ յատկապէս Քաղկեդոնի ժողովի որոշումները քննելու համար։ Առ աւելին կարելի է մտածել, որ ժողովը երկարատև է եղել և զանազան խնդիրներով զբաղուել. իսկ Հայոց հետ միաբան Վրացիք և Աղուանք կամ «իւրաքանչիւր աշխարհի գրով» թղթեր են կազմել†††, կամ մասնակցել են միայն այն նիստերին, ուր իրենց աւելի զբաղեցնող Քաղկեդոնի ժողովն էր ուշադրութեան առարկայ։ Ցամենայն դէպս՝ այժմ տեսնում ենք, որ Քաղկեդոնի

* Սեպտեմբեր, եր. 583 եւ Հոկտեմբեր, եր. 471.

** Արարատ, 1898, Հոկտեմբեր, եր. 454.

*** Թիֆլիս 1901, եր. 40—51.

**** Ուխտանէս, Պատմութիւն. Վաղարշապատ, 1871. եր. 85. Գիրք թղթոց, եր. 180. Կնիք Հաւատոյ, եր. 139.

† Ազգապատում, էջ 505. բայց ինչո՞ւ անպատճառ «508-ին առնենք»:

†† Քննադատութիւն, եր. 19. Մեր Հայոց եկեղեցւոյ պատմութիւն, եր. 191.

††† Տես. Ազգապատում, նոյն էջ 505.

ստութիւնից փախչելը նոր չէր Հայոց համար, և Բաբգէնի գումարած ժողովում քաղկեդոնականութիւնը ոչ թէ պէտք է նոր մերժուէր, այլ իբրև մերժուած նկատուէր, որովհետև նորա դէմ հանդէս է եկել արդէն Բաբգէնի նախորդ Մանդակունին։

Հարկաւ Մխիթարեան հայրերի համար Մանդակունին նոյնպէս ի բնէ կաթոլիկ է և քաղկեդոնական, ինչպէս մեր եկեղեցւոյ ուրիշ նշանաւոր և բազմարդիւն հայրապետները։ Հ. Սարգիսեան պարտք է համարել առանձնապէս դրուատել «սուրբ հայրապետիս իմաստութիւնը» և «խորին քաղաքագիտութիւնը»*, որ ակնածութիւնից ազատ է պահել Հայոց եկեղեցւոյ «Սրբազան աւանդութեամբք ակաղձուն նաւը» և չի գործել «այն ամենամեծ սխալը, զոր անհեռատեսութեամբ գործեցին ապա անոր յաջորդները, բաժնելով իրենք զիրենք Բիւզանդական կայսրութեան հզօր պաշտպանութենէն»,—առանց մտածելու, թէ Մանդակունին ապրում էր Զենոն և Անաստաս (?) կայսրների օրով, երբ «Բիւզանդական հզօր կայսրութեան» մէջ մերժուած էր Քաղկեդոնի ժողովը, և թէ մեր նահատակ եկեղեցին իր առաքելական անպարտութեամբ հենց նորա համար պարծենալ կարող է, որ իր հաւատարիմ և քաջ հովիւները հաւատոյ խնդիրը քաղաքական հեռատեսութեան հետ չեն շփոթել և իրենց առաջնորդող դրօշակը հողմի ուղղութեան համեմատ փոփոխել։ Զարմանալի է ապա, թէ ինչպէս պատմական քննադատութեան այնչափ յառաջ գնացած մեր օրերում շարունակում են երևակայել, թէ Քաղկեդոնի ժողովից անմիջապէս յետոյ նորա պաշտպանած ուսութիւնը դարձել է ամբողջ եկեղեցւոյ ուսութիւն, և միայն Հայերը, Վարդանանց պատերազմի պատճառաւ այդ ժողովին մասնակցած չլինելով՝ նորա որոշումները ժամանակին չեն ընդունել, իսկ յետոյ, երբ առիթ է ներկայացել նորանով զբաղուելու, սխալ են հասկացել և մերժել են. մինչդեռ պատմական փաստերը բոլորովին հակառակն են վկայում, ինչպէս մի քանի անգամ պարզել ենք**, պարզել են նաև ուրիշները***։ Այդ անհերքելի փաստերն ասում են, որ Քաղկեդոնի ժողովը սկզբից և եթ իր դէմ հանեց քրիստոնէութեան խոշոր մեծամասնութեանը, և ոչ միայն քրիստոնէական դաւանագիտութեան օրրան Աղեքսանդրիոյ առաջնակարգ պատրիարքութիւնը, որ Նիկիոյ և Եփեսոսի տիեզերական ժողովների դաւանական սկզբունքներն էր թելադրել, այլ շուտով նաև Երուսաղէմը, շատ չանցած մինչև իսկ Աղեքսանդրիոյ ախոյեան Անտիոքը, և վերջապէս Կ. Պոլիսը՝ նկատեցին Քաղկեդոնի որոշումներն իբրև նախկին 3 ժողովներով ընդունած քրիստոսաբանութեան անյարիր և խորթ նորմուծութիւն, ապա կանգնեցրին նոցա դէմ ամբողջ արևելեան քրիստոնէութիւնը՝ Նոր Հռոմից սկսած մինչև Ասիոյ և Ափրիկէի խորքերը, և միայն հին Հռոմը իւրեն ենթարկեալ վիճակներով հաւատարիմ մնաց նոցա, որ իրենից էլ բղխել էին։ Զենոն կայսեր 482 թ. ին արձակած Հենոտիկոն հրովարտակով այս դրութիւնը պաշտօնապէս վաւերացած և Քաղկեդոնի ժողովը իբրապէս դատապարտուած էր, երբ Նուարսակի հաշտութեամբ և Վահանի սպարապետական իշխանութիւն ընդունելով՝ 484 թ. ին, երկարատև յուզումները

* Քննադատութիւն, եր. 50 ծ.
** Տես. Հայոց եկ. ոյ պատմութիւն, եր. 186 ծ. Արարատ, 1896. ապրիլ, եր. 155 եւյն.
*** Ազգապատում, էջ 490 ծ.

Հայաստանում գաղթեցին, խաղաղութիւն հաստատուեց, և կարելի եղաւ ներքին բարեկարգութեան ու հոգևոր գործերի մասին մտածել։ Ս. Սահակի և ս. Մեսրոպի օրերից կէս դար էր անցել, և Հայոց կողմից որ և է մասնակցութիւն ընդհանուր եկեղեցւոյ մէջ արծարծուած դաւանական վէճերին անկէ չէր ունեցել. պէտք էր այժմ որոշ դիրք բռնել նոցա նկատմամբ։ Որքան ինչ կերպ վարուել կարող էր ս. Սահակի և ս. Մեսրոպի աշակերտ, նոցա հոգևոր մեծ ձեռնարկութիւնները վերակենդանացնող և առաջ տանող Մանդակունին, եթէ ոչ հաւատարիմ մնալ նոցա աւանդած Եփեսոսեան դաւանական սկզբունքներին և մերժել Քաղկեդոնի նորմուծութիւնը, ինչպէս և մերժում էին այդ ժամանակ իւր աչքի առաջ Յոյն-Հռոմէական մեծ կայսերութեան մէջ գտնուող բոլոր քրիստոնեաները։

Հ. Սարգիսեան առանձին գոհունակութեամբ շեշտում է, որ մինչ Մխիթարեանների քաղկեդոնական համարած ուրիշ հայրապետների մասին առարկութիւններ եղել են, «Մանդակունւոյ համար ոչ ոք ցայսօր կարող եղած է բան մ՚ ըսել»*։ Սակայն նորան արդէն ձեռագրով յայտնի էր «Գիրք Թղթոց»ի այն գլուխը, որի վերնագիրն է՝ «Երանելոյն Յովհաննու Հայոց եպիսկոպոսապետի, ապացոյց յերկուց բնութեանց ասել զՔրիստոս և կամ մի բնութիւն»**, և եթէ անաչառօրէն դատէր, պէտք է մտածէր, որ այս Յովհան եպիսկոպոսապետը միայն Մանդակունին կարող է լինել։ Հ. Ն. Ակինեան իրաւամբ դիտել է, որ մինչ «Գիրք Թղթոց»ի հնագոյն, Գրիգոր Վկայասէրի օրինակից արտագրուած, մասում՝ մինչև եր. 219, «առանձին խնամօք դասուած մէն մի թուղթ՝ ժամանակագրօրէն կը յաջորդեն իրարու Ե—Է դարուց թղթակցութիւնք», շարունակութիւն կազմող գրութիւնները պատահականօրէն ժողովուած և խառն ի խուռն դասաւորուած են***։ Արդ, մի կողմ թողնելով այն խնդիրը, թէ արդեօք այդ հնագոյն ժողովածուն ո՞վ է կազմել†, Հ. Ակինեանի դիտողութիւնից բնականաբար պիտի հետևեցնենք, որ ժամանակագրօրէն իրար յաջորդող թղթակցութեանց մէջ մի գրութիւն, որ ս. Սահակի և ս. Մեսրոպի օրով փոխանակուած թղթերից յետոյ է, Բաբգէն կաթուղիկոսի թղթերից անմիջապէս առաջ, և Յովհան եպիսկոպոսապետի անունն է կրում՝ Յովհան Ա. կաթուղիկոսի գրուածքը պիտի լինի. ինչպէս և սորա նախընթաց «Երանելի մեծի քերդողահօրն Մովսէսի Խորենացի եպիսկոպոսի» վերնագրով գլուխը Փարպեցու թղթի մէջ յիշուած, Ե. դարում ապրող՝ «երանելի Փիլիսոփա Մովսէսի» գրուածքը. ինչպէս որ Յովհան Բ. կաթուղիկոսի թուղթն ևս ճիշտ իւր տեղում է յառաջ բերած։

Մի անհերքելի փաստ գալիս է այժմ հաստատելու այդ եզրակացութիւնը։ Կնիք հաւատոյ ժողովածուի մէջ՝ p. 83 r. (եր. 130), կարդում ենք. «Երանելւոյն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց կաթուղիկոսի՝ ի հակաճառութենէն Քաղկեդոնի ժողովոյն, որ ասի Ապացոյց», և այդ վերնագրով բերած է Յովհան եպիսկոպոսապետի յիշեալ գրութեան մի հատուածը††։

---

* Քննադատութիւն, եր. 50.

** եր. 29.

*** Կնիք հաւատոյ Վաղ. Վիեննա, 1910. եր. 59.

† Մեր կարծիքն այդ մասին առիթ կունենանք բաւական ուրիշ տեղ յայտնելու։

†† եր. 53. «Բանք Եժէ. ի Նիկիայ գումարեալք», մինչև եր. 55. «Թէ դու մարդ ես եւ զանձն քո Աստուած առնես»։

Սակայն «Գիրք Թղթոց»ի մէջ էլ այս գրուածքն այնպէս է սկսում, որ ակներև հասուած է երևում Բաղկեդոնի ժողովի դէմ ուղղուած մի աւելի ընդարձակ ամբողջական շարադրութեան։ Ի՞նչն է խիկարէս առիթ եղել, որ Մանդակունին գրիչ է վերցրել Բաղկեդոնի ժողովի դէմ, մենք չգիտենք. բայց յայտնի է, որ նորա ժամանակ առիթներ շատ կարող էին լինել, ինչպէս դեռ նորանից առաջ յիշեալ նշանաւոր հայ հեղինակ Մովսէս փիլիսոփան առիթ է ունեցել մի բնութեան դաւանութիւնը պաշտպանելու Բաղկեդոնի ուսման դէմ։ Յամենայն դէպս երկու ժամանակակիցների գրուածոց մեզ հասած մասերը բաւական են ակներև կացուցանելու համար, որ Մանդակունու օրով արդէն Հայոց եկեղեցին խիստ վճիռն է արձակել Բաղկեդոնի ժողովի դէմ և որ սկզբից և եթ մեր հայրերը շատ լաւ իմացել են, թէ ինչ է Բաղկեդոնի ուսումը, և մերժել են այն պարզ գիտակցութեամբ, թէ անհամաձայն է 3 առաջին տիեզերական ժողովներով ընդունուած դաւանութեան և մի նոր, խորթ տեսակէտ է մէջ բերում։*

«Երանելւոյն Յովհաննու Մանդակունւոյ կաթուղիկոսի» վերնագրի ներքոյ գտնում ենք «Կնիք հաւատոյ» ժողովածուի մէջ (ր. 33 v. եր. 52) *նաև առաջին հատուածը այն դաւանաբանական բացատրութեան, որ տպագրուած է «Ի սուրբ Երրորդութիւնն և ի ծնունդն Քրիստոսի Աստուծոյ մերոյ» վերնագրով** և որի վաւերականութիւնը, գոնէ այս մասով, անկասկածելի է դառնում ուրեմն***։ Տպագրուածի երկրորդ մասը հազիւ թէ անմիջական շարունակութիւնը լինի այդ առաջինի, որ փառաբանութեամբ վերջանում է և որին կցուած է երկրորդը ըստ երևոյթին պատահաբար։ Մայր Աթոռի մատենադարանի Հ. 920=940=993 ճառընտրի մէջ† առաջին հատուածից յետոյ, որի վերնագիրն է՝ «Երանելւոյն Յոհաննու Մանդակունւոյ Հայոց վարդապետի, Յաղագս պահոց», անմիջապէս հետևում է, բայց առանձին և առանց վերնագրի, Տնտեսի առակը մեկնաբանող մի ընդարձակ ճառ, որի սկզբի երկու տողը միայն նման են տպագրուածի երկրորդ մասի սկզբնաւորութեանը։ Հ. Սարգիսեանի տուած ցուցումներից երևում է, որ նոյնը գտնում է իր «Դէորգայ» անուանած†† օրինակի, գուցէ նաև Երուսաղէմի Հ. 972 ձեռագրի մէջ†††։ Մենք պատճառ չենք գտնում այս ճառը Մանդակունու հարազատ գործ չհամարելու և դնում ենք ստորև՝ կից յիշեալ վաւերական հատուածին, ինչպէս գտնում ենք ճառընտրի մէջ։*

Հ. Սարգիսեան յիշում է երկու ուրիշ, ըստ երևոյթին դարձեալ դաւանաբանական բովանդակութիւն ունեցող՝ ճառեր Երուսաղէմի Հ. 77 ձեռա-

---

* Ո՞րն առաջ արդեօք, յայտնի չէ։

** Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի ճառք. Բ. տպ. Վենետիկ, 1860, եր. 212.

** Ժողովածուն կազմուած է Կոմիտաս կաթողիկոսի օրով, է. դարում, երբ չէին կարող չիմանալ, թէ ո՞ւմ գրուածքն է այս։ Հ. Սարգիսեան (Քննադատութիւն, եր. 155), գիտում է, թէ այս հատուածը փոխառութիւն է Գր. Նարեկացու մի ճառից, որի վերնագիրն է. «Յաղագս ս. Երրորդութեանն... ընդդէմ Արիոսի»։ Մեր մատենադարանի Հ. 921=948, ր. 57 v. ձեռագրում կայ. «Գրիգորի Աստուածաբանի՝ Յաղագս ս. Երրորդութեանն եւ մարմնանալոյ Որդւոյ» վերնագրով ճառ, որի մէջ նման խօսքեր ենք գտնում, բայց ո՛չ նոյն։

† Գրուած ՋԵ=1456 թ. ին «ի Վերի Նորավանս».

†† Քննադատութիւն, եր. 409.

††† Նոյն. եր. 71 ծան.

գրում, որոնք միացած գտնւում են կրկին նոյն գրատան Հ. 1377 ձեռագրում և որոնց առաջինի մասին է համարում ս. Ղազարու գրատան ԺԳ. դարու մի ճառընտրի մէջ գտնւող «Բանն Աստուած մարմնացաւ» հատուածը Իսկ Երուսաղէմի գրատան Հ. 1377 ճառընտիրի մէջ գտնւող մի ուրիշ ճառ, որի վերնագիրն է՝ «Յաղագս երկուց բնութեանց», նա առանց որ և է հիմքի անհարազատ է համարում*: Սակայն քանի որ Մանդակունու Բաղկեդոնի ժողովի դէմ գրած լինելն այժմ յայտնի է դառնում, ընդհակառակն հենց այդ ճառն ամենայն հաւանականութեամբ հարազատ պիտի լինի, և շատ ցանկալի էր միւսների հետ լոյս ընծայւած տեսնել այն, որով աւելի և աւելի կպարզւէին Մանդակունու դաւանաբանական տեսութիւնները: Ստորև գնում ենք մի ուրիշ փոքրիկ հատւած, որի Մ. Աթոռի ձեռագրատան ամենահին (Ժ. դարու) և ամենակարևոր ձեռագիրների մէկից վերցւած լինելը երաշխաւորութիւն է նորա հարազատութեան և որ ցոյց է տալիս, թէ Մանդակունին մեկնաբանութեամբ էլ զբաղւել է, և ուրեմն շատ հեշտութեամբ կարող էր «Տնտեսի առակի» յիշեալ մեկնութեան հեղինակը լինել:

Անցնենք այժմ այն խնդրին, թէ Մանդակունին ինչ ճառեր է գրել՝ բարոյական—խրատական բովանդակութեամբ: Յայտնի է Մխիթարեանների Մանդակունու անունով Բ. տպագրութեամբ հրատարակած ճառերի ժողովածուն, որ վերև յիշատակեցինք և որ 26 ճառեր է պարունակում՝ խիկարէս «Թուղթ» վերնագրով, հետը կցւած «Կանոնք», «Յաղագս քառասնորդական պահոց», յիշեալ «Ի ս. Երրորդութիւնն և ի ծնունդն Քրիստոսի Աստուծոյ մերոյ», «Վասն ոխոյ» և «Բան խրատու առ ճգնաւորսն»՝ զանազանակերպ բովանդակութեամբ հատւածներ: Այս վերջին հատւածները միւս 26 ճառերի կամ թղթերի հետ ոչ մի ներքին առնչութիւն չունին, այլ քաղւած են այս ու այն տարբեր ձեռագրներից և ի մի բերւած՝ Մանդակունու անունը կրող երկերի մի ամփոփում տալու համար: Եւ նորա համբաւը՝ իբրև մատենագրի, մինչև այժմ կապւած է եղել միայնում այդ 26 ճառերի հետ, որոնք և մեծ յարգ են վայելել՝ իբրև Ե. դարու հեղինակի և մեր ամենանշանաւոր հայրապետներից մէկի, բովանդակութեամբ և լեզուով հաւասարապէս արժանաւոր, գործ: Հ. Սարգիսեանի քանիցս յիշած «Քննադատութիւնը» նուիրւած է գլխաւորապէս այդ ճառերի մատենագրական յատկութիւնների ու արժէքը որոշելուն, և նա խօսք չի գտնում գերազանցապէս գրական նոցա առաւելութիւնները՝ նոցա հեղինակի մեծ հմտութիւնը: Նա մի առ մի յառաջ է բերել, թէ իրեն ծանօթ ո՞ր ձեռագիրների մէջ կան այդ ճառերը՝ ամբողջութեամբ կամ մասամբ, և ո՞րտեղ ո՞ւմ անունով են: Ի միջի այլոց յիշել է նաև ս. Էջմիածնի մատենադարանի 5 ճառընտիրները: Բայց ճառերից այնպիսիները կան, որ մեր մատենադարանի մինչև 20—25 ձեռագրի մէջ կարելի է գտնել, և առհասարակ աւելի բազմաթիւ և աւելի կարևոր ժողովածուներ ունինք այստեղ նոյն ճառերի, քան Հ. Սարգիսեան գտնել կարող էր Կարենեանի ցուցակի մէջ: Մի որոշ խումբ այդ ճառերի պարբերաբար կրկնւում է մեր տօնականների մէջ՝ իբրև Մեծի պահոց օրերի ընթերցման նիւթ: Մինչդեռ Հ. Սարգիսեան նոցա մեծագոյն մասն ինչ ինչ ձեռագիրներում վերագրւած է ցոյց տալիս ս. Եփրեմին, մի քանիսը Յովհ.

* Քննադատութիւն, եր. 36 եւ 38.

Ոսկեբերանին, մեր մատենադարանի ձեռագիրների մէջ միայն 8 ճառ վերագրուած ենք գտնում ս. Եփրեմին (յատկապէս «Վասն պահոց պնդութեան» 4 անգ և «Վասն խոստովանութեան փարոյ յանցանաց» 6 անգ), 3 ճառ միայն Ոսկեբերանին («Վասն մխիթարութեան վախճանելոց» 2 անգ, մինչ Հ. Սարգսեանի յիշածների մէջ ոչ մի անգ)։ Հ. Սարգսեան գտնում փորձեր է արել բացատրելու այդ երևոյթը, որ ձեռագիրների մեծագոյն մասի մէջ Մանդակունու անունով մեզ հասած ճառերը ուրիշ ձեռագիրներում ս. Եփրեմի կամ Ոսկեբերանի անունն են կրում, երբեմն նոյն ճառը թէ մէկի և թէ միւսի՝ մինչև իսկ մի երրորդի (օր. Յովհան Պլուզի) անունը, և ապա շատ բարդ պատճառաբանութիւններով՝ Եւրէնի և ասորէնի *փաստերով (իրօք յիշուած գլխաւորապէս այն փաստի վերայ, որ այդ ճառերից ոչ մէկը ս. Եփրեմի կամ Ոսկեբերանի բնագիրների մէջ չի գտնուել), եկել է այն եզրակացութեան, թէ նորա ընդհանուր առմամբ Մանդակունու գրչի հարազատ արդիւնք են։ Շատ զարմանալի է սակայն, որ նա, այնքան մանրակրկիտ հետազօտութիւններից յետոյ՝ ճառերից ոչ մէկի վրայ Յովհան Մայրավանեցու անուն չի գտել*, մինչդեռ Մ. Աթոռի մատենադարանի 5 ձեռագիրներում՝ այսինքն բոլոր նոցա մէջ, ուր այդ ճառերը հատ հատ չեն ընկած, այլ շարքով և ամբողջութեամբ, կամ մեծագոյն մասով՝ նորա կրում են Յովհան Մայրավանեցու անունը**։ Նոյն անունով գտնում ենք «Վասն փախուց և վաշխից» թուղթը Հ. 720 ձեռագրի մէջ (թ. 198 բ.), իսկ «Վասն հմայից գիւթականաց» ճառը, ինչպէս մանաւանդ նամակով մեզ հաղորդում է Տ. Բարգէն եպիսկոպոս, Մայրավանեցու անունով գտնւում է Անկիւրիոյ Կարմիր վանքի ձեռագիրների (300-ից աւելի) իր կազմած ցուցակի Հ. 106 ժողովածուի մէջ։ Յովհան Մայրավանեցու անունով են եղել նոյն ճառերը նաև Մ. Աթոռի մատենադարանի Հ. 1540 ձեռագրում, որ այժմ դժբաղդաբար չկայ մէջտեղ։ Բայց այդ ձեռագրից օգտուել է, ինչպէս և Մայրավանեցու անունը կրող յիշեալ ձեռագիրների երեքից, Հ. Գ. Տ. Մկրտչեան՝ հրատարակելու համար «Յաղագս սիրոյ և սրբութեան ճառը»***։ Հետևաբար նա վաղուց ուշադրութիւն էր դարձրել և մանաւանդ կերպով այն կարծիքը յայտնել, թէ Մանդակունու անունով հրատարակուած ճառերը իսկապէս Մայրավանեցու գործ պիտի լինին։ Միւս 2 ձեռագիրների վրայ, որ ինչպէս կտեսնենք, աւելի արժէքաւոր են և վերջին տարիներն են ընկած Գանձասարից և Տաթևից՝ իրենց տեղում իսկ ուշադրութիւն է դարձրել Տ. Գարեգին վարդապետ, որ և հետաքրքրուել է Մայրավանեցու հեղինակութեան խնդրով և կարևոր գիտողութիւններ արել Երուսաղէմի վանքի ձեռագրատանը, որոնցից կօգտուենք ստորև։ Ձեռքի տակ եղած բոլոր վաւերագրերն ու փաստերն ի մի բերելով այժմ՝ պէտք է ցոյց տանք, որ Յովհան Մանդակունու անունով հրատարակուած ճառերը ներկայացնում են իսկապէս Յովհան Մայրագոմեցու «Խրատ վարուց» գիրքը, որի մասին յիշում են Սառդիկ† և ուրիշներ»††։*

* Ինչպէս նաև Հ. Տաշեան, Վիեննայի Մխիթարեանց ձեռագիրների իր կազմած ցուցակի մէջ։

** Բացի մի՝ վերջերս՝ Գ. 490, ձեռագրից, որի մասին ստորև։

*** Արարատ, 1905. յունիս, եր. 564.

† Եր. 87

†† Տես. Վարդան, Պատմութիւն. եր. 62.

Նախ՝ ճառերի այն «Նախադրութիւնը», որ Մխիթարեանք տպագրել են իրենց երկարագիր օրինակից՝ սկզբի կարեւորագոյն մասում շատ զգալի թերութիւններով, մենք ունենք ամբողջութեամբ Տաթեւից բերած Հ. 73 ձեռագրի մէջ (այժմ Հ. 3940), որ և ստորև յառաջ ենք բերում։ Ինչպէս տեսնում ենք, արդէն այդ Նախադրութեան վերնագիրը «Խրատ վարուց» գրուածքի մասին է, իսկ մէջն ասուած է, որ սոյն հեղինակն իսկապէս 44 թուղթ է գրել՝ ի բաց առեալ աղօթքն ու ողբերը, որոնցից 24-ը, «ի խրատ հաւատոյ»՝ ամփոփուած են մի ուրիշ գրքի մէջ, իսկ մնացածը՝ «ի խրատ վարուց առաքինութեան», ամփոփուել է այս գրքում։ Արդ, նոյն Ասողիկ և ուրիշները վկայում են, որ Մայրագոմեցին «Խրատ վարուց»ի հետ ունեցել է նաև «Հաւատարմատ» անունով մի գրուածք, և կասկած չի կարող լինել, որ խօսքն այստեղ այդ երկու գրուածքների մասին է։ Իսկ այն թիւրիմացութիւնը, որ 44-ից 24 հանելով մնում է 20, մինչ «Խրատ վարուց» թղթերի թիւը նոյն իսկ աղօթքն ու ողբը չհաշուած, աւելի է, մի պատահական գրչի սխալի արդիւնք պիտի համարուի, քանի որ այստեղ ճառերը նոյն ցուցակով են, ինչ որ Մխիթարեանց տպագրածի մէջ*։ Հ. Սարգիսեանի տուած ցուցամներից երեւում է, որ Տաթեւի այս ձեռագիրը նիւթերի դասաւորութեամբ և տպագրից ունեցած տարբերութիւններով բոլորովին նման է նորա «Երուսաղեմեան» անուանած օրինակին. միւս կողմից նա յար և նման է մեր մատենադարանի Գ. 490=2546 ձեռագրին, մինչև իսկ գրի ձևով, նման կարմրագրերով. Գրչի նման յիշատակարանով՝ ԺԳ. թղթի վերջում, որ անկասկած սա փոխ է առել առաջնից և փոքր ինչ ընդարձակել, և այն տարբերութեամբ միայն, որ Նախադրութիւն չունի, թղթերի հեղինակի անունն էլ ոչ մի տեղ չի յիշուած, ինչպէս և «Երուսաղեմեան» օրինակի մէջ։ Այս 3 օրինակներն ուրեմն միևնոյն խմբագրութիւնն են ներկայացնում և, ինչպէս մեր մատենադարանի երկու ձեռագրերի համեմատութիւնը ցոյց է տալիս, հնագոյն է և նախատիպ այն օրինակը, որ Նախադրութիւնը պահել է. գուցէ միւսները գիտմամբ հանել են՝ հեղինակի հետքը կորցնելու համար։

Այսպէս և Գ. 990=2825 Գանձասարի ձեռագիրը նիւթերի դասաւորութեամբ և բովանդակութեամբ նման է տպագրին, բայց ունի ԺԱ. թղթի վերջը և ԺԲ. ի սկիզբը, որ ըստ տպ. ի ծանօթութեան** պակաս է եղել Մխիթարեանց «Երկաթագրի» մէջ և ուրիշ օրինակից լրացուել է՝ զգալի տարբերութիւններով մեր ձեռագրից։ Սորա մէջ տպագրից անհամեմատ աւելի ընդարձակ է ԺԸ. թուղթը, որի միայն սկիզբն ու վերջը, և ներսից սակաւ տողեր՝ քաղած ներկայացնում է տպագիրը. երկերկու երեսով աւելի են նաև վերջին «Սրբոց Աստուած» և «Անձնայր ամէնքս» ճառերը. իսկ ընդհանրապէս շատ են բառական տարբերութիւններ***, Յամենայն դէպս այս երկու օրի-

* Զարմանալի է, որ Տաթեւի ձեռագրի մէջ ճառերի դասաւորութիւնը այդ «Յառաջագրի» համեմատ չէ, այլ նորա նախընթաց մի ցուցակի համեմատ։

** Եր. 101.

*** Առհասարակ թէ բառական տեսակէտից եւ թէ ըստ բովանդակութեան խիստ շատ տարբերութիւններ կան ճառերի զանազան խմբագրութեանց եւ ճառընտիրներում մուծուած օրինակների մէջ, որով անհրաժեշտ է դառնում մի նոր քննական հրատարակութիւն։ Այս ճառերի մէջ պակաս չեն, անշուշտ, նաեւ օտար հեղինակներից առնուած յաւելուածներ, ինչպէս օրինակ՝ «Յաղագս պէս պէս առաքինութեանց» ճառումն է «Տե՛ս, Տէ՛ր, զսատանայս իմ» յաւելումը զանազան ձեռագրերում՝ քաղուած է ս. Եփրեմի աղօթքներից։

նակն ևս մի ուրիշ խմբագրութիւն են ներկայացնում, որոնց նախատիպը նոյնպէս թէ նախադրութիւնն է ունեցել և թէ հաւանականաբար հեղինակի անունը կրել իր վրայ. իսկ պահել են՝ Մխիթարեանց երկաթագիրը միայն (կիսեղծ և հեղինակին անճանաչելի դարձնող) նախադրութիւնը, և Գանձասարի օրինակը՝ միայն հեղինակի անունը։ Վերջինս նախադրութեան փոխարէն ունի թղթերի վերջում, p. 366 v., յիշատակարան, ուր ասուած է. «Ուսոյ և սուրբս այս Յոհան Մայրավանեցի, երկրորդ Յոհան հանդուանակ հօրն Ոսկեբերանի, լուսադարդ բանիւ զլխաւորեալ ԻԸ. կանոնս՝ բստ արեգական կատարման ընթացից»։ Իսկ ամբողջ ձեռագրի վերջի յիշատակարանում, p. 504 r., կարդում ենք. «Գրեցաւ պատմութիւն ս. վկայից և խրատս վարուց *ի թվ. Հայոց ՊԱ. անվարժ ձեռամբ մեղապարտ քահանայի Թորոսի, ի քաղաքս Սուրղաթ, առ դուռն ս. (Աստուածածնիս)»։ Կասկած կարող է լինել միթէ այլ ևս, որ Մխիթարեանց «երկաթագիր» օրինակն էլ, որի վրայից նորա տպել են «Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի ճառք»ը, նոյնպիսի մի* խրատս վարուց *է՝ հեղինակն իրօք Յովհան Մայրավանեցին։*

Տարբեր մի խումբ են կազմում այն 4 ձեռագրները, որոնց մէջ գտնւում է, ինչպէս վերև ակնարկեցինք, Հ. Գ. Տէր Մկրտչեանի հրատարակած «Յաղագս սիրոյ և սրբութեան» ճառը՝ Յովհան Մանդակունու անունով, մինչդեռ տպագրութեամբ իբրև Մանդակունւոյ գործ յայտնի բոլոր ճառերը նոյն ձեռագրներում Մայրավանեցու անունով են։ Այդ ձեռագրներից Հ. 1539=2081 և 2240=2223 Հ. Գ. ի վկայութեամբ «ծագում են միջակէս կամ անմիջապէս» Հ. 1530 ձեռագրից, որ այժմ պակասում է. Յիշած երկուսը նիւթերի դասաւորութեամբ, բովանդակութեամբ, գրուածքի ձեւով՝ ամէն բանով միմեանց նման են, մինչև իսկ յիշատակարանները երկուսի մէջ նոյն տեղերում են, և նման բառերով։ Նորա սկսում են տպագրի Գ. թղթով, որ ունի այստեղ «Յաղագս պահոց» վերնագիրը և որի առաջին հատուածը պակասում է, սկիզբն է երկրորդի «Պարկեշտութիւն առաքինութեան պարուանդեալ զարդարեցուցանէ զամենայն անդամս մարմնոյն», նախադասութեան կիսից վերցրած՝ խօսքը։ Ըստ երևութին սոցա բոլորի նախատիպը մի թերի օրինակ է եղել, որից առաջի թերթերն ընկած էին, և Յիշածի սկիզբն էին այս բառերը։ Սակայն տպագրի Ա. թուղթը՝ «Վասն խոստովանութեան վարուց յանցանաց», կայ սոցա մէջ ԻԱ. տեղում. պակաս է միայն Բ.ը՝ «Վասն ապաշխարութեան», և յետոյ միւս բոլորը կան, բայց նախորդ երկու խմբերից ևս տարբեր դասաւորութեամբ։ Սոցա հետ սերտ կապ և նմանութիւն ունին Գ. 487=3111 ձեռագրի ճառերը, թէպէտ միայն 16-ը կան այստեղ, և ոչ ձեռագրի սկզբում, ինչպէս միւսների մէջ, այլ p. 139 v.-ից։ Սոցա սկիզբն էլ նոյն թերի «Պարկեշտութիւն առաքինութեան պարուանդեալ» ճառով է, միւս ճառերի դասաւորութիւնը նման ձեւով և մի տեղ միայն յետ ու առաջ դրած, նման ոչ միայն բովանդակութիւնը՝ ընթերցուածներով հանդերձ, այլ և «Վասն քահանայից տեսչութեան» ճառից յետոյ դրած յիշատակարանը։*

---

* Արարատ, 1905. Յունիս, եր. 562, ուր եւ այդ ձեռագրերի մասին կարեւորագոյն տեղեկութիւնները տրուած են։

Այսպէս ուրեմն մեզ ծանօթ բոլոր այն ձեռագիրները, որոնք ներկայացնում են յատկապէս Մանդակունուն վերագրուած ճառերի ժողովածու՝ յաւելեալ նիւթերով, որոշ կերպով բաժանւում են 3 խմբերի, և բոլորի մէջ կամ Յովհ. Մայրավանեցու անունով են ճառերը և կամ հեղինակի անունը պակասում է. իսկ Մանդակունու և ուրիշների անունով յայտնւում են այդ ճառերը միայն այն դէպքում, երբ հատ հատ արտագրւում են ճառընտիրների մէջ՝ եկեղեցական—բարոյակրթական գործածութեան համար։ Հետեւութիւնը պարզ է։ Բոլոր այդ ժողովածուների նախատիպը եղել է հաւանականաբար Յովհան Մայրագոմեցու «Խրատ վարուց» գրքի այնպիսի մի օրինակ, որի հեղինակի ով լինելը յայտնի էր ընդհանուր վերնագրից և «Յառաջագրից»։ Այն շրջաններում, ուր ներքին կամ օտար եկեղեցիների հետ եղած դաւանական վէճերի պատճառով Մայրագոմեցին նկատուել է իբրև մի կասկածելի՝ աղանդաւոր հայեացքների մէջ մեղադրուող անձ, ջնջել են նորա անունը, և տեղը բարեհամբաւ Մանդակունու անունը գրել, կամ վերնագիրն ու յառաջագիրը ջնջելով՝ ճառերն անանուն են թողել. այդպէս և արտագրուել են նորա ճառընտիրների մէջ՝ կամ Մանդակունու անունով, կամ անանուն. իսկ այս երկրորդ դէպքում յաջորդ արտագրողները համարել են այն հեղինակի գործ, որի անունը նախընթաց ճառի վրայ էր, և այդ անունն էլ գրել են վրան։ Այսպէս, կարծում ենք, ամէնից աւելի հեշտ կերպով է բացատրւում նոյն ճառերի տեղ տեղ ս. Եփրեմի և Յովհան Օսկեբերանի անուն կրելը։ Ճառընտիրների մէջ շատ սովորական է նաև ուրիշ, օտար հեղինակների՝ Յովհ. Օսկեբերանի, ս. Բարսղի, ս. Եփրեմի, Սեւերիանոսի ևլն. գործեր միմեանց հետ շփոթելը, և եթէ քննենք, կտեսնենք, որ նման թիւրիմացութիւններից է յառաջացել այդ, իսկ ներքին պատճառներ որոնելու կարիք չկայ։ Իսկ թէ իրօք Յովհան Մայրագոմեցու անունը այս ճառերի վրայից վերացնելու փորձեր եղել են, դորա ակներև ապացոյցը տալիս է Երուսաղէմի Հ. 1999 ձեռագիրը, ուր Տ. Գարեգին վարդապետ նկատել է նոցա վերնագրի՝ հեղինակի անուան համար սովորական տեղում, երկու տող քերած՝ ջնջած։ Այդ ձեռագիրը մեր բոլոր յիշածներից, հաւանականաբար նաև Մխիթարեանների Երկարագրից, հնագոյն ճառերի ժողովածու է, խոշոր բոլորգրով, որ ըստ թ. 245 ր. յիշատակարանի՝ «Գրեցաւ յորում եր թուական Հայոց ՈԺԹ, ի լեառն, որ կոչի Ակռակոմեր, ի գեղն Մուշեղկայ՝ ի յանապատն Նորսխի, առ դրան աստուածաբնակ սուրբ Աստուածածնին, յառաջ. հայր Նորսխի և երկրորդին Թեոդոսի»։ 1170 թ. ից մնացած մի վաւերագիր բաւական պատկառելի հնութիւն պէտք է համարուի, անշուշտ, մեր առանց այդ արդէն հանած եզրակացութիւնները հաստատելու համար։ Նոյն վստահութեամբ չենք կարող վկայութեան բերել Մ. Աթոռի մատենադարանի Հ. 908 «Ոսկեփորիկի» մէջ մեր նկատածը, որ «Սոսկան ոսկերք իմ» ճառի վերնագրում Յոհաննու անուան մօտի բաց գրչով ուղղած «Մանդակունեցոյ» է դարձրած. ԺԸ. դարու հետեւակ ձեռագիր է այդ, և գրողի պատահական շեղումից կարող է յառաջացած լինել ուղղումը։ Սակայն նոյն իսկ այդ «Մանդակունեցի» ձևը, ինչպէս Հ. Գալուստն էլ նկատել է, մտածել է տալիս իւր արհեստական կազմութեան մասին։ Իշխանական տան անուան ունի վերջաւորութիւնը ինչու պէտք է ինքն իրեն ծննդեան կամ բնակութեան տեղ մատնանշող ունեցի դառնար, որ մանաւանդ ներկայ դէպքում բոլորովին անիմաստ է։ Աւելի ուշադրաւ այն հան-

գամանքն է, որ ոչ միայն Մանդակունեցի ձևով է գործածած այս անունը ճառընտիրներում գրեթէ ամէն տեղ, ուր «Խրատ վարուց» գրքից վերցրած ճառերի վերնագրի մէջ է այն, այլ և օր. Հ. 940=993 ճառընտրի մէջ, մինչդեռ նախընթաց այդպիսի ճառերը «Մանդակունեցոյ» անունով են՝ թ. 343 v. «Սրբոյ անդուգականն» հատուածի վերնագիրն է, ինչպէս յիշեցինք՝ «Երանելոյն Յոհաննու Մանդակունոյ, եւն.», և թ. 347 v. «Ահեղ անօրէնութիւն» ճառի վերնագրում դարձեալ՝ «Մանդակունեցոյ»։ Ի՞նչ աւելի բնական բացատրութիւն կարող է լինել այս երևոյթի համար, քան այն, որ «Յովհաննու Մայրավանեցւոյ», կամ ըստ մեզ, ինչպէս յետոյ կտեսնենք, աւելի հաւանականօրէն՝ «Յովհաննու Մայրագոմեցւոյ» վերնագրի երկրորդ բառի միջին տառերը այնպէս քերել ջնջել և վրան նորն են գրել, որ դարձել է Մա(նդակու)նեցւոյ, որ և յետոյ ձեռագրից ձեռագիր արտագրուել է։

Այս փոփոխութեան սկիզբը պէտք է որ շատ վաղ դրուած լինի, և հաւանական է, որ արդէն Յովհաննէս Պատմագիրը այս ճառերի ի միջի այլոց Մանդակունուն վերագրուած լինելը գիտէր, երբ սորա համար մութ կերպով գրում էր, ինչպէս տեսանք. «Յարդարէ ևս ճառս զգուշացուցիչ գիտաւորական կենցաղոյս»։ Պակաս հաւանական չէ և այն, որ նա գիտէր, թէ այդ ճառերի իսկական հեղինակը Մայրագոմեցին է համարուում, բայց ամենայն յարգանօք խօսելով նորա, իբրև եկեղեցւոյ ուղղամիտ վարդապետի մասին՝ այնպիսի զգուշութեամբ է անցնում նորա համար ենթադրուած աղանդաւոր հայեացքների վրայից, որ հասկանալի է դառնում, թէ ինչու խօսք կատար նորա անունով գրուածներ ճանաչելու և նորա հայեացքների ուղիղ կամ թիւր լինելը դոցանով ստուգելու հարկից։ Աւելի պարզ է Ասողիկի վերև մատնանշած վկայութիւնը Մայրագոմեցու մասին. «Սա գրեաց երիս գիրս, և զանուն իւր ոչ վերագրեաց ի նոսա, վասն չընդունելոյ ժողովրդեանն. անուն միոյն՝ Խրատ Վարուց, և անուն միւսոյն՝ Հաւատարմատ, և անուն միւսոյն՝ Նոյեմակ»։ Եթէ ուղիղ են մեր պարզաբանութիւնները, այս խօսքերից պիտի հետևցնել, թէ Ասողիկին յայտնի էին «Խրատ վարուց» գրքի այնպիսի օրինակներ, որոնց վերնագրում հեղինակի անունը չէին գրել՝ «ժողովրդեան» դժգոհութիւն չպատճառելու համար, բայց որոնց Մայրագոմեցու գործ լինելը ամէնքը գիտէին։ Պէտք է ենթադրել, որ այնուհետև՝ մանաւանդ Կիլիկեան շրջանում, Մայրագոմեցու անունը աւելի և աւելի մոռացութեան տրուեց, պահուելով միայն «արևելեան» հայերի մէջ, նեղ շրջաններում, մինչ Վարդան պատմիչը Մանդակունու համար գրել կարող էր արդէն, ինչպէս յիշեցինք՝ «յօրինեաց զճառս խրատուց», և հաւանեալ անկասկած բոլոր մեզ յայտնի ճառերն իբրև նորա երկասիրութիւն։ Բայց այդ «խրատուց» բառը ոչ միայն նորա պատմութեան մէջ մնացել է՝ ճառերի իսկական աղբիւրը յիշեցնելով, այլ և մեր մատենադարանի Հ. 921 ճառընտրի մէջ *, ուր Մանդակունուն վերագրած ճառերից չորսը բերած է ս. Եփրեմի անունով՝ առաջին (Աղդոյ և օգտակար) ճառի վերնագիրն է. «Խրատք վարուց, զոր ասացեալ է երանելոյն Եփրեմի հայրապետի»։ Ուրեմն նոյն իսկ դարէդար և անունէ անուն փոխանցումներից յետոյ հետքերն իսպառ չեն կորել, որ այդ ճառերը վեր-

* Գրուած անցման երկաթագրով, 1496 թ. ին։

ցրած են «Խրատ վարուց» գրքից. իսկ թէ սորա հեղինակը Յովհան Մայրագոմեցին էր՝ կասկածից դուրս է ի հարկէ։

Այսպէս ահա մեր բոլոր դիտողութիւնները բերում են այն եզրակացութեան, որ նախ այդ «Խրատ վարուց» գրուածքին պատկանող ճառերը պէտք է հանել Յովհան Մանդակունու մատենագրութեանց շարքից, ապա տեսնել, թէ ինչ գրական վաստակներ ունի նա իրօք, և ըստ այնմ գնահատել նորա արժանիքն՝ իբրև մատենագրի։ Եւ կասենք, որ կարիք չկայ ամենևին պճնելու նորան ուրիշների փետուրներով, այլ առանց այդ էլ նա շատ բազմակողմանի մատենագիր է և կարևոր տեղ պէտք է բռնէ մեր գրականութեան մէջ։ Յիշեալ ճառերի հետ Մխիթարեանք տպել են «Կանոնք» վերնագրով մի հատուած*, որ Մանդակունու անունը կրող ուրիշ կանոններից** առանձին մաս է մեր կանոնագրքերի մէջ։ Սովորական 9 կանոններին կցած է կանոնագրքերում ևս մի հատուած՝ «Դէպ առանց հրամանի Աստուծոյ» սկզբնաւորութեամբ, որ առանձին գտնում ենք մեր մատենադարանի Հ. 921=948 ձեռագրում (թ. 29 r.). իսկ մի քաղուածք է նոյն կանոններից՝ «Յաղուհացն դշաբաթուն» սկզբնաւորութեամբ պատառիկը, Հ. 740=783 ձեռագրում (թ. 198 r.)։ Դոցա վաւերականութիւնն ու այլ յատկութիւններ որոշելը պէտք է մնայ կանոնագրքի ընդհանուր ուսումնասիրութեան մէջ։ Ապա տպուել է մի հատուած «Յաղագս քառասներորդական պահոց և բաղդատութիւն նորա ընդ զատկական քառասնին» վերնագրով***, որի սկիզբն է. «Արդ վասն զի պահոց քառասնորդ կոչի», և որ ամբողջութեամբ մնում է Տ. 43=3771 ի ձեռագրի թ. 117 r. ճառի մէջ. սորա վերնագիրն է՝ «Տեառն Յոհաննու Մանդակունոյ Հայոց կաթողիկոսի ասացեալ յաղագս պահոցն քառասներորդացն», և սկիզբը. «Արդ, քանզի սկիզբն և կատարումն առաջին զաւր կիրակի առնի լեալ»։ Այս ճառի մէջ մնում է նաև յիշեալ «Կանոնք» վերնագրի տակ տպուած՝ «Արդ ես ըստ իմ գիտելոյ ասեմ» հատուածը և ամէնից վերջը տպուած «Բան խրատու առ ճգնաւորսն»† ճառի առաջին պարբերութիւնը՝ «Քանզի գրեալ է—զցերեկն լեզուով», որով, և մի փաստարութեամբ՝ վերջանում է։ Նոյն ճառը բովանդակութեան մի քանի մասերով, բառերով և դարձուածներով ակներև նմանութիւն ունի Հ. Գ. Տէր Մկրտչեանի վերոյիշեալ «Յաղագս սիրոյ» ճառին կից հրատարակած երկու ուրիշ ճառերի հետ, որոնց վերնագրերն են. «Խօսք Յովհաննու Մանդակունւոյ՝ խրատ և գովութիւն ճգնաւորաց և յանդիմանութիւն ծուլից և արհամարհողաց զպատուիրանս Աստուծոյ» և «Նորին ի նոյն գրոց»††։ Ըստ Հ. Գ. ի սոցանից առաջինի «մասն է ուրիշ խմբագրութեամբ» Մխիթարեանց տպած նոյն «Բան խրատու» ճառի վերջին երկու պարբերութիւնը. սակայն սորա միայն մի փոքր հատուածը նմանութիւն ունի նոր հրատարակուածի հետ, մինչ ամբողջի շարայարութիւնը տարբեր է. ուստի և աւելի հաւանական է ենթադրել, թէ այն հատուածը մի ընդարձակ գրուածքի շարունակութեան մէջ կրկնուել է, իսկ այդ ընդարձակ

* Յովհ. Մանդակունեայ՝ ճառք. եր. 207.

** Տես. Պատմութիւն ժողովոց Հայ. եկեղեցւոյ. Ա. արք. Մխիթարեանց. Վաղարշապատ, 1874. եր. 75:

*** Եր. 209:

† Եր. 216:

†† Արարատ, 1905. սեպտեմբեր. եր. 774 եւ 779:

գրուածքի զանազան մասերն են՝ բոլոր յիշած ճառերը։ Հ. Գ. այն երկու ճառերը հրատարակել է Մ. Ա. մատենադարանի Հ. 613=716 ձեռագրից, որի մէջ առաջինը՝ «Առն մոնոզոնի» սկզբնաւորութեամբ,” թերի է. բայց մենք ունինք նոյնը ամբողջութեամբ Հ. 223=229, և միայն սկզբից ու վերջից մի մի տող պակաս՝ Հ. 346=2532 ձեռագրում, որոնց համեմատութեամբ և լրացնելով հրատարակուածը՝ նորից ի լոյս ենք ընծայում։ Բերում ենք սորա Տ. 45=3771 ձեռագրի ճառը նոյնպէս, որի համեմատութիւնը ծանօթ հատուածների հետ պէտք է ցոյց տայ, թէ որչափ հաւանական է բոլորի Մանդակունու մի ընդարձակ գրուածքից քաղուած լինելու ենթադրութիւնը։ Յամենայն դէպս բովանդակութեան և լեզուի մի քանի՝ բնորոշ կողմերի վրայ աւելացրած այդ երևոյթը, որ տարբեր կերպերով իրար հետ զուգած հատուածներ խիստ տարբեր ձեռագրերում միշտ՝ նոյն Մանդակունու անունն են կրում՝ կարևոր նշան պէտք է համարուի նրա վաւերականութեան։*

*«Ի ս. Երրորդութիւնն» հատուածի և նրա յաւելեալ մասերի համար յիշեցինք արդէն. մնում է Մխիթարեանց հրատարակութեան մէջ «Վասն սիրոյ» վերնագրով մի փոքրիկ ճառ, որի նկատմամբ ոչինչ չունինք աւելացնելու Հ. Սարգիսեանի դիտողութիւնների վրայ**։ Այնուհետև Մ. Ա. մատենադարանի Հ. 542=581 ձեռագրի մէջ (թ. 56 r.), որ բազմաթիւ դաւանական, բարոյախօսական, կանոնական, վկայաբանական եւն. գրուածների մի ստուար ժողովածու է՝ ԺԴ—ԺԵ դարերի բոլորգրով (անթուական), գտնում ենք մի գրութիւն, որ հասկանալի չէ, թէ ինչպէ՞ս է ստացել «Յովհաննու Մանդակունոյ խրատ ոգեշահ» վերնագիրը, մինչ ուրիշ բան չէ, բայց եթէ կաթոլիկ և բողոքական եկեղեցիների մէջ գործածուող, համառօտ, կամ ինչ ինչ յաւելումներով ընդարձակած և մի քանի խմբագրութիւն ունեցող «առաքելական հանգանակը», որի 12 հատուածները՝ արևմուտքում շատ տարածուած և հին աւանդութեան համաձայն, 12 առաքեալների բերանն են դրուել։ Ինչպէս սորան հետևող մի շարք հրահանգներից՝ աստուածային պատուիրանների, ապաշխարութեան, խոստովանութեան, ողորմութեան, խորհուրդների եւն. վերաբերեալ, երևում է՝ ունիթոռների միջոցով մուտ գործած պիտի լինի այն*** և Մանդակունուն ընծայուած՝ այդպիսի մի նշանաւոր հայրապետի անունով նորան հեղինակութիւն տալու համար. իսկ «խրատ» անուանել են երևի հետը հաշուելով նաև յաջորդ հրահանգները։ Սորա դնում ենք այդ գրութիւնն ևս՝ ի նկատի ունենալով նրա նշանակութիւնը ընդհանուր եկեղեցական տեսակէտից։ Մ. Ա. մատենադարանի Հ. 489 (թ. 167) ձեռագրում կայ Հ. Սարգիսեանին ևս յայտնի՝† «Կոչումն ապաշխարութեան, զոր ասացեալ է Տեառն Յովհաննու Մանդակունոյ Հայոց կաթողիկոսի» մի աննշան քաղուածք, որի առաջին տողերը միայն կարող են Մանդակունու կանոնական գրուածներից առնուած լինել։ Վերջապէս մեր մատենադարանի Գ. 1073=2939 (եր. 619) և Հ. 908=941 վերջնադարեան հետևեալ նոտրգիր ճառընտիրներում գտնում ենք «Քարոզ Յովհաննու Ման-*

---

* Օր. «ճարբիկ» անսովոր բառը։

** Քննադատութիւն. եր. 156—158։

*** Յովհան Երզնկացու պատարագի մեկնութեամբ է սկսում այս ձեռագիրը ու պարունակում է նրա ուրիշ գրուածները, բայց եւ նախաքաղկեդոնական շատ բան։

† Քննադատութիւն, եր. 55.

դակունեցոյ. ասացեալ է վասն մեղաց և հայհոյողաց» վերնագրով մի գրութիւն*, աշխարհաբարախառն լեզուով և գռեհկաբանութիւններով, որ ի հարկէ ոչ մի առընչութիւն չունի Մանդակունու հետ, բայց եթէ այն գուցէ, որ նորան վերագրուած ճառերի մէկից առաջնորդող մտքեր է վերցրել: Հ. Սարգիսեան յիշում է մի քանի ուրիշ ճառեր՝ բարոյական և ծիսական նիւթերի վրայ, որոնց «անուանցը միայն հանդիպած է ձեռագրաց ցանկերու մէջ»**, երկու ճառեր՝ Յաղագս հաւատոյ, Երուսաղէմի մի ձեռագրի մէջ, խրատներ ևն. վերագրուած Մանդակունուն, թէ որչափ իրաւամբ՝ յայտնի չէ: Սակայն արդէն մեզ ծանօթ այնպիսիները, որոնց վաւերականութեան մասին կասկածելու հիմք չկայ, ցոյց են տալիս, որ Մանդակունին բարոյակրթական-խրատական և ծիսական-հրահանգչական բովանդակութեամբ աչքի ընկնող գրուածներ է ունեցել, որոնք և միջոց են տուել Մայրագոմեցու «Խրատ վարուց» թղթերը նորա անուան հետ կապելու: Եթէ այդպիսի վաւերական գրուածների մեզ հասած բեկորների հետ վերցնենք նորա դաւանաբանական երկերի յիշեալ մնացորդները և ժամագրքի ու ծիսարանի այնպիսի մասեր, որոնց Մանդակունու գործ լինելու համար շատ վստահելի վկայութիւններ ունինք, ինչպէս օր. առաւօտեան «Զարթուցեալքս» քարոզը և «Զքեզ գոհանամք» աղօթքը, որոնց մասին վկայում է Օձնեցին***, կամ եկեղեցւոյ հիմնարկէքը իւր հնագոյն պարզ ձևով, որ ձեռագիրներում ամէն տեղ նորա անունով է, ապա հնարաւորութիւն կունենանք համեմատութիւններով ստուգելու հետզհետէ միւս նորա երկասիրութիւն համարուող գրուածների վաւերականութիւնը, կամ թարգմանութիւնների որպիսութիւնը:

Անցնենք այժմ Է. դարու այն նշանաւոր եկեղեցական գործչին, որ մեծի հեղինակութեան ենթարկուելու և ընդհանուրի տրամադրութեան համակերպելու ոգւով տոգորուած մի միջավայրում աններելի սխալ է գործել, մինչ իւր ինքնուրոյնութեամբ է հանդէս եկել և բաց ճակատով իւր համոզմունքն արտայայտել. ուստի և անողոք հալածանքի է ենթարկուել միջավայրին հաւատարիմ պատմութեան կողմից: Ոչ միայն հակառակորդները, այլ նաև կուսակիցներն ու յարգողները վախեցել են, կարծես, Յովհան Մայրագոմեցու, այդ կորովի դէմքի՝ արտասովոր սուր գծերը ցուցադրել. սքօղել են և կասկածաւոր մթութեան մէջ թողել: Եթէ նա 3 գիրք է գրել, ինչպէս տեսանք Ասողիկի վկայութիւնից, Մայրագոմեցին այն մարդը չէր, որ ինքնին խոյս տար իւր անունը դոցա «վերագրելուց». բայց յաջորդ սերունդները, գնահատելով հանդերձ այդ գրուածների ներքին արժանիքը և աշխատելով պահել կորստեան վտանգից՝ անջատել են հեղինակի դատապարտուած անունից և նորա յիշատակի հետ նոյնչափ անարգար վարուել, որչափ անարգար էին եղել ժամանակակիցները կենդանութեամբ իրեն հետ: Գոհ պիտի լինինք այնուամենայնիւ, որ այսօր հնարաւորութիւն ենք գտնում նորա ոգու և նորա գաղափարների հետ անմիջական աղբիւրից ծանօթանալու և այսպէս, նորա մասին եղած մութ աւանդութիւնները փոքր ի շատէ պարզելով՝ գուցէ աւելի որոշ հասկացողութիւն կազմելու նորա անձի և գործի մասին, քան ուրիշ շատ պատմական անձերի մասին ունինք:

* Մէկի սկիզբը՝ «Երկերուք եւ փախեցէք եւ զարհուրեցէք», միւսի սկիզբը՝ «Երկերուք, երկերուք եւ զարհուրեցէք»:

** Քննադատութիւն եր. 56.

*** Մատենագրութիւնք. Վենետիկ, 1834. եր. 66:

Կոմիտասի կաթողիկոսութեան մասին խօսելով Ասողիկ՝ գրում է. «Եւ ի սորա ժամանակս փայլէր վարդապետութեամբ Յովհան Մայրագոմեցի, որում զկաթողիկոսութիւնն հաւատացեալ էր «Կոմիտաս». ապա յիշում է նորա գրուածները՝ վերև յառաջ բերած խօսքերով։ Այդ վկայութեամբ ուրեմն Մայրագոմեցին շատ աչքի ընկնող մի եկեղեցական էր Կոմիտաս կաթողիկոսի օրով (616—628 թ.), և ոչ միայն իր վարդապետութեամբ էր փայլում, այլ և կարևոր դեր էր կատարում կաթողիկոսական իշխանութեան վերաբերեալ գործերի մէջ։ Արդ, վերև մի քանի անգամ յիշուած «Կնիք հաւատոյ» ժողովածուն, որ ըստ վերնագրին կազմուել է Կոմիտաս կաթողիկոսի օրով, պարունակում է ի միջի այլոց մի քանի հատուածներ Մայրագոմեցու անունով. իսկ Ասողիկից և ուրիշներից* իմանում ենք, որ «Խրատ վարուց» գրքի հետ նա թողել է «Հաւատարմատ» անունով մի գրուածք. «Խրատ վարուց» գրքի Յառաջաբանն էլ, ինչպէս տեսանք, հաստատում է, որ նորա հեղինակը 24 ուրիշ թղթեր ունի գրած «Ի խրատ հաւատոյ»։ Ինչպէ՞ս համաձայնեցնենք միմեանց հետ այս վկայութիւնները։ «Կնիք հաւատոյ» գրքի Մայրագոմեցու անունը կրող 7 հատուածներից 2-ը վերնագրի համաձայն վերցուած են «Ի Բանէն, որ վասն անօրէնութեան փրկչին», 2-ը «Ի հաւատոյ բանէն» և 1-ը «Ի բանէն, որ վասն չարչարանաց և աներկիւղ մատնել զանձն իւր ի մահ վասն արարածոց» (մնացած 2-ի աղբիւրը ցոյց չէ տուած)։ Մնում է ենթադրել ըստ իս, թէ այդտեղ յիշուած են 3-ը այն 24 թղթերից, որոնք կազմում էին Մայրագոմեցու «Խրատ հաւատոյ» գիրքը։ Իսկ ինչպէ՞ս են մտել այդ հատուածները «Կնիք հաւատոյ» ժողովածուի մէջ, եթէ ժողովածուն կազմուած է Կոմիտասի օրով, մինչդեռ Կոմիտասի մահից շատ յետոյ դեռ կենդանի եղող Մայրագոմեցին նոյն հատուածների վերնագիրների մէջ յիշուած է իբրև վաղուց վախճանուած, «երանելի հայր»։ Քանի որ ժողովածուն Կոմիտաս կաթողիկոսի օրով կազմուած լինելու նկատմամբ ուրիշ ոչ մի կասկածի առիթ չկայ, պէտք է ենթադրել ուրեմն, որ կամ այդ հատուածները յետոյ են մտցրած, կամ նոցա վերնագիրներն են յետոյ փոխուած։ Սակայն նոյնչափ անհաւանական է, որ կազմ և պատրաստ ժողովածուի մէջ, ժամանակ անցնելուց յետոյ, մէկը վերցնէր, նորա հետ կապ չունեցող Մայրագոմեցու գրուածներից այդ մասերը հանէր ու նորա մէջ դնէր, որչափ մտածել, թէ ժողովածուն կազմողը մի ժամանակակից վարդապետի գրուածներն այնչափ հեղինակաւոր կհամարէր, որ նոցանից վկայութիւններ բերէր և դնէր Լուսաւորչի ու Ոսկեբերանի ասացուածների կողքին,—եթէ միայն ինքը Մայրագոմեցին չէր կազմողը։ Եւ ինչպէ՞ս կարելի էր, որ «առ ի պահպանութիւն ուղղոյ հաւատոյս՝ քրիստոսատուր աւանդութեանս» Հայոց եկեղեցու համար այսչափ կարևոր մի ձեռնարկութեան մէջ մասնակցութիւն չունենար այն անձը, որ ժամանակի ամէնից փայլուն վարդապետն էր, որին «հաւատացել էր իւր կաթողիկոսութիւնը» ժամանակի հայրապետը։ Տ. 66=3937 ձեռագրում՝ p. 128 v., գտնում ենք հաւատոյ հանգանակը մեկնաբանող մի գրութիւն, որի վերնագիրն է՝ «Ի հաւատոյ արմատոյն է գրուագս» և որ մի և նոյն ժամանակ «Կնիք հաւատոյ» ժողովածուի վերջաբանն է՝ «Մեկնութիւն ի յայտարարութիւն և կշտամբանք հերձուածոցն» վերնագրով։ Արդ, պարզ չէ՞ միթէ, որ «Կնիք հաւատոյ» և «Հա-*

* Պատմութիւն, եր, 87։

ւատոյ արմատ» միևնոյն գրուածքը պէտք է համարուին՝ գոնէ իրենց էական կազմով, և եթէ Մայրագոմեցին է «Հաւատարմատի» հեղինակը, ուրեմն նաև «Կնիք հաւատոյ» ժողովածուի կազմողը։ Այս դէպքում ոչինչ չկայ անհաւանական, որ նա իր գրուածներից էլ պատշաճ հատուածներ բերած լինի՝ հարկաւ առանց հեղինակի անունը յիշելու (ինչպէս յիշեալ «Մեկնութիւն»ը, որ կրկին նորա գործը պիտի լինի, մնացել է առանց հեղինակի անուանը). իսկ յետոյ մի ուրիշը արտագրելիս աւելացրած լինի իրեն ծանօթ անունը։ Ի նկատի ունենալով սակայն Խոսս վարուց յառաջաբանի տուած տեղեկութիւնը, որ Մայրագոմեցին թղթերի մի ժողովածու է ունեցել՝ հաւատոյ նոյնպիսի խնդիրների վերաբերեալ,* որոնց պարզաբանութեան են ծառայում «Կնիք հաւատոյ» ժողովածուի ս. հարց վկայութիւնները, մեզ թւում է, թէ նա սկզբում իր թղթերը հրատարակել է իբրև յաւելուած այս ժողովածուի**, իսկ դորա համար իբրև նախատիպ ծառայած կարող էր լինել նորան Տիմոթէոս Կուզի հակաճառութիւնը, որից նա ամենամեծ չափով օգտուել է ժողովածուն կազմելիս։ Առ այժմ միայն հարևանցի կերպով ծանօթ և դեռ լաւ չուսումնասիրուած, մեր եկեղեցւոյ պատմութեան մի կարևոր՝ խնդիր է այն, որ Մայրագոմեցուց յետոյ երկար ժամանակ Հայոց վարդապետների մէջ եղել են երկու հակառակ հոսանքներ՝ հետևող նորան և ախոյեան, և եթէ յիրաւի Յովհան Օձնեցու ուսուցիչն է այն Թէոդորոսը, որ գրել է «Ընդդէմ Մայրագոմացւոյն»** ճառը, եթէ Ը. դարում Օձնեցին ինքը, Խոսրովիկ և այլք հակառակորդ էին Մայրագոմեցու, իսկ Սահականոս Սիւնեցին համախոհ էր, բայց վերջը Օձնեցու պէս նշանաւոր հայրապետի և Մանազկերտի ժողովի կողմը մնաց յաղթանակը, և այնուհետև շատ ցանկալի համարուեց, որ անհաճոյ վէճը մոռացուի և եկեղեցւոյ այլապէս բարեհամբաւ վարդապետների անունը յարգի ու անադարտ մնայ բոլորի աչքում, ապա հասկանալի է, թէ ինչու բարւոք կնկատէին մոռացութեան տալ նաև վէճի նիւթ եղող գրուածները, և ինչու ի միջի այլոց Մայրագոմեցու գրուածներն էլ կբաժանէին բուն ժողովածուից և այս վերջինս, իբրև մի արժէքաւոր թանգարան եկեղեցւոյ դաւանութեան վերաբերեալ վկայութեանց՝ պահպանելու հոգ կտանէին։ Այդ դէպքում առա Մայրագոմեցու համախոհներից մէկը վերցրել է գուցէ մի քանի նշխարներ նորա բուն գրուածներից և մտցրել նորա կազմած ժողովածուի մէջ։

«Կնիք հաւատոյ» ժողովածուի կազմութեան պայմանները կաշխատենք աւելի պարզել մեր հրատարակութեան ներածութեան մէջ. այստեղ կակնարկենք միայն, որ Յովհան Մայրագոմեցու «Հաւատարմատը» մենք այս ժողովածուն ենք համարում, և ոչ նորա «Խրատ հաւատոյ» թղթերի ժողովածուն առանձին վերցրած՝ նաև այն հիման վրայ, որ սորա հետևողութեամբ, անշուշտ, «Արմատ հաւատոյ» է կոչւում ԺԳ. դարից մնացած ս. հարց վկայութիւնների մի ուրիշ ժողովածու***, որի գլխաւոր մասերը շատ ձեռա-

* «Կնիք հաւատոյ» բաժանած է 10 գլուխների. գուցէ այդ գլուխներից իւրաքանչիւրի համար մի «թուղթ» ունէր նա՝ յամփոփումն հայրերի վկայութեանց, եւ թիւրիմացութեամբ է 24 թուղթ հաշուած:

** Տես. Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք.—Վենետիկ, 1833. եր. 147:

*** Տես Ձեռագիր Հ. 1558–2080, թ. 25, «Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ»։

գիրներում կրկնւում են և տպագրութեամբ ծանօթ են*։ Եւ այսպէս ընդունելով՝ մենք այժմ կարող ենք բաւական պարզ գաղափար կազմել Մայրագոմեցու դաւանաբանական հայեացքների մասին, ոչ միայն սեփական աշխատութիւններով, այլ նաև եկեղ. հայրերի այն վկայութիւններով, որ նա ընտրել՝ ի մի է ամփոփել, հաստատելու համար իր պաշտպանած դաւանութիւնը, Ի՞նչ դաւանութիւն էր նորա պաշտպանածը, որ միաժամանակ պէտք է համարուի Հայոց եկեղեցւոյ պաշտօնական դաւանութիւնը է. դարի սկզբում՝ այդ մասին ես իւր տեղում աւելի ընդարձակօրէն կխօսեմ. իսկ այստեղ կբաւականանանք նկատելով, որ Մայրագոմեցին ամէն կերպ հաստատել ջանալով Քրիստոսի անապական մարդեղութեան ուսումը՝ մերժում է յիշաւի Ղուկ. ԻԲ. 43—44-ի վաւերականութիւնը և պնդում, թէ ոչ մահուան երկիւղը վախել էր Փրկչին և ոչ մանաւանդ արեան քիրտ, որ նոյնչափ անյարիր է մարդկային, որչափ և աստուածային բնութեան,—տեսութիւններ, որոնց դէմ և ուղղուած է Թէոդորոս Քաթենաւորի ճառը, որոնք խոր հետքեր են թողել մեր անցեալ գրականութեան մէջ**, որոնցով բացատրւում է մասամբ նորա հակառակութիւնը Եզր կաթուղիկոսի օրով և Հերակլ կայսեր ճնշմամբ տեղի ունեցած եկեղեցական համաձայնութեան դէմ և ամբողջովին հասկանալի դառնում նորա անունով յառաջացած աղանդաւոր շարժումը, վէճն ու յուզումները։ Սակայն այդ չի խանգարում ի հարկէ, որ նա ներկայանայ իբրև շատ աչքի ընկնող անձնաւորութիւն մեր եկեղեցական պատմութեան մէջ, իսկ մեր եկեղեցական գրականութեան մէջ մէկը սակաւաթիւ անկախ մտածողներից և ինքնատիպ գրիչ գործածողներից՝ իւր գիտական հմտութեամբն ու բարոյական նկարագրով հաւասարապէս մեծ հեղինակութիւն ժամանակակիցների և մի որոշ գծով եկող յետնորդ սերունդների աչքում։ «Կնիք հաւատոյ» ժողովածուի հրատարակութեամբ բանասէրները կտեսնեն, որ նա նոյնպիսի ուժեղ բանագիտութիւն, անհուն համոզմունք, կուռ ոճ և փառահ արտայայտութեան եղանակ է հանդէս բերում սորա պարունակած դաւանաբանական հատուածների, որպէսին և «Արմատ վարուց» ճառերի մէջ։ Հ. Սարգիսեանի Մանդակունու համար շռայլած գովասանքը կամայ ակամայ պիտի անդրադառնայ այժմ «Արմատ վարուց» և «Արմատ հաւատոյ» ճառերի իսկական հեղինակի՝ Մայրագոմեցու վրայ։ Իսկ թէ ինչ էր «Նոյեմակ» խորթ անունով այն երրորդ գրուածքը, որ Ասողիկ ընծայում է Մայրագոմեցուն՝ որոշ բան կարելի չէ ասել առ այժմ և կմնայ բաւականանալ ենթադրութիւններով։ Գուցէ յունարէն Νοήματα բառի աղճատումն է այդ բառը, որ կնշանակէր՝ «Մտքեր, խորհրդածութիւնք», և կարող էր յարմարուել իբրև վերնագիր այլ և այլ բովանդակութեամբ գրուածների։ Մ. Ա. մատենադարանի Հ. 2261=2244 ձեռագրում վերջնադարեան ուրիշ խառն գրուածների հետ կաղ-

* Յօդուածիս տպագրութեան միջոցին ձեռքս հասաւ՝ Armenische Irenäusfragmente, von D. Hermann Iordan. Leipzig, 1913. գրքոյկը, որ հրատարակութիւնն է «Կնիք հաւատոյ» ժողովածուից իմ արտագրած և մի բանիսի գերմաներէն թարգմանութեան հետ ուղարկած Իրենէոսեան հատուածների և ուր տեղեկութիւններ ու խորհրդածութիւններ յառաջ են բերուած թէ այդ, թէ «Արմատ հաւատոյ» ժողովածուի և թէ Մայրագոմեցու մասին՝ հիմնուելով գլխաւորապէս իմ հաղորդածների վրայ։ Իմ դիտողութիւններն այս մասին կանեմ ուրիշ տեղում.

** Յիշենք այն միայն, որ Աւետարանի բազմաթիւ ձեռագիրների մէջ պակասում է Ղուկ Իբ. 43—44.

մած գտնում ենք անգման երկաթագրով 20 թերթից բաղկացած (թ. 153 r.—175 v) մի երկ, որի վերնագիրն է. «Յոհաննու Մայրագոմեցւոյ՝ Վերլուծութիւն կաթողիկէ եկեղեցւոյ և որ ի նմա կարգաց»։ Նոյն երկի մի խոշոր հատուածը, որ, նոյնպէս անգման երկաթագրով գրած՝ գտնում ենք Հ. 943=1525 ձեռագրի մէջ, սորա յառաջ ենք բերում, համապատասխան մասերը միմեանց հետ համեմատած. բայց հարկաւ պէտք կլինի շտապել ասել ամբողջ գրուածքը, որ դժբաղդաբար լրիւ չէ, թերթերն իրար խառնած։ Ահա ուրեմն մի երրորդ գրուածք Մայրագոմեցու անունով, որ և գուցէ յիշեալ «Նոյնմակի» մի մասն է, կամ մտնում էր այդ խորթ անուան ներքոյ ծածկուած նորա բացատրական մի ուրիշ շարք գրուածների մէջ՝ եկեղեցական կարգերի, տօների և աւանդութիւնների վերաբերեալ։

Մայրագոմեցու այսպիսի խնդիրներում ևս հեղինակութիւն համարուած լինելը յայտնի է Մ. Կաղանկատուացու և Ստեփաննոս Օրբելեանի շատ հետաքրքրական յիշատակութիւններից։ Կաղանկատուացին Աղուանից պատմութեան մէջ* քաղուածօրէն բերել է Դաւիթ Մեծի կողմանց եպիսկոպոսին ուղղած Մայրագոմեցու պատասխան-գրութիւնը պատկերամարտների մասին, որ վաւերականութեան դրոշմը իւր վրայ կրում է և որ ուրեմն կարելի կլինէր դնել Մայրագոմեցու երկերի երրորդ շարքի մէջ, եթէ մի այդպիսի շարք եղել է։ Մայրագոմեցին այստեղ շատ արժէքաւոր տեղեկութիւն է տալիս՝ նախ, Մովսէս Եղուարդեցու օրով հակաթոռ կաթողիկոսութիւն յառաջանալու հանգամանքների մասին, որ բաւական լոյս է սփռում այդ այլապէս մութ մնացած խնդրի վրայ։ Ապա իմանում ենք, որ Ը. և Թ. դարերում ամբողջ Բիւզանդական կայսրութիւնը տակն ու վրայ անող Պատկերամարտութեան շարժումը իւր յառաջընթացն է ունեցել Հայերի մէջ դեռ Է. դարի սկզբներին և, որ աւելի նշանակալից է՝ այդ շարժման առաջին առիթն եղել է Մովսէս կաթողիկոսի հրամանը՝ «ամենեքին ոչ հաղորդել ընդ Հոռոմս՝ Հնազանդելոյս քաղկեդոնական ժողովոյն... մի գիրս, մի պատկերս և մի նշխարս ի նոցանէ ընդունել»**։ Քաղկեդոնի ժողովի դէմ լարուած լինելով ուրեմն՝ Յեսու անուն հայ քահանան երկու ընկերներով քարոզում են Աղուանից մէջ պատկերների խոտումն. նոցա կապած ուղարկում են Աբրահամ կաթողիկոսի մօտ, ուր Մայրագոմեցին նոցա խրատում է և նոցա սխալն ուղղում։ Այստեղից հետևում է, որ Կոմիտասից էլ առաջ՝ արդէն Աբրահամ կաթողիկոսի մօտ Մայրագոմեցին շատ պատուաւոր և հեղինակաւոր դիրք ունէր։ Աբրահամ կաթողիկոսի օրերին է վերաբերում նաև միւս աւանդութիւնը, որ պահել են՝ թէ Կաղանկատուացին*** և թէ Օրբելեան†, և որ շատ մութ տեղեկութիւն է տալիս եկեղեցական ինն դասկարգութեանց վերաբերմամբ այդ օրերում ծագած խնդրի և Մայրագոմեցու տուած բացատրութեան մասին։ Այս մութ աւանդութիւնից ևս այն եզրակացութիւնը միայն հանել կարող ենք, որ Մայրագոմեցու յայտնած կարծիքը այս կամ այն եկեղեցական խնդրի նկատմամբ դարեր շարունակ առանձին կշիռ է ունեցել որոշ շրջաններում։

* Մոսկվա, 1860. եր. 242։

** Համե. իմ Die Paulikianer etc. գրուածքը, Leipzig, 1893. S. 51 ff.

*** Պատմութիւն եր. 246։

† Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1864. եր. 75։

Եթէ կամենանք այժմ Մայրագոմեցու կենսագրութիւնը կազմել՝ բացի յիշած նիւթերից, Յովհան Պատմագրի, Ասողիկի և ուրիշների տուած տեղեկութիւններից՝ ունենք ձեռքի տակ նաև մի «Պատմութիւն Յոհաննու Մայրագոմեցւոյ», որ Տ. Գարեգին վ. գտել է Երուսաղեմի Հ. 1272 ձեռագրում (թ. 391 ե.)։ Այստեղ Կարնոյ ժողովի պատմութիւնը Ստ. Օրբելեանի նման անելուց յետոյ՝ մի քանի կարևոր մանրամասնութիւններով նախընթաց հանգամանքների մասին, հեղինակն աւելացնում է. «Եւ եկն Մաթուսաղայ ի Սիւնեաց և ընկալաւ ձեռնադրութիւն եպիսկոպոսութեան յԵզրէ, և միաբանեցան ամենեքեան և միահաւատ եղեն, և հաստատարանէր յայնմհետէ Թէոդորոս Մաթուսաղայեան և նզովրողումն անէր զմեռատական բանիւք ժողովոյն Քաղկեդոնի, և հնազանդէին նմա ամենեքին, բայց ի Յոհաննու և ի նորին աշակերտացն, որ ոչ հնազանդեցան և անկան ի բանս և ի պատուհաս և ի հալածանս՝ ի Ներսիսէ Տայեցւոյ Հայոց կաթուղիկոսէ։ Յաւուրս Մաւրկա թագաւորի Ենովս երանելի ընտրեցաւ, որ ոչ հնազանդեցաւ անիծեալ ժողովոյն Քաղկեդոնի, և յաւուրս Հերակլի կայսեր Մայրագոմեցի, և այլ ոչ։ Յառաջ քան զգալն Հերակլէսի ի Կարնոյ քաղաք եկին եպիսկոպոսունք յԱսորւոց Հերակլէսի հրամանաւ ի քննութիւն հաւատոյ առ Հայս, և նոյն Թէոդորոս եկեալ ի Սիւնեաց քննել զնոսա, և միաւորեցան ընդ նոսա. բայց Քրիստափոր կաթուղիկոս ի հեռի ճանապարհ էր. ապա ի գալ նորա խնդրեցաւ ի Յոհաննէ Մայրագոմեցւոյ…»։ Այս «պատմութիւնը» ժամանակով թէ ճշգրտութեամբ անհրաժեշտ շատ աւելի մօտ է կատարուած իրողութեանց, քան Յովհաննէս Պատմագիրը և միւսները. ափսոս, որ թերի է մնացել այն և չի տալիս իսկապէս Մայրագոմեցու պատմութիւնը։ Շատ հետաքրքրական է այստեղ և պատմութեան սուտգութեան ապացոյց՝ նախ Մայրագոմեցու համեմատութիւնը Ենովս երանելու հետ, որի մէջ լինելը աւելի պարզ տեսնում ենք Մայրագոմեցու իր իսկ խօսքերից՝ պատկերամարտների մասին տուած նորա բացատրութեան Կաղանկատուացու յիշեալ՝ բաղուածքի մէջ**. պատմելով «Յովհան ոմն Սիւնականի» հակաթոռ կաթուղիկոս նստելը և «Հոռոմոց» կողմի բոլոր հայերի նորան հնազանդելը՝ աւելացնում է. բաց յԵնովսայ երանելւոյ, որ գնաց ի Նոդամնէ և եկն առ Մովսէս կաթուղիկոս, զոր ուրախութեամբ ընկալաւ»։ Միա կարևոր է ապա այն տեղեկութիւնը, որ Կարնոյ ժողովից տարիներ առաջ՝ դեռ Քրիստափոր կաթուղիկոսի օրով, «հաւատոյ քննութիւն» է տեղի ունեցել և միութիւն հաստատուել ասորիների հետ, իսկ Հայոց կողմից խօսող վարդապետն այդտեղ էլ նոյն Թէոդորոսն է եղել, ինչ որ Կարնոյ ժողովում, հակառակորդ դարձել Մայրագոմեցին։ Սորան բոլոր ամենայնի համապատասխանում են այն տեղեկութիւնները, որ ասորական աղբիւրները հաղորդում են Հայոց Քրիստափոր կաթուղիկոսի մասին***, կասկած չի կարող լինել ամենևին, որ ասորիների հետ հաստատած այս միութիւնը մէկն է այն երկու միաբանութիւններից, որ յիշում են Գրիգոր Մագիստրոսի «Ասորւոց կաթուղիկոսին» գրած պատասխանի մէջ, թէ տեղի*

* Գրուած ՉԼԹ 1290 թ. Լեւոնի որդի Հեթում թագաւորի օրով. Ի միջի այլոց պարունակում է Յովհաննէս Օձնեցւոյ վարդապետի գրուածներ։

** Եր. 215։

*** Հայոց եկեղեցու յարաբերութիւններ ասորւոց եկեղեցիների հետ.—Ե. Վ. Տէր-Մինասեանց. Ս. Էջմիածին, 1908. եր. 122—155։

են ունեցել «յաւուրս Տեառն Զաքարիայի և Տեառն Քրիստափորի»*. ապա և հետևում է բառ ինքեան, որ ինչպէս այստեղ խօսքը Քրիստափոր Բ-ի մասին է, և ոչ Քրիստափոր Ա.-ի, այնպէս և մինչև Մամաթայի վանքը ճանապարհորդողը և Գարմային մետրոպոլիտ ձեռնադրողը Քրիստափոր Բ.-ը պիտի լինի, և այս իսկ ճանապարհորդութեան համար է «Մայրագոմեցու պատմութեան» մէջ ասած. «Բայց Քրիստափոր կաթողիկոս ի հեռի ճանապարհ էր»։ Թէպէտ այս եզրակացութեամբ տարաձայնութիւն է յառաջանում տարբեր աղբիւրների ժամանակագրութեան մէջ, որ Գարմայի Ե. ժառանգ Քրիստափորն է հանդէս գալիս իբրև Քրիստափոր Բ.-ի ժամանակակից, որ 629 թ.-ին մետրոպոլիտ է ձեռնադրւում Ասորւոց պատրիարքից. բայց այդ աղբիւրները ուշ ժամանակի գործեր են, որոնց մէջ ժամանակների և անձերի շփոթութիւնը շատ սովորական երևոյթ է։ Պատմական դէպքերի շարայարութիւնը մեր եզրակացութեամբ միայն պարզուած կարելի է համարել։ Եթէ ասորիների մէջ Հայոց կաթուղիկոսից եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունելու կարիքը յառաջացել է առաջին անգամ նորանից, որ Խոսրով Անուշիրվանի 540—544 թ.-ների Ասորիքից Պարսկաստան գաղթեցրած ասորիներն անգլուխ են մնացել, ապա շատ համաձայն է դրան այն լաւ յայտնի իրողութիւնը, որ առաջին անգամ եպիսկոպոս է ձեռնադրել տալիս Աբդիշոյին Հայոց Ներսէս Բ. կաթուղիկոսը, որ և Խոսրովի արշաւանքներից յետոյ հայրապետական աթոռ էր բարձրացել. մինչ Քրիստափոր Ա.-ը՝ եթէ ոչ արշաւանքներից առաջ վախճանուած, գոնէ մինչև նոցա ժամանակը միայն իշխանութիւն վարած կարող է լինել։ Ինչպէս կարելի է ուրեմն ենթադրել, թէ գաղթականներն այնպէս շուտ կհաստատուէին իրենց տեղերում, նոցա նախկին եպիսկոպոսները կվախճանուէին, և նոր եպիսկոպոսի կարիք յառաջ կգար. մանաւանդ թէ Քրիստափոր Ա.-ը ճանապարհորդութիւն կկատարէր և նոցա համար եպիսկոպոս կձեռնադրէր, իսկ Ներսէս Բ.-ի հետ Աբդիշոյի ձեռնադրութեան առթիւ տեղի ունեցած թղթակցութեան մէջ այդպիսի կարևոր և մօտաւոր մի դէպք չէր յիշուի։ Դրութիւնը պարզ է. երբ Յակոբ Բարադէոս երկարատև ճանապարհորդութիւններով և յամառ տքնութեամբ Հռոմէական կայսրութեան հպատակ ասորիներին բուն Ասորիքում համախմբեց և Սևերեան վարդապետութեամբ առաջնորդւող եկեղեցի կազմակերպեց՝ Անտիոքի պատրիարքութեան ներքոյ, Պարսկաստան գաղթած և առաջուց այնտեղ գտնուած ասորիները չուզեցան համակերպուել և Սևերեան վարդապետութիւնն ընդունելով՝ սահմանի միւս կողմում մնացած, Անտիոքի պատրիարքին հպատակուել. այլ հաւատարիմ մնացին հայերի դաւանութեան և գերադասեցին Հայոց Ներսէս Բ. կաթուղիկոսի իշխանութեան ներքոյ մնալ, որ ինչպէս Փաւի Զաքարիա կաթուղիկոսին գրած թղթից երևում է**, Խոսրով Նուշիրվանի առանձին շնորհը վայելելով՝ քաղաքականապէս էլ երևի զգալի պաշտպանութիւն կարող էր ցոյց տալ իրենց։ Յայտնի է ապա, որ Կոմիտաս կաթուղիկոսի օրով շատ սերտ յարաբերութիւն վերահաստատուեց Հայերի և Ասորիների մէջ, և Պարսկաստանում եղող բոլոր ոչ Նեստորական (Հարկաւ և ոչ Սևերեան) ասորիները Հայոց կաթուղիկոսի իշխանութեան

* Գրիգոր Մագիստրոսի թղթերը. հրատ. Կ. Կոստանեանց. Ալէքսանդրապոլ. 1906. եր. 168:

** Տես. ձեռագիր Հ 550=500, թ. 233:

ենթարկուեցան։ Կամիտասի անմիջական յաջորդ Քրիստափոր Բ-ի համար շատ հաւանական և բնական է ուրեմն այն, ինչ որ Քրիստափոր Ա.-ի նկատմամբ տարօրինակ կլինէր. երկար ճանապարհորդութիւն է յանձն առնում նա, որովհետև իր հօտի մի մասին այցելել պէտք էր և եպիսկոպոս ձեռնադրել նոցա համար։ Աւելի ևս հաւանական է դառնում այս գուցէ նրանով, որ ըստ ասորի պատմիչ Բարհեբրէոսի Քրիստափոր Բ. ինքն ասորի է եղել ազգաւ*. և այդ են հաստատում, անշուշտ, մեր պատմիչները, երբ գրում են նորա մասին, թէ «յԱբրահամեան տանէ» էր, ինչ որ մեր ժամանակի արտայայտութեամբ կլինէր. Սեմական ծագումն ունեցող։ Յովհաննէս պատմագրի վկայութեամբ Վարազտիրոց ասպետն իբրև մարզպան Հայաստան եկած ժամանակ նորան՝ «խորհրդակցութեամբ Թէոդորոսի Ռշտունեաց Տեառն կացուցանէ յաթոռ հայրապետութեան»։ Քաղաքական որ և է նկատում չկար արդեօք մէջտեղ, որ հայ եպիսկոպոսներին թողած մի ասորի եպիսկոպոսի յանկարծ կաթուղիկոսական աթոռ են բարձրացնում,—և աւելի լուրջ պատճառներ չէին արդեօք, որ երկու տարի յետոյ վար առնել տուին նորան աթոռից, քան ինչ որ պատմում են Յովհաննէս Պատմագիրն** և ուրիշները նորա իբր թէ Ասպետի և իր եղբայրների մէջ քսութեամբ թշնամութիւն ձգելու մասին։ Հերակլ կայսեր փառաւոր յաղթութիւններից յետոյ հայ իշխանները չէին կարող չտեսնել, որ Պարսից պետութիւնը արագ կերպով քայքայւում էր և զօրութեան գերակշռութիւնը դէպի Բիւզանդական կայսրութեան կողմը հակւում. իսկ Հերակլ կայսեր արևելքի բոլոր քրիստոնեաներին իր պաշտպանութեան ներքոյ առնելու պայմանը և նուաճած երկրներում իր իշխանութիւնը հաստատուն դարձնելու երաշխիքն էր՝ եկեղեցական միութիւն հաստատել Հայերի և Ասորիների հետ։ Գուցէ արդէն Քրիստափորին կաթողիկոսացնելիս հայ իշխանները ի նկատի ունէին՝ դիւրացնել միաբանութիւնը Ասորիների հետ, որով կդիւրանար նաև Յոյների հետ միաբանութիւն հաստատելը. գուցէ և դիտմամբ՝ խոյս տալու համար այդ միաբանութիւնից, որ Սեւերեանների հետ պիտի լինէր, ճանապարհորդութիւն յանձն առաւ՝ իր դաւանութեամբ և համոզումներով հակասեկեան, կաթողիկոսը։ Իսկ երբ նորա բացակայութեան միջոցին Հերակլի հրամանաւ բանակցութիւն տեղի ունեցաւ Հայերի և Ասորիների մէջ, և միաբանութիւն հաստատուեց, հականալի է, թէ ինչու վերադարձին նորան է դիմում բողոքով Մայրագոմեցին, որ անապականութեան ուսման գիտնական ջերմ պաշտպանն էր և ոչ մի կերպ հաշտուել չէր կարող Քրիստոսի ապականացու մարմին ընդունող Սեւերեանների հետ։ Այստեղ և ամենայն հաւանականութեամբ երևան եկաւ Քրիստափոր Բ-ի այն նզովութիւն ու ամբաստանութիւնը, այն իբրև զուր սուտ լեզուն, որի մասին գրում է Սեբէոս***. Կաթողիկոսը չկամեցաւ երևի ընդունել իր բացակայութեամբ տեղի ունեցած ժողովի որոշումները, մերժեց Ասորիների հետ հաստատած միաբանութիւնը, ընդդիմացաւ իշխաններին, և այդ եղաւ գլխաւոր պատճառը նորան աթոռից ձգելու։ Այսպիսով ինքն իրեն բացատրւում է շատ բան, որի համար հարկ է տես-

* Տես. Հայոց եկեղեցու յարաբերութիւնները, եր. 122։
** Պատմութիւն, եր. 75։
*** Պատմութիւն ի Հերակլն. եր. 98։

նուել հեռաւոր ենթադրութիւնների մէջ մտնել *. հասկանալի է դառնում նաև այն, թէ ինչու հենց այս ժամանակ առիթ գտան Անտիոքի պատրիարքները Գարսկաստանի ասորիներին իրենց թևի տակ առնելու: Երբ Անտիոքի և Հայոց եկեղեցու մէջ դաւանական միութիւն էր հաստատուել, ինչը կստիպէր այլևս ասորիներին ազգային պատրիարքի փոխարէն Հայոց կաթուղիկոսի իշխանութիւնը ճանաչել: Յիրաւի միութիւնը տևական չեղաւ և այն վերականգնելու փորձերն էլ յաջորդ դարերում ապարդիւն անցան, քանի որ ազգային ինքնուրոյնութեան գիտակցութիւնը գնալով աւելի և աւելի էր հաստատուում նոցա մէջ, բայց նորանից ճարպիկ կերպով օգուտ քաղեց երևի Աթանասիոս պատրիարքը և իւր «խցակից Յովհաննէսի» միջոցաւ կարողացաւ իւր կողմը գրաւել Գարսկաստանի Ասորիներին **, ձեռնադրութիւններ կատարել և մի անգամ ընդ միշտ կտրել Հայոց հայր. աթոռից. իսկ նոքա, որոնք շարունակեցին յետոյ հակառակել Սեւերեան դաւանութեանը՝ Հայերից էլ երեք անջատուած մնացին ու աղանդաւոր երևոյթ ընդունեցին:

Դառնալով Մայրագոմեցուն՝ տեսնում ենք, որ մինչ Կոմիտաս կաթուղիկոսի օրով նա դրութեան տէրն էր, արդէն Քրիստափոր Բ.ի ժամանակ սկսուած միաբանական ձգտումների նկատմամբ հակառակ դիրք պիտի բռնած լինի, և եթէ չի հալածուել ու շարունակել է մնալ «Փակակալ սրբոյն Գրիգորի», ինչպէս աւանդում է Յովհաննէս Գատմագիրը ***, շնորհիւ երևի այն հանգամանքի, որ առիթ չի ներկայացել նորան հրապարակաւ հանդէս գալու ի պաշտպանութիւն իւր հայեացքների. դուցէ և այնպիսի ընդհանուր յարգանք էր վայելում †, որ քանի քաշուած իւր գործին էր, ոչ ոք չպիտի ձեռնէր նորան դիպչել: Բայց որ նորան Կարնոյ ժողովին չտարան, խափական պատճառն այն չէր երևի, որ յառաջ է բերում Եզրի խօսքերով Օրբելեան, թէ «Յովհան եկեղեցին և զկաթուղիկոսարանն ոչ կամեցաւ թողուլ», կամ վերև յիշած «Մայրագոմեցու պատմութիւնը». «Ամենեքեան այդպէս ասացին, թէ մինչ Մաթուսաղայի աշակերտն ընդ մեզ է, չէ ինչ նա մեզ պիտոյ», — այլ որ շատ լաւ գիտէին, թէ ինչ մարդ էր նա և ինչ հայեացքի տէր, և ինչ հայեացքի տէր էր Մաթուսաղայի աշակերտը: Աւելորդ կլինէր, կարծում ենք, մի անգամ ևս ծանրանալ այն բացորոշ ճշմարտութեան վրայ, որ Հերակլի օրով, Կարնոյ ժողովում և այլուր՝ հաստատուած միաբանութեամբ Հայերն ու Ասորիները ոչ թէ Քաղկեդոնի ժողովի 2 բնութեան դաւանութիւնն էին ընդունում՝ այն դրութեամբ, ինչ որ մինչև այժմ ընդունում է Օրթոդոքս կամ Հռոմէական եկեղեցին, այլ մի կամքի վարդապետութեամբ նոյն դաւանութեան համար յօրուած բացատրութիւնը, որ մերժել և բանադրել են յետոյ Քաղկեդոնի ժողովի պաշտպան եկեղեցիները †††: Սակայն Մայրագոմեցին իւր տեսութիւններին հաւատարիմ մնալով՝ նոյն իսկ մի բնութեան վարդապետութիւնը չէր կարող ընդունել այն ձևով, ինչպէս ուսուցանում էին Սեւերեան Ասորիները, կամ ինչպէս պարծենում էին, թէ

* Տես. Ազգապատում, էջ 677—684:

** Տես. Հայոց եկեղեցու յարաբերութիւնները, եր. 126:

*** Պատմութիւն, եր. 77:

† Վայելո՞ւմ էր արդեօք յատկապէս Թէոդորոս Ռշտունու պաշտպանութիւնը:

†† Պատմութիւն տանն Սիսական. եր. 85:

††† Հմմտ. Ազգապատում, էջ 694c:

միութիւն հաստատող ժողովներում Յոյների դէմ պաշտպանել ու նոցա ընդունել էին տալ՝ Հայերն ու Ասորիները: Այստեղից և յառաջանում է նորա հանրածանօթ ընդդիմութիւնը, երբ Եզր Յունաց հետ միութիւն հաստատած և Կողբի աղահանքով պարգևատրուած Հայաստան է վերադառնում: Ընդդիմութեան հետևանքն այն է լինում՝ ըստ Յովհաննէս Պատմագրի, որ «Հրամայէ Եզր մուրցացի տանջել զպարանոց նորա և զկզակս», և նա փոխանակ ընկճուելու՝ հեռանում է բարձր ի գլուխ, գոհանալով «զի վասն անուանն Տեառն արժանի եղէ անարգելոյ»*. Ասողիկ, Օրբելեան եւն. նոյնպէս հաստատում են, թէ նա անարգանօք է հեռացել և այնուհետև հալածական վիճակի մէջ եղել: Շատ զարմանալի չէ ի հարկէ, որ այդ բիրտ ժամանակներում մի շատ յարգուած անձնաւորութիւն էլ հանգամանքների փոխուելով ծանր անարգանքի և հալածանքի ենթարկուէր. բայց «Մայրագոմեցու պատմութիւնից» այս նկատմամբ յառաջ բերած տողերը ենթադրել են տալիս, թէ հալածանքն աւելի նորա աշակերտների դէմ է ուղղուած եղել, և յետոյ ուսուցչին շփոթել են սոցա հետ՝ նորան վերագրել այն պատիժները, որոնց իսկապէս սոքա են ենթակայ եղել: Այդպէս ենթադրելու առիթ է մեզ մատուցանում նոյն տեղեկութեան այն աւելի ընդարձակուած և յեղաշրջուած ձևը, որ գտնում ենք Փաստի վերև յիշուած թղթի մէջ**. «Իսկ Յոհանն Մայրագոմացի, որ զՍարգիս և զՊետրոսի Անտաւորացոյ աթոռն ունէր, ընթանայր ի վեր և խոնարհ, և շփոթեալ խառնակէր զամենեսեան. և յաւուրս Կոստանդիանու, որդւոյ Հերակլի, Ներսէս կաթողիկոս, որում Շինողն կոչեն, և Թէոդորոս Ռշտունեացն տէր, որ զՀայոց ունէր զիշխանութիւնն, ըմբռնեալ զնա և երկաթի հրատեալ՝ աղուեսադրոշմ եդին ի ճակատն, և այնպէս խայտառակեալ բազահալածական արարին ի լեառն Կովկաս: Իսկ նա զկնի մահուանն Ներսիսի դարձաւ ի Հայս և զոր ինչ խորհէրն արար: Մանաւանդ յորժամ թարգմանեցան ի Հայս գիրքն Յուլիանեա Աղիկառնացւոյ, ի ձեռն Սարգսի՝ ի ժողովն Մանազկերտի առաւել զօրացան բանքն նորա և թուեցեալ տիրեցին ընդհանուր աշխարհի ձևք»: Պարզ է որ, արդէն Աբրահամ կաթողիկոսի ժամանակ իբրև գիտնական վարդապետ հռչակուած՝ Մայրագոմեցին չէր կարող 45 տարի էլ ապրած, Ներսէս Շինողի մահից յետոյ Հայաստան վերադարձած և իւր քարոզութիւնը շարունակած լինել՝ այն եւ մինչև Մանազկերտի ժողովը (726 թ.): Բայց անհաւանական է նաև, որ նա կենդանի լինէր Ներսէս Շինողի ժամանակ և սորանից հալածանքի ենթարկուէր: Ինչպէ՞ս կարող էր յառաջ գալ այդ հալածանքը: Եթէ Եզրը նորան պատժել է իբրև կաթողիկոսական իշխանութեան ընդդիմացողի և Կարնոյ ժողովի որոշումների անարգողի՝ հասկանալի է: Իսկ Ներսէս Շինողի կաթողիկոսութեան առաջին շրջանում, մինչ Եզրի օրով հաստատուած միութիւնը Յունաց հետ բոլորովին չէր էլ պահուում***, ինչու պիտի հալածուէր մի անձ, որ մինչև վերջը հաւատարիմ էր մնացել նախնեաց աւանդութեան և որի միակ յանցանքը միութիւնը մերժելն էր: Այդպիսի հալածանք հասկանալի է այն ժամանակի համար միայն, երբ Կոստանդ կայսրն անձամբ Հայաստան եկաւ և Դուինում միու-

* Պատմութիւն, եր. 79:

** Հ. 530=300. p. 254 v. Հրատ. Ն. Մառ. Православный Палестинскій Сборникъ. С- Петерб. 1892. Т. XI, 1.

*** Տես. Սեբէոս, պատմութիւն, եր. 149 և.

թիւնը վերահաստատել* (652 թ.)։ Իսկ այդ միութեան դէմ նոյնպիսի ընդդիմութիւն յառաջ եկաւ, որպիսին Եզրի օրով. և որովհետև ոչ մի հաւանականութիւն չկայ, որ այդ ժամանակ Մայրագոմեցին կենդանի լինէր, ուրեմն հակառակութեան հանդը նորա աշակերտներն էին, որոնք և հալածուել ու Ներսէսի մահից յետոյ վերադառնալով իրենց քարոզութիւնը շարունակել կարող էին։

Փոտի նկարագրութիւնը իր կամքի հակառակ աւելի է հաստատում մեր պատմիչների՝ Յովհաննէս կաթուղիկոսի, Ասողիկի եւն. ջատագովութիւնը Մայրագոմեցու մասին, թէ զրպարտութիւն է նորան հերձուած վերագրելը և թէ այդ հերձուածը նորա գործը չէ, այլ նորա աշակերտ Սարգսինը։ Նոյն նկարագրութիւնը պարզում է նաև, թէ ինչ հերձուածի մասին է խօսքը։ Ի՛նկատի ունենալով, որ, Սեբէոս Անանիայցու յանձին Քրիստոսի ապականացու մարմին ընդունելու դէմ՝ անապականութեան ուսումն էր քարոզել Յուլիանոս Հալիկառնացին, Մայրագոմեցուն էլ իբրև անապականութեան ջերմ պաշտպանի հակառակորդները մեղադրում էին եղել, թէ Հալիկառնացու հետևող է։ Բայց որ նա անապականութեան ուսումը պաշտպանել էր անկախ Հալիկառնացուց, ինչպէս սորանից շատ առաջ պաշտպանել էին Փիլոքսենոս և ուրիշները, որոնց նա վկայութեան է բերել «Արմատ հաւատոյ» կամ «Կնիք հաւատոյ» ժողովածուի մէջ, հաստատում է նորանով, որ Հալիկառնացու գրուածներն առաջին անգամ Հայերին ծանօթացրել և հայերէն է թարգմանել նորա աշակերտ Սարգիսը։ Մայրագոմեցուն ոչ մի ժամանակակից հայ չէր կարող իբրև հերձուածող նկատել, որովհետև նա նորութիւն չէր մտցրել, հաւատարիմ էր եղել հայերի դաւանութեան, Աբրահամ և Կոմիտաս նշանաւոր կաթուղիկոսների օրով, իբրև մեծ վարդապետ՝ այդ դաւանութեան ջատագով-ներկայացուցիչ էր հանդիսացել հերձուածողների և օտարների դէմ։ Հերձուածի կասկած և մեղադրանք կարող էր յառաջանալ միայն այն ժամանակ, երբ հայերին անծանօթ նոր գրուածներ էին հրապարակ գալիս՝ թէկուզ ի պաշտպանութիւն հին ուսումների, և նոր շփոթութիւն յառաջ բերում մտքերի մէջ. Իսկ այդ եղաւ՝ Մայրագոմեցուն անարգող Փոտ պատրիարքի վկայութեամբ իսկ, նորա աշակերտ Սարգսի Հալիկառնացու գրուածները հայերէն թարգմանելով։ Ինքը Մայրագոմեցին, ինչպէս Յովհաննէս պատմագիրը և ուրիշները պատմում են, Եզրի հետ ունեցած ընդհարումից յետոյ քաշուել է Բջնւոյ մօտ մի վանք, և թւում է թէ այդտեղ էլ առանձնութեան մէջ կնքել է իր մահկանացուն։ Նոյն պատմիչների աւելացրածը, թէ այնտեղից էլ նորան հալածել են, և նա Գարդմանի գաւառն է ապաւինել ու այդտեղ խիստ ճգնական կեանք վարել, տարբեր բան չէ, կարծում ենք, քան Փոտի ասելը՝ «Թաքստականելոյ բացահայտական տեղին ի լեռն Կովկաս», և վերաբերում է նորա աշակերտներին։

Յամենայն դէպս Բջնւոյ մօտի այն վանքը, ուր նա առաջ ապաստանել էր, եթէ Յովհաննէս կաթուղիկոսի ժամանակ Մայրագոմ էր կոչւում, հաւանականօրէն սկզբից էլ այդպէս կոչուել է, և պատմիչների դիտողութիւնը, թէ սկզբում Մայրոյ վանք է կոչուել այն, Եզր կաթուղիկոսն է՝ ի նախատինս Յովհանի, փոխել անունը՝ Մայրագոմ դրել, թիւրիմացութիւն պիտի հա-

---

* Նոյն եր. 141։

մաքուր՝ արդիւնք անտեղի սրամտութեան։ Եթէ Մայրագոմեցի *անունը նախատական լինէր կրողի համար, ապա անհասկանալի կլինար, թէ ինչպէ՞ս բոլոր հին գրուածներում, յատկապէս նոցա մէջ, ուր Յովհան ջատագովութեամբ կամ յարգանօք է յիշուած՝ միշտ* Մայրագոմեցի *անունն է տրուած նորան. օրինակ, ինչպէս տեսանք, «Կնիք հաւատոյ» ժողովածուի բոլոր նորան պատկանող հատուածների վերնագիրներում, եռկաթագիր «Վերալուծութիւն կաթողիկէ եկեղեցւոյ» գրուածքի վերնագրում, մեր յիշած* պատմութեան *վերնագրում եւն։* Մայրավանեցի *անունը հանդիպում ենք միմիայն նորագոյն ձեռագիրների մէջ, և այնպիսի տեղերում, ինչպէս օրինակ՝ «Երատ վարուց» ճառերի առանձին առանձին վերնագիրներն են, ուր հեղինակի անունը սկզբում պէտք է որ բոլորովին եղած չլինի, այլ յետոյ արտագրողների ձեռքով ընդհանուր վերնագրից, կամ կողմնակի ծանօթութիւնից մտցրած, և* Մայրագոմեցին *«Մայրավանեցի» դարձրած՝ պատմագիրների յիշեալ տեսութեան ազդեցութեան ներքոյ. մինչդեռ նոյն ճառերը* ծօնականների *մէջ առանձին առանձին արտագրողները սկզբում երևի, եթէ ուղիղ էր մեր վերևի դիտողութիւնը,* Մայրագոմեցի *անունով էլ գրել են, և յետոյ ուրիշները սրբագրել՝ Մանդակունեցի են դարձրել։ Ինչպէս Եզր կաթուղիկոսը Է-Ը դարերում անարգուած անձնաւորութիւն չէր անկասկած, այլ յետին դարերի նախանձայոյզներ միայն, նորան զուտ քաղկեդոնական համարելով՝ անուան սկզբնատառը գլխիվայր էին գրում, այնպէս էլ Մայրագոմեցին նոյն դարերում, բացի իւր աշակերտների անձնական հակառակորդներից, ամէնքի համար յարգի և մեծ անուն ունեցող եկեղեցւոյ վարդապետ պիտի եղած լինի, և միայն վերև ակնարկուած դաւանաբանական վէճերի պատճառով յետագայում կասկածի ենթարկուած։ Դորան ապացոյց այն հանգամանքը, որ Ը. դարու ամենանշանաւոր հեղինակներից մէկը՝ Ստեփաննոս Իմաստասէր Սիւնեցին, Հ. Գ. Տէր Մկրտչեանի հրատարակած յիշեալ գրուածքի մէջ*, «Կնիք Հաւատոյ» ժողովածուի նորա անուամբ հատուածների մէկից վկայութիւն է բերում՝ «Զնոյն և Յոհան Իմաստասէր ասէր» վերնագրով։ Այդ դարում ուրեմն, «Յովհան Իմաստասէր» ասելով՝ ոչ թէ նոյն դարու նշանաւոր հայրապետ Օձնեցուն էին հասկանում, այլ նախկին դարու յայտնի փիլիսոփայ Յովհան Մայրագոմեցուն, և գոնէ որոշ շըրջաններում նորան վկայ էին բերում իբրև եկեղեցւոյ ուղղադաւան հեղինակաւոր վարդապետի։ Արդեօք չկա՞ն ուրիշ գրուածներ էլ «Յովհան Իմաստասիրի» անունով, որ մինչև այժմ Օձնեցու աշխատութիւն են համարուել, բայց իսկապէս Մայրագոմեցուն են։ Ապագայ հետազօտութիւններ կպարզեն թերևս այդ խնդիրն էլ և նոր նիւթեր կտան՝ ընդարձակելու մեր ծանօթութիւնը, մեր գնահատութիւնը և մեր պատկառանքը այդ բազմահմուտ և բարոյապէս շատ արժանաւոր պատմական անձի նկատմամբ։*

Ն. Ապօ

---

* Արարատ, 1902 էր. 392:

Հ. 940=993. p. 343 v.

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՅՈՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆՒՈՅ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՅԱՂԱԳՍ ՊԱՀՈՑ։

Սրբոյ, անզուգական և միանձնական Երրորդութեանն. երեք անձինք՝ մի բնութիւն, մի աստուածութիւն, մի էականութիւն, մի ինքնութիւն, մի թագաւորութիւն, մի արքայութիւն, մի տէրութիւն, մի իշխանութիւն, մի փառաւորութիւն, մի հաւասարութիւն, մի հասարակութիւն, մի սրբութիւն, մի լուսաւորութիւն, մի կամեցողութիւն. մի են կամք, մի խորհուրդք, մի փառք, մի պատիւ, մի հաւատք, մի յոյս, մի սէր. մեծ, կարող, ի վեր քան զամենայն. անմեղ, անանց, անսկիզբն, անհաս, անտես, անքնին. ոչ իւիք կարաւտ, ամենայնի հայր, ամենարար, ամենատէր, ամենազաւթ, ամենախնամ, ամենաղաւր, ամենապարգև, ամենահաս, ամենատես, ամենագէտ, ամենափրկիչ, ամենակեցոյց. որ ակնարկելովն զարմանէ զամենայն արարածս՝ զերկնաւորսն և զերկրաւորս, զերևելիս և զաներևոյթս, զշէնս և զանշէնս։ Յամենայն արարածոց՝ յերևելեաց և յաներևութից, յերկնաւորաց և յերկրաւորաց՝ նմա փառք և պատիւ և երկրպագութիւն, յաւիտեան և յաւիտենից յաւիտեանս, ամէն։

| Միածին Բանն կամաւք Հաւր եկեալ յերկիր և ի սրբոյ Կուսէն մարմնացեալ, մարդացեալ, չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յարուցեալ և համբարձեալ փառօք յերկինս՝ նստաւ ընդ աջմէ Հաւր և գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս։ Եւ ետ պատուիրանս փրկաւէտս և կեցուցիչ՝ զաւետարանն փրկութեան, զի սնանիցին նովաւ մանկունք նորածնեալք, նոր ժողովուրդք նորոյ աշխարհին, որ հանդերձեալն է լինել առ յապա ժամանակի ժառանգորդս որդիս վերնոյն Երուսաղեմի։ Արդ, ամենայն բանք աւետարանին կեցուցիչք և ոգեշահք են, զի խօսք աստուածայինք և բանք աստուածահրամանք են՝ յօգուտ և ի փրկութիւն մարդկան։ Վասն որոյ, լուեալ զաստուածային ձայնն՝ մտադիւրութեամբ մատուցէք զլսելիս ձեր, և մի գտանիցիք ստունգանողք այսպիսի հոգեղէն բարբառոյ, որպէս Ադամն այն, և այնուհետև արտասահմանիցիք՝ ոչ ի տնկախիտ դրախտէն, այլ ի նոյն ինքն յէական բարոյն։ Եւ զի՞նչ իցէ բարբառն.

«Այր մի էր տանուտէր, որոյ էր տնտես. եւ եղեւ ամբաստանութիւն զնմանէ, որպէս թէ վատնիցէ զինչս նորա. Եւ ասէ ցնա. Տո՛ւր զհամար տնտեսութեան քո, զի ո՛չ եւս կարես լինել տնտես»[1]։

Եւ զոր ասէն՝ այսպիսի ինչ է. տանուտէր զինքն անուանէ, քանզի նա իսկ է ճշմարիտ Տէր երկնի և երկրի, մարդկան և հրեշտակաց, հոգւոց և մարմնոց՝ արարիչ և նախախնամաւղ համարոլոր կենդանեաց։ Արդ, ի գոյացուցանելն Աստուծոյ զարարածս հանդերձ ամենայն գոյիւ իւրով՝ ստեղծ և

---

1 Ղուկ. ԺԶ, 1—2:

զմարդն ըստ պատկերի անեղծ փառաց իւրոց՝ բանաւոր, մտաւոր, ինքնիշխան, ինքնատէր, թագաւոր որոց ի վերայ երկրի. ոչ որ նմա հրամանատու, և ոչ ընդ հարկաւորութեամբ կապեալ, որպէս և այլ կենդանիք. այլ որպէս տէրութիւնն Աստուծոյ ի վերայ ամենայնի տիրէ, այնպէս և մարդոյն իշխանութիւն ի վերայ ամենայնի տիրէ՝ ունելով միտս ընտրողականս, որ գիտէ որոշել զչարն ի բարոյն և զբարին ի չարէն։ Այլ մարդոյն չարին եղեալ գաւակ, զարահոս լեալ յազգի ազգի մեղս, ոչ բարւոք տնտեսեաց, այլ զրկեաց զաղքատս, յափշտակեաց զտնանկս, կողոպտեաց զորբս և (ր. 344) զայրիս, չարչարեաց լլկեաց զայնոսիկ, որք ընդ ձեռամբ նորա։ Արդ, ի յափշտակութենէ և ի զրկանաց բազումս ժողովեաց գանձս ոսկւոյ և արծաթոյ, ստացաւ ջոկս ծառայից և ընդոծնաց. յաճախեցին նմա հաւտք և բազմացան նմա արջառք. և այլ բազում ստացուածս անչափս և անթիւս։ Ստացաւ շինել ապարանս գեղեցիկս և բարձրաբարձրս՝ հաստահիմն և յարմարակուռս, բազմակամս բարձրագոյնս և ծաղկազարդս. բարգաւաճեցաւ, ամբարտաւանեցաւ ի միտս իւր, խրոխտացաւ, ամբարհաճեցաւ ի խորհուրդս իւր. քանզի արտաքս քան զբնութիւնն խորհրդածէր, և մարդ էր կերպարանաւք, այլ գազան էր բարուք. խաւսէր մարդկաւրէն, այլ կեղեքէր գազանաբար. ձեւն մարդոյ, և անագորութիւնն որպէս զչար դիւի. բնութիւնն էր մարդոյ, այլ բարք իւր անողորմ։ Հէք և թշուառական անձն, որ անմահ կարծէր զինքն, և ոչ իբրև զմի ի մահկանացուաց, այլ և զեր ի վերոյ քան զհասարակաց բնութիւնս ախտացաւ։ Եւ այս գործի առ ընչեղն. յորժամ յաճախէ և բազմանայ նորա ստացուածն, ոչ հաւասար կարծէ զինքն բնութեան մարդկան, ոչ հաղորդի ընդ աղքատս և ոչ հաւասարէ ընդ տնանկս՝ դէմք շառագունեալ և այլակերպեալ։ Եւ ապա զի՞նչ։ Գայ այնուհետև հասանէ ժամանակ մահուն. սկսանի ապա մարմինն տապանալ ջերմութեամբ ախտին հիւանդութեանց՝ լուծանին ջիլքն, սարսափին ոսկերքն, թուլանան յաւդքն, կափկափին ատամունքն, թնդին շրթունքն, կապի լեզուն, սպառի բարբառն, նուազի բանք բերանոյն, այլակերպի գոյն երեսացն, ցնդի մարմինն։ Յայնժամ ասէ ցնա Աստուած. Տո՛ւր զգիր գործոց քոց, զի ոչ ես լինիս դու ի վերայ երկրի. այս շատ և բաւական լիցի քեզ, զի նեղեցի քեզ, զի դառնաս յուղղութիւն, և ոչ կամեցար. այլի անկեցի զքեզ, եթէ բերցես ինձ խաղող, դու բերեր փուշ և տատասկ՝ զանաւրէնութիւնս քո. արդ, ես բակեցից զցանկս քո, այսինքն է զամրութիւն մարմնոյդ, և արարից զդա յապականութիւն[1]. Զի ամենայն տունկ, որ ոչ առնիցէ զպտուղ բարւոք, հատանել պարտի զնա, զի մի և զերկիրն խափանիցէ[2]. Ժողովեցից զդա և արկից ի հուրն անշէջ։ Իսկ մարդոյն գիտացեալ զելս գնացից իւրոց յաշխարհէս և ահաբեկեալ յահագին սպառնալեացն Աստուծոյ և ի սաստիկ դիմաց հրեշտակին, որ կամի պահանջել զհոգին, ծանեաւ, թէ որ աստի առանց բարի գործոց գնաց՝ դառն և անողորմ տանջանաց հանդիպի. խորհուրդ իմն բարի յինքեան բերելով, զի որպէս ի չարին եղև դիւրաշարժ, նոյնպէս և ի բարին, կոչեաց զմի մի ի պարտապանաց Տեառն իւրոյ, որ են աղքատք, զորս զրկեացն և յափշտակեաց. քանզի և նոքա պարտականք են Աստուծոյ և պարտին համարս տալ Աստուծոյ՝ որպէս մեծատունն զբաշ-

1) Հմմտ. Ես. Ե, 1—2, 5:   2) Հմմտ. Մատթ. Գ, 10. Է, 19. Ղուկ. Գ, 9. ԺԳ, 7:

խելն, նոյնպէս և աղքատն զգոհանալն: Զի եթէ իցես մեծատունն՝ առաւելեալ ամենայն բարութեամբ, և զայն ոչ ընդ կարաւտեալս և աղքատս վայելիցես՝ ընդ կապտիչս և ընդ ագահս դատապարտեսցիս: Սոյնպէս և թէ աղքատ իցէ տրտնջող և գող, և բոցով ցանկութեան հաշի և մաշի, յորժամ զայլս ի փարթամութեան տեսանէ, զԱստուած հայհոյէ, այնպիսիքն ոչ երանելի աղքատք են, այլ ողորմելիք. զի աստ տանջեան և անդ տանջելոց են:

Եւ ասէ ցառաջինն. Դու քանի՞ ինչ պարտիս տեառն իմում. Եւ նա ասէ. Հարիւր մար ձիթոյ. Եւ նա ասէ ցնա. Ա՛ռ զգիր քո եւ նի՛ստ գրեա՛ վաղվաղակի ութսուն: Եւ ասէ ցմիւսն. Դու քանի՞ ինչ պարտիս. Եւ նա ասէ. Հարիւր քոռ ցորենոյ. Եւ նա ասէ ցնա. Նի՛ստ գրեա՛ վաղվաղակի յիսուն[1]:

Քանզի ծանեաւ զբնութիւնն իւր մարդն, եթէ ի կենցաղումս ունի զշահ աւգտութեան ընչիցն յաճախութիւն, և անձնիւր ի կեանս իւրում փափկասցի, իսկ յետ ատոր երթալոյն կապուտ կողոպուտ գնայ. քանզի ոչ իցեն փառք տան նորա ընդ նմա, այլ տունք նոցա գերեզմանք նոցա, և ի հող բնակեսցին անձինք նոցա, մտանելով յարկս հարց իւրոց, և զյաւիտենից զլոյս ոչ տեսանել. գիտասցէ թէ՝ մերկ ելի յաշխարհ և մերկ անդ երթալոց եմ: Առանց վարդապետի հերէր և առանց սողովրայից թարգմանէր. Ինքն իսկ բնութիւնն ուսուցանէ զմարդ՝ ի յառաջագոյն եղելոցն զհանդերձեալսն իմանալ: Ո՞ւր թագաւորք հզաւրք. ահա մեռան, և ոչ երևին նշմարանք կերպարանացն, զի որպէս զխոտ ցամաքեցան (p. 344 v.), իբրև զծաղիկ թարշամեցան, չորացան և անկան. իբրև զփոշի հոսեցան, որպէս զսարդիոստայն քակտեցան, իբրև զծուխ յաւդս ցնդեցան, իբրև զշիթ ի դուլէ պակասեցան[2]: Եւ զայս հաւատեաւ ծանեաւ, եթէ ընդ միոյն հարիւրապատիկ առնուն զբարեացն զհատուցումն, թողացոյց պարտականաց իւրոց զծանրութիւն պարտուցն. քանզի խիղճ մտացն զնա յանդիմանէր. զի՞նչ աւգուտ է ինձ, ասէ, զի յետ վախճանի իմոյ ինձ թողից դատախազ, և ոչ վայելեմ յարծաթն, այլ բանս տգեղութեան, որով զիս թշնամանեն. ի կեանս իմում ոչ ստացայ անուն լաւութեան, իսկ ի ժամ մահուս ընդէ՞ր ոչ զգաստանամ. յայնժամ պատճառ ունէի, եթէ վայելեմ և ուրախանամ ի կեանս իմ, իսկ այժմ ոչ ունիմ կենդանութիւն. ընդէ՞ր ոչ տատանամ, ձեմ թողից զայս ամենայն. որդի՞ցն. ոչ ահա և նոքա մահկանացուք են, և յետ սակաւ մի և նոքա զհետ իմ գան. այլ գիտեմ զի՞նչ արարից. տաց զգա ի ձեռս այնորիկ, որ ի չգոյէ ի գոյ ած զամենայն և ակնարկելովն իւրով նախախնամէ զամենայն. բացից զգանձն իմ, և զոր չարաչար ժողովեցի՝ արդարութեամբ բաշխեցից:

Ցայժմ վայրի՝ Գովեաց Տէրն զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար[3]:

Զի անցաւոր կենցաղս զխրախարող է և զբաղումս իբրև ցանցիւք որսոյ. իսկ որք զգաստ են՝ բազում հնարիւք ջանան զերծանել և ըստ Դաւթայ ազատակեն. Անձինք մեր ապրեցան* որպէս ճնճղուկ յորոգայթէ որսողաց. որոգայթք նոցա փշրեցան, և մեք ապրեցաք: Աւգնութիւն է մեզ յանուանէ Տեառն, որ արար զերկին և զերկիր[4]: Քանզի զովութեան ար-

* Ձեռագրում այս եւ յաջորդ սաղմոսներ կրճատ ձեւով են բերած:

1) Ղուկ. ԺԶ, 5–7: 2) Հմմտ. Սաղմ. ԼԶ, 2. ՃԲ, 15–16 ՁԹ, 9. ԼԶ, 20. ՃԱ, 4. 3) Ղուկ. ԺԶ, 8: 4) ՃԻԳ, 7–8.

ժամի համարի զայնպիսին Աստուած, որ զժամանակս կենաց իւրոց ի մեղս ծախեաց և ի ժամ մահուան իւրոյ զգաստացաւ. արովք տնանկաց և գթով և ողորմութեամբ ապաշխարեաց։ Յորժամ զատուապանս նոցա զմտաւ ածիցես և յիշեսցես, եթէ այնպիսի ակար մարմին ունի իբրև զիս և կարօտէն ամենայն ընչից՝ յարկաց ծածկութից, կերակրոց, բանդապաշեալ յածին տանէ ի տուն՝ մերկ մարմնով և հաշմ անդամաւք, կարաւտեալք, նեղեալք, չարչարեալք, հերք թաղկեալ և խռովեալ, դէմք գեղնեալ և երիթացեալ, յորժամ տեսանես զայն, ով մարդ, յիշեա և զմտաւ ած զծանրութիւն վշտին. մի ցուցաներ զերեսս ք(ո) խոժոռ նոցա, զի մի դարձուցէ Աստուած զերեսս իւր ի քէն. մի փակեսցես զդուրս քո ընդդէմ նոցա, զի մի փակեսցին քեզ դրունք ողորմութեանն Աստուծոյ. ձգեա զձեռն քո և տուր նոցա զպէտս նոցա, զի տացի քեզ առատապէս ողորմութիւնն Աստուծոյ։ Դու տաս զոյգն ինչ կերակուր աղքատին, և առնուս զյաւիտենական փափկութիւնն. տաս փոքր ինչ արծաթ, և առնուս զյաւիտենական մեծութիւնն. տաս զանպիտան քեզ զգրգլին, և զանմահութեան հանդերձն զգենուս. նիւթես ծառայակցին, և Քրիստոս իւր անձին համարի. տաս առ անկեանն, և ի վերայ ամենայն արարածոց պատմի. իբրև ինքեան բարւոյ պատահեալ Տէրն՝ հաղորդս զքեզ իւր արքայութեանն առնու. քանզի ասէ. Եկայք, աւրհնեալք Հաւր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ արքայութիւնն ի սկզբանէ աշխարհի. քանզի քաղցեայ, և ետուք ինձ ուտել, ծարաւի՝ և արբուցիք ինձ, մերկ՝ և զգեցուցէք զիս[1]. վասն այսորիկ Սաղմոսերգուն ասէ. Երանի որ խորհի զաղքատն և զտնանկն, յաւուր չարի փրկէ զնա Տէր[2], Եւ զի մի կարծիցես հաւատար չափով միայն լինել զհատուցումն, լուր բան կարգի Գրոցն. Տէր փրկէ զնա և կեցուցանէ, երանելի առնէ զնա 'ի վերայ երկրի և ոչ մատնէ զնա ի ձեռս թշնամեաց իւրոց։ Տէր աւգնական է նմա ի մահիճս ցաւոց իւրոց, զամենայն անկողինս նորա դարձուցանէ ի հիւանդութենէ նորա[3]։ Տեսանես որչափ հատուցանէ Աստուած բարի գործոցն յաղքատս. հրաժարումն ի չարեաց, զգուշութիւն և պահպանութիւն ի կենդանութեան, յերկարումն կենաց երանութեամբք, լաւագոյն առնել ի վերայ թշնամեացն, ի հիւանդութեանց ազատութիւն շնորհել։ Այսչափ բազմութիւն քեզ բարեաց ոչ գնելի է աղքատսիրութեամբն. մարգարէս և բաշխաւոր լինի քեզ աւրնթերակայ երանութեանն, մանաւանդ թէ Աստուած իսկ ի ձեռն մարգարէին։ Քրիստոս խոստանայ զարքայութիւնն երկնից՝ անելանելի. Ծառայ բարի և հաւատարիմ, ի վերայ բազմաց կացուցից զքեզ, որովհետև ի սակաւուն, այսինքն յանցաւոր ինչս՝ հաւատարիմ գտար և զայն կարաւտելոց բաշխեցեր. արդ, մուտ յուրախութիւնդ՝[4] ի մշտնջենաւոր կեանսդ, յանապառ մեծութիւնդ, ի յաւէտ ցնծութիւնդ, յաննուաղելի վայելչութիւնդ. ընդ հրեշտակս պարեայ, ընդ առաքեալսն թաւեայ, ընդ մարգարէսն զասեայ, ընդ մարտիրոսսն (p. 345 չ.) պսակեայ, ընդ իմաստուն կուսանսն մուտ յառագաստն. ընդ Աբրահամու բազմեսջիր, ընդ Իսահակայ կարգեսջիր, ընդ Յակոբայ զԱստուած տեսցես. հանգուցեր զաղքատն ի տուն քո և զտնանկն, մուտ համարձակապէս յերկնային խորանսն. լցուցեր զքաղցեալն հացիւ, կերիցես զպտուղ ծառոյն կենաց և կեցցես յաւիտեան. արբուցեր ծարաւելոցն բաժակ, արբցես զջուրն

1) Մատթ. ԻԵ, 34—36. 2) Սաղմ. Խ, 2. 3) Խ, 3–4. 4) Մատթ. ԻԵ, 21. 23. Ղուկ. ԺԹ, 17:

խաղացելոյ ի կեանս յաւիտենից. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել՝ շնորհաւքն Քրիստոսի, որում փառք յաւիտեանս։

Գ. 102=2679, p. 220 v.

(գրուած 971 Թ. ին)

ՅՈՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՅ.

Շմաւոն և Ղեւի եղբարք կատարեցին զանաւրէնութիւն. ի խորհուրդս նոցա մի մտցէ անձն իմ[1]։ Զի ի նոցանէ էին քահանայքն և ատենական դպիրք, որ և յանդգնեցան նոքայ ի վերայ Տեառն մերոյ և կատարեցին զանաւրէնութիւն. զի զՏէր Յիսուս սպանին և կոտորեցին զմարգարէսն և զառաքեալսն առ նայ։ Արդ՝ Անիծեալ սրտմտութիւն նոցայ, զի խիստ է, և բարկութիւն նոցա, զի յանդուգն է. վասն այսորիկ բաժանեցի զնոսա, և ցրուեցան նոքա ընդ չորս կողմս տիեզերաց երկրի[2]։

Տ. 73=3940. p. 2 r.

ՅԱՌԱՋԱԳԻՐ ԹՂԽԹՈՅՍ ԽՐԱՏ ՎԱՐՈՒՑ։

Ամենայն վիրաւոր մարմնով, (յ)որժամ առ բժիշկսն մերձենան, զվէրսն ցուցանեն և զցաւսն պատմեն, և հնարագէտ բժշկութեան ըստ ցաւոցն ցաւածին, ըստ վիրին չարութեան դեղս աւրինեն՝ այնմ անդամոց, ուր վէրն կա(յ)ցէ, և ոչ եթէ վէր ի յանձն՝ և դեղ ունկանն ոք առնիցէ։ Նոյնպէս, յորժամ մեղաւոր ոք մեղս ունիցի և առ բժիշկ հոգւոյն երթայցէ, զոր ոչ վէրս մեղացն իւր ցուցանիցէ վիրաւ(ո)րն, պար(ա) է բժշկին զնո(յ)ն չարութիւն ծանուցանել, և վասն նորին խրատել և (յ)անդիմանել և մխիթարութիւն կատարել զխրատ բանին վարդապետութեան, զի թանձրայգունիցն լ(եկք) դիւրալուր բանին հանդուրժել կարիցեն, և զչարութիւն վիրին ծա(նուցանել) (p. 2 v.) և զդեղոցն հանդամանս։ Սոյնպէս և բանից թխտոյս չարադրութիւն ոչ խառնիխառն զամենայն անաւրէնութիւն առաջի արկեալ ցուցանէին, և կամ զայլ և այլ ինչ (յ)անցանաց պատմեն, այլ ըստ խնդրոյ խընդրողին, զոր ինչ անաւրէնութիւն չարութեան՝ ծանուցանեն, զի լսելիքն աւգտել կարասցեն։ Ոչ նուբբ ինչ բանից և կայ(կխա?)արուեստական ինչ բառից փոյթ արարեալ, այլ հեշտայբար, հորդայրան, դիւրայլուր ցուցանէ, և ոչ հարցական ինչ պատմեն՝ որ թանձրագունիցն դիւրաւ և քաջ ի միտ առնուլ. զի ոչ եթէ յերկրայութեան ինչ բանից խնդրէ զրան, (այլ ո)ր դիւրալուր բանիւ զհանդամանս առողջացուցիչս դեղոց (ոգ)ոց վիրացն ցուցանիցէ և զ(p. 3 r.) ախտս մեղացն փարատեսցէ աստուածային վարդապետութեամբն, ոչինչ աւելի ձեւացուցանել, քան որ Հոգոյն Սրբոյ են հրա(մա)նք։ Զի թէպէտ և գիրք բազում գրեցան, սակայն միևնոյն պատգամք այսպիսի է, զոր ինչ ասեմս։ Ընկալաւ Մովսէս Ժ. պատգամեան աւրէնս ի

---

1) Ծննդ. ԽԹ, 5—6. 2) ԽԹ, 7.

Հոգոյն, որ ունէր զամենայն կաման Աստուծոյ. նմին վկայ և մարգարէքն գրեցին և զնոյն բազմապատիկ ևս արարին. նովին Հոգով զայն և առա(ք)եալքն գրեցին, ևս առաւել յայտնագոյնս ցուցին նովին Հոգովս: Զնոյն և վարդապետքն թարգմանեցին և մի ըստ միոջէ դիւրալուր ևս արարին ի լրումն եկեղեցւոյ. զի թերևս թանձրալուրն և զծանրախորհուրդն զարթուցանել կարասցեն ի յերկիւղն Աստուծոյ: Եւ ոմանք յերկիւղածից, որք զահեղ ատենին զահ (զ)մտաւ ածիցեն, և բազում յաւժարութեամբ խնդրէին՝ ոմն վասն պահոց, ոմն վասն աղաւթից, ոմն վասն ողորմութեան և որ այլ ինչ պակասութիւն հաւատոց և գործոց. որ թէպէտ և ոչ կամեցեալ մերձենալ ի մատակարարութիւն բանին, սակայն ոչ կարացեալ արգելուլ զխընդրողացն խնդիր՝ վասն երկիւղին Աստուծոյ, զմտաւ ածելով և զմիոյ անհնազանդին պատուհասն, թէ՝ Ծառա չար և վատ, քեզ պարտ էր և զասկաւս ի լսելիս արկանել, և ես եկեալ զանլուրսն պահանջէի[1]:

Ցաղագս որոյ և գրեցան ըստ խնդրողացն պիտոյից թուխթ ԽԴ, համդերձ Աղօթիւքն, Որբաւքն, որս են (p. 4 r.) *ԻԴ. ի խրատ հաւատոց, որ ի յա(յ)լ գիրս գրեցան, և ի խրատ վարուց առաքինութեան, և են այսոքիկ.* Առաջին. Վասն խոստովանութեան եւ պաղատանաց, *և թէ որպէս պարտ է բազում ողբաւք և գթածին արտասուաւք պաղատել առ Աստուած, յորժամ զղջանայ մեղաւորն և դառնայ ի մեղացն պղծութենէ. և վասն չար հակառակորդին, եթէ որպէս հնարի արգելուլ ի զղջանալոյ. պատմէ և վասն ահեղ ատենին տանջանաց և անա(ն)ց կենացն բարութեանց:* Բ. Վասն խրատու ապաշխարութեան, *և թէ որպիսի ինչ դեղ բժշկութեան պիտոյ են վիրաց մեղացն, կամ որպիսի լալումն և հառաչումքն և հեծութիւնք. պատմէ և զազգի ազգի մեղացն չարութիւնս, եթէ* (p. 4 v.) *որպէս զանազան առաքինութեամբք պարտի քաւել. ծանուցանէ և զմեղաւորացն այլումն և զարդարոցն փափաքումն ի փափաքելի դրախտին փափկութեանն:* Գ. Վասն խրատու պահոց պնդութեան, *և թէ որպէս աւգտակար են ամենայն մեղաց ախտին պահոց առաքինութիւնք. ուսուցանէ և զանազան կարգս պահոց և զանազան շահս նոցա. ուսուցանէ և զանընտրող պահացն զհանդամանսն և զկեղծաւորութեան պատիժս. պատմէ և զքաջ արանցն ճգնութիւնսն և զծուլացելոցն կորուստն. յիշէ և զքրիստոնէորդացն պահոց, թէ որպէս պարտ է պահել, կամ որպէս պարկեշտութեամբ պարտ է մտանել ի պահոց պնդութիւնս, և թէ որպիսի աւգտութիւն զտ*(p. 5 r.)*անեն:* Դ. Վասն խրատու աղաւթից, *և թէ որպիսի ահիւ և դողութեամբ և ջերմեռանդ արտասուաւք պարտ է կալ առաջի Աստուծոյ, և թէ որպիսի աղաւթք են անընդունելի և զինչ վարձք նորա, և կամ ո՛ր ընդունելիք և ո՛րպիսիք պատիւ նորայ, և թէ ո՛րպիսիք մեքենայիւք ջանայ սատանայ խափանել զաղաւթս աղաւթականին. ծանուցանէ և զդառն դատումն ծուլացելոցն և զանմահ կենացն վայելչութիւնսն:*—Վասն ողորմութեան եւ անողորմութեան. *թէ որպէս շահաւոր է քան զամենայն առաքինութիւնս և թէ որ աւգուտ հզաւրին է՝ որպիսի ինչ աղքատին ի տուրցն ողորմութենէ ուսուցանէ, և զանազան կարգս՝ ողորմութեան հանդամանս, և զկեղծաւորացն պատիժս պատմէ* (p. 5 v.) *և զնեղելոցն նեղութիւնս և զանողորմիցն թշնամանս. յիշեցուցանէ և զանողորմիցն զդատաստան անողորմ, և ողորմա-*

1) Հմմտ. Մատթ. ԻԵ. 26:

ծացն զողորմութիւնս՝ յահեղ աւուրն յայտնումն։ Զ. Վասն պտղոց եւ պա-(տա)րագաց, եւ ողորմութեան աղքատաց, *և թէ կերպարանաւք բարոյ գործ անաւրէն կատարէ սատանայ, և թէ պարտ է զոր ինչ ոգւոյն սերմանես՝ հրկիզին Աստուծոյ կատարել, և ոչ ի ցուցս մարդկան, զի մի զխոստմն մատուցանելով՝ յանդիմանեսցուք իբրև զԿայէն. և ապա ի խրատ մատուցեալ՝ յայտնէ զչարութիւն հնարից սատանայի և ցուցանէ, թէ որպէս պարտ է զերծանիլ ի նմանէ։* Է. Վասն փոխոցն վաշխից չարեաց. *և թէ որպէս անաւրէնագոյն են քան զամենայն անօրէնութիւն փոխոց տոկոսքն և անթիւ (p. 6 r.) հոյլս ամբարշտութեան ծնանին. և թէ պիղծ են պատարագն և ողորմութիւնք, զոր ի վաշխից նոքա առնիցեն։ Սպառնայ և ահիւ գեհենին, եթէ յայնմ աւուր շուրջ զնովաւ անսանելոց է զչարեաց պատկերն՝ զրկեալսն և զկափեալսն։* Ը. Վասն յանդիմանութեան տրտնջողացն, եւ մխիթարութեան աղքատացն՝ *գոհացողացն, և թէ որչափ չար է տրտունջն՝ է հաւասար հայհոյութեան, և որպիսի շահք են յաղքատացն գոհութենէ, որք զպսակս մարտիրոսաց առնեն. և ուսուցանէ, թէ որ են պտուղք և պատարագք և ողորմութիւնք աղքատին, որ առանց ոսկոյ և արծաթոյ է բաշխումն. պատմէ և զհոյլս արամութեան մեծատանց, և զաղքատացն՝ անհոգութիւնսն յիշէ, և զտանջանացն արհաւիրս, և ապա ի խրատ խոնարհի (p. 6 v.)։* Թ. Վասն քահանայից տեսչութեան ի վերայ ժողովրդեան, *և թէ որպէս ահիւ և դողութեամբ պարտ է առաջնորդել, զի աւանդ Աստուծոյ է ոգիք ժողովրդեանն, զորս բազում քննութեամբ խնդրէ ի քահանայէն. և թէ ուղիղ տանջանք են՝ որ զժողովուրդն ոչ զգուշացուցանեն բանիւ վարդապետութեամբ։ Ժ.* Վասն բամբասողաց՝ չզգաստելոյ զվարդապետս, *և թէ մեծ անաւրէնութիւն բամբասողացն չարութիւն, և ընդ պոռնիկս և ընդ յափշտակողս դատապարտին, և առաւել ես որ զքահանայս և զվարդապետս և զառաջնորդս բամ(բա)սեն. և թէ որչափ աշխատութիւն քահանային վասն հաւտին տեսչութեան. պատմէ և զահեղ տանջանաց և ցուցանէ զճանապարհ կենացն յախտենիցն։ ԺԱ.* Վասն սիրոյ եւ (p. 7 r.) յանդիմանութեան մախանաց եւ նախանձու, *և թէ որ է սէրն աստուածական, և կամ ըստ մարմնոյ, և թէ որպիսի անօրէնութիւն է նախանձ և ատելութիւն, զոր զունելիսն սատանայի նմանեցուցանէ և նորուն տանջանացն տանջանակից. ապա ի խրատ խոնարհի և ի սպեղանիս վիրացն հրամայէ ըստ ախտին չարութեան։ ԺԲ.* Վասն բարկացողացն բարուց եւ անհաշտ [illegible] մտաց, *և թէ որչափ անհամբերք են և վայրենաբարոյք, և զթիւնս թշնամութեան յանձինս կրեն հանապազ իբրև զաւձս թիւնաւորս. ուսուցանէ զհաշտելն ընդ ընկերին և զատելումն խղճի ահեղ խորհրդոյն։ Յիշեցուցանէ զթշնամանս (p. 7 v.) Քրիստոսի, զոր առ ի մէնջն և համբերէ, և զպսակս համբերողացն, և զանհնազանդիցն տանջանս։ ԺԳ.* Վասն ոխապահացն եւ քինախնդացն, *որ ծանուցանէ զմեծամեծան անաւրէնութիւնսն. զի ոչ եթէ ըստ չափոյ ընչիցս զատի, այլ զվրէժ պատուիրանապահութեան պահանջէ. յիշէ և զահեղ դատաստանին և զանմահ կենացն վայելչութիւնս**։ *ԺԵ.* Վասն չար սովորութեան երդմանց, *և թէ անաւրինագոյն է քան զկռապաշտութիւնս, և եթէ արգելեալ ամենեւին ի պատուիրանաց զերդմ(ան)ս*

---

* Հմմտ. Տեառն Յովհաննու Մանդակունւոյ՝ ճառք. Բ. տպ. Վենետիկ, 1860. եր. 9. այստեղ ԺԳ. գլխի վերնագրի առաջին տողին կցած են անմիջապէս ԺԴ. գլխի վերնագրի վերջին տողերը, որով մի վերնագիր բաց է մնացել:

սատանայականս, զի անհաւատից են երգ(մ)ունք, և ոչ հաւատացելոց. ապա խրատէ և զճշմարտութիւն ուսուցանէ՝ զանբառ (p. 8 r.) *բարերարութեանցն վայելչութիւնսն։ ԺԶ.* Վասն արբեցողացն անառակութեան, *և թէ ընդ պոռնիկս և ընդ զրպարտողս զատապարտեսցին. պատմէ և զզանազան չարեացն, որ անտի են ոգոց և մարմ(ն)ոց եղև, և զյիմարութիւնս, որ արբեցողաց լինին, որ խմոյ սրոյն երկնչին և նմանեաւն սատակին, ի հնոցէ պոռնկութեան սարսին և բացով արբեցութեան այրին և խորովին. որոց պատկեր յերկոցունց հեռանալս ապա խրատէ, և յիշեցուցանէ զարբեցողացն զտանջանս և զպատուիրանացն պարգեւս ԺԷ.* Վասն անառակութեան բաշերցն գիւղականաց, *եթէ սատանայական է ժողովն և մայր ամենայն մեղաց,* (p. 8 v.) *յորմէ ծնանին անթիւ մեղացն բազմութիւնք. և տաւեղ ես ի կատականաց և ի զուառնացն երանեն հայհոյութիւնք և զազրալի հոլլք անբարբշտութեան. և թէ հայհոյիչք են պատուիրանաց, որ ի Թատերս մտանեն, և ի շնորհաց Հոգւոյն Սրբոյ մերկանան։ Արդ, խրատէ հեռանալ ի բազմաչար ախտէն և առ Աստուած մերձենալ։ ԺԸ.* Վասն կնարողաց, *թէ անպատշաճ ինչ բանից թէ լուաւ՝ սխս բազմաւրայս ունիցի, և գործ մահու գործեաց որ զկին իւր եթող. այնպիսին անձնասպան է, որ հեռացու յԱստուծոյ, և աններելի տանջանացն մատնեսցի. այլ թէ վասն չքաւորութեան որ որդոյն անկցէ* (p. 9 r.) *տոկութիւն ընդ ամուսնոյ՝ չար է առաջի Աստուծոյ, որ սպասնայ ահիւ գեհենին։ Ապայ ի խրատ խոնարհի և զգուշացուցանէ բանիւ վարդապետութեամբ։ ԺԹ.* Վասն անասնամոլացն եւ իգացելոցն եւ անառակ ուխտազանցացն, *եթէ յորպիսի անդունդս անարէնութեան իջուցանէ զմարդիկ սատանայ, որ քան զհեթանոսութիւն այլ եւ պղծագոյն է, և չէ իսկ ի մարդկան համարի. զարմանամ և ընդ ներողութիւն Աստուծոյ, թէ կենդանոյն իսկ փայլատակմամբք ի յերկնից պարտ էր սատակել զայնպիսին. յայտնէ և զամենայն պղծութիւնսն և ապաշխարութեան ցուցանէ։ Ի—երրորդն* Վասն չունելոյ սէր բարեկամութեան ընդ թշնամիսն Աստուծոյ եւ փախչել յագահաց, յափշտա(p.9 v.)կողաց եւ յարբեցողաց *անդամոց. զի պերծ են ագահացն և ափըշտակ(ո)ղացն կերակուրք, պղծեն զայնոսիկ, որ մերձենան ի նոսա և սէր և բարեկամութիւն առնեն ընդ թշնամիսն Աստուծոյ. և թէ պարտ է ի սուրբս յարիլ և զաստուածայինսն սիրել, զի յերանութիւնս նոցա երանեսցին։ ԻԱ.* Վասն մխիթարութեան կարեկցին նուաստացն, *և թէ որպիսի իրաց նեղեն ըզմարդիկ ցասմունք ազգի ազգիք, և թէ զոր Աստուած գործէ՝ զամենայն ի բարին մատակարարէ մեզ. յայտնէ և այլ զլուխս բազում անարէնութեանց և ապայ մխիթարէ և զոհանալ հրամայէ զողորմութիւնէն Աստուծոյ, որ անցաւորութեանս խրատէ, և ոչ (յ)աւխտենական տանջ*(p. 10 r.)*անաւքն։ ԻԲ.* Վասն զգուշութեան ի սուրբ խորհուրդ մեր(ձ)ենալոյ, *և թէ որպէս պարտ է ահիւ և դողութեամբ և բա(ղ)ում երկիւղիւ ընդունել ի մարմնոյ և յարեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. և յոյժ աններելի դատապարտի քահանայն, որ զխիղճ մեղաց ուրուք գիտիցէ, և ի սուրբ խորհրդոյն մերձենայ, և ոչ սաստէ նմայ, թէ որպիսի սրբութեամբ պարտ է մերձենալ ի սուրբ մարմին և յարեան տէրունականն։ ԻԳ.* Վասն սգաւորաց մխիթարութեան ի վերայ վախճանելոյ. *եթէ հեթանոսական և սատանէ սուգ մեռելոցն, և լինին աւթեանք չար գիւացն խորհրդոց. և եթէ լաւ է մահ աւգտակար. թէպէտ և մեղաւք ոք իցէ վախճանեալ, սակայն յառաջիկայիցն զաղարեաց. պատմէ և զանառակ*(p. 10 v.)*ութիւնս կծողացն և զփետողացն և մերկայտից արիւնահա-*

նացն. զճչողս, զհառաչողս յանդիմանէ, և առ սգաւորն մխիթարութիւնն խոնարհի։ ԻԴ. Եւ ապա Ողբքն *և նորին* Աղաւթքն։ *ԻԵ.* Երաս ճայրց յաղագս առաքինութեանց երիտասարդի, եւ վասն անբարտաւանութեան, *յոր յետ եկանելոյն Ադամայ նախահաւրն մերոյ ի դրախտէն ի վերայ ծննդոց նորա հաստատեցան։ ԻԶ.* Վասն հմայից եւ անաւրէն դիւթականաց, *որք թիւրեցան յաշխարհ ի ճշմարիտ և յուղիղ պատուիրանացն, զնացին զկնի սատանայի առ կախարդս և առ թովիչս և առ վհուկս և առ ձեռնածուս, և թողին զկաթուղիկէ եկեղեցի և զխաչն աստուածընկալ. զնոսա յանդիմանէ և լուծանէ ի քրիստոնէական հաւատոց (*p. 11 r.*), և առ ճշմարիտ պատուիրանապահսն ի խրատ խոնարհի և յուխտնից բարկութեան ժառանկորդս կացուցանէ։*

Եւ զայս ամենայն փոքր ի շատէ ծայրաքաղ արարաք, եւ պատուց եւ ? *բայց են և այլ անթիւ հոյլ խրատուց և բազում աւրինակ չարեաց մեղացն և առաքինութեանց, որք կարի կարևոր են առաջնորդաց եկեղեցւոյ՝ ի խրատ և յանդիմանութիւն և յերկիւղ և զգուշութիւն ամենայն ժողովրդոց. զի ինչ մի անգամ պակասութիւն մեղաց և յանցանք վարուց եղեալ են ի սմայ՝ ամենայն խրատք վարդապետութեան, որ պիտոյ են եկեղեցւոյ, ի սմա գտանին յայտնապէս, և ոչ ծածկաբար։ Ցայտնէ և զմեղացն չարութիւնսն և զբժշկութեան հանգամանս, որով պահէ անարատ և առա(*p. 11 v.*)նց զայթակղութեան զագխտայզունիցն լեզուս, որք փութան ուսանիլ վասն երկիւղին Աստուծոյ, և պակասին բանիւ և կամ գիտութեամբ։ Ցուցանէ և զանազան մեղացն չարութիւնս, և զահեղ տանջանացն արհաւիրսն. ծանուցանէ և զխոստովանութեան զհանգամանս և զապաշխարութեան զզջումն, զորդորումն ողորմութեան զփոյթիցն, և զպնդութիւն պահոցն. ուսուցանէ և զխոնարհութիւն մեծամեծաց և զհնազանդութիւն նուաստագունիցն. ասէ և զփոյթ խրատոյ քահանայից՝ զգուշութիւն պատուիրանապահութեան ժողովրդեանն։ Ծանուցանէ և զաւրինակ սիրոյ, զմախանացն նախանձու, զչարութիւնս խորհրդոց, զպղծութիւնս գործոց, զանպարկեշտութիւն մարմնոյ, զգայթակղութիւն լեզվի, զխորայմանկութեանց անհրևոյթ վնասումն. և զամենայն (*p. 12 r.*) ազգի ազգի հոյլս անաւրէնութեան յայտնէ և յանդիմանէ, և ուսուցանէ զանազանութիւն վարուց առաքինութեան, ըստ հաճոյից կամացն Աստուծոյ, և ամենայն խիկ չարաչար ախտից և վիրաց մեղացն բժշկութեան, որում ցանկանայ և խնդրէ անձն ապաշխարհողի՝ զհնարս դեղոց բժշկութեան ի սմայ գտանէ, որ են այսոքիկ։*

(Ճառերի ընդհանուր վերնագիրը)

Սուրբ եւ ամէնէրջանիկ երիցս երանեալ վարդապետին Յոհաննիսի Մայրավանեցոյ ասացեալ ճառս ԽԴ յաղագս վարուց առաքինութեան եւ վասն աւգտի մեղուցեալ անձանց, որք գրեցան յայ(ս)մ գրի։ Ճառս ԻԸ, զորս գտաք յաւրինակի եւ եդաք։

ԽԱՒՍՔ[ա] ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆՒՈՅ[բ],

Խրատ եւ գովութիւն ճգնաւորաց եւ յանդիմանութիւն[գ] ծուլից եւ արհամարհողաց զպատուիրանս Աստուծոյ[դ]*:

Առն մոնոզոնի ուսելոյ և իմաստնոյ, որ ունի զգիտութիւն[ե] որոշողութեան[զ], որոշել զչարն ի բարւոյն[է], աներկեան[ը] պահել զանձն յամենայն խրաց չարաց։ Եւ չարիքն այս են․ եթէ յանկարծ երբեք ուրեք[թ] խաբեսցի[ժ] և անառակեսցի և տարաժամ եկեր և արբ, և կամ եթէ[ժա] ժամ մի զատարկ անցոյց ի կեանս[ժբ] իւրում, և կամ թէ[ժգ] բան մի զատարկ խաւսեսցի յաւուրս իւր։ Սակայն վասն այնր պարտի[ժդ] զցայգ լալ և զզջանալ, և առ վաղիւն[ժե] զպուշանալ մտաց իւրոց[ժզ], և վարժել զանձն[ժէ] իւր[ժը], և նահանջել զցոփութիւն[ժթ] լեզուի իւրոյ, և կացուցանել զմիտս[ի] ի հաստատութեան և ի բնութեան[իա] իւրում[իբ], զի մի դարձեալ նովին բծով ծուլասցի և խաբեսցի, և լինիցի[իգ] սովորութիւն կրթութեան[իդ] իւրեանց[իե]։ Զորս ապա մեծաւ[իզ] աշխատութեամբ ոչ կարասցէ հանել[իէ] զարմատացեալ բիծ անձին իւրոյ, այլ անցեալ[իը] ըստ[իթ] այս երկս մեղանս առն մոնոզոնի՝ աւելի քան[լ] զայս եթէ մեղանչէ՝ նա իբրև (զիս) անիմաստ[լա] և բազմամեղ է և ամենաթշուառ։

Զի մերժեցաք յայսմանէ[լբ] և հեռացաք յայնմանէ[լգ], թողաք զայս և չառաք[լդ] զայն. եկաք յայսմանէ և չհասաք այնմ[լե]։

Արդ՝[լզ] մոնոզոն[լէ], որ հացիւ և ջրով յագի, և բնով զմայլի[լը] և զանձն առ մոնոզոն[լթ] ունի, նա որպէս զիս[խ] անմիտ[խա] է և հպարտ, վասն զի ոչ կարէ[խբ] զիտել զբիծ անձին իւրոյ։ Քանզի ի գործ և ի գիտութիւն[խգ] կոչեցաւ մարդ, իմանալ[խդ] զլաւն և առնել զբարին, որոշել զչարն ի բարւոյն[խե]։

Արդ՝ կրաւնաւոր, որ ճաշէ և ննջէ, քան զայն անառակութիւն[խզ] ինչ[խէ] ոչ կայ, քանզի լիութիւն կենաց զփառաւորութիւն և զպոռնկութիւն ուսու-

---

* Տպագրուածը բերում ենք նոյնութեամբ. Հ. 643=716 ձեռագիրը, որից առնուած է այն, նշանակում ենք Ա. տառով, Հ. 223=229 Բ. տառով եւ Փ. 546=2532 Գ. տառով:

ա) Բ. Խրատ Յոհաննու Մանդակունեցոյ՝ Միաբանից. բ) ԱԳ. Մանդակունոյ գ) Գ. ի գովութեան ճգնաւոր կրաւնաւորաց եւ ի յանդիմանութիւն դ) Գ. Տեառն ե) Գ. չ. Առն մոնոզոնի—զգիտութիւն զ) Գ. եւ ի յորոշողութիւն է) ԲԳ. ի բարոյն ը) Ա. անարկեան, Բ. եւ աներկեան թ) Գ. յումեք ժ) Բ. խաբեցաւ ժա) Բ. եւ եթէ. Գ. կամ թէ ժբ) Գ. զկեանս ժգ) ԲԳ. եթէ ժդ) Բ. խօսեցաւ, պարտի վասն այսորիկ ժե) Բ. առ վաղիւ ժզ) Բ. իւր ժէ) Գ. յանձն ժը) չ. ժթ) Գ. զցոփութիւնն ի) Գ. զմիտսն իա) Բ. ի բնակութեան. Գ. ի բնութիւն իբ) Բ. իւր իգ) Գ. ծուլասցին եւ խաբեսցին եւ լիցի իդ) Գ. եւ կրթութիւն իե) Ա. իւրանց. ԲԳ. իւրացն իզ) Գ. մեղաց իէ) Գ. հասանել իը) Բ. անցանել. Գ. անցել իթ) ԲԳ. ընդ լ) Բ. աւելիք են լա) ԱԲԳ. իբրեւ անիմաստ լբ) Գ. ի յայսմանէ լգ) Բ. մերժեցաք յայնմանէ լդ) Բ. ո՛չ առաք լե) Բ. ո՛չ հասաք այնմ. Գ. չ. եկաք—այնմ լզ) Գ. Քանզի լէ) Ա. մոնոզն լը) ԲԳ. եւ դաստիարկութեամբ եւ խօսելով զմայլի լթ) Գ. առ մոնոզոնն խ) Բ. չ. խա) Գ. անիմաստուն խբ) Գ. կարաց խգ) Բ. ի գիտութիւն եւ ի գործ խդ) Գ. յիմանալ խե) ԱԳ. ի բարւոյն. Բ. չ. որոշել—ի բարւոյն: խզ) Բ. առակութիւն խէ) Գ. չ.

ցանէ, և կարաւտութիւն կենաց զխոնարհութիւն կարապետէ[ա]։ Մի կշռեր զքեզ առանց մեղաց, վասն զի ասէ՝ Սուտ են որդիք մարդկան և[բ] ի կշիռս խորհրդոց մեղանչեն[1]։ Ծանիր և տես նախ զքեզ, եթէ՞ որո՛ց ախտից յաղթեցեր և մերժեցեր ի քէն[գ], և՞ ապա ունիս համարձակութիւն առ Աստուած։

Զի՞[դ] համարձակիս, քանզի [չես][ե] մտեալ ի լուծ կրաւնաւորական կարգաց[զ]։ Զի՞ փառասիրես[է], քանզի չես անցեալ[ը] ընդ նեղ[թ] և ընդ նուրբ ճանապարհն, որ տանի ի կեանս։ Զի՞ բարձրամտես, քանզի չես անցեալ յասպարիսի ուրեմնաւորական մրցանակի փորձութեանն[ժ]։ Զի՞ մեծամտիս, զի չկարացեր[ժա] հրաժարել յաշխարհէ[ժբ] և առնել[ժգ] զրոյն քո յանապատի և լինել ազատնի անապատաւէր։ Որ երկմտարաց[ժդ] թեւոքդ[ժե] կոչնոց ի կոչումն ազատուցեալ[ժզ] շրջիս, իբրև զանատացուածոն անապատական լեռնէ[ժէ] ի լեռն[ժը] Թաշիս[ժթ]։ Զի՞ հպարտանաս թանակեր բերանովդ իբրև զհանապազորդ զճարակաւորսն[ի], որք ի լերինս անցուցանեն զաւուրս իւրեանց խոտաբոյծ ռնճկաւք[իա]։ Բաջաց յառակ են մեռք ջրաբբուաց և առողջ[իբ] մարմինք խոտակերաց[իգ]։

Զի՞ պարծիս, որ հանապազ յագեալ ես հացիւ և ջրով և զմայլեալ քնով* և[իդ] զատարկութեամբ, քանզի ասէ, թէ Զգործոյ ձեռաց՝ անկեր բերանս։ Զի՞ խրոխտաս[իե], քանզի[իզ] զատարկակեացք[իէ] չունին համարձակութիւն առ Աստուած։

Դատարկութիւն առիթ[իը] անկման ի ձեռս ախտից, չլինելոյ ընդունելական[իթ] աղաւթից նորա։ Աղաւթք դատարկաց՝ զատախազ անձանց, և[լ] աղաւթք մշակաց՝ բարեխաւս աշխարհի[լա], և քրտունք աշխատողաց՝[լբ] բժիշկ անձանց, և աղաւթք նոցա հաճոյ Աստուծոյ։ Որպէս ասէ՝ Զվաստակս ձեռաց քոց կերիցես, երանի է քեզ և բարի եղիցի քեզ[լգ][1]։

Զի՞ փառասիրես[լդ], որ չև ես ես[լե] հաստատեալ զմիտս[լզ] քո սիրով, սրբութեամբ և խոնարհութեամբ։ Մի խաբիր ի մտաց քոց, զի չես համեալ ի կէտ կատարեալ[լէ] ջանիւ և[լը] աշխատութեամբ։ Զի՞նչ ունիս զոր ոչ աշխատեցար. և եթէ աշխատեցար՝ զի՞ պարծիս իբրև զչաշխատեալ[լթ][2]։

Զիք ոք որ կարդայ և ի միտ առնու, և ոչ գոյ[խ], որ ուսանի և առնէ։ Զիք ոք հոգևոր, և ոչ զատնի[խա] անապատաւէր։

Հրաժարեցաք յաշխարհէ և չհրաժարեցաք ի ստացուածոց։ Հրաժարեցաք ի ծնողաց[խբ] և չհրաժարեցաք ի ծանաւթից։ Հրաժարեցաք[խգ] ի կենացն[խդ],

* Գ. 546=2552 ձեռագրում թերթերը խառնուած են. այս հատուածները փոխանակ էջ 42 եւս. էջ 46.

ա) Գ. զխոնարհութենէ կարապետին բ) Գ. չ. գ) Բ. ի քէնէ դ) Բ. չ. համարձակութիւն—Զի ե) Գ. ո՛չ ես զ) Ա. կարգից է) Բ. փառասիրես. Գ. փառասէր ես ը) Գ. եւ զի չես անցել թ) Բ. նեղ դուռն ժ) Գ. ուրեմն մրցակին փորձութեանց ժա) ո՛չ կարացեր ժբ) Բ. աշխարհէ ժգ) Գ. դնել ժդ) Գ. երկուարաց ժե) Բ. թեւօքդ Գ. դեւօքդ ժզ) Գ. ազատացեալ ժէ) Բ. չ. Գ. ի լեռնէ ժը) ԲԳ. ի լեառն ժթ) ԲԳ. շրջիս ի) Բ. զճարակաւորս իա) Գ. խոտաբուծ ռնճկաւք իբ) Բ. առողջ իգ) Բ. եւ խոտակերաց իդ) Գ. չ. իե) Ա. Զի՞ խրոխտաս, Բ. Զո՞ խրոխտաս, Գ. Զի՞ ո՛չ խրոխտաս իզ) Բ. զի իէ) դատարկեցք իը) Գ. է առիթ իթ) Բ. ընդունելի. Գ. ընդունելական լ) Բ. չ. լա) Բ. առ Աստուած եւ աշխարհի լբ) Գ. աշխատելոց լգ) Բ. երանի քեզ բր. Գ. չ. քեզ լդ) ԲԳ. փառասէր ես լե) Բ. չ. լզ) Գ. ի միտս լէ) Գ. կատարելոյն. Բ. չ. Մի խաբեր—կատարեալ լը) Բ. չ. լթ) ԲԳ. զաշխատեալ խ) Բ. եւ գոյ խա) Բ. եւ զատնի խբ) Բ. ի ծնողաց Գ. ի ծնաւղաց խգ) Գ. հրաժարեալք խդ) Բ. ի կանանց Գ. ի կանաց

1) Սաղմ. ճիէ, 2. 2) Հմմտ. Ա. Կորնթ. Դ, 7:

և չհրաժարեալք[ա] ի տանտիկնաց[բ]։ Հրաժարեալք[գ] ի տանց, և չհրաժարեալք[դ] ի գրոց։ Հրաժարեալք[ե] յանապատաց*, և չհրաժարեալք յիշխանաց[զ]։ Հրաժարեալք ի հոգոց, և չհրաժարեալք ի խորհրդոց։ Հրաժարեալք ի կենաց, և չհրաժարեալք ի մեղաց։ Հրաժարեալք ի լերանց, և չհրաժարեալք ի հրապարակաց։ Հրաժարեալք ի ճարակաց, և չհրաժարեալք ի բազմականաց։ Հրաժարեալք ի պահոց[է], և չհրաժարեալք ի կոչնոց։

Ի հանդիսի վառաց բազումք անցանեն[ը] և ի հանդիսի կրաւնաւորաց սակաւք։ Յասպարիսի[թ] [. . .] բազումք անցանեն և յասպարիսի վարուց սակաւք։ Զգիւտ բանից բազումք ունին, և զգիւտ[ժ] մտաց սակաւք։ Զգիւտ մարմնոյ բազումք ունին, և զգիւտ հոգւոյ[ժա] սակաւք[ժբ], ըստ բանին Տեառն, եթէ Բազումք են կոչեցեալք և սակաւք են ընտրեալք[1]։

Հողմ սատանի ոչ կարէ[ժգ] շարժել զծառ հաստատուն, և ոչ ձանձրութեան զմիտս հաստատունս[ժդ]։ Միտք ձանձրկոտ իբրև զծղօտ ալիս յածեալ[ժե] ծփին, և աչք նորա զանաւալս խնդրեն[ժզ]։ Ախտ ձանձրութեան կերիչ[ժէ] է սրտի, գերիչ է մտաց։ Ցաւ[ժը] խորհրդոց արգելիչ է կամաց, խափանիչ է յաւժարութեան։ Խստագոյն [է][ժթ] ցասումն քան զցաւս մարմնոյ։

Արդ՝ այսու գիտացիր զառողջութիւն[ի] սան[իա] վանականի[իբ], յորժամ զտեղի[իգ] ունիցի և ընաւ ամենևին չանցուցանիցէ[իդ] ժամ մի դատարկ, այլ սաղմոսէ, աղաւթէ, կարդայ[իե], գրէ, ուսանի, ուսուցանէ, կարէ, կարկատէ, արբանեկէ, և լինի իբրև զծառ հաստատուն ի միում վայրի, և տայ զպտուղ իւր ի ժամու անթափ տերևով։

Արդ՝ երանեմ լեռնականացն[իզ] հանապազորդաց[իէ], որք[իը] հրաժարեալ են յաշխարհէ[իթ], հեռացեալ ի ստացուածոց, արձակեալ ի կանանց, ազատեալ ի տանտիկնաց, զատեալք յիշխանաց[լ], մեկնեալք ի հարկաց, աւտարացեալ ի բանակաց, առաքեալք ի տերանց, որոշեալք[լա] ի հոգոց[լբ], քեցեալ[լգ] ի խորհրդոց, մաքրեալ[լդ] ի չարին սերմնացանութենէ[լե], արբեալ[լզ] ի մեղաց և լեալ[լէ] անստացուած, ունելով զմիտս իւր** ի սրբութեան և ի խոնարհութեան[լը], և թռուցեալ ի լերինս իբրև զաղաւնիս և եդեալ զբոյն իւրեանց ի քարանձաւս, զմայլին[լթ] պարարին՝ ըմպելով զականակիտ և

* Գ. շարունակութիւնը թ. 42 ր.

** Այստեղ վերջանում եւ թերի է մնում Հ. 613—746 ձեռագիր. շարունակութիւնը լրացնում ենք Հ. 225—229-ից եւ դնում Գ. 346—2332 ի տարբերութիւնները.

ա) Բ. չհրաժարեցաք բ) Ա. ի տանդիկնաց գ) Բ. հրաժարեցաք դ) Ա. չհրաժարեալք Բ. չհրաժարեցաք ե) Բ. Հրաժարեցաք զ) Բ. չհրաժարեցաք իշխանաց է) Բ. ի պատուոց Գ. ի կոչնոց ը) Գ. անցանէ. ԲԳ. եւ ի հանդիսի քաջաց սակաւք. Բ. ի հանդիսի անառակաց բազումք անցանեն. Գ. ի հանդիսի անառաց բազումք թ) Գ. ի յասպարիսի ժ) Ա. զգուտ ժա) հոգոյ ժբ) Բ. չ. Զգիւտ բանից—հոգւոյ սակաւք: ժգ) Բ. ոչ կարեն ժդ) Գ. հաստատուն ժե) Գ. յածել ժզ) Ա. խնդրեն ժէ) Բ. գերիչ ժը) ԲԳ. ցաւք ժթ) Բ. խստագոյն է ի) ԲԳ. զառողջութիւն եւ զհաստատութիւն իա) Գ. չ. իբ) Ա. վանականն իգ) Բ. զմի տեղ. ԱԳ. զմի չտեղի իդ) Բ. ոչ յանցուցանէ իե) Բ. կարդայ, աղօթէ իզ) ԲԳ. լեռնականացն իէ) Ա. հանապազորդող իը) Բ. որ իթ) Գ. յաշխարհէ լ) Բ. իշխանաց. Գ. յաշխարհականաց լա) Ա. որոշեալք լբ) Գ. ի հոգւոց լգ) քեցեալք լդ) Բ. մաքրեալք. Գ. զատեալք լե) Ա. սերմանմանցութենէ. Բ. սերմանցութենէն, Գ. սերմնացանէ լզ) ԲԳ. արբեալք լէ) Բ. լեալք. Գ. լինել լը) Գ. ի սրբութիւն եւ ի խոնարհութիւն լթ) Գ. զմայլեալք

1) Սաղմ. Ի, 16. ԻԲ, 14:

զքաղցր ջրիկ աղբերականց[ա], լինելով միակրօնք, անբիծք, անարատք, անպարսաւ, անբասիր[բ], ապաստանեալք ի լերինս, զօրացուցեալ զանձինս[գ], պնդեալ[դ] զմէջս, սրբեալ զսիրտս, ուղղեալ զմիտս[ե], միացուցեալ զխորհուրդս[զ], արիացուցեալ զկամս, քաղցրացուցեալ զբարս և զբանս: Անզբաղ[է], անզբօս, միամտեալ պարապեն կրօնաւորական վարուց՝ սաղմոսիւք և օրհնութեամբ և[ը] անդադար փառաբանութեամբ անցուցանեն զտիւ և զգիշեր, և քրիստոսաբեր[թ] սիրովն[ժ] բերկրին առ իրեարս, ուրախացեալք առ միմեանըս. հացիւ չորով և ցրտիւ ջրով, հատով[ժա] և փոխընդով և խոտաբուտ ռոճկօք[ժբ] քաջացան[ժգ] կատարելով, ցանկացեալ երանութեան[ժդ] մարգարէին թէ՝ Ո՞վ տացէ ինձ զթևս[ժե] աղաւնոյ, զի թռուցեալ հանգչէի յանապատի[1], շնորհօք Ս. Հոգւոյն[ժզ]:

Մոնոզոն իմաստուն զախոյից աւուրն[ժէ] միայն հոգայ[ժը] և[ժթ] զպէտս որովայնին[ի] հացիւ և ջրով միայն վճարէ, և ոչ ծառայեցուցանէ զմարմինն իւր կերակրովք բազմօք[իա]. քանզի յազուրդ կերակրոց[իբ] ծնանի զպէսպէս ցանկութիւնս խորակաց, իսկ կարօտութիւն հացին և ջրոյն՝ զքաղցն և զծարաւն միայն հոգայ անցուցանել. քանզի յորժէ կերակրէ յաղթի որ՝ ուտէ և մեղանչէ: Պարարեա[իգ] զհոգիդ[իդ] քո պատուիրանաւն Աստուծոյ[իե] և կերակրեա[իզ] զմարմինդ քո հացիւ և ջրով. վառեա[իէ] գիտութեամբ, և հանդիցես իմաստութեամբ:

Ցոյց անուցանէ զպէտս[իը] անդոց[իթ], և բանք հոգևորք[լ] պարարեն զմիտս ուղիղս: Մեղք և խորհուրդ զմայլեցուցանեն զճաշակս քմաց մարմնոյն, և քաղցրութիւն պատուիրանաց[լա] Տեառն պարարեն զմիտս սիրողաց նորա: Քանզի երբեմն բարձրացեալ[լբ] Թռչի իբրև զաղաւնի ի բարձունս և գնէ զբոյն իւր ի քարանձաւս և անցուցանէ զաւուրս իւր խաղաղութեամբ, առանց մեղաց՝ որոշեալ և մեկնեալ[լգ] յաշխարհէ, զտեալ և ազատեալ յամենայն իրաց չարաց[լդ]. քանզի որչափ յաշխարհէ մերժեալ հեռանայ, այնչափ Աստուծոյ մերձաւորեալ[լե] ծանօթանայ, և լինի վանք և տաճարական Հոգւոյն Սրբոյ: Իսկ ոմանց[լզ] վատացեալ, իջեալ ի լերանց՝ գեղջէ ի գեղ, տանէ ի տուն, յագարակէ յագարակ, կոչնոց ի կոչունս. որ[լէ] երբեմն ի լերինս յարանց[լը] փախչէր[լթ], այժմ[խ] իջեալ ի շէնս և ի կանանց մեծարեալ[խա] գրգի և գրգուի[խբ], մինչ զկանանց կանոնս կատարէ նա[խգ], զանձին ախտ անուցանէ[խդ] իբրև զխոզ և զխոչքոր[խե]: Տեսանեմ, զի բարբէ մարգարէն[խզ] վանականաց հրաժարելոց յաշխարհէ՝ հեռանալ ի քաղաքաց և ի շինաց փախչել ի լերինս, և ասէ. Տեսի, ասէ, զանօրէնութիւն ի քաղաքի[1]:

ա) Գ. աղբերականաց բ) Գ. եւ անբասիր գ) Բ. զօրացուցեալ անձինս դ) Բ. պնդեալ ե) սրբեալ զմիտս զ) Գ. միացեալ զխորհուրդն է) Բ. անզբաղս, Գ. անբսբաղ ը) Բ. չ. թ) Բ. զքրիստոսաբար, Գ. ի քրիստոսաբեր ժ) Բ. սիրով ժա) Բ. հատիւ ժբ) Բ. ռահօք ժգ) Բ. քաջացն ժդ) ցանկայ երանութեանց ժե) Բ. թեւս ժզ) Բ. Հոգոյն ժէ) Բ. աւուրցն ժը) Գ. մէն հոգա ժթ) Գ. չ. ի) Բ. յորովայնի իա) Բ. զմարմինս իւր կերակրոց բազմաց իբ) կերակրոյ իգ) Գ. պարարեա՛ իդ) Բ. զհոգիս Գ. զհոգիս իե) Գ. Տեառն իզ) Գ. կերակրեայ իէ) վառեալեա՛յ իը) Գ. պէտս իթ) Բ. անդաց լ) Բ. հոգեւոր լա) Գ. պատուիրանացն լբ) Գ. բաղցեալ լգ) Գ. որոշել եւ մեկնել լդ) Բ. չ. զտեալ—չարաց լե) Գ. մերձաւոր է լզ) ոմանք լէ) Բ. չ. լը) Գ. բարանց լթ) Բ. փախչել խ) Բ. յայժմ խա) Գ. մեծարել եւ խբ) զովլի խգ) Բ. նա զկանանց կանոն կատարէ խդ) Գ. ախտ անուցանէ խե) Գ. իբրեւ զխոզս խզ) Բ. մարգն

1) Սաղմ. ԾԴ, 10:

Արդ, փախիցուք ի կանանց և ի տեսութենէ նոցա[ա], և ի բնակութենէ[բ] և յամենայն աշխարհական ցանկութեանց[գ]*, զի հասանիցեմք արքայութեանն երկնից՝ ի Քրիստոս Յիսուս, ի Տէրն մեր, որում փառք յաւիտեանս. ամէն։

Տ. 43=3771 թ. 117 r.

ՏԵԱՌՆ ՅՈՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍԱՑԵԱԼ ՅԱՂԱԳՍ ՊԱՀՈՅՆ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴԱՑՆ.

Արդ, քանզի սկիզբն և կատարումն տարոյն զաւր կիրակի ասի լեալ, վասն զի եւք տարոյն ի շաբաթու լինի և սկիզբն միւսոյ տարոյն ի կիրակէի է։ Արդ, վասն զի Պահոց քառասնորդս կոչի* աւր մի ուրբաթի՝ չարչարանք խաչելութեանն Տեառն, և առիթ կոչման չարչարելոցն յաշխարհէ՝ յունել յանձինս զաւրինակ չարչարանաց Տեառն, առ ի լինել չարչարակիցք խաչելութեանն Տեառն, առ ի կոչումն մեղաւորաց յապաշխարութիւն։ Արդ, այս քառասներորդի, որ կոչի ուրբաթ, աւրէն է զշաբաթն և զկիրակէն, որպէս զուրբաթն և զչորեքշաբաթն՝ պահել զհետ աւրինացն առնելոյ (թ. 117v.). և յայնմ քառասներորդի, որ կոչի կիրակէ, կոչի աւր առաջին և սկիզբն աւուր յարութեանն Տեառն, և ուրախութիւն աշխարհի և աւետիք արքայութեան, լի ամենայն երանութեամբ անձանց պատուիրանապահանաց արդարութեան, աւրէն է զշաբաթն և զչորեքշաբաթն և զկիրակէն ուտել. քանզի զորաւրինակ ի Զատկէն մինչև ցՎերացումն Տեառն յերկինս ծունր չը դնի, նոյնպէս և պահելն չվայելէ. զի ամենայնն կիրակէ կոչի։ Արդ, քեզէն ած զքեզ ի հաւան և զխուզեայ զայս քառասուն քաւութեան, և զայն քառասուն ուրախութեան. կշռեայ քառասուն ընդ քառասնի և զուրբաթ և զչորեքշաբաթ ընդ շաբաթու և ընդ կիրակէի, և գտանես առհասարակ՝ ոչ ի սմայ անկումն և ուրախութիւն, և ոչ ի նմա պահք և տրտմութիւն։ Արդ, այս քառասուն առիթ քաւութեան մեղաց տարոյն, և այն քառասուն սկիզբն ուրախութեան տարոյն։

Արդ, աւրէն է զայս պահոց զքառասնորդս հարթիկ պահել՝ ի Բարեկենդանէն մինչև ցԶատիկն. քանզի քաւիչ և թողիչ մեղաց տարոյն կոչի. այլ զինի և ուղի, ձուկն, ձու, պանիր, կոգի, կաղոտի, բաձին, չիճուկ, կմթն, հեր ձկան, մորէ՝ զայս ընաւ ամենևին չէ աւրէն և ոչ վայել է ճաշակել, (թ. 118 r.) ամենայն ումեք մեծի և փոքու, արդարոյ և մեղաւորի. շատ են մեզ, այլ կամակք են, քառասուն աւուրն՝ կանափհատ, կտաւհատ, փոխինդ, հատ, սամթաջուր։

Արդ, այս քառասնորդով Տէրն ի լերինն տարաւ յետս զսատանայ՝ զփորձիչն, որ է աւրինակարեր յաղթութեան ամենայն հաւատացելոց։ Մի՞թէ Աստուծոյ պահել ինչ արդեաւք պիտոյ էր. ոչ ապաքէն վասն աւրինակի մարդկան առնէր զայն։ Արդ, եթէ զհանապազաւրն մեռանել չկա-

---

* Գ. 546=2532 ձեռագիրը այս բառի կիսից (ցանկու) թերի է մնում:

** Հմմտ. Տեառն Յովհաննու Մանդակունւոյ՝ ճառք. Բ. տպ. Վենետիկ. եր. 209:

ա) Բ. չ. նոցա. Գ. ի տեսողութենէ նոցայ   բ) Բ. չ. եւ ի բնակութենէ.   գ) Բ. եւ յաշխարհական ցանկութեանց յամենայնէ.

բեմք ըստ բանին Պաւղոսի, այլ դաւանեմք քառասուն աւուրս լինել հաղորդ չարչարանացն Քրիստոսի, և զրականալ մեզս տարոյն քառասուն աւուրս ընկեցուք յանձանց։ Ո՞չ գիտես, թէ որք մտեալ մտաւք չարչա-րակից լինին չարչարանացն Քրիստոսի, նոքայ միայն կարեն լինել փա-ռակից յարութեան Տեառն. քանզի տաէ՝ ոչ միայն հաւատալ ի Քրիստոս, այլ և չարչարիլ վասն անուան նորա։

Արդ, այս քառասուն չարչարանք խաչելութեանն Տեառն, և այն քա-ռասուն յարութիւն կենդանութեանն Տեառն. այս քառասուն քացախ և լեղի ի չարչարանացն Տեառն, և այն քառասուն խորհուրդ մեղու և ձկան խորովի յարութեանն Տեառն. այս քառասուն եմուտ մահ (p. 118 v.) յաշխարհս վասն յանցանաց նախամաւրն, և այն քառասուն հրեշտակացն զաւետիս տալ Մա-րիամանց զյարութենէն Տեառն. այս քառասուն բխումն արտասուացն Պետրոսի վասն ուրանալոյն զՏէրն ի չարչարանսն, և այն քառասուն երիցս խոստովանե-լոյ Պետրոսի զՏէրն սիրով. այս քառասուն հանապազ մեռանիլ վասն Տեառն, և այն քառասուն պսակաւոր լինելոյ Պաւղոսի վասն Տեառն. այս քառասուն տրտմութիւն առաքելոցն վասն չարչարանաց Տեառն, և այն քառասուն ուրա-խութեան առաքելոցն վասն յարութեանն Տեառն. այս քառասուն տրտմու-թիւն Մարիամայ վասն խաչելու|թեան Տեառն, և այն քառասուն ուրախու-թիւն Մարիամայ փառաւք յերկինս երթալոյ վասն յարութեանն Տեառն· այս քառասուն զաւրացուցիչ բարեգործաց, և այն քառասուն հատուցիչ վարձուց. այս քառասուն երաշխաւոր ապաշխարողաց, և այն քառասուն միջ-նորդ թողութեան. այս քառասուն քաւիչ յանցանաց, և այն քառասուն թո-ղիչ մեղաց. այս քառասուն աղաչող Աստուծոյ, և այն քառասուն հաշտա-րար խաղաղութեան. այս քառասուն ցածուցիչ ցասման, և այն քառասուն անցուցիչ բարկութեան. այս քառասուն առիթ արքայութեան, և այն քա-ռասուն (p. 119 r.) մատակարար արքայութեան. այս քառասուն սգոյ և տրտմութեան, և այն քառասուն սիրոյ և ուրախութեան. այս քառասուն լա-լոյ և արտասուաց, և այն քառասուն ցնծութեան և խնդութեան. այս քա-ռասուն սերմանելոյ ցաւաւք և հեծութեամբ, և այն քառասուն ժողովելոյ փառաւք և գոհութեամբ. այս քառասուն առիթ ապաշխարութեան, և այն քառասուն ցուցական աւրհնութեան. այս քառասուն դաստիարակ բարեգոր-ծութեան, և այն քառասուն պարգևարաշխ բարութեան. այս քառասուն նա-ւավար շահաւորութեան, և այն քառասուն նաւ|ահանգիստ խաղաղութեան· այս քառասուն սատար արդարութեան, և այն քառասուն գանձարան արքա-յութեան. այս քառասուն սկիզբն ապաշխարութեան, և այն քառասուն կա-տարած արդարութեան։

Արդ, այսու քառասնորդով էառ մեծ մարգարէն Մովսէս զաւրէնս ժո-ղովրդեանն։ Այսու քառասնորդաւ բաւեաց Մովսէս զյանցանս Ահարոնի և զանհնարին զմեղսն։ Այսու քառասնորդիւ չոգաւ Եղիայ ի լեառն Սինէական՝ առնուլ հրաման Աստուծոյ վասն վերանալոյն իւրոյ յերկինս։ Այսու պա-հաւք ապրեցան երեք մանկունքն (p. 119 v.) ի բարձրաբերձ տոչորական հրոյն սաստկման։ Այսու պահաւք լուծին Նինուէացիքն զվճիռ մահուան ան-բռնական հրամանին, և յընկեցիկ առնելով անձանց՝ զանց արարին զառ-ժամայն մահուամբն սատակմանն մահաբեր մարգարէին։ Տեառնես զարա-գայուր հաւանութիւն և զվաղիմաց հնազանդութիւնն Նինուէացոց, որոց ոչ միայն մարդիկն և եթ մեծ և փոքր անհատարակ պահէին, այլ և խաշանց

եւ տայրն ծոմել, առ ի լինել ընդունելակ անպաճք ապաշխարութեան նոցայ՝ առ արագաթող լինելոյ մեղք յանցանաց նոցա։

Այլ քանզի կանոնս եկեղեցոյ այս քառասնորդի, որ կոչին չարչարանք Տեառն, չիք գրեալ մատուցանել պատարագ չորեքշաբթի, ուրբաթ եւ շաբաթ, բայց միայն զկիւրակէն. քանզի քահանայից յեկեղեցւոյ վասն իւրեանց տկարութեան կարգեալ է այսմ քառասնորդի պատարագ մատուցանել ի շաբաթու եւ բերան լուծանել, վասն զի մի նոցայ անարգանք լիցին սանոց պատարագի բերան լուծանել, այլ սանն, եթէ վասն ծոմականացն մատուցանեմք ի շաբաթն պատարագ։ Արդ, որովհետեւ քահանայքն վասն ծոմականացն լու(p. 120 r.)ծանեն զկանոնս պահոցն, արդ, աւրէն է պահել աւրըստաւրէ, վասն բանին Պաւղոսի եթէ՝ Ոմն պահէ աւրըստաւրէ, եւ ոմն պահէ զաւրհանապազ[1], եւ ճաշակել իրիկունն, քան շաբաթ հանել եւ այգոյն բերան լուծանել, եւ կամակս ուտել, եւ լուծանել զկանոնս պահոցն. զի եթէ արձակ յաւուրսն վանականքն տարաժամ բերան լուծանեն, ոչ ապաքէն ամաւթալից եւ զրովեալ լինիցին ի մարդկանէ. արդ, որչափ եւս առաւել ի կարեւոր եւ ի պատուական յաւուրսն։ Զի թագաւորք եւ դատաւորք եւ նախարարք եւ համաւրէն աշխարհականք ի հրամանի Տեառն եւ ըստ իւրաքանչիւր կարի պահեն։ Իսկ արդ, վայե՜լ է կրաւնաւորի ի կարեւոր աւուրս տարաժամ բերան լուծանել եւ լինել (սղալեալ?) մոաւք եւ ամաւթալից երեւալ, եւ դայթակղութիւն այնոցիկ, որ ուղիղ են կրաւնիւք. հանապազ հարթիկ երթիցեն՝ մինչեւ ի կէս կատարման, իւրով սրբութեամբ եւ արդարութեամբ։*

Արդ, եւ ըստ իմում զիտելոյ սանմ զայս, թէ որ մանուկ տղէտ եւ ղահայս երէց առնէ, որ ոչ կարէ կարդալ զաւետարանն ի բեմի, զպատիժ քահանայութեանն նորա տայ՝ որ առնէ զնա։ Քանզի զհասկոցն եւ զուսելոցն զմեղացն անձինք իւրեանց տանի։ Այլ աւրէն է առնել զգիտունն եւ զհասունն, որ կարող է զանձն ապրեցուցանել եւ ժողովրդեան առաջնորդել։ (p. 120 v.) Վասն որոյ մեծին իսկ Պօղոսի ձայնարձակ բարբառով զաղաղակ բարձեալ, ասեր Տիմոթէի թէ՝ Ձեռն վաղվաղակի ուրուք վերայ մի դնիցես եւ մի կցորդ լիցիս մեղաց աւտարաց[2]. եւ դարձեալ թէ՝ Մի մատաղատունկ, զի մի հպարտացե(ա)լ՝ ի դատաստան եւ յորոգայթ սատանայի անկցի[3]։ Պարտ է, ասէ, քահանային անարատ լինել, որպէս Աստուծոյ տնտեսի. վերակացու լինել՝ հաւատարիմ բանին Վարդապետութեան, զի կարող լիցի մխիթարել ողջամտութեան եւ զհակառակորդսն կշտամբել. հեզ, հանդարտ, ցածիկ, պարկեշտ, ուսուցիչ, հիւրասէր, բարեսէր, արդար, սուրբ, ժուժկալ. մի յանդուգն, մի բարկացող, մի թշնամանող, մի հարկանող, մի կռւող, մի երկրան, մի արծաթասէր, մի զաւշայքաղ, մի գինէսէր[4]։ Արդ, զորաւրինակ Պաւղոս զՔրիստոս միջնորդ դնէր Աստուծոյ եւ մարդկան եւ երաշխաւոր եւ փրկանս ամենայն աշխարհի, արդ, ոչ ապաքէն նոյնաւրինակ եւ քահանային աւրէն է ամենայն անարատութեամբ լինել առաջնորդ եւ փրկանք քաւութեան ժողովրդեանն Աստուծոյ։ Արդ, եթէ վասն մեծին Մովսէսի ասէ Գիր, եթէ հեզ եւ խոնարհ էր եւ հանդարտ քան զամենայն մարդիկ, եւ ուսեալ զամենայն իմաստութիւն յեգիպտացւոցն. զի եթէ հեզն եւ հանդարտն եւ իմաստունն եւ անարատն ի բծոյ՝ հաւատարիմ պատգամաւոր Աստուծոյ

* Ձեռագրում եղծուած է այս երկու տողը. դժուարութեամբ կարելի եղաւ այսպէս կարդալ։

1) Հռոմ. ԺԴ. 5. 2) Ա. Տիմ. Ե. 22. 3) Գ, 6. 4) Հմմտ. Գ. 2—5.

և մտերիմ ժողովրդեանն, ոչ կարաց ամբողջ պահել զժողովուրդն ի մեղացդ և ապրեցուցանել զնոսա (p. 121 v.) ի հարուածոյն Տեառն, և ժառանգեցուց զնոսա ի խոստացեալ երկիրն պարգեւականին՝ զհանելոյն յեգիպտոսէ, բազում նշանաւք և արուեստիւք՝ զկնի հարուածելոյն. իսկ արդ, այլ և քահանայապետք ազգաց և արուեստաւորք զիարդ կարեն ապրեցուցանել զժողովուրդն ի մեղաց, որք և զանձինս իւրեանց անգամ ոչ կարեն ի մեղաց պահել, թող թէ ժողովրդեանն Աստուծոյ լինել միջնորդ և երաշխաւոր՝ տանել յարքայութիւնն Աստուծոյ. քանզի գրեալ և պատուիրեալ է եթէ՝ Մի յաջ խոտորեսցիս և մի յահեակ:

Արդ, զչնչական յախտն յաջոյ կոչէ, և զմարմնական ախտն կոչէ յահեակ. և բազում իսկ, որ դատարկութեամբ անցուցանեն զաւուրս իւրեանց, երկրորդ վարին՝ մեղանչեն, և ոչ գիտեն. քանզի թշնամին Աստուծոյ և մարդկան այսու ախտիւ յաղթեաց հողեղինին Ադամա. այսու ախտիւ սպան զերկրաւոր Ադամ, և սովին ախտիւք սպանեալ ինքն ի խաւարն արտաքին. այսու ախտիւ ընկէց զԱդամ ի դրախտէն, և սովին ախտիւն ընկղմեցաւ ինքն խողիւքն ի ծովուն. այսու ախտիւ յաղթեաց կերացողի Ադամայ, և սովին ախտիւ յաղթեցաւ ի պահեցողէն Ադամայ յանապատին. այսու ախտիւ յաղթեաց զաղէտ Ադամ ի դրախտին, և սովին (p. 141 r.) ախտիւ խաբեցաւ ինքն և չոգաւ յետս ի լերինն փորձութեանն: Արդ, փորձիչն մարդկան, իբրև կամեցաւ զստեղծողն փորձել իբրև զստեղծեալ, ինքն փորձեալ՝ գտաւ որդի խաւարի և ժառանգաւոր կորստեանն: Արդ, քանզի հզօր ախտիւ զմարմնաւորն եհան ի դրախտէն, վասն այնորիկ հայր ամենայն ախտից չնչոյն կոչի հպարտութիւն և մայր ամենայն ախտից որկորստութիւն: Արդ, այս երկուց ախտից ծնանին ամենայն ախտք մարմնականք և չնչականք: Այսու ախտիւ կատի ընդ վանականս յայտնապէս և ընդ աշխարհականս գաղտնապէս: Այսու ախտիւ սերմանէ զցայգ և զցերեկ՝ քնով և երազով, և խորհրդով և լեզուով: Ընդ որս և մեք աղաչեսցուք զամենասուրբ Երրորդութիւնն՝ փրկել զմեզ այսպիսի ախտից, շնորհաւք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս, ամէն:

Հ. 542=581, p. 56 r.

ՅՈՀԱՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՅ ԽՐԱՏ ՈԳԵՇԱՀ:

Այսօրիկ են հիմունք հաւատոյ, զոր պարտ է ամենայն քրիստոնէից հաւատալ զկանոնքս զայս զերկոտասան առաքելոցս. զիւրաքանչիւր առա- (p. 56 v.)քեալ եդ աստիճան և կարգ և բանք: Պետրոս, որ է գլուխ առաքելոցն, եդ այսպէս. Հաւատամք ի մի Աստուած՝ Հայրն ամենակալ, Արարիչն երկնի և երկրի: Երկրորդն եդ Յոհաննէս աւետարանիչն. Եւ Յիսուս Քրիստոս՝ յՈրդի նորա, միայն Տէր մեր: Երրորդն Յակոբոս. Որ յղացաւ Հոգւոյն Սրբոյ և ծնաւ ի Մարեմա սրբոյ կուսէն: Չորրորդն եդ Անդրէաս. Չարչարեալ ի ներքո Պոնդացւոյ Պիղատոսէ, թաղեալ: Հինգերորդն եդ Թովմաս՝ ասելով. Իջաւ ի դժոխս: Վեցերորդն եդ Բարդողոմէոս. Մեռեալ և յերրորդ աւուր յարուցեալ ի մեռելոց: Եւթներորդն եդ Փիլիպպոս՝ ասելով. Ելեալ յերկինս, նստաւ ընդ աջմէ Հաւր: Ութերորդն եդ Մաթէոս՝ ասելով. Եւ գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս: Իններորդն եդ Սիմոն. Եւ ի սուրբ կաթուղիկէ եկեղեցի և ի սրբոցն հաղորդութիւնն: Տասներորդն եդ Թաթէոս, որ է Յուդա Յակոբայ. Ի թողութիւն մեղաց: Երկոտասաներորդն եդ Մատաթիաս. Մարմնոյն յարութիւն և ի կեանս յաւիտենականս:

Հ. 943=1525. բ. 474 v.

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ՈՐ Ի ՆՄԱ ՑԱԻՐԻՆԵԱԼ ԿԱՐԳԱՑ*։

Երանելին Պաւղոս առաքեալ գրէ[ա] Եբրայեցւոցն՝ այսպէս ասելով. Զստուեր հանդերձելոց[բ] բարեացն ունէին աւրէնքն[1], և առակաւ և աւրինակաւ պաշտէին երկնաւորացն։ Եւ ապա ասէ[գ] զխորանէն և զոլոց ի նմայն. Մարմնոյ, ասէ, արդարութիւնքն, որ[դ] մինչև ի ժամանակին ուղղութեանն[2]։ Եւ յետ այսորիկ զՔրիստոս քահանայապետ ասէ անձեռագործ խորանին[ե], այս է՝ ոչ[զ] իբրև յարարածոց մարդ ոք ի մարդկանէ[3], այլ Բան և[է] Որդի Աստուծոյ, իջեալ մարդ, ի սուրբ և յաստուածածին[ը] կուսէն Մարիամայ[թ] առնլով[ժ] մարմին և հոգի և միտս և զամենայն ինչ, որ է ի մարդ[ժա], բայց ի մեղաց. և իւրով արեամբն եմուտ, ասէ[ժբ], ի սրբութիւնն յաւիտենականն[3], առեալ մեզ[ժբ]։ Եւ ապա յիշէ զաւրինաւորսն, և զարձեալ ասէ. Հարկ էր աւրինականաց երկնաւորաց այնպիսեաւք սրբել[ժգ], և բուն իսկ երկնաւորացն, առաւել ևս պատարագաւք քան զնոյնս[4]։ Զայս զքրիստոնէից[ժդ] կարգաց ասէ[ժե], և յետ այսորիկ ասէ. Ոչ եթէ ի ձեռագործ սրբութիւնն[ժզ] եմուտ Քրիստոս յաւրինակ ճշմարտութեանն, այլ ի բուն իսկ յերկինս՝ յանդիման լինել երեսացն Աստուծոյ վասն մեր[5]։

Ահաւասիկ, սիրելի իմ, հրաժարեաց ի ձեռագործ սրբութենէ, այլ յերկինս[ժէ] առաց, այս է եկեղեցի[ժը]. քանզի ի սմա հացիւն, որ մատուցանի յանդիման Աստուծոյ Հաւր, և բաժակաւն գոհութեան, որ է մարմին և արիւն Քրիստոսի Աստուծոյ, առեալ լինի ի փրկութիւն՝ սրբութեամբ ճաշակողացն, որդեգրութեան շնորհաց Հոգւոյն Սրբոյ[ժթ] արժանի եղելոց։ Եւ դարձեալ յետ այլոց[ի] ի նմին թղթի արտայայտէ յայտնագոյն ևս[իա] զեկեղեցւոյ խորհրդոյ[ժթ] փեսեկումն առ հաւատացեալսն, հրաժարականաբար պատմութեամբ զաւրինացն[իբ], ասէ. Ոչ էք[ժթ] մատուցեալ առ լեառն շաւշափելի, որ հրովն վառեալ էր[6]. և ապա ըստ միոջէն[իգ], նոյնպէս հրաժարելով և հաւանական պատմութեամբ զըստ[իդ] եկեղեցւոյ՝ ասէ. Մատուցեալ էք ի Սիովն լեառն և ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ՝ յԵրուսաղէմ յերկինս, և ի բիւրաւոր բանակս հրեշտակաց, (բ. 475 r.) և յեկեղեցիս անդրանկաց՝ գրելոց յերկինս, և առ դատաւորն ամենեցուն[իե] Աստուած, և յոգիս արդարոց[իզ] կատարելոց, և ի Նորոց Կտակարանաց միջնորդն Յիսուս[7]։ Ահա քաջայայտնագոյն[իէ] արտայայտեաց սուրբ առաքեալն զեկեղեցւոյ վերերեւութիւն՝ ոչ երկիր լինել, այլ[իը] երկինք, ոչ երկրային քաղաք, այլ վերին Երուսաղէմ, ոչ երկրային տաճար, այլ երկնային առագաստ. ոչ իբրու ստացակա-

---

* Հմմտ. Հ. 2261=2244. բ. 155 v.

ա) Բանիցի գրէ բ) Ստուեր հանդերձելոցն գ) ասել դ) ասելով արդարութիւն ե) ի ժամանակս ուղղութեան զ) խորանաւ է) այս եղիցի ը) չ. թ) չ. եւ յաստուածածին ժ) առեալ ժա) չ. որ է ի մարդ ժբ) մեզ փրկութիւն ժգ) աւրինաւորաց երկրաւորաց այնպիսեաւքն սրբել ժդ) զՔրիստոնէից ժե) առաց ժզ) որդութիւնս ժէ) երկինս ժը) զեկեղեցի ժթ) չ. ի) յետ այլոց դարձեալ իա) յայտնագոյնս արտայայտէ իբ) զաւրինաց իգ) զասսի միոջէն իդ) զասի իե) ամենեցուն իզ) արդարոցն իէ) յայտնագոյն իը) այլեւ

1) Եբր. Ժ, 1. 2) Եբր. Թ, 10. 3) Թ, 11—12. 4) Թ, 23. 5) Թ, 24. 6) ԺԲ, 18. 7) ԺԲ, 22—24։

նաց հողեղինաց դասակցութիւնն[ա], այլ որպէս բանականաց[բ] հողեղինաց և որոց ըստ նոցին[գ]։

Եւ արդ, թուի ինձ լինել, սրբոց առաքելոց ակնարկութեան[դ], կարգ քրիստոնէութեան[ե] աստուածային երկնային[զ] յաւրինածոց կարգաց՝ վերբերելով[է] զմեզ յզգալեացս[ը] և յերկրայնոցս յիմանալիսն և յերկնայինսն, միշտ տեսանելով զանդ[թ] լեալ կարգսն, և զհանդերձեալսն լինելոյ[ժ] յաւրինուածոց պատրաստութիւն։ Եւ արդ, եկեղեցի հարսն Քրիստոսի, զայս զեկուցանէ[ժա] մեծն ի ծնունդս կանանց, ասէ. Որ հարսնն[ժբ], նա է փեսայ[1]. փեսայ Քրիստոս է[ժգ], ըստ խրում անսուտ բանին, և հարսն եկեղեցի[ժդ]. սոյն և երկինք և երկնից երկինք կոչին[ժե], և երկնային առագաստ և հարսնարան, և վերին Երուսաղէմ։ Այսոքիւք անուամբք կոչի եկեղեցի, զորոյ և ցուցականն[ժզ] ունի յայտնապէս։ Բայց երկնի երկու են յաւրինուածք, այլ զսկզբանէն[ժէ],|զանցեալն և զայժմու ներկայս և զապառնիսն՝ զհանդերձեալսն լինելոյ[ժը]։

Իսկ եկեղեցի երկու խորանաւքս[ժթ] թուի ինձ զայժմուս և զհանդերձեալսն լինելոյ[ի]։ Իսկ յսկզբանէն մինչև ցապառնին մեզ այսպէս ցուցանին պատմութիւնքն[ի]։

Երկուք լինին[իա] խորանք, որ ասին երկինք. ի միումն իսկ, ի սուրբ եկեղեցւոջ, Երրորդութիւնն[իբ], և յերկրորդումն՝ անմարմնական դասք հրեշտակաց, և որ վերագոյն քան զնոսա[իգ]. և երկու անջրպետք վարագուրիցն[իդ] իմանին, միոյն՝ հրեղինաւն, սուրբ Երրորդութիւնն ծածկի յանմարմնոցն, և երկրորդ՝ Ջրեղինաւս[իե], անմարմին զաւրութիւնքն ի մարմնականացս։ Զի յաղագս այսորիկ ոմն ի կատարելագունից սուրբ վարդապետացն, այսպէս իմաստասիրեաց յաղագս սուրբ Երրորդութեանն, ասէ. Միայնակն ի սուրբ սրբոցն ի ներքս շրջի[իզ], իսկ զարարածս ամենայն միայն[իէ] արտաքոյ եթող, զոմն առաջնաւն[իը] և զոմն երկրորդաւն արգելլով զվարագուրաւն[իթ]. առաջնով յաստուածութենէն զերկնայինսն՝ զհրշտակականսն, և երկրորդաւ[լ] զմեզ յերկնայնոցն։ Բայց որպէս սուրբ[իէ] առաքեալն[լա] ակնարկեաց՝ սուրբ եկեղեցի, երկրորդ (p. 475 r.) խորան[լբ], հանդերձելոյ երկնին է նմանութիւն. զի այժմ ոչ որ առ սուրբ Երրորդութեանն[լգ] իմանի, բայց յապագայսն ամենայն արժանաւորք ընդ նմա[լգ] լինելոց են, որպէս Որդին Աստուծոյ ծա-

ա) դասակցութեան բ) այդ իբրեւ բանական գ) հողեղինաց. այսպիսի է ցոյց ցաւից ճանապարհի առաջնորդելոյ: Եւ արդ, եթէ ամենայնօք պահպանութեամբ սուրբ նշանին Քրիստոսի կարացից կանգուն լինել առ աներեւոյթ բնական սասանութիւն՝ այսր եւ անդր շարժելութեան խորհրդոց, նեցուկ ունելով զնաւասն ճշմարտութեան, բերեւս առաջնորդեսցէ Հոգւոյն Սրբոյ շնորհն եւ յերանաւէտն նաւահանգիստ քաղաքականութեան խորհրդոյդ՝ յայտնելով իմում անարժանութեանս զասացն միջոցէն: դ) ըստ սրբոյ առաքելոյն ե) քրիստոնէութեանս զ) եւ երկնային է) կարգացն անցելոցն եւ ներկայից եւ ապառնեաց ամենակացն ցոյցք ի սորին վերաբերելով· ը) ի զգալեացս թ) զանդն ժ) կարգս եւ զհանդերձեալն լինելոց ժա) զի զայս զեկոյց մեզ ժբ) որ հարսն ժգ) է Քրիստոս ժդ) է եկեղեցի ժե) կոչին երկնից երկինք ժզ) զցուցանակն ժէ) երկնից մեզ երկուք ցուցանին իմացուածս· այդ զսկզբանէն եւ ժը) եւ այլ զապառնին՝ զհանդերձեալն լինելոց ժթ) խորանաւքն ի) եւ զհանդերձեալն լինել ի) ցուցանի պատմութիւն իա) լինել իբ) ի միումն ինքն իսկ սուրբ Երրորդութիւնն իգ) չ· եւ որ — զնոսա իդ) վարագուրից իե) ջրեղինաւն իզ) Որպէս ասէ Աստուածաբան, եթէ միայնակ ի սուրբ սրբոցն շրջի: իէ) չ· իը) առաջնովն իթ) վարագուրաւն լ) առաջնովն զերկնայինսն յաստուածութենէն, եւ երկրորդաւն լա) առաքեալ լբ) խորանաւն լգ) Երրորդութիւնն լդ) արժանաւորն ընդ նոսա

1) Յովհ. Գ, 29։

նոյց մեզ յաղաւթան խրում առ Հայր վասն ամենեցուն հաւատացելոց արժանաւորաց[ա], ասէ. Որպէս դու, Հայր, յիս և ես ի քեզ, զի և նոքա[բ] ի մեզ իցեն[1]: Եւ յետ սակաւուց ասէ. Ես ի նոսա, և դու յիս, զի եղիցին կատարեալք ի մի[2]: Եւ դարձեալ ասէ վասն ամենայն սրբոց[գ] առ Հայր. Կամիմ, զի ուր ես իցեմ, և նոքա ընդ իցեն, և[դ] յամենայն ժամ զփառսն[ե] իմ տեսցեն[3]: Զայն և սուրբ առաքեալ ասէ առ հաւատացեալս[զ]. Քանզի մեռարուք, եւ կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱստուած[է]. Իսկ յորժամ[ը] Քրիստոս յայտնեսցի՝ կեանքն ձեր, յայնժամ եւ դուք ընդ նմա յայտնեսջիք փառաւք[4]. և այլուր ասէ[թ]. Եթէ չարչարանացն կցորդ լինիցիմք[ժ], և փառացն հաղորդ լինելոց եմք[5]. և դարձեալ ասէ[ժա]. Եթէ համբերեմք, ընդ նմին և թագաւորեսցուք[ժբ][6]:

Զայն և սուրբն Գրիգոր յայտնէ[ժգ] վասն արդարոցն, թէ աստուածեղինի լինելոց հաղորդ[ժդ], ասէ. Յորժամ յերկնից ծագեալ փառաւք Հաւր՝ գայցէ[ժե] առաջի ամենայն հրշտակազունդ զաւրուն, զձեռանէ առեալ իւրոցն սիրելեաց, այսինքն[ժզ] հանեալ|ածանիցի յիւր[ժէ] աստուածեղէն բնակութիւնն, յանզրաւական կեանսն՝ ի մասնական կեանսն[ժը] վայելեցուցանէ:

Ահա ցուցաւ[ժթ], եթէ յարժանաւոր[ի] արդարքն ընդ Աստուածութեանն են լինելոց՝ ի հանդերձելում յաւիտեննին[իա], Իսկ սուրբ եկեղեցի երկրորդ խորհրդաւն հանդերձելոյ[իբ] երկնին է նմանութիւն, ուր ամենասուրբ Երրորդութիւն է արժանաւորաւք[իգ], որպէս ահա[ժա] ցուցաւ:

Իսկ սուրբ սեղանն զսրբոյ[իդ] Երրորդութեանն ծանուցանէ[իե] մեզ զմիասնականութիւնն[իզ], որպէս սուրբն Սահակ ուսուցանէ տեսլեամբն: Իսկ ծածկեալն սքեմաւք արժանաւորաւք, այս[իէ] ծածկեալ խորհուրդ ըստ ինքեան արժանի սուրբ Երրորդութեանն[իը], որ և այս ցուցաւ ի տեսլեան սրբոյն Սահակայ:[իթ] Իսկ պսակս[լ] այս անզուգական պատիւ[լա] սուրբ Երրորդութեանն: Իսկ[լբ] նուիրանոցք արծաթիք սրբոյ[լգ] սեղանոյն՝ այս բանք Տեառն, ընտրեալ և փորձեալ որպէս զարծաթ[լդ], որպէս կանխաւ մարգարէն եւ յետոյ սուրբն Սահակ ցուցանէ[լե]:

Իսկ խնկանոցն՝ այս[լզ] զսուրբ Աստուածածնին ունի զնմանութիւն, որպէս և[լէ] սուրբն Գրիգոր աւրինակ[լը] կուսին Մարիամու ասաց, ասէ. Որպէս նա լի էր հոտով սրբութեան[լթ], այնպէս և[խ] սա Հոգւով Սրբով[խա] և զաւրութեամբ Բարձրելոյն: Իսկ հրատու նուիրանացն թուի ինձ զհրեշտակապետին նմանութիւնն (p. 475 v.) բերել՝[խբ] առ սուրբ Կոյսն աւետարանութեան[խգ]: Իսկ բուրումն անուշահոտ[խդ] խնկոցն՝ անուշութիւն Աստուծոյ

ա) Որպէս Քրիստոս ծանոյց մեզ յաղաւթեն խրում առ Հայր, բ) նոյնպէս եւ նոքա գ) սրբոցն դ) զի ե) զփառս զ) առ հաւատացեալսն է) չ. Քանզի—յԱստուած ը) եւ քէ յորժամ թ) չ. այլուր ասէ ժ) լինիմք ժա) չ. ժբ) թագաւորեմք ժգ) ասէ ժդ) եթէ աստուածեղէն փառացն են լինելոց հաղորդս ժե) զայցէ Քրիստոս ժզ) զիւրոց սիրելեացն, առ ինքն ժէ) յիւրում ժը) չ. ի մասնական կեանսն ժթ) Եւ դարձեալ ասէ վասն սրբոցն, եթէ բնակութիւն նոցա լինելոց է ի նուրն Աստուածութեանն: Ահա ցուցաւ ի) արժանաւոր իա) ի հանդերձեալ յոյսն յաւիտենից իբ) խորանուն հանդերձելոց իգ) արժանաւորաւքն իդ) սրբոյ իե) ծանուցանի իզ) միասնական էութեամբն իէ) Իսկ ծածկեալ խորհուրդ է ազնուիւ արժանականաւք, այս է իը) Երրորդութիւնն իթ) չ. որ եւ— Սահակայ լ) պսակն լա) պասիւ անզուգական լբ) որպէս սուրբն Գրիգոր ասէ. Զմի պսակ սրբոյ Երրորդութեանն: Իսկ լգ) սպասու լդ) որպէս զարծաթ ընտրեալ լե) ուսուցանէ լզ) չ. լէ) զխնկանոցն յաւրինակ լը) սրբութեամբ լթ) նոյնպէս եւ խ) Սուրբ Հոգւոյն խա) բերել զնմանութիւն խբ) աւետարանութեամբ խգ) անուշութեան

1) Յովհ. ԺԷ, 21. 2) ԺԷ, 23. 3) ԺԷ, 24. 4) Կող. Գ, 3—4. 5) Հռոմ. Ը, 17. 6) Բ. Տիմ. Բ, 12:

առ մարդիկ[ա] ցուցանիւր. իսկ* հաշտութիւն առ Աստուած՝ զմահն Քրիստոսի ասաց առաքեալ. Հաշտեցաք, ասէ, ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյն նորա[1]. զսոյն եւ յԱւրհնութիւն աւրհնութեանցն նշանակեաց զխնկանոցն զմահն Քրիստոսի լինել, ասէ. Նարդոս ետ զհոտ իւր[2]. այս է՝ մահն Փրկչին, Տեառն ամենայնի. եւ դարձեալ ասէ. Իջի ես ի պարտէզ խնկոց, կրթել զըմուռս[3]. այս է՝ թաղումն Քրիստոսի. եւ զի ոչ այլ ումեք, այլ քահանայական դասուն է իշխանութիւն զայս ընծայ մատուցանել Աստուծոյ, այսուիկ եցոյց համանման լինել քահանային հրեշտակապետին, որ նովաւ ազդեցաւ Մարիամու սրբոյ կուսի Աստուածածնին աւետարանութիւնն. իսկ ի նմանէ մարմնանալովն ամենայն արարածոց եղեւ հաշտարար Քրիստոս արեամբ խաչին իւրոյ՝ որ ինչ յերկինս եւ որ ինչ յերկրի:

Իսկ բեմին վերամբարձութիւնն ցուցանէ յամենայն աստուածային ուղղութիւնս ի յերկրէս ընծայեալս՝ բարձր եւ կանգունս զհաւատոյն դաւանութիւն ճշմարտութեան, որով վերանան արդարքն ի ծանրութենէ կենաց աշխարհի ի թեթեւութիւն երկնից բնակութեանն: Իսկ վարագոյրն անջրպետող զերկինս ցուցանէ զատուցանել, զոր ինքն միայն գիտէ՝ սուրբ Երրորդութեանն զարժանիսն առ ինքն բնակութեանն: Իսկ լապտերացն համապազորդութիւն ցուցանէ զմշտընջենաւորս արդարոցն պայծառութիւնս: Իսկ խորհրդոցն յաջմէ ցուցանէ զեկեղեցւոյ սպասուց եւ զպատարագաց՝ ընծայս եւ զտուրս ողորմութեան առ աղքատս եւ առ տնանկս, որ իբրեւ ի գանձանակս ժողովեալ բարեգործութիւնքն՝ յերկինս վերին եւ պահին առ Հաւրն հաւատոց, ըստ Փրկչին բանի թէ՝ Գանձեցէք ձեզ գանձս յերկինս. զի ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին[4]:

Իսկ աւազանն՝ այս մշտածին որովայն հարսինն Քրիստոսի է, որ է եկեղեցի: Իսկ յաջմէ ցմեզ, եւ յահեկէ նորին հարսինն Քրիստոսի. զի մատուցումն ի մէնջ յաջմէ է. զի դասուն կա(յ)ան խորհել է մկրտելովն եւ որդիս Աստուծոյ լինել Հոգւովն շնորհաց: Իսկ յահեկէ նորին ծնաւղի՝ զի զկոչեցեալսն նախ մերժէ ի ձախու կողմանէն, է եւ նորին պետութեան գլխաւորի, և ապա** մատուցանէ աջոյ կողման[բ] դասուն արժանեացն[գ] Հաւրն և որոց ընդ (p. 476 r.) նմա՝ համապատիւ[դ] Որդւոյն և Սուրբ Հոգւոյն. և ապա նոցին անուամբք ծնեալ[ե] ջրով և Հոգւով՝ ընծայէ յորդեգրութիւն[զ], անուամբն ժառանգս Աստուծոյ լինել: Իսկ ջրով և Հոգւով[է] է ծնունդ աւազանին, զայս սուրբն[ը] Գրիգոր ուսուցանէ, ասէ. Ջուրք վերինք մածեալք բնակութիւնք են հրշտակաց[թ]: Արդ, զայս ջուրս իբրեւ զայն ջուրն[ժ] արար, զի ամենեքեան Հոգւովն ի ջուրցն[ժա] նորոգեալ՝ հրեշտակացին[ժբ], և նոյն Հոգի ջրոց զամենեսին[ժգ] յորդեգրութիւն մատուցանէ[ժդ]:

---

* Շարունակութիւնը պակասում է Հ. 2261=2244 ձեռագրում (p. 158 v.), մի թերթն ընկած լինելու պատճառով:

** Հ. 2261=2244, p. 159 r. այս բառով շարունակում է:

ա) խնկոցն, այս յաւիտենացն մեզ իմաց՝ալ լիցի. եանգի անդ մատուցումն խնկոցն հաւատարութիւն Աստուծոյ ընդ մարդիկ բ) կողմանն գ) արժանեաց դ) համապատիւ ե) ծնեալ զ) ընծայէ որդեգրութեամբ է) Իսկ զի ջրովն եւ Հոգւովն ը) սուրբ թ) հրեշտակաց են ժ) ջուրս ժա) Հոգւով ի ջրոց ժբ) հրեշտակացին ժգ) ջրոյն զամենեսեան ժդ) մատուցեն

1) Հռոմ. Ե, 10. 2) Երգ Ա, 12. 3) Հմմտ. Երգ Ե, 1. 4) Մատթ. Զ, 20 եւ 21:

Իսկ յարևելս անհնոյ[ա] զգիր շինուածոյ եկեղեցւոյն, հարսին[բ] Քրիստոսի՝ այս յարևելից սպասել գալ(ս)տեան փեսային, ըստ ինքեան Փրկչին բանի, ասէ. Զի[գ] որպէս փայլակն, որ[դ] ելանէ յարևելից և երևի մինչև յարևմուտս[ե], այնպէս եղիցի և գալուստն[զ] Որդւոյ Մարդոյ[1]։ Զսոյն և Երեմիայ մարգարէ ակնարկեաց յառաջագոյն, համանուն[է] անհնով Երուսաղեմի եղական անուամբ զամենայն եկեղեցիս Աստուծոյ[ը], ասէ. Արի Երուսաղէմ և հայեաց ընդ արևելս[թ], և տես զեկեալ փրկութիւն քո յարևելից[2]. և այս թէպէտ և զդարձ[ժ] գերութեանն Բաբելոնի նշանակէ, այլ[ժա] առաւել ի միւսանգամ գալուստ[ժբ] Փրկչին իմանի, փրկելով զժողովուրդ եկեղեցւոյ[ժգ] ի գերութենէ մահու և յարութեան[ժդ]։

Իսկ զարդարութեան[ժե] ժամուցն մեզ հնչման լուսին՝ այս զհրեշտակական փողոյն մեզ լուսին[ժզ] իմանի, ի յետ սորին թողուլ մեզ զջան մարմնոյ[ժէ] և զվաստակ, և միայն յեկեղեցին[ժը] համանել եւ անդ կատարել զպաշտամունս։ Ահա արդարեւ յերկրէ եւ յերկրայնոցս զմեզ մերժելով եւ յերկինս եւ առ երկնայնոյն մերձեցուցանելով, որպէս եւ ի հարիւրերորդ երեսներորդ առաջներորդ սաղմոսին մեզ զեկուցանէ հոգեհնչողութիւնն. քանզի անդ՝ ոչ տալ քուն աչաց ասէ եւ ոչ նինջ արտեւանաց, մինչեւ գտից զտեղի յարկի տեառն Աստուծոյ Յակոբայ[3]. եւ տեղի յարկի տեառն Աստուծոյ Յակոբայ երկինք են, որ մեզ յերկրի եկեղեցի տուցաւ՝ առակաւ երկնից աւրինակեալ։*

Իսկ զատուցումն պաշտամանեացն՝ զայս յառաջակայքն մեզ նորին սաղմոսի ուսուցանեն. քանզի առ եկեղեցւ ասէ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն, եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն[4]։ Իսկ պաշտաւնեայք սեղանոյն, այս քահանայիցն ըստ սաղմոսին զարդարութիւն զգենուլ է, որ զասակցին ընդ հրեշտակս։

Իսկ Հայրապետն, որ նախ ինքն է գլուխ (բ. 476 v.) եպիսկոպոսաց, միջնորդ Աստուծոյ եւ մարդկան՝ այս աւրինակ կենարարին, որպէս սրբոյն Գրիգորի ի տեսլեանն ասացաւ, ասէ՝ քահանայապետութիւնն աւրինակ է Աստուծոյ պատկերին մարմնացելոյ, այս է, Որդւոյն Աստուծոյ։

Եպիսկոպոսք եւ քահանայք եւ սարկաւագունք եւ կէսք սարկաւագացն, եւ գրակարդացքն եւ սաղմոսացքն եւ այլ պաշտաւնեայքն՝ խորհրդագոյնք մի քան զմի, առ այս ըստ|վերին անմարմնական դասուցն երկնային զաւրացն ունին մեզ տեսանելի որոշեալ պաշտաւնեայք, ըստ Բարսղի և Գրիգորի եղբարց սրբոց եպիսկոպոսաց հարցաքննական վարդապետու-

---

* Հ. 2261–2244, ձեռագրում շարունակութիւնը բոլորովին տարբեր է. «այս թողուլ յայնժամ զհողաթաւալ մարմնոյ աշխատութեան, եւ համարէն ամենեցուն յարութեամբն ի դատաստանին տեղի հասանել»։ Եկեղեցւոյ պաշտօնեաների դասակարգութեան մասին ամենեւին խօսք չի լինում այստեղ։

ա) ունել բ) շինուածոյ եկեղեցւոյ հարսինն գ) չ. դ) զի ե) ի մուտս արեւու զ) զալուստ է) Երեմիա ակնարկէ, համանուն ը) Քրիստոսի թ) արեւելս ժ) ի դարձ ժա) Բաբելոնի նշանակի, այս ժբ) գալուստն ժգ) իւր ժդ) ապականութեան ժե) ազդարարութեան ժզ) հրեշտակական փողոյն գոչման լուսին ժէ) իսկ թողուլն զմարմնոյ ջան ժը) ի պաշտամունսն

1) Մատթ. ԻԴ, 27. 2) Բարուք Ե, 5. 3) Սաղմ. ՃԼԱ, 4—5.

թեանն վասն երկնայնոցն։ Իսկ արանց և կանանց կարգ դասուցեալ յեկեղեցւոջն՝ այս ըստ Սաղմոսին՝ արդարև է սրբոցն ցնծալով ցնծալն[1], որք արժանացեալք երկնաւոր մտիցն կայանի, այս է եկեղեցւոյ՝ ցնծան, ուրախացեալք յաստուածային պաշտամանցն ցնծութեանց։ Եւ անա այսոքիկ ի նոսին յաւելեալք՝ ինն թուին դասուցեալ դասք, ըստ Դիոնիսեայ Արիսպագացւոյ ի հրեշտակին խաւսից. եւ զի ըստ նոցին թուոյ են պաշտաւնեայք եկեղեցւո, սուրբն Գրիգոր ասէ զմկրտելոցն թէ՝ Խառնեցան ի զաւրսն լուսեղէնս. և ինքն ի Վարդապետութեանն ասէ. Փոխանակ հրեշտակացն, որք կործանեցան յաստուածակիր ազատութենէն, որդիք մարդկան հրեշտակացին, կալցին զնոցա տեղին. զի թիւք կարգեալ փառաւորութեանցն անխախտ պահեալ լիութեամբքն, ուստի ի հասարակաց համեմատութենէ անտի զովեսաքն աճեցեալ զաւրացին, հասարակացն ալելով(?) համեմատութիւն եցոյց, եթէ ընդ ամենայն լուսեղէնսն խառնեալ դաս երամանան։ Եւ զի երկնից աւրինակ է եկեղեցի յերկրի, սակս այնորիկ զնոյն դասակցութիւն ցուցանէ մեզ իւրոց պաշտաւնէիցս Տէր թուով։

1) Համե. Սաղմ. ՃԼԱ, 9 եւ 16։

Ծան. Բոլոր մեր այստեղ հրատարակած նիւթերը առնուած են ձեռագիրներից ըստ կարելւոյն նոյնութեամբ. միայն շատ աչքի ընկնող սխալները, կամ անհասկանալի բառերը, ընդգծելով նշանակել ենք եւ փակագծի մէջ դրած տառերով լրացրել. ինչ որ մնացել է՝ թող սխալ չհամարուի, այլ ձեռագրի տառացի վերարտադրութիւն։ Այս վերջին հատուածի նկատմամբ պարզ է, որ Հ. *2261=2244* ձեռագրի օրինակն աւելի ընտիր է եւ նախնական, բայց այն թողինք ամբողջական հրատարակութեան համար. ուստի ճառընտրի օրինակը դրինք առաջին տեղում։ Տ. Գարեգին վարդապետ հրատարակութեան համար պատրաստ ունէր «Խրատ վարուց» ճառաշագիրը. բայց մեր աշխատութիւնը ամբողջացնելու համար հարկադրուեցանք կանխել հրատարակել։

Հ. տառով նշանակել ենք Կարինեան ցուցակի ձեռագիրների վրայ եղած համարները, Գ. տառով Գէորգ կաթուղիկոսի օրուանից աւելցածներինը, Տ. տառով Տաթեւից բերածներինը. իսկ=զուգահեռականով մօտը դրել ենք վերջերս նշանակուած նոր համարները։

Պարտք ենք համարում դիտել նաեւ, որ Յովհան Մանդակունուն Յովհան Խոստովանողի եւ *Փարպեցու* յիշած «Երանելի Յովհանի» հետ չնոյնացնելու մասին մեր վերեւ յայտնած կարծիքները այս օրերս պատահմամբ գտանք շատ նման ձեւով Նորայր Բիւզանդացու «Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնք» գրքի մէջ արտայայտուած (Տփխիս, *1900 թ.* եր. *489*), որ առաջ աչքի տակ չէինք ունեցել։

ԱՋԻՑ ՁԱԽ ՀԱՅ ԳՐՈՒԹԻՒՆ

1. Ասորի Դանիէլի հայերի համար կազմած այբուբենը հաւանօրէն պիտի լինէր աջից-ձախ գրուած ըստ ասորականին։ Մաշտոցի արած փոփոխութիւններից մէկը պիտի լինէր ըստ յունականին գրութիւնը դարձնել ձախից աջ։ Մինչև մեսրոպեան կատարելագործուած այբուբենի ընդհանրանալը երկար տարիներ, հաւանօրէն տասնեակ տարիներ, Դանիէլեան գրութիւնը աւանդուած պիտի լինի գոնէ Դանիէլ եպիսկոպոսի գործունէութեան շրջանում՝ Հայաստանի հարաւում, քանի որ այբուբեն կազմելու նպատակն էր քրիստոնէութեան քարոզութիւնը օժանել այդպիսի մի ուժեղ զէնքով։ Կորիւնից գիտենք որ այդ այբուբենով դպրոցներ բացուեցան նաև Վռամշապուհի հրամանով (տես իմ յօդուածը «Հայ գրերի 1500 ամեակի առթիւ» Արարատ 1912 մայիս—յունիս միացեալ համարը)։ Այդ այբուբենից որև է հետք գտնելը որչափ ցանկալի բանասիրութեան համար նոյնչափ թերևս և անյուսալի մի բան է։ Սակայն նոյն իսկ մեսրոպեան տառերով մի գրութիւն՝ աջից ձախ գրուած՝ մեզ կապում է հին Դանիէլեան աւանդութեան հետ։ Եւ եթէ մեզ յաջողուի այսպիսի գրութեան գոյութիւնը ապացուցանել՝ մի քայլ աւելի առաջացած կլինինք հայ, նաև վիր, այբուբենների ծագման հետազօտութեան ճանապարհում։

2. «Սիսականում» էջ 79, խօսելով Սեանում գտնուող ըստ աւանդութեան Լուսաւորչից օծուած խաչքարի մասին՝ Ալիշանը աւելացնում է ծանօթութեան մէջ հետևեալը. «Գոյ ի խաչվիմին Թուական ՊՂԵ, 1446—7, (ըստ Ջալալ. Բ. 109)։ Այխվալա գերմանացի (Բ, 510) յամի 1826, յիշէ տեսեալ երիս խաչվէմս ի Սեան, և միւս մեծագոյն ի պատալդեան տախտաձև վիմի քանդակեալ զրուագօք, և շուրջ գրուած՝ զոր կարծէր հնագոյն հայերէն տառս, յորոց քաջերոշագոյնս աստ գայսոսիկ (այսպես գրուած է մի տող փորագրութիւն), զոր և ցուցեալ բազմաց՝ ոչ կարացին ստուգել ինչ. և արդարև չէ մարթ իմանալ կամ լուծանել այսր. բայց թուի տող գրուածոյն խոտոր կամ յետս շրջեալ, զոր և մեր շրջելով՝ յանդիման լինի այս ձև. (Ալիշանը դնում է մի տող փորագրուած, որ մենք տալիս ենք տպագիր գլխատառերով) Գ Է Բ Ձ Կ Պ Տ Ք Հ Ց Ա Ղ, յորում մարթ է ընթեռնուլ՝ յետ առաջնոյ երից տառիցն, ՁԿարաՊԵՏ ՔաՀանաՑ յԱՂ.(opu]iebgkf կամ ապաչեմ)։ Որիշ ի սմանէ կարծեմ զմեծ տափաքար (ուզում է ասել տուֆ քարից շինուած) խաչն, յորում և քանդակապատկեր խաչեցելոյն. (Թիւ 28)։» Այսքանն Ալիշանից։

3. Ալիշանի այս ծանօթութիւնը շատունց գրաւել էր իմ ուշադրութիւնը։ Այխվալդ գերմանացին, որի աշխատութիւնը չունիմ, անշուշտ իրանից չէր հնարել այդ մի տողը։ Հաւանօրէն տառերը գլխիվայր էր նկարել,

անծանօթ լինելով հայերէնին։ Սրանից 18 տարի առաջ լինելով Սևանում մի քանի օրով, որոնել տուի երկար, բայց ինձ հաւատացին, որ այդպիսի խաչքար չկայ Սևանում։ Անծանօթները պիտի իմանան, որ ահա 25 տարի է որ զրկուած լինելով աչքերի գործածութիւնից, ես անձամբ անկարող էի փնտրել իմ ուզածը։ Անցեալ տարի, 1912-ին, նորից հանդիպեցայ Սևան, և այս անգամ աւելի երկար ժամանակով։ Մնացի այնտեղ ուղիղ 2 ամիս։ Մատենադարանի հին տպագիրները աչքից անցնելուց յետոյ, նորից յիշեցի Այխվալդի առեղծուածային արձանագրութիւնը։ «Կարապետ քահանայ» անունից արդէն դժուար չէր գուշակել, որ շատ հին բան չպիտի լինէր այդ արձանագրութիւնը, սակայն պէտք էր վերստուգել այդ խօսող կամ օրչուած գրերով արձանագրութիւնը, եթէ միայն այդ լոկ թիւրիմացութեան արդիւնք չէր։ Մտածում էի, որ օտար ճանապարհորդը կարող էր էստամպաժ վերցրած լինել և verso-ն recto-ի տեղ ընդօրինակած։ Պետրոս սպասաւորս, որ բաւական վարժուած է արձանագրութեանց ընդօրինակութիւնների, մի երկու միաբանների հետ, ունենալով Այխվալդի տողը մատիտով թղթի վրայ քաշուած, հատ հատ խուզարկեց կղզում եղած բոլոր արձանաքարերը և խաչքարերը։ Վերջապէս մեր ուզածը գտնուած էր, մարդաձև մի խաչքար, ոչ նման միւս խաչքարերին, որ կանոնաձև են, այլ իսկապէս խաչաձև կըտրուած քար, բազկատարած թևերով, մամռապատ և մի քանի բառս (շըրջուած) կարդացուող տառերով։ Այդ օրերը Սևան եկաւ և մեր միաբանակից Հ. Մաքսուտեանը, որին և խնդրեցի մատիտով ընդօրինակել խաչքարը երևցած տառերով և բոլոր քանդակներով։ Այդ թեթև նկարից ոչ մի կասկած չմնաց, որ մեր այս խաչքարն ինձ արդէն ծանօթ է Ալիշանի պատկերից (Սիսական էջ 89, պատկեր 28 «խաչքանդակ տափաքար ի Սևան»)։

4. Արձանագրութիւնը բաւարար վերծանելու և մանրամասն ուսումնասիրելու համար անհրաժեշտ էր երկար ժամանակ, և աւելի դիւրին էր խաչը քարայրից բերել իմ բնակարանս, քան ինձ տանել բլրի գլուխը։ Այդպէս և եղաւ։ Մի քանի շաբաթ խաչքարը իմ պատշգամբումս էր և հնարաւոր եղաւ զգուշութեամբ մաքրելով մամուռն ու քարուքոսը վերծանել բոլորը։

Խաչքարը բլրից ցած բերին 4 նաւաստի և ծանրութիւնը, ի հարկէ աչքի չափով, կլինէր ոչ աւելի 8—10 ռուս պուդից։ Կարմրաւուն փխրաքար է, փոքր ինչ հեռուից անում է բոլորովին փայտի տպաւորութիւն։ Կարծես թէ քարից իմիտացիա է նախնական փայտախաչի։ Խաչի ուղղահայեաց մասը, բունը, ունի $25\frac{1}{2}$ ռուս. վերշոկ երկարութիւն, իսկ պատուանդանի մէջ մտած մասը—4 վերշոկ. հորիզոնական մասը՝ թևերը՝ մի ծայրից միւս ծայրը՝ 15 վերշոկ։ Թևերի լայնքը՝ 4 վերշոկ, իսկ բնինը՝ 5 վերշոկ։ Քանդակի նկարագրութիւնը չեմ տալիս, տես Ալիշանի մէջբերած պատկերը (էջ 89), միայն այնչափն ասենք, որ Քրիստոս «պատկով» է, իւրաքանչիւր բևեռուած ափին մի մի փոքրիկ խաչ, իսկ ոտքերը հատ հատ, առանձին, բևեռուած, ուրեմն և չորս բևեռ, երկուսը ձեռքերին և երկուսը ոտքերին։ Անհրաժեշտ է թէ տառերի և թէ պատկերի մանրամասնութեանց համար լուսանկար, որ դժբախտաբար ինձ չյաջողուեց ձեռք բերել, այդ մնում է ապագայ ուսումնասիրողին։ Տառերի բարձրութիւնը բոլոր տողերում հաւասար չէ, նոյնպէս տողերի երկայնքը, բայց այդ բացատրւում է քանդակից ազատ տեղի,

խաչի չըթուռքներին կամ եզրերին տրամադրելի եղած տարածութեամբ։ Գրերը գեղեցիկ են, տողերի թիւը, հաշուելով և թուականը, որ գտնւում է խաչի ոտքում, է իննը։

5. Այսպիսով ստացանք հետեւեալ արձանագրութիւնը.

1. ՍԱ Է ՓՐ
2. ԿԻՉ ԱՇԽԱՐ
3. ՀԻ ԵԻ ՅՈՅՍ
4. ՀԱԻԱՏԱՅԵԼՈՅ
5. ՈՐՔ ԵՐԿՐՊԱ
6. ԳԷՔ ՋԿՊՏ ՔՀՅ ԱՂ
7. ԱԽԹՍ ՅԻՇԵՅԷՔ
8. ՋՔՐ ԿԱՋՄՈՂ≡
9. ՊՂԷ

6. Երեք ընդգծուած տողերը՝ 5, 6, 7 փոխադրուած են աջից ձախ։ Վեցերորդ տողն է Այխվալդի ընդօրինակածը և բացի մի տառից (երրորդ տառը) ճիշդ է, միայն թէ գերմանացին տառերը նկարել է գլխիվայր։ Ընթերցողին հնարաւորութիւն տալու համար, որպէս զի պարզ գաղափար կազմէ աջից ձախ գրութեան մասին՝ երեք ընդգծուած տողերի ետեւին՝ միւս երեսում, դատարկ տեղ ենք թողնում։ Պէտք է լոյսի դիմաց բռնել արձանագրութիւնը և ետեւի բացատում կունենանք երեք տողը աջից ձախ՝ տողերի և տառերի ճիշդ դասաւորութեամբ, ինչպէս որ է խաչքարի վրայ։ 8-դ տողը խաչի մի թևի ստորին եզրումն է, ուրեմն երեք տող աջից-ձախ գրութիւնից աւելի բարձր տեղում։ Այդ տողն ես կարդում եմ ՋաՔաՐ ԿԱՋՄՈՂ։ Երկրորդ գիրը Ք-ն բաւական անորոշ է և շատ մաշուած։ Կարելի էր ենթադրել փոխանակ Ք-ի Մ և Ղ փակագիր, որով կստացուէր ՋՄՂՐ=ՋՄԵՂԱՒՈՐ, բայց հազիւ թէ։ ԿԱՋՄՈՂ բառից յետոյ կարծես թէ մաշուած տառերի հետքեր կան, Ս և Ր փակագծով, որ պիտի կարդացուէր=ՍՈՐԱ, որով ամբողջ տողը՝ Զմեղաւոր կազմող սորա։ Այս դէպքում կազմողը կլինէր Կարապետ քահանան ինքը. բայց աւելի ապահով թւում ինձ առաջին ընթերցումը՝ ՋՔՐ ԿԱՋՄՈՂ≡։ Թուականը շատ պարզ է և լաւ պահուած՝ ՊՂԷ (և ոչ թէ ՊՂԵ), այն է 1448 Փրկչ. տարին, որ հայ շարժական հաշւով ընկնում է 1447 նոյեմբեր 30-ից (Նաւասարդի 1)—1448 նոյեմբ. 28ը, իսկ Սարկաւագի անշարժ տոմարով 1448 օգոստ. 11-ից—1449 օգոստ. 10-ը։

7. Ուրեմն իրողութիւն է, որ մեր այս արձանագրութեան մէջ ունինք 3 տող աջից-ձախ հայ գրութիւն, ընդամենը 32 տառ, չհաշուելով կրկնուածները՝ միայն 20 տառ, որ են հետեւեալները՝ ա գ ե զ է թ, ի կ հ ղ, յ շ ո պ, տ ր ց ս ւ ք։ Համարել թէ այս գրութիւնը Դանիէլեան նշանագրերի մնացորդ է՝

անհնարին է։ Մի կողմ թողնելով ժամանակի հնաւորութիւնը, չենք գըտնում նաև որևէ տառ տարբեր մեսրոպեան գրութիւնից, այլև տառերի թուից ոչինչ պակաս։ Պակասող 16 տառը՝ հարկաւ լոկ պատահականութեան արդիւնք են, այդ տառերով բառ չլինելով այս երեք տողի մէջ։ Ենթադրել որ և է գրչախաղ, կամ ինչպէս ձեռագրերում պատահում է, «գրչափորձ», նոյնպէս բոլորովին անհաւանական է։ Իմ տեսած և թերթած հազարաւոր ձեռագրերում չեմ յիշում, բազմաթիւ և բազմատեսակ գրչափորձերում, որ և է մի դէպք, ուր փորձուած լինէր աջից ձախ գրել։ Թերևս ենթադրուի թէ Կարապետ քահանան իւր անունը, ինչպէս շատ անգամ պատահում է ձեռագրերում, այս իւրատեսակ ծածկագրով է ուզեցել գրել։ Բայց առաջին՝ որ բազմաթիւ ծածկագրերի, «նշանագրերի», շարքում, որ մեզ ծանօթ են ձեռագրերից և ոչ մէկը կայ այսպիսի աջից ձախ գրութեամբ և երկրորդ՝ որ այսպիսի գրութիւնը հազիւ թէ ծածկագրի պաշտօն կատարէր, քանի որ առաջին հանդիպողը պիտի ճանաչէր պարզ գրերը՝ միայն թէ դէպի ձախ շրջուած։ Եւ ինչու արձանագրողը, որ խնդրում է իրան յիշել աղօթքներում, պիտի ուզենար ծածկուել. և որտեղից պիտի ծագէր աջից ձախ գրելու միտքը՝ եթէ չլինէր այդպիսի մի աւանդութիւն, կամ աւելի լաւ՝ այդպիսի մի օրինակ։ Եւ ամենահաւանականն է թւում, իմ կարծիքով, այն, որ եղել են այդպիսի գրութեամբ խաչեր, որին և հետևել են կազմողն ու արձանագրողը։ Այս տեսակէտից յատուկ ուշադրութեան արժանի է նաև խաչելութեան քանդակը իւր մանրամասնութիւնով և յատուկ մասերով, թէ արդեօք որչափ հին կարող է լինել և թէ ինչ նախընթացներ ունի։ Հնումը աջից ձախ գրելու սովորութիւնն ունէին ոչ միայն ենթադրեալ Դանիէլեան գրերը գործածողները, այլ բոլոր հայ գրագէտները, որոնք ասորերէն էին գրում և կարդում։ Այսպիսիները պիտի հակուած լինէին՝ ձեռքի վարժութեամբ, աջից ձախ գրել։ Ճիշդ այս օրերս կարդացի, կարծեմ Баку *լրագրում, որ Դաղըստանի լեռնականները, որոնք մատրասաներում տարիներով վարժւում են արաբերէն գրելով (աջից ձախ), սովորելով ռուսերէն իրենց ազգանունները*

գրել՝ շատ անգամ տողագրում են ռուսերէն՝ աջից ձախ։ Ուրեմն մեծ է հակման զօրութիւնը։ Բայց այս բոլոր բացառական փորձերը առ այժմ վաղաժամ են։ Պէտք բաւականանանք եղած իրողութեամբ և աշխատենք գտնել այսպիսի գրութեան նոր օրինակներ։ Մանաւորապէս այդ պէտք որոնել խաչարձանների և յատկապէս՝ այսպիսի մարդաձեւ և փայտանման *խաչքարերի վրայ, ուր խաչը կերտուած է ամբողջապէս քարից, բազկատարած թեերով, կարծես թէ գերանի երկու տաշած կտոր խաչմէջուկ դրուած լինին միմեանց վրայ։*

8. Այս մտքերով էի զբաղուած անցեալ 1912-ի աշնանը Սեւանից էջմիածին դարձիս, երբ բարեպատեհ այցելութիւնն ընդունեցի պ. Աշխարհբէգ Լորիս Քալանթարի, որ վերադառնում էր իւր գիտական ճանապարհորդութիւնից։ Պատմելով ինձ զբաղեցնող այս նիւթի մասին՝ տեղեկացայ նրանից, որ այսպիսի մի արձանագրութիւն, աջից ձախ գրուած, յայտնի է նրան Լօռի գաւառում և խոստացաւ ինձ այդ մասին գրել։ Մինչև այժմ ոչ մի տեղեկութիւն չունիմ։ Եթէ բարեբախտաբար ճշդուի պ. Աշխարհբէգ Քալանթարի հաւաստածը, այն ժամանակ մենք նոր նիւթ կունենանք համեմատութեան համար և թերևս հնարաւոր լինի աւելի հիմնաւոր եզրակացութեան հանել։ Մնում է որ ժամանակը և աւելի ուշադիր հետազօտութիւնները մեզ նոր լոյս տան այս մեր յարուցած հետաքրքիր խնդրի մասին։*

Գալուստ Տէր Մկրտչեան

6 սեպտ. 1912.

* Ծան. Հայ երկաթագիր տառերից երեքը, Ռ, Ո, Փ, որոնք եւ ունինք այս արձանագրութեան մէջ, աջից ձախ գրութեան մէջ էլ մնում են անփոփոխ, չկրելով դիրքի եւ կերպարանքի փոփոխութիւն։ Բոլորգի մէջ անփոփոխ կմնայ եւ եռասամ այբը (ա)։

ԴԱՍԱԿԱՆ ՀԱՅԵՐԷՆԻ ՇՈՒՐՋԸ

ՄԷՅԵԷԻ ՆՈՐ ԵՐԿԻ ԱՌԹԻՒ

Ինչպէս յայտնի է (տ. Արարատ, 1913 ապրիլ), վերջերս Հայդէլբէրգում լոյս տեսաւ Ուսուցչապետ Ա. Մէյյէի Altarmenisches Elementarbuch *անուն գործը, որով ծանօթ հայագէտը միջոց է տալիս գերման համալսարաններին հիմնովին ճանաչելու դասական հայերէնը։ Հակառակ խորագրի համեստութեան՝ այս գործը շատ տեսակէտներով և յատկապէս դասականութեան ու բառական-քերականական ձևերի վերլուծութեան եղանակի տեսակէտից մի թանկագին աշխատութիւն է, որին արժէ լրջօրէն ծանօթանալ։ Փորձենք ուրեմն, նախ քան մեր անձնական դիտողութիւնները, տալ բուն իսկ գործի պատկերն՝ ըստ կարելւոյն լրիւ։*

Altarmenisch *բառով հեղինակն հասկանում է յատկապէս Ե. դարու դասական լեզուն և ոչ առհասարակ հին հայերէնը կամ գրաբարը։ Նա կողմնակից է Վիեննայի Մխիթարեան հարց, որոնք առաջին անգամ սկսան զանազանութիւն դնել բուն դասական և յետդասական շրջանների միջև լեզուական որոշ առանձնայատուկ երևոյթների հիման վրայ։ Ինչ որ Վիեննայի դպրոցը սկսաւ զուտ բանասիրական հողի վրայ,—մեզ հայերիս այդ բանասիրական կողմն է միայն ծանօթ,—Մէյյէն նոյնը ջատագովեց իր ուղղութեամբ իբրև լեզուաբան։ Եւ ներկայ աշխատութեան նիւթ առածն էլ այդ իսկ դասական լեզուն է կամ, ըստ Վիեննացւոց, ոսկեդարեան հայերէնը։*

Եւ այս նրան օժանդակել են մէկ կողմից իբրև ընագիր Սուրբ Գիրքը, Եզնիկը, Ագաթանգեղոսը, Փաւստոս Բիւզանդը, միւս կողմից՝ հայ քերականութիւններից՝ Չալըխեան, Մալխասեանց և Գարագաշեան, ինչպէս նաև մի քանի ծանօթ բառգրքեր, յատկապէս Հայկազեան երկհատորը։ Հեղինակին անծանօթ չեն Բագրատունու «զարգացեալ»ն ու այլ քերականութիւններ, որոնցից սակայն հազիւ թէ օգտուած լինի։

Ներածութեան մէջ համառօտակի յիշատակում է տառերի գիւտն ու հայ գրականութեան սկզբնաւորութիւնը Ս. Մեսրոպի ձեռով։ Նախամեսրոպեան շրջանի մասին զգուշաւոր հեղինակը շատանում է հետևեալ հակիրճ դիտողութեամբ միայն. «Ոչ մի ապացոյց չկայ, որ հայերէն լեզուն դրանից առաջ երբ և է գրի առնուած լինի» էջ՝ 2.—Ոսկեդարու շրջանն համարում է մինչև 460-ական թուականները ու այդ միջոցներին էլ յունարէնից թարգմանուած Ագաթանգեղոսն ու Փաւստոս Բիւզանդը։ Բուն դասական մատենագրութիւնը բաժանում է չորս դասի. 1. Եզնիկ և Ս. Գրքի մեծ մասի թարգմանութիւն (Հնգամատեան, Սաղմոսներ, Աւետարան, ևն.) 2. Կորիւն, Ագաթանգեղոս, Փաւստոս Բիւզանդ, ևն. 3. Թարգմանութիւն մեկնութեան Ս. Գրոց յԵփրեմայ (ասորերէնից), ևն. 4. Թարգմանութիւն Գործոց Կիւրղի և Ս. Գրքի մի քանի մասերի—Յուդիթ, Եզրաս, ևն.։ Այս բաժանումը ոչ ըստ ուղղագրութեան է ոչ ըստ քերականական ձևերի, այլ ըստ բառերի ու դարձուած-

ների Հեղինակին այս բաժանման մէջը Նորայր Բիւզանդացու «Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք» ուսումնասիրութիւնն է եղած։—

Ինքնուրոյն գրուածներից Եզնիկի լեզուն *) Լիբուսար համարում է լաւագոյն օրինակը դասական հայերէնի Ս. Գրքի թարգմանութեան հետ միասին, չվարանելով սակայն այդ թարգմանութիւնն անուանելու «ganz sklavisch—բոլորովին ստրկական»։ Այդ ստրկութիւնը քերականական ձևերի մէջ չէ, այլ նախադասութեանց կազմութեան մէջ—արդիւնք այն յոյն-ասորական դաստիարակութեան, որ թարգմանիչներն ստացել էին հայրենիքից հեռու։

Հեղինակն իր ներածութեան մէջ հարևանցի ակնարկ է ձգում նաև այն ժամանակի բարբառների վրայ, որոնց մասին գրական տեղեկութիւններ պակասում են դժբախտաբար։ Ըստ Մէյյէի «արդի (հայ) բարբառները, որոնց զանազանութիւնն իրարից այնքան մեծ չէ, որ արգիլեն հայերին միմեանց հասկանալու, ենթադրել չեն տալիս, որ խիստ որոշ բարբառներ գոյութիւն ունեցած լինեն այն պահուն, երբ սկիզբն առաւ (հայ) գրականութիւնը «Introduction à l'étude comparative des langues Indo-européennes, 3 éd. էջ 55). Ըստ իս, այդ կարծիքն առաջ է եկած հեղինակի մէջ այն հանգամանքից, որ ցարդ տեղի ունեցած լեզուաբանական հետազօտութեանց մէջ բարբառային ձևերն հանդէպ հնդևրոպականի լուսաբանուել են միշտ, կամ գրեթէ միշտ, դասական հայերէնի միջոցով, ճիշտ այնպէս ինչպէս արդի արևմտահայ բարբառները Կիլիկեան հայերէնի միջոցով հանդէպ դասականի։ Բայց միևնոյն ժամանակ զարմանալի պիտի լինէր, եթէ բարբառային ոչ մի զանազանութիւն չճանաչէր նա Ե. դարում։ Վաղ է դեռ վերջնական վճիռ արձակել այս մասին, քանի դեռ մեր հետազօտութիւնները չեն աւարտած. քանի դեռ գրի ու համեմատութեան չեն առնուած ձեռագրերի այն սխալները, որոնք արդիւնք են արտագրողների կրած ազդեցութեան իրանց առօրեայ խօսակցական լեզուից (օր լիզու փոխ լեզու-ի հմ. (Meillet, Esquisse, էջ XIII), ոչ էլ այն առանձնայատկութիւնները, որոնք հեռացնում են փիլիսոփաների (Դաւիթ Անյաղթ և նմաններ) լեզուն դասականից և մօտեցնում արդի բարբառներից ոմանց, օր —ում-ի գործածութիւնը ներգոյականում։

Մէկ կողմից այս անհրաժեշտ վերապահութիւնը, միւս կողմից այն հանգամանքը որ բնականօրէն մէկ գաւառի խօսուածքը պիտի որոշ զանազանութիւններ ունենար մի այլ գաւառի խօսուածքից, թելադրում են յարգելի հեղինակին որոշ բարբառային զանազանութիւններ ենթադրելու գրական լեզուի սկզբնաւորութեան պահուն և այդ գրականին իբրև հաւանական հիմք ընդունելու Տարօնի բարբառը, էջ 3. հմ. Esquisse էջ XIII.**)

*) Նաև. ճիշտ է, որ Եզնիկի լեզուն ամենից օրինակելին է թէ ոճի եւ թէ քերականութեան կողմից, բայց ինչպէս Բիւզանդը այնպէս եւ նա ազատ չէ իր ժամանակի ռամկօրէնի ազդեցութիւնից, թէեւ համեմատաբար շատ նուազ չափով. օր. Եզն. Դ. 4. եւ յինէն տամ ոգի փոխ. տաց. եւ մանաւանդ այնորիկ եւանեա ի խաչ փոխ. եցես.

**) Նաև. Լեզուաբաններից շատերի համար տարօրինակ է թւում, որ արդի հայ բարբառների ուսումնասիրութիւնը կատարւում է գլխաւորապէս (ոչ թէ ամենայնի) համեմատութեամբ դասական հայերէնի։ Տարօրինակ է թւում յատկապէս այն պատճառով, որ դասական հայերէնը համարում են ոչ այլ ինչ բայց եթէ Ե. դարու բարբառներից մինը պարզապէս գրականի վերածուած ու առանձին խնամքով մշակուած։ Այս մի ենթադրութիւն է, որին առանց այլեւայլութեան համաձայն գտնուել չի կարելի։ Թէեւ աւելի ուղիղ լինի մտածել, որ մեր դասականը մի տեսակ հայկական κοινή է, այսինքն մի ընդհանրացած լեզու, որ

Ըստ ոմանց Ե., իսկ ըստ Մէյյէի Զ. դարից սկսում է հելլենաբան փիլիսոփաների, Դաւթի և իր յաջորդների շրջանը. սրանց լեզուն պարունակում է մի քանի քերականական առանձնայատկութիւններ, որոնք գոյութիւն ունին այսօր հիւսիս-արևելեան հայերէնում։ Սրանց գրուածները թարգմանութիւններ են յոյն փիլիսոփայական գործերի, որոնց բնոյթն էր թերևս, որ առիթ տուաւ հայ թարգմանիչներին կաղապարելու մի շարք բառեր յունարէնի վրայ։ Այդ բառերի մեծ մասը սիրով հիւրընկալուեցաւ յաջորդ դարերի հայ մատենագիրներից և մինչև այժմ էլ գործ են ածւում թէ գրական թէ խօսակցական լեզուի մէջ. միայն դասական հայերէնն է, որին անծանօթ մնացին։

Գալով դասականին՝ պահպանուած է, դժբախտաբար, ուշ ժամանակի ձեռագրերում միայն. սրանցից հնագոյնը Թ-րդ դարից այն կողմը չի անցնում և տպագիր հրատարակութիւններն էլ կատարուած են այդ ձեռագրերի վրայ, այն էլ առանց մանրազնին հետազօտութեան. միայն վերջերս է, որ գիտական հրատարակութեանց կարիքն աւելի և աւելի զգալի է դառնում։ Սկիզբն արդէն դրուած է։ Գ. Տէր Մկրտչեան և Հ. Աճառեան հրատարակեցին «Քննութիւն և համեմատութիւն Եզնկայ նորագիւտ ձեռագրին» և Ս. Էջմիածնի հրատարակութեամբ լոյս է տեսնում Հայ պատմագիրների շարքը. Ղազար Փարպեցի, Ագաթանգեղոս և Խորենացի արդէն հրատարակուած են։

Մի էական պարագայ, որ Մէյյէի այս գործի մէջ աչքի է ընկնում և որի մասին ինքը ներածութեան մէջ էլ առանձին խօսում է, որոշ բառերի ու ձևերի ուղղագրութիւնն է։ Յայտնի է, որ դասական հայերէնում o տառը չկար և նրա փոխարէն գործ էր ածւում աւ. նոյնպէս թէ, եթէ բառերի վերջում է-ի փոխարէն գրում էր ե, ինչպէս նաև անկատարում—եի, բերեի, ևն., փոխանակ էի, բերէի, ևն. հեղինակը պահպանել է դասական ուղղագրութիւնը՝ հիմնուելով հնագոյն ձեռագրերի վրայ, որոնք աւելի են հաստատում համեմատական լեզուաբանի եզրակացութիւնները հնդեւրոպական լեզուների ուսումնասիրութիւնից։

Անցնենք այժմ բուն գործին։

Թէև այս քերականութիւնը, ըստ հեղինակի իսկ ասութեան (էջ 6), նկարագրական է, բայց հայ քերականութիւնների համեմատութեամբ ունի բազմաթիւ առաւելութիւններ՝ արդիւնք ոչ այնքան հեղինակի հիմնաւոր ծանօթութեան հայ լեզուին, որքան նրա սուր դիտողութեան և այն մեթոդին, որով սովոր է նա ուսումնասիրել։ Առաջին իսկ էջերից աչքի են զարնում այդ առաւելութիւնները։

Գլ. Ա. խօսում է դասական հայերէնի գրութեան ու արտասանութեան մասին։ Իւրաքանչիւր տառի արժէքը ճշտում է այն ժամանակակից լեզուների միջոցով, որոնցից կամ փոխառութիւններ կան հայերէնում, ինչպէս պահլաւերէնը, և կամ պահուած են յատուկ ինչպէս և հասարակ անուններ այդ լեզուներից կատարուած թարգմանութեանց մէջ, ինչպէս ասորերէնն ու յունարէնը։

Բ. Գլուխը նուիրուած է ձայնական փոփոխութեանց. Այստեղ ուշա-

երկարատեւ գործածութեան շնորհիւ եւ քաղաքական հանգամանքների բերումով իր մէջ ձուլել է բազմաթիւ օտար ժամանակակից կամ երբեմնի հայ բարբառներից, որոնցից հետքեր միայն գտնում ենք արդի հայ բարբառների մէջ։ Աւելորդ է ասել, որ սրանով չի ժխտւում դասական հայերէնի սկզբնաւորումը մի որ եւ է հայ բարբառից, ինչ որ սա էլ բնական է։

գրութեան արժանի է ի ձայնաւորի ե-ի փոխուելը, երբ յաջորդ վանկը կազմուած է ու-ով, օր. տերութիւն. անարենութիւն փոխ. տիրութիւն, անարինութիւն, ինչպէս սպասելի էր։

Էջ 19 անշեշտ իա-ի ե-ի փոխուելը, ինչպէս և էջ 21 c) բարդութեանց մէջ երկրորդ մասի ն-ի անկման լաւագոյն օրինակներից մին էլ, ըստ իս, աներկեան բառն է, որ կազմուած է *ան-երկի-նուան-ից ճիշտ այնպէս ինչպէս երկերիւր-ը *երկի-նարիւր-ից։ Ես այս օրինակը յիշում եմ այստեղ իբրև à propos, որովհետև, որքան գիտեմ, այս բառի ստուգաբանութեան մասին դեռ ոչինչ գրուած չէ։

Էջ 20. խօսում է դ-ից առաջ գտնուած ե-ի մասին, որ ներկայացուցիչն է մի հնագոյն ի-ի։ Բայց ե-ն ոչ միայն դ-ի այլ և ռ-ի առաջ ներկայացնում է մի սկզբնական ի. հմ. ծիծեռն (<* ծիծիռն) և բիբեռն (< *բիբիռն)։

Յաջորդ տողերում Ա՟ծ, Ա՟յ, Ա՟վ կրճատ ձևերն համեմատում է յոգնակի սեռ. աստուածոց ձևի հետ և մեր արդի արտասանութիւնն – Աստուծոյ, ևն., համարում է միջնադարեան և ոչ ուղղաբար։ Համաձայն գտնուելով հանդերձ հեղինակի ենթադրութեան, չենք կարող ուշադրութեան չառնել և այն, որ հին ձեռագրերում պատահում է ոչ միայն աստուածոյ և աստուածոց, այլ և աստուծոց ձևը «չաստուածոց»ի իմաստով. տ. Հ. Ա. 1913, թ. 1. էջ 4. յօդ. Հր. Աճառեանի, նաև Հ. Ա. 1913 թ. 5. Մ. վ. Մառ.

Էջ 20—23-ում տալիս է բաղաձայնների կրած կերպարանափոխութեանց պատկերը, որով և աւարտում է ձայնաբանական մասը։ Ըստ իս, հեղինակի նկարագրած երևոյթների վրայ կարելի է աւելացնել նաև հետևեալը—դ-ի անկումը բաղաձայնից առաջ, մին եւ յատկապէս ընդ նախդրի մէջ. օր. ընկեր (<*ընդկեր), ընկրկեմ (<*ընդկրկեմ), ընտանի (<*ընդտանի). ընթեռնում (<*ընդ-թերի-նում), ընձեռեմ (<*ընդձեռեմ), ըմբռնեմ (<*ընդբռնեմ), ընդրեմ (<*ընդ-դր-եմ <*ընդ*դիր-եմ) հմ. յն. διαστέλλω). ընտրեմ (տ-ով) ուշ ժամանակի ուղղագրութիւն է։

Նախ քան հոլովումների ու խոնարհմանց բաժնին անցնելը՝ հեղինակն ընդարձակօրէն խօսում է դասական հայերէնի բառակազմութեան մասին, §§ 28—40, հետևեալ խորագրերի ներքոյ. **անուանածանց կազմութիւններ** (օր. բազուր—բազուրեմ). **բայածանց կազմութիւններ** (օր. նստ-այ—նստ-ու-ցանեմ). **ներգործական անուններ** (Nomina agentis «գործող անձի անուններ» օր. ուսուցանեմ-ից ուսուցիչ. տամ-ից տուիչ և տուող. ծնանիմ-ից ծնող կամ ծնօղ. երկիր պագանեմ-ից երկրպագու. ինչպէս և եղջեր-ից եղջերու, մեղր-ից մեղու կամ կամ. եկ-ի-ից եկ «եկող». գիտեմ-ից գէտ). **վերացական բառեր՝ ածանցուած անուններից** (օր. գերի—գերութիւն. անիրաւ—անիրաւութիւն). **գործողութեան անուններ. վերացական բառեր՝ ածանցուած բայերից** (ստայ—ստումն. գոչեմ—գոչիւն. շինեմ—շինուած. կատարեմ—կատարուած. հալածեմ—հալածանք, կեամ—կեանք. անիծանեմ, կաս. եզ. Դ. անէծ—անէծք. բքանեմ, երուք—բուք). **բանձրացնող բառեր**—անոց—մեղու—մեղուանոց.—ոց—ծաղիկ—ծաղկոց.-արան—աւետք—աւետարան. կերպ—կերպարան-ք.(ա)ստան—հրեայ—հրեաստան.-ենի—ձէթ—ձիթենի.-ակից—ուղի—ուղեկից.-ուհի—թագ—թագուհի). **նուազականներ**.(-իկ—մանկիկ.-ակ—ծովակ.-ուկ—մժղուկ). **ածականներ (եւ միեւնոյն կազմութեամբ գոյականներ)**. (-ական—աշխարհական (ած.). կոչնական(գոյ.).-ային—հարաւային.-այն—առժամայն. լռելեայն.-ացի—Աթենացի.-աւոր—երկրաւոր.-ագին—ահագին.-ագոյն—վաղագոյն.-ած—ողորմած.-

եայ—երեմուրեայ.-եան—երեմեան.-եղ—անեղ.-եղէն—մաշկեղէն.-ի—այի,ականի(ակն-ից).-ին—առաջին.-ոյ—ծանոյ.-ոտ—լուսոտ.-որդ—առաջնորդ. մնացորդ.-ուն—խաւսուն.-ուտ աւազուտ. **մակբայներ.** *(բացի ժամանակականներից ու եղանակականներից հետևեալ մասնիկներով.* -ին, *գործիականի վրայ*—բնաւ-ին. -պէս—այսպէս.-ապէս—յայտնապէս.-աբար *(հմ.* բար*)*—դայեկաբար. -արէն—եբրայեցերէն (<*եբրայե-ցի-արէն). **բարդ անուններ.** (ան-միտ. տ-գեղ. ն-լու, երկ-սայրի. բան-բեր. բաց-ութեաց (<*բացութի-աց). ձեռք-ա-կալ-ութեան-դիր. ան-ակին. գ-երեկ. առ-աչաւ. այր-եւ-ձի). **երկնութիւն.** (լու ի լու-մեծամեծ. խորխորատ. սղոցեմ. աղջամուղջ. բիբեռն)։ *Փակագծերի մէջ առնուած սոյն օրինակներից ամէն մէկը ներկայացուցիչ է մի մի որոշ դասի, որ հեղինակը մանրամասն նկարագրում է, գծելով իւրաքանչիւրի կազմութեան ու կիրառութեան սահմանները։*

Դ. գլուխը, որ բովանդակում է § § 41—103, նուիրուած է հոլովմանց. բաժանուած է երկու մասի, որոնցից ա.-ում կէտ առ կէտ բացադրում է հոլովմանց տեսակներն ու կազմութիւնը, իսկ բ.-ում իւրաքանչիւր ձևի նշանակութիւնը կիրառութեան մէջ։

Անուանական հոլովում—

Հայ քերականներն ընդհանրապէս անուանական հոլովումները դասաւորում են ըստ սեռականի վերջաւորութեան, ինչպէս օր. Զալըխեանը, որ ընդունում է ինը կանոնաւոր հոլովում։ Մէյյէի դասաւորութիւնն ըստ բնոյ *է և* ըստ տիպի. *նա զանազանում է երկու կարգի բուն*—անփոփոխ *և* փոփոխական. *առաջին կարգը բաժանում է 4 տիպի*—ա, ի, ո, ու *(միասին վերցրած*—ի *վերջացած երկու տիպի*—ծոցի, ծոցւոյ*) *և* տեղի. տեղեաւ—) *իսկ երկրորդը՝* -ր, -ղ, *և* -ն *բներ։ Այսօրինակ դասաւորութեամբ միայն կարելի է հայերէնի հոլովումները համեմատութեան մէջ դնել հնդեւրոպականների հետ, ինչ որ արդէն հեղինակը մի անգամ արել է իր մի այլ աշխատութեան մէջ.* (Esquisse, *40—70***)։

Մէյյէի աշխատութիւնը. արդիւնք խղճամիտ ուսումնասիրութեան, չի կրում որ և է հայ քերականութեան ազդեցութիւնը, թէև օգտուած է ծանօթ քերականութիւններից շատ մեծ չափով. հետևեալ օրինակները հաստատում են մեր ասածը. 1). Տիւ *բառի ներգոյականն ըստ Զալըխեանի (էջ 27) (ի)* տուընջեան *է առանց յիշատակութեան (ի)* տուէ *ձևի, մինչդեռ ըստ Մէյյէի՝ «մեծ մասամբ (ի)* տուէ, *երբեմն (ի)* տուընջեան» *(էջ 58***)։ 2).* ու *տիպի*

---

*) Դասական հայերէնում հոլովման բնոյթը որոշողը եզ. գործիականն է կամ յոգ. սեռ.-ը։

**) պ. Մալխասեանի «Գրաբարի հոլովումը, եւն», կարող էր ըստ իս, նոյնպէս մի օրինակելի գիտական գործ համարուել, եթէ հեղինակը, հարկից ստիպուած, ինչպէս յիշում է յառաջաբանում, կամովին շեղած չլինէր լեզուաբանութեան պահանջած մեթոդից։

***) Ծան. Յօդուածս աւարտել էի, երբ ստացայ MSL-ի վերջին թիւը, Tome XVIII, fasc. III. որ պարունակում է ի միջի այլոց Մէյյէի մի յօդուածը «գիշեր» բառի մակբայական արտայայտութեան մասին: Այդ յօդուածում յիշատակում է նաեւ սոյն ի տ ո ւ է ձևը իբրեւ մի հնագոյն արտայայտութիւն «ի գիշերի» ներգոյական արտայայտութեան: Իրողութիւնն այն է, որ միւս հնդեւրոպական լեզուներում «գիշեր ցերեկ» արտայայտութեան մէջ առաջին բառը տարբեր հոլովով է դրւում, երկրորդ բառը տարբեր. այսպէս Հերոդոս եւ Պլատոն գ ի շ ե ր դնում են սեռ., իսկ ցերեկ՝ նախդիրով հայցական. նոյնպէս հին պարսկերէնում՝ ըստ

հոլովման բառերից ոմանց բացառականը վերջանում է -ուէ փոխանակ -է-ի, ի թիւս որոց նաև նախանձ-նախանձուէ. բայց հեղինակն այդքանով չի բաւականանում, այլ մատնանիշ է անում աղբիւրը—Եզնիկ, որի գաւառականութիւնն անհերքելի է։ 3). Ցուցական կոչականները թէ բոլոր ծանօթ քերականութեանց մէջ*) և թէ տպագիր ընագրերում միշտ -ե-ով են, օր. Պետրէ, Ղազարէ, են., մինչ Մէյյէին չեն կասեցնում ոչ առաջինները ոչ երկրորդները և նա իր ենթադրած ձևն հետախուզում ու գտնում է հնագոյն ձեռագրերում և գրում Պետրէ, ցոյց տալով միևնոյն ժամանակ, թէ Նոր Կտակարանի որ մասերում գործ է ածուած (էջ 51)։ 4) Աղուէս բառի հոլովումն ըստ Ջախջախեանի է «աղուէս, ուիսու կամ ուեսու»։ Մէյյէի համար գտական ձևն է միայն վերջինը—աղուեսու. որովհետև նրան քաջ յայտնի է, որ ուղղականի վերջավանկ է-ն ե-ի փոխարէն է (էջ 19. հմ. նաև Հիւբշմ. Arm. Gramm. էջ 415) ուստի և բացէ ի բաց մերժում է աղուիսու ձևը։ 5) Եզեկիէլի մարգարէութեան մէջ միևնոյն իմաստով գործ է ածուած որթու և որթոյ (խաղողի որթ)։ Մէյյէն առանց վարանման որթու յայտարարում է սխալ, այդ ձևն ընդունելով իբրև մի այլ որթ (=հորթ) բառի սեռականը (էջ 49)։

Այսպիսի կարևոր դիտողութիւններ ամէն էջում կը գտնենք։

Հոլովական պատկերներում հայցական, ներգոյական և բացառական հոլովները ցուցադրուած են առանց զ, ի, կամ յ նախդիրների. Այսպիսով հոլովների շարքը աւելի պարզ ձևով է ներկայանում, քանի որ որոշ հոլովներ ձևով նոյնանում են։ Դերանուններից արժէ հետևեալ երկու կէտերը ի վեր հանել. 1) նոյնիմաստ կամ գէթ իբրև նոյնիմաստ ըմբռնուած ձևերի զանազանումն.—2) բերուած օրինակների յաջողութիւնը։

1) Օր. ըստ իմաստի ումն և ոք միևնոյն բառերն են, մինչ ըստ ձևի կամ կազմութեան տարբեր են. նոյնը կարելի է ասել նաև իմն և ինչ (կամ յու ևս *իք. հմ. չ-իք) բառերի համար. ըստ ձևի մի գծի վրայ կարող են դրուել ումն և իմն, ոք և *իք (կամ ըստ գործածութեան ինչ). այդպէս էլ արել է Մէյյէն, տ. §§ 69, 70. այնպէս որ ուսանողը առաջին իսկ ակնարկում կըմբռնէ ցուցադրուած այնքան պարզ պատկերների**) իմաստը—Ինչպէս ումն և իմն անորոշները, այնպէս էլ ո՞վ կամ ո՞***) և զի՞ (զ-ի) կամ զի՞նչ (զ-ի-նչ) ըստ ձևի անբաժանելի են. տ. էջ 63.

2) Հեղինակը, ինչպէս այլ առթիւ ևս, յատկապէս վերջին անգամ հրատարակուած Ագաթանգեղոսի մասին գրած իր քննադատականում, ցոյց է տուած, որ քաջ ծանօթ է հայերէն բառերի ոչ միայն չոր ու ցամաք ձևերին, ինչպէս իբրև լեզուաբանի նրա մասին ենթադրւում է յաճախ, այլ և հայ մատենագրութեան լեզուին ևս ընտանեցած է։

Բեհիստունեան արձանագրութեանց։ Սլաւերէնում ցերեկ (կամ օր) դրւում է նախդիրով ներգոյական կամ հայցական, իսկ գիշեր՝ ներգոյական։ Ռիգվեդայում՝ ց ե ր ե կ՝ դրւում է գործիական, իսկ գիշեր՝ հայցական։ Ըստ այսմ եւ սպասելի է դառնում նաեւ ի ս ո ւ է բառի ներգոյական լինելը եւ նոյն որ ներկայանում է «une forme énigmatique» (առեղծուածային ձեւ)։ Վերջաւորութիւնը բացառականին է. բայց ի՞նչպէս հաշտեցնել սեռականի հետ—սուրնչեան։ Ահա մի լուրջ երեւոյթ հայերէն հոլովների պատմութեան համար։

*) Մալխ.-ի աշխատութեան մէջ չի յիշատակուած։

**) Եզ. paradigma կամ յոգ. paradigmata, որ նշանակում է օրինակ կամ, բառացի, յ ա ր ա ց ո յ ց. թարգմանում ենք պ ա տ կ ե ր կամ ց ու ց ա դ ր ո ւ ա ծ պ ա տ կ ե ր։

***) Նախնականն հաւանօրէն ո՛ է, իսկ ո՛վ-ի վերջին վ-ը ժամանակի ընթացքում է զարգացած։

Այն բազմաթիւ օրինակները, որ նա անձամբ քաղել է հայ մատենագրութիւնից, ապացոյց են մեր ասածին։ Ահա շատերից մէկը, որից աւելի յաջողն անսպասելի էր. Ագաթ. § 44 (էջ 28) «գոյ աստ (wo wir sind—ուր մենք ենք) այր մի ի դրան քում, զի խրրդ այդ (wovon du sprichst—որի մասին դու ես խօսում) նովաւ (durch jenen—նրա միջոցով) վճարին» էջ 62. այս հատուածի արժէքն ըմբռնելի պիտի լինի յատկապէս գերման ուսանողին, որի մայրենի լեզուի ցուցականներն ունին միայն երկու աստիճան—dieser և jener, մինչդեռ հայերէնում կայ նաև դ որոշիչ յօդով կազմուած մի միջին աստիճան ևս։ Այս օրինակի մէջ գործ են ածուած երեքն էլ։

Թուական անունների մէջ ուշագրաւ են հնաձեւերը. էջ 66. մի թուականն ունի երկու ներգոյական—միում և միոջ. վերջինիցս կազմուած է բացառականը՝ միոջէ. իսկ միոջ ձեւը միեւնոյն ժամանակ է նաև սեռական. հմ. Զալ. էջ 31.

էջ 68. չորեքտասան բարդ բառի առաջին մասում պահուած է 4 թուական անուան ուղղականի սկզբնական ձեւը։ Բայց սա իսկապէս աւելի համեմատական քերականութեան է վերաբերում։

Դ. Գլխի Բ. մասը, §§ 84—103, յատկացրած է անուանական ձեւերի (Nominalformen) կիրառութեանը։ էջ 70—71. մի քանի հաւաքականներ, ինչպէս մարդիկ, մանկտի, ազատանի, որեար, համարուում են դասական, մինչ ուրիշներ, ինչպէս բանեար, վանեար, գրեան, են. յայտարարուում են իբրև միջնադարեան բառեր։

էջ 72. Բառեր՝ որոնց եզակին տարբեր իմաստ ունի, յոգնակին տարբեր, օր. Բարի-բարիք, անձրեւ-անձրեւք (հեղեղ)։ Ես կաւելացնէի նաև ժամանակ բառը, որի յոգնակին մերթ դարեր-ի, մերթ (առաւել) եղանակներ-ի իմաստով է գործ ածուած։

Յաջորդ հատուածը §§ 87—95 նուիրուած է նախդիրների ու հոլովների կիրառութեանը։ Օրինակներով չափազանց ճոխ է այդ հատուածը և, ինչպէս մանաւանդ յաջորդ էջերում, օրինակները ներէ Ս. Գրքից են, համեմատուած են բնագրի հետ։ Այս հատուածից սկսած մինչև գլխի վերջը իսկապէս աւելի համաձայնութեան է վերաբերում քան ձեւաբանութեան։ Յիշատակութեան արժանի է աննախդիր բացառականի գործածութիւնը միանման բառերի կրկնութեան դէպքում. ժամէ ի ժամ, տանէ ի տուն, են. (էջ 81). Իբրև համաձայնական երեւոյթ շատ յաջող կերպով բացադրուած է կրկնուած նախդրի նշանակութիւնը. օր. էջ 89. «ոչ թողոյր զերկոցունց անձանցն զօրձ կարիւն և ոչ զմի», որտեղ զ նախդրի կրկնութեամբ որոշւում է գոյականների յարաբերութիւնը միմեանց հետ։ Նման նշանակութիւն ունի նաև յօդի յաճախութիւնը, օր. «անդ ամե ապրեցուցանէր ի հինէ անտի յորդւոցն Թագաւորին Թագաւորին Հայոց մանկիկ մի փոքրիկ անուն Տրդատ» (էջ 90), ուր ի հինէ և յորդւոց առանձին առանձին մի մի յօդով (անտի=ն յօդի բացառականի ձեւ) որոշուելով իրարից զատուած են անկախ։ Իսկ թագաւորի ստացել է ն յօդը իբրև բացայայտիչ։

Ե. գլուխը, §§ 104—135, մանրամասն ներկայացնում է բայական ձեւերը։ Այս գլուխը բաղկանում է հետեւեալ չորս մասերից. 1) բայերի խոնարհումը. 2) որոշեալ եղանակների (Verbum finitum) կիրառութիւնը. 3) անորոշ եղանակների (verbum infinitum) կիրառութիւնը և 4) բայերի համադրութիւնը։

1) Բայերի խոնարհման վերաբերմամբ ավելի մեթոդի ինքնուրույնություն է հանդես բերել հեղինակը քան ձևերի ուսումնասիրության։ Այդ մեթոդը որքան խելացի, այնքան և համապատասխան է լեզվի ոգուն, որով մէկ կողմից տեսնում ենք պատկերներ ծավալով շատ փոքր, միւս կողմից չենք գտնում բայական ոչ մի ձև, որ կանոնավոր կերպով բացատրված չլինի։

*Բայերի խոնարհման հիմքը կազմում են երկու տարբեր բներ—*ներկայի *և* կատարեալի (aorist)։ *Առաջինն ունի մի կերպ խոնարհում, երկրորդն երկու կերպ.* սիրեմ, սիրիմ, լամ, հեղում, *գամ *(որից* գոյ, գոն, *ևն.), հակառակ իրանց առերևույթ զանազանության խոնարհվում են միևնույն կերպով, ըստ որում դրանցից ամէն մէկի միայն վերջին տառերն են փոխվում ներկայից սերող բոլոր ժամանակներում էլ։*

-իմ *վերջավորված բայերի աներևույթը նման է* -եմ *վերջավորածների աներևույթին, այն է՝* -ել*։ Հայերէն քերականությունները, բացի Գարագաշեանից, գնում են երկու ձև էլ։ Մէյյէն* -իլ *վերջավորության մասին ոչ մի յիշատակություն չի անում. բայց այն ձևերը, որոնք աներևույթից են ածանցվում և որոնք յիշվում են շարունակության մէջ, ապացույց են* -իլ-*ի նախնականության. այսպէս* սիրելոյ *(սեռ. և տրակ.),* սիրելի *(կազմված կրաւորական աներևույթից),* երևելի*՝ ածանցված* երևել-*ից, մինչ սահմ. ներկան է* երևիմ։

Կատարեալի ձևերը, կամ, ուրիշ խօսքով, կատարեալից սերող ժամանակները խոնարհվում են երկու կերպ, այն է՝ **Ներգործակերպ** *և* **չեզոք-կրաւորակերպ** (medio-passiv), *օր.* սիրեցի *և* սիրեցայ. սիրեցից *և* սիրեցայց։

Յարգելի հայագէտն այս բաժնում ևս անում է մի թանկագին դիտողություն, որ արդիւնք է մէկ կողմից համեմատական լեզվագիտության, միւս կողմից հետազօտութեան հայ ձեռագրերի։ Խօսքը կատարեալ եղ. Գ. դէմքի աճման (Augmentum) *մասին է. ըստ Մէյյէի (էջ 94) երբ բայը յիշեալ ձևի մէջ միավանկ է և սկսում է ձայնաւորով, օր.* ած (ածեմ *բայից), աճում չպէտք է առնել, և ընդհակառակը բաղաձայնով սկսող միավանկները պէտք է աճում առնեն. այսպիսով՝* ած *դասական է, իսկ «*եած*»*) յետադասական.* եմուտ *դասական,* մուտ*՝ յետադասական։ Իսկապէս* ած *և նման ձևերի մէջ ևս աճումը, հնդեւրոպականի տեսակէտից, չի բացակայում, միայն թէ ձուլված է ձայնաւորի հետ, որով* ած=*եած, *հմ. յուն. գոր.* ἦγε, *սան.* ājat. *տ. Մէյյէ* Introd. à l'ét. comp. d. lang. ind. *էջ 223.*

Շնորհիւ Մէյյէի այս դիտողութեան ած-*ի դասականութեան և* եած-*ի յետադասականութեան մասին՝ մենք հնարաւորութիւն ենք ստանում որոշ բառեր վերլուծելու. օր.* զերծանեմ *բայը, բաղկացած* զ *նախդիրից (այս դէպքում կարող է անուանուել* նախաբայ մասնիկ (präverbium) *և մեզ անծանօթ մի* *երծանեմ *բայից, որի կատար. եղ. Գ. դէմքը պիտի լինէր* *երծ, *ինչպէս այժմ* զերծանեմ-*ինը լինում է* զերծ, *որովհետև* զ-*ն նախդիր է.* եզերծ *ձևը յետադասական է։*

*) Ծան. Այս **եած** ձեւն էլ հաւանօրէն սկզբում եղել է ***եած** եւ միայն երկու ձայնաւորների (**ե+ա**) ճնշման պատճառով է, որ առաջացած է **եած**, քանի որ **է**-ն հաւասար է **ե+յ**-ի։ Այսպիսով պարզւում է եւ այն խնդիրը, որ **է**-ն գէթ **Ե.** դարում արտասանւել է **եյ** եւ ոչ **է** այժմեան ձեւով։ Միեւնոյն բացատրութիւնն ունին նաեւ անկատարի **-եի** եւ **-էի** վերջաւորութեան հնագոյն եւ արդի ուղղագրութիւնները։

2) որոշեալ եղանակների կիրառութիւնը.

Հայերէնը մին է այն հնդեւրոպական լեզուներից, որոնց մէջ բայական վերջաւորութիւնները բաւական են որոշելու դէմքն ու թիւը, մինչդեռ արդի եւրոպական լեզուներում գոյական ենթակայի բացակայութեան դէպքում համապատասխան դերանուան ներկայութիւնն անհրաժեշտ է։ Այս առթիւ հեղինակը զանազանում է երեք ձեւ—բայ առանց դերանուան, բայ յետադաս դերանունով, բայ նախադաս դերանունով։ Առաջին երկուսը իմաստով նոյն են, իսկ երրորդը գործ է ածւում, երբ դերանուն ենթական մասնաւորապէս շեշտուած է (էջ 106)։ Դժբախտաբար, հակառակ հեղինակի սովորութեան այս դէպքում օրինակներն ամբողջ նախադասութիւններով չեն բերուած։

Ներկայ եւ աորիստ. *Գործողութեան եղանակն արտայայտւում է կամ ներկայով (=ներկայի բնից կազմուած ձեւերով) կամ աորիստով (կատարեալի բնից)։ Այս երեւոյթն յատուկ է նաեւ հնդկաիրանական ճիւղին, յունարէնին եւ սլաւերէնին։ Հենց այն տերմինները, որ հայերէնում գործ են ածւում, այն է՝ կատարեալ եւ ապառնի, ինքնին հայ քերականների ուշադրութիւնից զրկում են գործողութեան այս երկու եղանակները, որոնք սակայն այնքան բնորոշ են։ Մէյյէն՝ առաջնորդուելով իր լեզուաբանի դիտողութիւններից՝ ինչպէս տերմիններն է ուղղում (կատարեալի փոխարէն՝ աորիստ, ապառնիի փոխարէն՝ ստորադասական աորիստ), այնպէս եւ այդ երկու ձեւերի իմաստն է բացադրում պատշաճ օրինակներով. էջ 107, § 120**)։

Էջ 101. ուշադրութեան արժանի է մեր քերականութեանց մէջ իբրեւ հրամայական ընդունուած ստորադասական յոգնակի Բ. դէմքի -իջիք *վերջաւորութեան մասնաւոր գործածութիւնը. օր.* ի նմին աւուր ազանիջիք, ուտիջիք եւ ըմպիջիք ի նոցանէ. *այս իմաստով գործածուած ստորադասականը կոչւում է* պատուիրական (präskriptiv)։

3) Անորոշ եղանակների կիրառութեան առթիւ ինձ հնարաւոր է թւում մի դիտողութիւն անցեալ դերբայի մասին։ Առանց յիշատակութեան է մնացած կիրառութիւնն այն ներգործական անցեալ դերբայների, որոնք մէկ կողմից ստորոգելու կամ բացայայտիչի պաշտօն են վարում, միւս կողմից հայցական հոլով խնդիր առնում. օր. «Պատահեսցէ ձեզ այր մի բարձեալ սափոր *ջրոյ իւր», կամ «Նման է ուռկանի արկելոյ ի ծով եւ յամենայն ազգաց* ժողովելոյ»։ *Հմ. Զալ. էջ 435 եւ շար.*

4) Այս բաժնի երկրորդ հատուածը, էջ 116, ուր խօսում է **Նախադաս մասնիկների** *մասին* (Präverbien), *թերեւս աւելի յարմար լինէր զետեղել հայերէն բառերի կազմութեան* (Wortbildung § § *28—40*) *բաժնում։ Գալով*

*) Ծան. Այս կարեւոր երեւոյթը, որ, ինչպէս յիշուեցաւ, իր սկիզբն առնում է հնդեւրոպականից, բուն երեւոյթին նոյնիսկ դասական մատենագրութեան մէջ բախւում է հակասութեան, օր. Եզն. Դ. Ը. «ապա եթէ ունիցիս զոր այլ աստուածս բայց յինէն, գիտասջիր (*այժմ—* aorist*)* զի մահու մեռանիցիս»։ Բայց եթէ ուշադրութեամբ դիտենք, այստեղ էլ ոչ մի հակասութիւն չենք գտնի։ Սոյն հատուածի բուն իմաստն է. «իսկ եթէ (երբ եւ իցէ) ուրիշ աստուածներ էլ ունենաս (միանուագ մի քանի աստուածներ ընտրել չէր կարող, այլ յաջորդաբար), հաստատ գիտենաս, որ (ամէն անգամ էլ) մահդ անխուսափելի է»։ Բայց եթէ լինին իսկ այդպիսի հակասող օրինակներ, օրէնքը դարձեալ մնում է միեւնոյնը, քանի որ լեզուի մէջ ունի իր բազմաթիւ արտայայտութիւններն եւ, միւս կողմից, համաձայն է գալիս բուն հնդեւրոպականի ոգուն։

միւս երկու հատուածներին—**համադրուած բայեր** (Nebeneinandergesetzte Zeitwörter *էջ 115*) *և* **անուն-բայական արտայայտութիւններ** (Nominal-verbale Ausdrücke *էջ 117*), *միանգամայն համապատասխանում են գրուած վերնագրին*—**բայերի համադրութիւն** (Gusammenfügung der Zeitwörter) *և, մանաւանդ շնորհիւ յոյն բնագրերի հետ կատարուած համեմատութեան, շատ յաջող կերպով լուսաբանուած են։ Նկատելու արժանի է, որ այսպիսի համադրութեանց ժամանակ ուր հայերէնում երկրորդական նախադասութեամբ է արտայայտում միտքը, յունարէնում համազօր նախադասութիւններ են* καὶ *(և)-ով միացած և ընդհակառակն՝ ուր հայերէնում համազօր նախադասութիւններ են, առանց* եւ *շաղկապի, պարզապէս համադրութեամբ, յոյն բնագրում գտնում ենք գլխաւոր և երկրորդական նախադասութիւններ. օր. էջ 113 «նորա* առեալ տանէին *զնա» յն.* παρέλαβον αὐτὸν καὶ παρήγαγον). *մինչդեռ «եկն բնակեցաւ» յն.* ἐλθὼν κατῴκησεν. *«երթայք ասացէք» յն.* πορευθέντες εἴπατε, *հն, էջ 115։ Մեթոդի տեսակէտից կարելի էր զանազանել նաև այնպիսի դէպքեր, ինչպէս «արի կաց» յն.* ἐγείρου *(արի), էջ 115.*

էջ 117. Շատ արժէքաւոր է, յատկապէս օտար ուսանողի համար, Nominal Verbale-Ausdrücke *անուանուած հատուածը, ուր խօսում է հայերէնի յատուկ դարձուածների մասին. ինչպէս* ի բաց առնել *(յն.* ἆραι*),* ի բաց առնուլ *(յն.* ἐκκόψαι, *Յովհ. ԺԸ. 10 «*ἀπέκοψεν*»),* թոյլ տուք *(յն.* ἄφετε*), են.*

§ § *136—187. վերջին գլուխն է, ուր բացատրում է համաձայնական երևոյթներ, թէև, ինչպէս տեսանք, նախորդ գլուխներում եւ մէջ ընդ մէջ համաձայնութեան վերաբերեալ հարցեր շօշափուած են։ Սկսում է նախադասութեան տեսակներից, տալով իր բացատրութիւններն ընդհանուր լեզուաբանական տեսակէտից, ինչ որ երևում է իր գործածած տերմիններից եւ*

Կայ երկու տեսակ նախադասութիւն—**բայական նախադասութիւն** (Verbalsatz) *և* **անուանական նախադասութիւն.** (Nominalsatz) *ու դեռ մի երրորդ, խառնուրդ այդ երկուսի,* **անուանաբայական նախադասութիւն** (Nominal-verbalsatz) *օր.* ուտեմ *բայական նախադասութիւն է, ինչպէս և այն բոլոր նախադասութիւնները, որոնք կազմւում են ոչ էական բայով։* Աստուած հոգի կենդանի է կամ նա ընդ իս է *անուանական նախադասութիւն է. որ կազմւում է ենթակայից և ստորոգելուց* (Prädikat) *ու երբեմն էլ նաև մի էական բայից, որ անուանում է* յօդ *կամ* **կապ** (kopula)։ *Այն նախադասութիւնը, որի մէջ էական բայը շեշտւում է և գոյութեան իմաստ է արտայայտում, կոչւում է* գոյական նախադասութիւն (Existenzialsatz), *օր.* ապա ուրեմն է՛ ինչ զաւրութիւն ծածուկ։ *Վերջապէս նախադասութիւնը* անուանաբայական *է, երբ ոչ էական բայի հետ դրւում է մի ստորոգելի, օր.* այսու մեծարոյ երեւին առաջնորդքն երեւին կամ պահէ զուգիչս մարդկան կենդանիս։

Այս բնորոշումները գուցէ մեր դպրոցականներին այնքան էլ մատչելի չլինին, թէև ինքն ըստ ինքեան շատ պարզ են, բայց գերման ուսանողի համար միանգամայն ըմբռնելի են, քանի որ նա միւս դասական լեզուներն էլ միևնոյն ձևով է ուսանում։

էջ 126—127 խօսում է հարցական նախադասութեանց մասին։ Արդի աշխարհաբարում հարցականի շեշտը դնում ենք այն վանկի վրայ, որին պատկանում է, մինչ լեզուներ կան, որոնց մէջ հարցականի շեշտը կրկնւում է նախադասութեան վերջում, որի համար և հարցականի նշանն էլ դնում են

վերջում. ուրիշ խօսքով մի տեղ վանկն է շեշտւում, միւս տեղ ամբողջ նախադասութիւնը։ Հին հայերէնի հարցականի նկատմամբ հեղինակի կարծիքը, թէ շեշտւում էր ինչպէս այսօր, արժէքաւոր է այն պատճառով, որ այդ կարծիքը արդիւնք է անձնական հետազօտութեան։ 1905-ին անձամբ այցելելով Մայր Աթոռ՝ ուսումնասիրել է նախնեաց շեշտադրութեան օրէնքները ամենահին ձեռագիր աւետարանների վրայ։ Տես Sur quelques évangéliaires arméniens accentués, in Mémoires orientaux publiés par l'Ecole des langues orientales, Paris. 1905.

§ 178-ում թե, երբ շաղկապների մասին բաւական մանրամասն խօսելուց յետոյ՝ բացադրում է գրեթե բառի կազմութիւնն ու կիրառութիւնը, վերագրելով այդ բառին «այսպէս ասած»ի (sozusagen) իմաստ, որը թէև մեզ համար նոր է, բայց հաստատւում է իր բերած օրինակով—լուսին ամսոյ ամսոյ հիւծանի. գրեթե եւ մեռանի (Եզն.)=լուսինն ամիսը մէկ հիւծւում, այսպէս ասած, մեռնում է։ Սոյնօրինակ մի նոր բայց ուղիղ բացադրութիւն էլ տրւած է քան մասնիկին, որ ցարդ ընդունել ենք միայն իբրև բաղդատական աստիճան կազմող, մինչ ծառայում է նաև պարզ համեմատութեան օր. երե ունիցիք հաւատս քան զհատ մանանխոյ=թէ մանանեխի հատի չափ հաւատք ունենաք, յն. 'εὰν ἔχητε πίστιν ὡς κόκκον σινάπεως. էջ 136.

Ինձ թւում է սակայն, թէ միևնոյն քան մասնիկի մասին տրւած բացադրութիւնները անբաւարար են լուսաբանելու համար նրա իմաստը Եզնիկի հետևեալ նախադասութեան մէջ, որ իբրև օրինակ բերել է. քան սակաւ ժամանակ են, այսրէն արշաւեսցեն թշնամիքն in kurzem werden die Feinde hier einfallen. ըստ Գ. Տէր Մկրտչեանի պէտք է ուղղել՝ քանզի սակաւ ժամանակ են....»։ Այս սրբագրութիւնն ինձ թւում է բանաւոր։

Այժմ ներուին ինձ մի քանի մանր դիտողութիւններ։

ա. էջ 105. չոգայ բառն անտարակոյս պարունակում է իր մէջ չու արմատը, որի վերջի կիսաձայն ւ-ն փոխւած է գ-ի ինչպէս յոգանամ բառի մէջ (հմ. յուանամ)։ Այսպիսով փակագծի մէջ առնւած չոքայ յայտնի սխալ է։ Առաջին ձևի առաւելութիւնը ցոյց տալու համար կարելի էր յիշատակել նաև չու-ն։

բ. Հեղինակի այն կարծիքը (էջ 3), թէ ս. Գրքի հայերէն թարգմանութիւնն ստրկական է յոյժ—ganz sklavisch, թւում է չափազանցութիւն. ընդունելով հանդերձ հելլէն համաձայնութեան ազդեցութիւնը տեղ տեղ այդ թարգմանութեան մէջ, դժւար չէ ցոյց տալ էջեր ևս, ուր հակառակն ենք տեսնում. օրինակները վերցնում եմ հեղինակի իրա բերածներից.—էջ 128 ամենեքին որ յետին՝ զարմանային վասն բանիցն զոր խաւսեցան ընդ նոսա հովիւքն. բնագրում փոխանակ յարաբերականների՝ գործ են ածւած դերբայներ։ էջ 134. պատուիրեաց նոցա զի մի՛ ումեք պատմեսցեն զոր տեսին, բայց յորժամ որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ, որի փոխարէն ստրկական պիտի լինէր թարգմանութիւնն, եթէ ունենայինք. պատուիրեաց նոցա, զի, մի՛ ումեք զորս տեսին(ն) պատմեսցեն, երբ մի (ոչ) յորժամ եւն.

Սրա փոխարէն ճիշտ որ ստրկական է παρεκτὸς λόγου πορνείας-ը թարգմանել առանց բանի պոռնկութեան, փոխ. առանց պատճառաց պոռնկութեան, կամ Յովհ. ու.-ի գրեթէ ամբողջ Ա. գլուխը, ուր հայ թարգմանութիւնը բառացի համապատասխանում է յունարէնին։

գ. էջ 117 ἐκκόψαι, էջ 141 ἐκπορευόμενον, ինչպէս և էջ 132 (հարցցուք)

և մեր) զճռա անուշադրութեամբ վերցրած են իբրև ἀπέκοψεν աներև. ἀπεκόψατο), εἰσπορευόμενον և ցնում.

դ. էջ 130.... ածէր ի հաւատութիւն, ուշադրութիւնից վրիպելով, թարգմանուած է... führte er.... zum Glauben փոխ.... führte er.... zur Überzeugung (կամ Zustimmung).

ե. էջ 136. նա-ին տրւում է, և իրաւամբ, այն ժամանակ-ի (ποτε. τό) իմաստ, բայց առանց օրինակի մնացել է մութ.— Եզնիկի մէջ մի կամ երկու անգամ այդ իմաստով գործածուած կայ։

Միևնոյն էջում օրինակի պակասն զգալի է նաև անա բառի վերաբերմամբ։

դ. էջ 63-ում թիւրիմացութեամբ սպրդած է հետևեալ վրիպակը. իմեէ ձևի դիմաց, փակագծում, գրուած է իմէ որպէս Եզնիկից վերցրած (Եզն. Ա. 24. էջ 99). Եզնիկի մատենագրական հատուածում գտնում ենք նոյնպէս իմեէ և ոչ իմէ։ Ակներև վրիպակներ են նաև էջ 11-ում նախաբառի պահլաւական ձևի վրայ գրուած աստղանշանը (*) և էջ 155-ում, տող 2 ցածրից, ասեաց փոխ. ասեաց-ի։

Քերականական մասին յաջորդում են ընթերցանութեան և թարգմանութեան վարժութեանց համար գրուած մի քանի հատուածներ Աւետարանից, Եզնիկից և Փաւստոս Բիւզանդից։ Աւետարանական հատուածները իր իսկ ձևով ընդօրինակուած են Մայր Աթոռի հնագոյն ձեռագրերից, որով երևան է բերուած մի այնպիսի հետաքրքիր ձև ինչպիսին է մի երէ փոխանակ միրէ-ի. իսկ միւսները վերցրած են ծանօթ տպագիր հրատարակութիւններից։ Բիւզանդից վերցրած էջերն ենթարկուած են մի քանի աչքի սրբագրութեանց։

Այս հատուածների ընթերցումից յետոյ՝ հայ դասական լեզուի իբրև դասագիրք առաջարկում է հեղինակը Հ. Թաշեանի ծանօթ «Հատընտիր ընթերցուածքը», որի գործածութիւնը ցանկալի է նաև հայ բարձրագոյն դպրոցներում, մանաւանդ համեմատութեամբ յոյն բնագրերի։

Վերջացնելով այստեղ իմ խօսքը՝ պիտի մաղթէի, որ նոյն գիտական մեթոդով դասական հայերէնն աւանդուէր նաև մեզնում, ինչպէս և ձեռնարկները պատրաստուէին միևնոյն ձևով։ Բայց այս մասին աւելի երկար ուրիշ անգամ։

Մեսրոպ վարդապետ Մաքսուդեանց.

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀՆԱԳՈՅՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐԸ

1. Հինգ տարի սրանից առաջ, Արարատ ամսագրում, փորձեցի որոշել Տիմոթէոս Կուզի Հակաճառութեան թարգմանութեան թուականը (տես Արարատ 1908, էջ 564—589, կայ և արտատպութիւն առանձին տետրով)։ Այդ յունարէն գրքոյին պատկանող թարգմանութեան քառամեակը իմ հաշուով դուրս եկաւ 480 փետ. 29—484 փետ. 28, հիմնուելով սեպտեմբեր 2=Հոռի վեց զուգաւորութեան վրայ։ Զուգաւորութիւն տերմինը նշանակում է զուգադրութիւն և առնուած է մեր հին տոմարագէտներից։ Հինգերորդ դար տանելով այդ յունարէն թարգմանութիւնը, դրա հետ միասին և քաղկեդոնական դաւանաբանական վէճերը Հայաստանում, գիտէի որ յարուցանելու եմ մեծ ընդդիմութիւն մասնագէտների կողմից։ Եւ այդ մասին արտայայտուել էի հետեւեալ կերպով. «Ընդհանրապէս առած [Տիմոթէոսի Հակաճառութեան] հրատարակիչների գլխաւոր թեզիսների հետ՝ թարգմանչի և թարգմանութեան ժամանակի վերաբերեալ՝ ես կհամաձայնէի այս սահմանափակութեամբ, որ Տիմոթէոսը թարգմանուած է վեցերորդ դարու երկրորդ կիսին, յոյն բնագրից, յունարէն լեզուով, առանց երկրորդական ենթադրաբար առուածներին առանձին կշիռ ընծայելու։ Բայց բարեբախտաբար Տիմոթէոսի հայ թարգմանութեան մէջ պահուած է մի այնպիսի ժամանակաբանական ցուցում [2 սեպտ=6 հոռի], որով հնարաւոր է ճշտիւ որոշել թարգմանութեան քառամեակը, և որով յեղաշրջւում են ոչ միայն հրատարակիչների յառաջաբանում յառաջ բերուած գլխաւոր թեզիսները, այլ և մեր, վերջին քառորդ դարում, հայագիտութեան մէջ մշակուած ընդհանուր հայեցքները յունարէն դպրոցի, դաւանաբանական վէճերի շրջանի և յատկապէս՝ նրա սկզբնաւորութեան վերաբերեալ։ Մօտ մի դարով ընդլայնւում է տեսութեան հորիզոնը դէպի յետ և փոխւում է այդ խնդիրներին վերաբերեալ հարցերի հիմնակէտը» (տես վերևն յիշուած յօդուած, § 4, Արարատ 1908)։

2. Եւ իսկապէս սկսան ընդդիմաբանութիւնները։ Մի թուով այսպիսի մեծ փոփոխութիւն յառաջ բերելը ընդունուած և լաւ հիմնաւորուած կարծիքների մէջ՝ շատ դժուարին պիտի լինէր։ Ուրեմն և պէտք էր կամ իմ արած հաշիւների սխալը ցոյց տալ — և այս ոչ ոք չփորձեց — և կամ իմ հիմունքը՝ սեպտ. 2=հոռի 6 ընթերցուածը՝ խախտել։ Թէ բերանացի և թէ նամակներով ինձ յայտնուած մասնագէտների կարծիքը այս վերջին կէտի վրայ ծանրացան։ Նոյնն արաւ և Հ. Ակինեան (տես նրա գեղեցիկ ուսումնասիրութիւնը «Ազգային Մատեն. ԾԸ. Տիմոթ. Կուզ Հայ Մատենագրութեան մէջ», Վիեննա 1909, նախապէս մաս մաս տպուած Հանդ. Ամս.)։ Իմ ուսումնասիրութեան մէջ կշռելով բոլոր հնարաւորութիւնները հաշուել էի նաև որ Դիոսկորոսի մահուան թուականին. 454 թուին յետ Քրիս., սեպտեմբերի 9-ին էր հանդիպում հոռի վեցը (տես իմ յօդ. § 9)։ Իմ կարծեաց հերքման համար այս կէտի վրայ և կանգ առաւ Հ. Ակինեան։

Ծանօթ լինելով նրան ուրիշ աղբիւրից, (O. Bardenhewer: Patrologie, p. 350) որ Դիոսկորոսը մեռաւ Գանգրայում 454, սեպտ. 4-ին և այս սեպտ-ի

4-ը մերձեցնելով մեր հատուածում ունեցած սեպտեմբերի 2-ին, յաջող գուշակեց որ «Տիմոթէոս ճառեցի թուականով ուզած է յայտնել Դիոսկորոսի մահուան տարին։ Ձեռագրին տուած ընթերցուածն հաւատարիմ չէ ամէն մասամբ»։ Մեզ հիմնական ծառայող հատուածն էր, առանց մանր տարբերութեանց, հետեւեալը. «Երանելւոյ Հօր մերոյ Դիոսկորոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ և խոստովանողի՝ ի գրեցելոյ առ Սեկունդինեան թղթոյ ի Գանգրայ յերսորաց, ուր զընթացսն կատարեաց ի Քրիստոս Թուղթ եւթներորդ։ Սեպտեմբերի երկրորդ, Հոռի վեցերորդ»։ Այս հատուածում Հ. Ակինեանը, որպէս զի թուականը կապէ Դիոսկորոսի մահուան հետ առաջարկում է «Թուղթ եւթներորդը» փոխել «Ինդիկտիոնի եւթներորդ» (=454 թուականը), «սեպտեմբերի երկրորդը» կարդալ «սեպտեմբերի իններորդ», հիմնուելով հայ Բ և Թ տառերի հնարաւոր շփոթութեան վրայ։ Այսպիսով յիրաւի կատացուի Դիոսկորոսի մահուան թուականը, թարգմանչի կողմից յետադարձ *տոմարական հաշուով՝ Հոռի վեցին համապատասխանող սեպտ. 9ն և կանհետանեայ ինձ իբրև կռուան ծառայող և թարգմանութեան ժամանակը որոշող զուգադիպութիւնը։ Մանրամասնութիւնները լաւ ըմբռնելու համար՝ հետաքրքրուողը պիտի դիմէ նորից իմ յօդուածին և Ակինեանի գրքին, էջ 20-22։*

3. Ակինեանի առաջարկի մէջ ինձ շատ հաւանական թուեց մեզ հետաքրքրող զուգադիպութեան մէջ տեսնել Դիոսկորոսի մահուան թուականը, մանաւանդ որ ուրիշ աղբիւրից երեւեց, որ իսկապէս Դիոսկորոսը վախճանուել է սեպտեմբերին, թէև ոչ երկուսին, այլ 4-ին, Գանգրայում, ուրեմն և շատ յարմար՝ ամսաթիւը կցելու անմիջապէս «ի Գանգրայ . . . ուր զընթացսն կատարեաց ի Քրիստոս» տողուածին։ Բայց ինչպէս բացատրել, որ «Ինդիկտիոնը» շփոթմամբ «թուղթ» կարող էր կարդացուել, կամ ինչպէս հաւանական համարել թարգմանչի կողմից յետադարձ *հաշիւ (տ. իմ յօդուածը § 10), կամ Բ և Թ-ի շփոթութիւն։ Այս բոլորը ինձ համար մնում էր անընդունելի և հաստատ էր մնում իմ կռուանը 2 սեպտ.=6 հոռի, ուրեմն և Կուզի թարգմանութեան իմ որոշած թուականը։ Միւս կողմից Հ. Ակինեանի Ինդեկտիոնի հաշիւն էլ բոլորովին զերծ չէր թերութիւնից։ Արեւելքի համար Ինդիկտիոնը պիտի հաշուել սեպտեմբեր 1 տարեգլխով և ոչ յունուարից յունուար, ինչպէս որ էր աւելի ուշ արեւմուտքում (այսպէս անուանուած* պապական *Ինդիկտիոն), ուստի և սեպտեմբերի 2-ը, կամ 4-ը, կամ 9-ը, արդէն չեն Ինդիկտիոնի եւթներորդ տարում այլ ութերորդում։ Այս բոլոր դժուարութիւնները ինձ ստիպեցին չհամոզուել Հ. Ակինեանի առաջարկած ուղղագրութիւններին։*

4. Խնդիրը մնում էր այս վիճակում և ահա նոր լոյս ենք ստանում ուրիշ անակնկալ աղբիւրից։ Կարապետ սրբազանը, որ իր Իրենիոսով և Կուզով արդէն անգնահատելի ծառայութիւն է մատուցել յատկապէս մեր աստուածաբանական գրականութեանը, տալիս է այժմ մեզ մի նոր ստուար ժողովածու դաւանաբանական հատուածների «Կնիք հաւատոյ» անունով, եօթներորդ դարից, կազմուած Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ, անշուշտ ունենալով նաև յաւելուածներ յաջորդ դարերից։ Կնիք Հաւատոյի մէջ պահուած է մեզ հետաքրքրող հատուածը, ժողովածուի զանազան մասերում, երկու տարբեր խմբագրութեամբ, ուրեմն և հաւանօրէն երկու տարբեր ձեռքից և անշուշտ տարբեր ձեռագրերից մուծուած հաւաքածոյի մէջ։ Այսպիսով այժմ

ունինք 4 տարբեր աղբիւրներից միենոյն թուականով և զուգաւորութեամբ հատուածը, որ դնում ենք այստեղ դէմ առ դէմ։

Ա.

Կնիք Հաւատոյ

էջ 112

Երանելւոյն հօր մերոյ Դիոսկորոսի եպիսկոպոսապետին Աղէքսանդրու, և գրեցելոյ թղթոյն ի Գանգրայ յԱսորիս, ուր դաշակերտն կատարեաց ի Քրիստոս՝ թուղթ ևթներորդ։ Սեպտեմբերի Բ. հոռի վեցերորդն. Առ Միայնակեացն ի Հենատոն գրեցեալ թղթոյ։

Տիմոթէոս էջ 335.

Կար. ցուց. № 454 Զ-ից.

Երանելւոյն հաւրն մերոյ Դիոսկորոսի եպիսկոպոսապետին Աղէքսանդրու և գրեցելոյ թղթոյն ի Գանգրա յասորիս, ուր դաշակերտն կատարեաց ի Քրիստոս, թուղթ Է-երդ. սեպտեմբերի Բ. հոռի վեցերորդն. առ միայնակեացն ի Հենատոն գրեցեալ թղթոյ։

Բ.

Կնիք Հաւատոյ

էջ 357

Երանելւոյն Դիոսկորոսի, եպիսկոպոսապետի Աղէքսանդրու, ի գրեցելոյ առ Սեկենդոնեան թղթոյն Գանգրայ յաքսորիցն, ուր զընթացն կատարեալ ի Քրիստոս. Թովթ. Ե. սեպտեմբեր Բ. հոռի Զ.

Տիմոթէոս էջ 277

(երկաթագիր Զ-ր անթուական)

Երանելւոյ Հաւր մերոյ Դիոսկորոսի եպիսկոպոսապետի Աղէքսանդրեայ և խոստովանողի՝ ի գրեցելոյ առ Սեկունդինեան թղթոյ ի Գանգրայ յաքսորայ, ուր զնթացն կատարեաց ի Քրիստոս։ Թուղթ ևթներորդ, Սեպտեմբերի երկրորդ, Հոռի վեցերորդն։

Մի ակնարկ բաւական է այս մէջբերուած հատուածների վրայ, որ տեսնենք որ մեր առաջն ունինք երկու խումբ Զ-երի, շատ կանուխ բաժանուած միմեանցից, հաւանօրէն եւթներորդ դարից առաջ։ Իւրաքանչիւր խմբից ունենք երկերկու օրինակ շատ մօտ միմեանց։ Երկրորդ խումբը լաւագոյն պահուածն է։ Բայց առաջին խմբի աղճատ «դաշակերտան» ընթերցուածը փոխանակ «դարշաւանս» հարազատ ընթերցուածի ցոյց է տալիս, որ այդ խմբի նախագաղափարը դեռ չունէր «զընթացս» լուսանցագրութիւնը։ Հմմտիր Դիոսկորոսի մասին ասուածը՝ «... ի Գանգրացւոցն քաղաք, ի Պափղագոնիա, ուր զարշաւանն կատարեաց և զհաւատոն պահելով կատարեցաւ» (Կաւզ էջ 147)։ Նախկին յօդուածումս խօսել եմ ուղիղ և սխալ ընթերցուածների մասին, այժմս առանց ընդարձակուելու, մի կողմ թողնելով մանր տարբերութիւնները, կստանանք հետեւեալ նախնական ձևը։

«Երանելւոյ Հաւր մերոյ Դիոսկորոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ և խոստովանողի՝ ի գրեցելոյ առ Սեկունդինեան թղթոյ, ի Գանգրայ յէքսորայ, ուր դարշաւանն [լուսանցք. զընթացն] կատարեաց ի Քրիստոս. Թովթ. Ե., Սեպտեմբեր .Բ., Հոռի .Զ.։

Անհետանում է «Թուղթ» ընթերցուածը, որ այնչափ դժուարութիւն էր յարուցանում։ Իսկապէս ճշտում է, որ այստեղ ունինք Դիոսկորոսի մահուան ամսաթիւը և այն ալեքսանդրեան Թովթ=thoth *ամսով, բայց ոչ տարեթիւը, ուրեմն և ոչ մի հնարաւորութիւն որ և է յետադարձ հաշուի։ Անհերքելին է, որ Ալեքսանդրիայի հայրապետի մահուան օրը նշանակուած է եգիպտական ամսաթուով։ Մնում է բոլորովին անաղարտ մեր նախկին հաշիւը՝ սեպտեմբեր 2=հոռի 6՝ զուգաւորութեան վրայ հիմնուած, և աւելի զօրացած Թովթ հնգով, որ կէտ առ կէտ համապատասխանում է սեպտեմբեր երկուսին։*

Բոլոր Զ-երն էլ, թէև տարբեր ծագումի, և ըստ երևոյթին եօթներորդ դարից առաջ միմեանցից բաժանուած, ունին անփոփոխ սեպտ. 2 և հոռի 6 ընթերցուածը։ Թովթ հնգի փոխանակ՝ երեք Զ-ը ունին եօթը, որ ակներև Ե և Է տառերի ամենասովորական շփոթութիւնն է։ Մեզ հասած են բազմաթիւ հայ Զ-եր, որոնց մէջ ապահովութեամբ դժուար, շատ անգամ անհնարին է որոշել այդ երկու տառերը միմեանցից։ Բայց գիտելու արժանի է, որ Bardenhewer*-ում մէջ բերուած սեպտ. 4 ամսաթիւը, մեզ անյայտ աղբիւրից, ճշտիւ համապատասխանում է Թովթի եօթին և ոչ հնգին։ Ուրեմն խնդրականն է մնում Դիոսկորոսի մահուան ամսաթիւը, որ պիտի լինի կամ 5 կամ 7։ Եթէ 7-ն է նախնականը՝ հայերէն թարգմանուելուց յետոյ էլ շփոթմամբ կարդացուել է Ե և վերջինիս դիմաց միայն հնարաւոր էր դնել սեպտ. 2։ Մեր թուերի զուգաւորութեան համար բոլորովին անկարևոր է ուրեմն Դիոսկորոսի մահուան ճիշտ օրը։*

Ալեքսանդրեան եկեղեցական տօմարը քրիստոնէութեան առաջին դարերից սկսեալ եգիպտական անշարժ տարուայ հաշուովն է, և տարեսկիզբը, Թովթի 1-ը, ընկնում է օգոստոսի 29-ին, իսկ նահանջ տարիներում՝ օգոստոսի 30-ին։ Ալեքսանդրեան նահանջ տարին մեր նահանջներից մի տարի առաջ է լինում, օրինակ՝ մեր նահանջները համընկնում են 4-ին, 8-ին, 12-ին, 16-ին, մինչդեռ ալեքսանդրեան նահանջները՝ 3-ին, 7-ին, 11-ին, 15-ին ևլն։ 454 թուականը, Դիոսկորոսի մահուան տարին, հասարակ տարի է թէ մեր և թէ ալեքսանդրեան հաշուով, ուրեմն և Թովթի 5-ը ճիշտ ընկնում է սեպտ. 2-ին։ Եւ որովհետև երկուսն էլ՝ թէ Թովթ և սեպտեմբեր անշարժ թուականով են, ուստի մէկի և միւսի խանգարուելը՝ իսկոյն պիտի աչքի ընկնէր՝ ինչպէս որ մեր երեք օրինակում Թովթ 7=սեպտ. 2 անհնարութիւն է։ Ուրեմն մեզ մնում է կրկնել մեր հինգ տարի առաջ պնդածը, և այժմս աւելի ապահովութեամբ, որ **Թովթ 5=սեպտեմբեր 2=հոռի 6 զուգաւորութիւնը միմիայն հնարաւոր է 480 փետր. 29 – 484 փետր. 228 քառամեակում։** *Ուրեմն և Կուղի հայ թարգմանութիւնը չէ կարող այս քառամեակից ուշ լինել։ Աւելացնեմ նաև, որ որևէ թիւրիմացութիւնից խուսափելու համար, չբաւականանալով Կնիք Հաւատոյ տպագրով, վերստուգեցի անձամբ Կարապետ Սրբազանի գործածած Զ-իրը, որ ճշտութեամբ կարդացւում է այսպէս. «Թովթ. Ե։ Սեպտեմբեր ։Բ։ հոռի։ Զ։», այսպէս թուանշանները կէտերի մէջ առնուած, ինչպէս որ լաւ գրիչների սովորութիւնն է։*

*5. Այս բոլորի դէմ ինչ ունինք առարկելու։ Միայն Անանունի (*De rebus Armeniae*) տեղեկութիւնները (որից առնում է և Փառ), որոնց մասին արդէն խօսել է Հ. Ակինեան (էջ 17—20), և որոնք Տիմոթէոսի և Փիլոքսենի Քաղկեդոնի դէմ գրածների թարգմանութիւնը դնում են Դուինի ժո-*

գովի և Արդիշոյի ժամանակ։ Եօթներորդ դարում և յետոյ շատ բնական է, որ հակաքաղկեդոնական ամէն գրութիւն պիտի կապէին վեցերորդ դարու երկրորդ կիսում դաւանաբանական վէճերի բռնկման հետ, երբ Հայ եկեղեցին պաշտօնապէս բաժանուեց Արեւմուտքից։ Անանունի ցուցումները թէև ուշադրութեան արժանի, բայց իմ կարծիքով անզօր են բուն Տիմոթէոսի թարգմանութեան մէջ պահուած թուականի դէմ, եթէ այս վերջինում սխալ կամ թիւրիմացութիւն չկայ։

Կայ և մի ուրիշ հանգամանք։ Գիրք Թղթոցում պահուած են երկու գրութիւն. մէկը Մովսէս Քերթողահօր և միւսը Հայոց Յովհաննէս եպիսկոպոսապետի անունով, երկուսն էլ նուիրուած «Մի բնութիւն յերկուց բնութեանց» հակաքաղկեդոնիկ բանաձևին։ Երկու գրութիւնն էլ յունաբան և սովորական ընդունուած թէորիայի համաձայն՝ թէ՛ ըստ լեզուի և թէ՛ ըստ բովանդակութեան «անարժան» հինգերորդ դարին։ Քերթողահօր գրութիւնը օգտուել է Կուզի թարգմանութիւնից, որից ունի Երեքթէոսի հատուածը (Ակին. էջ 22—28) և այլ շփման կէտեր, որոնց մասին երկարելը մեր նպատակից դուրս է։ Եթէ Կուզը թարգմանուած է 480—484 թուականին՝ այս Մովսէս Քերթողահայրը պիտի լինի Փարպեցուց մեզ յայտնի Մովսէս Փիլիսոփոսը։ Երկրորդ գրութեան հեղինակ Յովհաննէս Հայոց եպիսկոպոսապետը ինքն ըստ ինքեան պիտի համարուի Բաբգէնի նախորդը՝ Յովհան Մանդակունին, այսինքն թէ՝ հակաքաղկեդոնիկ դաւանաբանական վէճերի սկիզբը և թէ յունաբան լեզուն սկսուած պիտի լինին յետ տանել գոնէ մինչև հինգերորդի վերջին քառորդը։ Եւ ահա Անանունի վրայ հիմնուած և հերքելով Կուզի իմ տուած թուականը, Հ. Ակինեան դիւրութեամբ Մովսէսի գրութիւնը վեցերորդ դարու կիսից էլ աւելի ցած է քաշում (էջ 42)։ Եւ, յիրաւի, եթէ Հակաճառութիւնը թարգմանուած է Արդիշոյի ժամանակ՝ Հակաճառութիւնից հատուած ունեցող Քերթողահայրը պիտի այդ թարգմանութիւնից յետոյ լինի՝ հաւանօրէն իջնելով մինչև Մովսէս Սիւնեցին։ Շատ աւելի դժուար է ազատուել Յովհաննէս Հայոց եպիսկոպոսապետից։ Վրթանէս Քերթողը բարեբախտաբար յիշում է պատահմամբ այս Յով. եպիսկոպոսապետին իր մի թղթում (Գիրք Թղթ. էջ 126).—«Եւ որ յանդիմանեն և նզովեն զժողովն (քաղկեդոնի) և զտումարն՝ Թուղթն Զենոնի ուղղափառ թագաւորի, որ կոչի Հենոտիկոն, և Թուղթն երանելոյ Անաստասայ թագաւորի, և գիրք Տիմոթէոսի Աղեքսանդրացւոյ, և Թուղթ Յովհաննու եպիսկոպոսապետի, և Թուղթն Պետրոսի Անտիոքացւոյ, և Պատճառն իսկ, և այլ բազում թուղթք ուղղափառաց»։ Հ. Ակինեանն ընդունում է այս և եպիսկոպոսապետի կողքից «Հայոցը» դուրս ձգելով, աւելացնում է՝ «թարգմանեալ . . . Զ. դարու առաջին քառորդին» (էջ 3)։ Ուրեմն դժուարանում է մի կամ երկու տասնեակ տարի յետ տանել և վերագրել Մանդակունուն։ Բայց ահա Կնիք Հաւատոյի մէջ նոյն այս Յովհաննէսի գրութիւնից մի մեծ հատուած երևան է գալիս այսպիսի վերնագրով. «Երանելւոյն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց կաթողիկոսի՝ ի հակաճառութենէն Քաղկեդոնի ժողովոյն, որ սափ Ասպացոյց.— Քանզի ՅԺԸ ի Նիկիայ գումարեալք ի քաղաքումն արիանոսացն . . » (Կնիք էջ 130, հմմտ. Գիրք Թղթոց էջ 33)։ Ես գրուածքի վաւերականութեան կամ անվաւերութեան մասին չեմ ուզում խօսել, այլ մի կէտի վրայ կամենում եմ դարձնել աստուածաբանների ուշադրութիւնը, որ բնագրաքննական տեսակէտից շատ դժուար է բաժնել միմեանցից, որ դարու գործ և լինին, այդ երկու գրութիւնները։

—Քերթողահայրն ասում է դիմելով իր հասցէակրին.
«զի ծանիցես, ով աստուածասէր, յոմանց փախչել և բաղձալ անսասանելի եւ անշուշտ հաւատոյ դաւանութեան, ի մարգարէիցն սկսեալ եւ յառաքելոցն զարգացեալ» (Գիրք Թղթ. 28)։

Յովհ. եպիսկոպոսապետը կարծես պատասխանում է. «Իսկ մեզ զի՞նչ զուգէ այլ փափագելի և խաղաղաւէտ նաւահանգիստ, եթէ ոչ անսասանելի ճշմարիտ հաւատոյ ամրութիւն, յառաքելոցն եւ ի մարգարէիցն աւանդեալ» (էջ 29)։

—Քերթ. «որ են աղճատանք և շամբուշ յիմարութեան ձեռնարկութիւն» (24).

Յովհ. եպս. «զի անկարգ է և շամբուշ յիմարութեան ձեռնարկութիւն» (31).

—Քերթ. «Մինչդեռ զմեզ բամբասէին տխմարս և հայհոյիչս գոլով..» (18).

Յովհ. եպս. «Իսկ զայլսն դատապարտեն հայհոյիչս գոլ յամենայնի» (34).

—Քերթ. «Արդ՝ մի բնութիւն Բանին աստուածութիւնն է» (27).

Յովհ. եպս. «զի բնութիւն Բանին աստուածութիւնն է» (33).

Եւ այս ցանկը կարելի է երկարել։ Իմ տպաւորութիւնս այն է, որ Մովսէսի գրութիւնը ուղղուած է Յովհ. եպիսկոպոսապետին և այս վերջինս իր «Ապացոյցը» գրելիս անշուշտ աչքի առաջ ունի Քերթողահօր գրութիւնը։ Ուրեմն և չէ կարելի Քերթողահօր գրութիւնը տեղափոխել Ե. դար, առանց նախապէս տեղափոխելու Ե. դար նաև Տիմոթէոսի Հակաճառութեան թարգմանութիւնը, որովհետև Քերթողահայրը օգտուել է Հակաճառութիւնից։ Միւս կողմից չէ կարելի Յովհ. եպիսկոպոսապետին թողնել վեցերորդի սկզբին՝ և Քերթողահօրը տեղափոխել հօթներորդ, որովհետև Ապացոյցը կախում ունի Քերթողահօր գրուածքից*։ Միակ լուծումը տալիս է Հակաճ. թարգմանութեան թուականը։ Հինգերորդ դարի ութսունական թուերի սկզբին թարգմանուել է Հակաճառութիւնը, դրանից յետոյ գրուած է Քերթողահօր թուղթը, որանից յետոյ Ապացոյցը, որին հետևում են Բաբգէնի թղթերը, այսինքն ճիշտ այն կարգով, ինչպէս որ դասաւորուած են Գիրք Թղթոցի մէջ։

* * *

6. Այժմ անցնենք ոսկեդարեան մատենագրութեան։

Եւսեբի Եկեղ. Պատմութեան մէջ գտնում եմ մի կռուան այդ գրքի թարգմանութեան ժամանակը որոշելու համար։ Այս մասին շատոնց խոստացել էի և այժմ շատ յարմար է յունարէն գրքի մեզ յայտնի հնագոյն թուականը ճշտելուց յետոյ, նոյնը փորձել և ոսկեդարեան գրքի մասին։

Եւսեբիոսը մի հատուած ունի Անատոլիոսի զատկական կանոնից, որի մէջ կարդում ենք, ըստ Ճարեանի թարգմանութեան յոյն բնագրից, գլ. VII, էջ 601.

«Արդ յառաջնում տարւոջ, ասէ [Անատոլիոս], զամսամուտ առաջնոյ ամսոյն՝ որ սկիզբն է բովանդակ ինն և տասնամեայ շրջանին, ըստ Եգիպ-

* Ծ ա ն. Գրուածքի վերնագիրն է «Երանելի (կամ երանելոյն) մեծի Քերթողահօրն Մովսէսի եպիսկոպոսի»։ Գիրք թղթոցի մէջ անհարազատ է «Խորենացի» բառը, անկապ կոնտեքստի հետ, որն և միւս ձեռագրերում չկայ։

տացւոց ի քսան և ի վեցերորդ աւուր Փամենովթ ամսեանն, իսկ ըստ Մակեդոնացւոց ի քսան և երկու Դիստրեայ, և որպէս Հռովմէացիքն ասեն՝ ի մետասան յառաջ քան զկաղանդսն Ապրիլի. և գտանի արդ արեգակն ի քսան և վեց Փամենովթ ամսեանն ոչ միայն ի հատուածն առաջին զմուտ իւր արարեալ, այլ և զաւուրս չորս յառաջեալ ի նոյն»: Այստեղ խօսքը գարնական օրերից առաջինի մասին է, որ է մարտ 22, գիշերահաւասարից յետոյ: Անատոլիոսի կանոնում գիշերահաւասարը ոչ թէ այժմեան նման մարտի 21-ին էր, այլ մարտի 19-ին, որով և մարտի 22-ին արեգակի համար ասում է «զաւուրս չորս յառաջեալ»: Եգիպտական փամենովթ (phamenoth) ամսի մէկը ընկնում է փետրուարի 25-ին, որով փամենովթ 26-ը համընկնում է մարտի 22-ին: Դիստրոս կամ Dystrus մակեդոնական VI-երորդ ամիսը ճշտիւ համապատասխանում է, ըստ ասորամակեդոնական տոմարի, մարտ ամսին կամ ասորական Ադարին: Ինչպէս յայտնի է ասորամակեդոնական տոմարով առաջին ամիսը Հիպերբերետէոս=Թշրին առաջին=հոկտեմբեր: Ուրեմն «ի քսան և երկու Դիստրեայ» նոյնն է թէ 22 մարտի: Հռովմէական հաշւով «մետասան յառաջ քան զԿաղանդացն Ապրիլի» նշանակում է Ապրիլի Կաղանդից, կամ 1-ից, տասն և մէկ երորդ օրը դէպի յետ, այսինքն է մարտի 22: (Հմմտ. Encydop. Brit.⁹ «Calendar»): Ուրեմն երեք տոմարով էլ խօսքը մարտի 22-ի մասին է: Այսպէս յոյն բնագրում:

7. Բայց հայը թարգմանում էր ասորերէնից և բոլորովին անծանօթ է յոյն բնագրին, հմմտ. Էրուին Պրայշէն «Eusebius Kirhengesch. Buch VI und VII aus dem Armenischen Übersetzt,» յառաջաբանը: Ահա հին թարգմանութիւնը. «Արդ ի նմին, ասէ, ի տարւոջ անդ է նախ ամսագլուխ առաջին ամսոյն, զի է նա սկիզբն երկոտասան ամին (sic), որ ըստ համարոյ եգիպտացւոց՝ է նա քսան և վեց Պեմանոդայ, իսկ [ըստ] թուոյ ամսոց մակեդոնացւոց՝ քսան և երկու Արադայ, այսինքն մետասաներորդ Արեգ ամսեանն: Բայց գտանի արեգակն ի քսան և վեց Պեմանոդայ, զի է նա քսան և երկու Ադարայ. ոչ միայն զի մտանելով մտանէ նա ի հատածն առաջին, այլ և զի անցանէ նա չորս աւուրս՝ որով գնայց նա» (էջ 601): Այս հատուածում ուղիղ պահուած է եգիպտական ամիսն ու ամսաթիւը՝ պամենոդ 26, մակեդոնական ամսաթիւն ուղիղ է՝ 22, բայց ամսուայ անունը, Դիստրոս, չկայ, այլ դրա փոխարէն «Արադայ» կասկածելի ընթերցուածը, որ պիտի ուղղել «Ադարայ» ինչպէս որ ներքևում բարեբախտաբար կրկնուած է՝ «գտանի արեգակն ի քսան և վեց Պեմանոդայ, «զի է նա քսան և երկու Ադարայ»: Ինձ թւում է թէ ասորին փոխանակ գնելու մակեդոնական Դիստրոս ամիսը՝ գրել է Դիստրոսին կէտ առ կէտ համապատասխանող Ադար ասորականը, քանի որ ասորամակեդոնական տոմարը բոլորովին նոյնն է: «Արադ» անունով ամիս չկայ ոչ միայն ասորամակեդոնական տոմարում, այլ և փոքրասիական զանազան տոմարներում, որոնց մէջ գործ են ածւում այս կամ այն մակեդոնական ամսանունները, օրինակ Բիւթինացւոց, Եփեսացւոց, Ասիացւոց և այլ տոմարներում (տ. L. Ideler, Lehrbuch der Chronologie):

---

* Տես վերևում մէջ բերուած աշխատութիւնը, հրատարակուած Լայպցիգ. Ա. Հառնակի եւ Օ. Գեբհարդի «Texte und Untersuchungen» նշանաւոր շարքում:

Այս մեզ հետաքրքրող հատուածի ասորին չէ պահուած և Է. Պրոյշէնը հայերէնից է թարգմանել գերմաներէն Եւս. Եկեղ. Պատմութեան VI և VII գլուխները, ասորու թերին լրացնելու համար։ Մեզ հետաքրքրականն է թէ ինչպէս է հասկացել Պրոյշէնը։ Նա անփոփոխ է պահել «Արադայ» կասկածելի ընթերցուածը, միայն նշելով nach der Monatsrechnung der Macedonier ist es der zweiundzwanzigste Arad, das heisst der elfte Ared» և վրիպակաւ, իր կողմից, հայ Արեգ ամիսը երեք «արադ» սխալ ընթերցուածի ազդեցութեամբ, կարդալով Areg։ Մի քանի տող ներքեւում կրկնում է նոյն սխալը՝ հայի «բայց համատարի երկիցս անգամ, յԱդար և [յ]Իլուլ, այսինքն՝ յԱրեգ և ի Հոռի» ասացուածը թարգմանելով Aber das kehrt Zweimal wieder, in Adar und Ilul, das heisst im Ared und im Hor» (Հայ Եւսեբ. էջ 603, Er. Preuschen էջ 105—6)։ Այսպիսով գերմանացու մօտ անհետանում է հայ Արեգ ամիսը դառնալով Արեդ, մինչդեռ հայ տպագրում երկու անգամն էլ չկայ վրիպակ և ուղիղ կարդացւում է Արեգ։ Մեր այս հատուածը քննելու ուրիշ աղբիւր չունինք, մնում է սպասել Եւս. Եկեղ. Պատմութեան բոլոր Ձ-երի համեմատութեամբ կատարուած հրատարակութեան։ Բայց մեր այս ձեռքի տակ ունեցածն էլ բաւական է ապահովութեամբ պնդելու համար, որ մարտի 22-ի դիմաց, այն է եգիպտական Պամենոդ 26-ի, ասորի Ադար 22-ի դիմաց գրուած է, անշուշտ հայ թարգմանչի կողմից, Արեգի 11-ը։ Այստեղ յետադարձ հաշուի մասին խօսք չէ կարող լինել, թարգմանն ստիպուած էր ընթացիկ հայ տարուայ ամիսն ու ամսաթիւը նշանակել։ Թերևս ինձ առարկող լինի, որ 11-ն Արեգի այս հատուածում մեքենական թարգմանութիւն է յոյն բնագրի «ի մետասան յառաջ քան զկաղանդացն Ապրիլի» ասացուածին, Ապրիլի դիմաց գրուած լինելով Արեգ և ամսաթիւը անփոփոխ պահուած։ Սակայն հայը թարգմանում էր ասորերէնից և բոլորովին անծանօթ է յոյն բնագրի, որով և յոյն յատուկ անունները բոլորովին աղճատում էր, նաև որ և է հետք չէ պահուած հայերէնում, ենթադրելով թէ նախապէս եղել է ասորի բնագրում, «որպէս Հռովմէացիքն ասեն… յառաջ քան զկաղանդացն» բառերից, մինչդեռ յայտնի է, որ հայը չափազանց հաւատարիմ և տառացի թարգմանող է, ճիշտ ինչպէս Տիմ. Կուզի թարգմանը, որ տառացի ճշտութեանը զոհում է հայերէնի ոգին։

Հայ թարգմանութեան տառացի և ստրկային թարգմանութեան մասին տես Պրոյշէնի ասածները.—Da die Übersetzung mit einer erstaunlichen Treue gemacht ist, so ergiebt sich daraus von selbst, welcher Wert ihr für die Kritik der syrischen zukommt» (էջ XVI), հմմտ. նաև A. Merx, De Eusebianae historiae ecclesiasticae versionibus Syriaca et Armeniaca, (Atti del IV Congresso Internazionale degli Orientalisti. Ֆլորենցիա 1880)։ Վերջապէս մի այդպիսի ենթադրութիւն՝ ստիպում է կարծել, որ հայը եթէ ունէր իր առաջ «մետասան յառաջ քան զկաղանդացն Ապրիլի»՝ չէր հասկանում, որ այդ նշանակում է ոչ թէ ապրիլի 11, այլ մարտի 22։ Եւ եթէ այս էլ թոյլ տանք, չէ որ հայը շատ լաւ հասկանում էր ադար 22 և ոչ մի դէպքում չէր կարող դրա դիմաց դնել 11 ապրիլի, մանաւանդ որ խօսքը զատկական կանոնի մասին է, որը շատ լաւ ծանօթ էր հային, քանի որ հայ եկեղեցին էլ Անատոլիոսի զատկական կանոնով էր առաջնորդւում։ Այս ձրի ենթադրութիւնները ստիպուած եղանք առաջ բերել և հերքել, որպէս զի խուսափման որ և է ելք փակած լինինք։ Ուրեմն մեր առաջ դրուած է պարզ և անկասկած ամ-

սաթուերի զուգորդութիւն—Պամենոդ 26=Ադար 22=[մարտ 22]=Արեգ 11, որի վրայ, իբրև հաստատուն կռուանի վրայ, պիտի հիմնենք Եւս. Եկեղ. Պատմութեան հայ թարգմանութեան քառամեակը։

8. Արեգը հայ տարուայ ութերորդ ամիսն է. Արեգի մէկը հայ տարուայ 211 երորդ օրն է [30×7=210+1=211)։ Արեգ 11-ը հ. տարուայ 221 երորդ օրն է։ Եթէ Արեգի 11-ը համապատասխանում է մարտի 22-ին, ինչպէս որ է մեր այս Եւսեբեան հատուածի «զուգաւորութեան» մէջ, ուստի որպէս զի գտնենք համապատասխան հայ տարուայ Նաւասարդի 1-ը, պէտք է մարտի 22-ից 220 օր յետ գնանք։ Այդ հաշիւն անելով ստանում ենք Նաւասարդ 1-ի համար օգոստոսի 14-ը։ Եւ յիրաւի 18 օր օգոստոսից (=14—31) և դրա վրայ աւելացնելով հետևեալ ամիսների օրերի թիւը մինչև մարտի 22-ը՝ 18 օգոստ.+30 սեպ.+31 հոկ.+30 նոյ.+31 դեկտ.+31 յունուար+28 փետր.+21 մարտ՝ ստանում ենք 220 օր, նորից +1=221 օր, այն է մարտի 22-ը։

Ուրեմն Արեգի 11-ը կարող էր ընկնել մարտի 22-ին միմիայն այնպիսի մի քառամեակում, երբ հայ շարժական տարուայ Նաւասարդի մէկը ընկնում էր օգոստոսի 14ին, իսկ այդ պատահում է միմիայն Փրկչական 416—420 քառամեակին։ Իսկ որովհետև, ինչպէս ուրիշ անգամ էլ առիթ ենք ունեցել ասելու, նահանջի պատճառով հայ տարուայ մի օրով յետ ընկնելը ոչ թէ Նաւասարդի մէկին է տեղի ունենում, այլ փետրուարի յաւելեալ օրումը՝ ուստի Եւսեբի Եկեղ. Պատմութեան թարգմանութիւնը կարող էր տեղի ունենալ միմիայն **29 փետր. 416 – 28 փետր. 420** *Փրկչ. թուին, երբ միայն հնարաւոր էր մարտի 22-ի դիմաց դնել Արեգի 11։*

Անցեալ տարի հայ գրին նուիրուած մի յօդուածում (Արարատ մայիս-յունիս միաց. համար 1912, էջ 499—514, արտպ. նաև «Հորիզոնում») ես այն հետևանքին էի եկել, որ Մեսրոպեան տառերի գիւտի և կատարելագործութեան քառամեակն է 412—416 թուականը։ Ուրեմն ճիշտ այս թուին յաջորդող քառամեակին է ընկնում Եւսեբի գործի հայ թարգմանութիւնը, ուստի մեր թարգմանական գործերից ամենահներից մէկն է, և միակը որի թուականը այսպիսով յաջողւում է հաստատ որոշել։

Ես շատ լաւ զգում եմ, որ այսպիսի համարձակ պնդումները ընդհանրապէս հանդիպում են, և բնականօրէն պիտի հանդիպին, կասկածի և թերահաւատութեան։ Բայց թուերն ունին իրենց անյեղլի օրէնքները, եթէ միայն ճիշտ են և վրիպակից զերծ։ Եթէ մէկը այսպիսի մի հաշիւ մեզ տար, օրինակ ԺԲ կամ ԺԳ դարերից, ոչ ոք կասկածելու կամ թերահաւատելու տեղիք չէր գտնի, բայց երբ խօսքը գալիս է հինգերորդ դարին. մեր գրականութեան հնագոյն շրջանին, արդէն բնականօրէն իրենց գլուխն են բարձրացնում կասկածն ու տատամսութիւնը։ Բայց թուերի համար ժամանակի հեռաւորութիւնը ոչ մի նշանակութիւն չունի։ Եթէ հինգերորդում կար հայ շարժական տարի, և մենք գիտենք որ այդ այդպէս է, ուրեմն և հինգերորդ դարի համար նոյնպէս ճիշտ պիտի լինի և է տոմարական հաշիւը ինչպէս և 15-երորդի համար։ Հայ թուականի (552-ին սկզբնակէտը) հետ ոչինչ կապ չունին հայ շարժական տարին և հայ հին ամիսները. անշուշտ հայերի քրիստոնէութիւն ընդունելուց առաջ էլ, Քրիստոսից առաջ էլ, գոյութիւն ունէին թէ շարժական տարին և թէ հայ ամիսները. և այս ծանօթ էր նաև հներին։

«Հայոց ամսոց անուանք յառաջ էին քան զդնել Թվականին Հայոց. և ոչ քան զայս միայն, այլ և յառաջ քան զմարդեղութիւն Բանին» (Ձեռ. № 2030,13, Մեկնութիւն տումարի զոր ասացեալ է Սամուէլ քահանայի ի խնդրոյ Ստեփաննոսի Իմաստասիրի)։

9. Ոսկեդարեան դպրոցի ամենաառաջնական գրուածքը ուրեմն թարգմանուած է 416-420-ին։ Միւս դպրոցի ամենայետնական գրուածքը՝ Կոզը՝ 480-484 թուին, ուրեմն 60 տարի կամ 15 քառամեակ յետոյ։ Կոզի քառամեակում, ինչպէս գիտենք, (տ. իմ վերևն յիշուած յօդուածը 1908 թ.) նաւասարդի 1ը ընկնում էր յուլիսի 29-ին, 15 քառամեակ առաջ, ուրեմն և տասն և հինգ միաւորով պիտի ուշ լինէր հայ նաւասարդը։ Ինչպէս տեսանք Եւսեբի նաւասարդը ընկնում էր օգոստոսի 14-ին, ուրեմն ճիշտ 15 օր յետ է ընկրկել հայ տարին՝ 13 օր օգոստոսից, 2 օր յուլիսից։

Եւսեբի Թուականը, բացի իւր հնութեան «անհաւատալիութիւնից», չէ յարուցանելու այնպիսի կնճռալից խնդիրներ, ինչպէս որ այդ անում էր և անելու է դեռ Կոզի Թուականը։ Առանց մեր այս որոշած քառամեակին էլ Եկ. Պատմութեան Թարգմանութիւնը գրեթէ ամենքն համարում էին շատ հին, ոմանք Վեննետիկցիներից՝ նոյն իսկ Հայ գրի գիւտից առաջ. «Այլ քանզի յիշատակեալ Թարգմանութիւն (=Եւսեբի) կարծի յառաջ քան զգիւտ գրոյն, *թուեցաւ ոմանց յառաջեւոյն լեալ..» (Յառաջբն. Ճարեանի)։ Պրոյշէնը կլոր թուով դնում է 420-ին, այսպիսով պատահարար շօշափելով մեր քառամեակի եզրը։ Հնութեան գլխաւոր ապացոյցն էր՝ բացի ոսկեդարեան լեզուից, Խորենացու վկայութիւնը. «Եւ վկայ քեզ ի մօտոյ երաշխաւորեսցէ Եկեղեցական գիրք Եւսեբի Կեսարացւոյ, զոր եա թարգմանել երանելի վարդապետն մեր Մաշտոց ի հայ լեզու»։ Խորենացու վկայութիւնը լիովին արդարանում է։*

Չեմ ծանրանում այս փոքրիկ թուերից առաջացած մեծ հետևանքների մասին, երբ հետզհետէ պիտի ազատուինք ճապաղ և անորոշ շրջագծերով ընդհանրացումներից իբրև հաստատուն սահմանորոշ սիւներ պիտի ունենանք մեզ առաջնորդող հատ հատ՝ որոշ տարածութեան վրայ՝ այսպիսի վերստուգուած թուեր։ Աչքի առաջ ունենալով գործի կարևորութիւնը ինձ հաճելի կլինի ոչ միայն իմ այս փորձերին հաւանութիւն գտնել, այլ և լսել, եթէ կան, լաւ հիմնաւորուած հերքումներ։

Սակայն չեմ ծածկելու, որ Եւսեբի թարգմանութեան թուականը առաջին անգամ ճշտելս իմ վրայ այն տպաւորութիւնն արաւ, ինչ ստանում ես, երբ ամենախոր տեղում լողալիս ստուգելով՝ ոտքերով անսպասելի կառչում ես երերուն ջրի հաստատուն յատակին։

Գալուստ Տէր Մկրտչեան

23 սեպտ.

ՀԱՅԵՐԷՆ ԿՐԿՆԱՒՈՐՆԵՐԸ

Երեւանի բարբառում (Քանաքեռի խօսուածք).

Հայերէնի մէջ հանդէս եկած կրկնութեանց մասին ընդարձակօրէն գրած է արդէն պ. Հ. Աճառեան «Հանդէս ամսօրեայ»-ի էջերում (1899 յուլ.—օգ.), ուսումնասիրելով յատկապէս հին և նոր գրական հայերէնի և Պոլսի բարբառի ընձեռած օրինակները։ Ոչ նուազ շահեկան պիտի լինէր, եթէ, իբրև լրացումն կամ շարունակութիւն այդ մանրակրկիտ ուսումնասիրութեան, քննութեան առնուէին նաև այն կրկնաւոր ձևերը, որոնք գոյութիւն ունին միւս բարբառներում։ Ներկայ յօդուածը մի փոքրիկ փորձ է պատկերելու կրկնութեան երևոյթը Երևանի բարբառում և յատկապէս Քանաքեռի խօսուածքի մէջ. օրինակները վերցրած են Վէրք Հայաստանի»-ի (Մոսկուա 1890) բառագանձից։ Այդ կրկնութեան մեծ մասն ունի իր համապատասխան օրինակները դասական հայերէնի մէջ. կան այնպիսիներ էլ, որոնք յատուկ են սոյն բառբառին։ Համեմատութիւնը տալիս է հետևեալ պատկերը.

1) Միևնոյն բառի անփոփոխ կրկնութիւն.

Դսկ. կողմանց կողմանց. ամի ամի. գունդ գունդ.

Երև. կիսուկ կիսուկ. ձոր ձոր.

2) Կրկնութիւն միևնոյն բառի սկզբի բաղաձայնը փոխելով մ-ի.

Դսկ. յարմար *(յար + մար).* շողմող *(շող + մող).*

Երև. ճաց-մաց. ճաղալ-մաղալ. երես-մերես. սիլա-միլա.

Ծան. *ա. Դասականում այս կարգի կրկնաւորներն անհատապէս կազմւում են* ա *յօդակապով. օր.* աղխ-ա-մ-աղխ. արհ-ա-մ-արհ *(ըստ Հայկ. բառ. =ան-համարելի).*

Ծան. *բ. Նոյն բառարանը* շողմող *բառին տալիս է հետևեալ զուարճալի բայց ձախող ստուգաբանութիւնը—«իբր շողուել բերանոյ իւրոյ մօղիչ լինելոյ»։ Այս ձևի ստուգաբանութիւնն յատուկ է բոլոր նրանց, որոնք առանց ձայնագիտական օրէնքներին ուշ դարձնելու ճգնում են ամէն բան բացատրել միայն իմաստի նմանութեամբ։*

3) Կրկնութիւն արմատական ձայնաւորի փոփոխմամբ.

Դսկ. սար-սուռ. սպառ-սպուռ. կեր-ա-կուր.

Երև. պար-պուռ. ձէն-ձուն. չիմռչում փալաս-փուլուս. աղմաս-ուղմուս.

Ծան. *ա. դասական* կեր-ա-կուր-ը *թերևս աւելի ճիշտ լինի բացատրել* կեր *և* կուր *նոյնիմաստ բառերի համադրութեամբ. հայերէն* կուր-ը *համեմատելի է յուն.* βρῶ-μα-*ի և* βορά-*ի հետ, որոնք իմաստով էլ նոյնն են. հմ. Հիւբշմ.* Armen. Gram. *էջ 459—60.*

4) Կրկնութիւն արտասանութեամբ շատ մօտ այլիմաստ բառերի համադրութեամբ.

Դսկ.—

Երև. աման-չաման. ափալ-թափալ.

5) կրկնութիւն բառավերջի բաղաձայնի կամ բաղաձայնների փոփոխմամբ.

Դսկ. դան-դաղ-իմ. դան-դաչ-եմ. կող-կանձ-ին. տր-տունջ.

Երև. Թոն-թոր-ամ. բամ-բաչ-եմ (*կամ՝* փամ-փաչ-եմ), փր-փնջ-ամ (*=զուարճանալ*).

6) Կրկնութիւն բառասկզբի բաղաձայնի փոփոխմամբ.

Դսկ.—

Երև. ղլ-վլ-ալ (*զառարկ ստամոքսի հանած ձայնը*). ծամ-լամ-որ-ել (*ծամծմել*).

7) Միավանկ արմատի կրկնութիւն՝ սկզբի բաղաձայնի անկումով.

Դսկ. հոտ-ոտ-եմ. *հեղ-եղ.*

Երև. հեք-եք-ամ (*«լացից յետոյ կցկտուր շունչ քաշել»*). ֆուք-ուք-ել *կամ* ֆուք անել (*«գլխի միջամտները որոնել», Ակն՝* ֆրքվել). ֆուջ-ուջ-ել. ֆուջուջ *կամ* ֆրջուջ անել (*«Թռչունների ոտերով աղբ, հող քրքրելն ու միջից ուտելիք որոնելը»*).

8) Անփոփոխ կրկնութիւն միավանկ արմատի.

Դսկ. աղտ-աղտ-ուկ. խոր-խոր-ատ. բուբափեմ (*=*բափ-բափ-եմ*). ծուծափեմ (*=ծափ-ծափ-եմ). կասկածիմ (*=*կած-կած-իմ*), *ևն.*

Երև. սլ-սլ-ալ (*սողոսկել*). ծլ-ծլ-ալ. ծլփ-ծլփ-ացնել. ֆոտ-ֆոտ-ացնել. խլթ-խլթ-ալ. պլթ-պլթ-ալ.

9) Ամբողջական կրկնութիւն բառավերջի ռ-ն ր-ի փոխելով.

Դսկ. բար-բառ. գր-գիռ. բր-բռ-եմ. մր-մռ-եմ (*նաև* մռ-մռ-եմ).

Երև. ֆր-ֆռ-ամ. հր-հռ-ամ.

Ծան. *Ինչպէս տեսնում է, այս շարքին պատկանող օրինակները, թէ՛ Դսկ. թէ՛ Երև. բարբառում բնաձայն բառեր են. բացառութիւն կարող է համարուել* բարբառ *բառը, որի արմատը, ըստ պ. Աճառեանի (Հանդ. Ամս. 1899 էջ՝ 232)* *բառր *պէտք է լինի, որով և այս կրկնութիւնը պէտք է պատկանի ոչ թէ այս շարքին, ինչպէս արտաքուստ ըստ ամենայնի յարմարւում է, այլ մի ուրիշ շարքի, ուր կրկնութիւնը տեղի է ունենում արմատի վերջին բաղաձայնի կամ բաղաձայնների անկումով. օր.* տա-տակ (*=*տակ-տակ*). փո-փոխ-եմ (*=*փոխ-փոխ-եմ*). *ըստ այսմ և* բար-բառ (*=*բառր-բառր*) *բայց այս դէպքում կարելի է հարցնել. արդեօք նոյն բառի մէջ վերջին* ռ-*ն ամփոփուած է մի սկզբնական կրկնակ* ր-*ի թէ՞ այլ ծագում ունի, որ մեզ անծանօթ է։*

Վերոյիշեալ շարքերից 2), 3), 4), 6), 7) շարքերում կրկնաւորների առաջին տարրերն են, որ ներկայացնում են բառի սկզբնական պարզ վիճակը. դասականում դրանք բոլորն էլ միավանկ են բացի ապառ-*ից (3-րդ շարք), որ սկսում է մի կիսավանկով, իսկ բարբառայինների մէջ կան մէկից աւելի երկավանկներ էլ։ Այս վերջիններից ուշագրաւ են* փալաս-փուլուս, աղֆատ-ուղֆուտ, երեն-մերեն *և ուրիշ այս կարգի ձևեր, որոնց ճիշտ համապատասխանները դասականում բացակայում են։*

Բացի սոյն արտաքին ձևական զանազանութիւնից, բարբառային կրկնաւորները իմաստով էլ ըստ ամենայնի համերաշխ չեն դասականների հետ։ Համեմատենք, օրինակի համար, յարմար, շոգմոգ, սարսուռ, արհամարհ *ձևերը նման կրկնաւորների հետ բարբառային շարքերից*—հաց-մաց, հացալ-

մազալ, ազֆաչ-ուղֆու. են. առաջինները ըստ իմաստի վաղուց արդէն կորցրել են իրանց կրկնաւորի նկարագիրը և կիրարկւում են իբրև արտայայտիչ պարզ գաղափարների. Նրանցից ամէն մէկը կարող է մի բառով թարգմանուել որ և է լեզուի. մինչդեռ բարբառային ձևերը հաւաքական իմաստ ունին, ներկայացնում են բարդ գաղափարներ, ինչպէս—հաց-մաց=հաց ու հացից անբաժան ուրիշ մնղեղէն. մազալ-մազալ=հաղալ և հաղալու մօտ ուրիշ ակարութիւններ, են.

Վերջացնելուց առաջ սոյն համառօտ նկարագրութիւնս Երևանեան կրկնաւորների մասին, կը կամենայի սոյն բարբառի ընձեռած մի օրինակով լուսաբանել մի հին կրկնաւորի կազմութիւնը։ Բուական հին է կաղկանձել կրկնաւոր բայը, որ միևնոյն ժամանակ և մի բնաձայն բառ է. Նաբեկ. «կաղկանձոցական»։ Արավեանի հատոըը մեզ տալիս է կօնձ-կօնձ-ալ կըրկնաւորը, որ, ըստ իս, միևնոյն բառն է անձ ձայնախմբի օնձ-ի փոփոխմամբ, ոչ նուազ նոյնանալով նաև իմաստով։

Մեսրոպ վարդապետ Մաքսուդեանց.

1913 Ս. Էջմիածին.

ՆՈՐԱԳԻՒՏ

ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՆՕՏՐԱԳԻՐ ՅՈՒՑԱԿ ՍԱՂՄՈՍԱՎԱՆԻՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

1 ա. «Այս գիրք Սաղմոսավանից։

Իմն աւետարան երկ"թագիր որն մագ"ղ"թ որն թուղթ։
Դ. Ճաշոց։
Գ. Տօնապա(տ)ճառ։
Բ. Սարգիս գիրք. մէկ հին, մէկ նոր։
Գ. Ճառընտիր. ր՞ն երկ"թագիր, ա. բոլոր և նուար։
Գ. Կոչումն ընծայութե՞, ր՞ն երկ"թագիր, ա. բոլոր և փոքր։
Բ. Պատմութ՞իք Յովհաննու աւետ"ր"չին, միայն կէսն այլ պատմութի՞ք։
Ա. Փիլոն գիրք յաղագս նախախնամութե՞ն
Բ. Ա՞ծաշունչ Մովսիսի Ե. գիրքն։
Ա. Մեծ Եսայի մարգ"րէ ընդ նմին և Պօղոս։
Ա. Մագ"ղ"թէ մեծ երկ"թագիր Գործ ընդ նմին և կթ՞ղկէք։
Ա. Փոքր երկ"թագիր Գործք և Եսայի։
Ա. Փոքր Պօղոս յառաջն ոսկած։
Ա. Ոսկէբերանի մեկնիչ Եսայիա։
Ա. Եփեսացւոց գլխին Ոսկեբերանին. ա. Փիլպեցւոց. ա. Եբրայ"ցւոց։
Ա. Բովանդակ Պօղոս կարճառօտ մինչև Ոսկէբերանին։
Ա. Եւս աւետարանի մեկնիչ Ոսկէբերանին սկիզբն մինչև եմուտ ի Կափառն՞յ։
Ա. Ոսկէբերանի մեկնիչ գործոյն։
Գ. Յոհնգի գիրք, ա. տարբինութեանց, ա. Յովհաննու աւետարանի մեկնիչ, ա. Դամասկացոյն։

1 բ. Բ. Ներսէսի Լամբրոնացու խորհրդի մեկնիչ. ա մեծ, ա. փոքր։
Ա. Գիտոյից գիրք, ա. Եղիշէի պատմագիրք, ա. փոքր Հարանց վարք։
Ա. Ղուկասու գլխին մեկնիչ. Իգնատիոսի վարդապետի արարեալ ընդ նմին և վեցօրէից։
Ա. Վանական վարդպ՞տի. սկիզբն մաղաղաթեայ, կէսն թղթով։
Ա. Եր"միայի մեկնիչ Մխիթար վարդապետի. բ. քահանայաթաղ երկթ"գիր։
Ա. Փոքրիկ քերականութիւն ընտրանն. և մէկն էլ ա. Առակաց մագ"ղ"թ հին երկ"թգիր։
Ա. Գիր ամենահրաշն մէջ և այլ բազում խրատական բանք և սահմ"նք։
Ա. Գործոց առաքելոց քաղուածու ի Մաթէոս վարդապ՞տէ։
Ա. Կիրակոս վարդապետի յաղագս Ը խորհրդոց. և այլ քարոզ հետն։
Ա. Գիրք եւ ի մեր վարդապ"տաց ընդդէմ երկաբնակացն։
Ա. Մաթ"ոսի մեկնիչ ի Ներսիսէ Կլայեցւոյ արարե"լ։
Ա. Փոքրիկ քարոզգիրք սկիզբն. Ելի ի հօրէ և այլ ինչ չարե"լ հետն։
Ա. Փոքրիկ եւ հին գիրք ի մերոց վարդապ"տ"ց յղ՞գս մերոյս դաւանութե՞ս։

Ա. Ադամ գիրք հին. յԱռաքե"լ վարդապետէ։
Ա. Փոքրիկ հին գիրք հոգևոր խրատ հարց և պատասխանի։
Ա. Գիրք հին. կէսն նոտր, տառապելոց և այլոց խօսից։
Ա. Գիրք առանց կողքի Գր̃գրի հարց և պատասխանի. և Փողեցէք ի լուծումն։
2ա Գիրք եւ Յովհաննէս վարդապ"տի, Ա. ոտանաւոր սկիզբն։
Ա. Գանձուց սպիտակ գիրք։
Ա. Նիւսացի երգ երգոցի մեկն"չ երկ"թագիր հին։
Ա. Մեծ հին գիրք երկաթագիր Պօղոսի Եսայու. աւետարանի և այլոց իրաց մեկնութ̃ի և պատմութի̃ ի մի տուփ։
Ա. Սողոմոնի մեկնիչ յառաջն անկած վայր։
Ա. Ժամակարգութե̃ և աղօթից մեկն"չ. խոստովանութե̃ Ներսէսի և այլոց արր̃եղ։
Ա. Աղօթից մեկն"չ յառաջն անկած. ընդ նմին և Ներսէսի և Ջենոր պատմութիւն։
Բ. Արտաքին. ա. կազմե"լ լիակատար, ա. թերի անկազմ։
Ա. Հին Դէոն"ոսի։
Բ. Բարսղի վեցօրէից, մէկի կէսն Առոքս։
Ա. Նարեկ գիրք։
Ա. Մագաղ"թ երկ"թագիր ճաշոց։
Ա. Թղթէ եւ երկ"թագիր ճաշոց ըստ կարգի Յունաց։
Ա. Հին մգ"թղէ երկթագիր Գր"գրի Ա̃ծարանի Բ ս ծնե"լ լինի սկիզբն։
Ա. Հին մագ"ղթեա երկթագիր Սաղմոսի մեկնիչ։
Ա. Եսայեա եւ ու"չ Սարգիս վր̃դպետ երկ"թագիր. ընդ նմին և ր. Սղ̃մսի մեկն"չ և այլ ինչ բաղում ի տուփ մի ժողովե"լ։
Ա. Հին մգաղթեա երկթագրով յաղթ"ցայ անուն գիրք Գրիգորի ա̃ծա-րանի։
Ա. Եպիփանու յղ̃գս Ա̃ծածնին և այլ անօրէնութե̃ն Բ̃ ի գիրք։
Ա. Եւս մեծ հին մագ̃ղթեա երկթագիր ճաշոց։
Բ. Թղթէ երկթագիր Տօնապատճառ։
Ա. Գիրք Սեպերիանոսի, ընդ նմին և Սար"գին ընդդէմ։
Ա. Եւս Փիլոն գիրք հին երկթագիր։
Ա. Գիրք ընդդէմ Մանիքոսի և այլոց հերձուածողաց։
2բ Ա. Գիրք Նիւսացւոյն ընութեան, կազմութեան, և կուսութեան, ի մի տուփ։
Բ. Բոլոր հին գիրք. գ. Գետոց մեկնութիւն և Նախադրութեանց Պօ-ղոսի և այլ ժողովածու բանք։
Ա. Մեծ հին երկթագիր գեղին թղթով մաշտոց։
Ա. Հին մագ̃ղթեա երկ"թագիր կանոնք։
Գ. Մագաղթեա (sic)եր"կթագիր ոսկով ընթ"րցուած յառ"ջն և հովիւքն էին ի աղ"։
Ա. Հին Դիոնէսիոսի լուծմունք, եւ ընդ նմին և Բ̃ս ծնելոյ լուծմունք
Ա. Հին մագ̃ղթա երկ"թագրով Սաղմոսի մեկնիչ։
Ա. Հին գիրք եւ ժողովածու խառն և խուռն։
Ա. Փոքրիկ հին գիրք ժողովածու սահմանք քերականի և այլոց իրաց շատ։

Ա. Մագ՟ղաթեա անկազմ գիրք սկիզբն Յոբայ և այլոց քարոզ՞ց և ընդդէմ աւետարանին բանք բազումք։

Ա. Մագ՟ղաթա երկ՟թագրով ընթերցուած, յառաջն անկած. էր ընդ եղ-բրան ևս։

Ա. Մագ՟ղաթեա երկ՟թգրով Մաշտոց. յառ՟ջն անկած։

Ա. Փոքր գիրք անկազմ ճաշոց յինանցն։

Գ. Հին անկազմ գիրք ես Նիւսացոյն։

Գ. Փոքր հին սահմանաց։

Գ. Նոր հարանց վարք։ ա. Հարցմունք։ բ. Յայսմաւուրք։

Բ. Շիտակ ճաշոց։

Գ. Մեծ գիրք Արարածոց, Սողոմոնի. Յոբայ մեկն՟չ ի մի տուփ։

Լուսանցագիր. *Քրիստոնէից իշխանաց ամր և վախմիաթն է թէ մլքի թէ հողի։*

«Շնորհ՟ք բարերարին Ա՛յ ես Վաչէ որդի Քրթին որդւոյն Վաչէի և եղբայրն իմ Դաւիթ և ամուսինն իմ Մամախաթունն ցանկացաք գսէր արարչին և շինեցաք սուրբ ուխտս Սաղմոսավանք և ետու հալալ ընչիցն ժԲ ագիտակ և առի մեծ պատրանէն Զաքարիայէն գմուլքն Մ՟ղսավանից և կէսն իմ եղբօրն պարոն Դաւթն հոգւոյն. որ առ քի՞ս է փոխե՟լ։ Վեբլաթին հատա՟եցի մլքի կէսն վախմ ի դուռն Մ՟ղսավանից. եթէ իմոց և օտարաց այլ և այլ անէ, երեք (sic) ո՞ր ժղվոյն նզովեալ եղիցի. մասն Ուդայի առցէ և պատիժն Կայենի կրէ. ի թվ՟ կնին ՈԿԴ ին»։

Սաղմոսավանքի մատենադարանի Ցուցակը բաղկի բերմամբ 1912 ամի մայիս 29-ին Վանքի ձորի այրերը որոնելիս մի քանի մագաղաթեայ պահպանակների հետ գտայ Վանքի արևելեան փոքր այրի մէջ Սեղանի խոռոչում։ Ժողովրդեան աւանդութեամբ գրքերը պահուած են այրերում. իսկ այրերից մի քանիսի բերանները պատաշար երևում են։

Ցուցակիս մագաղաթի մեծութիւնն է 8×6 սմ. գիրք՝ նոտրագիր, միասին $4^1/_2\times6^1/_2$ սմ. երկու թերթից բաղկացած։

Ցուցակի տակ գրուած է և Վաչէ իշխանաց իշխանի ընծայաբերութիւնը (Ցուցակից տարբեր գրով), ուր նա կոչւում է որդի Քրթին, *մինչդեռ իր իսկ շինած վանքերի և Սաղմոսավանքի արձանագրութիւններում* Վաչէ որդի Սարգսի Վաչուտեանց։

Խաչիկ Ծ. Վ

ՔԱՐՏԷԶ ՀԱՅ ՀՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Տառերի գիւտի 1500 ամեայ տարեդարձը մի գեղեցիկ առիթ էր ցոյց տալ հայ գրի զարգացման պատկերն այդ երկար դարերի ընթացքում։ Հանգուցեալ Ալիշանի «Այրարատը», «Սիսականը», «Սիսուանը», Հ. Տաշեանի «Մայր ցուցակը», Բարամեանի և ուրիշ մանր ցուցակներ առանձին տետրակներով և «Հանդէս Ամսօրեայ» ի մէջ, Մեսրովբ վարդ. Տ. Մովսիսեանի Исторія Перевода Библіи, *ևլն. տալիս են շատ գնահատելի նիւթեր, բայց նոքա բաւարար չեն հայ գրչութեան արուեստի զարգացման, նորա ճոխութեան, և հարստութեան մասին ամբողջական գաղափար կազմելու։ Այդ հնարաւոր չէ և այժմ, քանի ձեռքի տակ չունինք հայ ձեռագիրների գլխաւոր ժողովածուների՝ Մ. Աթոռի, Երուսաղեմի Ս. Յակոբեանց, Վենետիկի Մխիթարեանց մատենադարանների՝ գիտական ցուցակներ և վանքերի արձանագրութիւնների նոյնատիպ հրատարակութիւններ։ Ներկայումս միայն մի համեստ փորձ ենք անում, հայ գրչութեան արուեստի զարգացման ուրուագիծը տալ, օգտուելով գլխաւորապէս Մ. Աթոռի և մասամբ Երուսաղեմի Հայոց մատենադարանների անբաւ գանձերից։ «Շողակաթ»-ի ներկայ համարի մէջ տալիս ենք այդ աշխատութեան Քարտէզը անհրաժեշտ տեղեկութիւններով, իսկ ուսումնասիրութիւնը կմնայ հետևեալ համարում հրատարակել։*

Բացի ձեռագիրներից տալիս ենք և հնագոյն արձանագրութիւնների օրինակներ, որոնց նոյնատիպ հրատարակութիւնը առաջին անգամն է կատարւում. նոքա բաւական չեն հնագրական հարցերին բաւարարութիւն տալու, որքան արձանագրութիւններին է վերաբերում, և այդ էլ չէ նրանց ժողովածուիս մէջ առնելու գլխաւոր պատճառը, այլ լրացնել այն պակասը, որ ունինք հայ հին ձեռագիրների կորուստով։ Է. դարու մի քանի ուրիշ արձանագրութիւնների համար՝ Բագաւանի, Բագարանի, Նախճաւանի, Ալամանի, Մրենի, մատնացոյց ենք անում Յովսէփ Օրբելիի յօդուածը, որ նորերս հրատարակեց Христ. Востокъ-*ի մէջ։* Томъ II. выпускъ I. СП. 1913.*, աւելորդ համարելով նրանց կրկնութիւնն ժողովածուիս մէջ (Բագաւանինը չունինք)։ Մրենի արձանագրութիւնը կրկնուած է մեր Քարտիզում, որովհետև* կլիշէն *արդէն նախօրօք պատրաստ էր։ Աւելորդ չհամարեցինք նաև տարբեր նիւթերի վրայ եղած գրութիւնների մի քանի օրինակներ տալ, մանաւանդ որ նրանք հազուագիւտ են։*

Պատկերները և նրանց համառօտ բացատրութիւնները համարագրուած են ժամանակագրական կարգով նիւթի տեսակաւորութեան համեմատ (քար, որմանկար, մետաղ, ձեռագիր), իսկ ընդհանուրի համար կազմուած է յատուկ ժամանակագրական Ցուցակ։

1. Մողայիկ արձանագրութիւն Ձիթենեաց սարի վերայ։ Սոյն նկարն առնուած է Երուսաղէմի հայոց պատրիարքարանի սրահում չափագրութեամբ և հարազատութեամբ պատրաստուած իւղանկար պատկերից. Երուսաղէմի մողայիկ հայ արձանագրութիւնների լուսանկարչական նմանահանութիւնները տպագրուած են Zeitschrift des Deutschen Palästina Vereins, Band XXXIV, մեր նկատողութիւնների հետ. այժմ համարում ենք ոչ ուշ քան Զ—Է դարերի գործ։ Գիրը բոլորաձև, միջակ մեծութեամբ երկաթագիր է։

Յարեխաւս ունելով
առ Ա՛ծ զսուրբ Է
սայի եւ զերանելի
\+ Հարսս եւ վ՛ղան ա
բարի վասն Թողու
Թեան մեղաց գյի
շատակարանս զայս·

2. Տեկորի արեւմտեան դրան ճակատի արձանագրութիւնը, որ կիսատ է առաջի մասում։ Այս արձանագրութիւնը համարւում էր գրի ամենահին մնացորդը Հայոց մէջ (Ալիշան. Շիրակ 132, սխալ ընթերցուածներով), բայց տարակոյսներ կան սկզբնագիր լինելու մասին (Թորամանեան. Տեկորի տաճարը 1911. Թիֆլիս. եր. 99)։ Գրերի ձեւին նայելով, պէտք է ոչ ուշ, քան Է. դարը համարել. արձանագրութեան մի բեկոր սորա ա-ի նման ձեւերով տեսել ենք Թալինի գերեզմանատանը։ Արձանագրութեան մեծութիւնը առաջին երկու տողի 2 մ. 70 սմ.×10½ սմ., երրորդ տողի 1 մ. 90 սմ., վերջին տողի, աւելի խոշոր գրերով, 1 մ. 75 սմ.×6 սմ.,

Արձանագրութեան վերարտագրութիւնն անբաւարար է, մանաւանդ վերջին տողը խախտուած (original) եւ փչացած լինելու պատճառով։

1· Պ՛իսկա(պ)ոսի եւ Տայրոնի Տեկորոյ վանայ երիցու
եւ Մանանայ Հազարապետի Ուրանայ Հոռոմի· որ
2· եւ Հիմնարկեցաւ տեղիս ի ձեռն Յոհանու Հայոց
կաթողիկոսութեան եւ Յոհանու Արշարունեա(ց)
3· յիւր բարեխաւսութիւն եւ բոլոր ազգին եւ
ամուսնի եւ որդեկաց եւ սիրելեաց եւ

4· Սահակ Կամսարական շինեաց զ(այ)ս վկայարան սրբոյ Սարգսի (վերջին երկու բառը գրուած «վկայարան» բառի գլխին, տողամիջին։

Տայրանի, Մանանայ բառերի մէջ ընդգծուածները աղօտ, փակագծի մէջ առնուած տառերը կորսուած են, լրացնում ենք։

3. *Ս. Հռիփսիմէի տաճարի արեւմտեան պատի ճակատին՝ դրսից՝* Կոմիտաս կաթողիկոսի մեծ արձանագրութիւնը (փոքրը խորանի պատի վերայ ներսից)։ Ամբողջ արձանագրութիւնը փորուած է մի քարի վերայ, 50×200 սմ. մեծութեամբ։ Քարի մակերեւոյթին ժամանակի ընթացքում փոսեր են գոյացել, երբեմն վնասելով տառերը։ Բայց ընդհանուր առմամբ արձանագրութիւնն անվնաս է և մեզ պարզ գաղափար է տալիս գրերի ձեւի մասին, որ խոշոր, բոլորաձեւ և գեղեցիկ երկաթագիր է։ Թուական չունինք. բայց ժամանակակից և ականատես հեղինակներից յայտնի է մեզ շինութեան, ասել է թէ, և արձանագրութեան ճիշտ տարին։ Սեբէոս և նորա հետ Գիւտ նշխարաց Հռիփսիմեանց (շուտով հրատարակելու է հ. Գալուստ Տ. Մկրտչեան) գրութեան հեղինակը շինութեան ժամանակը դնում են Խոսրով Ապրուէզի 28-րդ տարին, իսկ Եզնակ երէցը 29-րդ տարին նոյն թագաւորի։ Այս տեղեկութիւնների մէջ հակասութիւն չկայ. երկուսն էլ համաձայն են Փրկչական 618 թուականին, միայն տարբեր ձեւով հաշուած։

Ծանօթ. Սեբէոս Պօլիս 1851 եր. 139. և Ձեռ. Մատ. Ս. էջմ. № 1753 1912. 175ա., Եզնակ երէց. Սամուէլ Անեցի հրատ. Արշակ Տ. Միքէլեանի, Վաղարշապատ, 1893 եր. 266., Նոյնը ունինք մենք Զոհրաբի արտագրութեամբ՝ համեմատած Տ. Կարապետ եպիսկոպոսի արտագրութեան հետ, որ կատարել է անձամբ Փարիզում Ազգային մատենադարանի Сод. 51. Ձեռագրից։ Տես և մեր յօդուածը Կոմիտասի արձանագրութիւնների մասին. Արարատ. 1898. Հոկտ.։

Արձանագրութեան մեծութիւնն է 50×196 սմ. մեր նկարը 17½×6 սմ.։ Առաջին տողի մէջ «Կոմիտաս» բառում մի երկրորդ տառ. «Հռիփսիմէի» բառի մէջ սի և մէ վանկերը կապած։

1· Ես Կոմիտաս եկեղեցապան սր
2· բոյ Հռիփսիմէի կոչեցայ յա
3· թոռ սրբոյն Գրէգորի· շինեցի
4· զտաճար սրբոյ վկայիցս քի·

4. *Անիի Միջնաբերդում, Կամսարականների բազիլիք եկեղեցու հարաւային պատի արձանագրութիւնը 722 թուականից,* եթէ արձանագրութեան «ՀԱ» վերջին տառերը թուական ընդունենք։ Պրոֆ. Մառ սկզբում կասկածում էր, բայց յետոյ իր կասկածը յետ առաւ*։ Մենք ևս հակուած ենք

* Н. Марръ. Раскопки въ Ани въ 1904 году. Сп. 1906. եր. 19. Новыя археологическія данныя о постройкахъ типа Ерерүйской базилики. З. В. О. Т. XIX. Отдѣльный Оттискъ. եր. 14։

Թուականն ընդունելու, որով Հայ Թուականի ամենահին գործածութիւնը կունենանք։ Արձանագրութիւնը հետեւեալն է. ընդգծումները շատ աղօտ են կամ ենթադրութեամբ լրացած։

(Ե)ս Աբրահամ | վարդապետս շինե | ցի
զեկեղեցիս զայս ի Թո | ւականութեան ՀԱ.»

5. Ներսեհ Կամսարականի արձանագրութիւնը Թալինի խաչաձեւ մատրան արեւմտեան ճակատին, է. դարու առաջին կիսում, հաւանօրէն վեցհարիւր երեսնական թուականներին, բոլորաձեւ, խաչով և գեղեցիկ երկաթագրով։ Արձանագրութիւնը պակասաւոր է մի քար ընկած լինելու պատճառով, որի վրայ քանդակուած էր նաև լուսամուտի գլխի զարդէզը։ Ներսեհ Կամսարականի անունը յիշւում է նաև Ալամանի, Մրենի և Նախճաւանի եկեղեցիների արձանագրութիւնների մէջ։ Ալամանի արձանագրութիւնը թուագրուած է. «Բանն եւ եւթն ամեայ Հերակլի բարեպաշտ թագաւորի Ներսեհի Շիրակայ եւ Աշարունեաց . . .» տ. և Христ. Востокъ. Т. II. вып. I. СП. *1913* էր. *131.* յօդուած I. A. Орбели ի։ Փակագծերինը մեր յաւելումներն են, ընկած երկու քարի տեղը։

+ Ես Ներսեհ ապոհւպատ պա(տրիկ Շիր)ակայ
եւ Աշարունեաց տէր շի |
նեցի զեկեղեցիս յանուն սրբ(ո)յ Աստուա-
ծածնին ի բարեխաւսու |
թիւն ինձ եւ Շուշանայ ամուսնոյ իմոյ
եւ | Հրահատայ որդւոյ մերոյ։ +

6. Մրենի արձանագրութիւնը, տաճարի արեւմտեան պատի ճակատին, տարաբաղդաբար թերի նաև այն մասում, ուր թուագրութեանն է։ Հակառակ ընդհանրացած կարծիքի Մրենի տաճարի շինութիւնն ընդունում ենք կառուցուած վեց հարիւր երեսնական թուականների վերջերին, Դաւիթ Սահառունու Կուրապաղատութեան ժամանակ 638—640 թթ.ին (Հմմ. և Христ. Востокъ. Томъ II, выпускъ I. СП. *1913.* էր. *132*)։ Առաջին տող սկզբից և վերջից պակաս, իսկ վերջում փակագծի մէջ առնուածը, քարեր ընկած լինելու պատճառով։ Սկզբում թուագրութիւնն էր Հերակլի թագաւորութեան տարիներով։ Միւս լրացումները առաջին և երկրորդ տողերում պակաս են, լուսամուտի աջ կողմից մի քար ընկած լինելու պատճառով։

Արձանագրութեան բնագիրն է.

1. . . . որդի Հերակլի բարեյաղթող թագաւորի յիշ-
խանութե . . . (Դաւ(թի ա) մենագով պատրիկի Կու-
րապաղատի եւ սպարա(պետի Հա)

2· ոց եւ Ասորւոց եւ յեպիսկոպոսութեանն սրբա
(սիրի Թ·ե) ովփիղոսի եւ ի տանուտերութեան Ներ
սե (Հի Շիրա)
3· կայ եւ Աշարունեաց տեառն շինեցաւ սուրբ
եկեղեց(իս ի բարեխաւս)ութիւն
կամարակաճնայց եւ Մրենոյ ամէն...

7. 8. Մաստարայի արձանագրութիւնները շինութեան ժամանակից հինգ են, բայց այստեղ իբրև գրութեան օրինակ մէջ ենք բերում երկուսը. առաջինը եկեղեցու հարաւային թևի (խաչաձև գրսից) լուսամուտի գլխին, երկրորդը նոյն թևի արևմտեան պատին և երկու տողն էլ արևմտեան թևի հարաւային պատին։ Արձանագրութիւնները ոռոշ տեղերում փչացած են, անընթեռնլի։ Հարաւային պատի արձանագրութիւնը թուագրուած է Գնունեաց (ԳնԹունեաց ?) Թեոդորոս եպիսկոպոսի անունով, որ ժամանակից էր Ներսէս Գ-ի նախագահութեամբ 648 թուին գումարուած Դունայ ժողովին։ Ուրեմն արձանագրութիւնները պէտք է Է. դարու երկրորդ կառորդի գործ համարել։

Առաջին արձանագրութիւն։

1· Յամս տ՟ն Թեոդորոսի
2· Գնունեաց եպիսկապոսի
3· շինեցաւ ա՟ ծաին տունս
4· քաւել զԳրիգորաս ան
5· ար ժան
6· · · ա ծ? գԹա ի Գրիգորաս մեղաւոր եւ ինձ
կեսի · · · (այս տողը կիսաշրջանաձև լուսամուտի գարնէգի գլխին)։

Մաստարայի երկրորդ արձանագրութիւն։

1· + Գոհանամ ա՟յ որ ետ ինձ Գրէ
2· գորաայ սիւնիսի(?) եւ ըղձայե
3· լոյ որդւոյ եղբաւր Գրիգորի
4· շինել զ(տաճար փ)առաց եւ սովաւ
5· · · · էպիսկոպոս Ապահունեաց
6· (արևմտեան թևի վերայ) սա է ապ · · · ազգա
7· աւ ապաւ[Թա]յան արդարոց քաւարան

8· (արեմտեան թեի վերայ) մեղաւորաց յիշատ
9· ակարան ինձ եւ ի մ(ոց) եւ որք աղաւթէք.
(զ)մեզ յիշեցէք

Առաջին արձանագրութիւն. Առաջին տող. «ա՟ն» սղագրութեամբ. «Թեոդորոսի» բառի մէջ ոս մնացած։ Երկրորդ տող. «Գնունեաց և «եպիսկոպոսի» բառերի մէջ, ու, պի, մնացած։ Առաջնի Ո-ի կամարի տակ մի գծիկ կայ, որ մտածել է տալիս, թէ կարող է ու լինել, որով «Գնթունեաց» կկարդացուի։ Երրորդ տող. «շինեցաւ», ընդգծուածը մնացած, «ա՟ծածն» սղագրութեամբ։ Վեցերորդ տող սկզբից պակաս (Ք ո՟ ա ծ ?), «մեղաւոր» բառի մէջ «ղ» մաշուած։

Երկրորդ արձանագրութիւն, Առաջին տող. «Ա՟յ» սղագրութեամբ։

Հինգերորդ տող. «Ապահունեաց»—ընդգծուածը կապակցուած տեղ չլինելու պատճառով։

9. Գրիգոր Մամիկոնեանի արձանագրութիւնը Արուճի Ս. Գրիգորի արեւելեան պատի վերայ, գրուած 668 թուին։ «Ի եւ Թ ամի Կոստանդնի» թուագրութիւնը համարում ենք ճիշդ (հակառակ. І Орбели. Багаванская Надпись 639 г. հմ. Христ. Востокъ Т. II. եր. 138—142)։ Արձանագրութեան մեծութիւնն է 127×62 սմ.։

Երկրորդ տող. «աւր» բառի մէջ ր կարդում է։ Արձանագրութեան տակ «ողորմեա ք՟ս ա՟ծ» յետին ժամանակի գրուածք է։

Ի եւ Թ ամի Կոստանդնի մարե
րի ամսոյ որ աւ(ր) Ժ եւ Ե հիմն
արկեաւ սուրբ կաթողիկէս
ի ձեռն Գրիգորի Մամիկոնենի
Հայոց իշխանի եւ Հեղինէ
ի նորին զուգակցի
ի բարեխաւսութիւն շինաւ
ղաց զսա։

10 Արտաւազդ Կամսարականի տաճարի արձանագրութիւնն է։ Կարծում ենք Հրահատայ որդի Արտաւազդը Ներսէհ Կամսարականի թոռն էր և վախճանուել է Ը. դարու առաջին քառորդին (Տես և Եջմ. և հայ հնագոյն եկեղ. Մեսրոպ վրդ. եր. 105)։ Տաճարի վերին մասը բոլոր օրօրոցաձև է, որ յատուկ էր արաբական շրջանի շինութիւններին։ Երկարութիւնն է 2 մ. 47 սմ., իսկ արձանագրութիւնը (կամարչի հարաւ նայող կողի վերայ) 75×50 սմ.։ Վերարտադրութիւնը շատ անբաւարար է, կերած են տառերի ընդերք և նոյնք գծերից շատերը. լուսանկարուած է էստամպաժից, անյարմար պայմաններում։ Գերեզմանը գտնւում է գետնայարկ կամարի տակ։

1· + Ածա հրամանաւք եւ ք՛սակոչ հրաժարման (sic)
2· մամբ ի սմա է հանգուցեալ ընդ հայս իւր
3· երանելի տ՛ր Արտաւազդ Կամսարական ապա-
հիւպատ
4· պատրիկ եւ իշխան հայոց որդի Հրահատա
5· պատրկի Շիրակայ եւ Աշարունեաց տ՛ն՛ն եւ
6· ամուսին Շուշանայ Մամիկոնենի·

Առաջին տող. «Ա՛ ծահրամանաւք», «Ք՛սակոչ» բառերի մէջ ընդգծուածները կրճատ։ «Հրաժարման» բառի մէջ ընդգծած մասն անյայտ։ Երկրորդ տող. «ընդ»-ի մէջ ր-ի գլխիկը փչացած։ Երրորդ տող. «տր» կրճատ։ Հինգերորդ տող. «տ՛ն՛ն» կրճատ։

11. Ոսխաստուր վանականի *արձանագրութիւնը 783 թուականից Թալինի Մայր եկեղեցու ձախակողմեան սեան արեւմտեան երեսին։ Արձանագրութիւնը գրուած է բոլորաձև, ուղղանկիւն երկաթագրի, երբեմն և բոլորգրի ու շեղագրի ձևերով. որով և առանձին ուշադրութեան արժանի։ Եթէ չհաշուենք Անիի Մինջաբերդի եկեղեցու Աբրահամ վարդապետի արձանագրութիւնը, սա առաջինն է, ուր գործածուած է Հայոց թուականը։*

Արձանագրութեան մեծութիւնն է 100×51 սմ., մեր նկարը 17½×8½ սմ.։

1· ՄԼԲ թուակ(ա)նութեան հայ
2· ոց ես Ուխտայտուր վանա
3· կ(ա)նս եւ Տուտի եղբայր իմ քեր
4· աք (դ)աղթիւրանիս ի Քարկապ(ա ?)
5· նու ? առեն ի Թալին· թե յիշխ(ա)
6· նաց ոք խլե իմ մեղացս (պար)
7· ր(տ)ական եղ(ի)ցի·

Առաջին տողում փակագծի մէջ եղած ա մենք ենք աւելացնում, կտրուած է, չի երևում։ Երրորդ տողինը նոյնպէս. նկատելի է Ն-ն միայն կիսով չափ. Ը կտրած է։

Չորրորդ տողում. առաջին Ք երևում է կիսով չափ. Դ մենք ենք աւելացնում ենթադրութեամբ, մի տառի տեղ մաշուած է արձանագրութեան մէջ. «Քարկապա | Նու» բառի մէջ Ք նկատւում է, թէև աղօտ. Պ-ին կից է երևում մի տառի մաս, որ Ա ենք կարդում։

Հինգերորդ տողում Նու վանկի մէջ երևում է քիչ Ն-ի ներքին մասը. ամեն (ամեն ?) բառից առաջ Ւ-ի նման տառի մնացորդ է երևում. Ծ-ի գլխիկը հորիզոնական մի գիծ է առանց ցած իջնող մասի, որ Գ-ի ձև է

տուել. այդ պարզ է թէ արձանագրութեան և թէ մեր լուսանկարի մէջ, որով ե շեղագրի սկզբնաձևն է։ Փչացած է խ-ի բնորոշ գլխիկը. ա չի երևում։

Վեցերորդ տողի ճ *չի երևում. պար կտրած է։*

Եօթերորդ տող. Տ-ի վերին գլուխը միայն նկատելի. ճ *եղծուած է, փակագծի* ի*-ն կտրած։*

12. *Արուճի Ս. Գրիգորի վերայ Վասամա որդի Գրիգորի արձանագրութիւնը ձախ դասի արևմտեան պատի արևելեան երեսին, 867 թուականից։*

1· ՅԺՁ *թուականին Հայոց յի*

2· *շխանութ՟ի Աշոտոյ եւ ի տերութ՟ի Սմբատայ*

3· *Հայոց ասպարապետի Բագրատունոյ եւ ի կաթողիկո*

4· *սութ՟ի Զաքարիայի եղեւ կռիւ ընդ Յարուճ եւ ընդ Կոշ եւ*

5· *ընդ գաւառն. եհար Արուճ զԿոշ եւ զգաւառն եւ կալաւ*

6· *զԿոշա վանականն եւ ի Քրիթավանին ընդ անկին մինթա*

7· *նի! վաճառեցին. ես Գրիգոր որդի Վ՟աւամա ծառա Ս*

8· *մբատա Բագրատունո եկի հրամանաւ Սմբատա եւ ես*

9· *հաւասարեցի զՋուրն ընդ Կոշ եւ ընդ Յարուճ գին*

10· *չ իւրեանց ընիկ ռամ էր լեալ։ Ա. եւ կէս Կոշա եւ. Ա. Արճ*

11· *ո. արդ եթէ այլ ոք հակառակել ջանա այլ աւելի ռ*

12· *ամ յուղէ.* ՅԺԲ. *սուրբ հայրապետացն նզել լիցի եւ*

13· *ի Սմբատա մահուամբ (բաց) պատուհասի։*

Ուշադրութեան արժանի են երկրորդ և երրորդ տողերի մէջ թիւ 6 *վերջաւորութեան պատուով կամ կրճատ* [*գրութիւնները. Հնագոյնը հայ սղագրութեան մէջ, բացի «Ա՟ծ, Ք՟ս» բառերից։*

13. *Թալինի Մայր եկեղեցու արձանագրութեան մի կտոր 851 թուականի, որ Էջմիածին է բերել Տ. Խաչիկ ծ. վարդապետը։ Քարի մեծութիւնը 54×16 սմ. է և մեր նկարը 13×10½ սմ։*

1· ՅԾ Թվակա··
2· յ՞այ Աշոտի բ··
3· նի եւ ազատե··
4· իւր հոգեց եւ վ··
5· ըոլթեն մա··

Երկրորդ տող. «յ՞այ» կրճատ «Աշոտի» բառի մէջ շ անսովոր ձեւով, բոլորաձև մասը շրջած հակառակ կողմը։

14. *Ագարակ գիւղի եկեղեցու գերեզմանատանը Սահակ իրիցորդոյ տապանի արձանագրութիւնը 941 թուականից. նկարուած է միայն արձանագրութեան մի մասը, քարի հարթային կողի վերայ, որպէս օրինակ անվարժ արձանագրական գրչութեան։ Գերեզմանը օրօրոցաձև է, մի ստորին պատուանդանով, որ նոյն քարի մասն է։ Երկրորդ տողի մէջ ան փչացած։*

Այս է հանգիստ ··· (ողնաշարի վերայ) |
Դէ Սա հակ իրիցորդոյ |
Թվական ՅՂ·

15. *Տեկորի գերեզմանատան խաչքար 964 թուի, որ հետաքրքրական է գրի անսովոր և շեղագրին մօտեցող ձեւերով։ Հարցականով նշանակուած տառն անընթեռնլի։*

+ Թ· ՆԺԳ·
+ Ես ?ա|տապ ծառա ա՛յ որ | կագնեց|ի
զխաչս | զայս

16. *Վայոց Ձորի Խոտակերաց կամ Բարկուշի վանքի արձանագրութիւնը 910 թ.։ Տարաբաղդաբար արձանագրութիւնը շատ է խանգարուած, և տեղն ու տեղը ժամանակի սղութեան պատճառով հնարաւորութիւն չունեցանք վերծանելու. հետաքրքրուողները կարող են ի նկատի ունենալ Օրբէլեան. Ա. Փարիզ. եր. 582 և Ալիշան. Սիսական եր. 169։ Վերարտադրութիւնը աղօտ է, ինչպէս իսկականը, բայց հետաքրքրական է իբրև միակ* արձանագրութիւն. *որ փորագրուած չէ, այլ* գծերով միայն ծռուած։

17. *Գրիգոր Համզէ Պահլաւունու արձանագրութիւնը Ժ. դարու երկրորդ կիսում, Անիի Ապուղամրենց Ս. Գրիգորի արեւելեան պատին։ Ա-ի այս ձեւը Ժ. դարից յետոյ չի կրկնւում։*

+ Ք՛ս ա՛ծ յորժամ | գաս փառօք (sic) հաւր
ի նորոգել զերկիր | ողորմեա Գրի գ որո ծա |
ռայի քո·

18. Կեչառուաց Սուրբ Աստուածածնի տաճարի հարաւային դրան կամարակալ քարի վերայ Հասանայ որդի Գրիգոր Մագիստրոսի արձանագրութիւնը 1003 թուականից, քարի գրութեան ամենագեղեցիկ օրինակներից մէկը։ Թուականի տառնաւորը կարելի է միայն Ծ ուղղել, թագաւորի և կաթուղիկոսի անուանն ի նկատի ունենալով, թէև Զ է գրուած։

1· + ՆԶԲ թ· Հա· ի թագաւորութե
2· ան Գագկա եւ ի հայրապետութեան տ՛ն
3· Սարգսի ես Գրիգ ո ր մագիստրոս որդի Հասան
4· ա շինեցի զեկեղեցիս ինձ ի բարեխօսութ՛ն եւ ի
5· մ պատրոնին եւ իմ որդեացն· որք ընթեռնոյք զ
6· իս յաղաւթս յիշեցէք ի Ք՛ս աղաչեմ

Երրորդ տողի «Գրիգոր» բառի մէջ վերջին երկու տառերը միացած են։
Հինգերորդ տողի «որդեացն», «որք» բառերի մէջ ընդգծուած տառերը միացած են։

19. Երերոյքի արձանագրութիւնը հարաւային դրան գլխին 1028 թուականից։ Գրութեան այս ձեւը տարօրինակ է, բայց ոչ բոլորովին հազուագիւտ ԺԱ. դարում։ Այստեղ խառը գործածուած են երկաթագրի, բոլորգրի և շեղագրի ձեւեր։ Արձանագրութեան մի մասը թափուած է գետին, բայց մենք չենք նկարել։

1· + Յանուն ա՛յ ի թվականիս
2· ՆՀԷ ես բարեպաշտ թագուհս
3· դուստր Աբասա Սմբատ Շա
4· հանշահի կինս եւ Աշոտոյ մ
5· այրս որ ազատեցի զՆերերվայց թաստ
6· ակաս յորդէց յորդիս Սմբատ Շահան
7· շահանի (sic) հզուրի (sic) եւ արքաի արեւշատու
8· թեան եւ Աշոտոյ եւ . . . .

20. Վեստ Սարգսի արձանագրութիւնը 1033 թուից, Խծկոնից Ս. Սարգսի հիւսիսային պատին։ Ուշագրութեան արժանի է այս արձանագրութիւնը իւր շատ խոր փորագրութեամբ։ Երեսը ներկուած է հաւանօրէն ԺԳ. դարում, որ անսովոր երեւոյթ չէ։

1–4. Ցանու|ն ա՞յ ՆՁ | Բ Թուա|կանիս

5. հաոց տ՞ն Պետրոսի հաոց կաթողիկոսի եւ ի թագաւորութեան

6. Սմբատա Շահանշահի որդւո Գագկա Շահանշահի ժամանակի,

7. որ եր որդիացեալ եւ սիրեղի ճորտ Սարգիս. Գ.ից թագաւորաց Հոռոմ

8. ոց առեալ. Գ.ից պատիւ անթիպատ պատրիկ, վէստ եւ դուկ արեւեղից. արդ հր

9. ամանաւ սոցա կամ եղեւ. Բ. յեղբարց որդոցս Եղդու Ապլ Համնա եւ Խատապ

10. ա տալ զմեր արկեալ եգին որ ի Գագկաւնս յեղերն Երասխա ի վանքս Տեկորո

11. արեւշատութեան շահի (վերջին բառի վերան կէտեր. Շահանշահի, թէ ջնջուած) եւ դուկիս մեր եւ մեր ծնողացս մեղաց թողութեան.

12. թե ոք այս գրոյս հակառ կա եւ յես ի սրբոցս հանէ, զաւձին, կախնի, Ցուդ

13. ալի, խաչահանուացն զանեծս նա առցէ ՅԺԸ հայրապետացն նզ

14. ոլած է. ս'ք Ներոորդութենէն մի գոցի ողորմութ ի ւն յաւուր դատ

15. աստանին. հայր որ ի վանքս նստի ամեն տարի. Դ. քառասունք կա

16. տարել պարտի մեր ծնողացն եւ յետ մեր վախճանի մեզ. թե ոչ ընդ նոյն ան

17. իծիւքս անգցի եւ առաջի ա՞յ մեր մեղացն պարտական ե.

Տասն և չորսերորդ տողում «ողորմութիւն» բառի ընդգծուած վերջաւորութեան մէջ թի միասին, և տողի գլխին։

21. Կեչառոյքի Ս. Աստուածածնի հարաւային պատի վերայ, երեք լուսամուտների տակ, Գրիգոր Մագիստրոսի մեծ արձանագրութիւնը 1051 կամ 1054 թուականից, եթէ առաջին տողի «հինգհարիւրերրորդի» բառի մէջ ընդգծուած երկրորդ ր սխալմամբ չէ գրուած։

1. + Ի հինգ հարիւրերրորդի ամի թուականութեանս թորգոմեան ի թագաւորութեանն ս՛ք եւ ինքնակալ թագաւորին Կոստ(ա)նդեա Մանումախին բերաւ ոսկի մատանիս, զոր հզաւրին եւ առաքինոյն բա(րե) |

2. պաշտին Գրիգորի մագիստուսին կիտաւնոին եւ դուկին Վասպուրականի եւ Տարաւնո Արշակունոյն եւ Հայկազն(ո)յն մեծաւ աշխատութ՟ք ազատեալ էր զմեծ եւ զհռչակաւոր եկեղ(ե)

3. ցկեա իւր եւ ոչ այլ ինչ հայցէ, բայց միայն աղաւթս առնել ս՛ք եւ ինքնակալ թագաւորին Կոստանդեայ. ընդ նմին ծա(ռա)յին Ք ի Գրիգորոյ եւ որդոց իւրոց եւ յիշատակ կարգեալ յեկեղեցիս Կ

4. եւչառուայ ցուր (sic) մագիստոսն կենդանի է ամեանէյն (sic) շաբաթ աւր զժամն Հասանա արացեն (sic) (արդեօք ա և-ի հետ միացած, չի նկատուած) անխափան. եւ յետ ելից մագիստ ռ ոսին արացեն (sic) անխափան. արդ որ ոք այսմ վճռի հաստատեն խափանել ջանա թ |

5. ե առաջնորդաց ոք իցէ կամ յիշխանաց կամ ի քահանայից այնպիսին Յ եւ ԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի եւ բաժինն ընդ Յուդայի եղիցի եւ ընդ տիրասպան քահանայիցն. եւ այս գիր մեր է Յովաննիսի շնորհւն Ա՟Յ ԲՁ |

6· նո էպիսկոպոսիս եւ ո՛ք եւ մեծի Հաւրս Բա-
րսղիս· էթէ ոք այս գրոյս խափանել ջանա, այնպի-
սին նզովս չարաչարս ընկալցի ի ո՛քո լուսաւորչէն
Գրիգորո եւ յամենայն ո՛բոց եւ ի մէնջ· կատա-
րիչք գրոյս աւՀնեալ եղ·

Առաջին տողում միացեալ տառերով են գրուած «Թորգոմեան», «ի Թագաւորութեանն», «Թագաւորին», երկրորդ տողի մէջ «Գրիգորս», «զհռչակաւոր», երրորդ տողի մէջ «Թագաւորին», «Գրիգորոյ եւ որդոց», չորրորդ տողի մէջ «որ ոք», հինգերորդ տողի մէջ «յառաջնորդաց», «շնորհն», վեցերորդ տողի մէջ «չարաչարս», «լուսաւորչէն Գրիգորս», «կատարիչք գրոյս աւհնեալ» բառերի մէջ ընդգծումները։ Չորրորդ տողի մէջ «որ ոէ», Է-ի գլխիկը սովորականի հակառակ ձեւով է գրուած։

Փակագծի մէջ առնուածները կորած են (երրորդ լուսամուտի կողքը), իսկ «հզաւրին» եւ զհռչ. բառերի մէջ ընդգծումները մաշուած, բայց հետքերը նկատելի։

22. *Հաւուց Թառի պարսպի արեւելեան պատին ժէ. դարում հագցրած խաչքարի արձանագրութիւնը 1081 թուականից։ Արձանագրութիւնը ենդաւոր է, դուրս ընկած. իւր տեսակի մէջ ինձ յայտնիներից ամենահինը։*

Յիշէ Ք՛ս զՀասան զորդ-
ի Սմբատա զծառա | քո եւ ողորմեա նմա ամէն։
Թվ։ ՇԼ։ էր։

23. *Ամիր սպասալար Զաքարիայի զօրավար Գրիգորի որդի Դաւթի արձանագրութիւնը 1214 թուից, Խծկոնից վանքի հիւսիս-արեւելեան պատին, Վեաս Սարգսի արձանագրութեան կից, ձախ կողմից։ Արձանագրութիւնը շատ խորն է փորագրուած և ներկուած է երեսը, ինչպէս Վեաս Սարգսինը։*

1· Յանուն ա՞յ ՈԿԳ։ թուականիս
2· ես Դաւիթ որդի Գրիգորոյ զ
3· աւրավար ամիր սպասալարին Զաք
4· արիաի տեսի զպայծառութի ո՛ք
5· ուխտիս Խծկաւնից ես եւ որդիք իմ
6· Հարազատք Գրիգոր եւ Գայլս Շէր
7· պարիք եւ էտու գիմ գնէփՀական
8· զգեւղն զՎաՀանաւձի ղըգկէան

9· ի ո՛ր Սարգիս յիշատակ ինձ եւ ծն
10· ողաց իմոց· վասն որոյ հայրս Յովհա
11· նէս եւ վարդապետս եւ այլ միաբա
12· նքս հաստատեցին զԴաւթի եւ զ
13· Յակոբա զՊաւղոսի եւ զՊէտրո
14· սի եւ զո՛ր Շողակաթին զպատարա
15· գն յամենայն ամի, որ լինի յամ
16· ենայն էկեղեցիքս, ինձ առնել ան
17· խափան· էթէ ոք հակառակի ի հար
18· անց եւ կամ ի պատրոնաց եւ զի
19· մ զյիշատակս խափանէ, ո ր չափ
20· ա ծ աւրհնած է, այնչափ այն մարդն
21· անիծեալ է (գարնէզի վրայ)·

Զորրորդ տողի մէջ «զպայծառութի» բառի ու. վանկի վերջին տառը միացած է թ-ի հետ։ Ութերորդ տողում «զըղկէան» բառի մէջ ղը միասին է գրած և գրչի սխալի արդիւնք է. նա կամեցել է «ըղ» գրել, բայց կրկին աւելացրել է զ նախդիրը։ Տասն և հինգերորդ տողի մէջ ու յարաբերականը միացած է։ Տասնիններորդ տողում «որչափ» բառի մէջ ու վանկը միացած է։

24. *Ծաղկագիր Անիի թանգարանում, պրոֆ. Մառի պեղումներից. Ս. Գրիգորի բեմի ճակատի ծաղկագիր արձանագրութեան մի բեկոր, ԺԳ. դարից։ Երկար 70 սմ. մեր նկարը 15,2 սմ.։*

Գրուած է. Թե քաղաքիս Անո ո՛ր Սարգ

25. *Ծաղկագիր Սմագուի (Վայոց ձորում) Բուրթելաշէն երկյարկանի եկեղեցու արեւելեան պատին. քարի վրայ իւր տեսակի գրչութեան ամենագեղեցիկ օրինակներից մէկը։ Բուրթէլը Սմբատեան Օրբէլեանի եղբօր՝ Էլիկումի որդին էր, որ իշխում էր հայրենի գաւառներին իւր եղբօր Բուղտայի հետ ԺԴ. դարու սկզբին։*

Գրուած է. Բուրթէլ իշխանաց իշխան

26. *Ոծն Սարգսի ատփակ գերեզմանաքարի արձանագրութիւնը Կեչառուաց վանքի բակում, 1355 թուից, որոշ տառերը շեղագրի ձեւերով։ Մենք տեսել ենք Մաստարայում այսպիսի գրերով աւելի հին արձանագրութիւն ԺԳ. դարում, դարձեալ գերեզմանաքար։ Լուսանկարուած է* հսեամբաժից։

Այս է հա|նկիստ Սարգսի | որ կիսա|ւրեայ
վաղճան|եցաւ ի ձ|եռաց | այլազգ|ե ա ց (երկու
վերջին տառերը կորած) | արեմբ (sic) մկրտել | Թվին ՊԴ.

27. *Թանգարան Մ. Աթոռոյ. Պղնձի մեծ խաչ, շրթունքներին խոր ձուլուած արձանագրութիւն։ Տառերի մեծութիւնը եզերող գծերով 5 սմ.։ Ընդգծուածները «միաբանքս», «տանին» բառերի մէջ միացած։ Տանին բառի մէջ ու գլխիվայր ձուլուած։*

Ի Թ. ՈՋԱ. ես Զոսիմա քահա մեղապարտ ան-
ձամբ ստացա զքոյս յարդեանց իմոց. միաբանքս
էտուն ինձ ի տարին։ Ա։ ժամ Գորգա զաւրա-
վար. տանին.

28. *Խոտակերաց Ս. Նշանի արծաթեայ, ոսկէզօծ պահարան, Պռոշեանց տոհմի Էաչի իշխանի շինել տուած։ Արձանագրութեան տախտակը պարզ արծաթ, գրերը ելնդաւոր ձուլուած, 42×26 սմ., 1300 թ.։ Ուշադրութեան արժանի է այս արձանագրութիւնը տառերի գեղեցկութեամբ, այլ և յաճախակի և հին դարերի համար տառերի անսովոր միացութիւններով (լիգատուրա տես. պատկերը)։ ԺԳ. դարում շատ ընդհանրացած է այս ձևը վանքերի արձանագրութիւնների մէջ։*

Պահարանի և արձանագրութեան մասին տես. Գեղարուեստ № 4. և առանձին «Խոտակերաց Ս. Նշան». Թիֆլիս. 1912 թ.

1. + Կամաւ կարողին ա՛յ ես Էաչ
2. ի որդի Հասանա որդո Պռոշա
3. որդո մեծին Վասակա յազգէ
4. Հաղբակեանց տիրեցի հայրենի երկր
5. ի սիմո Շապունեաց եւ այլ յոլ
6. ով գաւառաց զաւրաւ|իգն եւ օգնա
7. կան ունելով զք ս եւ զս՛ բ նշանս
8. խոտակերաց, որով եւ նախնիքն իմ
9. զօրացան. ետու կազմել պահարան
10. սմին անգինի յիշատակ, որ
11. ք հանդիպիք սմա զիս եւ զծնո (sic)
12. ղսն իմ զԱմիր Հասան եւ զԹ.
13. աճերն եւ զհաւրեղբայրն

14. իմ զՊապաք յաղաւթս յիշե
15. ցէք, այլ եւ զամենայն նախ
16. նիան մեր եւ զազգատոհմ.

29. Նոյեան տապանի արծաթի պահարանի արձանագրութիւնը, Ս. Էջմիածնում, 51×25½ սմ.։

1. կամաւն այ ես
2. մեղաւծ (sic) եւ գծ ո ւ ն Դաւ
3. իթ ան ար ժան հաբեղէս աղ
4. գաւ Պուօշեցի տեղապհ (sic) վանիցս
5. ո՞ք Գեղ ա ր դայ շինել ետու եւ
6. գոյնըզգոյն օրինվածօք զա րդ
7. ա րեցի ըզպահ ա րանս Նոյեան
8. տապանիս, փրկայգործ ո՞ք տա
9. խտակիս որ աժմ կոչի ո՞ք Յակոբ
10. յիշատակ ինծ (sic) եւ իմ ծնողացն եւ
11. ամենայն արունատու (sic) մերձա
12. ւորաց եւ որ շատ եւ որ սակաւ
13. արթունք (sic) ունիցին այամն (sic) պահ
14. արանիս արն Ք՞ս հատուսէ (sic) ի միո
15. ւսանգամ (sic) գալըստեան ամէն
16. որ ոք կամեսցի հանել վանի
17. ցս ո՞ք Գեղարդայ կամ ծախել կամ
18. գրաւին դնել ասկայնոցս (sic) եւ
19. այլց (sic) յանէծս կայենայ եւ
20. Դադանայ եւ խաչայհան
21. վացն առցէ ամէն
22. շինեցաւ ձեռամբ Քան
23. աքեռցի մեղապայպարտ ոս
24. կէրին Աւէտին թ. ՌՃԽԷ.

30. Գեղարդի պահարանի արձանագրութիւնը 52×24 սմ.։ Պահարանի երեսը արծաթի թիթեղ է, ոսկէջրած, իսկ յետևի կողմը, ուր արձանագրու-

թիւնն է, մաքուր արծաթ։ Պօղի շինած պահարանը ԺԳ. դարում նորոգուած է 1686 թուին, Գեղարդայ վանքի առաջնորդ Դաւիթ վարդապետի ձեռքով, որի արձանագրութիւնը նոյնի տարանի վերայ տեսանք վերեւ։ Արձանագրութիւնը որպէս գրչութիւն ԺԷ. դարու գործ է։ Ոսկերիչներն են Գրիգոր և Սարգիս։ 25—28 տողերն ըստ բովանդակութեան սոյն ժամանակից, բայց Պօղի արձանագրութեան մասեր չեն։ Այս և նախընթաց արձանագրութիւնների մէջ հնարաւոր չեղաւ ընդգծումներով մատնացոյց անել իրար կպած տառախմբերը. ընթերցողը պատկերի մէջ պիտի որոնէ հարկաւոր ժամանակ։ Պահարանն այժմ գտնւում է Ս. Էջմիածնի մասանց խորանում։

1· ի թվին ՉԺԷ
2· Այս արփիափայլ նը
3· շան ահաւոր եւ ածային
4· զէն անպարտելի ներկեալ ար
5· եամբ որդ‧ոյն . . . ածամուխ . . (երեք տառ)
6· . . (երկու տառ) ամբ մեծ եւ հզօր սպանիչս միշա
7· պին, որ զցօղ անապակն (sic) արեանն է
8· հեղ ի փրկութ՟ի ՟ի· այս գեղ
9· արդ ա՟ծաշուք եւ հիազօր արձան լուս
10· (ա)տու կանգնեալ ի փառս Հայաստան ՟ի
հրափայլ եւ
11· ծաղկանկար արեամբն Ք. ի վառեալ եւ վա-
ելչացեալ պսակ պար
12· ծանոց կաթուղիկէ եկեղեցւոյ եւ թագ ար-
քունական
13· ի գլուխ քրիստոնէից· ուստի ի կամս բար-
ձրելոյն
14· զօրհնեալ (sic)· ես Պօղ իշխան որդի Վասակա ար
15· ժանաւորեալ ա՟ծաղէն ս՟ք նիզակիս զարդա-
րեցի
16· զսա պատուական պահարանաւ բարեխօս ինձ ու
17· նելով յահաւոր ատենին Ք՟ի· եւ մեծաւ յու-
սով ըն

18· ծայեցի յիմ գանձագլին գերեզմանատունս
19· ի ս՟ք ուխտս Այրիվանից յիշատակ յաւիտե-
նական
20· ինձ եւ զաւակաց իմոց Պապաքին Ամիր Հա-
սանին
21· եւ Վասակա եւ կենակցի իմոյ Խութլու խա-
թունին ի ք՟ս
22· փոխեցելոյ եւ Մկդեմին եւ Գօհար խաթունին,
23· որ կխօրեայ ելին յ—է· յորոց վերա ամենե-
ցու(ն)
24· սոցա կենդանեաց եւ մեռելոց ծագէ շնորհ ս
25· զօրութեն Ք. ի միշտ եւ հանապազ·

25· Եւ փոխանակ այ
26· սմ նիզակի շնրհեցէ ք՟ս բարեպաշտ իշխա
27· նին Պռոշա խորան արեգակնափայլ եւ անճա
28· ռելի եւ լուսափառ պսակ կազմեալ ի ձեռն Ա.՟յ·

29· Իսկ ի թվին ՌՃԼ.Է—Զ ին եւ Դաւիթ վարդապետ
30· առաջնորդ ս ք ուխտին Այրիվանից յազգ
31· էն Խաղբակա եւ Պռոշա որդի Խանիկին ե
32· տու նորոգել զպահարանս Գեղարդա առա
33· ւել պայծառ քան զառաջինն սակս յուսոյն
34· զոր առ Ք.ս, յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ
35· հօրեղբարցն իմոց Դաւիթ եպսին եւ Ստեփան
36· նոս վարդապետին հանգուցելոց ի Ք.՟ս եւ
37· եղբարցն իմոց Բէկս(աւ?)սին, Կիրակոսին եւ
քեռին ի
38· մոյ Մարիամու, յորոց առհասարակ կենդա-
նեաց եւ մեռ

39. ելոց ամենեցուն ողորմեսցի եւ զկազմողի սորի
40. ն Գրիգորի եւ Սարգսի։

31. *Թալինի Մայր եկեղեցու ձախ աւանդատան պատի վերայ, բարձր եղել են երկու արձանագրութիւն որմանկարների մասին ծեփի վերայ, տարաբաղդաբար մէկը բոլորովին փչացած է, իսկ միւսը կիսով չափ։ Արձանագրութիւնը թուական չունի, բայց հնագրական նշաններից դատելով կարող է Ժ. դարու գործ լինել։*

Ես Մովսէս նու | աստ եւ անարժա(ն) | եկե-
ղեցապան | սրբոյ եկեղեցւոյ | ւ ոյս (ընդգծուածը մաշուած)
եստու կեն | գանագրել զս | ուրբ կաթողի (ընդծուածը
ջնջուած) | կէս ի բարեխաւ ս | ութիւն ինձ եւ | ծն...

32. *Մատ. Ս. էջմ. № 1988/1958, Հակաճառութիւն Տիմոթէոս Էլուրոսի* (Λύσορος) մագաղաթ, *հատ. 321 թերթ, սկզբից ու վերջից մի քանի թերթով նորոգած։ Գիր. Միջին, ուղղանկիւն երկաթագիր, վերնագրերը փոքր երկաթագրով, մի իջեան $22^1/_2 \times 12^1/_2$ սմ.։ ԳՐԻՉ, ՏՍԱՑՈՂ և ԺԱՄԱՆԱԿ. Անյայտ, բայց նախ քան Ժ. դար (Ը—Թ), հնագրական նշաններից դատելով։*

Ծանօթ. *Այս Ձ.-ը* unicum *է, յունարէն բնագիրը կորած է և հայերէն թարգմանութեամբ միակ ձեռագիրն է։ Ուրիշ լեզուով ամբողջական թարգմանութիւն յայտնի չէ։ Հրատարակել են Կարապետ ծ. վարդապետ և Երուանդ վարդապետ. Ս. էջմ. 1908 թ։*

Նկարուած է 128ա. բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

33. 34. *Մատ. Երուս. Ս. Յակոբ. № 2555. Աւետարան, մեծադիր.* մագաղաթ *հաստ և կոշտ։ Ձեռագիրն անթուական, բայց մէկը հայ գրչութեան Ժ. դարուց առաջ եղած մնացորդներից։ Կարծում ենք* Ը—Թ. դարու գործ։ *Բուն ձեռագիրը գրուած է խոշոր,* բոլորաձև երկաթագրով։

ա) Բնագրի առաջին տողը 10,2 սմ., մեր նկարը 9,5 սմ.։

բ) 12ա. տողի երկ. 9,1 սմ., մեր նկարը 8, 9 սմ. գրեթէ նոյն մեծութեամբ։

35. *Պատառիկ* (Fragment) *Տ. Խաչիկ ծ. վարդապետի։ Մի թերթ $34^1/_2 \times 25^1/_2$ սմ.,* մագաղաթ, *յիշատակարան պոկած Ջիւանշիրի գաւառի Մեծ չէն գիւղի աւետարանից։ Գիր. Բոլորաձև երկաթագիր, թէ բնագիրը և թէ յիշատակարանը։ ԳՐԻՉ Թութայել. ՏՍԱՑՈՂ. Աշոտ իշխան. Տեղ, Կոստանդնուպոլիս։* Ժամանակ. *909 թ. փրկչական. ՅԾԸ. թ. Հ.։*

Ամբողջ յիշատակարանն այս է. « . . . զրաղձանս ներանձնա ւեալ նուննախոհի և մտա|հարուստ ընթերցասիր|ական ուշմագունի և|մեծասքանչ անուն| հայոց սպայապետի | աւնլով ամենափառ | և հրաշազարդեալ ա՞ծ|ավայելուչ

և ք՞ս|ասէր ս՞ն Աստոյ իբրև | գբրաքիովն ներքնծայեաց գչորից աւետարան-
չացն գարտա|նաառութիւննի ի՞մի | նաւանելով առ ի յիշատակ ստացողին եւ
ըն|ծայացելումն ՑՏՐ | բուականութեանն * | հայոց. հրամանաւ տ՞ն | Աշոտոյ.
ք՞ի Ա՞յն մերոյ փառք յաւիտեան . . » Ընդգծուածը տես պատկերի մէջ
Տախտակ ԺԶ։

Բնագիրը $13^1/_2 \times 7$ սմ., մեր նկարը $8^1/_2 \times 4^1/_2$ սմ.։

36. *Մատ. Ս. Էջմ. Գ. 102|2679. Ժողովածու պատմական—ժամանա-կագրական կարևոր նիւթերի։ Թուղթ (Հայոց ձեռագիրների մէջ ամենահինը). $28,2 \times 19^1/_2$ սմ., միջնեան 24×14 սմ.։ ԳԻՐ. երկաթագրախառն բոլորգիր։ ԳՐԻՉ. Ղուկաս, որդի Դաւթի քահանայի $152^{ա}$, $86^{բ}$ «Յիշեսջիք ի ք՞ս գիս, զԴաւիթ քահանայ, որոյ գիրս գրեցաւ եւ զորդի իմ զՂուկաս, որ գծագրեաց խակ զատ»։ ՍՏԱՑՈՂ. Դաւիթ քահանայ՝ գրչի հայրը. «զԴաւիթ քահանայ յի-շեսջիք ի ք՞ս, զստացող ս՞ր գրոցս» $59^{բ}$.։ ՏԵՂ. Անյայտ։ ԺԱՄԱՆԱԿ 971 Թ. փրկչական։ «Տ՞ր յ՞ս ք՞ս միածին որդի ա՞յ, ողորմեա Գիչին եւ Ազիզ մամին եւ զաւակաց նոցա, ա՞ր Սարգսի, Կարապետին եւ Մելքիսեդեկա եւ մեղա-ւոր աւագ էրէց Յովհաննիսի որդւոյ Գիչի, որ զգրկանքս գնեցի, եւ յետ ՄԾԴ ամի զցանկս յաւրինեցի ի ՈՀԴ Թուականիս», $163^{ա}$։ Նորոգութեան յի-շատակարան ունինք 981 Թուից. «Եւ է է նորոգումն սորա ի Ն՞Լ Թուակա-նութեանս Հայոց», $152^{ա}$։*

Ծանօթ. *Ձեռագիրը արժանի է առանձին ուշադրութեան ոչ միայն իբրև Ժ. դարու միակ Թղթի ձեռագիրը Հայոց մէջ, այլ և իւր գրի ու հարուստ բովանդակութեան համար։*

Նկարուած է $233^{բ}$., բնագիրն է $9^1/_2 \times 13,8$ սմ., մեր նկարը $9,1 \times 13,2$, չնչին տարբերութեամբ փոքր։

37. *Մատ. Ս. Էջմ. Գ. № 159/2684։ Մեկնութիւն Երգոց երգոյն Գրիգորի Նիւսացւոյ, հաստ և կոշտ մագաղաթ, $28^1/_2 \times 21,2$ սմ., Թերթ 246։ ԳԻՐ. Մի-ջին, ուղղանկիւն երկաթագիր, երկիջեան $21^1/_2 \times 6^1/_2$ սմ.։ ԳՐԻՉ. «Զեռամբ Գեորգայ անարժան գրչի»։ ՍՏԱՑՈՂՔ Հայր Կիւրակոս և միաբանութիւն. «հրամանաւ հաւր Կիւրակոսի եւ համակամութեամբ եղբարցս»։ ՏԵՂ. «ի գա-ւառին Տարաւնոյ»։ ԺԱՄԱՆԱԿ. 973 Թ. փրկչական. «ՆԻԲ» Հայոց։*

Ծանօթ. *Այս Ձեռագիրը արժանի է առանձին ուշադրութեան, իբրև մէկը Ժ. դարու գրչութեան հաղուագիւտ Յիշատակարաններից, որ Աւետարան չէ։*

Նկարուած է ա) $245^{ա}$. յիշատակարանը, որ միջին երկաթագրի տարբեր տեսակն է, շատ գեղեցիկ և կանոնաւոր։ Բնագիրը և մեր նկարը նոյն մե-ծութեամբ։

բ) $245^{բ}$. Շեղագիր, ՈԸ=1159 Թուի. բնագիրը և մեր նկարը նոյն մե-ծութեամբ։

38. **39**. **45**. *Ախալցխայի գաւառի Ծրդուբ գիւղի Աւետարան. Մա-գաղաթ. 31×25 սմ.։ ԳԻՐ խոշոր երկաթագիր. յիշատակարանը խաչաձեւի մէջ, միջին երկաթագիր։ ԳՐԻՉ. «Յովհաննէս ծառայս ք՞ի» Աւետարանի համար,*

իսկ յիշատակարանի գրիչն է «Եղիա քահանայ եւ կրաւնաւոր»։ (Տես յիշատակարանի նկարը)։ ՍՏԱՑՈՂ. Յիշատակարանի գրիչ Եղիա քահանայ։ ԺԱՄԱՆԱԿ. 974 Թ. փրկչական. «ՆԻԳ Թուականութեանս Հայոց»։

Ծանօթ. Յովհաննու աւետարանի մեծագոյն մասն առնուած է մի ուրիշ, ուղղանկիւն, խոշոր երկաթագրով աւետարանից և կցուած սորա հետ։ Այս աւետարանի մասին տես մեր յօդուածը, Արարատ 1898 Թ. ԺԱ—ԺԲ.։

Նկարուած են. ա) Յիշատակարանը, Աւետարանի սկզբում, միջին երկաթագրով. 26×21½ սմ., մեր նկարը 14½×11,8 սմ.

բ) Բուն աւետարանից 1ա. (Թերի սկզբից) 26×9 սմ. իւրաքանչիւր էջը., մեր նկարը 13½×4,7 սմ.։

գ) Յովհաննու աւետարանից, տարբեր գրիչ, 294ա. 28×8½ իւրաքանչիւր էջը. մեր նկարը 14½×4,6 սմ.։ Համարում ենք այս մասը Ժ—ԺԱ դարու գիր։

40. Ալէքսանդրապոլի Ս. Աստուածածնի եկեղեցու «Ամենափրկիչ» կոչուած աւետարանը. Մագաղաթ։ ԳԻՐ. մեծ երկաթագիր, երկսիւնեան, 18×10 սմ.։ ԳՐԻՉՆԵՐ Յովհաննէս 59բ և Յովսէփ քահանայ գրիչ 222բ։ ՍՏԱՑՈՂ. Կիրակոս վաճառական. «Ես Կիրակոս վաճառական յաւղնամեղ եւ անարժան ծառայ հանդերձ ընտանեաւք իմովք ցանգացող եղէ սրբոյ աւետարանիս . . .»։ ՏԵՂ. «ի գեւղաքաղաքն . . . (չի կարդացւում), որ կոչի Տրախուէր»։ ԺԱՄԱՆԱԿ. 988 Թ. փրկչական. «ի հայոց Թուականութեանն ի ՆԼԷ ամն (sic) գրեցաւ ս՛ր աւետարանս». տես նկարը. «ի հայրապետութեանն (Խա) չկայ հայոց կաթողիկոսի»։

Բնագիրը, 18×10 ս., մեր նկարը 15×7½ սմ.։

41. 42. 43. 44. Մատ. Ս. Էջմ. № 229/2374 (Կար. 222) «Փղոսկրէ Աւետարանը», կազմ փղոսկրի քանդակներով 36½×29½ սմ. մեծութեամբ, նկարազարդ, ընտիր մագաղաթ, 35×28½ սմ. Թերթ. 232։ ԳԻՐ. խոշոր երկաթագիր, երկսիւնեան 23½×7 սմ., Աւետարանը, «Առաջք»-ները (խորանները) Եւսեբիի և Կարպիանոսի թղթ. միջին երկաթագրով. Աւետարանացոյցը (տօների ընթերցուածների ցանկը) փոքր երկաթագրով։ ԳՐԻՉ. Յովհաննէս. ՍՏԱՑՈՂ. «Ստեփաննոս կրաւնաւոր և քահանայ Հայկազնեաս», այսինքն Սիւնեաց իշխաններից։ «Տ՟ն Ստեփաննոսի է սուրբ աւետարանս, աղէ դաս ո՞ր ի վայելումն մանկանց նոր սիոնի»։ Ստացող Ստեփանոսի հօրեղբայրն է Ստեփանոս եպիսկոպոս, Նորավանից հիմնարկողը։ ՏԵՂ. Նորավանք (Տես Օրբէլեան. Փարիզ. Ա. 290) ԺԱՄԱՆԱԿ. 989 Թ. փրկչական. «Եւ գրեցաւ յամի Թուոյ հայազանց։ ՆԼԸ։ եւ ըստ Թուոյ հոռոմի ՉԽԲ. յիմայէզական բանակալութեանն։ ՅՀԹ»։

Ծանօթ. Այս Ձեռագիրը հին գրչութեան և մանրանկարչական արուեստի նշանաւոր յիշատակներից մէկն է։ Տես Էջմ. Աւետարանը. Ստրժիգովսկի. Վիեննա, 1892։

Հատուածների գլխագրերը մեծ են միւս գրերից, բայց ոչ նկարչական, գլխից կամ պոչից երբեմն արմաւենիկի զարդ կցըրած։ Զ տառի ընդբոչ բոլորակը մի երկու տեղ մարդկային դէմքով։ Ոսկի չի գործածուած

բնագրի մէջ ոչ մի տեղ. բացառութիւն է 231ա. «Տ․ն Սանփաննոսի է սուրբ աւետարանս» խօսքերը, որ գրուած են խեցուկով։ Բնագրի համար յիշատակարանում կայ այսպիսի նկատողութիւն. «Եւ զսա լիցին հանապազ ընթերցեալ ի սուրբ եկեղեցւոջս (Նորավանից), զի ասոյգ ի ճիճ յաւրինակաց գրեցաւ»։

Նկարուած են ա) Աւետարանից հատուած, խոշոր երկաթագրով 90ա. բնագիրը 15,3×9 սմ., մեր նկարը 14 1/2×8,6սմ., քիչ փոքր։

բ) Առաջքներից Եւսեբիի և Կարպիանոսի թղթ. 1ա բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

գ) 1բ. միջին երկաթագրով բնագիրը 10,8×11,3 սմ., մեր նկարը 10 1/2×11 սմ.։

դ) Աւետարանացուցի հատուած 232բ. փոքր երկաթագրով։ Այս նոյն գիրը գործադրում է գրիչը աւետարանների մէջ տողավերջին, եթէ տեղ չի լինում խոշոր երկաթագրով վանկը վերջացնելու. տես 44 նկարի մէջ երկրորդ, իններորդ, տասնումէկ և տասներեքերորդ տողերի վերջերում։ Լաւագոյն ապացոյց, թէ երկուսն էլ նոյն գրչի գործ են։

46. 71. Մատ. Ս. էջմ. Գ. № 364, 2877. Աւետարան. քիչ զարդերով, մագաղաթ 33×26 սմ., թերթ 218։ ԳԻՐ. Ուղղանկիւն, միջակ մեծութեան երկաթագիր, (նման Ցար գիւղի պահպանակի աւետարանի գրին, որ Ժ-Ա. դարու գործ է. տ. պատկեր և § 48) երկէջ, 27×7 1/2 սմ.։ Թանաքի գոյնը ձգած, դեղնաւուն։ ԳՐԻՉ. Գրիգոր գրագիր.։ ՍՏԱՑՈՂ. Առաջինն անյայտ, վերջից թերի լինելու պատճառով։ Երկրորդ ստացողներ «ՈԼԲ»=1183 թուին «Յովսեփ գուխտ եւ Գոհարն եւ Սուքիաս երէց վանացս». առաջիններն ստացել և նորոգել են տուել երկրորդի համար։ ԺԱՄԱՆԱԿ. Անյայտ. Ժ—ԺԱ. դարու գործ ըստ գրչութեան աւետարանների։

Նկարուած են ա) 74բ. բնագիրը. 6,6սմ. առաջին տող, մեր նկարը 6 սմ. քիչ փոքր։ Ճեղագիր։ Խաչի արուեստն ու գոյները նոյն միւս զարդերի հետ։ Ճեղագիր յիշատակարանի թանաքը նոյն՝ Ձեռագրի թանաքի հետ, գոնատ, դեղնաւուն։ Նոյն գիրը 112ա. Ղուկասու սկզբնաւորութեան յուսանցքում «զկնի տ՞ր յերկնցին»։ Այս շեղագիրը, որ իւր ձեւերով միանգամայն նորի տպաւորութիւն է անում, համարում եմ Աւետարանի գրչի գործ, Ժ—ԺԱ. դարու։

բ) 219ա. 5 1/2×14,2 սմ., երկրորդ տողը, մեր նկարը 2 1/2×7 սմ.։ ԺԱՄԱՆԱԿ. փրկչական 1211 թ., Հայոց թվ. ՈԿ. տես նկարը 71. անվարժ շեղագրով։

47. Մատ Ս. էջմ. № 236/283, (Կ. 229) Աւետարան. հատ մագաղաթ 21 1/2×15 1/2 սմ., 361 թերթ։ ԳԻՐ, բոլորաձեւ երկաթագիր, մի իջեան, 15 1/2×11 սմ.։ Գրիչն է Թրխատափոր գրիչ։ ՍՏԱՑՈՂ. Սիմէոն քահանայ. ԺԱՄԱՆԱԿ 1033 թ. փրկչական ,ՆՁԲ. 361ա.։ Յիշատակարանը փոքր երկաթագրով բոլորագրի շատ ձեւերով։

Նկարուած է 263բ., բնագիրը 9×10 1/2 սմ. մեր նկարը 8,8×10սմ., գրեթէ նոյն մեծութեամբ։

48. *Պատառիկ* (Fragment) *Տ. Խաչիկ Ծ. վարդապետի. Դիզակի Ցոր գիւղի եկեղեցու ճաշոցի մագաղաթեայ պահպանակն է եղել։ Ամբողջը երկու թերթ է, Յովհաննու աւետարանի վերջը. ԻԱ. 17. «Եւ ասէ. տ՞ր, դու զամենայն գիտես . . . » ԳԻՐ. Աւետարանի* գիրը *ուղղանկիւն երկաթագիր, երբեմն բոլորագիծ, ինչպէս յ, գ-ի գլուխը. չափաւոր մեծութեամբ։ Այնուհետև փոքրիկ յիշատակարան և Աւետարանացոյց,* անցման երկաթագիր *բոլորգրով խառն։ Յիշատակարանը աւելի ուղղանկիւն, Աւետարանացոյցը թեք (վերջին երեք տողը նկարի մէջ)։ Աւետարանը երկիջեան է եղել։ ԳՐԻՉ. Մխիթար. ՍՏԱՑՈՂ. Ոստակէս քահանայ։ ԺԱՄԱՆԱԿ. 1040 թ։ փրկչական. «Գրեցաւ ս՞ր աւետարանս ի թուականիս հայոց ՆՁԹ»։*

Բնագիրը. 8×7 սմ., մեր նկարը 5½×5 սմ.։

49. *Մատ. Ս. էջմ.* Գ. № 23/3723. *Աւետարան, քառածալ,* մագաղաթ, *33,2×27 սմ., 242 թերթ։ ԳԻՐԸ. Խոշոր երկաթագիր, երկէջ, խորանները 29½×9 սմ., յիշատակարանը միջին երկաթագիր։ ԳՐԻՉ. «Յուսիկ յետին քահանայ եւ գրիչ». ՍՏԱՑՈՂ. Պետրոս Գետադարձ ? ԺԱՄԱՆԱԿ. 1044/5 թ. փրկչական. «ի կաթողիկոսութեանն տ՞ն Պետրոս հայոց վերադիտողի, ի թուականութեան հայոց ՆՂԴ»։*

Նկարուած է $63^{բ}$. յիշատակարանի հետ. բնագիրն է 18½×21 սմ., մեր նկարը 10×11½ սմ.

50. 51. *Մատ. Ս. էջմ. №906/988. (Կ. 886) Ճառընտիր Յովհաննու Ոսկեբերանի. հաստ և կոշտ* մագաղաթ, *34½×25½ սմ., 285 թերթ։ ԳԻՐ. Ճառերը միջին երկաթագրով։ Երբեմն հատուածի առաջին տողը, ինչպէս օր. $72^{բ}$. $249^{ա}$, ինչպէս և յիշատակարաններից սմանք $63^{բ}$. $242^{ա}$ բոլորաձև, խոշոր երկաթագրով։ ԳՐԻՉ. և առաջին* կազմող. *Գէորգ. «Գրեցաւ եւ կազմեցաւ գիրքս այս ձեռամբ խմով Գէորգայ նուաստ գրչի»։* Թանաքը *խունացած, տեղ տեղ թափած։ ՍՏԱՑՈՂ. Տ՞ր Պետրոս Գետադարձ (տես. յիշատակարանի նկարը)։ ՏԵՂ. Անյայտ, բայց հաւանօրէն Անի քաղաքը կամ շրջակայ վանքերից մէկը։ ԺԱՄԱՆԱԿ. 1055 թ. փրկչական. «Գրեցաւ ս՞ ծաղիկ պատարագս այս ի թուականիս հայոց. յորում ՆԴԵ էր. ի գիրախոնին յերկրատասներորդ ամին, ի թագաւորութեան Մոնոմախոս կայսեր. իսկ մեր լուսաւորութեանս եւթն հարիւր եւ քառասուն եւ դ՞. եւ կուսածին ծագմանէն հազար եւ քառասուն եւ ե՞.»*

Նկարուած է ա) Բուն ձեռագրի ճառերից $156^{ա}$. բնագիրը 16×10½ սմ., մեր նկարը 7,1×11 սմ.,։

բ) Յիշատակարանից. $284^{բ}$. 7,3×15½ սմ., մեր նկարը 14½×7 սմ.։

52 70. 126. 134. *Մատ. Ս. էջմ. Գ. № 363/3793, Աւետարան, նկարազարդ. կազմած 39½×30 սմ.,։ Հաստ* մագաղաթ, *որ պատրաստել է Մովսէս, «որ զմագաղաթն գործեաց», 39×30 սմ., թերթ 311։ ԳԻՐ. Խոշոր երկաթագիր, յիշատակարանները միջին երկաթագիր, լուանցքի ծանօթութիւնները փոքր երկաթագիր. երկիջեան, 27×9 սմ.։ ԳՐԻՉ. Յովհաննէս երէց $88^{բ}$. $240^{ա}$. $310^{բ}$.։ ՆԿԱՐԻՉ ? «Դաւիթ Խաղբկայ, որ զոսկեղէն զուգեաց»։ ՏԵՂ.*

«ի վանս Սանդղկայ»։ ԺԱՄԱՆԱԿ. 1053 թ. փրկչական. «գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականութեան Հայոց ՇԲ ամի»։

Ծանօթ. *Թերթ 60, 63, 64, 65* կրկնագիր *են. հին աւետարանի երկաթագիր հատուածներ, որոնցից երկուսը լուացուած են և երկուսը քերուած, և վերան բոլորգրով յետոյ գրուած։ Ընթերցուածների սկզբնագիրը բնագրի երկաթագրից փոքր ինչ մեծ և կոզրից դէպի լուսանցքը զարդով կպած, յատուկ հին ձեռագրերին, բայց երբեմն գեղեցիկ մանրանկարչական տառերով։*

Նկարուած են՝ ա) բուն Ձեռագրից 130ա. բնագիրը (հաշուած ներքևի ծանօթութիւնները) 9,3×8½ սմ., մեր նկարը 10×9սմ., ուրեմն չնչին զանազանութեամբ մեծ բնագրից։

բ) Միխայլ ոսկերչի յիշատակարանը (նկ. 70) բոլորգրախառն շեղագրով. *տարբեր շեղագրով նոյն ոսկերչի մի այլ յիշատակարանից խմանում ենք, որ «ՈԾ»—1201 թ. շնորհել է նա այս աւետարանը Զաւրավար քահանային. «Որմենի հայրենիքն կոչի»—Ուրմիա? 310բ։ Բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։*

գ) 89ա Շեղագրով *(նկ. 124) Նուիրաբերութեան յիշատակարան 1323 թ. փրկչական. «գրեցաւ ի թվ. հայ. ՉՀԲ յունիսի ԺԱ.» Բնագիրը 21×16 սմ., մեր նկարը 11×8½ սմ.։*

դ) Նոտրգիր *(նկ. 134) Նուիրաբերութեան յիշատակարան 1346 թ. փրկչական։ Հայոց «ՉՂԵ, ի մայիսի ԻԸ»։ Բնագիրը 18×8, մեր նկարը 10½×4,7 սմ.։*

53. *Մատ. Ս. Էջմ. Գ. № 362/3784. Աւետարան.* Նկարազարդ, մագաղաթ *43½×34, 287 թերթ։ ԳԻՐ. Խոշոր երկաթագիր, երկսիւնեան, 31½×9,2սմ.։ ԳՐԻՉ. Թովմա երէց, որդի Մովսէս քահանայի։ ՏԵՂ. Մելտինէ քաղաք, «ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի»։ ԺԱՄԱՆԱԿ. փրկչական 1057 թ. «ի թուականութեանս Հայոց ի հինգ հարիւր ու վեցն, ի կաթողիկոսութեանն տ՞ն Խաչկայ, յորժամ ի Թուրլուրի վանս էր»։*

Ծանօթ. *207ա. Լուսանցքում մանրանկարչական զարդի մէջ* շեղագրով *գրուած, անշուշտ գրութեան ժամանակից. «զՊաւղոս հայր յիշեցէք ի ք՞ս և զիս»· տես և 262ա.*

Նկարուած է 161ա. մեծ երկաթագիր. բնագիրը 14×22 սմ., մեր նկարը 9×14,3 սմ.։

54. *Մատ Ս. Էջմ. 369/311 (Կար. 362)։* Աւետարան, *Նկարազարդ։* Մագաղաթ, *23×15½ սմ., 281 թերթ։ ԳԻՐ. Բոլորաձև,* միջին երկաթագիր, *երկէջ, խորաքանչիւրը 15×4,7 սմ.։ ԳՐԻՉ և ՍՏԱՑՈՂ. Գրիգոր քահանայ Ակունեցի, որ 1021 թուին Վասպուրականի Սենեքերիմ թագաւորի գաղթի հետ հաստատուել էր Սեբաստիայում 281ա. ՏԵՂ. Սեբաստիա։ ԺԱՄԱՆԱԿ 1066 թ. փրկչ. «ՇԺԵ թուոյս Հայոց»։*

Ծան. *Աւետարանիս նկարագրութիւնն ու մանրանկարչութեան ուսում-*

նախրութիւնը տես Արարատ 1910. Յունուար, Մարտ. մեր յօդուածը. «Նախնեաց Յիշատակներ» վերնագրով։

Նկարուած է 135^{բ}., բնագիրը և լուսանկարը նոյն մեծութեամբ։

55. *Երուս. Մատ. Ս. Յակ. № 2556/1, Աւետարան, կարմր թաւշի վերայ արծաթապատ, ոսկեջրած, 48×36 սմ., Շղթայակիրի ժամանակից։ Նկարազարդ։ Հաստ մագաղաթ, երկսիւնեան, 32×10 սմ.։ ԳՐԻՉՆ ու ՏԵՂՆ անյայտ։ ՍՏԱՑՈՂՔ Գագիկ Շահնշահ, որդի Աբասայ, Կարսի վերջին թագաւորը և Գորանդուխտ թագուհին՝ իրենց Մարեմ դստեր հետ 5^{ա}. 135^{բ}. 222^{բ}. 371^{բ}. ԺԱՄԱՆԱԿ. 1028—1064 թ. թ.*

Ծանօթ. *Հատուածների գլխագրերը բնագրի երկաթագրից աւելի մեծ են, բայց ոչ մանրանկարչական. կողքից կապուած լուսանցքի զարդի, թռչունի կամ կենդանու պատկերի հետ։ Նկարագրութիւնը Արարատ. 1910. եր 332*

Լուսանկարուած է 125^{ա}. բնագիրը չորս անգամ մեծ է մեր նկարից։

56. *Մատ. Ս. էջմ. № 260/275 (Կար. 253). Աւետարան, ազնիւ մագաղաթ, 25,2×19 սմ., 269 թերթ։ ԳԻՐ Միջին երկաթագիր, շատ սիրուն, երկսիւնեան, 17×5 սմ.։ Ընթերցանութեան նշաններ ունի կարմրադեղով, բայց ոչ բուն գրչի գործ, որովհետև հին, սև թանաքով կէտադրութեան մօտ կայ, երբեմն և կարմիրը։ ԳՐԻՉ. Յովհաննէս գրիչ։ ՍՏԱՑՈՂ. «Սմբատ Պատրիկ որդի Վահրամայ» կամ «Սմբատ որդի Վահրամայ ք՟աջէր և բարեպաշտ Պատրիկ», որ աւետարանիս գրչութեան տարին առել է «զձև և զկարգ կրօնաւորութեան» և «անուանեցայ Յովհաննէս բառ վերակոչման հրամայելոյ իմոյ ի ծխանաց կենցաղոյս»։ ԺԱՄԱՆԱԿ 1071—1080 թ. փրկչական. Թուականի միաւորը չի կարդացւում. «Ի հինգ հարիւրորդի քսան . . . գի ամի թուաբերութեան հայոց (ընդգծուածը հազիւ տեսանելի) ի թագաւորութեանն Յունաց Միխայլին որդւոյ Տուկիծին . . . . (մի կամ երկու բառ) ի կուրապաղատութեանս Մարեմայ բարեպաշտի և հզաւրի . . . (մի բառ) և տ՟ն որդւոյ. յամս տ՟ծառայի և հօգևոր տ՟ն Գրիգորիսի և տ՟ն Գէորգայ»։*

Նկարուած է յիշատակարանի մի հատուածը. բնագիրը 11×11½ սմ., մեր նկարը 10½×11,2 սմ.։

57. *Մատ. Ս. էջմ. № 257/288 (Կ. 250). Աւետարան, մագաղաթ, 22×16½ սմ.։ ԳԻՐ. Միջին երկաթագիր, երկսիւնեան, իւրաքանչիւրը 17×5,3, սմ. ներքևի ծանօթութեան հետ։ ԳՐԻՉ. Ահարոն գրիչ։ ՏԵՂ. «Աւարտեցաւ ս՟բ աւետարանս ի մայրաքաղաքս Աղեկանդրու ընդ հովանեաւ Յովհաննու աւետարանչին»։ ԺԱՄԱՆԱԿ. 1099 թ. փրկչական «ի թուականութեանն հայոց ՇԽԸ գրեցաւ ս՟բ (աւ)ետարանս»։*

Լուսանկարուած է 171^{ա}. բնագիրը և լուսանկարը նոյն մեծութեամբ։

Ծանօթ. *Ուշադրութեան արժանի են կարմրադեղով, շեղագրին մօտեցող, անցման բոլորգրով յիշատակարանները 75^{բ}. Մատթէոսի վերջում, և 280^{բ}. Յովհաննու վերջում՝ գրչի անունով։ Նոյն գրով են և աւետարան-*

ների վերնագրերը։ Կայ մի յիշատակարան 125բ. ՈԽԲ (=1193 թ.) թուականով, իսկական ենդագիր։ Մարկոսի ամբողջ աւետարանը սրբագրուած է բոլորագիր—շեղագրով կամ առոգանութեան նշաններ գրուած, բայց ոչ բուն գրչի ձեռքով, հաւանօրէն ԺԲ—ԺԳ. դարում (առ.առօ բառն այսպէս գրուած)։

58. *Մատ. Ս. էջմ. Գ. № 124/2600. Ճառընտիր, Առ որս Աստուածարանի, հաստ, մագաղաթանման, կոկած և օղլայած թուղթ, 26×18½ սմ., 265 թերթ։ ԳԻՐ. Սքանչելի, միջին երկաթագրով. վերնագիրը կարմրագեղով և փոքր երկաթագրով, նոյնպէս շատ գեղեցիկ. 16,8×10,8 սմ.։ ԳՐԻՉՆ ու ԺԱՄԱՆԱԿՆ անյայտ։ ՏՍԱՑՈՂ «Գրիգորէս Հայոց կաթողիկոս» 26. կամ «Հօգևոր տ՟ր Գրիգորէս» 79ա. տես և 83ա 116ա. 158բ. 181բ. 211բ և 245ը. ընդգծուած յիշատակարանները խոշոր երկաթագրով։ Ո՞ր Գրիգորիսն է, դժուար է ճշդութեամբ որոշել. կարծում եմ Գրիգոր Վկայասէր կամ Գրիգոր Գ., ուրեմն ԺԱ—ԺԲ. դարու գիր։*

Նկարուած է 179բ. բնագիրը 14,2×10½ սմ., առաջին տողը. մեր նկարը 13,7×10, քիչ փոքր բնագրից։

59. *Մատ. Ս. էջմ. № 898/985 (Կ 879)։ Ճաշոց. նկարազարդ մագաղաթ, 31½×22½ սմ., 281 թերթ։ ԳԻՐ. Միջին, ուղղանկիւն երկաթագիր, խորաները փոքր երկաթագիր. գեղեցիկ գրչութեամբ։ ԳՐԻՉ, ԺԱՄԱՆԱԿ, ՏԵՂ. Անյայտ. համարում եմ ԺԱ—ԺԲ. դարու գործ։*

Նկարուած է 155ա. բնագիրը 8,9. մեր նկարը 9,2×15½ սմ., գրեթէ նոյն մեծութեամբ։

60. *Մատ. Ս. էջմ. № 1239/1214 (Կար. 1209). Մեկնութիւն մարգարէութեան Եսայեայ՝ Յովհաննու որդւոյ Մուշին. հաստ, մագաղաթանման թուղթ, 24½×17½ սմ.։ ԳԻՐ Անցման բոլորգիր, երկաթագրի և շեղագրի խառնուրդով, մի իջևան, 20×15½ սմ.։ ԳՐԻՉ և հեղինակ. Յոհաննէս . . . կրաւնաւոր որդի Մուշին և աշակերտ տ՟ր վարդապետին Թադէոսի»։ ՏԵՂ. «ի գեղս, որ կոչի Մարմէտ (Վասպուրականի), ընդ հովանեաւ տ՟ր գերեզմանի վարդապետին Թադէոսի» (հեղինակի ուսուցիչը)։ ԺԱՄԱՆԱԿ. 1118 թ. փրկչական. «եւ գրեցաւ ի ՇԿԷ թուականիս հայոց . . . ի հայրապետութեանն տ՟ն Դաւթի հաոց կաթողիկոսի ի Վասպ.»*

Ծանօթ. *Այս Զ-ը արժանի է ուշադրութեան, իբր խառն գրչութեամբ և իբրև հեղինակի ձեռքով գրուած սկզբնական օրինակ,* unicum, *որից արտագրութիւն յայտնի չէ մինչև այժմ։ Հեղինակը յաճախ նոր բառեր է աւելացրել և այդպիսի դէպքերում շեղագրին աւելի մօտ ձեռքով։ Ինքն էլ ներողութիւն է խնդրում «վասն աղեղութեան գրոյս»։ Մի յետին ձեռք աւելացրել է կէտադրութիւնը և լրացրել պակաս թողած տառեր. մի երկրորդ, աւելի յետին ձեռք կարմիր թանաքով սկսել նշաններ գրել։ Ընտրել ենք այնպիսի երես, ուր յետին ձեռքը շատ քիչ նորութիւն է մտցրել. եղածները հետևեալներն են. ա) չորրորդ տող. «եւ եթէ», եւ-ի վերայ բոլորակ նշան՝ կարմիր թանաքով. բ) երրորդ տող «յայտ առնէ», ն-ի գլխից սև թանաքով կետացրել է. «զոր ուրինակ այր տէր» բառերի վերայ մի մի բութ աւելացրել. գ) ինն-*

բորդ տող «ցանգայ», յ-ն յետոյ է աւելացրել. դ) տասներորդ տող «քննող», ռ-ի ներքին մասը միացրել է, որպէս զի օ դառնայ, որով և սրբագրողի ժամանակը ԺԲ-ի վերջ, ԺԳ. դար կարող ենք համարել։

Այս Զ-ի մասին տես. Արարատ. 1913 թ. Յունուար. Կ. Եպ.-ի յօդուածը։

Նկարուած է 93 եր. բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

61. *Մատ. Ս. Էջմիածնի, № 905/832 (Կար. չկայ). Ճաշոց, լուսանցքի զարդերով, մագաղաթ 21½×16½ սմ., թերթ 250, Գիր. Միջին, սրանչելի երկաթագիր, խորանները փոքր երկաթագիր. մի սիւնակ 14½×10,2 սմ. ԳՐԻՉ. Գէորգ Սկեւացի (ոչ Լամբրոնացի) բանասիրական ճանապարհով գտնուած. Սկեւայի գրչութեան դպրոցի հնագոյն ներկայացուցիչներից մէկը. «ընդ որս և ես ժամի պաղատանաւք յընթերցողացդ յիշել զաշխատող սորա զԳէորգ. որ մեծաւ ջանիւ գրեցի զսա յընտիր և յազնիւ յաւրինակէ»։ ՍՏԱՑՈՂ. Սանահնոս քահանայ։ ՏԵՂ. Անյայտ, բայց հաւանօրէն Սկեւռա։ ԺԱՄԱՆԱԿ 1154 թ. փրկչական. «Ի՛ երրորդի երրորդի թ(ուա)կանիս հայոց գրեցաւ ա՛ ծայրն բուրաստանաց ծաղկագումար մատենաս»։*

Նկարուած է 66բ. ամբողջ երեսը. 14×10 սմ., մեր նկարը 11,3×7,8սմ.

62. *Մատ. Ս. Էջմ. № 1687/1890 (Կար. 1645) Եղիշէ պատմագիր, թուղթ, թերթ 250, Գիր., Անցման երկաթագիր բոլորգրի ձևերով, մի սիւնակ. 17½×10½ սմ.։ ԳՐԻՉ. Դաւիթ։ ՍՏԱՑՈՂԸ. Գրիչը և հարազատ եղբայրը Մխիթար։ ՏԵՂ. «ի վանս Կոշա, ընդ հովանեաւ սրբոյ Սանահնոսի»։ ԺԱՄԱՆԱԿ. փրկչական ՌՃՀԴ=1174 թ. «ի հայկազեան թուականիս վեցհարիւրերորդի և երկուց տասանց եղակաւ միով աւելեալ. Եւ ըստ նորում շրջանիս միոյ յարենինի և երից տասանց և քառից երկուց» յիշատակարան 208ա—208բ.*

Նկարուած է 208ա. բնագիրը 17½×10½սմ, մեր նկարը 14½×8½ սմ.։

64. *Մատ. Ս. Էջմ. № 1561/1568 (Կ. 1523) Նարեկ. Նկարազարդ, աղնիւ մագաղաթ 15,2×11½. 336 թերթ։ Գիր. Փոքր երկաթագիր. սրանչելի, մի սիւնակ, 10,2×7½ սմ.։ ԳՐԻՉ. «Զաղաբմենլի գրիչս Գրիգոր, աղաչեմ յիշել ի տ՞ր. 28ա.։ ՍՏԱՑՈՂ. Ներսէս Լամբրոնացի. «Ստացող սորա զՆերսէս, զորդի մեծազատ սեւաստոսի Աւշին յիշես. ի ք՞ս 55բ. տես և 115բ. 175բ.։ ՏԵՂ. Անյայտ, բայց հաւանօրէն Սկեւռայի վանքը։ ԺԱՄԱՆԱԿ. 1173 թ. փրկչական. «Թու. ՈԻԲ»։*

Ծանօթ. Առաջին երեսն ամբողջապէս ոսկեգիր է. աղնիւ ոսկով են գրուած նաև գլուխների սկզբնատառութեան և պարբերութիւնների առաջին տողերը։ Գլուխների վերնագրերը կարմիր և բնագրից աւելի փոքր տեսակի երկաթագրով։

Նկարուած է 10ա. ամբողջ երեսը. 10,2×7½սմ., մեր նկարը քիչ փոքր 9,7×7,2 սմ։

65. *Մատ. Ս. Էջմ. Գ.№ 482/3795 Տօնապատճառ. Կաշեկազմ. 40×26½ սմ., Թուղթ. 40×26½ սմ։ Գիր. Արևելեան խոշոր բոլորգիր (անցման, միջին*

երկաթագրից բոլորգրին). երկիջեան 31½×9 *սմ։ ԳՐԻՉ. Փիլիպպոս քահանայ. Կազմող. Ակոբ։ Գրչութեան ժամանակից է կազմը,* 1191 *թուից։ «Ի ։ՌԽ։ թվ. հայոց կազմեցաւ տաւնապատճառս այս արդեամբ Ցաւղկայ աղախնոյն ք՞ի . . . »* 208ա.։ *Կազմի առաջին երեսին շեղագրին մօտ բոլորգրով գրաշմուած է. «Փիլիպպոսի է. զԱկոբ յիշեայ ի ք՞ո»։ ՍՏԱՑՈՂՔ. Գրիչը և իւր կինը, Մարեմ տիկին (մայր մանկանց իմոց Մարեմ տիկին), որ ապա ՌԽ=*1191 *թուին նուիրում են «Ա՞ծընկալ ո՞ր նշանա»ին (Գեղարդում)։ ՏԵՂ. «ի ո՞ր ժողովարանիս Այրիվանից. ընդ հովանեաւ սրբոյ Ա՞ծածնի և ո՞ր վկայից»։ ԺԱՄԱՆԱԿ.* 1190 *թ. փրկչական. «ՌԼԹ». (տես պատկերը). լուսանցքում։*

Նկարուած է 156բ. *բնագիրը* 8½×9½ *սմ., մեր նկարը* 8×9 *սմ. առաջին տողը լուսանցքի թուականի հետ։*

66. *Մատ Ա. էջմ.* № 921/918 *(Կար.* 901*). Ճառընտիր Եփրեմի. հաստ մագաղաթանման թուղթ,* 26×16½ *սմ.* 298 *թերթ.։ ԳԻՐ. Արևելեան բոլորգիր անցման, փոքր երկաթագրից. մի իջեան* 19,2×11,2 *սմ.։ ԳՐԻՉ և ՍՏԱՑՈՂ. Յոհաննէս* 66ա. 141, 145ա. 170բ. *«զՅովհաննէս գրողս եւ զհայր իմ Սարգիս բժիշկն յիշեսջիք և ա՞ծ զձեզ յիշէ»։ ԺԱՄԱՆԱԿ.* 1196 *թ. փրկչական. «ի Թւ խ* (sic)*։ ՈԽԵ»* 170բ *և* 231ա. *Երկու անգամ էլ թուականի գրութիւնը տարբեր է բնագրից. բայց նոյն ժամանակի և նոյն գրչի գործ եմ համարում։*

Նկարուած է 165ա. *Երանելոյն Եփրեմի վասն սատանայի, թէ որպէս խաբէ զորդի մարդկան եւ զայթակղեցուցանէ» վերնագրով հատուածից։ Բնագիրը* 13,2×11 *առաջին տողը, մեր նկարը* 13×10,9*, համարեա նոյն մեծութեամբ։*

67. *Մատ. Ա. էջմ. Գ.* № 163/2606. *Մխիթարայ Գոշի Մեկնութիւն մարգարէութեան Երեմիայի։ Հաստ թուղթ, մագաղաթանման. թերթ* 234*։ ԳԻՐ. Բոլորգիր արևելեան, մի իջեան.* 18,6×12 *սմ. ԳՐԻՉ. Ձեռագրինն անյայտ, բայց յիշատակարանի գրիչը և ՍՏԱՑՈՂ Դաւիթ (Բարայրեցի ?)։ Յիշատակարանի հեղինակը՝ անուանում է իրեն «սիրող և համակամ և յորդորիչ նորին (Մխիթարայ Գոշի) Դաւիթ». ընդօրինակել է տուել Գոշի օրինակից և սիրոյ ու շնորհակալութեան խօսքեր ունի ուղղած նորան։ «Զի անպարապ եղեալ իմոյս անձին ի ժամանել և գրաշմել զսա, այլ և այլում տխմարաց եւոու զծել (յիրաւի, խաւր գրչութիւն) և աղաչեմ ունիմ. թեպէտ և ուղղեցի յետոյ»։ ԺԱՄԱՆԱԿ. Փրկչական* 1198 *թուին. « և արդ իմուս գրութեան զայս առաւ ԲԺ ան ամ էր առմանն Ե՞մի . . . և ԽԷ է առ Ռ ով թուականս Հայոց»։*

Նկարուած է 194ա. *բնագիրը* 12,2×11,7 *սմ., մեր նկարը* 8,6×8*սմ.։*

68. *Պատառիկ Տ. Խաչիկ Ծ. վարդապետի։ Շարական* փոքր երկաթագրով. *ոչ ուշ քան* ԺԲ դարը։ *Նման գրով մի ամբողջ ձեռագիր գտնւում է Երուս. Հայոց Ս. Յակոբեանց մատենադարանում։*

Բնագիրը 5×5 *սմ., մեր նկարը* 4×4 *սմ.։*

69. *Մատ. Ա. էջմ. Գ.* № 25/2589, *Աւետարան նկարազարդ,* մագաղաթ, 23½×18 *սմ. լուսանցքները կազմելիս կտրած. թերթ* 339*։ ԳԻՐ. Միջին եր-*

կաթագիր հաստ գծերով, բայց սիրուն և կանոնաւոր. փայլուն թանաքով, լուսանցքի մանրանկարները և մանրանկարչական զլխատառերը ճոխ և գեղեցիկ։ ԳՐԻՉ. Սարգիս սարկաւագ։ ԾԱՂԿՈՂԸ Հայրապետ քահանայ։ ՍՏԱՑՈՂ. Կոստանդին քահանայ. ՏԵՂԸ անյայտ, բայց գրին և նկարչութեան նայելով Սեբաստիա կամ Կիլիկիային մօտ գտնուած երկրներում։ Պետք է ի նկատի ունենալ նաև բիւզանդական կայսեր անուամբ թուագրութիւնը։ ԺԱՄԱՆԱԿ. 1200 թ. փրկչական. «ի թուականութե՛ն հայոց ՈԽԹ, ի թագաւորութեանն յունաց Անկելոսի, ի գիտապետութե՛ն հայոց Տ՟ր Գրիգորի Ապիրատ անուն կոչեցեալ. յերեքտասան ամի ամսան է՟մի. եւ յերրորդումն ամի թագաւորութեանն Հայոց Լեւոնի բարեպաշտի ի բնակալութե՛ն այլասեռիցս Ուզնանին»։

Նկարուած է $304^{բ}$., բնագիրը $13,6\times5,8$ սմ., մեր նկարը $14,6\times6$ սմ. քիչ մեծ բնագրից։

72. 73. *Մատ. Ս. էջմ. № 364/987 (Կար. 358).* Աւետարան, նկարազարդ, մագաղաթ, 33×26 սմ. թերթ 313։ ԳԻՐ. Միջին, ուղղանկիւն երկաթագիր. աւետարանը և յիշատակարանը թէև գրուած են միջին երկաթագրով, բայց յիշատակարանի գիրն աւելի թեք է դէպի ձախ և համեմատաբար աւելի փոքր։ Երկէջ 25×7 սմ.։ ԳՐԻՉ «Հայրապետ նուաստ քահանայ»։ ՍՏԱՑՈՂՆԵՐ. Հայր Յովհաննէս և Բարսեղ վանաց վանական. որանց մահուանից յետոյ նրանց Ներսէս քոյրորդին։ Նիւթի գրամը տուել են Յեւանէս, պարոն Ուքան եւ Պապքան։ ՏԵՂ. Սեբաստիա. «Ընդ հովանեաւ ս՟բ Ա՟ծածնին եւ ս՟բ Սարգսի զաւրավարին, որ յանուն նոցա կանգնեցաւ ս՟բ եկեղեցիքս ի քաղաքիս Սեբաստիա»։ ԺԱՄԱՆԱԿ. 1211 թ փրկչական. «Յամի վեցհարիւրորդ վաթսներորդի թուականիս». տես նկարը։ «Արդ ի հայրապետութեանն ոչ գիտեմ ասել, եթէ զում գրեցից անուն, այլ ասեմ, թէ երից հակառակաց. Տ՟ր Յովհաննիսի, Տ՟ր Անանէի եւ Տ՟ր Դաւթի։ Իսկ ի մերում գիտապետութեանս Տ՟ր Գրիգորի ս՟բ և ընտրեալ եպիսկոպոսի»։

Նկարուած է ա) բուն ձեռագրից $311^{բ}$. բնագիրը. $13,4\times6,9$ սմ. մեր նկարը $9,4\times4,7$ սմ։

բ) Յիշատակարանից $211^{բ}$. բնագիրը $17,3\times7^{1}/_{2}$ սմ., մեր նկարը 12×5 սմ.։

74. 75. *Մատ. Ս. էջմ. № 232/378 (Կար. 225),* Վախտանգի նկարազարդ Աւետարանը. կաշեկազմ $33^{1}/_{2}\times25$ սմ., հաստ մագաղաթ, 34×24 սմ, 308 թերթ։ ԳԻՐ. Աւետարանը երկաթագրով, ոչ շատ խոշոր. յիշատակարանը միջին երկաթագրով, խորաններն մէջ Եւսեբիի և Կարպիանոսի թղթ. փոքր երկաթագրով։ ԳՐԻՉ և ՆԿԱՐԻՉ. Թորոս $2^{ա}$, $9^{բ}$. $258^{բ}$. (տես. նկարը. Տախտակ Խ.)։ ՍՏԱՑՈՂՆԵՐ. «Վախտանգ որդի Հասանա որդւոյ Վախտանգայ»և նորա ամուսինը Խորիշահ «դուստր մեծ սպարապետին Սարգսի 308 ա.։ ԺԱՄԱՆԱԿ. Առաջին քառորդ ԺԳ. դարու, բայց հաւանօրէն ՈԿԱ=1212 թուին, երբ Խորիշահ վերաշինեց Մեծարանց վանքերը (տես. Բարխուդարեանց. Արցախ 171)։ Մի եկեղեցու շինութեան մասին յիշատակուած է և Աւետարանիս յիշատակարանում (Յիշատ. ամբողջ տես І. А. Орбели. Гасанъ Джалалъ, Князь Хаченскій. Сп. 1909 եր. 408. Извѣстія имп. Академіи Наукъ.

Տանօր. Հատուածների սկզբնագիրը մանրանկարչական և տաւլին տա-

դը խեցոսկով գրուած։ Ոսկեգիր է նոյնպէս Զօնը կապոյտ մակերեւոյթի վերայ, $9^{ա}$։ Մանրանկարներն ու լուսանցքի զարդերը արժանի ուշադրութեան։

Նկարուած է ա) յիշատակարանից $308^{ա}$. միջին երկաթագիր., բնագիրը 9×15 սմ., մեր նկարը 7,9×13 սմ.։

բ) Խորաններէ մէջ Եւսեբիի թղթ. $2^{ա}$. փոքր երկաթագրով. բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ 10×11,8 սմ.։

76 Մատ. Ս. էջմ. № 919 947 (Կար. 899), ծառք Սեբերիանոսի, թուղթ, 27½×21,7 սմ., երկսիւնեան, խորանաչափը 25,2×7½ սմ.։ ԳԻՐ. Անցման բոլորգիր բնագիրը, իսկ մեր լուսանկարը ձեռագիր յիշատակարանից։ ԳՐԻՉԸ. Պետրոս գրիչ, որի եղբայրն է Սիմէոն։ ՏՍԱՑՈՂ. Հայր Ականց անապատի Թորոս և միաբանութիւն «հրամանաւ երկցս երանեալ հաւրն Թորոսայ և այլ միակամ և միախորհուրդ եղբայրութեան»։ ՏԵՂ. «ի գերահռչակ անապատս, որ կոչի Ականք, ընդ հովանեաւ ս՟ր Ա՟ծածնիս և ս՟ր Սարգսիս»։ ԺԱՄԱՆԱԿ. 1215 թ. փրկչ. (տես լուսանկարը, Տախտակ Խէ). «ի թագաւորութեան հայոց Լեւոնի յաղթողի եւ բարեպաշտի եւ ի հայրապետութեան Յովհաննիսի հայոց կաթողիկոսի»։

Նկարուած է յիշատակարանը, շեղագիր, բնագիրը 13,6×8,8 վերջին տողը, մեր լուսանկարը 14×8,3

77. 78. 125. Մատ. Ս. էջմ. № 230 1519 (Կ. 223), Բագնայրի աւետարանը. 299 թերթ, բնախր մագաղաթ, 41,8×29,2 սմ.։ ԳԻՐԸ. Խոշոր երկաթագիր, երկսիւնեան, 29×7,8 սմ., տասնըներքին ծանօթութիւններ։ ԳՐԻՉ. Անյայտ։ ՏՍԱՑՈՂ. Իշխանաց իշխան պարոն Խաւասս և իր կինը Խաթուն. «Զպարոն Խաւասս որդի Ամիր Սարգսի եւ զամուսին իւր զԽաթունն յիշեսջիք յաղաւթս, որ ստացան զաւետարանս Բագնայրի Ա՟ծածնիս վան յիշատակի իւրեանց սիրելի եւ անդրանիկ Սասնային, որ աղայ հասակաւ փոխեցաւ ի ք՟ս եւ սուգ մեծ եթող ծնաւղացն իւրոց, որք կարդայք յիշեսջիք ի ս՟ր յաղաւթս ձեր, աղաչեմք». $99^{ա}$։ ԺԱՄԱՆԱԿ. Աւետարանի մէջ չկայ նշանակուած, բայց յիշատակարանների և արձանագրութիւնների հիման վերայ, ուրիշ տեղ ցոյց ենք տուել, որ գրուած պիտի լինի 1212—1223 9 տարիների մէջ (Անահիտ. 1911։ Մայիս—Յունիս եր. 102)։

Նկարուած է ա) $2^{ա}$. աւետարանից, մեծ երկաթագիր, 13×7,8, մեր նկարը 12,8×7,7, գրեթէ նոյն մեծութեամբ։

բ) Յիշատակարան, միջին երկաթագիր $297^{բ}$. բնագիրը 11×15½, մեր նկարը 10,9×15,3, գրեթէ նոյն մեծութեամբ։

գ) Յիշատակարան բոլորգիր $297^{ա}$., բնագիրը 28½×17½ սմ., մեր նկարը 9×15½ սմ ։ Սորա ժամանակը 1308 թ. փրկչական։

79. Մատ. Ս. էջմ. № 2093 2101 (Կ. 2050) Բանք յՈւ որս Աստուածաբանի կամ Գիրք Աստապելաց, թուղթ, 17½×2½ սմ.։ ԳԻՐ. Արեւելեան բոլորգիր, մի իջեան 13,8×8½ սմ.։ ԳՐԻՉ. Ստեփաննոս Աղթամարցի. ծնողն է Յովհաննէս, «տ՟ր Սարգիս հայրեղբայրս»։ ՏԵՂ. «ի վանքս Խորանաշատ կոչեցեալ, ի նահանգիս Աղուանից, ընդ հովանեաւ մաւրս լուսոյ Ա՟ծածնիս»

203ա.: «Ի գաւառիս Գարդմանայ առ ոտս ուղղափառ և ա՛ծաբանական վարդապետիս Վանականի, որ փայլէ ի ժամանակիս որպէս զաստղ առաւօտու» 85բ: ԺԱՄԱՆԱԿ. 1223 Թ. փրկչական. «ի ՈՀԲ թուաբերութեան մերային ազանց»:

Նկարուած է 102ա. բնագիրը 8,3×9,3 սմ, մեր նկարը 8×9 սմ:

80. Ձեռագիրը սեպհականութիւն է Տրդատ եպիսկոպոսի Գայեանի. Արիստոտէլի Ստորոգութիւնք և Նիւսացու Յաղագս կազմութեան. թուղթ, ԳԻՐ. բոլորգիր: ԳՐԻՉ. Ստեփաննոս գրիչ. ԺԱՄԱՆԱԿ. 1239 Թ. փրկչական. «գրեցաւ ի Թւ. ՈՁԸ»:

Երկրորդ մասը. (Նիւսացի) գրուած է նոյն գրչի ձեռքով 1244 թուին, Սմբատ արքայեղբայր Գունդստաբլի խնդրքով, Աստանայում: «Գրեցաւ գիրս Կազմութե՛ հանճարայեղծ բանի, Գրիգորի ա՛ծիմաստ անձին, ձեռամբ Ստեփաննոսի նուաստի անարուեստ գրչի և մեղապարտ անձին, ի խնդրոյ մեծ սպարապետին Հայոց Սմբատայ, որդւոյ Կոստանդեա մեծ աթոռապահին հայոց և եղբաւր թագաւորին հայոց Հեթմոյ, որ և ստացաւ զսա ի յարդար արգեանց իւրոց ի վայելումն իւր և իւրոցն և ի յիշատակ հոգւոյ իւրոյ յետ մահուցս. գրեցաւ սա ի թուականութե՛ս ՈՂԱ: Ի թագաւորութեանս Հայոց Հեթմոյ և յիշխանութե՛ն իշխանաց իշխանին, հօրեղբօր ծերոյն Կոստանդեա և ի հայրապետութեանն տ՛ն Կոստանդեայ: Արդ գրեցաւ ի քաղաքս, որ կոչի Աստանա, ընդ հովանեաւ ս՛ր և յառաջ զաւրավարին Թէոդորոսի» 347բ:

Այս շրջանից է Սմբատ Գունդստաբլի ձեռքով գրուած յիշատակարանները, որոնցից մէկն է 91ա, մեր նկարը:

81. Ազգային Մատ. Կ. Պոլսոյ Հայոց, № 68 Աւետարան, նկարազարդ, ազնիւ մագաղաթ, 24×16 սմ. ԳԻՐ. Երկաթագիր միջին, երկէջ, 17×5 սմ. յիշատակարանը արևելեան բոլորգիր (արևմուտքի համար հազուագիւտ): Կոստանդին կաթուղիկոսի ձեռքը սովորական բոլորգրով: ԳՐԻՉ. Յովհաննէս? (անունը գրուած է տողի գլխին և տարբեր թանաքով, որով և տարակուսելի. կարծում ենք, Թորոս Ռոսլինի դպրոցի գործ է): ՍՏԱՑՈՂ. Կոստանդին Ա. կաթուղիկոս Բարձրբերդցի, որ «ի ստացումն ս՛ր կտակարանաց անդանդաղ»: ՏԵՂ. «ի ս՛ր և յաշխարհահռչակ յաթոռս Հռոմկլա, ընդ հովանեաւ ս՛ր Լուսաւորչին մերոյ և ա՛ծանիշ ս՛ր Նշանիս»: ԺԱՄԱՆԱԿ. 1253 Թ. փրկչական «Արդ գրեցաւ ս՛ր աւետարանս, ի թուականութեանս հայոց: ՉԲ»:

Նկարուած է 574 եր. Յիշատակարանից հատուած և Կոստանդին կաթուղիկոսի ձեռքը. (տես և Ալիշան Սիսուան 545):

82. Մատ. Երուս. Ս. Յակ. № 251. Աւետարան, ոսկէնկար. կաշէկազմ, Շղթայակիր ժամանակից. 27×19 սմ.: Մագաղաթ. ընտիր «մաքուր պայծառ». երկիջեան: ԳԻՐ. Հրաշալի բոլորգիր. ԳՐԻՉ. Թորոս Ռոսլին?: Նկարիչ. Թորոս Ռոսլին. «Ուստի և իմոյ անարժանութե՛ս Թորոսի, մականուն Ռոսլին կոչեցելոյ հրաման տայր (Կոստանդին կաթ.) զգործի գրչութե՛ ի գործ արկանել յա՛ծապարգև այս մատեան ս՛ր աւետարանիս, տառատձեւն ծաղիկք, զանազան նիւթուք և երփն երփն գունուք վայելչացուցանել զսա, որ և ես ըստ կարի իմում լցի զփափաք նորա» 320ա: ՍՏԱՑՈՂ. Կոստանդին կաթուղիկոս. «Հրամանաւ և ծախիւք արի երջանկին և երիցս երանելոյ սըր-

բաղանի և ա՟ծաղառի։ Տ՟ն Կոստանդեայ կաթողիկոսին ամենայն Հայոց», որ «ունէր և զգրասիրութե՟ ջնորհս»։ ՏԵՂ, «յա՟ծաղան զդեակս Հռոմկլա, ընդ հովանեաւ (sic) սրբոյ Նշանիս Վառզոյ և սրբոյ տաճարացն, որ յանուն ս՟բ Փրկչին և սրբոյ Ա՟ծածնին և սրբոյն Գրիգորի լուսաւորչին և այլ բազմահաւաք սրբոցս, որ պաշտին աստ»։ ԺԱՄԱՆԱԿ. 1260 թ. փրկչականս. յամի եւթն հարիւր և իններորդի թուաբերութե՟ս հայոց»։

Ծանօթ. Կիլիկեան շրջանի Հայ գրչութեան գեղեցիկ գործերից մէկը խիր գրով, փառագրերով և պայծառ ու երփներանգ նկարչութեամբ։ Ոսկին գործածուած է մեծ քանակութեամբ։ Մեր նկարը Զօնի մի երեսն է 14ա. (միջա երկու երեսից բաղկացած և Կիլիկեան շրջանի փառազարդ ԺԳ-ում ընդհանրացած, յատկապէս Ռոսլինի դպրոցում)։ ոսկի մակերեւութի վերայ, կարմիր տողերի մէջ, գիրը կապոյտ, սպիտակ գծիկով եզերուած։ Տարաբաղդաբար իսկական չափը չունիմ նշանակած։

83 Մատ. Եր. Ս. Յակոբ. № 2660/105, Աւետարան նկարազարդ։ Կազմ արծաթապատ, Նոր. 22½×18½ սմ.։ Ընտիր մագաղաթ, 590 թերթ.։ ԳԻՐ. Մաքուր բոլորգիր, երկսիւնեան 16½×5½ սմ. Ներքևի ծանօթութեան հետ։ ԳՐԻՉ. Աւետիս գրիչ և քահանայ աւետարանների համար. տ. 139, 224ա.։ Իսկ յիշատակարանի գրիչն է Թորոս Ռոսլին, նշանաւոր մանրանկարիչը այս և ուրիշ ձեռագրերի։ ՍՏԱՑՈՂ. «Ծիրանածին պարոն Լեոն», «իշխանաց իշխան», «որդի ք՟աջապակ ս՟բ արքային Հեթմոյ». 288բ. ՏԵՂ. Յիշատակարանը, որից և մեր նկարը, գրուած է Հռոմկլայում. «Ընդ հովանեաւ ս՟բ և ա՟ծարնակ տաճարացս, որ յանուն ս՟բ Փրկչին և սրբոյ Ա՟ծածնին և սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ, և այլ ևս բազմահաւաք սրբոցս, որ պաշտին յաշխարհամուտ աթոռս Հռոմկլա»։ ԺԱՄԱՆԱԿ 1262 թ. փրկչական. «յամի եւթն հարիւրերորդի տասն և մի երորդի թուաբերութեանս հայոց». «ի հայրապետութեանն տ՟ն Կոստանդեայ սրբազան կաթուղիկոսի Հայոց և ի բռնակալութեան ազգին Նետողաց, որք կոչին Թաթար»։

Ծանօթ. Մանրանկարներից կարևորագոյնը Լևոն Գ-ի և իր մատաղահաս թագուհու պատկերներն են, թագաժառանգ ժամանակ։ Աւետարանիչների պատկերները յետին գործ են, թղթի վերայ։ Առաջին կազմողը, գրութեան ժամանակից, եղել է Առաքել Հնազանդենց, որի անունը յաճախ յիշւում է ԺԳ-ի մէջ, իբրև նշանաւոր կազմարար։

Նկարուած է յիշատակարանից 285բ. Թորոս Ռոսլինի ձեռքը, մի ամբողջ երես. բնագիրը 16½×10½ սմ., մեր նկարը 12½×8,7 սմ.։

84. Մատ. Ս. Էջմ. № 928/823 (Կար. 908) Առ որս Աստուածաբանի. թուղթ, 16,8×12½ սմ. 172 թերթ։ ԳԻՐ Խոշորաձև բոլորգիր՝ մի սիւնեան 13,8×9,8 սմ.։ ԳՐԻՉ. Յովհաննէս սարկաւագ, որի ուսուցիչն է «վարդապետն տ՟ր Յովաննէս» . . . որ սպանեալ եղև յաւազակաց»։ Առաջին ուսուցիչն է «հայր Յակոբ»։ Գրչի ծնողներն են Շիրին և Սաքիրա, եղբայրները Աւետշահ և Շահնշահ։ Գրչի առաջին գիրն է սա։ ՍՏԱՑՈՂ. Հաւանօրէն Յովհաննէս վարդապետ, գրչի ուսուցիչը, որովհետև գրուած է ի վայելումն «հոգևոր հայր վարդապետին և ուսուցչին», անունը ջնջուած։ ՏԵՂ. Եկեղեաց գաւառի Երզընկա քաղաքում, «Ընդ հովանեաւ ս՟բ Փրկչիս»։ ԺԱՄԱՆԱԿ. 1266 թ. փրկ-

չական. «ի Թուականութեանս հայոց ·ՌՃ· ու ի Ժ՞Ե, ի հայրապետութեանն տ՞ն Սարգսի մարհասխայի մեծի». (տես. լուսանկարը. Տախտակ Ծ)։

Նկարուած է յիշատակարանը 171ա., բնագիրը 13×9,2 սմ. առանց վերջին տողի, «յիշեալ» մեր նկարը 14,4×10,1, ուրեմն բնագրից քիչ մեծ։

85. 86. *Մատ. Ս. էջմ. Տաթև 9 4139.* Տօնապատճառ Վարդանայ վարդապետի. թուղթ 25×17 սմ., 517 թերթ։ Գիր արևելեան բոլորգիր (անցման), միսիւնեան, 19×11,8 սմ.։ Գրիչներն են Յովսէփ և Տիրացու. վերջինս Վարդան վարդապետի՝ գրքի հեղինակի՝ աշակերտը, «ի Վանանդ գաւառէ, ի Կարս քաղաքէ»։ Սորա գրածն է նաև Ս. էջմ. Մատենադարանի № 1204 1119։ ՏԵՂ. Հաղբատ, «ընդ հովանեաւ սրբեղեցւոյս տ՞րունական ս՞ր և ա՞ծընկալ Նշանիս և . . . Ա՞ծածնիս». 516բ.։ ԺԱՄԱՆԱԿ. 1267 Թ. փրկչական. «(ի Թուակա)նութե՞ն Հայոց ՉԺԶ», «յաթոռակալութե՞ն տ՞ր Յ՞կբի, մեծի հռետորի և ս՞ր վերադիտողի», որ Հաղբատայ վանահայրն է։

Նկարուած է ա) 114ա. Յովսէփ գրչի. բնագիրն է 13,2×11,8 սմ, մեր նկարը 10,8×9½ սմ։

բ) 292ա. Տիրացու գրչի. բնագիրը 19½×11,8 սմ., մեր նկարը 14,2×8,2 սմ։

87. *Մատ. Ս. էջմ. Գ. № 295/3082.* Տօնապատճառ, թուղթ 20½×16 սմ., թերթ 477։ ԳԻՐ. Բոլորգիր, միսիւնեան, 16½×11½ սմ.։ ԳՐԻՉ Սկեռայի գրչութեան դպրոցի նշանաւոր ուսուցիչ Գէորգ Լամբրոնացին, պատանեկութեան հասակում, երբ Կիլիկիայից գալով աշակերտում էր Վարդան վարդապետին Խոր Վիրապում։ ՍՏԱՑՈՂ. Գրիգոր վարդապետ, «աղատաւոր բանի», եղբայր վերոյիշեալ Վարդանայ վարդապետի։ ՏԵՂ. Սկսուած է Խոր Վիրապում, շարունակել է Սաղմոսավանքում և վերջացրել Թեղենեաց վանքում։ ԺԱՄԱՆԱԿ. 1268 Թ. փրկչական. «ի շրջագայութե՞ ամանակաց Թուաբերութե՞ հայկականս ազին տումարի յարաբարդեալ ամաց չորեքատասն յհանկաց՝ հանդերձ առաջին կատարեալ Թուով վեցեկաւ ընդ տասնեկի շարամանելոյ»։

Ծանօթ. Գրիչը հատուածների վերջում, երբեմն, գրում է յունարէն. օր. 138 χε ελεησον γοργη·

Նկարուած է 476ա. յիշատակարանից. բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

88. *Մատ. Ս.էջմ. № 222/287 (Կ. 215),* Աստուածաշունչ Թերթ, սկսում է Յովբից. 21×15 սմ., 287 թերթ. Ընտիր մագաղաթ, մակերևոյթը ողորկ և շշափելիս գուրեկան։ ԳԻՐ. Գեղեցիկ բոլորգիր, երկսիւնեան 16½×5 սմ.։ ԳՐԻՉ. Կոստանդին քահանայ գրիչ։ ՍՏԱՑՈՂ. Պետրոս (քահանայ կամ կրօնաւոր), «որ ետ գրել զսա ի վարժումն անձին իւրոյ և ծնողաց իւրոց և ընտ. զարմին»։ Պետրոսը իւր կողմից խնդրում է յիշել նաև քահանայապետի, որ իւր ուսուցիչն է եղել «եւ բազում աստարութի՞ս ընձեռեաց մեզ ընչիւք և արինակաւ»։ Տարաբաղդաբար ուսուցչի անունը ջնջուած է յիշատակարանի մէջ։ Ժամանակի կաթողիկոսն էլ (Յակոբ Կլայեցի ?) «մասնաւոր աւգնեաց

մեզ»։ ԺԱՄԱՆԱԿ. 1268 Թ. փրկչական. «Արդ գրեցաւ սա ի Թվիս հայոց ՈԺԸ, ի Թա՛գաւորութե՛ն Հեթմոյ բարեպաշտի, ի գխաւորութե՛ն Տ՛ն Յակոբայ (ընդգծուածը յետին գրչով քերուածի վերայ), որ յայսմ ամի կարգեցաւ առաջնորդ ս՛ր եկեղեցւոյ հայկազեան քրիստոնէից և յաջորդ աթոռոյ ս՛ր լուսաւորչին մերոյ Գրիգորի. յամսեանն փետրվար, որ աւր ԺԷ էր»։

Ծանօթ. *Վերնագրերը կարմրադեղով. պարբերութիւնների սկզբնատառերը կարմիր երկաթագիր. գլուխների առաջին գիրը գծական—բուսական զարդագիր, միագոյն, գորշ։*

Թուականի տառերը քերուած է յիշատակարանի մէջ. պէտք է լինի Ժ, որով և ՉԺԷ Թուականը համապատասխան կլինի Յակոբ Կլայեցու կաթողիկոսութեան առաջին տարուան, համաձայն յիշատակարանի։

Նկարուած է 219ա. բնագիրը 11×11 սմ., մեր նկարը 10×11 սմ., քիչ փոքր բնագրից։

89. *Մատ. Ս. էջմ. Գ. № 359/2627, Աստուածաշունչ, Նկարազարդ, Նուրբ մագաղաթ. 541 Թերթ։ ԳԻՐ բոլորգիր փոքրատեսակ, երկսիւնեան, 19×5½ սմ.։ ԳՐԻՉՆԵՐ. Յակոբ 141բ և Սարգիս քահանայ (Պիծակ). 250ա, 284ա. վերջինս և* Նկարիչն *է. նա գրել է Նեեմիից մինչև վերջը։ ՍՏԱՑՈՂ և ԺԱՄԱՆԱԿ Յակոբ կաթողիկոս Կլայեցի (1267/8—1287) հաւանօրէն վաթսունական Թուականների վերջերին, երբ արդէն Սարգիս Պիծակ ծեր էր։ Թուզէ Յակոբ գրիչն էլ նոյնը լինի, որ գրել է կաթողիկոսի դառնալուց առաջ. Ստացողի յիշատակարանք 309բ, 399ա ԿԱԶՄՈՂ Յովհաննէս սարկաւագ, 541ա., գրութեան ժամանակից նշաններից դատելով։*

Վերջին նուիրատուն՝ Եղինէ տիկին, քոյր Դէորգ Դ. կաթողիկոսի։

Նկարուած է միայն Սարգիս քահանայի գիրը. 445բ. բնագիրը 19×5½ սմ., մեր նկարը 11×3 սմ։

90. *Մատ. Ս. էջմ. № 365/382 (Կ. 358), Աւետարան. թուղթ 34,2×25,2 սմ.։ Թերթ 353։ ԳԻՐ. Անցման, խոշոր, արեւելեան բոլորգիր, որ Մեծ Հայքում ԺԳ. դարում և մասամբ յետոյ գործադրւում էր երկաթագրի փոխարէն։ Երկսիւնեան 25,7×6,7 սմ.։ ԳՐԻՉ և ՍՏԱՑՈՂ. Առաքեալ քահանայ. ՏԵՂ. Աստապատ գիւղաքաղաք, ընդ «հովանեաւ ս՛ր Կարապետիս»։ ԺԱՄԱՆԱԿ «(Ե)ութն հարիւր տասն ութ»=փրկչական 1269 Թ.։*

Ծանօթ. *Թուականի հարիւրաւորը «եաւթն» է և ոչ գաւառաբարբառով «ութն»=ութ, որովհետև յիշատակարանի համեմատ Աւետարանիս ստացող Առաքել քահանան մանկութեան հասակում Կարնոյ քաղաքում գերի է ընկնում Թաթարների ձեռքը և Թաւրէժ բերւում, որտեղից ապա ազատուելով անցնում է Գառնի ուսանելու և այնտեղից Աստապատ իբրև քահանայ։*

Նկարուած է 187բ., բնագիրը 14,3×6½ սմ., երկրորդ սողից. մեր նկարը 15,3×6,9 սմ., քիչ մեծ բնագրից։

91. *Մատ. Երեւ. Ս. Յակ. № 2563/8., Աւետարան ոսկեկազմ, Շղթայակիր ժամանակից, 37,7×24 սմ., մէջքը, 9,2 սմ.։ Ճոխ նկարներով և*

լուսանցքի զարդերով։ Մարուր մագաղաթ, կաթնագոյն, լայն լուսանցքներով. 382 թերթ։ ԳԻՐ. Ընտիր, խոշորաձև բոլորգիր, երկիջեան, $21^{1}/_{2}\times6,8$ սմ.։ ԴՐԻՉ. Աւետիք քահանայ, 373ա. 376ա. ՍՏԱՑՈՂ. Կեռան, թագուհի Լեւոն Գ-ի, դուստր Հեթմոյ, թոռն Կոստանդեայ Լամբրոնացւոյ, որդւոյ «մեծին Հեթմոյ Սեաստոսի եղբօր ա՞ն Ներսէսի». Ցիշատակարան 372բ.։ Նուիրուած է Ակների վանքին։ ԺԱՄԱՆԱԿ. 1272 թ. փրկչական. «Արդ գրեցաւ սա ի թուականութե՞ս հայկազնեա տումարիս ՉԻԱ, ի թագաւորութեան Հայոց Լեւոնի ա՞ծասիրի և ի հայրապետութ՞ե ա՞ն Յակովբայ»։

Ծանօթ. *Գեղեցիկ են մանրանկարչական փաստքերը։ Բազմաթիւ զարդերի և մանրանկարների հետ նաև Լեւոն Գ-ի, Կեռան թագուհու և զաւակների նկարը 380ա։*

Նկարուած է, ա) 378ա., բնագիրը, առաջին տող 6,8 սմ. մեր նկարը 3,7 սմ. գրեթէ նոյն մեծութեամբ, քիչ փոքր բնագրից։

բ) բնագիրը և նկարը գրեթէ նոյն մեծութեամբ։

93. 94. *Մատ. Ս. էջմ. Գ. շար. № 1360/3710 (առաջ սեպհականութիւն Երեւանի կաթուղիկէ եկեղեցւոյ). Ժողովածու, որի մէջն է և «Ցոյցք առաքելականք» Իրենէոսի։ Թուղթ, 25×16 սմ., թերթ, 383։ ԳԻՐ. բոլորգիր, լաւ, կանոնաւոր գրչութիւն, միիջեան, $19^{1}/_{2}\times11,2$ սմ. ԳՐԻՉ և ՍՏԱՑՈՂ Յովհաննէս արքայեղբայր (տես. Տախտակ Կէ 94. յիշատակարանը)։ Մի մասի գրիչն է Թորոս. «այ եղբայր, յիշեա զիս զԹորոս ի ա՞ր ք՞ս» 294ա, ԺԱՄԱՆԱԿ. Թիւ չկայ ձեռագրում, բայց գրուած է Կոստանդին թագաւորի և Հեթում Ա-ի մահուանից՝ 1170 թուից յետոյ։ Յովհաննէս արքայեղբայրը վախճանուած է 1293 թուին, (Ալիշ. Սիսուան 147, բայց կենդանի էր ՉԽԲ թուի ձմեռը. Երուս. Ս. Յակ. 2612/57)։ Ուրեմն գրուած է 1279—1293 թ. թ. մէջ։*

Ծանօթ. *Ձեռագիրս* unicum *է Իրենէոսի «Ցոյցք առաքելականք»-ով։ Նկարագրութիւնը տես* Des Heiligen Irenäus Schrift der apost. Verkündigung. Lic. Dr. Karapet Ter-Mekerttschian u. Lic. Dr. Erwand Ter-Minassiantz. Leipzig. 1907.

Նկարուած է ա) բուն Ձեռագրից 222ա. բնագիրը $17^{1}/_{2}\times3,2$, մեր նկարը $11\times5,1$ առաջին տողը։

բ) Ցիշատակարանը 28բ, բնագիրը 8×11 սմ., մեր նկարը քիչ փոքր, $6^{1}/_{2}\times9,2$ սմ.

95. 96. *Մատ. Ս. էջմ. № 1446/1328 (Կ 1410). Մեկնութիւն ժամագրոց Խոսրովու Անձեւացւոյ՝ Յաղագս զարմից Ս. Գրիգորի և Պատմ. Ներսէսի Հայոց Հայրապետի. Ձեռք Գլակ։ Թուղթ, 25×17 սմ. ԳԻՐ. Արևելեան մեծ բոլորգրով, խիստ ազգ գեղեցկութեամբ. միիջեան $20^{1}/_{2}11$ սմ.։ ԳՐԻՉ. Մկրտիչ քահանայ 176ա։ ՍՏԱՑՈՂ. Տիրատուր, վանահայր Սաղմոսավանից. «հրամանաւ և արդեամբ» «Տ՞րատրոյ, վերակացուի իշխողի և իշխեցելոյ վանաց, որ և Սաղմոս կոչի» 176ա. 307.։ ՏԵՂ. «Ի գեղաքաղաքիս Կարսի, ընդ հովանեաւ ս՞ր Ա՞ ծածնիս և ս՞ր վկայարանիս Կիւրակոսի և Յուղիտեա»։ ԺԱՄԱՆԱԿ. 1278 թ. Փրկչական. «ի Թվականութե՞ս հայոց ՉԻԷ»։*

Նկարուած են 96բ և 176ա.
ա) Բնագիրը 19,1×11 սմ. երկրորդ տող. մեր նկարը 13½×7½ սմ.։
բ) Բնագիրը 11×11 սմ. մեր նկարը 11,2×11,5 սմ.

97. 98. Մատ. Ս. էջմ. № 680/759 (կար 666)։ Մանր ուսմունք, կաշեկազմ, 7½×11 սմ., թերթ 181 հինը։ ԳԻՐ Աքանչելի բոլորգիր (տես մանուանց յիշատակարանը, նկարը, Տախտ. ԾԶ. ձայնանիշներով, միջեան 8½×5 սմ.։ ԳՐԻՉ. Ստեփաննոս քահանայ (ժամանակով և տեղով կարմար նոյնացնելու Գոյներիցանցի հետ, թէպէտ գրի բնոյթն ուրիշ)։ ՍՏԱՑՈՂ. Ստեփաննոս քահանայ «պատուական հոգեոր եղբայր մեր (գրչի)». ստացողի եղբայրներն են Կոստանդին քահանայ, Կիրակոս, Յովսէփ սարկաւագ։ Սրանց խնամող և սնուցիչն է «պատկառելի քահանայ և պատուելի ծերունի Դաւիթ»։ Տեղ. «Ի հռչակաւոր անապատս Սկևռայ, ընդ հովանեաւ ս̃ր Փրկչի. և մաւր լուսոյ Ա̃ծածնի և կենսագիր ս̃ր Նշանիս, մերձ յանմատոյց գղեակս Լամբրոնի, որ է գլուխ Տարսոնի և ի սարոտ մեծի լերինն Տաւրոսի. ի յաւ և յընտիր աւրինակաց»։ ԺԱՄԱՆԱԿ. 1278 թ Փրկչական. «ի թուիս հայոց ՉԻԷ» տես. նկար 98. Տախտ. ԾԶ.,

Նկարուած են. ա) 67ա. բնագիրը 8,1×4,6 սմ., մեր նկարը 8,5×4,7 սմ., գրեթէ նոյն մեծութեամբ։ բ) 180բ. բնագիրը 8,1×5 սմ., մեր նկարը 7,7×4,7. սմ. գրեթէ նոյն մեծութեամբ, քիչ փոքր։

99. Մատ. Ս. էջմ. № 1556/1563 (Կ. 1518). Նարեկ. թուղթ. 17×12,3 սմ. թերթ 399. ԳԻՐ, Արևելեան բոլորգիր (երկաթագրախառն). միջեան 12×8½ սմ։ ԳՐԻՉ. Մարտիրոս ՏԵՂ. «ի վանս Վանական վարդապետ(ի). առաջ(նորդ գո)լով Պետրոս վարդապետի», Խորանաշատու վանք։ ԺԱՄԱՆԱԿ. 1283 թ. Փրկչական. «ի ՉԼԲ թվիս գրեցաւ գիրքս Գրիգորի Նարեկեցի» (sic).

Նկարուած է 312բ., բնագիրը 8,2×8½ սմ., մեր նկարը 8,1×8,4 սմ., գրեթէ հաւասար մեծութեամբ։

100. Մատ. Երուս. Ս. Յակ. № 2568|3., Աւետարան նկարազարդ, կազմն արծաթապատ, նոր. ՌՃԼԹ. թուականից. 25½×19 սմ.։ Մագաղաթ, շատ ազնիւ։ ԳԻՐ. Միջուն բոլորգիր, երկիջեան, 16½×5 սմ., առանց մանր ծանօթութեանց ներքևում։ ՍՏԱՑՈՂ. Վասակ արքայեղբայր, Կոստանդին թագաւորի որդին։ ԺԱՄԱՆԱԿ. 1270—1284 թ. թ. մէջ. Վասակ արքայեղբօր մահը «ՉԼԳ», «ի մարտի ի ԺԳ»։

Ծանօթ. Ձ-ը մէկն է ԺԳ. դարու գրչութեան կարևոր յիշատակներից մանրանկարների և փառազարդերի ճոխութեամբ։ Մանրանկարներից նշանաւորագոյնն են ստացողի և իւր երկու որդւոց պատկերները, որոնց տակն էլ Յովհաննէս արքայեղբօր մակագրութիւնն է մեր նկարը, 320ա։

Բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

101. Մատ. Ս. էջմ. № 944/1500 (Կ. 924) «Ճառընտիր Մխիթար Այրիվանեցու» անունով յայտնի ժողովածու փիլիսոփայական գրուածոց թարգմանու-

Թիւնների, հին և նոր Կտակարանի գրքերի, Ժամագրքի և ուրիշ բազմաթիւ մեկնաբանական գրքերի։ Թուղթ. $35\frac{1}{2}\times24\frac{1}{2}$ սմ. քառածալ, 1188 թերթ. երկիւնեան, խորաքանչիւրը $28\frac{1}{2}\times9{,}8$ սմ.։ ԳԻՐ. Անցման բոլորգիր, մօտ շեղագրին։ ԳՐԻՉՆԵՐ Մխիթար վարդապետ (Այրիվանեցի և Սարգիս «... Ողորմեցի՞ք ո՞ւ ա՞ծ ա՞ր Մ՞խ մ՞գխ գծաւղի և սատցչի. 40ա, տես և 879. Լուսանցքում 723բ. «զՍարգիս գրիչ առ ք՞ս յիշեայ», գրուած կարմիր թանաքով, բնագրից տարբեր, կանոնաւոր բոլորգրով։ Հաւանօրէն լուսանցքների զարդագրողը կարմիր թանաքով. Սարգիսն էր։ ՅՏԱՑՈՂ. Գրիչ Մխիթար վարդապետ Այրիվանեցին, որ արքեպիսկոպոս էր ըստ 79ա. «Դոհութիւն և փառաբանութիւն» քառոզի մէջ եղած յիշատակութեան։ ԺԱՄԱՆԱԿ. Ձեռագրում թիւ չկայ նշանակուած. բայց նոյն քարոզի մէջ յիշուած են Յակոբ կաթողիկոս (1268—1287), Լեւոն Գ թագաւոր Հայոց (1270—1289), Դեմետր Վրաց թագաւոր (1270—1287). ուրեմն գրուած է 1270—1287 թ թ. մէջ։

Ծանօթ. Հայ գրչութեան գլուխ գործոցներից մէկն է այս Ձեռագիրը մանրանկարների և գրերի կամ զարդագրերի պէսպիսութեամբ ու գեղեցկութեամբ։ Մեծ տօների ընթերցուածների սկսուածքները զարդարուն և առաջին տողերը սիրուն փառագրերով. սովորական ընթերցուածների սկսուածքը արանչելի զարդագրով կամ թռչնագրով, պարբերութիւնների սկզբնագրերը, ընթերցուածների առաջին տողերը երկաթագիր, երկրորդը բոլորագիր, բայց ոսկով։

Նկարուած է 415ա. բնագիրը $15{,}7\times7{,}8$ սմ., մեր նկարը $10\frac{1}{2}\times5$ սմ.։

102. Մատ. Ս. էջմ. № 892/979 (կար. 873). Ճաշոց Հեթում թագաւորի նկարազարդ աղնիւ մագաղաթ, $33\frac{1}{2}\times24\frac{1}{2}$ սմ., 476 թերթ։ ԳԻՐ. Բոլորգիր, հաստ, գեղեցիկ և կանոնաւոր, երկիւնեան $25{,}2\times7\frac{1}{2}$ սմ.։ ԳՐԻՉՆ ու ՆԿԱՐԻՉԸ տարաբաղդաբար անյայտ։ ՅՏԱՑՈՂ. Հեթում Բ. թագաժառանգ ժամանակ. «Հրամանաւ ա՞ծայէր և ամենիմաստ պարոնին Հեթմոյ որդւոյ ք՞ասպասկ ա՞ր արքային Լեւոնի»։ ԺԱՄԱՆԱԿ 1287/8 թ. Փրկչական. «ի թուականութեանս հայոց ՉԼԷ յանկ եկեալ կատարեցաւ ա՞ծախաւս մատեանս»։ Յիշատակարան 469ա.

Նկարուած է 1164ա. բնագիրը $12\times9{,}8$, լուսանկարը նոյն մեծութեամբ,

103. Մատ Ս. էջմ. № 226/195 (Կ 219). Աստուածաշունչ (ոչ լիակատար). Ընտիր մագաղաթ, հարթ և փայլուն մաքուր միացած տեղերում. $24{,}6\times16\frac{1}{2}$ սմ.։ ԳԻՐ. Արանչելի բոլորգիր։ ԳՐԻՉ. «Անարժան գրիչ Կոստանդին ծառայ և աշակերտ վերատացեալ ա՞ նն խմում (այսինքն Յովհաննու արքաեղբօր) 195բ։ Անյայտ գրչի գործ են 364—406 թերթերը, որոշ չափով նմանութիւն ունի Սմբատեանի՝ Հեթում թագաւորի Աստուածաշնչի գրչի հետ, բայց ոճով գժուար է։ ՅՏԱՑՈՂ. Յովհաննէս արքայեղբայր։ Մի քանի տեղ իր իսկ ձեռքով յիշատակարաններ գրած. 370ա. 403ա. ԺԱՄԱՆԱԿ 1284—1288 փրկչ. «ի թվա» հայոց ՉԼԷ գրեցաւ»։ ՏԵՂ. Սիս—Ակներ ?

Ծանօթ. Պարբերութիւնների գլխատառերը, հատուածների սկզբնագիր փառագրերը և լուսանցքի սկզբնազարդերը կարմրագրով։ Ճոխ չէ, բայց ընտիր գրչութիւն է։

Նկարուած է 139ա. բնագիրը

104 Հատուած (Fragment) Տ. Յուսիկ Ծ. վարդապետի, մագաղաթ, կարած Գանձասարի մի Աւետարանի ձեռագրից: ԳԻՐ. Գեղեցիկ, մանր բոլորգիր.: ՍՏԱՑՈՂ. Յովհաննէս եպիսկոպոս, արքայեղբայր. ստացողի պատկերով, եպիսկոպոսական զգեստաւորութեամբ: ԺԱՄԱՆԱԿ. ԺԴ. դարու երկրորդ կիսում, 1293-ից առաջ:

Բնագիրը պատկերի հետ 12½×8,8 սմ. մեր նկարը 9½×5,6 սմ.:

105 106 107. Մատ. Ս. Էջմ. № 156/179 (Կար. 150). Աստուածաշունչ հին և Նոր Կտակարանաց. Նուրբ և ազնիւ և փափուկ, մագաղաթ, 23×15½ սմ. 578 թերթ: ԳԻՐ. Փարթամ, ազնիւ բոլորգիր, երկսիւնեան 19,3×6 սմ.: ԳՐԻՉ և ՍՏԱՑՈՂ. Ստեփաննոս Գոյներիցանց Գէորգ Լամբրոնացու աշակերտ, ժամանակակից արհեստակիցների կողմից «անհատ գրիչ» կոչուած. (Թումաս գրիչ Երուս. Ս. Յակոբ. մատ. № 888), «այն որ չի էր և պատարուն յարհեստ գրչութեան եւ ընդ ընտիր հաշակեալ» (Ստեփաննոս գրիչ «մականուն Յերկայն կոչեցեալ», 1321 թուին. Թորոս Աղբար. Սրուանձտեանցի. եր. 345.: ԺԱՄԱՆԱԿ 1292 թ. Փրկչ., Հայոց ՉԽԱ: տես նկարը Տախտ, որ գրչի յիշատակարանն է:

Ծանօթ. Գրքերի սկզբնատառութիւնը, վերնագրերը կարմիր, միջին կամ փոքր երկաթագրով, երբեմն էլ բոլորգրով: Տների գլխատառերը նոյնպէս կարմրագիր:

Լուսանկարուած են. ա) 527ա. բուն ձեռագրից, բնագրի և մեր նկարի մեծութիւնը նոյն, 11×5½ սմ. առաջին սողը: բ) 526բ. Գրչի գլխաւոր յիշատակարանը աւելի փոքր գրով, քան Ձեռագրի գրչութիւնը, բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ, 11½×6 սմ. առաջին սողը: գ) 575բ. խիստ մանր, բայց գեղեցիկ, կանոնաւոր և մաքուր բոլորգրով. որ գրչի մեծ հմտութիւնն ու կարողութիւնն է ապացուցանում. բնագիրը 8,6×12,1 սմ., մեր նկարը 8,5×11,9 սմ., գրեթէ նոյն մեծութեամբ:

108 109 Մատ Ս. Էջմ. № Գ. 22/2848 Աւետարան, նկարազարդ, բացը 32½×24½ սմ., 318 թերթ: ԳԻՐ բոլորգիր, երկսիւնեան 21×6 առանց նորքերի ծանօթութեանց: ԳՐԻՉՆ է. և Նկարիչը Մամիկ սարկաւագ (նաև քանդակագործ. տես Ալիշան. Սիսական): ՍՏԱՑՈՂՔ Յովհաննէս և Թադէոս քահանայ եղբայրներ (տես. նկարը Տախտ. ՀԳ): «Ի պէտս մաքրարնակ անապատին և ցանկալի մենանոցին, ի բնիկ բնակութեանն խրխանց Ռոսաքարոյ»: «Եւ եղին յարկեղ ս՛ր եկեղեցւոյն խրխանց սրբոյն Գէորգայ»: ՏԵՂ. «Ի նահանգիս Սիւնեաց, ի գաւառիս Վայոյձոր, ի փառարնակ և ի հոյակապ և ի հռչակաւոր մենաստանիս, Նորավանս կոչեց(եալ)ոյ յարքունապատիւ դահոյս հայրապետութե՛ ... և վերադիտողի տանս Սիւնեաց Տ՛ն Տ՛ր Ստեփաննոսի, առաջնորդի ս՛ր ուխտիս: ԺԱՄԱՆԱԿ. 1292 թ. Փրկչական. «Ի Նոր շրջագայութե ս ՄԹ, ի չորեքտասան յարէրնիս ԽԱ թվոց յաւելմամբ. և ի ԽԹ ընտիրախնիս Զ իւ անեցեալ. յաւթնեկ հարիւրիս և ի քսանէ ժ եկիս, միակիւ պակասեալ»:

Նկարուած է ա) 148բ. յիշատակարան, կարմրագեղով. բնագիրը 21½×15. մեր նկարը 13,1×8 սմ.: բ) Վերջին յիշատակարանից. 317բ. 22×6,1, մեր նկարը 12,6×3½ սմ.:

110. Մատ. Ս. էջմ. № 1180/1526 (Կար.). Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի ի Ներսիսէ Լամբրոնացւոյ. բուղբ. 50½×33½ սմ., թերթ, 906։ Գիր. Խոշոր, արևելեան բոլորգիր (երկաթագրախառն ձևերով), երկիւջեան 40½×10½ սմ.։ ՍՏԱՑՈՂ. Համազասպ Մամիկոնեան Յովհաննայ վանից. ԺԱՄԱՆԱԿ. 1224 թ. Փրկչական. «ՉԽԳ» Հայոց։

Նկարուած է 309ա., բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

111. Մատ. Ս. էջմ. № 157/180. Աստուածաշունչ Հեթում Բ-ի, պատկերազարդ։ Մագաղաթ, նուրբ, փափուկ և ազնիւ, 22×16 սմ., թերթ 576.։ Գիր Մարի փոքրատեսակ բոլորգիր, երկիւջեան 18,2×5,2 սմ.։ ԳՐԻՉ. Ստեփաննոս (կարծում ենք Ստեփաննոս Գոյներիցանց)։ Ստացող. Հեթում Բ. թագաւոր Հայոց. «Զբարեպաշտ]արքայն Հայոց զՀեթում զեկեղեցւոյ ա՛յ բարձրացուցանողն և զվարժեալն ա. իմաստութե՛ց, յիշման արժանի արարէք զսա, ով որ ընթեռնոյք զսա կամ աւրինակէք. զի ստացաւ զսա յիշատակ իւր և ծնողաց իւրոց յասախս և յապառնումն» 47ա.։ Ժամանակ. 1295 թ. Փրկչական. «Թուակ.» ՉԽԴ գրեցաւ 575բ.։

Նմուշ. Ձեռագիրը զարդարուած է ճոխ մանրանկարներով. շատերի ուրուագիծը միայն քաշած։ Գրքերի սկզբնագիրը մանրանկարչական (թռչնագիր, մարդագիր են), առաջին տողը երկաթագիր՝ ոսկով։ Գլխագրութիւնների և անուանց գլխագրերը, «ա՛ծ», «տ՛ր ա՛ծ», «յ՛ս», «ք՛ս» իրենց հոլովումներով նոյնպէս ոսկեգիր։ Ցանկերի մէջ, գլխաւորապէս վերնագրերը կարմրադեղով, շատ հազիւ նաև կանաչ 534ա-բ.։ Ձեռագիրն ընդհանրապէս մանր բոլորգրով է, բայց նախադրութիւնների մէջ շատ աւելի մանր, թէև զարմանալի կանոնաւորութեամբ։

Նկարուած է 147ա., բնագիրը և գրեթէ մեր նկարը նոյն մեծութեամբ։

112. Մատ. Ս. էջմ. № 526/177 (Կ. 513). Հակաճառութիւն ընդդէմ երկբնակաց Յովհաննու Սարկաւագ վարդապետին, Թերթ։ Թուղթ. հաստ, 25×16 սմ., 131 թերթ։ ԳԻՐԸ Խոշոր, արևելեան անցման բոլորգիր (երկաթագրից) միջեան 18½×10 սմ.։ ԳՐԻՉ, ՍՏԱՑՈՂ, ԺԱՄԱՆԱԿ անյայտ։ Հնագրական տեսակէտով ԺԳ. դարու գործ։

Նկարուած է յիշատակարանից 51բ., բնագիրը 7½×9,7, Լուսանկարը նոյն մեծութեամբ։

113-114. Պատառիկ, Fragment) Տ. Խաչիկ ծ. վարդապետի. մագաղաթ, մեծ երկաթագրով, ձայնանիշներով Շարական։ Գրին և պատկերին նայելով ԺԴ. դարու առաջին կէսի գործ։

Մինչև այժմ երկաթագիր շարական գտնուած չէ. ուստի և այս պատառիկները արժէքաւոր։

1ա. Բուն գիրը 9×10 սմ., մեր նկարը 6×7 սմ.։

1բ. Բնագիրը 14½×9 սմ, մեր նկարը, 10×5,8 սմ.։

115. Մատ. Ս. էջմ. № 237/379 (Կ. 230). Աւետարան, Թուղթ 31,3×24½ սմ. թերթ 190։ ԳԻՐ. Հետաքրքրական բոլորգիր, արևելեան։ ԳՐԻՉ. ՏԵՂ, ԺԱ-

ՄԱՆԱԿ. Անյայտ Հաւանօրէն ԺԴ. դարու ձեռագիր։ Երկրորդ ստացողներն են Յովհաննէս քահանայ և իւր եղբայրը Սիմէոն «Թվ. Հայոց ՊԴ»=1355 թ։

Նկարուած է 127ա. բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

116. *Մատ. Ս. էջմ.* № 530/500 (Կ. 517), Ընդհանրական Ներսիսի Շնորհալւոյ և այլ դաւանաբանական թղթեր։ Թուղթ, 431 թերթ։ ԳԻՐ. բոլորգիր. ԳՐԻՉ. Վարդան՝ ամբողջի համար, բայց այստեղ տալիս ենք միայն Գրիգոր Անաւարզեցու ձեռքը։ ՍՏԱՑՈՂ. Գրիգոր կաթուղիկոս (Անաւարզեցի). «Զերջանիկ կաթուղիկոսն զտ՞ր Գրիգոր ստացող գր" յիշեցէք աղօթիւք ի ք՞», այլ և զՎարդան գր". 209ա. տես 230բ.։ ԺԱՄԱՆԱԿ. Ուղարկուած է կաթուղիկոսի կողմից նուէր Գլաձորի նշանաւոր վարժապետ Եսայի վարդապետ Նչեցուն «ի թվիս ՉԾԴ», 1305 թ. Փրկչական. տես նկարը, Տախտակ ՀԶ։

117. *Մատ. Ս. էջմ.* № 159/182 (Կ 153)։ Աստուածաշունչ. Թուղթ, սկզբում տեղտեղ մագաղաթ, 24×16,2 սմ., 735 թերթ։ ԳԻՐ. Բոլորգիր, երկսիւնեան 22½×6 սմ.։ ԳՐԻՉ. Մարտիրոս վարդապետ՝ աշակերտ Գէորգ Լամբրոնացու. 318ա. «Զմարտիրոս վարդապետ աշակերտ Գէորգեայ (Ս)կեւացւոյ (Նաև Լամբրոնացի կոչուած), զգրաւղ գրոցս յիշեցէք ի տր"»։ ՏԵՂ. «Դրեցի զսա ի վանքս հաչակելի, որ Դաներ կոչի, մերձ ի Բարձրն կոչեցեալ բերդ». «յանապատս Խաչատրոյ ի վերայ գետոյս Ճղրկայ»։ ԺԱՄԱՆԱԿ 1303—1306 թուերին՝ հետզհետէ գրելով։

Նկարուած է. 185ա. բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

118. *Մատ. Ս. էջմ.* № 153/177 (Կ. 147). Աստուածաշունչ. Մագաղաթ, լու 25,1×18,6 սմ., թերթ 609, բուն գրչինը 595։ ԳԻՐ. բոլորգիր, երկէջ, 19,8×6½ սմ։ ԳՐԻՉ. Մովսէս (Երզնկացի)։ ՏԵՂ. Կարծում եմ գրուած է Կիլիկիայում և ապա նուիրած «դամբարանի ս՞ր Լուսաւորչին», «ի լերինս Սեպուհ, ի Մանիա յայրսն»։ ԺԱՄԱՆԱԿ ԺԳ. դարու վերջերը կամ ԺԴ.-ի սկիզբը։

Նկարուած 202ա, բնագիրն ու մեր նկարը նոյն մեծութեամբ։

119. *Մատ. Ս. էջմ.* № Գ. 21×3722. Աւետարան, նկարազարդ, թուղթ. 33×27 սմ., 362 թերթ։ ԳԻՐ. Հաստ և խոշորատիպ բոլորգիր. երկէջ, տանից ծանօթ. 1,22×8 սմ.։ ԳՐԻՉ. Յակոբ։ Նկարիչ Սիմէոն կրօնաւոր քահանայ «ծաղկող և կազմող». «և կատարեցաւ հողաշութի՞ սորայ ի մեծ դաստակերտն Աստապատ կոչեցեալ»։ ՏԵՂ. «Ի մայրաքաղաքիս, որ կոչի Նախիջևան, մեծ Նահապետին Նոյի շինեալ ձեռամբ տունս իւր»։ ԺԱՄԱՆԱԿ. 1304? կամ 1306 Փրկչական. Յիշատակարանից 355բ—356ա. «Արդ վերաւարտել եղև սայ ի թուաբերութե՞ս բստ յաբեթական տումարիս հնդկտասան յոբելինիս, յաւելեալ եաւթն թուով. և ի յեղանելս նախաստեղծին ի վախճութ՞ն (այսպէս) վայրէն և ի ծաղկազարդ բուրաստանէն մինչև ցայն ամ յարարարդին միահամուռ միանգամայն ամք իբրև ՉԾ և Զ յաւելեալ քառակի թուով։ Եւ ի կենարար յայտնութ՞էն ա՞յն բանի մինչև ցայն ամ չարամանեալ պարփակին ամք իբրև ՌՅ և Զ. Յորում և

*

թուականս Հայոց ՉԾԳ էր· ի թագաւորութեանն Հասոյ մեծաց երկցս երա-նեալ և խաղաղնազգեաս ճգնաւոր կրաւնաւորին մեծին Հեթմո···»։

Նկարուած է 32ա․, բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

120․ Մատ․ Ա․ էջմ․ Գ․ № 187/2520, ժողովածու մեկնութեանց Յովհաննու աւետարանչի (Սանփանոսի Սիւնեաց, Նանայի, Անդրէի և Արեթաս եպիսկոպոսաց Կեսարու Կապադովկիոյ), Թուղթ․ 16½×12 սմ․, թերթ 344, ԳԻՐ, Ընտիր բոլորգիր, միջնակ 13×9 սմ․։ ԳՐԻՉ և ՍՏԱՑՈՂ․ Յովհաննէս վարդապետ Երզնկացի նշանաւոր մատենագիրը։ ԺԱՄԱՆԱԿ․ 1306 թ․ Փրկչական «Դրեցաւ ի թ՞ւ ՉԾԵ, ի քաւն և ինն մարտի ամսոյ»։

Նկարուած է 344ա․ բնագիրը 13½×9½× սմ․, մեր նկարը 12×8½ սմ․, քիչ փոքր բնագրից։ Նկարուած երեւում նորոգուած են յետին գրչով․ ա) տող—ող, մա․ բ) տող—հան․ գ) տող—գակ՞դ) տող—Ց՞հո․ ե) տող—ս, վերջին տողում—ւ ի բխ․»։

121․ Մատ․ Երուս․ Ա․ Յակ․ № 2566/11․ Աւետարան, պատկերազարդ, կազմը արծաթապատ, Տախտ․ ՉԱ․ պատկերաւոր, 27×19,7 սմ․։ Մագաղաթ ընտիր։ ԳԻՐ․ բոլորգիր, երկսիւնեան 18,8×5 սմ։ ԳՐԻՉ․ Գրիգոր քահանայ, որի հօրեղբայրն է Գրիգոր արեգայ, կնոջ անունը Հեղինէ։ Նկարիչ․ Սարգիս (քահանայ, որդի Գրչին), որ «շատ նկարեաց սա յայս գրի»։ ՏՍԱՑՈՂ՝ պիտի լինէր «(Սանփ)անոս ժամանուն Սերաստացի» քահանան, բայց ջնջուած է չափերաների մէջ առնուածը։ Գրչի տարբեր թանաքով գրած մի երկրորդ յիշատակարանից երեւում է, որ մտադիր էր ինքն անձամբ յիշատակ տանել Երուսաղէմ «ի ս՞ր Յակոբ և վ՞ն բազում մեղաց իմոց ոչ կատարէր խորհուրդ սրտի իմոյ»··· Թուղթ ընկած լինելու պատճառով յայտնի չէ, ինքն է Երուսաղէմ տարել, թէ ուղարկել է։ Որեմն անյայտ պատճառով Սանփանոս քահանայ Սերաստացին այլ եւս չէ ստացել։ ՏԵՂ․ Գրուած է «ի յարկի և հովան(ե)աւ սուրբ Նշանի»?։ ԺԱՄԱՆԱԿ․ 1307 թ․ փրկչական․ [Յ] ամի եւթն հարիւրորդի յիսներորդի թուականիս զարմիս Հայկայ, ի թագաւորութ՞ աշխարհիս Կիլիկիոյ (այսպէս) Լեւոնի, որ ի սոյն ամի ածաւ, որդւոյ պարոնին Թորոսի, որդւոյ արքային Լեւոնի, և ի փոխանակ տեառն կաթուղիկոսի (Անաւարզեցւոյ) ի Գրիգորոսի»։

Նկարուած է վերջին յիշատակարանը․ բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

122․ Մատ․ Ա․ էջմ․ Գ․ շար․ № 933/2930․ Աւետարան, նկարազարդ, թուղթ, 31,3×24, թերթ 249։ ԳԻՐ․ Արեւելեան բոլորգիր խիստ ռեակ գեղեցկութեամբ, երկաթագրի հետ խառն, երկսիւնեան 26×15 ներքեւի ծանօթութիւնների հետ։ ԳՐԻՉ․ Թոմա «ի գառն քահանայական կարգէ», որի աւագիչն է Սարգիս վարդապետ և ծնողքը Վիրապշահ և Թագուհի (այսպէս)։ ՏԵՂ․ Ընդ հովանեաւ ս՞ր Գրիգորիս և ս՞ր Սարգսիս (Սիւնեաց նահանգում)։ ԺԱՄԱՆԱԿ․ 1315 թ․ Փրկչական «ի թուականութեանն Հայոց ՉԿԴ (յամսեանն) յարեգ ԺԲ, յաւուր երկուշաբթի, Ժ․ ժամու, հայրապետութեանն Տ՞ր Յովաննէս Աւագկին»։

Նկարուած է 127բ․, բնագիրը 14×15 սմ․, մեր նկարը 8½×9 սմ․

123 124. *Մատ. Ս. էջմ. № 182/206 (Կար 176). Աստուածաշունչ նկարազարդ, կաշեկազմ 26×19 սմ. մագաղաթ. 26,2×18,6 սմ. 580 թերթ։ ԳԻՐ. Ընտիր բոլորգիր, երկէջ 21×6½ սմ.։ ԳՐԻՉՆԵՐ. Կիրակոս և Յովհաննէս Երզնկացիք։ ՍՏԱՑՈՂ. Գլաձորի նշանաւոր վարժապետ Եսայի Նչեցին։ ԺԱՄԱՆԱԿ. 1318 թ. Փրկչական. «յլրումն մեզ մարդեղութե՞ թուին Յ՞ի Ք՞ի ա՞ն մերոյ և ՌԳԾ և ԺԸ. և ըստ խառնվային տոմարին ՉԿԷ»։ ՏԵՂ. Անյայտ, բայց անկասկած Գլաձորում։*

Ծանօթ. *Ձեռագիրս ԺԴ. դարու և Գլաձորի դպրոցի գրչութեան արուեստի գլուխ գործոցներից մէկն է. թէ՛ գրի գեղեցկութեամբ և թէ՛ մանրանկարների, ծաղկագրերի ճոխութեամբ։ Գրքերի սկսուածքը զարդարուն և մանրանկարչութեան գունազարդ պէս պէս գրերով (թռչնագիր, մարդագիր, կենդանագիր). հետևեալ՝ տողը, երբեմն մի քանի տող, ոսկի երկաթագրով. պարբերութիւնների գլխատառերը ոսկեգիր, ինչպէս մեր նկարի մէջ (Տախտակ Զ.) Զ. և Գ.։ Աւետարաններում պարբերութիւնների առաջին տողերը երբեմն և միւս գրքերում, կարմրագրով։*

Յիշատակարանք 518բ. 540բ. 588բ։

Լուսանկարուած են ա) 301բ. Յովհաննէս Երզնկացու ձեռքը. բնագիրը 9×6,2 սմ., մեր նկարը 8,4×5,7 սմ.։ բ) 518բ. Կիրակոսի ձեռքը, բնագիրը 11½×6,2 սմ., մեր նկարը 11,2×6 սմ.։

Նկարիչ. *Թորոս։ Ուրիշ ձեռագրերում էլ, որ. № 181/353 (Կար. 175), այս երեքը միասին աշխատել են։ Իսկ Կիրակոս և Յովհաննէս Երզնկացիք բազմաթիւ գրքեր ունին գրած կամ ստացած, միասին կամ առանձին։*

127. *Մատ. Ս. էջմ. № 1328/1314 (Կ. 1292)։ Մեկնութիւն աւետարանին Մարկոսի. Բարսեղ վարդապետի, թուղթ. 26½×18½ սմ. 308 թերթ.։ ԳԻՐ, Բոլորգիր, միջեան 20×3,8 սմ.։ ԳՐԻՉ Մեկնութեանս հեղինակն ինքը Բարսեղ վարդապետ։ ՏԵՂ. «Եւ գրեցաւ սա ի վանս, որ զոչի Մաշկուոր, ի հայրապետութե՞ն տ՞ն Կոստանդեա կաթուղիկոսի Դրազարկեցւոյ»։ «Եւ էր ի ժամանակիս յայսմիկ վերակացու և առաջնորդ ս՞ր ուխտիս Տէր Հայրապետ եպիսկոպոս»։ ԺԱՄԱՆԱԿ. 1325 թ. Փրկչական. «Եւ էր թիւ հայոց ՉՀԴ.» տես նկարը Տախտակ ՀԵ։ «Արդ եղև վճար այսր մեկնութե՞ ի թագաւորութե՞ն Լևոնի որդւոյ Աւշնի, նորընծայ և գեղարդյս մանկանն յոյժ երկեղածի և ա՞ծասիրի»։*

Ծանօթ. *Այս ձեռագիրը արժանի է ուշադրութեան իբրև սկզբնական օրինակ* (original), *հեղինակի ձեռքով գրուած։*

Նկարուած է 308բ, յիշատակարանի վերջին մասը, բնագիրը 5,8×13,3 սմ. մեր նկարը 4,2×9½ սմ.։

128. *Մատ Ս. էջմ. № 1572/1576 (Կ. 1534). Շարական ոսկէնկար, ազնիւ և նուրբ մագաղաթ, 13½×9½ սմ., 357 թերթ։ ԳԻՐ. Ընտիր բոլորգիր. 10×6,3 սմ.։ ԳՐԻՉ. Ստեփաննոս վանական քահանայ. ՏԵՂ. Դրազարկ անապատ, որ ի Սիս։ ԺԱՄԱՆԱԿ. 1318 թ. Փրկչական։*

Ծանօթ. *Գրչի, տեղի և ժամանակի մասին մեր տեղեկութիւնը քաղում ենք յետին գրչի յիշատակարանից, որ օգտուել է անշուշտ սկզբնականից.*

357բ. «Արդ գրե՜ղ եղև ոսկէնկար շարականոցս ի թուին ՉՀԷ, ձեռամբ Ստեփաննոս վանական քահանայի ի Դրազարգ անապատն, որ ի Սիս. Եւ յետ ՅԻ և Գ ամին ստացող ամին Պօղոս քահանայ ոմն ի յԱրզրում քաղաքէ փո··· (թերի, վերջին թերթն ընկած լինելու պատճառով)։

Մեծ տօների կանոնների սկզբնաւորութեան առաջին տողերը գունազարդ, մանրանկարչական տառերով, մնացածը ոսկի երկաթագրով. միւս կանոնների սկզբնագիրը մանրանկարչական, իսկ շարունակութիւնը տողի մէջ ոսկի բոլորգիր, երկրորդ տողը կարմրագրով։ Մեր նկարի մէջ «Փառաւորեալ» եղ. տողը ոսկէգիր է, իսկ երկրորդը կարմրագիր։

Նկարուած է 73ա բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

129. Մատ. Երուս. Ս. Յակոբ. № 1882 Յայսմաւուրք Կիրակոս Արևելցու, թուղթ, երկսիւնեան, 19½×5½ սմ., գրուած է 1316 թուին, Վահան գրչի ձեռքով։ Բայց 1330 թուին Լևոն Դ. թագաւորը նուիրում է Քարաքոյ, այժմ Քերէք, Յորդանանի ձախ ափին, գիւղի եկեղեցուն։ Մեր լուսանկարը այդ նուիրաբերութեան յիշատակարանն է՝ գրուած բագատուրի ձեռով։ Յիշատակարանի բնագրի չափը չունինք, բայց մեր նկարը փոքր ինչ աւելի մեծ է բնագրից. Զ-ի գրի չափն ի նկատի ունենալով։

130. Մատ. Ս. էջմ. № 60/167 (Կ.) Աստուածաբանութիւն Դիոնեսիոսի, թուղթ. վատ, փափուկ, 24,6×16,8 սմ., թերթ 330։ ԳԻՐ. բոլորգիր, երկսիւնեան, 17×8×5 սմ.։ ԳՐԻՉ. Եսայի վարդապետ Նչեցու աշակերտներից մէկը՝ առանց անուան յիշատակութեան։ ՏԵՂ. Գլաձորի վանքը Վայոց ձորում, առանց յիշատակութեան։ ԺԱՄԱՆԱԿ. Առանց յիշատակութեան, 1284—1335 թ. թ. մէջ։

Ծանօթ. Ձեռագրի վերայ՝ լուսանցքներում, Եսայի Նչեցին գրել է իր լուծմունքը, որով և հետաքրքրական։

Նկարուած է Եսայու Նչեցու ձեռքը նօտրի և շղագրի ձևերով 55ա։

131. Մատ. Երուս. Ս. Յակ. № 2649/94. Աւետարան, «Ծովէն եկած», Կազմն արծաթապատ, ոսկէջրած, ոսկերչական ընտիր գործ. 25½×13,3 սմ.։ Ձեռագրի ժամանակակից։ Մագաղաթ։ ԳԻՐ. Բոլորգիր, երկսիւնեան։ ԳՐԻՉ. և Նկարիչ. Սարգիս քահանայ Պիծակ. «Սարգիս նըւաստ և սուտանուն ք˜հ.» «զրողիկ ս˜ր աւետարանիս և զոսկաւղ»։ Խնդրում է յիշել» «զծ˜ն. իմ զԿիրակոս ք˜ն և զՀեղինի և զքոյրն իմ Թեֆանու զկնայ» առ ք˜ս. . . և զաշակերտն իմ զՅակոբ»։ ՍՏԱՑՈՂ. Գրիգոր քահանայ, որ գրել է տալիս Գէորգ Լամբրոնացու կամ Սկևռացու օրինակից։ Ստացողի ամուսինն է Խոսրովանոյշ, «Ձիաւոր պ˜ր Բարթողոմէոս»-ի և նորա Ալիծ կնոջ դուստրը։ Աւետարանը նուիրուած էր վերոյիշեալ ձիաւորի շինած Ս. Սարգիս եկեղեցուն։ ՏԵՂ. «Ի քաղաքիս Սիս ընդ հովանեաւ ս˜բ Հոգւոյն և այլ բազմահաւաք սրբոց, որք աստ են»։ ԺԱՄԱՆԱԿ. 1332 թ. Փրկչական. «Ի թուիս հայոց ՉՁԱ··· ի հայրապետութե˜ տ˜ն Յակովբայ քըեր, որդոյ տ˜ն Գրիգորի. Եւ ի թագաւորութե˜ն Լևոնի չորրորդի «որդւոյ Աւշնի Հայոց արքայի. յայսմ ամի պսակեցաւ ընդ փռանգ թագուհին Լևոն»։

Նկարուած է վերջին յիշատակարանից, բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

132. *Պատառիկ (*Fragment*) Տ. Խաչիկ ծ. վարդապետի № 13 (տես Ցուցակ Ձեռագրաց Յակոբ Թոփճեանի. Վաղարշապատ 1898. Բ. մաս եր. 30).* թուղթ *մի թերթ։ ԳԻՐ. Ընտիր բոլորգիր։ ԳՐԻՉ և ՍՏԱՑՈՂ. Յունան գծող։ ՏԵՂ. Գլաձորի վանք «ի Ջորս Վայոց, ի յանապատիս մեծափառ Գայլեձոր կոչեցեալ, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի Նախավկային և ուգնականութ՞ր մեծ վարժապետիս վերոյասացեալ Եսայեաս»։ ԺԱՄԱՆԱԿ. 1334 թ. Փրկչական. «բայց գրեցաւ ի թուի հայոց ի յեւթն հարիւրորդի ութսուներորդի երրորդի»։*

Բնագիրը մի երես $12^1/_2 \times 8^1/_2$ *սմ., մեր նկարը. 10×7 սմ.։*

133. *Մատ. Ս. էջմ. № 1619/1622 (Կ. 1581). Ճաշակոց,* թուղթ. *12,×8,2 սմ., թերթ 315։ ԳԻՐ. բոլորգիր, միջեան 9,1×5,8 սմ.։ ԳՐԻՉ. Թորոս քահանայ. ՏԵՂ. Աւագ անապատ. «Ընդ հովանեաւ ս՞ր Ա՞ ծածնի և կենսակիր ս՞ր Նշանիս». (Սկեւռա?)։ ԺԱՄԱՆԱԿ. 1335 թ. Փրկչական. «ի թուիս հայ. ՉՁԵ». տես նկարը (Տախտակ ՁԴ)։*

Նկարուած է 314բ—315ա. խորաքանչիւր երեսի մեծութիւնը բնագրում 9,1×6 սմ., մեր նկարը $8,2 \times 5^1/_2$ *սմ.։*

134, էջմ № 3793, 88բ. Տախտ. ՁԱ. 1346 թ.։

135. *Մատ Ս. էջմ № ? ԳԻՐ Նոտրգիր անցման (բոլորգրից նոտրի)։ ԳՐԻՉ. «Դաւիթ Թղթագիր»։ ԺԱՄԱՆԱԿ. 1447 թ. Փրկչ. «ի մեծ թվին. ՋՂԶ»։*

136. *Մատ. Ս. էջմ. № 1403/1380 (Կ. 1367). Պօղոսի թղթոց մեկնութիւն.* թուղթ. *11,8×16 սմ., թերթ 343։ ԳԻՐ. բոլորգիր, երկիջեան 17×*$5^1/_2$ *սմ. խորաքանչիւրը։ Բուն Ձ-ի գրիչն է Թովմա Մեծոփեցու աշակերտ Ստեփաննոս։ ԺԱՄԱՆԱԿ. 1435 թ. «ՊՁԴ»։ ՏԵՂ. Մեծոփայ վանքը։*
Տանօր. *Ձեռագրիս յիշատակարանները տես Արարատ 1913 թ. Օգ.— Սեպտ. «Նոր նիւթեր Թովմա Մեծոփեցու կենսագրութեան»։*

Նկարուած է Թովմա Մեծոփեցու ինքնաձեռագիր յիշատակարանը 333ա., բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

137. *Մատ. Ս. էջմ. № 1524/1549. (Կ. 1486) Յիսուս Որդի Շնորհալու. ծաղկագրերով և լուսանցքազարդերով.* մագաղաթ. *թերթ 279։ ԳԻՐ. Բոլորգիր.։ միջեան* $7,1 \times 4^1/_2$ *սմ.։ ԳՐԻՉ. Ստեփաննոս Իլովացի.* Նկարիչ. *«Սիմէօն շնորհազարդ և քաջ բարունի, ծաղկօղ և կազմօղ սորին». 276ա.։ ՏԵՂ. Ս. Էջմիածին, Փիլիպպոս կաթուղիկոսի օրով։ ԺԱՄԱՆԱԿ. 1646 թ. Փրկչական «ՌՂԵ»։ «Ի թուիս հայոց ՌՃԺԱ» նուիրել է գրիչը Իլովայ քաղաքի ս՞ր Ա՞ ծածին եկեղեցուն։*

Նկարուած է 277բ. բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ. 7,1×$4^1/_2$ *սմ.։*

138. *Մատ. Ս. էջմ. №* Գիր. *Նոտրագիր։ ԳՐԻՉ. Պետրոս երէց աշակերտ Դարանաղցի Գրիգոր վարդապետի։ ՏԵՂ. «Ընդ հովանեաւ ս՞ր*

Թեղթափին, որ Թումայ առաքելոյն մասն ի մէջն կայ» և «Վասըւոյ ս՛ր Նշանին որ Թգ՞ր կոչի»։ ԺԱՄԱՆԱԿ. ԺԷ—ԺԸ. դարու առաջին քառորդ։

139. 140. 141. 142. Մատ. Ս. էջմ. № 662/750 (Կ. 648) Լուծմունք Ս. Գրոց ի Վարդանայ, թուղթ, 12,2×8 սմ., թերթ 233. ԳԻՐ. բոլորգիր։ ԳՐԻՉ. Սարգիս, որի ծնողն է «Վախթայ»։ Օրինակի տէրը եղել է «Գ՞ր Կոստ(ա)նդ որդի Թորոս Գրիմըրծիուն»։ ԺԱՄԱՆԱԿ. Անթուական, բայց հաւանօրէն ԺԳ. դարու վերջը ԺԴ. սկիզբը։ Նկարուած են $126^{ա}$—$129^{ա}$. «Նշանագիրք Անուանց կարճառանութե՞» վերնագրով հատուածը, իբրև ՍՂԱԳՐՈՒԹԵԱՆ և ՆՇԱՆԱԳՐԵՐԻ խառը բառարան։ ա) $126^{ա}$. բ) $126^{բ}$—$127^{ա}$, գ) $127^{բ}$—$128^{ա}$. դ) $128^{բ}$—$129^{ա}$.։ Առաջինը բնագրի մեծութեամբ, միւսները չնչին տարբերութեամբ փոքր բնագրից։

143. Մատ. Ս. էջմ. Գ. № 91/3177. Խառը բովանդակութեամբ. թուղթ, 15×11½ սմ. նոտրագիր, անյայտ գրչի և ժամանակի գործ. գուցէ ԺԸ. դարու սկզբի գործ։ Առաջին չորս թերթերի վրայ ՆՇԱՆԱԳՐԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ, որից միայն մի երես իբրև նմուշ ենք տալիս։

Նկարուած է $1^{բ}$—$2^{ա}$, Առաջին տող երկու երեսում՝ մէջ տեղի լուսանցքների հետ 16 սմ.×11½ երեսների երկարութիւնը։ Մեր նկարը 14×9,7 սմ.։

ՑՈՒՑԱԿ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ

ԸՍՏ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ

1. Մոգայիկ Երուսաղէմի	Տախտակ	Ա.	Զ—Է դար
2. Տեկոր	»	Բ.	Զ—Է դար
3. Հռիփսիմէի վանքի արձ.	»	Բ.	618 թ.
4. Անի	»	Ա.	622 թ.
5. Թալին Ներսէս Կամսարականի արձ.	»	Ա.	630—640 թ.
6. Մրէն	»	Գ.	637—640 թ.
7. Մաստարա	»	Դ—Ե.	640-ական թ.
8. Մաստարա	»	Ե,	»
9. Արուճ (Թալիշ) Գրիգոր Մամիկոնեանի արձ.	»	Զ.	668 թ.
10. Նախճաւան Արտաւազդ Կամսարականի	»	Ե.	Ը. դար.
11. Թալին. Ուխտատուր վանականի	»	Է.	783 թ.
12. Արուճի Ս. Գրիգոր	»	Ժ.	867 թ.
13. Ձեռ. Էջմ. № 1958, 128ա.	»	ԺԹ.	Ը—Թ. դար
14. Երուս. № 2555	»	Ի.	Ը—Թ. դար
15. Երուս. № 2555	»	ԻԱ.	Ը—Թ. դար
16. Արձ. Թալիշ	»	Ը.	901 թ.
17. Ձեռ. Մեծշէն գ. (Ջիւանշիր).	»	ԺԶ.	909 թ.
18. Արձ Խոտակերաց կամ Բարկոփի վանքի	»	Թ.	910 թ.
19. Ագարակ (Կարսի)	»	Ժ.	941 թ.
20. Տեկոր խաչքար	»	Թ.	964 թ.
21. Ձեռ. Էջմ. № 2779. 233բ.	»	ԻԲ.	971 թ.
22. Էջմ. № 2684, 245ա	»	ԻԶ.	973 թ.
23. Ծղրութ գիւղ (Ախալցխա)	»	ԻԳ.	974 թ.
24. Ծղրութ Ախալցխա	»	ԻԵ.	974 թ.
25. Ալէքսանդրոպոլ	»	ԼԱ.	988 թ
26. Էջմ. № 2374, 136բ.	»	ԻԹ.	989 թ.
27 Էջմ. № 2374, 1ա.	»	ԻԸ.	989 թ.
28. Էջմ. № 2374 2բ.	»	ԻԷ.	989 թ.
29. Էջմ. № 2374, 232բ.	»	ԺԸ.	989 թ.
30. Թալին. Որմագիր	»	ԺԵ.	Ժ. դար
31. Արձ. Անի Ապուղամրենց Ս. Գրիգոր	»	Ժ.	Ժ. դար
32. Ձեռ Ծղրութ (Ախալցխա)	Տախտակ	ԻԴ.	Ժ—ԺԱ դար.
33. Էջմ. 2877	»	ԻԱ.	Ժ—ԺԱ դար.
34. Արձ. Կեչառոյք	»	ԺԱ.	1003 թ.
35. Երերոյք	»	ԺԲ.	1028 թ.

36. Խծկոնք	»	ԺԱ.	1033 թ.
37. Ձեռ. էջմ. № 283	»	ԼԶ.	1033 թ.
38. Պատարիկ Տ. Խաչիկ վարդ.	»	ԺԵ.	1040 թ.
39. էջմ. № 3723	»	ԼԴ.	1044/5 թ.
40. էջմ. № 988	»	ԼԶ.	1045 թ.
41. էջմ. № 988 յիշատ.	»	ԽԸ.	1045 թ.
42. Կեչառոյք	»	ԺԴ.	1051 թ.
43. Ձեռ. էջմ. № 3793	»	ԼԲ.	1053 թ.
44. էջմ. № 3784	»	Լ.	1057 թ.
45. էջմ. № 311	»	ԻԴ.	1066 թ.
46. Երուս. № 2556/1,125ա	»	ԼԳ.	1028—1066 թ.
47. էջմ. № 275, 269բ	»	ԽԲ.	1071—1080 թ.
48. Հաւուց թառ	»	ԺԶ.	1081 թ.
49. էջմ. № 288, 171ա	»	ԽԵ.	1099 թ.
50. » № 2600, 179բ,	»	ԽԱ.	ԺԱ.—ԺԲ. դար
51. » № 985, 155ա.	»	ԽԴ.	ԺԱ.—ԺԲ. »
52. » № 1214, 93 եր.	»	Ծ.	1118 թ.
53. » № 832, 66բ.	»	ԾԱ.	1154 թ.
54. » № 1890, 208բ,	»	ԼԷ.	1174 թ.
55. » № 2684, 245բ	»	ԽԲ.	1159 թ.
56. » № 1568, 10ա	»	ԼԹ.	1173 թ.
57. » № 3795, 156բ	»	ԿԲ.	1190 թ.
58. » № 948, 165ա	»	ԼԸ.	1196 թ.
59. » № 2606, 194ա	»	ԽԴ.	1198 թ.
60. Պատարիկ Խաչիկ"ծ. վարդ.	»	ԼԲ.	ԺԲ. դար
61. էջմ. № 2589, 304բ	»	ԽԶ.	1200 թ.
62 » № 3793, 310բ	»	ԼԹ.	1201 թ.
63. » № 2877, 210ա	»	ԼԳ.	1211 թ.
64. » № 987, 311բ	»	ԾԶ.	1211 թ.
65. » » »	»	ԼԴ.	1211 թ.
66. » № 378, 308ա	»	ԽԹ.	1212 թ.
67. » № 378, 2ա	»	Խ.	1212 թ.
68. Խծկոնք,	»	ԺԱ.	1214 թ.
69. Ձեռ. էջմ. № 947, վերջին թերթ	»	ԽԷ.	1215 թ.
70. էջմ. 1519, 2ա	»	ԾԲ.	1212—1223 թ.
71. » » 297բ	»	ԼԵ.	» »
72. » № 2101, 102ա	»	ԽԴ.	1223 թ
73. » Բրոնդի քոր.	»	ԺԵ.	1232 թ
74. Աւետ. Տրդատայ եպիս. 91ա	»	ԾԵ.	1244 թ.
75. Ազգ. մատ. Պոլիս. № 68, 574 եր.	»	ԽԵ.	1253 թ.
76. Երուս. Ս. Յակ. № 251, 14ա	»	ԾԳ.	1260 թ.
77. » » № 2660/105, 285բ	»	ԿԳ.	1262 թ.
78. » № 823, 171բ	»	ԾԴ.	1266 թ.
79. Տաթև № 9/4139, 114ա	»	ԾԷ.	1267 թ.
80. » » 292ա	»	ԿԸ.	»
81. էջմ. № 3082, 476ա	»	ԾԷ.	»

82. » № 287, 219ա	»	ՃԹ.	1268 թ.
83. » № 2627, 455ա	»	Հ.	»
84. » № 382, 187ա	»	ԿԴ.	1269 թ.
85. Երուս. № 2563/8, 378ա	»	ՃԸ.	1272 թ.
86. » № 2563/7, 189բ	»	ՃԹ.	»
87. Էջմ. № 1310, 222ա	»	Կ.	1270—1293 թ.
88. » » 28բ	»	ԿԷ.	« »
89. » № 1328, 96բ	«	ՀԴ.	1278 թ.
90. » » 176ա	»	ԿԱ.	»
91. » № 759, 67ա	»	ՃԷ.	»
92. » » 180բ	»	ՃՁ.	»
93. » № 1563, 312բ	»	Կ.	1283 թ.
94. » № 2568/3, 320ա	»	ՃՁ.	1284 թ. ից առաջ
95. » № 1500, 1154ա	»	ՀԲ.	1270—1287 թ.
96. Էջմ. № 979, 415ա	»	ԿԹ.	1288 թ.
97. » № 195, 139ա	»	ՀԱ.	1288 թ.
98. Պատ. Խաչիկ ծ. վ-ի	»	ԿԷ.	1293 թ. առաջ.
99. Էջմ. № 179, 527ա	»	ՀԲ.	1292 թ.
100. » № 179, 526բ	»	Հ.	» թ.
101. » № 179, 575բ	»	ԿԹ.	» թ.
102. » № 2848, 148բ	»	ՀԳ.	» թ.
103. » » 317բ	»	ԿՁ.	» թ.
104. » № 1526, 309ա	»	ՀԱ.	1294 թ.
105. » № 180, 147ա	»	ԿԵ.	1295 թ.
106. » № 777, 51բ	»	»	ԺԳ. դար
107. Պատարիկ Խաչիկ վ-ի	»	ՀԵ.	»
108. » »	»	ԿԲ.	»
109. Էջմ. № 379, 127ա	»	ՁԲ.	»
110. Անի	»	ԺԳ.	ԺԳ. դար
111. Էջմ. արծաթէ պահարան	»	ԺՁ.	1300 թ.
112 » № 500, 366բ	»	ՀՁ.	1305 թ.
113. » № 182, 185ա	»	ԿՁ.	1303—1306 թ.
114. » № 177, 202ա	»	ՀԸ.	ԺԳ—ԺԳ
115. » № 3722, 32ա	»	ՁԳ.	1306 թ.
116. » № 2520, 344ա	»	ՁԱ.	»
117. Երուս. № 2566/11	»	ՁԵ.	1307 թ.
119. » № 2930, 128բ	»	ՀԹ.	1315 թ.
120. » № 206, 301բ	»	Ձ.	1318 թ.
121. » № » 515բ	»	ՀԹ.	»
122. » № 1519, 296ա	»	ՀԷ.	1308 թ.
123. » № 3793, 89ա	»	Ձ.	1323 թ.
124. » № 1314, 308բ	»	ՀԵ.	1325 թ.
125. » № 1576, 73ա	»	ՀԸ.	1328 թ.
126. Երուս. № 1882,	»	ՀՁ.	1330 թ.
127. » № 2649/94	»	ՁՁ.	1332 թ.
128. Էջմ. № 167, 55ա (պատկեր 130)	»	ՁԲ.	1281—1335 թ.

129. Պատառիկ Թաշիկ Ծ. վ-ի (պատ. 32)	»	ԶԴ.	1334 թ.
130. Էջմ. № 1622, $314^{բ}$—$515^{ա}$	»	ԶԴ.	1355 թ.
131. Կեչառոյք (պատ. 26)	»	ԺԴ.	1335 թ։
132. Էջմ. № 3793, $88^{բ}$	»	ԶԱ.	1346 թ.
133. » № (պատկեր 135)	»	ԶԹ.	1348 թ.
134. » № 750, $26^{ա}$	»	ԶԸ.	ԺԴ—ԺԴ. դար
135. » № » $126^{բ}$—$127^{ա}$	»	Ղ.	»
136. » № » $127^{բ}$—$128^{ա}$	»	ԶԲ.	»
137. » № » $128^{բ}$—$129^{ա}$	»	ԶԹ.	»
138. « № 1380, $330^{ա}$	»	ԶԵ.	1435 թ։
138. » № 1449, $277^{բ}$	»	ԶԵ.	1646 թ։
140. » № Նոյեան տապանի պահարան	»	ԺԷ.	1678 թ։
141. » № ս. Գեղարդի պահ.	»	ԺԸ.	1686/7 թ։
142. » № — (պատկ. 138)	»	ԶԶ–ԺԷ—ԺԸ. դար։	
143. » № 3077, $1^{ա}$—$2^{ա}$	»	ԶԷ	ԺԸ. դար։

ԿԱՐԵՒՈՐ ՈՒՂՂԵԼԻՔ

(«Քառսէգ հայ ճնագրութեան» յօդուածի մէջ).

Երես	171	տորակ	1	տող.	Band XXXIV պէտք է լինի XVIII.
»	175	»	10	»	75×50սմ. » 1 մ. 75×50 սմ.
»	188	»	35	»	ներանձնաւել նունախոհի » ներանձնացեալ ունախոհի
»	189	»	37	»	չէ 63 պրակի համարը։
»	191	»	41—44	»	44 նկարի և՝ ն. » 41 նկարի և՝ ն.
»	194	»	56	»	1070—1080 » 1070—1078
»	195	»	59	»	«ընագիրը 8,9» » 8,9×15, 1 սմ.
»	199	»	77. 78	»	№ 1519 Զ-ի Գրիչն է Իգնատիոս, տեղը Հոռոմոսիվանք, ժամանակը 1232 թ. յիշատակարանի նորագիւտ հատուածի համեմատ, որ պահպանակ է № 1194 Զ-ի։
»	203	»	89	»	«Կլայեցի. են. ծեր էր» պէտք է լինի Տարսոնացի 1356—1327 թ. և 1356—1360 թ.. հաւանօրէն կաթուղիկոսութեան առաջին տարիներում։
»	204	»	93. 94	»	1279—1293 թ. պէտք է լինի 1270—1293 թ.
»	211	»	127	»	20×3,8 սմ., » 20×13,8 սմ.։
»	206	»	101-ի ծանօթութիւնը պատկանում է պրակ 102-ին։		
»	208	տպագրուած է պրակ 12 պէտք է լինի 112			

1. ՄՈԶԱՅԻԿ ԵՐՈՒՍ. Զ—Է ԴԱՐ?

5. ԹԱԼԻՆ ՆԵՐՍԷՀ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ 630—640 Թ. Թ.



4. ԱՆԻ. 622 Թ.



2. ՏԵԿՈՐ. Զ-Ի ԴԱՐ՞

3. ՀՈՒՇԱՐՁԱՆ [illegible] Բ.

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹ...



6. Մրեն 637—640 թ. թ.



7. ՄԱՍՏԱՐԱ 640-ԱԿԱՆ Թ. Թ.



10. ՆԱԽՃԱՒԱՆ. ԱՐՏԱՒԱԶԴ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ Ը. ԴԱՐ



8. ՄԱՍՏԱՐԱ. 640–ԱԿԱՆ Թ. Թ.



Թ. ԱՐՈՒՃ (ԹԱԼԻՇ). ԳՐԻԳՈՐ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ԱՐՁ. 663 Թ.

[library stamp]

11. ԹԱԼԻՆ. ՈՒԽՏԱՏՈՒՐ ՎԱՆԱԿԱՆԻ 783 Թ.



13. ԹԱԼԻՆ. 901 Թ.

15. ՏԵԿՈՐ. 964 Թ.

16. ԽՈՏԱԿԵՐԱՑ ԿԱՄ ՔԱՐԿՈՓԻ ՎԱՆՔ. 910 Թ.



14. ԱԳԱՐԱԿ (ԿԱՐՍԻ). 941 Թ.

17. ԱՆԻ ԱՊՈՒՂԱՄՐԵՆՑ Ս. ԳՐԻԳՈՐ. Ժ. ԴԱՐ

12. ԱՐՈՒՃԻ Ս. ԳՐԻԳՈՐ. 867 Թ.



18. ԿԵՉԱՌՈՅՔ. 1003 Թ.

20. 13. ԽԾԿՈՆՔ. 1033 ԵՒ 1214 Թ. Թ.



19. ԵՐԵՐՈՅՔ. 1028 Թ.



21. ԿԵՉԱՌՈՒՅՔ. 1051 Թ.

24. ԱՆԻ ԺԳ ԴԱՐ

25. ԱՄԱՂՈՒ ԺԳ. ԴԱՐ.

26. ԿԵՉԱՌԻՍ 1335 Թ.



27. ԷՋՄ. ԲՐՈՆՋԻ ՔՈՐ. 1232 Թ.

31. ԹԱԼԻՆ. Ժ. ԴԱՐ ?



48. ՊԱՏԱՌԻԿ Տ. ԽԱՉ. ՎԱՐԴ. 1040 Թ.

22. ՀԱՒՈՒՑ ԹԱՌ. 1081 Թ.

28. ԷՋՄ. ԱՐԾԱԹԻ ԳԱՀԱՐԱՆ. 1300 Թ.



35. ՄԽԾԷՆ (ՁԻԻԱՆՃԻՐ) 999 Թ.

29. ԷՋՄ. ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆԻ ՊԱՀԱՐ. 1678 Թ.

ՏԱԽՏԱԿ ԺԸ.

30. ԷՋՄ. Ս. ԳԵՂԱՐԴԻ ՊԱՀ. 1686/7 Թ.



41. ԷՋՄ. № 2374, 232բ. 989 Թ.

ՏԱԽՏԱԿ ԺԹ



32. Էջմ. № 1958, 128ա. Ը—Թ դար։



33. Եր. № 2555 Ը—Թ ԴԱՐ ?.



31. Եր. № 2555. Ը—Թ ԴԱՐ

46. Լեն. № 2877. Ժ—ԺԱ ԴԱՐ



36. ԵՉՄ. № 2679, 233բ. 971 թ.

38. ԽԴՐՈՒԹ ԳԻՒՂ (ԱԽԱԼՑԽԱ). 974 Թ.



45. ԾՂՐՈՒԹ (ԱԽԱԼՑԽԱ).
Ժ—ԺԱ. ԴԱՐ?



34. ԷՋՄ. № 311. 135բ. 1066 Թ.



39. ԾՂՐՈՒԹ (ԱԽԱԼՑԽԱ) 974 Թ.



37. № 2684, 245ա. 973 թ.

43. ԷՋՄ. № 2374 1բ. 986 Թ.



42. ԷջՄ. № 2374 Լա. 989 թ.



41. ԷջՄ. № 2374, 90ա. 989 Թ.



53. Էջմ. № 3784, 116ա. 1037 Թ.



40. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ. 988 Թ.



52. ԵՁՄ. № 3793. 130ա. 1053 Թ.

68. ՊԱՏԱՌԻԿ ԽԱՉԻԿ Վ–Ի ԺԲ. ԴԱՐ?

55. Եր. № № 2556/1, 125ա. 1028—1064 թ.



71. Էջմ. № 2877. 219ա. 1211 թ.



49. ԼՁՄ. № 323. 63բ. 1044 5 Թ.



72. ԼՁՄ. № 957. 311բ. 1211 Թ.



78. ԵՋՄ. № 1519, 297բ, 1232 թ.



47 Եջմ. № 283. 263բ. 1003 թ.



50. Եջմ. 988. 146ա. 1045 թ.



62. ԷՋՄ. № 1890, 208բ. 1174 Թ.



66. Էջմ. № 948, 165ա. 1196 թ.



64. ԷՋՄ. № 1568, 10ա. 1173 Թ.



70. ԷՋՄ. № 3793, 310բ. 1201 Թ.



75. ԷՋՄ. № 378, Ջտ. 1212 Թ?



58. ԷՋՄ. № 2600, 179բ, ԺԱ—ԺԲ ԴԱՐ.



56. Էջմ. № 275, 269բ. 1071—1078 թ.



63. Էջմ. № 2684, 245բ. 1159 թ.

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



59. ԼՁՄ. № 985, 155ա, ԺԱ—ԺԲ ԴԱՐ?.

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ... ԳՐԱԴԱՐԱՆ



79. ԷՋՄ. № 2101, 102ա. 1223 Թ.



67. ԷՋՄ. № 2606, 194ա. 1198 Թ.



57. ԷՋՄ. № 288, 171ա. 1099 Թ.



81. ԱԶԳ. ՄԱՏ. ՊՈԼԻՍ. № 68. 574 էջ. 1253 Թ

69. ԷՋՄ. 2589, 304բ. 1200 Թ.



76. ԷՋՄ. № 947. ՎԵՐՋԻՆ ԹԵՐԹ. 1215 Թ.



51. ԷՋՄ. № 988. 284բ. 1045 Թ.



74. ԷջՄ. № 378, 308ա. 1212 թ.?

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ... ԳՐԱԴԱՐԱՆ



60. ԷՋՄ. № 1214, 93 երես 1118 թ.

ՏԱԽՏԱԿ ԾԱ.



61. ԷՋՄ. № 832, 66բ. 1154 Թ.



77. ԷՋՄ. № 1519, 2ա. 1232 թ.

82. ԵՐ. Ս. ՅԱԿ. № 251. 14ա. 1260



84. Էջմ. № 823. 171ա. 1266 թ.



87. ԷՋՄ. № 3082. 476ա. 1267 Թ.



80. ԱԻԵՏ. ՏՐԴԱՏ ԵՊԻՍ. ՊԱԼԵԱՆԻ 91ա. 1244 Թ.



73. ԷՋՄ. № 987. 371բ. 1211 Թ.



98. ԷՋՄ. № 759. 180բ. 1278 Թ.



100. Եր. № 2568/3, 320ա. 1284 Թ.-ից առաջ.

ԳՐԱԴԱՐԱՆ



85. ՏԱԹԵՒ № 9/4139. 114ա. 1267 թ.



97. ԼՁՄ. № 759. 67ա. 1278 թ.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ



91. Եր. № 2563/8, 378ա. 1272 թ.

ՀԱՅԿ. ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ... ԳՐԱԴԱՐԱՆ



88. Էջմ. № 287, 219ա. 1268 թ.



92. Եր. № 2563/8, 189բ. 1272 թ.

93. ԵՁՄ. № 3710. 222ա. 1270—1293 թ. թ.



99. ԵՁՄ. 1563. 312բ. 1283 թ.



աւ և արդեամբ սբ և ընտրեալ եր ք
անկի, հեզի և սիրեցել ոյ այս, տր
տոր ոյ, վերականգուն իշխողի և իշ
խ եցել ոյ, վանաց որև սաղմոս
ի կոչի: ես զի սբ սիրոյն որ առ
ած, փափագեալ սմաըղձալ ի
սրտիւ և գորովալի գթով; ետգր
ելիմու մանարհեստ և անար ժան
գրչի. քահանայ և ոչ ըստ արժան
ոյն, մկրտիչ կոչեցեալ. ի թվական
անութեն հայոց: չիէ: ի դե ղ
աքաղաքիս, կարփի, ընդհով ան
եաւ սբ ածածնիս, և սբ վկա յ

96 ԼՉՄ № 1328, 176ա. 1278 Թ.



65. Էջմ. № 3795, 156բ. 1190 Թ.



114. № ՊԱՏԱՌԻԿ Տ. ԽԱՉԻԿ Ծ. Վ.-ի ԺԳ. ԴԱՐ.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



83. Եր. Մ. ՑԱԿ. № 2660/105, 285բ. 1262 Թ.


աշխարհ հեռ·
Եւ պատմէ ց
ին յովաննու
աշակեր տքն
իւր վ̃ ամեն
այնի այսորիկ:
Եւ կոչեաց ա
ռ ինքն երկու
ս ոմն յաշա
կերտա ցն իւր
յով աննէս եւ

90. Էջմ. № 382. 187բ. 1269 թ.

111. № 180. 147ա. 1295 Թ.



112. № 777. 51ա. ԺԴ. դար

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ



117. Եջմ. 182. 185ա. 1303—1306 թ.



109. Եջմ. № 2848. 317բ. 1291 թ.



94. ԷՋՄ. № 1310. 28բ. 1270—1293 թ. թ.

104. № ԳԱՏԱԹԻԿ Տ. ԽԱՉԻԿ Մ. Կ.-ի
1293 թ.-ից առաջ.



86. ՏԱԹԵՒ, ԿՁՄ. № 9/4139. 292ա. 1267 Թ.

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹ. ԱԿ. ՖՈՒՆԴԱՄ. ԳՐԱԴԱՐԱՆ

102. ԷՋՄ. № 979. 415ա. 1288 Թ.



107. ԷՋՄ. № 179. 575բ. 1292 Թ.



106. № Եջմ. 179. 526բ. 1292 թ.

89. Եջմ. № 2627, 445ա 1268—70-ական թ. թ.



109. Լ98. № 195. 139ա. 1288 թ.



110. № 1526 309ա. 1294 թ.



104. ԵՁՄ. № 1500. 1164ա. 1270—1287 թ. թ.



105 № ԵՁՄ. 179. 527ա. 1292 թ.



108. ԷՋՄ. № 2848. 148ա. 1292 Թ.

ԳՐԱԴԱՐԱՆ



95. Էջմ. № 1328, 96բ. 1278 Թ.

113. ՊԱՏԱՌԻԿ Տ. ԽԱՉԻԿ Ծ. Վ..ի ԺԳ. ԴԱՐ



127. ԼՁՄ. № 1314. 308բ. 1325 Թ.



129. Եր. № 1882. 1330 Թ.



116. ԷՋՄ. № 500. 366բ. 1305 Թ.



125. ԷՉՄ. № 1519, 297ա. 1308 Թ.



128. ԼՁՄ. № 1576. 73ա. 1328 Թ.



118. ԼՁՄ. № 177, 202ա. ԺԴ—ԺԵ. դ. սկիզբ.



122. ԵՉՄ. № 2930. 127բ. 1315 Թ.



121. ԵՉՄ. № 206. 518ա. 1318 Թ.



126. Էջմ. № 3793. 89ա. 1323 թ.



123. Էջմ. № 206. 301բ. 1318 թ.



120. ԿՁՄ. № 2520. 344ա. 1306 Թ.



121. ԿՁՄ. № 3793, 88բ. 1346 Թ.



115. Լ.ՁՄ. № 379, 127ա. ԺԴ. ԴԱՐ?



130. Լ.ՁՄ. № 167. 55ա. 1284—1335 թ. թ.



136. Լ.ՁՄ. № 1380, 333ա. 1435 թ.

ԳՐԱԴԱՐԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ


որա յաւուր յայն
միկ :-
ԿԷ Եւ եկեալ յս
ի տունն պետրոսի.
Ետես զզոքանչ
նորա անկեալ դն
էր տապացեալ.
կալաւ զձեռանէ
նորա եւ թողզնա
ջերմն. յոտնեկ
աց եւ պաշտէր զն
ա.

Մ	Մր	Ղ
ԿԴ		ԿԴ
ԿԷ	ՃԵ	ԻԴ

119. ԵՃՄ. № 3722. 32ա. 1306 թ.



132. ԳԱՏԱՌԱՆԻ Տ. ԽԱՉԻԿ Ծ. Վ.-Ի 1334 Թ.



133. ԷՋՄ. № 1622. 314բ—315ա. 1335 Թ.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ... ԳՐԱԴԱՐԱՆ ... ԱԿԱԴԵՄԻԱ



121. ԵՐ. № 2566/11. 1307 Թ.



137. ԼՁՄ. № 1549, 277բ. 1646 Թ.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ





138. ԷՋՄ. № ? ԺԼ—ԺԸ. ԴԱՐ



131. ԵՐ. № 2649/94. 1332 Թ.



143. ԷՋՄ. № 3177, 1բ.—2ա. ԺԸ. ԴԱՐ?



141. ԷՁՄ. № 750, 127բ,—128ա. ԺԳ—ԺԴ.



139. ԷՁՄ. № 750, 126ա. ԺԳ—ԺԴ.



142. ԵՉՄ. № 750, 128բ—129ա. ԺԳ—ԺԴ.



135. ԵՉՄ. № ? 1348 Թ.



140. ԵՋՄ. № 750, 126բ,—127ա. ԺԴ.—ԺԴ.